Եկեղեցու Նախագահների ուսմունքները

Գորդոն Բ. Հինքլի

ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

ԳՈՐԴՈՆ Բ. ՀԻՆՔԼԻ

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Գրքեր «*Եկեղեցու նախագահների ուսմունքները*» շարքից

Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ (առարկայական համարը 36481)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Բրիգամ Յանգ (35554)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոն Թեյլոր (35969)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Վիլֆորդ Վուդրուֆ (36315)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Լորենզո Սնոու (36787)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ (35744)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Հեբեր Ջ. Գրանտ (35970)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջորջ Ալբերտ Սմիթ (36786)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Դեյվիդ Օ. Մակքեյ (36492)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ (36907)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Հարոլդ Բ. Լի (35892)։
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Սպենսեր Վ. Քիմբալ (36500)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն (08860)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Հովարդ Վ. Հանթեր (08861)
Եկեղեցու նախագահների ուսմունքները. Գորդոն Բ. Հինքլի (08862)

Այս գրքերը պատվիրելու համար դիմեք ձեր տեղական բաշխման կենտրոն կամ այցելեք ինտերնետային կայքը՝ store.lds.org։ Գրքերը մատչելի են նաև թվային ֆորմատներում LDS.org-ում և Gospel Library mobile app-ում։

Շնորհակալ կլինենք այս ձեռնարկի վերաբերյալ ձեր դիտողությունների և առաջարկների համար։ Խնդրում ենք ներկայացնել դրանք.

Curriculum Development
50 East North Temple Street
Salt Lake City, UT 84150-0024 USA
Email: pth-development@ldschurch.org

Խնդրվում է նշել ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը։ Չմոռանաք նշել ձեռնարկի վերնագիրը։ Ապա ներկայացրեք ձեր դիտողություններն ու առաջարկները ձեռնարկի ուժեղ կողմերի և հնարավոր բարելավումների ենթակա մասերի վերաբերյալ։

© 2016 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են։
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
Անգլերենի հաստատումը. 3/11
Թարգմանության հաստատումը. 3/11
Teachings of Presidents of the Church-ի թարգմանությունը Գորդոն Բ. Հինքլի
Armenian
08862 201

Բովանդակություն

Նախաբան VII
Պատմական ամփոփագիր XI
Գորդոն Բ. Հինքլիի կյանքն ու ծառայությունը. 1
1 Ավետարանի վերականգնումը՝ ավելի պայծառ օրվա լուսաբացը 51
2 Դրոշ ազգերին, լույս աշխարհին 65
3 Զարգացնել երջանկության զգացում և լավատեսական ոգի 79
4 Ռահվիրաների հավատքի և զոհաբերության ժառանգությունը 93
5 Աստծո դուստրեր. 109
6 Ինչ հզոր բան է աղոթքը 125
7 Հոգու հուշումները 135
8 Մենք ապավինում ենք Քրիստոսին. 145
9 Վկայության անգին պարգևը. 161
10 Փայփայել ամուսնության հավերժական ընկերակցությունը. 173
11 Տուն՝ արդարակյաց կյանքի հիմքը 189
12 Հնազանդություն. Պարզապես ապրեք ավետարանով 203
13 Ձեռք բերել խաղաղություն և բավարարություն ինքնապահովման միջոցով 217
14 Կորցնելով ինքներս մեզ ուրիշներին ծառայելիս 229
15 Սուրբ Քահանայությունը. 243
16 Մորմոնի Գրքի զորությունը 257
17 Շարունակեք կրթության մեծ գործընթացում 269
18 Առաքինություն՝ անկյունաքար, որի վրա պիտի կառուցենք մեր կյանքը. 285
19 Քահանայական ղեկավարումը Հիսուս Քրիստոսի Եկեղեցում 295
20 Ընկերանալ նրանց հետ, ովքեր մեր հավատքից չեն. 311

21 Վերջին Օրերի միսիոներական աշխատանքի հրաշքը 325
22 Սիրով հասնել նորադարձներին և պակաս ակտիվ անդամներին 339
23 Սուրբ Տաճարի օրհնությունները 353
24 Հիսուս Քրիստոսի Քավությունը. Վիթխարի՝ իր ընդգրկմամբ, անձնական՝ իր ազդեցությամբ 367
25 Առաջ գնացեք հավատքով 381
Տեսողական նյութերի ցանկ 393
Ցուցիչ 395

Նախաբան

Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հաստատել են *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները* շարքը՝ օգնելու ձեզ ավելի մոտենալ ձեր Երկնային Հորը և խորացնել ձեր հասկացողությունը Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանի վերաբերյալ: Եկեղեցու կողմից այս շարքին հատորներ ավելացնելուն զուգահեռ դուք կկարողանաք ստեղծել ավետարանական հղումների հավաքածու ձեր տան համար: Այս գրքերը նախատեսված են օգտագործելու անձնական ուսումնասիրության և կիրակնօրյա ուսուցման համար: Դրանք կարող են նաև օգնել ձեզ՝ պատրաստել այլ դասեր կամ ելույթներ և պատասխանել Եկեղեցու վարդապետությանը վերաբերող հարցերին:

Այս գիրքը նկարագրում է Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները, ով ծառայել է որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ 1995 թվականի մարտի 12-ից մինչև 2008 թվականի հունվարի 27-ը:

Անհատական ուսումնասիրություն

Երբ ուսուցանեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները, աղոթքով ոգեշնչում փնտրեք Սուրբ Հոգուց: Յուրաքանչյուր գլխի վերջում տրված հարցերը կօգնեն ձեզ խորհել, հասկանալ և կիրառել Նախագահ Հինքլիի ուսմունքները: Հետևյալ գաղափարները կարող են նույնպես օգտակար լինել.

- Գրի առեք այն մտքերն ու զգացումները, որոնք գալիս են ձեզ Սուրբ Հոգուց, երբ դուք ուսումնասիրում եք:
- Ընդգծեք այն հատվածները, որոնք կամենում եք հիշել: Մտածեք այդ հատվածներն անգիր սովորելու մասին կամ նշելու դրանք ձեր սուրբ գրություններում՝ դրանց վերաբերող հատվածների կողքին:

- Կարդացեք որևէ գլուխ կամ հատված ավելի քան մեկ անգամ, որպեսզի կարողանաք ավելի խորը հասկանալ այն:
- Ինքներդ ձեզ հարցեր ուղղեք՝ ինչպես օրինակ. «Ինչպե՞ս են Նախագահ Հինքլիի ուսմունքները մեծացնում իմ հասկացողությունն ավետարանի սկզբունքերի վերաբերյալ» կամ «Ի՞նչ է կամենում Տերը, որ ես սովորեմ այս ուսմունքներից»: Ի՞նչ է ցանկանում Տերը, որ ես անեմ:
- Հարցրեք ինքներդ ձեզ, թե ինչպես կարող են այս գրքի ուսմուքներն օգնել ձեզ անձնական մարտահրավերների և մտահոգությունների դեպքում:
- Ձեր սովորածով կիսվեք ընտանիքի անդամների և ընկերների հետ:

Ուսուցանել այս գրքից

Հետևյալ ուղենիշները կարող են օգնել ձեզ ուսուցանել այս գրքից՝ լինի տանը, թե եկեղեցում:

Պատրաստվեք ուսուցանել

Փնտրեք Սուրբ Հոգու առաջնորդությունը, երբ պատրաստվեք ուսուցանել: Աղոթքով ուսումնասիրեք գլուխը՝ վստահ լինելու Նախագահ Հինքլիի ուսմունքների ձեր ըմբռնման մեջ և աղոթքով ընտրեք ուսմունքները, որոնք, ըստ ձեզ, կլինեն ամենաօգտակարը:

Խրախուսեք նրանց, ում դուք ուսուցանում եք, ինքնուրույն ուսումնասիրել գլուխը և հատուկ ուշադրություն դարձնել «Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար» բաժնին, որը գտնվում է յուրաքանչյուր գլխի վերջում:

Խրախուսեք քննարկումներ Նախագահ Հինքլիի ուսմունքների մասին

Երբ ուսուցանեք այս գիրքը, հրավիրեք մյուսներին՝ կիսվել իրենց մտքերով, հարցեր ուղղել, վկայել և ուսուցանել միմյանց: Երբ նրանք ակտիվորեն մասնակցեն, ավելի լավ պատրաստված կլինեն սովորելու և ստանալու անձնական հայտնություն:

Թույլ տվեք լավ քննարկումներ ծավալվեն ավելի շատ, քան փորձեք ներառել բոլոր ուսմունքները: Ուղղորդեք

քննարկումները՝ օգնելու մասնակիցներին կարդալ Նախագահ Հինքլիի ուսմունքները և ուղիներ գտնել այդ ուսմունքներն իրենց կյանքում կիրառելու համար։

Հարցերը, որ տրված են յուրաքանչյուր գլխի վերջում, արժեքավոր աղբյուր են քննարկումը խրախուսելու համար։ Դուք կարող եք նաև մշակել ձեր սեփական հարցերը, որոնք հատկապես նրանց համար են, ում դուք ուսուցանում եք։ Քննարկում խրախուսելու մի քանի այլ գաղափարներ տրված են ստորև.

- Խնդրեք մասնակիցներին կիսվել այն ամենով, ինչ նրանք սովորել են այդ գլխի իրենց անհատական ուսումնասիրությունից։
- Հանձնարարեք գլխի վերջում ընտրված հարցերը անհատների կամ փոքր խմբերի։ Խնդրեք մասնակիցներին՝ տվյալ գլխի մեջ գտնել այն ուսմունքները, որոնք վերաբերում են հարցերին։ Ապա հրավիրեք նրանց՝ կիսվել իրենց մտքերով կամ գաղափարներով։
- Միասին կարդացեք Նախագահ Հինքլիի ուսմունքներից, որոնք տրված են տվյալ գլխում։ Խնդրեք մասնակիցներին կիսվել օրինակներով սուրբ գրություններից և իրենց իսկ փորձառությունից, որոնք վերաբերում են այդ ուսմունքներին։
- Խնդրեք մասնակիցներին ընտրել մեկ բաժին և մտքում կարդալ այն։ Հանձնարարեք նրանց, ովքեր ընտրել են նույն բաժինը, հավաքվել երկու կամ երեք հոգուց բաղկացած խմբերով և քննարկել այն, ինչ սովորել են։

Խրախուսեք, որ նրանք կիրառեն և կիսվեն

Նախագահ Հինքլիի ուսմունքներն առավելագույնս իմաստալից կլինեն, երբ մարդիկ կիրառեն դրանք իրենց կյանքում և կիսվեն դրանցով ուրիշների հետ։ Գուցե կամենաք օգտագործել հետևյալ գաղափարներից մեկը կամ ավելին.

- Հարցրեք մասնակիցներին, թե ինչպե՞ս կարող են նրանք կիրառել Նախագահ Հինքլիի ուսմունքները՝ տանը, Եկեղեցում և այլ ոլորտներում ունեցած իրենց պարտականությունները կատարելիս։
- Խնդրեք մասնակիցներին կիսվել իրենց փորձառություններով, որոնք ունեցել են Նախագահ Հինքլիի խորհրդին հետևելիս։

- Խրախուսեք մասնակիցներին՝ Նախագահ Հինքլիի ուսմունքներով կիսվել ընտանիքի անդամների և ընկերների հետ:

Եզրափակեք քննարկումը

Համառոտ ամփոփեք դասը կամ խնդրեք որևէ մեկին կամ երկու ուրիշների անել այդ: Վկայեք ձեր քննարկած ուսմունքների մասին և խրախուսեք մասնակիցներին կիրառել իրենց սովորածը: Գուցե կամենաք առաջարկել մյուսներին՝ կիսվել իրենց վկայություններով:

Տեղեկություն նյութերի աղբյուրների մասին

Այս գրքի ուսմունքները ուղիղ մեջբերումներ են Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի քարոզներից, ձեռագրերից ու հարցազրույցներից: Հրատարակված աղբյուրներից մեջբերումները պահպանել են կետադրությունը, ուղղագրությունը, մեծատառերը և բնօրինակ աղբյուրների պարբերությունները, եթե խմբագրական կամ տպագրական փոփոխություններն անհրաժեշտ են եղել բարելավելու դյուրընթեռնելիությունը: Քանի որ մեջբերումները պահպանում են հավատարմությունը հրատարակված աղբյուրներին, գուցե տեքստում նկատեք փոքրիկ ոճական անհամապատասխանություններ: Օրինակ, դերանունները, որոնք վերաբերում են Աստվածությանը, փոքրատառերով են որոշ մեջբերումներում, իսկ մյուսներում մեծատառերով:

Նախագահ Հինքլին հաճախ է օգտագործել *մարդիկ, մարդ,* և *մարդկություն* բառերը՝ դիմելով բոլոր մարդկանց՝ ինչպես արական այնպես էլ իգական սեռերին: Նա նաև հաճախ է օգտագործել դերանունները *նա, նրա* և *նրան* նկատի ունենալով երկու սեռերին էլ: Այս լեզվական պայմանականությունները սովորական էին նրա ժամանակաշրջանում:

Պատմական ամփոփագիր

Հետևյալ ժամանակագրությունը տալիս է Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կյանքի գլխավոր իրադարձությունների մի համառոտ ակնարկ։

23 հունիսի, 1910 թիվ	Ծնվել է Բրյանթ Ս. Հինքլիի և Ադա Բիթներ Հինքլիի ընտանիքում Յուտայի նահանգի Սոլթ Լեյք Սիթի քաղաքում։
1922 թիվ	Մասնակցում է ցցի քահանայության ժողովին իր հոր հետ և ստանում է վկայություն Ջոզեֆ Սմիթի մարգարեական կոչման վերաբերյալ։
1932 թիվ	Ավարտում է Յուտայի Համալսարանը՝ սովորելով անգլերեն, ժուռնալիստի մասնագիտություն և հնադարյան լեզուներ։
1933-ից մինչև 1935 թվականը	Ծառայում է որպես լիաժամկետ միսիոներ Եվրոպական Միսիայում՝ ամբողջ ժամանակն անցկացնելով Անգլիայում։
1935-ից մինչև 1943 թվականը	Աշխատում է որպես Եկեղեցու Ռադիոյի, հասարակայնության և միսիոներական գրականության հանձնաժողովում։
1937 թիվ	Կանչվում է Կիրակնօրյա Դպրոցի գերագույն վարչություն։
29 ապրիլի, 1937 թիվ	Ամուսնանում է Մարջորի Փեյի հետ Սոլթ Լեյքի Տաճարում։
1943-ից մինչև 1945 թվականը	Աշխատում է որպես օգնական վերահսկիչ Դենվեր և Ռիո Գրանդե Երկաթուղում Սոլթ լեյք Սիթիում (Յուտա) և Դենվերում (Կոլորադո)։
1945-ից մինչև 1958 թվականը	Վերադառնում է Եկեղեցական աշխատանքի, 1951 թվականին սկսում է ղեկավարել նոր ձևավորված Միսիոներական Բաժանմունքի ամենօրյա գործունեությունը։

1953-ից մինչև 1955 թվականը	Նախագահ Դեյվիդ Օ.ՄակՔեյի ղեկավարության ներքո ներկայացնում և վերահսկում է տաճարային օժտման վերաբերյալ կինոնկարի թողարկումը՝ համաձայնեցնելով բազմաթիվ լեզուների հետ:
28 հոկտեմբերի, 1956 թիվ	Կանչվում է ծառայելու որպես Իսթ Միլլ Քրիկ ցցի նախագահ:
6 ապրիլի, 1958 թիվ	Հաստատվում է Տասներկուսի Օգնական:
5 հոկտեմբերի, 1961 թիվ	Կարգվում է որպես Առաքյալ և ձեռնադրվում որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի կողմից:
23 հուլիսի, 1981 թիվ	Կանչվում է ծառայելու որպես Առաջին Նախագահության Խորհրդական՝ օգնելու Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալին և Նախագահներ Մարիոն Գ. Ռոմնիին և Ն. Էլդոն Թաններին:
2 դեկտեմբերի, 1982 թիվ	Կանչվում է ծառայելու որպես Նախագահ Քիմբալի երկրորդ խորհրդական:
10ոյեմբերի , 1985 թիվ	Կանչվում է ծառայելու որպես Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի առաջին խորհրդական:
5 հունիսի, 1994 թիվ	Կանչվում է ծառայելու որպես Նախագահ Հովարդ Վ. Հանթերի առաջին խորհրդական:
3 մարտի , 1995 թիվ	Դառնում է ավագ Առաքյալ Նախագահ Հանթերի մահից հետո:
12 մարտի, 1995 թիվ	Ձեռնադրվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ:
23 սեպտեմբեր, 1995 թիվ	Հրապարակում է «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» հռչակագիրը Սփոփող Միության գերագույն ժողովի ընթացքում:
Փետրվար 1996 թիվ	Եկեղեցու անդամների թիվը Միացյալ Նահանգներից դուրս գերազանցում է Միացյալ Նահանգների ներսում Եկեղեցու անդամների թվին:

7 ապրիլի, 1996 թիվ	Ելույթ է ունենում Միացյալ Նահանգների *«60 րոպե»* հեռուստածրագրում:
26 մայիսի, 1996 թիվ	Նվիրագործում է Հոնգ Կոնգ Չինաստան Տաճարը, առաջինը այն 77 տաճարներից, որոնք նվիրագործվել էին իր նախագահության օրոք, որոնցից 63-ը նա ինքն էր նվիրագործել:
5 ապրիլի, 1997 թիվ	Կազմակերպում է Յոթանասունի երեք նոր քվորումներ:
4 հոկտեմբերի, 1997 թիվ	Հայտարարում է ողջ աշխարհում ավելի փոքր տաճարների կառուցման մասին:
1 հունվարի, 2000 թիվ	Առաջին Նախագահության իր ընկերակից Առաքյալների և Տասներկու Առաքյալների Քվորումի հետ հրատարակում է «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը»:
1 հոկտեմբերի, 2000 թիվ	Նվիրագործում է Բոստոն Մասսաչուսեթս Տաճարը՝ 100-րդ գործող տաճարը:
8 հոկտեմբերի, 2000 թիվ	Նվիրագործում է Համաժողովների Կենտրոնը:
31 մարտի, 2001թիվ	Հայտարարում է Կրթության Մշտական Ֆոնդի ստեղծումը:
8 փետրվար, 2002 թիվ	Ողջունում է այցելուներին ամբողջ աշխարհից Սոլթ Լեյք Սիթիի Ձմեռային Օլիմպիական խաղերի ժամանակ:
27 հունիսի, 2002 թիվ	Նվիրագործում է Նավու Իլլինոյս Տաճարը՝ ի հիշատակ Ջոզեֆ և Հայրում Սմիթների նահատակության 158-րդ տարելիցի:
11 հունվարի, 2003 թիվ	Նախագահում է ղեկավարների առաջին համաշխարհային ուսուցման հեռարձակումը:
8 փետրվարի, 2003 թիվ	Ելույթ է ունենում Երեխաների Միության մեկ միլիոն մանուկների համար արբանյակային հեռարձակման ժամանակ՝ Երեխաների Միության 125 -ամյակի կապակցությամբ:
6 ապրիլի, 2004 թիվ	Սգում է իր կնոջ՝ Մարջորիի մահը:

23 հունիսի, 2004 թիվ	Պարգևատրվում է Ազատության Նախագահական մեդալով՝ Միացյալ Նահանգների բարձրագույն քաղաքացիական պարգևով:
26 հունիսի, 2007 թիվ	Հայտարարում է, որ Եկեղեցու անդամների թիվը գերազանցել է 13 միլիոնը և Եկեղեցու կազմավորումից սկսած արդեն ծառայել է մեկ միլիոներորդ միսիոները:
27 հունվարի, 2008 թիվ	Մահանում է իր տանը՝ Սոլթ Լեյք Սիթիում (Յուտա):



Գորդոն Բ. Հինքլիի կյանքն ու ծառայությունը

1998 թվականի փետրվարի 16-ին մոտ 6700 Վերջին Օրերի Սրբեր հավաքվեցին Գանայի Աքրա քաղաքի Անկախության հրապարակում: Նրանք եկել էին ողջունելու իրենց մարգարե Նախագահ Գորդոն Բ. Հինքլիին:[1] Նա ժպտացող դեմքով կանգնեց նրանց առջև և հայտարարեց երկար սպասված նորությունը, որ նրանց հայրենիքում տաճար էր կառուցվելու: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասաց, որ երբ Նախագահ Հինքլին արեց այդ հայտարարությունը, մարդիկ «կանգնեցին և ծափահարեցին, արտասվեցին և պարեցին, գրկեցին միմյանց և լաց եղան»:[2] Տարիներ անց, երբ տաճարը կառուցվեց և նվիրագործվեց, մի կին, ով ներկա էր եղել այդ օրը, վերհիշեց այդ ուրախության զգացումը և հայտնեց, թե տաճարն ինչպես էր օրհնել իր կյանքը.

«Ես դեռ մտքումս մի վառ հիշողություն ունեմ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի Գանա այցելության և մեր հայրենի հողի վրա տաճար կառուցելու հայտարարության մասին: Ես դեռևս հստակ հիշում եմ բոլորի դեմքի հուզմունքի, երջանկության արտահայտությունը և ուրախության բացականչությունները : . . .

Մեր երկրում կառուցված տաճարի շնորհիվ, ես այսօր ամուսնացել եմ և կնքվել իմ ամուսնու հետ ժամանակի և ողջ հավերժության համար: Իմ ընտանիքի հետ ապրելու օրհնությունը այս մահկանացու կյանքից հետո տալիս է ինձ մեծ հույս, երբ ես ձգտում եմ անել այն ամենը, ինչ կարող եմ, իմ ընտանիքի հետ հավերժ լինելու համար»:[3]

Ողջ աշխարհում Նախագահ Հինքլին օգնեց մարդկանց գտնել այս «մեծ հույսը», երբ նրանք ձգտում են ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանով: Ինչպես ցույց տվեց Գանայի իրադարձությունը, նա հաճախ միաժամանակ ծառայում էր հազարավոր մարդկանց: Նա նաև օգնության էր հասնում յուրաքանչյուրին՝

առանձին-առանձին: Յոթանասունից Երեց Ադնի Յ. Կամացուն պատմել է իր զգացումների մասին՝ որպես միսիայի նախագահ, երբ Նախագահ Հինքլին այցելել էր իր միսիա.

«Իմ ծառայության երեք տարիների ընթացքում ոչ մի անգամ նա չքննադատեց ինձ, չնայած իմ բոլոր թուլություններին: . . . Եվ դա ինձ առաջ էր մղում: . . . Ամեն անգամ, երբ նա դուրս էր գալիս ինքնաթիռից, բռնում էր ձեռքս, թափահարում, կարծես ջուր էր մղում ջրհորից մեծ խանդավառությամբ: «Դե , Նախագահ Կամացու, ինչպե՞ս են գործերը: . . . Դուք հիանալի գործ եք կատարում»: Նա այդպես էր ինձ քաջալերում . . . և երբ նա մեկնում էր, ես զգում էի, որ պետք է տայի 105 տոկոս, ոչ թե ուղղակի 100 տոկոս»:[4]

Մարդկանց քաջալերում էին Նախագահ Հինքլիի ոչ միայն ոգեշնչող խոսքերը , այլև նրա ապրելակերպը: Տասներկուսի Քվորումի Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը վերհիշում է.

«Երբ [Նախագահ և Քույր Հինքլին] ժողովատնից գնում էին օդանավակայան Կենտրոնական Ամերիկայում, նրանց մեքենան վթարի ենթարկվեց: Ես և Քույր Նելսոնը գնում էինք նրանց ետևից և տեսանք, թե ինչպես դա պատահեց: Մինչև գազաթը մետաղյա ձողերով ոչ ապահով [բարձված] մի բեռնատար մի խաչմերուկում մոտեցավ նրանց : Բախումից խուսափելու համար մեքենայի վարորդը հանկարծակի կանգնեցրեց բեռնատարը և այդ մետաղյա ձողերը սկսեցին թռչել նետերի նման՝ խոցելով Հինքլիների ավտոմեքենան: Պատուհանները փշրվեցին, թևերը և դռները ծռմռվեցին Վթարը կարող էր շատ ավելի լուրջ լինել: Մինչ փշրված ապակու բեկորները հեռացնում էին նրանց հագուստների և մաշկի վրայից, Նախագահ Հինքլին ասաց. «Շնորհակալություն Տիրոջը Նրա օրհնության համար, այժմ եկեք շարունակենք մեկ այլ մեքենայով»:[5]

Այս հայտարարությունը, որն ակամա արվեց վտանգավոր մի պահի, ներկայացնում է Նախագահ Հինքլիի կյանքը և ծառայությունը՝ որպես Հիսուս Քրիստոսի աշակերտի: Ինչպես Երեց Հոլլանդն է նկատել. «Նա միշտ հավատով էր լցված Աստծո և ապագայի հանդեպ»:[6]

Ընտանեկան ժառանգություն՝ հավատքի և հաստատակամության հիմք

Գորդոն Բիթներ Հինքլին ծնվել է 1910 թվականի հունիսի 23-ին. նա իր մոր առաջին երեխան էր, բայց իրենից մեծ ութ եղբայրներ և քույրեր ողջունեցին նրան ընտանիքում: Գորդոնի հայրը՝ Բրյանթ Սթրինգհամ Հինքլին ամուսնացել էր Ադա Բիթների հետ, իր առաջին կնոջ՝ Քրիսթինի մահից հետո: Ադան և Բրյանթը ունեցան ևս չորս երեխաներ Գորդոնից հետո, և նրանք մեծացրեցին իրենց երեխաներին սիրով և առանց խտրականության՝ որպես կիսով չափ եղբայրներ և կիսով չափ քույրեր: Վաղ մանկությունից Գորդոնը սովորեց բարձր գնահատել իր ընտանիքը:

Գորդոնի ազգանունը և միջին անունը իր ազնիվ ժառանգության հիշեցումներն էին: Գորդոն Բ. Հինքլիի նախահայրերը այն երկրի առաջին ուխտավորներն էին, որը դառնալու էր Ամերիկայի Միացյալ Նահանգները: Ոմանք վտարվել էին այդ երկիրը 1600-ականներին իրենց քրիստոնեական համոզմունքների պատճառով: Մյուսները ուղևորներ էին *Մեյֆլաուեր* նավում, որը 1620 թվականին Եվրոպայից Հյուսիսային Ամերիկա ներգաղթողներ տեղափոխող առաջին նավերից էր: Ավելի քան երկու դար հետո Գորդոնի հայրական պապը՝ Իրա Նաթանիել Հինքլին, վաղ շրջանի Վերջին Օրերի Սուրբ ռահվիրաներից մեկն էր: 1843 թվականին 14-ամյա պատանի Իրան , ով նոր էր որբացել, Ջոզեֆ և Հայրում Սմիթի քարոզը լսելուց հետո միացավ Եկեղեցուն Նավուում (Իլլինոյս): Գորդոնի նախատատը՝ Աննա Բարր Մուսսեր Բիթներ Սթարրը, նույնպես ռահվիրաներից էր: Նրա որդին՝ Բրենեման Բարր Բիթները, Գորդոնի մայրական պապը, հետագայում վերհիշում է իրենց ճանապարհորդությունը դեպի Սոլթ Լեյքի հովիտ 1849 թվականին. «Ես [11 տարեկանում] վարում էի երկու զույգ եզ և մի ծանր բեռնված կառք՝ շոգի և ցրտի, անապատների, գետերի ու լեռների միջով, դեպի այս հովիտը»:[7]

Բրյանթ Հինքլին հաճախ հիշեցնում էր իր երեխաներին և թոռներին ու ծոռներին իրենց հարուստ ժառանգության մասին: Խոսելով *Մեյֆլաուեր* նավի վտանգավոր ճանապարհորդության և երկար դաժան ձմռան մասին, երբ նրանք հասան իրենց նշանակետին, նա մի անգամ ասել է. «Երբ *Մեյֆլաուերը* պատրաստ էր գարնանը վերադառնալ, [102-ից] միայն 49-ն էին կենդանի

մնացել: Ոչ ոք չվերադարձավ [Անգլիա]: Այս ոգին՝ երբեք ետ չվերադառնալու ոգին, ծնվում է ձեր մեջ, ընկերներ»:[8] Երբ Գորդոնը հավատարիմ մնաց այս սկզբունքին, նա այնպիսի հնարավորություններ ստացավ սովորելու, ծառայելու ու վկայելու, որը նա երբեք չէր կարող պատկերացնել:

Մանկություն՝ սովորել լինել լավատես, ջանասեր և հավատարիմ

Մանուկ հասակում Գորդոն Հինքլին այնքան եռանդուն ու աշխույժ չէր, որքան հետագա տարիներին, երբ մարդիկ սկսեցին ճանաչել նրան: Նա « վտիտ, փխրուն տղա էր»՝ զգայուն հիվանդությունների հանդեպ:[9] Երբ երկու տարեկան Գորդոնը «հիվանդացավ սուր կապույտ հազով, . . . բժիշկն ասաց Ադային, որ միակ դեղամիջոցը գյուղի մաքուր օդն էր: Բրյանթը արձագանքեց՝ գնելով հինգ ակր հողով ագարակ . . . և կառուցեց մի փոքրիկ ամառային տնակ»:[10] Ագարակը գտնվում էր Սոլթ Լեյքի հովտի մի տարածքում, որը կոչվում էր Իսթ Միլլ Քրիք և օրհնություն էր ողջ ընտանիքի համար, ապահովելով երեխաների համար մի տեղ՝ թափառելու, խաղալու ու սովորելու արժեքավոր դասեր, երբ նրանք աշխատում էին միասին:

Ադան և Բրյանթ Հինքլին լավատես, ջանասեր ծնողներ էին, ովքեր ստեղծեցին աճելու և հաջողության հասնելու հնարավորություններ իրենց երեխաների համար: Հենց որ ծրագիրը ներկայացվեց 1915 թվականին, նրանք անցկացնում էին ընտանեկան երեկոներ: Քնելուց առաջ նրանք կիսվում էին պատմություններով, հաճախ՝ սուրբ գրքերից: Նրանք մի սենյակ հատկացրեցին իրենց տանը գրադարանին, որտեղ երեխաները կարող էին կարդալ լավ գրքեր: Նրանք իրենց երեխաների մեջ կարգ ու կանոն սերմանեցին՝ խրախուսելով և նրանցից ակնկալելով լավագույնը:

Երբ Գորդոնը մեծացավ, նրա հավատը աճեց , սնուցվելով իր ծնողների հավատի մշտական ազդեցությամբ: Հետո նա ունեցավ մի փորձառություն, որն օգնեց հիմք ձևավորել Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին իր վկայության համար:

«Երբ ես տասներկու տարեկան տղա էի, հայրս ինձ տարավ քահանայության մի ժողովի այն ցցում, որտեղ մենք ապրում

էինք: Ես նստած էի ետևի շարքում, մինչ նա, որպես ցցի նախագահ, նստած էր բեմում: Ես առաջին անգամն էի մասնակցում այդպիսի ժողովի, որի բացման ժամանակ երեքից չորս հարյուր տղամարդ կանգնեցին: Նրանք տարբեր ծագումի և բազում մասնագիտությունների տեր մարդիկ էին, սակայն նրանցից յուրաքանչյուրն իր սրտում ուներ նույն համոզմունքը, որով միասին երգում էին այս հիանալի խոսքերը.

Գովք տանք մարդուն, որ տեսավ Եհովային
Հիսուսի ձեռքով օծվեց մարգարեն,
Որ մեզ հաղորդե Աստծո խոսքը վերին,
Պատվելու են նրան ազգերն ամեն:

«Իմ ներսում ինչ-որ բան կատարվեց, երբ ես լսում էի այդ հավատքով տղամարդկանց երգը: Իմ տղայական սիրտը մտավ մի գիտելիք, այնտեղ դրված Սուրբ Հոգու կողմից, որ Ջոզեֆ Սմիթն իսկապես Ամենազորի մարգարեն է»:[11]

Շարունակել կրթությունը և փորձության ժամանակներ

Իր վաղ մանկության տարիներին Գորդոնը չէր սիրում դպրոցը՝ նախընտրելով մաքուր օդը դասարանի պատերից և գրասեղաններից: Սակայն, երբ նա հասունացավ, սովորեց նույնքան գնահատել գրքերը, դպրոցը և տան գրադարանը, որքան դաշտերը, որտեղ նա բոբիկ վազում էր, երբ փոքր տղա էր: Նա ավարտեց միջնակարգ դպրոցը 1928 թվականին և այդ նույն տարում սկսեց ուսումը Յուտայի համալսարանում:

Համալսարանում ուսման չորս տարիները իրենցից ներկայացնում էին գրեթե հսկայական մարտահրավերներ: 1929 թվականին Միացյալ Նահանգների ֆոնդային շուկան փլուզվեց, և Մեծ Դեպրեսիան տարածվեց ողջ երկրում և աշխարհում: Գործազրկությունը մոտավորապես 35 տոկոս էր կազմում Սոլթ Լեյք Սիթիում, բայց Գորդոնի բախտը բերել էր. նա սպասարկման ոլորտի աշխատող էր, որով վճարում էր ուսման վարձը և դպրոցական պարագաների համար: Բրյանթը, ով աշխատում էր որպես ղեկավար Եկեղեցու Դեզերեթի կենտրոնում, կրճատեց իր աշխատավարձը, որպեսզի մյուս աշխատողները կարողանային պահել իրենց աշխատատեղերը:[12]

Գորդոն Բ. Հինքլին պատանեկան տարիքում

Այս ֆինանսական խնդիրները ետին պլան մղվեցին, երբ հայտնաբերվեց, որ Գորդոնի մայրը քաղցկեղ ուներ: Նա մահացավ 1930 թվականին 50 տարեկանում, երբ Գորդոնը 20 տարեկան էր: Վերքերը, որոնք առաջացան նրա մոր մահվան պատճառով, «խորն էին և ցավոտ», - ասել է Գորդոնը:[13] Այս անձնական փորձությունը, միավորվելով աշխարհիկ փիլիսոփայությունների ազդեցության և այդ ժամանակների ցինիզմի հետ, նրա մոտ դժվար հարցեր առաջացրին: «Դա սոսկալի հուսահատության ժամանակաշրջան էր», վերհիշում էր Գորդոնը և դա խիստ էր զգացվում համալսարանի տարածքում: Ես ինքս էլ զգում էի որոշ բան: Ես սկսեցի կասկածի տակ դնել որոշ բաներ, ներառյալ՝ իմ ծնողների հավատը որոշ չափով: Դա անսովոր չէր

համալսարանի ուսանողների համար, բայց մթնոլորտը առանձնապես լարված էր այդ ժամանակ։[14]

Գորդոնի մոտ առաջացող հարցերը չնայած անհանգստացնող էին, բայց չխախտեցին նրա հավատը։ « Իմ ներսում կար սիրո գերակշռող հիմք, որը գալիս էր հիանալի ծնողներից և լավ ընտանիքից, հիանալի եպիսկոպոսից, նվիրված և հավատարիմ ուսուցիչներից և սուրբ գրքերը ընթերցելուց և խորհելուց», վերհիշում է նա։ Խոսելով իր և իր հասակակիցների համար այդ ժամանակների մարտահրավերների մասին, նա ասել է. «Չնայած մեր պատանեկության տարիներին մենք դժվարանում էինքշատ բաներ հասկանալ, սակայն մեր սրտերում կար Աստծո և Նրա մեծ աշխատանքի հանդեպ սիրո ինչ-որ զգացում, որը մեզ վեր էր պահում բոլոր կասկածներից և վախերից։ Մենք սիրում էինք Տիրոջը և լավ ու պատվավոր ընկերներին։ Այսպիսի սիրուց մենք մեծ ուժ էինք ստանում»։[15]

Միսիոներական ծառայություն և անձնական դարձ

Գորդոնն ավարտել է Յուտայի Համալսարանը 1932 թվականի հունիսին, գլխավոր մասնագիտությունը՝ անգլերեն լեզու , իսկ երկրորդականը՝ հնադարյան լեզուներ։ Մի տարի անց նա հայտնվեց կյանքի խաչմերուկներում։ Նա անհամբեր սպասում էր իր կրթությունը շարունակելուն, որպեսզի դառնար լրագրող։ Նույնիսկ Դեպրեսիայի ժամանակ նա մի համեստ խնայողություն ուներ հաշվեհամարի վրա՝ վճարելու իր կրթության համար։ Նա նաև մտածում էր ամուսնության մասին։ Նա և օրիորդ Մարջորի Փեյը, ով ապրում էր փողոցի մյուս կողմում, աճող համակրանք էին զգում միմյանց հանդեպ։

Այնուհետև իր 23-րդ տարեդարձից առաջ Գորդոնը հանդիպեց իր եպիսկոպոսի՝ Ջոն Ք. Դունկանի հետ, ով հարցրեց, թե նա արդյոք մտածել էր միսիայում ծառայելու մասին։ Սա Գորդոնի համար «ցնցող առաջարկ էր»,[16] քանի որ Դեպրեսիայի տարիներին քիչ երիտասարդ տղամարդիկ էին կանչվում միսիա ծառայելու։ Ընտանիքները պարզապես միջոցներ չունեին նրանց աջակցելու համար։

Գորդոնն ասաց Եպիսկոպոս Դունկանին, որ կցանկանար ծառայել, բայց անհանգստանում էր, որ իր ընտանիքը

ֆինանսապես չէր հասցնի: Նրա մտահոգությունները մեծացան, երբ իմացավ, որ բանկը, որը պահում էր իր խնայողությունները, սնանկացել էր: «Այնուամենայնիվ,- ասել է նա,- հիշում եմ, որ հայրս ասաց.«Մենք կանենք այն ամենը, ինչ կարող ենք, որպեսզի հոգանք քո կարիքները »: Եվ նա ու եղբայրս պարտավորվեցին ինձ օժանդակել իմ միսիայի ընթացքում: Այդ ժամանակ մենք հայտնաբերեցինք խնայողությունների մի փոքր հաշիվ, որը մայրս էր թողել՝ մանրադրամ, որը նա խնայել էր մթերքի և այլ ապրանքների գնումներից: Պարզվեց, որ այդ լրացուցիչ փոքրիկ օգնությամբ ես կարող էի միսիա գնալ: Նա սրբազան էր համարում իր մոր կոպեկները: «Ես պատվով պահպանեցի դրանք», ասաց նա:[17] Նա կանչվեց ծառայելու Եվրոպական Միսիայում:

Զգալով, որ իր որդին դեռ անհանգիստ էր զգում, Բրյանթ Հինքլին պատրաստեց մի հասարակ հիշեցում՝ ուժի իսկական աղբյուրի մասին: Հետագայում Գորդոնն ասել է. «Երբ ես միսիա մեկնեցի, իմ հիանալի հայրը ինձ տվեց մի քարտ, որի վրա գրված էին հինգ բառ . . . «Մի վախենար, բայց միայն հաւատա (Մարկոս 5.36)»:[18] Այդ խոսքերը ոգեշնչելու էին Երեց Գորդոն Բ. Հինքլիին՝ հավատարիմ ու պատվավոր ծառայելու միսիայում, հատկապես, երբ մի քանի շաբաթ հետո դրանց միացան իր հոր գրչով գրված ևս վեց բառ:

Այդ լրացուցիչ վեցը բառերը եկան ուժեղ հուսահատության մի շրջանում, որը սկսվել էր 1933 թվականի հունիսի 29-ին, Երեց Հինքլիի Անգլիայի Պրեստոնում գտնվելու առաջին օրը: Երբ նա եկավ իր բնակարանը, նրա զուգընկերն ասաց նրան, որ այդ երեկո խոսելու էին քաղաքի հրապարակում: «Դուք սխալ մարդու եք ընտրել ձեզ հետ գնալու համար»,- պատասխանեց Երեց Հինքլին, ով ընդամենը մի քանի ժամ հետո՝ հայտնվելով բեմի վրա, երգեց և խոսեց պարապ հանդիսականների մի ամբոխի առջև:[19]

Երեց Հինքլին հայտնաբերեց, որ շատ մարդիկ չէին կամենում լսել վերականգնված ավետարանի ուղերձը: Աղքատությունը, որը ստեղծվել էր ողջ աշխարհում ֆինանսական դեպրեսիայի պատճառով, թվում էր ներթափանցել էր մարդկանց հոգիները, ովքեր հրմշտում էին նրան ավտոբուսներում, և նա քիչ բան էր գտնում նրանց մեջ, դեպի իրենց՝ նրան ձգելու համար: Բացի այդ

Երեց Գորդոն Բ. Հինքլին՝ որպես լիաժամկետ միսիոներ Անգլիայում, քարոզում է Լոնդոնի Հայդ Պարկում

նա իրեն ֆիզիկապես թշվառ էր զգում: Նա հիշում է. «Անգլիայում խոտը ծաղկում է և սերմ է դառնում հունիսի վերջին և հուլիսի սկզբին, որը ճիշտ այն ժամանակ էր, երբ ես ժամանեցի»[20] Սա նրա մոտ ալերգիա առաջացրեց, որը նրա վիճակն ավելի վատթարացրեց : Նա կարոտում էր իր ընտանիքին: Նա կարոտում էր Մարջորիին: Նա կարոտում էր իր երկրի բարեկամական հարաբերություններին: Աշխատանքը հիասթափեցնող էր: Նա և նրա ընկեր միսիոներները շատ քիչ հնարավորություններ ունեցան ուսուցանելու ունկնդիրներին, չնայած ամեն կիրակի նրանք ուսուցանում էին և ելույթ ունենում փոքրիկ ճյուղերում:

Զգալով, որ վատնում էր իր ժամանակը և իր ընտանիքի փողերը, Երեց Հինքլին մի նամակ գրեց իր հորը՝ բացատրելով իր

դժբախտ վիճակը: Բրյանթ Հինքլին պատասխանեց խորհրդով, որին նրա որդին հետևեց իր ողջ կյանքում: «Սիրելի Գորդոն, գրել է նա, ես ստացա քո վերջին նամակը: Ես միայն մի առաջարկ ունեմ»: Եվ այդ ժամանակ այդ վեց բառերը կշիռ ավելացրին այն հինգին, որոնք նա գրել էր ավելի վաղ. «Մոռացիր ինքդ քեզ և գնա աշխատիր»:[21] Այս խորհուրդը դարձավ սուրբ գրության այն հատվածի արձագանքը, որը Երեց Հինքլին կարդացել էր իր զուգընկերոջ հետ այդ օրը վաղ առավոտյան: «Որովհետեւ, ով որ կամենայ իր անձն ապրեցնել՝ կկորցնէ նորան. եւ ով որ իր անձն ինձ համար եւ աւետարանի համար կորցնէ, նա կապրեցնէ նորան» (Մարկոս 8.35):

Իր հոր նամակը ձեռքում երիտասարդ Երեց Հինքլին իջավ ծնկի և երդվեց, որ նա կնվիրաբերի իրեն Տիրոջը: Արդյունքն անմիջապես երևաց: «Ամբողջ աշխարհը փոխվեց»,- ասել է նա: Մառախուղը բարձրացավ: Արևը սկսեց փայլել իմ կյանքում: Ես նոր հետաքրքրություն ունեի: Ես տեսա այդ երկրի գեղեցկությունը: Ես տեսա այդ ժողովրդի մեծությունը: Ես սկսեցի զգալ տանը այդ սքանչելի երկրում»:[22]

Հիշելով այդ օրերը, Գորդոնը բացատրել է, որ նա օգնություն էր ստացել նաև իր մորից: Նա զգացել էր նրա մխիթարող ներկայությունը, հատկապես խավար և հուսահատեցնող ժամանակներում: «Ես փորձեցի այդ ժամանակ, ինչպես այդ ժամանակից ի վեր փորձել եմ, այնպես վարել իմ կյանքը և կատարել իմ պարտականությունը, որպեսզի պատիվ բերեմ նրա անունին», - ասաց նա: «Մորս ակնկալիքներից ցածր ապրելը ցավոտ է եղել, և հանդիսացել է մի սկզբունք, որը հակառակ դեպքում կարող էր բացակայել»:[23]

Նա դարձավ նպատակասլաց և եռանդուն միսիոներ: Առաջին ութ ամիսների նրա միսիայի արձանագրությունները ցույց են տալիս, որ չնայած նա չէր մկրտել որևէ մեկին, նա բաժանել էր 8785 գրքույկներ, անցկացրել ավելի քան 440 ժամ անդամների հետ, հաճախել 191 ժողովների, ունեցել ավետարանի 220 զրույցներ և հաստատել մեկ անդամի:[24]

1934 թվականի մարտին Երեց Հինքլին փոխադրվեց Պրեստոնից Լոնդոն՝ աշխատելու Տասներկու Առաքյալների Քվորումից որպես Ջոզեֆ Ֆ. Մերրիլի օգնական, ով նախագահում էր Բրիտանական և Եվրոպական միսիաներում:[25] Նա իր միսիայի

մնացած մասն անցկացրեց այնտեղ, աշխատելով գրասենյակում ցերեկով և ուսուցանելով ավետարանը երեկոյան: Նորադարձների մկրտությունները քիչ էին, բայց Բրյանթ և Ադա Հինքլիների որդու սրտում դարձի կայծը դարձավ հաստատուն բոց:

Նոր հնարավորություն ծառայելու Տիրոջը

Երբ Գորդոնը վերադարձավ միսիայից, նա ասաց. «Ես այլևս երբեք չէի ցանկանա ճանապարհորդել: Ես այնքան հեռու էի ճանապարհորդել, որ կրկին չէի կամենա ճանապարհորդել»:[26] Նա և երկու միսիոներ զուգընկերները տունդարձի ճանապարհին ճանապարհորդել էին Եվրոպայով և Միացյալ Նահանգներով , որը սովորական փորձառություն էր այդ օրերին, և նա հոգնել էր: Երբ նրա ընտանիքը շուտով գնաց արձակուրդ իր վերադարձից հետո, նա մնաց տանը: Չնայած իր հոգնածությանը, նա մեծ բավականություն էր ստանում, երբ մտածում էր իր ճանապարհորդությունների մասին, նա զգում էր, որ տեսել էր իր հայրապետական օրհնության իրականացման մի մասը: Շատ տարիներ անց նա ասել է.

«Ես ստացա հայրապետական օրհնություն, երբ պատանի էի: Այդ օրհնության մեջ ասվում էր, որ ես կբարձրացնեմ իմ ձայնը ճշմարտության վերաբերյալ վկայությամբ՝ երկրի ազգերի մեջ: Ես աշխատել էի Լոնդոնում երկար ժամանակ և շատ անգամներ էի տվել իմ վկայությունն այնտեղ: Մենք [գնացինք Ամստերդամ], և ես հնարավորություն ունեցա մի ժողովում ասել մի քանի խոսք և ներկայացնել իմ վկայությունը: Ապա մենք գնացինք Բեռլին, որտեղ ես ունեցա նմանատիպ հնարավորություն: Հետո մենք գնացինք Փարիզ, որտեղ ես ունեցա ևս մեկ հնարավորություն: Ապա մենք գնացինք Միացյալ Նահանգներ, Վաշինգտոն (Կոլումբիայի շրջան), և կիրակի օրը այնտեղ ես ունեցա նմանատիպ հնարավորություն: Երբ տուն եկա, ես հոգնած էի: . . . Ես ասացի, «. . . ես ավարտեցի իմ օրհնության [այդ] փուլը: Ես բարձրացրել եմ իմ ձայնը աշխարհի մեծ մայրաքաղաքներում: . . .» Եվ ես իսկապես այդպես էի զգում»:[27]

Նախքան Գորդոնն իր միսիան ավարտված կհամարեր, նա ստիպված էր կատարել ևս մեկ հանձնարարություն: Երեց Ջոզեֆ Ֆ. Մերրիլը խնդրել էր նրան պայմանավորվել Եկեղեցու Առաջին

Գորդոն Բ. Հինքլիին՝ որպես Եկեղեցու ռադիոյի, հրապարակայնության և միսիոներական գրականության հանձնաժողովի աշխատակից

Նախագահության հետ՝ հաշվետվություն տալու Բրիտանական և Եվրոպական միսիաների կարիքների մասին: 1935 թվականի օգոստոսի 20-ի առավոտյան՝ տուն վերադառնալուց մեկ ամիս չանցած, Գորդոնին ուղեկցեցին Եկեղեցու Կառավարական շենքի խորհրդատվական սենյակ: Ձեռք սեղմելով Առաջին Նախագահության յուրաքանչյուր անդամի ՝ Նախագահ Հեբեր Ջ. Գրանթի, Ջ.Ռուբեն Քլարկ Կրտսերի և Դեյվիդ Օ. Մակքեյի հետ, նա հանկարծակի ճնշված զգաց այն հանձնարարությունից, որը նրան էր տրվել: Նախագահ Գրանթն ասաց.«Եղբայր Հինքլի, մենք կտանք ձեզ տասնհինգ րոպե ասելու մեզ, թե ինչ է Երեց Մերրիլը կամենում, որ մենք լսենք»:[28]

15 րոպեի ընթացքում վերջերս վերադարձած միսիոները ներկայացրեց Երեց Մերրիլի մտահոգությունը, որ միսիոներները կարիք ունեն ավելի լավ տպագրված նյութերի, որոնք կօգնեին նրանց իրենց աշխատանքում: Ի պատասխան՝ Նախագահ Գրանթը և նրա խորհրդականները տվեցին հարց հարցի ետևից, և հանդիպումը ձգվեց մեկ ժամից ավել, քան ծրագրված էր:

Ժողովից տունդարձի ճանապարհին Գորդոնը չէր կարող կռահել, թե այդ 75 րոպեն ինչպես էր ազդելու իր կյանքի վրա: Երկու օր հետո նա մի զանգ ստացավ Նախագահ ՄակՔեյի կողմից, ով նրան աշխատանք առաջարկեց՝ որպես նոր կազմավորված Եկեղեցու ռադիոյի, հրապարակայնության և միսիոներական գրականության հանձնաժողովի գործադիր քարտուղար: Այս հանձնաժողովը, որը բաղկացած էր Տասներկուսի Քվորումի վեց անդամներից, աշխատելու էր՝ բավարարել այն կարիքները, որոնք Գորդոնն էր ներկայացրել Առաջին Նախագահության հետ իր հանդիպման ընթացքում: [29]

Մեկ անգամ ևս Գորդոնը հետաձգեց բարձրագույն կրթության և լրագրողի կարիերայի իր պլանները: Նա գնաց աշխատելու՝ ստեղծելով սցենարներ ռադիո ծրագրերի և տեսաֆիլմերի համար, գրելով գրքույկներ միսիոներների համար, զարգացնելով մասնագիտական կապեր լրատվության ռահվիրաների հետ և հետազոտելով ու գրելով Եկեղեցու պատմության մասին: Նա ներդրում կատարեց Եկեղեցու անդամների հավատքը մեծացնելու նպատակով ուղերձներ հրապարակելու և Եկեղեցուց դուրս մարդկանց հետ կապեր հաստատելու գործում : Ընկերներից մեկը մի անգամ մի նամակ ուղարկեց՝ հաճոյախոսելով նրա ռադիոսցենարների մասին և հարցրեց, թե ինչպես էր նա զարգացրել գրելու և խոսելու այդպիսի պարգև:: Գորդոնը պատասխանեց.

«Եթե ես ունեմ խոսելու և գրելու տաղանդ, ես չափազանց երախտապարտ եմ իմ Երկնային Հորը: Ես չեմ կարծում, որ դա բնական ունակություն է, ավելի շուտ, ամեն զորություն, որ ես, հնարավոր է, ունենամ, եկել է այն հնարավորությունների միջոցով, որոնք բացվել են ինձ համար»: [30]

Հանձնաժողովի հետ Գորդոնի աշխատանքը հղկեց նրա հմտությունները որպես գրող: Այն նաև ընձեռեց արժեքավոր հնարավորություն սովորելու առաքյալներից և մարգարեներից: Երբ Գորդոնը տեսնում էր, թե Տասներկուսի վեց անդամներն ինչպես են որոշումներ կշռադատում և ուսուցանում միմյանց, նա ավելի լավ էր հասկանում այս տարբեր մարդկանց սուրբ կոչումը և հայտնության գործընթացը, որը տեղի էր ունենում, երբ նրանք միասին խորհրդակցում էին:

Երեց Սթիվեն Լ. Ռիչարդսը, ով հետագայում ծառայեց որպես Առաջին Նախագահության Առաջին խորհրդական, հանձնաժողովի նախագահն էր: Գորդոնը նկարագրել է նրան՝ որպես «լրջմիտ, կշռադատված, զգույշ և իմաստուն: Նա երբեք չէր շտապում սկսել գործը, այլ շրջահայացորեն զննում էր՝ մինչև սկսելը: Ես սովորեցի, որ ավելի լավ է զգուշորեն սկսել այս աշխատանքը, որովհետև ինչ որոշում էլ ընդունում եք, այն ունենում է հեռուն գնացող հետևանքներ և ազդեցություններ շատ մարդկանց ճակատագրերի վրա:[31]

Հանձնաժողովի մյուս հինգ անդամներն էին Երեց Մելվին Ջ. Բալլարդը, Ջոն Ա. Ուիդսոուն, Չարլզ Ա. Քելլիսը, Ալոնզո Ա. Հինքլին (Գորդոնի հորեղբայրը) և Ալբերտ Ի. Բովենը: Նրանց մասին Գորդոնն ասել է.

«Ես հիանալի հարաբերությունների մեջ էի այդ մեծ մարդկանց հետ, ովքեր շատ բարի էին իմ հանդեպ: Բայց ես սովորեցի, որ նրանք մարդիկ էին: Նրանք ունեին թուլություններ և խնդիրներ, բայց դա չէր անհանգստացնում ինձ: Փաստորեն դա ուժեղացնում էր իմ հարգանքը նրանց հանդեպ, որովհետև ես տեսա նրանց երկրային վիճակից վեր բարձրացող աստվածային կամ առնվազն նվիրագործման մի տարր այն վիթխարի գործին, որը նրանց կյանքում առաջնահերթ էր: Ես տեսա ոգեշնչումը, որը գործում էր նրանց կյանքում: Ես կասկած չունեի նրանց մարգարեական կոչումների կամ այն փաստի վերաբերյալ, որ Տերը խոսում և գործում էր նրանց միջոցով: Ես տեսնում էի նրանց մարդկային կողմերը և նրանց որոշ թուլությունները: Բայց ես տեսնում էի նաև Տիրոջ հանդեպ նրանց հավատի և սիրո գերիշխող ուժը և նրանց բացարձակ հավատարմությունը այն աշխատանքին և վստահությանը, որը դրված էր նրանց մեջ»:[32]

Ամուսնություն, ընտանիք և եկեղեցական ծառայություն

Իհարկե Գորդոնը միայն աշխատանքի մասին չէր մտածում: Նրա սիրավեպը Մարջորի Փեյի հետ շարունակվում էր, երբ նա վերադարձավ Անգլիայից: Նրա մեկնումը հավասարաչափ դժվար էր Մարջորիի և նրա համար : «Ես մտահոգված էի նրա՝ միսիայում ծառայելու համար,- ասել է Մարջորին

Մարջորի Փեյ

հետագայում,- ես երբեք չեմ մոռանա դատարկության և մենակության զգացումը, որ ես զգացի, երբ այդ գնացքը դուրս եկավ կայարանից»:[33]

Գորդոնի Անգլիա մեկնելուց 4 տարի առաջ 1929 թվականի աշնանը Մարջորին գրանցվեց Յուտայի Համալսարանում դասերի հաճախելու համար, պարզելով, որ իր հայրը նոր էր կորցրել իր աշխատանքը Մեծ Դեպրեսիայի պատճառով: Նա անմիջապես թողեց իր դասերը և քարտուղարուհու աշխատանք գտավ, որ օգնի կերակրել իր ծնողներին և հինգ փոքր քույրերին և եղբայրներին: Նա այլևս երբեք հնարավորություն չունեցավ ձեռք բերել բարձրագույն կրթություն, բայց վճռել էր շարունակել ուսումը. նա զբաղվում էր ինքնակրթությամբ՝ կարդալով:

Մարջորիի զվարթ տրամադրվածությունը, աշխատանքի էթիկան և խորը նվիրվածությունը ավետարանին հարազատ

էր դարձնում նրան Գորդոնի հետ, և նա տպավորված էր նրա բարությամբ և հավատով: «Երբ մոտենում էր ամուսնության օրը, ասել է նա,- ես լիովին վստահ էի, որ Գորդոնը սիրում էր ինձ: Բայց ես նաև գիտեի , որ ես երբեք նրա համար առաջինը չէի լինելու: Ես գիտեի, որ ես լինելու էի երկրորդը նրա կյանքում, իսկ առաջինը Տերն էր լինելու: Եվ դա այդպես պիտի լիներ»: Նա շարունակեց. «Ինձ թվում է, որ եթե դուք հասկանաք ավետարանը և մեր կյանքի նպատակն այստեղ, դուք կկամենաք ունենալ մի ամուսին, ով Տիրոջն առաջին տեղում է դնում: Ես ապահով է զգում՝ իմանալով, որ նա այդպիսի մարդ է»:[34]

Գորդոնը և Մարջորին ամուսնացան Սոլթ Լեյք Սիթիի Տաճարում 1937 թվականի ապրիլի 29-ին և փոխադրվեցին Հինքլիների ամառանոցը Իսթ Միլ Քրիքում: Նրանք տեղադրեցին մի վառարան, կատարեցին այլ բարեփոխումներ, որոնք անհրաժեշտ էին ողջ տարին այնտեղ ապրելու համար, խնամեցին պտղատու այգին և բանջարանոցը և սկսեցին կառուցել իրենց սեփական տունը հարևան հողակտորի վրա: Եվ այսպիսով գյուղական տարածքը, ուր Գորդոնը այնքան սիրել էր հանգստանալ իր մանկության տարիներին՝ ամռանը , դարձավ այն վայրը, որտեղ նա և Մարջորին ստեղծելու էին իրենց օջախը և մեծացնելու իրենց երեխաներին՝ Քեյթլինին, Ռիչարդին, Վիրջինիային, Քլարկին և Ջեյնին:

Գորդոնը և Մարջերին հաստատեցին սիրո, փոխադարձ հարգանքի, տքնաջան աշխատանքի և ավետարանով ապրելու տուն: Ամենօրյա ընտանեկան աղոթքն ապահովում էր պատուհան երեխաների համար՝ տեսնելու իրենց ծնողների հավատքն ու սերը: Երբ ընտանիքն աղոթում էր միասին, երեխաները զգում էին նաև իրենց Երկնային Հոր մոտիկությունը:

Հինքլիների տունը քիչ կանոնների, բայց մեծ ակնկալիքների վայր էր: Մարջորին խոսում էր բաների մասին, որ ընտանիքում վեճ չառաջանար: Նկարագրելով իր և ամուսնու ծնողական մոտեցումը, նա ասել է. «Ես սովորեցի, որ պետք է վստահեի իմ երեխաներին, այսպիսով ես փորձում էի երբեք չասել ոչ, եթե հնարավոր էր ասել այո: Երբ մենք մեծացնում էինք մեր երեխաներին, աշխատում էինք ամեն օր ամեն ինչ հասցնել և այդ ընթացքում էլ մի փոքր զվարճանալ: Երբ ես տեսա, որ ի վիճակի չէի ամեն դեպքում կայացնել իմ երեխաների բոլոր որոշումները,

ես փորձեցի չանհանգստանալ ամեն փոքր բանի համար»:[35] Որպես իրենց ծնողների վստահության արդյունք, երեխաներն իրենց զգացին հարգված և ձեռք բերեցին փորձառություն և վստահություն: Իսկ երբ պատասխանը ոչ էր, երեխաները հասկանում էին, որ դա կամայական սահմանափակում չէր:

Հինքլիների տունը լի էր նաև ծիծաղով: Մարջորին մի անգամ ասել է. «Կյանքի դժվարությունները հաղթահարելու միակ միջոցն այն է, որ այդ ուղին ծիծաղով անցնենք: Դուք կամ պետք է ծիծաղեք կամ լաց լինեք: Ես նախընտրում եմ ծիծաղել: Լաց լինելը ինձ մոտ գլխացավ է առաջացնում»:[36] Այն ծնողների հետ, ովքեր կարողանում էին ծիծաղել իրենց վրա և հումոր գտնել ամենօրյա կյանքում, երեխաները իրենց տունը տեսնում էին որպես հիասքանչ ապաստան:

Եկեղեցու ծառայությունը միշտ Գորդոնի և Մարջորիի համար իրենց կյանքի մի մասն է կազմել: Գորդոնը ծառայում էր որպես ցցի կիրակնօրյա դպրոցի վերահսկիչ , իսկ հետո կանչվեց Կիրակնօրյա դպրոցի բարձրագույն խորհուրդ, որտեղ նա ծառայեց ինը տարի: Հետագայում նա ծառայեց որպես ցցի նախագահության խորհրդական և որպես ցցի նախագահ, մինչ Մարջորին ծառայում էր Երեխաների Միությունում, Երիտասարդ Կանանց մոտ կամ Սփոփող Միությունում: Նրանց երեխաները նայում էին եկեղեցական ծառայությանը որպես հաճելի արտոնության. դա մի օրինակ է, որին նրանցից յուրաքանչյուրը հետևելու էր իր հասուն տարիներին:

Նախապատրաստություն մասնագիտական ջանքերի միջոցով

Մարջորիի և Գորդոնի ամուսնության առաջին վեց տարիների ընթացքում Գորդոնը շարունակում էր աշխատել Եկեղեցու ռադիոյի, հասարակայնության և միսիոներական գրականության հանձնաժողովում: Նա նվիրված էր իր աշխատանքին. իր ունակությունների սահմաններում և դրանից էլ այն կողմ նա իրականացնում էր նախագծերը վերջնաժամկետների ջ: Իր ընկերոջն ուղղված մի նամակում նա գրել է.

Գորդոն Բ. Հինքլի

«Շատ բան կա անելու։ Այս երկար անունով հանձնաժողովի աշխատանքը գնալով ընդարձակվում է և ավելի բարդանում և ավելի հետաքրքիր դառնում։ . . .

«. . . Ռադիոն, կինոֆիլմերը և տարբեր տեսակի գրականությունը . . . ծառայում են՝ պահելով ինձ աղոթող, խոնարհ, մշտազբաղ և աշխատանքի մեջ երկար ժամերի ընթացքում։ . . . Այս բոլորը նպաստել է, որ ես դառնամ ավելի կախված իմ ակնոցից, . . . մի քիչ ավելի կլորացած ուսերով, մի քիչ ավելի հավասարակշռված և մի քիչ ավելի զարմացած, թե դեպի ուր են այս ամենը տանում։[37]

1940-ականների սկզբին Համաշխարհային II պատերազմը փոփոխություն բերեց Գորդոնի աշխատանքի մեջ։ Լիաժամկետ միսիոներական աշխատանքը փաստորեն կանգ առավ

պատերազմի պատճառով, այսպիսով միսիոներական աշխատանքի համար նյութեր պատրաստելու նրա աշխատանքը դարձավ պակաս անհրաժեշտ : Զգալով պատասխանատվություն՝ ջանք էր գործադրում օգնելու պատերազմի մեջ գտնվող իր երկրին , որի համար նա դիմեց սպայական թեկնածուների դպրոց Միացյալ Նահանգների նավատորմում: Սակայն, ալերգիայի պատճառով նրան որակազրկեցին: «Մերժումը ընկճեց ինձ», հետագայում խոստովանեց նա: Պատերազմը շարունակվում էր և ամեն մեկն անում էր ինչ որ բան՝ օգնելու համար: Ես զգում էի, որ ես ինչ-որ ձևով պետք է մասնակցեի»:[38] Այս ցանկությունը առաջնորդեց նրան աշխատանքի համար դիմել Դենվեր և Ռիո Գրանդ Ռեյլռոուդ ընկերությանը՝ որպես կառավարիչի օգնական: Քանի որ գնացքները կարևոր էին զորքեր և պատերազմի պաշարներ տեղափոխելու համար, Գորդոնը զգում էր, որ այս աշխատանքը կօգներ նրան ծառայել իր երկրին: Ընկերությունը վարձեց նրան 1943 թվականին և նա աշխատեց Սոլթ Լեյք Սիթիի դեպոյում, մինչև որ նրա ընտանիքը տեղափոխվեց Դենվեր, (Կոլորադո) 1944 թվականին:

Երկաթուղիների ղեկավարները տպավորած էին Գորդոնի աշխատանքով, և երբ 1945 թվին պատերազմն ավարտվեց, նրան առաջարկեցին մշտական պաշտոն՝ մասնագիտական պայծառ ապագայով: Այդ նույն ժամանակ Երեց Սթիվեն Լ. Ռիչարդսը կանչեց և խնդրեց Գորդոնին վերադառնալ լիաժամկետ Եկեղեցական աշխատանքի: Չնայած երկաթուղին կարող էր առաջարկել նշանակալիորեն ավելի բարձր աշխատավարձ, քան Եկեղեցին, Գորդոնը հետևեց իր սրտին և վերադարձավ Սոլթ Լեյք Սիթի:[39]

Գորդոնի աշխատանքը իր առաջվա պարտականությունների համեմատ Եկեղեցու վարչությունում շուտով շատացավ: 1951 թվականին նա նշանակվեց Եկեղեցու Գերագույն միսիոներական Հանձնաժողովի գործադիր քարտուղար և պատասխանատու էր նոր կազմավորված Միսիոներական բաժանմունքի առօրյա գործունեությունը վերահսկելու համար: Այս բաժինը ղեկավարում էր այն ամենը, ինչ կապված էր ավետարանը տարածելու հետ, ներառյալ տպագրությունը, թարգմանությունը և նյութերի բաշխումը, որոնք օգտագործվում էին միսիոներների կողմից, միսիոներների և միսիայի նախագահների ուսուցումը, և

հասարակական կապերի լրատավությունը, որն օգտագործվում էր կամուրջներ կառուցելու և Եկեղեցու մասին առասպելները ցրելու համար:[40]

1953 թվականի աշնանը Նախագահ Դեյվիդ Օ. Մակ Քեյը կանչեց Գորդոնին իր գրասենյակ և խնդրեց նրան մտածել մի հարցի վերաբերյալ, որն ուղղակիորեն կապված չէր Միսիոներական Բաժանմունքի պարտականությունների հետ: «Եղբայր Հինքլի,- սկսեց նա,- ինչպես գիտեք, մենք տաճար ենք կառուցում Շվեյցարիայում, և այն տարբեր կլինի մեր մյուս տաճարներից, այն պետք է ծառայի անդամներին, ովքեր խոսում են տարբեր լեզուներով: Ես կամենում եմ, որ դուք մի ուղի գտնեք ներկայացնելու տաճարային հրահանգը Եվրոպայի տարբեր լեզուներով, միևնույն ժամանակ օգտագործելով նվազագույն թվով տաճարային աշխատողներ»:[41]

Նախագահ Մակ Քեյը ապահովեց մի տեղ, որտեղ Գորդոնը կարող էր փնտրել ոգեշնչում և խուսափել Միսիոներական Բաժանմունքի իր աշխատանքի ծանրաբեռնվածության պահանջներից: Աշխատանքային օրերին երեկոյան, շաբաթ և որոշ կիրակի օրերը Գորդոնը աշխատում էր Սոլթ Լեյքի Տաճարի հինգերորդ հարկի մի փոքրիկ սենյակում: Շատ կիրակի առավոտներ Նախագահ Մակ Քեյը միանում էր նրան՝ կիսվելու գաղափարներով, մոտիկից նայելու օժտման ներկայացմանը և աղոթելու ուղղություն ստանալու համար:

Խորհելուց, աղոթելուց և հայտնություն ստանալուց հետո, Գորդոնը առաջարկեց, որ օժտման արարողության ներկայացումը պիտի ֆիլմի վերածվի հրահանգի այդ սրբազան խոսքերով [և] կրկնօրինակվի մի քանի լեզուներով: Նախագահ Մակ Քեյը և մյուսները հավանություն տվեցին նրա առաջարկին և հանձնարարեցին նրան նկարահանել կինոնկարը: Գորդոնը աշխատեց մի տաղանդավոր և հավատարիմ մասնագետների թիմի հետ, ովքեր ավարտեցին նախագիծը 1955 թվականի սեպտեմբերին: Այնուհետև նա անձնապես տարավ կինոնկարները Շվեյցարիայի Բեռնի Տաճարը և վերահսկեց տեխնիկական նախապատրաստությունները առաջին օժտման նիստերի համար:[42]

Գորդոնը հուզվեց՝ տեսնելով, թե իր աշխատանքը ինչպիսի ուրախություն բերեց Եվրոպայի Սրբերին. «Երբ ես տեսա տասը ազգերից հավաքված այդ մարդկանց, ովքեր մասնակցելու

էին տաճարային արարողություններին, երբ ես տեսա տարեց մարդկանց Երկաթե Վարագույրի ետևից, ովքեր կորցրել էին իրենց ընտանիքիները պատերազմներում, որոնք թափվել էին նրանց գլխին և ականատես եղա ցնծության և ուրախության արցունքների, որոնք գալիս էին նրանց սրտերից, որպես արդյունք այն հնարավորությունների, որոնք տրվել էին նրանց, երբ տեսա երիտասարդ ամուսինների և կանանց իրենց ընտանիքների հետ, նրանց պայծառ և գեղեցիկ երեխաներին, և տեսա նրանց ընտանիքները միավորված հավերժական կապով, ես անկասկած իմացա, նույնիսկ ավելին, քան ես գիտեի նախկինում, որ [Նախագահ Մակքեյը] ոգեշնչվել էր և ուղղորդվել Տիրոջ կողմից՝ բերելու այս անգին օրհնությունները այն հավատավոր տղամարդկանց և կանանց կյանք, ովքեր հավաքվել էին Եվրոպայի ազգերից»:[43]

Քսան տարի էր անցել այն ժամանակից ի վեր, երբ Գորդոնը վերադարձել էր իր միսիայից և նա չէր իրագործել գիտական աստիճան ստանալու և լրագրող դառնալու իր երազանքը: Փոխարենը, նա սովորել էր օգտագործել նոր տեխնոլոգիա Աստծո խոսքը տարածելու համար, զարգացրել էր դրական կապեր այլ հավատքների մարդկանց հետ, ուսումնասիրել էր և գրել Եկեղեցու պատմության վերաբերյալ աշխատություններ և օգնել ուղի պատարաստելու հազարավոր Վերջին Օրերի Սրբերի համար՝ ստանալու տաճարային օրհնություններ: Այս փորձառությունները ծառայելու էին որպես հիմք այն ծառայության համար, որը նա մատուցելու էր իր կյանքի մնացած մասի ընթացքում:

Ծառայությունը որպես Տասներկուսի Օգնական

1958 թվականի ապրիլի 5-ին շաբաթ օրը Գորդոնի և Մարջորիի որդի Ռիչարդը պատասխանեց մի հեռախոսազանգի: Զանգողը չներկայացավ, բայց Ռիչարդը ճանաչեց Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյին և շտապեց տեղեկացնել իր հորը: Նախագահ Մակքեյի հետ կարճ զրույցից հետո, Գորդոնն արագ ցնցուղ ընդունեց, փոխեց հագուստները և վարեց մեքենան դեպի Եկեղեցու Նախագահի գրասենյակը: Քանի որ նա հանձնարարություն էր ստացել նախկինում, նա սպասում էր,

որ իրեն կխնդրեին օգնել ինչ-որ բան պատրաստել հաջորդ օրվա գերագույն համաժողովի նիստի համար: Նա ապշած էր՝ պարզելով, որ Նախագահ ՄակՔեյը այլ բան ուներ իր մտքում: Ընկերական ողջույնից հետո Նախագահ ՄակՔեյը խնդրեց Գորդոնին ծառայել որպես Տասներկուսի Օգնական: Եղբայրները, ովքեր ծառայել էին այս պաշտոնում, որը դադարեցվել էր 1976 թվականին, Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորներ էին: Գորդոնը ծառայում էր որպես Իսթ Միլլ Քրիքի ցցի նախագահ, երբ Նախագահ ՄակՔեյը շնորհեց այս կոչումը:

Հաջորդ օրը, երեց Գորդոն Բ. Հինքլին ստացավ աջակցող ձայն գերագույն համաժողովում: Չնայած իր առաջին գերագույն համաժողովի ելույթի ժամանակ նա ընդունեց, որ «ճնշված էր զգում անհամապատասխանության զգացումից», նա գրկաբաց ընդունեց իր նոր պարտականությունը՝ իրեն բնորոշ հավատքով և կորովով:[44]

Գլխավոր պարտավորությունը, որը տրվեց Երեց Հինքլիին որպես Տասներկուսի օգնական՝ ողջ Ասիայում Եկեղեցու գործերը վերահսկումն էր: Նա քիչ բան գիտեր այնտեղի ժողովրդի մասին և նրանց լեզուներից ոչ մեկով չէր խոսում, բայց նա արագ սկսեց սիրել նրանց, իսկ նրանք էլ սիրեցին իրեն: Քենջայ Տանական՝ մի ճապոնացի Վերջին Օրերի Սուրբ, պատմել է Երեց Հինքլիի հետ ճապոնիայում առաջին հանդիպման մասին: «Երեց Հինքլիի հուզմունքը կարելի էր տեսնել նրա փայլող աչքերում: Մեզ ուղղված նրա առաջին բառն էր՝ *Սուքարաշի՜:* [Սքանչելի՜ է:] Այդ ժողովի մթնոլորտը նրա հանդեպ փոխվեց կոշտ և պաշտոնականից դեպի ընկերական և մտերիմ, և գերիշխեց մի ջերմ զգացում»:[45]

Այս զգացումով նա կիսվում էր ամենուրեք, ուր գնում էր Ասիայում: Նա օգնեց մարդկանց տեսնել, որ , նրանք կարող են իրականացնել մեծ բաներ և օգնել Եկեղեցուն աճել իրենց հայրենիքում՝ Տիրոջ հանդեպ մեծ հավատով: Նա նաև մտերիմ էր լիաժամկետ միսիոներների հետ, գիտենալով, որ նրանց ջանասիրությունը ուղղակիորեն կազդեր այն մարդկանց վրա, ում նրանք ծառայում էին:

Քրիստոսի անվան հատուկ վկա

1961 թվականի սեպտեմբերի 30-ին, շաբաթ օրը մեկ այլ զանգ փոխեց նրա կյանքը: Այս անգամ Նախագահ ՄակՔեյին պատասխանեց Մարջորին : Նորից Գորդոն Բ. Հինքլին շտապեց դեպի Եկեղեցու Նախագահի գրասենյակը: Նա կրկին զարմացած էր և ապշած, երբ իմացավ այցելության պատճառը: Երբ ժամանեց, Նախագահ ՄակՔեյն ասաց նրան. «Ես զգում եմ, որ պիտի ձեզ առաջադրեմ՝ զբաղեցնելու ազատ տեղը Տասներկու Առաքյալների Քվորումում, և մենք կկամենայինք հաստատել ձեզ այսօր համաժողովում»:[46] Նորից Երեց Հինքլին առաջ շարժվեց հավատքով և խանդավառությամբ, չնայած անհամապատասխանության զգացումներին:

Որպես Առաքյալ, Երեց Հինքլին ստացավ լրացուցիչ պարտականություններ: Նա երբեմն հանդիպում էր կառավարության ղեկավարների և բարձրաստիճան մարդկանց հետ: Նրան հաճախ էին խնդրում հասարակության առջև խոսել Եկեղեցու համար՝ անդրադառնալով քննադատություններին և մշակութային հուզումներին Միացյալ Նահանգներում: Նա ամենաշատ ջանքերն էր գործադրում , որպեսզի ուժեղացնի Եկեղեցու հեռարձակման կարողությունները և օգտագործի տեխնոլոգիան՝ ավետարանը ողջ աշխարհով մեկ տարածելու համար: Նույնիսկ այդ ընդլայնվող պարտականություններով հանդերձ, նա երբեք աչքից բաց չէր թողնում անհատների և ընտանիքների հավատքը զորացնելու գործը: Անկախ նրանից, մեկ մարդու , թե տասը հազար մարդկանց հետ էր խոսում, նրա շփումը անձնական էր. սա դարձավ նրա ծառայության տարբերակիչ նշանը՝ մարդկանց մեկ առ մեկ բերել դեպի Քրիստոս:

Երեց Հինքլին շարունակեց ղեկավարել աշխատանքն Ասիայում հաջորդ յոթ տարիների ընթացքում, և նա ուրախանում էր՝ տեսնելով իր ընկերների աճն այնտեղ: Նա նկատել է. «Ոգեշնչող փորձառություն էր . . . ականատես լինել այն ուղուն, որով Տերը հյուսում էր Իր վիթխարի ծրագրի գոբելենը երկրագնդի այդ . . .մասերում»:[47]

Երբ հանձնարարությունները փոխվեցին Տասներկուսի Քվորումում, Երեց Հինքլին հնարավորություններ ստացավ ծառայելու

աշխարհի մյուս մասերում: Ուր էլ որ նա գնար, նա մտահոգություն էր ցուցաբերում յուրաքանչյուրի նկատմամբ: 1970 թվականին, երբ ղեկավարում էր Եկեղեցու աշխատանքը Հարավային Ամերիկայում, նա ուղևորվորվեց Չիլի Պերուում մի ցցի համաժողովում նախագահելուց հետո: Չիլի ժամանելուց երկու օր հետո նա իմացավ, որ աղետալի երկրաշարժ էր տեղի ունեցել Պերուում, և չորս միսիոներ բացակայում էին: Նա անմիջապես Պերու վերադառնալու պլաններ կազմեց, չնայած դա կուշացներ նրա վերադարձը տուն: «Ես չեմ կարող հանգիստ խղճով տուն գնալ, երբ կան բացակայող միսիոներներ»,- ասաց նա:[48]

Հաջորդ առավոտ նա ժամանեց Պերուի մայրաքաղաք Լիմա: Երբ բացակայող միսիոներները գտան մի ռադիոսիրողի ռադիո, նրանք կարողացան զանգահարել Լիմա, և Երեց Հինքլին խոսեց նրանց հետ: Միսիոներները մի փոքրիկ սենյակում էին գտնվում, որը լցված էր փրկվածներով, և նրանց խոսակցությունները հեռարձակվում էին բարձրախոսի միջոցով: «Երբ բարձրախոսով Երեց Հինքլիի ձայնը լսվեց մարդկանցով լեփ-լեցուն սենյակում, ովքեր պահանջում էին ռադիոն, անմիջապես լռություն տիրեց: Չնայած նա անգլերեն էր խոսում, իսկ այդ բոլոր մարդիկ խոսում էին իսպաներեն, նրանք սկսեցին միմյանց հետ խոսել շշուկով և հարցնել.«Ո՞վ է այդ մարդը»: Նույնիսկ քառասում կար զգացողություն, որ այդ ձայնը պատկանում էր ոչ սովորական մարդու»:[49]

Հարավային Ամերիկայում Եկեղեցու կառավարման իր առաջին երկու տարիների ընթացքում Երեց Հինքլին ճանապարհորդեց յուրաքանչյուր միսիա, ստեղծեց նոր միսիաներ Կոլումբիայում և Էկվադորում, օգնեց ստեղծել նոր ցցեր Լիմայում, Պերուում և Սան Պաուլոյում, (Բրազիլիա) և օգնեց լուծել վիզայի սահմանափակումները միսիոներների համար, ովքեր կանչվում էին ծառայելու Արգենտինայում: Նա ավելի շատ բան կաներ, բայց 1971 թվականի մայիսին նշանակվեց ղեկավարելու ութ միսիաներ Եվրոպայում:[50]

Երեց Հինքլին հաճախ էր հոգնում: իր անկանխատեսելի գրաֆիկի պատճառով: Նա միշտ երջանիկ էր, երբ վերադառնում էր տուն և ժամանակ անցկացնում Մարջորիի և երեխաների հետ: Սակայն Մարջորին ասում էր, որ երբ խիստ երկար էր հեռու մնում աշխատանքից, նա անհանգիստ էր դառնում: «Ողջ

աշխարհում որպես Քրիստոսի անվան հատուկ վկա» Առաքյալի նրա կոչումը (ՎևՈ 107.23) երբեք չէր հեռանում նրա մտքից։

Ծանր պարտականություններ՝ որպես Առաջին Նախագահության խորհրդական

1981 թվականի հուլիսի 15-ին Տասներկուսի Քվորումում մոտ 20 տարի ծառայելուց հետո Երեց Հինքլին ստացավ ևս մի զարմանալի կոչում։ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը, այն ժամանակ Եկեղեցու նախագահը, խնդրեց նրան ծառայել որպես Առաջին Նախագահության խորհրդական, ի հավելումն Նախագահ Ն. Էլդոն Թանների և Մարիոն Գ. Ռոմնիի։ Սա ոչ սովորական, բայց ոչ աննախադեպ ելք էր երկու խորհրդականներ ունենալու գործելակերպից։ Նախագահ Քիմբալը և նրա խորհրդականները առողջ չէին ֆիզիկապես և Նախագահությունում լրացուցիչ օգնության կարիք ունեին։[51]

Իր նոր պաշտոնում առաջին գերագույն համաժողովում, Նախագահ Հինքլին նշեց. «Իմ միակ ցանկությունն է ծառայել հավատարմությամբ, ուր էլ որ ես կանչվեմ։ . . . Այս սրբազան կոչումը ինձ ստիպեց տեղեկանալ իմ թուլությունների մասին։ Եթե ես վիրավորել եմ ինչ-որ ժամանակ, ես ներողություն եմ խնդրում և հուսով եմ, դուք կներեք ինձ։ Արդյոք հանձնարարությունը երկար է թե կարճ, ես ներդնում եմ իմ լավագույն ջանքերը, մատուցելով սիրով և հավատքով։[52]

Նրա լավագույն ջանքերը պահանջվեցին, երբ Նախագահ Քիմբալի, Թանների և Ռոմնիի առողջությունը վատթարացավ։ Առաջին Նախագահության ամենօրյա աշխատանքը ընկավ Նախագահ Հինքլիի ուսերին։ Նա իր ուսերի վրա վերցրեց ավելի մեծ պարտականություններ, ինչպես օրինակ Ջորդան Ռիվեր Յուտա Տաճարի նվիրագործումը։ Բացի այդ, նա դիմակայեց ինչպես անցյալ, այնպես էլ ներկա Եկեղեցու և նրա ղեկավարության հասցեին ուղղված որոշ հասարակական քննադատությանը։ 1982 թվականի ապրիլի գերագույն համաժողովին նա ասել է.

«Մենք ապրում ենք մի հասարակությունում, որը սնվում է քննադատությամբ։ . . . Ես հորդորում եմ ձեզ տեսնել ընդհանուր պատկերը և դադարել անհանգստանալ փոքրիկ

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին գերագույն համաժողովում մի պահ Առաջին Նախագահության միակ անդամն էր, ով բավականաչափ առողջ էր մասնակցելու համար:

թերություններից: . . . Սրանք ուղղակի պատահական են [Եկեղեցու ղեկավարների] ծառայության մեծության և նրանց ներդրումների մեծության համեմատ»:[53]

Նախագահ Թանները հեռացավ կյանքից 1982 թվականի նոյեմբերի 27-ին, և Նախագահներ Քիմբալի և Ռոմնիի առողջությունը վատթարացավ այն աստիճան, որ 1983 թվականի ապրիլյան համաժողովի ժամանակ Նախագահ Հինքլին, ով մինչ այդ կանչվել էր որպես Երկրորդ Խորհրդական, նստել էր բեմում դատարկ աթոռների կողքին: Նա անձնապես զգաց այն, ինչը կոչեց «ղեկավարման մենակություն»:[54]

Նախագահ Հինքլին շարունակեց զգուշությամբ և աղոթքով, չկամենալով առաջ ընկնել մարգարեից: Նա կանչեց Տասներկուսի ավագ անդամներից, մասնավորապես քվորումի նախագահ Երեց Էզրա Թաֆթ Բենսոնին, օգնելու վարել Եկեղեցու ամենօրյա գործերը: Նախագահ Հինքլին ձեռք -ձեռքի տված աշխատում էր Տասներկուսի Քվորումի հետ, միշտ առաջնորդվելով

Նախագահ Քիմբալի խորհրդով: Այնուամենայնիվ, նա մեծ ծանրություն էր զգում:

Չնայած ժամանակի մեծ մասը Նախագահ Հինքլիի պարտականություններն Առաջին Նախագահությունում նրան պահում էին Սոլթ Լեյք Սիթիում, նա երբեմն ճանապարհորդում էր ծառայելու անդամներին և միսիոներներին աշխարհի մյուս մասերում: 1984-ին նա վերադարձավ Ֆիլիպիններ: Տասնութ տարի առաջ նա այնտեղ նվիրագործել էր առաջին աղոթատունը, այժմ նա նվիրագործելու էր առաջին տաճարը: Նվիրագործման աղոթքում նա ասել է.

«Ֆիլիպինների այս ազգը բազմաթիվ կղզիների ազգ է, որի ժողովուրդը սիրում է ազատությունը և ճշմարտությունը, որոնց սրտերը զգայուն են Քո ծառաների վկայությանը, և ովքեր արձագանքում են հավերժական ավետարանի ուղերձին: Մենք շնորհակալ ենք Քեզ՝ նրանց հավատքի համար: Մենք շնորհակալ ենք Քեզ՝ զոհաբերության ոգու համար Մենք շնորհակալ ենք Քեզ՝ այս երկրում Քո աշխատանքի առաջընթացի համար»:[55]

Եկեղեցու շարունակվող առաջընթացն ակնհայտ էր 1984 թվականի հունիսին, երբ Առաջին Նախագահության կողմից Նախագահ Հինքլիին հայտարարեց Տարածքային Նախագահություններ կանչելու մասին՝ Յոթանասունի անդամներ, ովքեր կապրեին ողջ աշխարհում և կղեկավարեին Եկեղեցու աշխատանքը նշանակված աշխարհագրական տարածքներում: Աշխատելով Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի ղեկավարության ներքո, այս եղբայրները կապահովեին ղեկավարում և ուսուցում, որն անհրաժեշտ էր իրենց տարածքներում: «Մենք չենք կարող ամեն որոշում ընդունել Սոլթ Լեյք Սիթիում»,-ասաց նա: «Մենք պետք է ինչ-որ բան անենք իշխանությունն ապակենտրոնացնելու համար»:[56] Մոտ մեկ տարի անց, խոսելով ողջ աշխարհի Եկեղեցու առաջնորդների հետ, Նախագահ Հինքլին ասաց. «Ես վստահ եմ, որ սա ոգեշնչված և մեծ քայլ է դեպի առաջ, որ մենք կատարել ենք այս վերջին մի քանի ամիսների ընթացքում: Ես վստահ եմ, որ ձեր մեջ այս լավ տղամարդկանց հաճախակի ներկայությունը մեծ հավաստիացում կտա ձեզ: Այս եղբայրները փաստորեն կապում են Եկեղեցու ամբողջ մարմինը միմյանց հետ»:[57]

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը (կենտրոնում) *իր խորհրդականների՝ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի* (ձախից) *և Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի* (աջից), *հետ զերագույն համաժողովում:*

12 տարի Եկեղեցին դեպի նշանակալի աճ առաջնորդելուց հետո Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը մահացավ 1985 թվականի նոյեմբերի 5-ին: Ավագ Առաքյալ Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը կարգվեց որպես Եկեղեցու Նախագահ: Նա խնդրեց Գորդոն Բ. Հինքլիին ծառայել որպես Առաջին նախագահության Առաջին Խորհրդական և Թոմաս Ս. Մոնսոնին ծառայել որպես Երկրորդ Խորհրդական: Առաջին Նախագահության երեք առողջ անդամների հետ Նախագահ Հինքլին զգաց, որ իր բեռները թեթևացան և ունեցավ ավելի շատ հնարավորություններ այցելելու Սրբերին ողջ աշխարհում:

Մի քանի տարիների ընթացքում Նախագահ Բենսոնի առողջությունը սկսեց վատանալ, և Եկեղեցին ղեկավարելու ամենօրյա պարտականությունները կրկին ընկան Նախագահ Հինքլիի վրա: Այս անգամ, այնուամենայնիվ, նա մենակ չէր Առաջին Նախագահությունում: Կենսունակությամբ և եռանդով Նախագահներ Հինքլին և Մոնսոնը պահում էին Եկեղեցին հաստատուն ուղղությամբ, միշտ հարգելով Նախագահ Բենսոնի կոչումը որպես մարգարե, տեսանող և հայտնող: Նրանք զարգացրեցին ուժեղ, հարատև ընկերություն և գործընկերություն:

Նախագահ Բենսոնը մահացավ 1994 թվականի մայիսի 30-ին և Նախագահ Հովարդ Վ. Հանթերը դարձավ Եկեղեցու Նախագահ: Մեկ անգամ ևս Նախագահ Հինքլին և Մոնսոնը ծառայեցին որպես խորհրդականներ: Հունիսին Նախագահ և Քույր Հինքլին ուղեկցեցին Նախագահ Հանթերին և նրա կնոջը՝ Ինիսին և Երեց Մ. Ռասսել Բալլարդին և նրա կնոջը՝ Բարբարային դեպի Նավու (Իլլինոյս)՝ մասնակցելու Ջոզեֆ և Հայրում Սմիթների նահատակության 150-ամյակի հիշատակին նվիրված արարողությանը: Սա միակ ճանապարհորդությունն էր, երբ Նախագահ Հանթերը և Նախագահ Հինքլին միասին կատարեցին: Նախագահ Հանթերը մաքառել էր առողջական խնդիրների հետ տարիներ շարունակ և նրա առողջությունը վատթարացավ այդ ճանապարհորդությունից հետո: 1995 թվականի փետրվարի 27-ին նա խնդրեց Նախագահ Հինքլիին քահանայության օրհնություն տալ: Օրհնության մեջ Նախագահ Հինքլին աղերսեց Նախագահ Հանթերի կյանքի համար, բայց նա նաև ասաց, որ նա Տիրոջ ձեռքերում էր:[58] Մի քանի օր հետո 1995 թվականի մարտի 3-ին, Նախագահ Հանթերը հեռացավ կյանքից:

Տեսանող և Հայտնող ու Եկեղեցու Նախագահ

Չնայած Նախագահ Հանթերի մահը անսպասելի չէր, սակայն ծանր անդրադարձավ Հինքլիների վրա: Որպես ավագ Առաքյալ՝ Նախագահ Հինքլին հաջորդն էր հերթում՝ դառնալու Եկեղեցու Նախագահ: Քույր Հինքլին վերհիշել է այն պահը, երբ նրանք ստացան Նախագահ Հանթերի մահվան լուրը. «Նախագահ Հանթերը հեռացավ և մենք մնացել էինք, որպեսզի շարունակենք: Ես այնքան տխուր էի ու այնքան միայնակ: Գորդոնը նույնպես: Նա համրացած էր: Եվ նա շատ, շատ միայնակ էր զգում: Ոչ ոք չէր մնացել, ով կարող էր հասկանալ, թե ինչի միջով էր նա անցնում»:[59]

Նախագահ Հանթերի թաղման արարողությունից հետո Նախագահ Հինքլին մխիթարություն գտավ տաճարում: Սոլթ Լեյքի Տաճարում Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի հանդիպման սենյակում նա մեն-մենակ խորհում էր սուրբ գրությունների վերաբերյալ և խորհրդածում իր կարդացածի մասին: Նա մտածում էր կյանքի, ծառայության և

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին բեմում գերագույն հանձնաժողովի ժամանակ

Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Ապա նա ուսումնասիրեց պատի դիմանկարները, որոնք պատկերում էին Եկեղեցու բոլոր Նախագահներին՝ Ջոզեֆ Սմիթից մինչև Հովարդ Վ. Հանթերը: Նա արձանագրել է այդ փորձառությունը իր օրագրում.

«Ես քայլեցի այդ դիմանկարների առջևով և նայեցի այնտեղ ներկայացված այդ տղամարդկանց աչքերին: Ես այնպիսի զգացողություն ունեցա, թե կարծես կարող էի խոսել նրանց հետ: Ես

զգացի, կարծես, նրանք խոսում էին ինձ հետ և հավաստիացում էին տալիս ինձ։ . . . Ես նստեցի աթոռին, որը ես զբաղեցրել էի որպես Նախագահի առաջին խորհրդական։ Ես բավական երկար ժամանակ անցկացրի՝ նայելով այդ նկարներին։ Յուրաքանչյուրը թվում էր գրեթե կենդանացած։ Նրանց աչքերը կարծես ինձ վրա էին ուղղված։ Ես զգում էի, որ նրանք ինձ խրախուսում էին և տալիս իրենց աջակցությունը։ Նրանք, թվում է, ասում էին, որ իրենք խոսել էին ի օգուտ ինձ մի խորհրդում, որը տեղի էր ունեցել երկինքներում, որ ես կարիք չունեի վախենալու, որ ես կօրհնվեմ և կհաստատվեմ իմ ծառայությունում։

Ես ծնկի իջա և աղերսեցի Տիրոջը։ Ես խոսեցի երկար աղոթքով։ . . . Ես վստահ եմ, որ Սուրբ Հոգու զորությամբ ես լսեցի Տիրոջ խոսքը, ոչ թե բարձրաձայն, այլ որպես ջերմություն, որը զգացվեց իմ սրտում այն հարցի վերաբերյալ, որը ես էի բարձրացրել աղոթքով։[60]

Այս փորձառությունից հետո նա կրկին արձանագրել է իր մտքերը։ «Ես ավելի լավ եմ զգում, և ես ունեմ շատ ավելի ամուր համոզմունք իմ սրտում, որ Տերը կատարում է Իր կամքը՝ կապված Իր աշխատանքի և արքայության հետ, որ ես կհաստատվեմ որպես Եկեղեցու Նախագահ և մարգարե, տեսանող և հայտնող և այսպիսով կծառայեմ այնպիսի ժամանակի համար, երբ Տերն է կամենում։ Հոգու հաստատումով իմ սրտում ես այժմ պատրաստ եմ առաջ գնալու և անելու այն լավագույն աշխատանքը, որը ես գիտեմ, թե ինչպես անեմ։ Ինձ համար դժվար է հավատալ, որ Տերը ինձ վրա է դնում այս ամենաբարձր և ամենասրբազան պարտականությունը։ . . . Հուսով եմ, Տերն ուսուցանել է ինձ անել այն, ինչ Նա ակնկալում է ինձանից։ Ես կցուցաբերեմ բացարձակ հավատարմություն Նրա հանդեպ, և ես անշուշտ կձգտեմ ուղղորդում ստանալ Նրանից։[61]

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին կարգվեց որպես Եկեղեցու Նախագահ 1995 թվականի մարտի 12-ին, իսկ հաջորդ օրը նա խոսեց մամլո ասուլիսում և պատասխանեց լրագրողների հարցերին։ Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը հաղորդել է. որ «մի ջերմ, հաճախ սրամիտ, լայնածավալ ուղղվող հարցերի շարանի միջտ հաղթական փոխանակմամբ, այս մամլո ասուլիսի ավարտին Նախագահ Հինքլիին մի լրագրողի կողմից հարց ուղղվեց.

«Ո՞րն է լինելու ձեր կիզակետը»: Ո՞րը կլինի ձեր վարչակազմի նշանաբանը:

«Բնազդաբար նա պատասխանեց.«Առաջ գնալ: Այո: Մեր նշանաբանը կլինի առաջ գնալ այն սքանչելի աշխատանքում, որն առաջ է տարվել մեր նախնիների կողմից»:[62]

Նախագահ Հինքլին հավատարիմ էր այդ երդմանը: Իրենից առաջ գնացած մարգարեների հանդեպ հարգանքով հանդերձ, նա առաջ գնաց նրանց բացած ճանապարհով: Եվ հավատքով առ Հայր Աստված և Հիսուս Քրիստոսը, նա հետևեց հայտնությանը՝ կատարելու այդ աշխատանքը նոր ձևով:

Եկեղեցին դուրս բերել «խավարից» (ՎևՈ 1.30)

Նախագահ Հինքլիի ծառայության սկզբնական շրջանում Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելը նկատել է . Նախագահ Հինքլին օգնում է դուրս բերել Եկեղեցին խավարից: Եկեղեցին չի կարող առաջ շարժվել, ինչպես հարկն է, եթե մենք թաքնվենք գրվանի տակ: Ինչ որ մեկը պետք է քայլ անի և Նախագահ Հինքլին կամենում է այդպես անել: Նա պատմության և միաժամանակ արդիականության մարդ է և ունի սքանչելի պարգևներ դրանք արտահայտելու, որոնք հնարավոր են դարձնում նրա համար ներկայացնել մեր ուղերձը մի ձևով, որն ամենուրեք հասնում է մարդկանց»:[63]

Նախագահ Հինքլիի ծավալուն փորձը զանգվածային լրատվության միջոցներում և հեռարձակման մեջ օգնեց նրան պատրաստվել այս պարտականության համար: Որպես Եկեղեցու Նախագահ, նա հաճախ հարցազրույցներ էր տալիս լրագրողներին ողջ աշխարհում, պատասխանելով նրանց հարցերին Եկեղեցու վարդապետության և քաղաքականության վերաբերյալ և բերելով իր վկայությունը Փրկիչի և վերականգնված ավետարանի մասին: Ամեն անգամ ըմբռնումը մեծանում էր և ընկերակցությունները զարգանում:

Հատկապես ուշագրավ էր 1996 թվականի հարցազրույցը *«60 րոպե»* հեռուստատեսային ծրագրի վետերան լրագրող Մայք Ուոլլիսի հետ: Պր. Ուոլլիսը հայտնի էր որպես անողոք հաղորդավար, և Նախագահ Հինքլին ընդունեց որոշ սկզբնական վերապահումներ՝ նախքան Միացյալ Նահանգների ազգային հեռուստատեսությամբ ցուցադրումը եթեր դուրս կգար: «Եթե

պարզվի, որ այն բարենպաստ է եղել, ես երախտապարտ կլինեմ»,- ասել է նա: «Հակառակ դեպքում, ես երդվում եմ՝ երբեք այլևս ոտքս չեմ դնի այդպիսի թակարդի մեջ»:[64]

Հարցազրույցը բարենպաստ էր, ցույց տալով Եկեղեցու շատ դրական կողմերը: Մեկ այլ արդյունքն էլ այն էր, որ Մայք Ուոլլիսը և Նախագահ Հինքլին դարձան ընկերներ:

2002 թվականին Սոլթ Լեյք Սիթին հյուրընկալեց Ձմեռային Օլիմպիական խաղերը, Եկեղեցին դնելով համաշխարհային հասարակայնության ուշադրության կենտրոնում: Նախագահ Հինքլիին և նրա խորհրդականներին խորհուրդ տրվեց պլանավորման մասի վերաբերյալ: «Մենք դիտավորյալ որոշեցինք, որ մենք չէինք օգտագործի դա որպես քարոզման ժամանակ և վայր,- ասել է նա,- բայց մենք համոզված ենք, որ այս նշանավոր իրադարձությունից մի հիանալի բան էր բխելու Եկեղեցու համար»:[65] Նա ճիշտ էր: Տասնյակ հազարավոր մարդիկ այցելեցին Սոլթ Լեյքի հովիտ և նրանց ողջունեցին սիրալիր տանտերերը՝ Վերջին Օրերի Սրբերը, իսկ մյուսներն աշխատում էին միասին՝ ստեղծելու հաջողակ Օլիմպիական խաղեր: Այս այցելությունները քայլեցին Տաճարային Հրապարակի շուրջը, լսեցին Թաբերնաքլի Երգչախմբին և այցելեցին Ընտանեկան Պատմության Գրադարանը: Միլիոնավոր մարդիկ տեսան Սոլթ Լեյքի Տաճարը հեռուստատեսությամբ և տեսան լրագրողների կողմից Եկեղեցու բարենպաստ ներկայացումը: Ինչպես Նախագահ Հինքլին է ասել. «Դա հիանալի բան էր Եկեղեցու համար»:

Բացի վաղուց հաստատված հաղորդակցության միջոցներն օտագործելուց, Նախագահ Հինքլին ընդունեց նորարարությունները: Օրինակ, նա համացանցը համարում էր որպես միջոց՝ Եկեղեցին ավելի մոտ բերելու անդամներին և կիսվելու վերականգնված ավետարանով նրանց հետ, ովքեր այլ հավատքներից էին: Նրա կառավարման ընթացքում Եկեղեցին սկսեց գործարկել LDS.org, FamilySearch.org, և Mormon.org կայքերը:

2004 թվականի հունիսի 23-ին, այն օրը, երբ Նախագահ Հինքլին դարձավ 94 տարեկան, պարգևատրվեց Ազատության Նախագահական Մեդալով, բարձրագույն քաղաքացիական պարգևը, որը տրվում է Միացյալ Նահանգներում: Ի պատասխան, նա ասաց. «Ես խորապես հարգված [եմ] զգում՝ ստանալով այս հեղինակավոր պարգևը Միացյալ Նահանգների

Նախագահից: Ես խորապես երախտապարտ եմ: Ավելի մեծ իմաստով այն ճանաչում և պատիվ է Եկեղեցուն, որը տվել է ինձ այնքան շատ հնարավորություններ, և որի շահերին ես փորձել եմ ծառայել»:[66] Նա տեսավ այդ պարգևատրությունը որպես Եկեղեցու դրական հեղինակության աճի խորհրդանիշ և ապացույց, որ այն իսկապես դուրս էր բերվում խավարից:

Վերջին Օրերի Սրբերի մեջ ճանապարհորդելը

Նախագահ Հինքլին չէր սիրում ճամփորդելու դժվարությունները, բայց Վերջին Օրերի Սրբերին ծառայելու նրա ցանկությունը շատ ավելի զորեղ էր, քան տանը մնալու նրա ցանկությունը: Նա ասաց, որ ուզում էր «դուրս գալ մեր ժողովրդի մեջ՝ տարածելու շնորհակալություն և խրախուսանք և բերելու վկայություն Տիրոջ աշխատանքի աստվածայնության մասին»:»[67] Իր կառավարման սկզբում նա նշել էր. «Ես վճռել եմ, որ քանի դեռ ուժ ունեմ, ես դուրս կգամ ժողովրդի մեջ տանը և արտասահմանում: . . . Ես մտադիր եմ շարունակել շարժվել եռանդով՝ քանի դեռ ես կարող եմ: Ես ուզում եմ շփվել ժողովրդի հետ, ում ես սիրում եմ»:[68]

Իր ծառայության ընթացքում որպես Եկեղեցու Նախագահ, նա շատ էր ճամփորդում Միացյալ Նահանգների ներսում և կատարել է ավելի քան 90 այցելություններ Միացյալ Նահանգներից դուրս գտնվող երկրներում: Ընդհանուր առմամբ նա ճանապարհորդեց ավելի քան մեկ միլիոն մղոն (1.6 միլիոն կիլոմետր), երբ Եկեղեցու Նախագահն էր, հանդիպելով Սրբերի հետ աշխարհի բոլոր մասերում:[69]

Որոշ տարածքներում մարդիկ ստիպված էին ավելի մեծ ջանքեր գործադրել նրան տեսնելու համար, քան նա էր գործադրում նրանց տեսնելու համար: Օրինակ, 1996 թվականին նա և Քույր Հինքլին այցելեցին Ֆիլիպիններ, որտեղ Եկեղեցու անդամակցությունն աճել էր ավելի քան 375000-ի: Նախագահ և Քույր Հինքլիները պլանավորել էին մի երեկո խոսել մի ժողովում Մանիլայի Արանետա Կոլիզեյում: Այդ օրը մինչև կեսօր կոլիզեյը «լեփ լեցուն էր: Հերթեր սկսեցին ձևավորվել առավոտյան 7:00 մի հանդիպման համար, որը պլանավորված չէր սկսել տասներկու ժամվա ընթացքում: Պաշտոնական հաշվարկները հետագայում ցույց տվեցին, որ մոտ 35000 անդամներ հավաքվել էին կոլիզեյի 25000 նստատեղերում, ինչպես նաև շարքերի

Նախագահ Հինքլին սիրում էր «դուրս գալ ժողովրդի մեջ տանը և արտասահմանում»:

միջև և գավիթներում: Շատ սրբեր ճանապարհորդել էին քսան ժամ նավով և ավտոբուսով՝ Մանիլա հասնելու համար: Ոմանց համար ուղևորության արժեքը հավասար էր մի քանի ամիսների աշխատավարձի: . . .

«Երբ լուրը հասավ Նախագահ Հինքլիին, որ կոլիզեյը լեփ-լեցուն էր, և որ կառույցի կառավարիչը ցանկանում էր իմանալ, թե արդյոք հնարավոր էր, որ նրանք վաղ սկսեին հանդիպումը, նա անմիջապես ասաց. «Եկեք գնանք»: Նա և Քույր Հինքլին մտան լայնարձակ արենան: . . . Մի մարդու նման հավաքված-ները տարերայնորեն ոտքի կանգնեցին, ծափահարեցին, իսկ հետո սկսեցին երգել «Փառք Քեզ Տեր, Մարգարեի համար» հիմնի մի հուզումնալի թարգմանություն:[70]

Գիտենալով, որ եղբայրները չէին կարող գնալ ամեն տեղ, ուր իրենք ուզում էին գնալ, Նախագահ Հինքլին պաշտպանեց տեխնոլոգիայի օգտագործումը ղեկավարներին ողջ աշխարհում հրահանգելու համար: Օգտագործելով արբանյակային տեխնո-լոգիան, նա նախագահում էր ղեկավարության համաշխարհային

ուսուցումների հեռարձակումների ժամանակ, որոնցից առաջինը կազմակերպվեց 2003 թվականին:

Խթանել հոգևոր և աշխարհիկ ճշմարտությունների ուսուցման կարևորությունը

Նախագահ Հինքլին նշել է. «Մեզանից ոչ մեկը. . . բավականաչափ չգիտի: Կրթության գործընթացը անվերջ գործընթաց է: Մենք պետք է կարդանք, մենք պետք է զննենք, մենք պետք է յուրացնենք և մենք պետք է խորհրդածենք այն բաների մասին, որոնք մենք բացահայտում ենք մեր մտքերում»:[71] Նա նաև ասել է. «Արդյունավետ ուսուցումը Եկեղեցու ղեկավարության բուն էությունն է: Հավերժական կյանքը կգա միայն այն ժամանակ երբ տղամարդիկ և կանայք ուսուցանվեն այնպիսի արդյունավետությամբ, որ նրանք փոխվեն և կարգավարժեն իրենց կյանքը: Նրանց չի կարող պարտադրվել արդարակեցությունը կամ երկինք մտնելը: Նրանք պետք է առաջնորդվեն, իսկ դա նշանակում է ուսուցանում»:[72]

Նախագահ Հինքլին ցանկանում էր ապահովել ավելի շատ հոգևոր սնուցում Վերջին Օրերի Սրբերի համար ողջ աշխարհում: 1995 թվականին նա խանդավառությամբ հավանություն տվեց գրքերի նոր շարքի հրատարակության ծրագրին, որը կապահովեր Եկեղեցու անդամներին ավետարանական գրականությամբ: Եկեղեցին շուտով սկսեց հրատարակել այս շարքը, որը կոչվում է *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները,* որի մասն է կազմում այս գիրքը:

Աշխարհիկ կրթությունը նույնպես կարևոր էր Նախագահ Հինքլիի համար: Նա մտահոգված էր Եկեղեցու այն անդամների համար, ովքեր ապրում էին աշխարհի ծայրահեղ աղքատ տարածքներում, ովքեր չէին կարող թույլ տալ իրենց բարձրագույն կրթություն կամ մասնագիտական պատրաստվածություն ստանալ: Առանց այդպիսի կրթության և ուսուցման, նրանց մեծ մասը կմնար աղքատության մեջ: 2001թվի ապրիլի գերագույն համաժողովի Քահանայության նիստում Նախագահ Հինքլին ասել է.

«Այս իրավիճակն ուղղելու համար մենք առաջարկում ենք մի ծրագիր՝ ծրագիր, որը համոզված ենք, ոգեշնչված է Տիրոջ կողմից: Եկեղեցին ստեղծել է է հիմնադրամ մեծ մասամբ

հավատարիմ Վերջին Օրերի Սրբերի նվիրատվություններից, ովքեր նվիրաբերել են և կնվիրաբերեն այս նպատակի համար: Մենք խորապես երախտապարտ ենք նրանց համար: . . . Մենք կանվանենք այն Կրթության մշտական հիմնադրամ»:[73]

Նախագահ Հինքլին բացատրեց, որ նրանք, ովքեր կօգտվեն ծրագրից, կստանան փոխառություններ, որոնք կվերցվեն այն ֆոնդերից, որոնք նվիրաբերվել են Եկեղեցու անդամների կողմից համալսարանական կամ մասնագիտական կրթության համար: Իրենց կրթությունը կամ ուսուցումն ավարտելուց հետո ակնկալվում է, որ նրանք ետ կվճարեն իրենց փոխառությունները, որպեսզի ֆոնդերը կարողանան օգտագործվել ուրիշներին օգնելու համար: Նախագահ Հինքլին բացատրեց նաև, որ Կրթության մշտական հիմնադրամը «հիմնված կլինի նույնպիսի սկզբունքների վրա, ինչպիսին «Արտագաղթի մշտական հիմնադրամի» հիմունքներն էին, որը Եկեղեցին էր հիմնադրել 1800-ականներին՝ օգնելու կարիքավոր Սրբերին արտագաղթել Սիոն:[74]

Վեց ամիսների ընթացքում Վերջին Օրերի Սրբերը նվիրաբերել էին միլիոնավոր դոլլարներ Կրթության մշտական հիմնադրամին:[75] Մեկ տարի ծրագիրը ներկայացնելուց հետո Նախագահ Հինքլին հայտարարեց. «Այս նախաձեռնությունն այժմ ամուր հիմքի վրա է: . . . Երիտասարդ տղամարդիկ և կանայք, ովքեր աշխարհի անապահով տարածքներում են, երիտասարդ կանայք և տղամարդիկ, ովքեր մեծամասամբ վերադարձած միսիոներներ են, հնարավորություն կունենան ստանալ լավ կրթություն, որը նրանց դուրս կհանի աղքատության ճահճուտից, որի մեջ նրանց նախնիները մաքառել են սերունդներով»:[76] Այս ծրագիրը շարունակում է օրհնել Վերջին Օրերի Սրբերին, ինչպես ստացողներին, այնպես էլ տվողներին:

Վկայել ամուսնության և ընտանիքի սրբազանության մասին

Սփոփող Միության Գերագույն Ժողովի ժամանակ, որն անցկացվեց 1995 թվականի սեպտեմբերի 23-ին, Նախագահ Հինքլին ասել է.

«Այդքան մեծ չափերով մոլորեցնող փաստարկների հետ մեկտեղ, որոնք մատուցվել են որպես ճշմարտություն, չափանիշների և արժեքների վերաբերյալ խաբեության, աշխարհի խավար կողմը բռնելու գրավչության և գայթակղության պայմաններում,

«Մենք խորհուրդ ենք տալիս ծնողներին և երեխաներին մեծագույն առաջնահերթություն տալ ընտանեկան աղոթքին, ընտանեկան երեկոներին, ավետարանի ուսումնասիրությանը և հրահանգներին ու ընտանեկան առողջ միջոցառումներին»։

մենք անհրաժեշտ ենք համարել զգուշացնել և նախազգուշացնել։ Այս առիթով մենք՝ Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը, այսօր հրապարակում ենք հայտարարություն՝ ուղղված Եկեղեցուն և աշխարհին՝ որպես հռչակագիր և վերահաստատում ընտանիքին վերաբերող չափանիշները, վարդապետությունները և սովորույթները, որոնք պատմության ընթացքում շարունակ սահմանվել են մարգարեների, տեսանողների և հայտնողների կողմից»։[77]

Այս նախաբանով Նախագահ Հինքլին առաջին անգամ հասարակության առջև կարդաց. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթղթից։

Ամուսնության և ընտանիքի սրբազանությունը մշտական թեմա էր Նախագահ Հինքլիի ուսմունքերում։ Նա դատապարտում էր ամեն տեսակի բռնությունը և խրախուսում ծնողներին համբերատար լինել միմյանց հանդեպ, սիրել միմյանց, ուսուցանել միմյանց և ծառայել մեկմեկու։ Մի նամակում, որը թվագրված է 1999 թվական փետրվարի 11, նա և նրա խորհրդականները Առաջին Նախագահությունից ասել են.

«Մենք կոչ ենք անում ծնողներին իրենց լավագույն ջանքերը նվիրաբերել իրենց զավակներին ավետարանի սկզբունքներն ուսուցանելուն և ըստ այդ սկզբունքների նրանց դաստիարակելուն, որն էլ նրանց մոտ կպահի Եկեղեցուն: Տունը արդարակյաց կյանքի հիմքն է, և ոչ մի այլ միջոց չի կարող փոխարինել կամ կատարել նրա հիմնական դերը՝ առաջ տանելու Աստծո կողմից տրված այս պարտականությունը:

Մենք խորհուրդ ենք տալիս ծնողներին և երեխաներին մեծագույն առաջնահերթություն համարել ընտանեկան աղոթքը, ընտանեկան երեկոն, ավետարանի ուսումնասիրությունը և ուսուցումը և ընտանեկան օգտակար միջոցառումները: Որքան էլ արժանի և պատշաճ լինեն այլ պահանջներն ու միջոցառումները, չպետք է թույլ տալ, որ դրանք փոխարինեն աստվածայնորեն նշանակված պարտականություններին, որոնք միայն ծնողները և ընտանիքները կարող են հավուր պատշաճի կատարել»:[78]

Հասնել բոլոր նորադարձներին

Նախագահ Հինքլին սիրում էր տեսնել, երբ մեծ թվով մարդիկ էին միանում Եկեղեցուն, բայց նա մտահոգվում էր այն անձանց համար, ովքեր ներկայացնում էին այդ թվերը: Իր կառավարման սկզբում նա ասել է.

Նորադարձների անընդհատ աճող թվերով, մենք պետք է գնալով ավելի հսկայական ջանքեր գործադրենք աջակցելու նրանց, երբ նրանք գտնեն իրենց ճանապարհը: Նրանցից ամեն մեկը կարիք ունի երեք բանի՝ ընկերոջ, պարտականության և «Աստծո բարի խոսքով» սնուցման» (Մոր. 6.4): Մեր պարտականությունը և հնարավորությունն է ապահովել այդ բաները»:[79]

Նորադարձներին զորացնելը Նախագահ Հինքլիի համար մշտական թեմա էր: Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը կիսվել է հետևյալ պատմությունով նրա մասին՝ շեշտադրելով այս թեման. « Կայծկլտող աչքերով և ձեռքը թխկացնելով իր առջևի սեղանին, նա վերջերս ասաց Տասներկուսին. «Եղբայրներ, երբ կյանքս վերջանա և վերջին արարողություններն արվեն, ես պատրաստվում եմ վեր կենալև երբ ձեր կողքով անցնեմ, նայեմ ձեզանից յուրաքանչյուրի աչքերի մեջ ու հարցնեմ. «Ինչպե՞ս է մեզ մոտ ստացվում նորադարձների պահպանումը»:[80]

Նախքան Նավու Իլլինոյիսի Տաճարի նվիրագործումը 2002 թվին,Նախագահ Հինքլին օգտագործում է շինարարական լուծույթ ծածկաքարի ծիսակատարության ժամանակ:

Տաճարների կառուցում

1910 թվականին, երբ Գորդոն Բ. Հինքլին ծնվեց, 4 գործող տաճարներ կային աշխարհում, և դրանք բոլորը Յուտայում էին: Մինչև 1961 թվականը, երբ նա ձեռնադրվեց Առաքյալ, թիվն աճել էր մինչև 12: Այս առաջընթացը նշանակալից էր, բայց Երեց Հինքլին հաճախ մտահոգություն էր արտահայտում, որ շատ մարդիկ ողջ աշխարհում սահմանափակ մուտք ունեին դեպի տաճարային օրհնություններ: 1973 թվականին, երբ ծառայում էր որպես Եկեղեցու տաճարային հանձնաժողովի նախագահ, նա գրել է իր օրագրում. «Եկեղեցին կարող էր կառուցել [շատ ավելի փոքր] տաճարներ Վաշինգտոնի տաճարի գնով, որն [այդ ժամանակ կառուցվում էր]: Այն կտաներ տաճարները մարդկանց մոտ, փոխարենը մարդկանց ստիպելու կտրել մեծ տարածություններ դրանց հասնելու համար»:[81]

Երբ նա հաստատվեց Եկեղեցու Նախագահ 1995 թվականին, գործող տաճարների թիվը աճել էր մինչև 47, բայց ավելի շատ

տաճարներ ունենալու նրա ցանկությունը դեռ ուժեղ էր: Նա ասել է. «Իմ ուժգին ցանկությունն է եղել տաճար ունենալ, որտեղ անհրաժեշտ է, որպեսզի մեր ժողովուրդը, որտեղ էլ լինի, կարողանա առանց մեծ զոհաբերության, գալ Տիրոջ Տունը իրենց սեփական արարողությունների համար և մահացածների համար փոխարինաբար աշխատանք կատարելու հնարավորության համար»:[82]

1997 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովում Նախագահ Հինքլին կատարեց պատմական հայտարարություն՝ Եկեղեցին սկսելու էր կառուցել ավելի փոքր տաճարներ ողջ աշխարհում:[83] Նա հետագայում ասաց. «Փոքր տաճարների տեսակետը եկավ, հավատացած եմ, որպես ուղիղ հայտնություն»:[84] 1988 թվականին նա հայտարարեց, որ 30 նոր ավելի փոքր տաճարներ, մյուս տաճարների հետ միասին, արդեն պլանավորված կամ շինարարության մեջ, կդառնան «ընդամենը 47 նոր տաճարներ՝ ի լրումն 51-ի, որոնք այժմ գործում են»: Ի ուրախություն բոլոր նրանց, ովքեր լսում էին, Նախագահ Հինքլին այնուհետև ավելացրեց. «Կարծում եմ, մենք ավելի լավ կանեինք, եթե ավելացնեինք ևս 2-ը՝ դարձնելու այն կլոր 100, մինչև այս դարի վերջը, լինելով 2000 տարի «մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մարմնում գալուց ի վեր» (ՎևՈ 20.1)»: Այնուհետև նա խոստացավ. «Դեռ ավելի շատերն են գալու»:[85]

2000 թվականի հոկտեմբերի 1-ին, Նախագահ Հինքլին նվիրագործեց Բոստոն Մասսաչուսեթս Տաճարը՝ 100-րդ գործող տաճարը: Մինչև 2000 թվի ավարտը նա նվիրագործեց ևս երկու տաճար: Երբ նա մահացավ 2008 թվականին, Եկեղեցին ուներ 124 գործող տաճարներ, հայտարարված ունենալով ևս 13-ը: Նախագահ Հինքլին ներգրավված էր դրանց պլանավորման և կառուցման մեջ, և նա անձնապես նվիրագործել էր դրանցից 85-ը և վերանվիրագործել 13-ը (վերանվիրագործվածներից 8-ը նա էր նախկինում նվիրագործել):

Հաամաժողովների կենտրոնը

1995 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովում Նախագահ Հինքլին ակնարկեց մի գաղափարի մասին, որը նրա մտքում էր: Խոսելով Տաճարային Հրապարակի վրա գտնվող Թաբերնաքլից, նա ասել է. Այս մեծ Թաբերնաքլը, թվում է, փոքրանում է ամեն տարի: Մենք այժմ հավաքվում ենք շատ ավելի

Համաժողովների կենտրոնը, որը Նախագահ Հինքլին նվիրագործեց 2000 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովում

մեծ խմբերով մեկ հարկի տակ որոշ շրջանային համաժողովներում»:[86] 1996 թվականի ապրիլյան համաժողովում Նախագահ Հինքլին ասաց ավելի շատ բան այս գաղափարի մասին.

«Ես ափսոսում եմ, որ շատերը, ովքեր ցանկանում են հանդիպել մեզ հետ Թաբերնաքլում այս առավոտյան, չեն կարողանում ներս մտնել: Շատերը դրսում են՝ գետնին: Այս եզակի և նշանավոր դահլիճը, որը կառուցվել է մեր ռահվիրա նախնիների կողմից և նվիրաբերվել Տիրոջ երկրպագության համար, հարմարավետ տեղավորում է 6000 նստատեղ: Ձեզանից ոմանք, ովքեր նստած են այդ կոշտ նստարաններին երկու ժամ, կարող են կասկածի տակ դնել *հարմարավետ բառը:*

Միրտս ցավում է նրանց համար, ովքեր ցանկանում են ներս մտնել և չեն կարողանում՝ տեղ չլինելու պատճառով: Մոտ մեկ տարի առաջ ես առաջարկեցի Եղբայրներին, որ գուցե եկել է ժամանակը, երբ մենք պետք է ուսումնասիրենք մեկ այլ շատ ավելի մեծ ծավալով երկրպագության տուն կառուցելու

իրագործելիությունը, որը կտեղավորի երեք կամ չորս անգամ ավելի մեծ թվով մարդկանց, քան որ հիմա տեղավորվում է այս շենքում:[87]

1997 թվականի հուլիսի 24-ին Սոլթ Լեյքի հովիտ ռահվիրաներ-ի մուտքի 150-րդ տարեդարձի կապակցությամբ տեղի ունեցավ հողակտորի բացումը նոր շենքի համար, որը կոչվելու էր Համաժողովների Կենտրոն, Տաճարային Հրապարակից անմիջապես դեպի հյուսիս գտնվող թաղամասում: Երեք տարուց քիչ անց, 2000 թվականի ապրիլին, գերագույն համաժողովի առաջին նիստերը տեղի ունեցան այնտեղ, չնայած շենքի կառուցումը լիովին դեռ չէր ավարտվել: Նախագահ Հինքլին նվիրագործեց Համաժողովների Կենտրոնը 2000 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովում: Նախքան նվիրագործման աղոթքն ասելը, նա կանգնեց ամբիոնում, որը սարքված էր սև ընկույզի ծառից, որը նա էր աճեցրել իր սեփական բակում և ասաց.

«Այսօր մենք պետք է նվիրագործենք այն՝ որպես Աստծուն՝ Հավերժական Հորը և Նրա Միածին Որդուն՝ Տեր Հիսուս Քրիստոսին երկրպագելու տուն: Մենք հույս ունենք և աղոթում ենք, որ այս ամբիոնից Կենդանի Աստծո հանդեպ հավատի և մեր Քավիչի մեծ զոհաբերության համար երախտագիտության վկայության և վարդապետության հռչակագրեր շարունակեն առաջ գնալ աշխարհին»:[88]

Վկայություն Հիսուս Քրիստոսի մասին

2000 թվի հունվարի 1-ին Նախագահ Հինքլին, նրա խորհրդականները առաջին Նախագահությունում և Տասներկու Առաքյալների Քվորումը հրապարակեցին մի հռչակագիր, որը կոչվում էր.«Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը»: Փրկիչի մասին նրանք հայտարարեցին. «Ոչ ոք չի ունեցել այդպիսի խորը ազդեցություն բոլորի վրա, ովքեր ապրել են, և ովքեր դեռ ապրելու են երկրի վրա»:[89]

Եվ ոչ ոք չի ունեցել այդպիսի խորը ազդեցություն Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կյանքի վրա: Ավելի քան 46 տարի նա ծառայեց որպես Հիսուս Քրիստոսի անվան հատուկ վկա: Նա և իր եղբայրները «Կենդանի Քրիստոսը» հրատարակեցին, որից մի քանի ամիս անց Նախագահ Հինքլին կանգնեց Վերջին Օրերի Սրբերի առջև և ասաց. «Շատ բաների համար ես երախտապարտ

եմ զգում այս առավոտ. դրանցից մեկը մշտապես կանգուն է: Դա Հիսուս Քրիստոսի՝ Ամենազոր Աստծո Որդու, Խաղաղության Իշխանի, Սուրբ Հոգու մասին կենդանի վկայությունն է»:[90]

Փորձություններ և հույս

2004 թվականի ապրիլի գերագույն համաժողովում Նախագահ Հինքլին ասել է. «Ես դժկամությամբ ցանկանում եմ, որպես անձնական արտոնություն, մի քանի հատկացրեք լսելու ինձ: Ձեզանից ոմանք նկատեցին Քույր Հինքլիի բացակայությունը: Առաջին անգամ 46 տարիների ընթացքում, այն ժամանակից, ինչ ես դարձա Բարձրագույն Իշխանավոր, նա չի մասնակցում գերագույն համաժողովին: . . . Մենք տունդարձի ճանապարհին էինք [Աֆրիկայից հունվարին], երբ նա ուշագնաց եղավ հոգնածությունից: Այդ ժամանակից ի վեր նա վատ է զգում: . . . Կարծում եմ, ժամը մոտենում է ավարտին, և մենք չգիտենք, թե ինչպես այն ետ պտտենք:

Ինձ համար մռայլ ժամանակ է: Այս ամիս կլրանա մեր ամուսնության վաթսունյոթ տարին: Նա մեր հինգ տաղանդավոր և ունակ երեխաների մայրն է, 25 թոռների և աճող թվով ծոռնիկների տատիկը: Մենք կողք կողքի ենք քայլել բոլոր այս տարիների ընթացքում, [որպես] հավասարներ և զուգընկերներ փոթորիկի և ուրախության միջով: Նա ամենուրեք խոսել է վկայությամբ այս աշխատանքի մասին, ցուցաբերելով սեր, խրախուսանք և հավատք, ուր էլ որ գնացել է:[91]

Երկու օր անց, ապրիլի 6-ին Մարջորի Փեյ Հինքլին հեռացավ կյանքից: Միլիոնավոր մարդիկ, ովքեր սիրում էին նրան հոգատար սրտի, արագ մտքի և հաստատուն հավատքի համար, սգացին Նախագահ Հինքլիի հետ: Նա երախտապարտ էր աջակցող և սիրո նամակների համար, որոնք գալիս էին ողջ աշխարհից: Այդ արտահայտումները, -ասաց նա,- «սփոփանքի մթնոլորտ են ստեղծում մեր վշտի պահերին»:[92] Շատ մարդիկ նվիրատվություններ կատարեցին Քույր Հինքլիի անունով՝ Կրթության մշտական ֆոնդին:

Որքան էլ Մարջորիի կորուստը դժվար էր նրա համար, Նախագահ Հինքլին շարունակեց աշխատանքը Եկեղեցում, չնայած նրա առողջությունը թեթևակի վատացավ: Նա սկսեց ձեռնափայտ կրել: Երբեմն նա օգտագործում էր այն՝ իրեն նեցուկ լինելու

համար, բայց ավելի հաճախ նա օգտագործում էր՝ թափահարելով այն Եկեղեցու անդամներին ողջունելու համար: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը վերհիշում էր մի զրույց Նախագահ Հինքլիի բժշկի հետ, ով անհանգստանում էր, թե ինչպես էր Նախագահ Հինքլին օգտագործում կամ չէր օգտագործում իր ձեռնափայտը: Բժիշկն ասել էր. «Վերջին բանը, որից մենք երկյուղում ենք նրա համար՝ ընկնելն է և կոնքազդրը կոտրելը կամ մի ավելի վատ բան: Փոխարենը նա թափահարում է այն և հետո չի օգտագործում , երբ քայլում է: Ասեք նրան, որ ձեռնափայտը նրան նշանակել է իր բժիշկը, և նա պետք է այն օգտագործի նրա համար, ինչի համար նշանակված է օգտագործել: Նախագահ Մոնսոնը պատասխանեց. «Բժիշկ, ես Նախագահ Հինքլիի խորհրդականն եմ: Դուք նրա բժիշկն եք: *Դուք* ասեք նրան»:[93]

2006 թվի սկզբին, 95 տարեկանում, Նախագահ Հինքլիի մոտ ախտորոշվեց քաղցկեղ: Այդ տարի հոկտեմբերի համաժողովում նա ասաց. «Տերն ինձ թույլ է տվել ապրել, ես չգիտեմ՝ թե որքան երկար: Բայց որքան ժամանակ էլ որ լինի, ես կշարունակեմ տրամադրել իմ լավագույնը տրված խնդրին: . . . Ես լավ եմ զգում, իմ առողջությունը բավականին լավ է: Բայց, երբ ժամանակը գա իրավահաջորդի համար, անցումը հարթ կլինի և համաձայն Նրա կամքի, ում Եկեղեցին է սա»:[94]

Մեկ տարի անց, 2007 թվի հոկտեմբերին Նախագահ Հինքլին ավարտեց իր վերջին գերագույն համաժողովը՝ ասելով. «Մենք անհամբեր կսպասենք տեսնելու ձեզ կրկին հաջորդ ապրիլին: Ես 97 տարեկան եմ, բայց հուսով եմ, ես լավ կլինեմ: Թող երկնքի օրհնություններն ուղեկցեն ձեզ այդ ընթացքում, որը մեր խոնարհ և անկեղծ աղոթքն է մեր Քավիչի, այսինքն Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն»:[95]

Նախագահ և Քույր Հինքլիի դուստրը՝ Վիրջինիան, նկարագրել է չորս տարիները Քույր Հինքլիի մահից հետո, որպես «վճռորոշ տարիներ» Նախագահ Հինքլիի կյանքում: Այնուհետև նա խորհրդածում է մի աղոթքի մասին, որը նա ասել էր 2008 թվի հունվարի 20-ին, մեկ շաբաթ իր մահից առաջ, երբ նվիրագործում էր մի վերանորոգված ժողովատուն Սոլթ Լեյք Սիթիում.

«Այդ աղոթքում, մի շատ անսովոր ձևով, նա խնդրեց Տիրոջը իր համար՝ որպես մարգարե: Նա խոսեց երախտագիտությամբ, որ «Ջոզեֆ Սմիթի օրերից սկսած մինչև ներկա ժամանակը Դու

ընտրել և նշանակել ես մարգարե այս ժողովրդին: Մենք շնորհակալ ենք Քեզ և աղերսում ենք Քեզ, որ Դու սփոփես և հաստատես նրան և օրհնես նրան ըստ իր կարիքների և Քո մեծ նպատակների»:[96]

Հինգշաբթի օրը, 2008 թվի հունվարի 24-ին, Նախագահ Հինքլին առաջին անգամ ի վիճակի չէր մասնակցելու իր եղբայրների հետ իրենց ամենշաբաթյա տաճարային ժողովին: Հաջորդ կիրակի հունվարի 27-ին նախագահ Մոնսոնը տվեց նրան քահանայության օրհնություն Նախագահներ Հենրի Բ. Այրինգի և Բոյդ Ք. Փաքերի մասնակցությամբ: Այդ օրվա վերջում Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հանգիստ հեռացավ կյանքից իր տանը՝ շրջապատված իր հինգ երեխաներով և նրանց կողակիցներով:

Մի քանի օր հետո հազարավորներ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Նախագահ Գորդոն Բ. Հինքլիին, երբ անցնում էին նրա դագաղի կողքով հասարակության հրաժեշտի արարողության ժամանակ Համաժողովների Կենտրոնի Մարգարեների դահլիճում: Այլ եկեղեցիների առաջնորդներ և կառավարության ու բիզնեսի ղեկավարներ նույնպես ցավակցություններ ուղարկեցին՝ արտահայտելով երախտագիտություն Նախագահ Հինքլիի ազդեցության և ուսմունքների համար:

Հուղարկավորման ծառայությունները կատարվեցին Համաժողովների Կենտրոնում և հեռարձակվեցին Եկեղեցու շենքերում՝ ողջ աշխարհով մեկ: Թաբերնաքլի երգչախումբը երգեց մի նոր հիմն, որպես ժողովի մաս, որը կոչվում էր.«Ի՞նչ է այս բանը, որ մարդիկ կոչում են մահ»: Հիմնի բառերը գրվել էր Նախագահ Հինքլիի կողմից՝ նրա վերջին վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին իր ընկերներին, ովքեր նայում էին նրան՝ որպես մարգարե.

Ի՞նչ է այս բանը, որ մարդիկ կոչում են մահ,
Մի՞թե այս լուռ հեռանալը գիշերով:
Սա վախճան չէ, այլ ծնունդ,
Դեպ ավելի լավ աշխարհներ և ավելի լույսը մեծ:
Ով Աստված, դիպիր Դու իմ ցավող սրտին,
Եվ հանգստացրու երկյուղներս տագնապահար:
Թող հույսն ու հավատքը մշտագր, մաքուր,
Տան ուժ և անդորր իմ արցունքներից վեր:
Չկա ոչ մի մահ, այլ փոփոխություն

Շահած հաղթանակի փոխհատուցմամբ,
Պարգևը Նրա, ով սիրեց բոլոր մարդկանց,
Աստծո Որդին, Սուրբը Միակ։[97]

Հղումներ

1. See Steve Fidel, "A Temple to Be Built in Ghana," *Church News,* Feb. 21, 1998, 3.
2. Jeffrey R. Holland, "Emerging with Faith in Africa," mormonnewsroom.co.za/article/emerging-with-faith-in-africa; accessed Feb. 11, 2015.
3. Esther Korantemaa Abuyeh, in "Accra Ghana Temple: Commemoration of the Tenth Anniversary," africawest.lds.org/accra-ghana-temple-commemoration-of-the-tenth-anniversary; accessed Feb. 11, 2015.
4. Adney Y. Komatsu, in Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 288.
5. Russell M. Nelson, "Spiritual Capacity," *Ensign,* Nov. 1997, 15–16.
6. Jeffrey R. Holland, "President Gordon B. Hinckley: Stalwart and Brave He Stands," *Ensign,* June 1995, 4.
7. In Benjamin F. Tibby, Biographical Sketch of Breneman Barr Bitner, Hinckley and Bitner family history collection, Church History Library, Salt Lake City; see also Silas Richards Company schedule and reports, Sept. 1849, Church History Library.
8. Bryant S. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 193. Most estimates put the number of *Mayflower* survivors slightly higher than 49.
9. Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 24.
10. Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 25.
11. Gordon B. Hinckley, "Joseph the Seer," *Ensign,* May 1977, 66; quoting "Praise to the Man," *Hymns,* no. 27.
12. See Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 45.
13. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 388.
14. Gordon B. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 46–47.
15. Gordon B. Hinckley, "God Hath Not Given Us the Spirit of Fear," *Ensign,* Oct. 1984, 4–5.
16. Gordon B. Hinckley, "The Question of a Mission," *Ensign,* May 1986, 40.
17. Gordon B. Hinckley, in Jeffrey R. Holland, "President Gordon B. Hinckley: Stalwart and Brave He Stands," 7–8.
18. Gordon B. Hinckley, "Be Not Afraid, Only Believe," *Ensign,* Feb. 1996, 2.
19. Gordon B. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 62.
20. Gordon B. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 64.
21. See Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 64.
22. Gordon B. Hinckley, in "His Mission to England Was a Life-Changing Experience," *Deseret Morning News,* Jan. 28, 2008, 11.
23. Gordon B. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 75.
24. Elders' Labor Record of Liverpool Conference of the British Mission of The Church of Jesus Christ of Latter-day Saints, July 1933 to Feb. 1934; Church History Library, Salt Lake City.
25. See Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 69.
26. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1: 1995–1999* (2005), 348.
27. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1,* 348.
28. Heber J. Grant, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 84.
29. For additional details about this experience, see chapter 2 in this book.
30. Gordon B. Hinckley, letter to Parley Giles, Dec. 7, 1936; Church History Library, Salt Lake City.
31. Gordon B. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 151–52.
32. Gordon B. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 104.
33. Marjorie Pay Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 59.
34. Marjorie Pay Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 114–15.
35. Marjorie Pay Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 173–74.

36. Marjorie Pay Hinckley, in *Glimpses into the Life and Heart of Marjorie Pay Hinckley,* ed. Virginia H. Pearce (1999), 107.
37. Gordon B. Hinckley, letter to G. Homer Durham, Mar. 27, 1939; Church History Library, Salt Lake City.
38. Gordon B. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 126.
39. See Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 135–36.
40. See Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 143–44.
41. David O. McKay, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 176.
42. See Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 177–81.
43. Gordon B. Hinckley, in Conference Report, Apr. 1958, 123–24.
44. Gordon B. Hinckley, in Conference Report, Apr. 1958, 123.
45. Kenji Tanaka, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 220.
46. David O. McKay, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 234.
47. Gordon B. Hinckley, in Conference Report, Apr. 1962, 71.
48. See Allen E Litster, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 313.
49. Allen E Litster, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 314.
50. See Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 315.
51. During the last several years of his service as President of the Church, President David O. McKay also called additional counselors in the First Presidency to assist him.
52. Gordon B. Hinckley, "Faith: The Essence of True Religion," *Ensign,* Nov. 1981, 6.
53. Gordon B. Hinckley, "Five Million Members—A Milestone and Not a Summit," *Ensign,* May 1982, 46.
54. Gordon B. Hinckley, "The Loneliness of Leadership" (Brigham Young University devotional, Nov. 4, 1969), speeches.byu.edu.
55. Gordon B. Hinckley, in Francis M. Orquiola, "Temple Dedication Rewards Faith of Filipino Saints," *Ensign,* Nov. 1984, 106.
56. Gordon B. Hinckley, in "New Mission Presidents Receive Instruction from Church Leaders," *Ensign,* Sept. 1984, 76.
57. Gordon B. Hinckley, in "Leadership Meetings Focus on Missionary Work, Activation, and Strengthening Members," *Ensign,* May 1985, 96.
58. See Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 505.
59. Marjorie Pay Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 505.
60. Gordon B. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 508.
61. Gordon B. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 508.
62. Jeffrey R. Holland, "President Gordon B. Hinckley: Stalwart and Brave He Stands," 2.
63. Neal A. Maxwell, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 536.
64. Gordon B. Hinckley, "Remember . . . Thy Church, O Lord," *Ensign,* May 1996, 83.
65. Gordon B. Hinckley, "The Church Goes Forward," *Ensign,* May 2002, 4.
66. Gordon B. Hinckley, in "President Gordon B. Hinckley Awarded Presidential Medal of Freedom," mormonnewsroom.org/article/president-gordon-b.-hinckley-awarded-presidential-medal-of-freedom; accessed Sept. 21, 2015.
67. Gordon B. Hinckley, "Forgiveness," *Ensign* or *Liahona,* Nov. 2005, 81.
68. Gordon B. Hinckley, "This Glorious Easter Morn," *Ensign,* May 1996, 65–66.
69. See "Milestones in the Presidency of Gordon B. Hinckley," *In Memoriam: President Gordon B. Hinckley, 1910–2008* (supplement to the *Ensign,* Mar. 2008), 13.
70. Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 553–54.
71. *Teachings of Gordon B. Hinckley,* 298.
72. Gordon B. Hinckley, in Jeffrey R. Holland, "A Teacher Come from God," *Ensign,* May 1998, 26.
73. Gordon B. Hinckley, "The Perpetual Education Fund," *Ensign,* May 2001, 52.
74. Gordon B. Hinckley, "The Perpetual Education Fund," 52.
75. See Gordon B. Hinckley, "Reaching Down to Lift Another," *Ensign,* Nov. 2001, 52.
76. Gordon B. Hinckley, "The Church Goes Forward," 6.
77. Gordon B. Hinckley, "Stand Strong against the Wiles of the World," *Ensign,* Nov. 1995, 100.

78. First Presidency letter, Feb. 11, 1999, in "Policies, Announcements, and Appointments," *Ensign,* June 1999, 80. For more on this subject, see chapters 10 and 11.

79. Gordon B. Hinckley, "Converts and Young Men," *Ensign,* May 1997, 47. For more on this subject, see chapter 22.

80. Jeffrey R. Holland, "Abide in Me," *Ensign* or *Liahona,* May 2004, 31.

81. Gordon B. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 325.

82. *Teachings of Gordon B. Hinckley,* 629.

83. See Gordon B. Hinckley, "Some Thoughts on Temples, Retention of Converts, and Missionary Service," *Ensign,* Nov. 1997, 49–50.

84. Gordon B. Hinckley, "The Quorum of the First Presidency," *Ensign,* Dec. 2005, 50.

85. Gordon B. Hinckley, "New Temples to Provide 'Crowning Blessings' of the Gospel," *Ensign,* May 1998, 88. For more information about the inspiration to build smaller temples, see chapter 23.

86. Gordon B. Hinckley, "As We Gather Together," *Ensign,* Nov. 1995, 4.

87. Gordon B. Hinckley, "This Glorious Easter Morn," 65.

88. Gordon B. Hinckley, "This Great Millennial Year," *Ensign,* Nov. 2000, 68–69.

89. «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը,» *Ensign* կամ Լիահոնա, 2000, 2:

90. Gordon B. Hinckley, "My Testimony," *Ensign,* May 2000, 69. For more on this subject, see chapters 8 and 24.

91. Gordon B. Hinckley, "Concluding Remarks," *Ensign* or *Liahona,* May 2004, 103–4.

92. Gordon B. Hinckley, "The Women in Our Lives," *Ensign* or *Liahona,* Nov. 2004, 82.

93. Thomas S. Monson, "God Be with You Till We Meet Again," *In Memoriam: President Gordon B. Hinckley, 1910–2008,* 30.

94. Gordon B. Hinckley, "The Faith to Move Mountains," *Ensign* or *Liahona,* Nov. 2006, 82.

95. Գորդոն Բ. Հինքլի «Փակման խոսք» *Ensign* կամ *Լիահոնա,* Nov. 2007, 108.

96. Virginia H. Pearce, "A Daughter's Tribute," *In Memoriam: President Gordon B. Hinckley, 1910–2008,* 18–19.

97. Gordon B. Hinckley, "What Is This Thing That Men Call Death?" *Ի հիշատակ Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 1910–2008,* 32:

Առաջին Տեսիլքը սկզբնավորեց «Երկրի տղաներին և կանանց հետ Աստծո Երկար տարեգրության վերջին գլուխը»:

Ավետարանի վերականգնումը՝ ավելի պայծառ օրվա լուսաբացը

«Հայրն ու Որդին հայտնվեցին և այս փառահեղ ավետարանը ներկայացրին պատանի Ջոզեֆ Սմիթին»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Իր կյանքի ընթացքում Նախագահ Գորդոն Բ. Հինքլին որդեգրեց խորը հարգանք այն մարդկանց և վայրերի հանդեպ, որոնք առնչվում էին ավետարանի վերականգնմանը: Նա առանձնահատուկ երախտագիտություն էր զգում Ջոզեֆ Սմիթի և Վերականգնման մեջ նրա դերի հանդեպ, և նա խոսում էր «Տիրոջ աստվածայնության և Մարգարե Ջոզեֆ Սմիթի առաքելության մասին վկայություն բերելու անընդհատ աճող անհրաժեշտության մասին»:[1]

1935 թվականին, երբ Գորդոնը տուն էր վերադառնում Անգլիայում կատարած իր միսիայից, նա և մյուս վերադարձած միսիոներներն այցելեցին Սրբազան պուրակ և Կումորա բլուրը: Նրանք կանգ առան նաև Քարթիջի Բանտի մոտ, որտեղ Մարգարե Ջոզեֆը և Հայրում Սմիթը նահատակվեցին: Նրանք քայլեցին Նավուի փոշոտ փողոցներում, որտեղ աքսորված Սրբերը ճահճացած հողը դարձրին մի գեղատեսիլ քաղաք: Անկասկած, վաղ շրջանի Սրբերի փորձությունների ու հաղթանակների մասին մտորումները ճնշում էին Գորդոնի միտքը, երբ նա այդ վայրերում էր, և երբ շարունակում էր ճանապարհը դեպի արևմուտք, ռահվիրաների ուղու երկայնքով՝ դեպի Սոլթ Լեյք Սիթի:

Գորդոն Բ. Հինքլին հաջորդ տասնամյակների ընթացքում ևս շատ անգամներ վերադարձավ Վերականգնման սրբազան վայրերը: 2000 թվականի դեկտեմբերի 3-ին Առաջին

Նախագահության Սուրբ Ծննդյան հոգևոր երեկոյի ժամանակ Նա կիսվեց դեպի Սրբազան Պուրակ կատարած իր այցելությունից այս անձնական փորձառությամբ.

«Մի քանի տարի առաջ ինձ հանձնարարված էր նախագահել Ռոչեստրի Նյու Յորք Ցցի համաժողովը: Շաբաթ օրը ես ասացի եղբայրներին, ովքեր ինձ հետ էին. «Եկեք , կիրակի առավոտյան շուտ վեր կենանք և գնանք Սրբազան Պուրակ մինչև համաժողովը»: Նրանք բոլորը համաձայնվեցին: Ուստի, այդ գարնանային կիրակի օրը շատ վաղ, միսիայի նախագահը, ցցի նախագահը, տարածքային ներկայացուցիչները և ես դուրս եկանք դեպի Պալմիրա և քայլեցինք դեպի պուրակը: Այնտեղ ոչ ոք չկար: Այն խաղաղ էր և հիասքանչ: Գիշերն անձրև էր եկել: Ծառերի վրա փոքրիկ նոր տերևներ էին դուրս եկել:

«Մենք կամաց էինք խոսում միմյանց հետ: Մենք ծնկի իջանք խոնավ գետնին և աղոթեցինք: Մենք չլսեցինք պարզորոշ ձայն: Մենք տեսիլք չտեսանք: Բայց անըմբռնելի ձևով մեզանից յուրաքանչյուրի մտքում կարծես լսվեց, որ այո, դա տեղի էր ունեցել այստեղ, դա պատահել էր ճիշտ, ինչպես Ջոզեֆն էր ասել: Այստեղ էր, որ Աստված՝ մեր Հավերժական Հայրը և Նրա Սիրելի Որդին, հարություն առած Տեր Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին 14-ամյա պատանուն և խոսեցին նրա հետ: Նրանց անզուգական լույսը հանգչեց նրա վրա և նրան հրահանգվեց այն, ինչ նա պետք է աներ:

«Այդ վեհ առիթը՝ Առաջին Տեսիլքը, բացեց վարագույրները, որի միջով երկիր եկավ Քրիստոսի վերականգնված Եկեղեցին: Այն դուրս եկավ խավարի անապատից, անցյալ դարերի ամայությունից դեպի նոր օրվա փառահեղ արշալույսը: Մորմոնի Գիրքը հաջորդեց՝ որպես ևս մեկ վկայություն Տեր Հիսուս Քրիստոսի մասին: Նրա սուրբ գերբնական քահանայությունը վերականգնվեց նրանց ձեռքերի ներքո, ովքեր կրել էին այն հնում: Բանալիներ և զորություններ շնորհվեցին Մարգարեներին և նրանց ընկերակիցներին: Հինավուրց Եկեղեցին կրկին երկրի վրա էր նախորդ ժամանակաշրջանների բոլոր օրհնություններով, զորություններով, վարդապետություններով, բանալիներով և սկզբունքներով: Սա [Քրիստոսի] Եկեղեցին է: Այն կրում է Նրա անունը: Այն ղեկավարվում է Նրա քահանայությամբ: Չկա

ուրիշ անուն երկնքի ներքո, որով մարդիկ պիտի փրկվեն։ Ջոզեֆ Սմիթը . . . դարձավ Նրա մեծ կտակարարը»։[2]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Փրկիչի մահից հետո Նրա հիմնադրած Եկեղեցին ընկավ ուրացության մեջ։

[Հիսուս Քրիստոսը] եղել է և մնում է մարդկային պատմության կենտրոնական վիթխարի կերպարը, բոլոր մարդկանց ժամանակների և եղանակների բարձրակետը։

Մինչև Իր մահը նա ձեռնադրեց Իր Առաքյալներին։ Որոշ ժամանակ նրանք շարունակում էին կրել այն։ Նրա եկեղեցին հաստատվեց։[3]

Փրկիչի մահից հետո Նրա հիմնադրած Եկեղեցին ընկավ ուրացության մեջ։ Կատարվեց Եսայիայի խոսքերը, ով ասել է. «Եւ երկիրը պղծուած է լինելու իր բնակիչների տակին, որովհետեւ օրենքները զանց են արել, պատուիրանքը՝ փոխել, յաւիտենական ուխտը ՝ խափանել (Եսայիա 24.5)։[4]

Պողոսի թղթերը Քրիստոսի հետևորդների մեջ աղաղակում էին զորության համար , որպեսզի նրանք չընկնեն ամբարշտության մեջ։։ Բայց ուրացության ոգին ի վերջո գերիշխեց։[5]

Դարեր անցան։ Խավարի ամպը պատեց երկիրը։ Եսայիան նկարագրել է այն. «Որովհետեւ ահա խաւարը ծածկել է երկիրը, եւ մառախուղն՝ ազգերը» (Եսայիա 60.2)։

Դա կողոպուտի և տառապանքի ժամանակաշրջան էր, որին հատուկ էր երկարատև և արյունալի կոնֆլիկտ։ . . . Դա հուսահատության դարաշրջան էր՝ տերերի և ճորտերի ժամանակաշրջան։

Առաջին հազար տարին անցավ և երկրորդ հազարամյակի արշալույսը բացվեց։ Դրա առաջին դարերը նախորդի շարունակությունն էին։ Դա վախով և տառապանքով լեցուն մի ժամանակաշրջան էր։[6]

2

Մենք ի՞նչ կարող ենք անել, որպեսզի ցույց տանք մեր երախտագիտությունը ավետարանի Վերականգնման համար:

Ինչ-որ ձևով, խավարի այդ երկար ժամանակաշրջանում մի մոմ վառվեց: Վերածննդի ժամանակաշրջանն իր հետ բերեց գիտելիքի, արվեստի գիտության ծաղկում: Առաջ եկավ քաջարի տղամարդկանց և կանանց համարձակ շարժում, ովքեր նայեցին դեպի երկինք՝ Աստծո և Նրա աստվածային Որդու ճանաչումով: Մենք խոսում ենք այդ մասին որպես Բարեփոխում:[7]

Բարեփոխողներն աշխատում էին փոխել [Քրիստոնեական] եկեղեցին, նրանց շարքում էին աչքի ընկնող այնպիսի մարդիկ, ինչպես օրինակ՝ Լյութերը, Մելանխթոնը, Հուսը, Զվինգլին և Թինդըլը: Սրանք շատ քաջ մարդիկ էին, որոնցից մի քանիսին իրենց համոզմունքների պատճառով դաժան մահվան դատապարտեցին: Բողոքականությունը առաջացավ է բարեփոխման հետևանքով և իր կանչով: Երբ այդ բարեփոխումը չիրականացավ, բարեփոխողները կազմավորեցին իրենց իսկ եկեղեցիները: Նրանք այդ արեցին առանց քահանայության իշխանության: Նրանց ցանկություններից մեկն էր գտնել մի ապաստարան, որում նրանք կերկրպագեին Աստծուն, ինչպես նրանք էին զգում, որ պետք է երկրպագեն:

Մինչ այս մեծ խմորումը հասունանում էր Քրիստոնեական աշխարհում, քաղաքական ուժերը նույնպես գործում էին: Այնուհետև եկավ Ամերիկյան Հեղափոխական Պատերազմը, առաջացնելով ծնունդը մի ազգի, որի Սահմանադրությունը հայտարարում էր, որ կառավարությունը չպիտի հասցնի իր ագահ ձեռքը կրոնական հարցերին: Մի նոր օր ծագեց, մի փառահեղ օր: Այստեղ այլևս պետական եկեղեցի չկար: Ոչ մի հավատ ավելի արտոնված չէր մյուսից:

Դարերի խավարից, ցավից ու պայքարից հետո ժամանակը հասունացել էր՝ ավետարանի վերականգնման համար: Հնադարյան մարգարեները խոսել էին այդ երկար սպասված օրվա մասին:

Անցյալի ողջ պատմությունը ուղղված էր դեպի այդ ժամանակաշրջանը: Դարերը իրենց ողջ տառապանքով և հույսով

Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությունն ու բանալիները վերականգնվեցին երկրի վրա, որպես Վերականգնման մաս:

եկել ու գնացել էին: Ազգերի Ամենազոր Դատավորը՝ Կենդանի Աստվածը, վճռեց, որ ժամանակները, որոնց մասին մարգարեները խոսել էին, հասել էին: Դանիելը կանխավ տեսել էր քարը, որը կտրվեց սարից՝ առանց ձեռքի, և որը դարձավ մեծ սար և լցրեց ողջ երկիրը [տես Դանիել 2.35, 44]:[8]

3

Հայրն ու Որդին հայտնվեցին և Վերականգնումը ներկայացրին Ջոզեֆ Սմիթին:

Շատ սերունդներ երկրի վրա քայլեցին, նրանցից շատերն անցանհակասությունների, ատելության, խավարի և չարի միջով, և հասավ Վերականգնման մեծ, նոր օրը: Հայրն ու Որդին հայտնվեցին և այս փառահեղ ավետարանը ներկայացրին պատանի Ջոզեֆ Սմիթին:[9]

Իսկապես որքան նշանավոր էր 1820 թվականի այդ տեսիլքը, երբ Ջոզեֆն աղոթեց անտառում, և նրան հայտնվեցին Հայրն ու Որդին: Նրանցից մեկը խոսեց նրա հետ, դիմելով նրան անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. «Սա է Իմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան»: (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17):

Ոչ մի նման բան երբևէ տեղի չէր ունեցել նախկինում: Զարմանալի է թվում, թե ինչու էր դա այդքան կարևոր, որ երկուսով՝ Հայրը և Որդին հայտնվեցին: Կարծում եմ, դա այն պատճառով էր, որ Նրանք մուտք էին բացում դեպի ժամանակների լրիվության տնտեսությունը, ավետարանի վերջին և եզրափակիչ տնտեսությունը, երբ մեկի մեջ հավաքվելու էին բոլոր նախկին տնտեսությունների տարրերը: Սա պետք է լիներ երկրի տղամարդկանց և կանանց հետ Աստծո գործերի երկար տարեգրության եզրափակիչ գլուխը:[10]

Յուրաքանչյուր պնդում, որ մենք կատարում ենք աստվածային իշխանության վերաբերյալ, յուրաքանչյուր ճշմարտություն, որ մենք ներկայացնում ենք այս աշխատանքի վավերականության մասին, իր արմատներն է գտնում պատանի մարգարեի Առաջին Տեսիլքում: Առանց դրա մենք շատ բան չէինք ունենա ասելու: Սա դեպի ժամանակների լրիվության տնտեսություն տանող նախաբանն էր, երբ Աստված խոստացավ, որ Ինքը կվերականգնի բոլոր նախորդ տնտեսությունների ողջ իշխանությունը, պարգևները, օրհնությունները:[11]

4

Քահանայության իշխանությունն ու բանալիները վերականգնվեցին:

Վերականգնելով Ահարոնյան Քահանայությունը, հարություն առած Հովհաննես Մկրտիչը իր ձեռքերը դրեց Զոզեֆ Սմիթի և Օլիվեր Քաուդերիի գլխին և ասաց. «Ընկերակից ծառաներ, Մեսիայի անունով ես շնորհում եմ ձեզ Ահարոնի Քահանայությունը, որը կրում է հրեշտակների սպասավորության, ապաշխարության ավետարանի և մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտության բանալիները» (ՎԵՈՒ 13.1):[12]

Սրան հաջորդեց Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալներ Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի այցելությունները, ովքեր շնորհեցին Զոզեֆին և Օլիվեր Քաուդերիին Մելքիսեդեկյան Քահանայություն, որն այս Առաքյալները ստացել էին Տիրոջից՝ Նրա ձեռքերի ներքո:[13]

[Փրկիչի] Առաքյալներից երեքը՝ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, հայտնվեցին Զոզեֆին և Օլիվերին ինչ-որ տեղ «անապատում» Սասքուեհանա գետի մոտ (տես ՎԵՈՒ 128.20): Նրանք

դրեցին իրենց ձեռքերը նրանց գլխին և շնորհեցին նրանց այս սուրբ իշխանությունը: . . .

Ես կարող եմ հետագծել իմ քահանայությունը ուղիղ գծով՝ մինչև այս իրադարձությունը: Դա հետևյալ ձևով է գնում. Ես ձեռնադրվեցի Դեյվիդ Օ. Մակ-Քեյի կողմից, ով ձեռնադրվել էր Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից, որը ձեռնադրվել էր Բրիգամ Յանգի կողմից, որը ձեռնադրվել էր Երեք Վկաների կողմից, ովքեր ձեռնադրվել էին Ջոզեֆ Սմիթ Կրտսեր-ի և Օլիվեր Քաուդերիի կողմից, ովքեր ձեռնադրվել էին Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի կողմից, ովքեր ձեռնադրվել էին Տեր Հիսուս Քրիստոսի կողմից:

Այն նմանապես եկել է [յուրաքանչյուր Մելքիսեդեկյան Քահանայություն կրողի]: Եղբայրներ, ձեզանից յուրաքանչյուրը, ով կրում է այս քահանայությունը, նույնպես այն ուղիղ գծով ստացել է Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի շնորհումից:[14]

5

Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը մարգարեությամբ հայտնեց, որ պատերազմ կթափվի բոլոր ազգերի վրա

Թույլ տվեք ինձ նշել բազմաթիվ վարդապետություններից և սահմանված կարգերից մի քանիսը, որոնց միջոցով մենք տարբերվում ենք մնացած բոլոր եկեղեցիներից, և որոնցից յուրաքանչյուրը եկել է պատանի Մարգարե Ջոզեֆ Սմիթին տրված մարգարեության միջոցով: Դրանք ծանոթ են ձեզ, բայց արժե, որ դրանք կրկնեք և դրանց մասին խորհրդածեք:

Աստվածազգուիլը

Սրանցից առաջինը . . . Աստված Ինքը և Նրա Սիրելի Որդին՝ հարություն առած Տեր Հիսուս Քրիստոսը հայտնվեցին: Այս մեծ Աստվածհայտնությունը, իմ կարծիքով, ժամանակի գագաթնակետին մեր Տիրոջ ծննդից, կյանքից, մահից և Հարությունից սկսած, մեծագույնն էր այդ իրադարձություններից:

Մենք չունենք որևէ այլ իրադարձություն, որը հավասար լիներ դրան:

Դարեր շարունակ մարդիկ հավաքվում էին և վիճում Աստվածության բնույթի վերաբերյալ: 325 թվականին Կոնստանտինոսը հավաքեց տարբեր խմբակցությունների գիտնականների Նիկեայում: Երկու ամսվա սուր քննարկումներից հետո, նրանք

փոխզիջման եկան մի սահմանման վերաբերյալ, որը սերունդներ շարունակ եղել է Աստվածագլխի վերաբերյալ վարդապետական դրույթ Քրիստոնյաների մեջ :

Ես հրավիրում եմ ձեզ կարդալ այդ սահմանումը և համեմատել այն պատանի Ջոզեֆի հայտարարության հետ: Նա պարզապես ասաց, որ Աստված կանգնեց իր առջև և խոսեց նրա հետ: Ջոզեֆը տեսավ Նրան և լսեց Նրան: Նա տեսքով նման էր մարդու՝ նյութական էակի: Նրա կողքին էր հարություն առած Տերը՝ առանձին էակ, ում Նա ներկայացրեց որպես Իր Սիրելի Որդին և ում հետ Ջոզեֆը նույնպես խոսեց:

Կարծում եմ, որ այդ նշանավոր տեսիլքի կարճ ժամանակահատվածում Ջոզեֆն ավելի շատ բան սովորեց Աստվածության վերաբերյալ, քան անցյալի բոլոր գիտնականներն ու կղերականները:

Այս աստվածային հայտնության ժամանակ վերահաստատվեց կասկածից վեր այն իրողությունը, որ Տեր Հիսուս Քրիստոսը տառացիորեն Հարություն էր առել:

Աստվածության մասին այս գիտելիքը, որը թաքցված էր աշխարհից դարեր շարունակ, առաջին և մեծագույն բանն է, որն Աստված հայտնեց Իր ընտրյալ ծառային:[15]

Մորմոնի Գիրքը որպես ընկերակից վկա Աստվածաշնչի հետ

Հաջորդը ես կխոսեմ մեկ այլ շատ կարևոր բանի մասին, որն Աստված է հայտնել:

Քրիստոնեական աշխարհն ընդունում է Աստվածաշունչը որպես Աստծո խոսք: Մեծամասնությունը գաղափար չունի, թե ինչպես է այն եկել մեզ:

Ես հենց նոր եմ ավարտել մի հայտնի գիտնականի նոր հրատարակված գրքի ընթերցանությունը: Նրա տված տեղեկությունից ակնհայտ է, որ Աստվածաշնչի տարբեր գրքեր միացվել են միմյանց, ինչպես երևում է չհամակարգված ձևով: Որոշ դեպքերում ձեռագրում գրվածները չէին ներկայացվում նկարագրված իրադարձություններից երկար ժամանակ հետո: Հարց է ծագում.«Արդյո՞ք Աստվածաշունչը ճշմարիտ է: Արդյո՞ք այն իսկապես Աստծո խոսքն է»:

Մորմոնի Գիրքը . . . խոսում է որպես ձայն փոշու միջից՝ որպես վկայություն Աստծո Որդու մասին։

Մենք պատասխանում ենք, որ այդպես է, այնքանով, որքանով այն ճիշտ է թարգմանված։ Տիրոջ ձեռքը մասնակցել է դրա ստեղծմանը։ Բայց այն միայնակ չի կանգնած այժմ։ Կա ևս մեկ վկա այնտեղ գտնվող նշանակալի և կարևոր ճշմարտությունների վերաբերյալ։

Սուրբ գրությունները հայտարարում են, որ «երկու կամ երեք վկաների բերանից ամեն բան կհաստատուի» (2 Կորնթացիս 13.1)։

Մորմոնի Գիրքն առաջացել է Աստծո պարգևով և զորությամբ։ Այն խոսում է որպես ձայն փոշու միջից՝ վկայելով Աստծո Որդու մասին։ «Մորմոնի Գիրքն առաջ է եկել Աստծո պարգևով և զորությամբ։ Ինչպես ձայնը փոշու միջից, այն վկայում է Աստծո Որդու մասին։ Այն պատմում է Նրա ծննդի, Նրա ծառայության, Նրա Խաչելության, Հարության մասին և ամերիկյան մայր ցամաք՝ Բաունթիֆուլ երկրի արդարներին Նրա այցի մասին։

Այն շոշափելի բան է, որը կարելի է ձեռքով վերցնել, որը կարելի է կարդալ, որը կարելի է ստուգել։ Այն իր կազմերի ներսում

խոստում է պարունակում իր աստվածային ծագման վերաբերյալ։ Այժմ միլիոնավորները այն ստուգարքի են դրել և գտել, որ այն ճշմարիտ և սրբազան հիշատակարան է։ . . .

Քանի որ Աստվածաշունչը հին աշխարհի կտարակարանն է, Մորմոնի Գիրքը Նոր աշխարհի կտակարանն է։ Նրանք ձեռք-ձեռքի տված գնում են՝ հռչակելով Հիսուսին որպես Հոր Որդի . . .

Այս սուրբ գիրքը, որն առաջ եկավ որպես հայտնություն Ամենազորից, իսկապես ևս մեկ վկայություն է մեր Տիրոջ աստվածայնության մասին։[16]

Քահանայության իշխանությունը և Եկեղեցու կազմակերպությունը

Քահանայությունը Աստծո անունով գործելու իշխանություն է։ . . . Ես վերջերս [մի] գիրք կարդացի, [որն] առնչվում էր նախնադարյան եկեղեցու Ուրացությանը։ Եթե այդ Եկեղեցու իշխանությունը կորել էր, ինչո՞վ պետք է այն փոխարինվեր։

Քահանայության իշխանությունը եկել է այն միակ տեղից, որտեղից այն կարող էր գալ, և դա երկնքից է։ Այն շնորհվել է նրանց ձեռքերի ներքո, ովքեր կրել էին այն, երբ Փրկիչը քայլում էր երկրի վրա։ . . .

Որքան գեղեցիկ են բացվում վերականգնման պատկերները, որոնք տարան դեպի Եկեղեցու կազմավորումը 1830 թվականին։ . . . Նույնիսկ Եկեղեցու անունը եկավ հայտնությամբ։ Ո՞ւմ Եկեղեցին էր դա։ Մի՞թե դա Ջոզեֆ Սմիթինն էր։ Մի՞թե դա Օլիվեր Քաուդերիինն էր։ Ոչ, դա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին էր, որը վերականգնվել էր երկրի վրա այս վերջին օրերում։[17]

Ընտանիքը

Եվս մի եզակի հայտնություն, որը տրվեց Մարգարեին, ընտանիքի հավերժական կյանքի ծրագիրն էր։

Ընտանիքը Ամենազորի ստեղծագործությունն է։ Այն ներկայացնում է բոլոր հարաբերություններից ամենասրբազանը։ Այն ներկայացնում է բոլոր նախաձեռնություններից ամենալուրջը։ Այն հանդիսանում է հասարակության հիմնական կազմակերպությունը։

Իր Մարգարեին տրված հայտնությունների միջոցով եկավ վարդապետությունը և իշխանությունը, որի ներքո միասին կնքվում են ոչ միայն այս կյանքի համար, այլ ողջ հավերժության համար։[18]

Փոքր երեխաների անմեղությունը

Փոքր երեխաների անմեղությունը մեկ այլ հայտնություն է, որն Աստված տվել է Մարգարե Ջոզեֆի գործիք լինելու միջոցով։ Ընդհանուր առմամբ նորածինների մկրտության գործընթացը նկարագրվում է որպես Ադամի և Եվայի մեղքի հետևանքների վերացում։ Վերականգնման վարդապետության համաձայն մկրտությունը անհատական և անձնական մեղքերի թողության համար է։ Այն դառնում է ուխտ Աստծո և մարդկանց միջև։ Այն կատարվում է պատասխանատվության տարիքում, երբ մարդիկ բավականաչափ մեծ են՝ տարբերելու ճիշտը սխալից։ Դա ընկղմումով է՝ խորհրդանշելով Հիսուս Քրիստոսի մահը և թաղումը և Նրա հայտնվելը Հարության ժամանակ։[19]

Փրկություն մահացածների համար

Ես շարունակում եմ, նշելով ևս մեկ բացահայտված ճշմարտություն։ Մեզ ասվում է, որ Աստված մարդկանց հանդեպ անաչառ է, այնուամենայնիվ, իմ գիտեցած ոչ մի այլ եկեղեցի չի ապահովում մահվան վարագույրից այն կողմ գտնվողների համար ստանալու ամեն օրհնություն, որոնք տրամադրվում են ողջերին։ Մահացածների փրկության վերաբերյալ հրաշալի վարդապետությունը առանձնահատուկ է այս Եկեղեցուն։։ . . . Մահացածներին տրվել է նույն հնարավորությունը, ինչ՝ ողջերին։ Կրկին, ինչպիսի փառահեղ և սքանչելի բան է Ամենազորն ապահովել Իր Մարգարեին տրված Իր հայտնության միջոցով։[20]

Աստծո զավակների էությունը, նպատակը և ներուժը

Բացահայտվել է մարդու հավերժական էությունը։ Մենք Աստծո որդիներն ու դուստրերն ենք։ Աստված մեր ոգիների Հայրն է։ Նախքան այստեղ գալը մենք ապրել ենք։ Մենք ունեինք ինքնություն։ Մենք ծնվել ենք այս կյանքում աստվածային ծրագրի համաձայն։ Մենք այստեղ ենք, որպեսզի ստուգվի մեր արժանավորությունը, գործելով ըստ մեր ազատ կամքի, որն Աստված է տվել մեզ։ Երբ մեռնենք, մենք կշարունակենք ապրել։ Մեր

հավերժական կյանքը բաղկացած է երեք փուլից,՝ մեկը մեր նախամահկանացու գոյությունն է, երկրորդը՝ մեր մահկանացու գոյությունը, երրորդը՝ հետմահկանացու գոյությունը։ Մահվան ժամանակ մենք մեռնում ենք այս աշխարհում և վարագույրի միջով մտնում մի ոլորտ, ուր մենք արժանի ենք մտնել։ Սա, նույնպես, այս Եկեղեցու առանձնահատուկ, եզակի և թանկագին վարդապետությունն է, որը եկել է հայտնությամբ։[21]

Ժամանակակից հայտնություն

Ես առաջարկում եմ, որ գիտելիքի և իշխանության այս վիթխարի համառոտ բովանդակությունը Աստծո կողմից հեղվի Իր Մարգարեի գլխին։ . . . Կա ևս մեկ բան, որը ես պետք է նշեմ։ Դա ժամանակակից հայտնության սկզբունքն է։ Հավատո հանգանակը, որը Մարգարեն է գրել, հայտարարում է.

«Մենք հավատում ենք նաև այն ամենին, ինչ Աստված հայտնել է, այն ամենին, ինչ Նա այժմ հայտնում է, և հավատում ենք, որ Նա դեռ շատ մեծ ու կարևոր բաներ է հայտնելու Աստծո Արքայության վերաբերյալ» (Հավատո Հանգանակ 1.9)։

Աճող եկեղեցին, որը տարածվում է երկրագնդով մեկ այս բարդ ժամանակներում, կարիք ունի մշտական հայտնության երկնային գահից՝ այն առաջնորդելու և առաջ տանելու համար։

Աղոթքով և Տիրոջ կամքը անխոնջ որոնելով, մենք վկայում ենք, որ ստանում ենք ուղղություն, որ գալիս է հայտնություն, և որ Տերն օրհնում է Իր Եկեղեցին, մինչ այն առաջ է շարժվում իր ճակատագրի ուղով։

Մարգարե Ջոզեֆի աստվածային կոչման և Աստծո հայտնությունների ամուր հիմքի վրա, որոնք եկել են նրա միջոցով, մենք առաջ ենք գնում։[22]

Ջոզեֆ Սմիթից սկսած, կանգնելով շարքում որպես 15-երորդը և կրելով մարգարեական թիկնոցը, որը եկավ նրա վրա, ես հանդիսավոր հայտարարում եմ իմ վկայությունը, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթի պատմությունը [Վերականգնման իրադարձությունների մասին] ճշմարիտ են, որ Հայրը . . . վկայություն տվեց Իր Որդու աստվածայնության մասին, որ Որդին ուսուցանեց պատանի մարգարեին, և որ հաջորդեցին մի շարք իրադարձություններ,

որոնք բերեցին դեպի «ողջ երկրի երեսին միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցու կազմավորմանը»[ՎևՈ 1.30]:[23]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Ինչո՞ւ աշխարհի ժողովուրդը Հիսուս Քրիստոսի Եկեղեցու և ավետարանի կարիքն ուներ: (Տես բաժին 1:) Տերն ինչպե՞ս նախապատրաստեց ուղին ավետարանի վերականգնման համար: (Տես բաժին 2:)
- Խորհեք Առաջին Տեսիլքի վերաբերյալ Նախագահ Հինքլիի ուսմունքների մասին (տես բաժին 3): Ինչպե՞ս է Առաջին Տեսիլքի ձեր վկայությունն ազդել ձեզ վրա:
- Ինչո՞ւ էր անհրաժեշտ, որ քահանայությունը վերականգնվեր երկնային սուրհանդակների միջոցով: (Տես բաժին 4:) Ինչո՞ւ է կարևոր, որ Մելքիսեդեկյան Քահանայություն կրողների քահանայության իշխանությունը ուղիղ գծով հասնի մինչև Հիսուս Քրիստոս:
- Բաժին 5-ում վերանայեք որոշ ճշմարտությունների բովանդակությունը, որոնք եկել են Մարգարե Ջոզեֆ Սմիթին հայտնության միջոցով: Ինչպե՞ս են այդ ճշմարտություններն օրհնել ձեր կյանքը: Ինչպե՞ս կարող ենք օգնել երեխաներին հասկանալ և գնահատել այս ճշմարտությունները:

Առնչվող սուրբ գրություններ

Եսայիա 2.1–3, Գործք 3.19–21, Հայտնություն 14.6–7, 2 Նեփի 25.17–18, ՎևՈ 128.19–21

Օգնություն ուսումնասիրողին

Ավետարանի ձեր ուսումնասիրությունը ամենաարդյունավետն է, երբ դուք ուսուցանվում եք Սուրբ Հոգու կողմից: Ավետարանի ձեր ուսումնասիրությունը միշտ սկսեք աղոթքով, որպեսզի Սուրբ Հոգին օգնի ձեզ սովորել» (*Քարոզիր Իմ Ավետարանը* [2004], 21):

Հղումներ

1. In Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 326.
2. "My Redeemer Lives," *Ensign,* Feb. 2001, 72.
3. "At the Summit of the Ages," *Ensign,* Nov. 1999, 73.

4. "The Stone Cut Out of the Mountain," *Ensign* or *Liahona,* Nov. 2007, 84.
5. "The Dawning of a Brighter Day," *Ensign* or *Liahona,* May 2004, 82.
6. "At the Summit of the Ages," 73.
7. "The Dawning of a Brighter Day," 82–83.
8. "At the Summit of the Ages," 73.
9. "The Dawning of a Brighter Day," 83.
10. "The Stone Cut Out of the Mountain," 84.
11. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 226.
12. "The Things of Which I Know," *Ensign* or *Liahona,* May 2007, 84.
13. "The Great Things Which God Has Revealed," *Ensign* or *Liahona,* May 2005, 82.
14. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 411.
15. "The Great Things Which God Has Revealed," 80–81.
16. "The Great Things Which God Has Revealed," 81–82.
17. "The Great Things Which God Has Revealed," 82.
18. "The Great Things Which God Has Revealed," 82.
19. "The Great Things Which God Has Revealed," 82.
20. "The Great Things Which God Has Revealed," 82.
21. "The Great Things Which God Has Revealed," 83.
22. "The Great Things Which God Has Revealed," 83.
23. "Special Witnesses of Christ," *Ensign,* Apr. 2001, 20–21.

Դրոշ ազգերին, լույս աշխարհին

«Ուժեղ լինելու ժամանակն է: Սա մի ժամանակ է, երբ պիտի առաջ շարժվենք առանց երկմտելու՝ քաջ գիտակցելով մեր առաքելության իմաստը, շունչն ու կարևորությունը»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Երբ Գորդոն Բ. Հինքլին տուն վերադարձավ Անգլիայում իր միսիան ավարտելուց հետո, նա կատարեց իր միսիայի նախագահ Ջոզեֆ Ֆ. Մերիլի վերջին հանձնարարությունը: Նախագահ Մերիլը նաև Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր և խնդրել էր Գորդոնին զեկուցում պատրաստել Առաջին Նախագահության համար՝ Նախագահ Հեբեր Ջ. Գրանտի, Ջ. Ռուբեն Քլարկի և Դեյվիդ Օ. Մակքեյի: Գորդոնը զանգեց Առաջին Նախագահության քարտուղարին և հանդիպում խնդրեց:

Երբ Գորդոնը մտավ Առաջին Նախագահության խորհրդակցության սենյակ, Նախագահ Գրանտը և նրա խորհրդականները ջերմորեն ողջունեցին նրան: Հետո Նախագահ Գրանտն ասաց. «Եղբայր Հինքլի, մենք ձեզ կհատկացնենք տասնհինգ րոպե, որպեսզի պատմեք մեզ, թե Երեց Մերիլն ինչ է ուզում, որ մենք լսենք»: Մեկ ժամ տասնհինգ րոպե անց Գորդոնը հեռացավ սենյակից: Իրեն հատկացված տասնհինգ րոպեում նա ներկայացրեց իր միսիայի նախագահի մտահոգությունն այն մասին, որ միսիոներները կարիք ունեին տպագիր նյութերի, որոնք կօգնեին նրանց իրենց աշխատանքում: Նրա կարճ ելույթից հետո Առաջին Նախագահությունը նրան հարցեր ուղղեց, որին հետևեց մեկ ժամ տևողությամբ քննարկում:

Այս հանձնարարությունն ավարտելուց հետո Գորդոնը զգաց, որ «իր միսիան արդեն ավարտվել է և ժամանակն է առաջ

«Այս Եկեղեցու առաքելությունն է՝ կանգնել՝ որպես դրոշ ազգերին և լույս աշխարհին»։

շարժվելու և ապագայի համար ծրագրեր կազմելու»: Նա արդեն ավարտել էր Յուտայի համալսարանը անգլերեն լեզվի մասնագետի դիպլոմով և ցանկանում էր ավարտել ուսումը Նյու Յորք Սիթիի Կոլումբիայի համալսարանում՝ լրագրողի մասնագիտությամբ: Բայց Առաջին Նախահագության հետ հանդիպումից երկու օր անց մի հեռախոսազանգ փոխեց նրա ծրագրերը: Զանգահարողը Նախագահ Մակքեյն էր, ով ասաց. «Եղբայր Հինքլի, երեկ Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի հանդիպման ժամանակ մենք քննարկեցինք այն ամենը, ինչի մասին խոսել էինք ձեր հետ հարցազրույցի ընթացքում: Եվ մենք ստեղծել ենք մի կոմիտե, որի կազմի մեջ մտնում են վեց անդամ Տասներկու Առաքյալների Քվորումից և Երեց Սթիվեն Լ. Ռիչարդսը՝ որպես նախագահ, որպեսզի հոգ տանի ձեր ներկայացրած խնդիրների մասին: Մենք կցանկանայինք հրավիրել ձեզ՝ աշխատել այդ կոմիտեի հետ»:[1]

Գորդոնն ընդունեց հրավերը և ընդունվեց աշխատանքի որպես գործադիր քարտուղար նորաստեղծ Եկեղեցու ռադիոյի, հրապարակայնության և միսիայի գրականության հանձնաժողովում: Նա չգնաց սովորելու Կոլումբիայի համալսարանում և երբեք չաշխատեց որպես լրագրող՝ հրատարակելու աշխարհի նորությունները: Փոխարենը, նա մինչև կյանքի վերջը ջանքեր գործադրեց՝ հրատարակելու ավետարանի բարի լուրերը: Ավելի ուշ, երբ նա ծառայում էր որպես Բարձրագույն Իշխանավոր, այս պարտականություններն ընդլայնվեցին:

Գորդոն Բ. Հինքլին հաճախ էր լրագրողներին հարցազրույց տալու հանձնարարություն ստանում այն բանից հետո, երբ զարգացրեց պարզ ինքնարտահայտման կարողությունը նույնիսկ դժվարին իրավիճակներում: Որպես Եկեղեցու Նախագահ՝ նա շարունակում էր խրախուսել այդպիսի հնարավորությունները, օգնելով կատարել Հիսուս Քրիստոսի Եկեղեցին «խավարից դուրս բերելու» իր բաժինը» (ՎԵՈՒ 1.30): Նա հայտարարել է.

«Ես հավատում և վկայում եմ, որ այս Եկեղեցու առաքելությունն է կանգնել որպես դրոշ ազգերին և լույս աշխարհին: Մենք մեզ վրա ենք վերցրել մի մեծ, բոլորին միավորող հանձնագիր, որից չենք կարող ոչ խույս տալ, ոչ էլ մի կողմ շրջվել: Մենք ընդունում ենք այդ հանձնագիրը և վճռական ենք այն իրականացնելու գործում, և Աստծո օգնությամբ մենք կանենք այդ»:[2]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Ինչպես քարը Դանիելի տեսիլքում, Եկեղեցին առաջ է գլորվում, որպեսզի լցնի ողջ աշխարհը:

Եկեղեցին սկսվեց մի խոնարհ տղայի՝ Ջոզեֆ Սմիթի աղոթքով իր հոր ագարակի բացատում: Նրա նշանավոր փորձառությունից, որը մենք կոչում ենք Առաջին Տեսիլք, առաջ եկավ այս աշխատանքը: . . . Սա հենց Դանիելի տեսիլքի քարի մարմնավորումն է, որն առանց ձեռքերի օգնության կտրվեց սարից և գլորվեց, որպեսզի լցնի ողջ երկիրը (տես Դանիելի 2.44–45):[3]

Երբ Եկեղեցին կազմավորվեց 1830 թվականին, կային ընդամենը վեց անդամներ [և] միայն մի բուռ հավատացյալներ, ովքեր ապրում էին մի անհայտ գյուղում: . . . Սիոնի ցցերն այսօր ծաղկում են Միացյալ Նահանգների, Կանադայի, Մեքսիկայի բոլոր նահանգներում, Կենտրոնական Ամերիկայի բոլոր ազգերի մեջ և ամբողջ Հարավային Ամերիկայի տարածքում:

Համայնքներ կան Բրիտանական կղզիներում և Եվրոպայում, որտեղ հազարավոր մարդիկ են տարիների ընթացքում միացել Եկեղեցուն: Այս աշխատանքը հասել է Բալթյան ազգերին՝ տարածվելով ներքև՝ մինչև Բուլղարիա, Ալբանիա և աշխարհի այդ մասում գտնվող այլ տարածքներ: Այն հասնում է Ռուսաստանի հսկայական տարածքները: Այն հասնում է Մոնղոլիա և ապա Ասիայի ազգերին՝ մինչև Խաղաղ օվկիանոս, Ավստրալիա և Նոր Զելանդիա, Հնդկաստան և Ինդոնեզիա: Այն ծաղկում է Աֆրիկայի շատ պետությունների մեջ: . . .

Եվ սա միայն սկիզբն է: Այս աշխատանքը կշարունակի աճել ու ծաղկել և տեղափոխվել ամբողջ երկրագնդով մեկ:[4]

2

Եկեղեցու վաղ շրջանի ղեկավարները մարգարեական մոտեցում ունեին Տիրոջ աշխատանքի ճակատագրին:

1847 թվականի հուլիսի 24-ին մեր մարդկանց առաջին նորաբնակների խումբը եկավ [Սոլթ Լեյքի] հովիտ: Առաջնորդող խումբը տեղ էր հասել մեկ կամ երկու օր շուտ: Բրիգամ Յանգը ժամանեց շաբաթ օրը: Հաջորդ օրն առավոտյան և ցերեկը անցկացվեցին կիրակնօրյա ծառայություններ: Չկար որևէ

դահլիճ, որտեղ նրանք կարող էին հանդիպել։ Ենթադրում եմ, որ այդ հուլիսյան կիրակի օրվա այրող տապին նրանք նստել էին իրենց սայլերի լեզվակների վրա կամ հենվել անիվներին, մինչ Եղբայրները ելույթ էին ունենում։ Արդեն սեզոնի վերջն էր, և նրանք բախվեցին մի մեծ ու անհետաձգելի խնդրի հետ՝ թե արդյոք հաջորդ տարի իրենք ցանքս պիտի անեին։ Բայց Նախագահ Յանգը խնդրեց նրանց չխախտել Հանգստության օրվա օրենքն այդ ժամանակ և ապագայում։

Հաջորդ առավոտ նրանք խմբերի բաժանվեցին, որպեսզի ուսումնասիրեին իրենց շրջապատը։ Բրիգամ Յանգը, Վիլֆորդ Վուդրուֆը և նրանց մի քանի կողմնակիցները ճամփա ընկան իրենց ճամբարի տարածքից։ . . . Նրանք մագլցեցին մի գմբեթաձև լեռնագագաթ, բայց Նախագահ Յանգը դժվարությամբ բարձրացավ վերջերս տարած իր հիվանդության պատճառով։

Երբ Եղբայրները կանգնած էին գագաթին, նրանք նայեցին իրենցից հարավ գտնվող հովտին։ Հողը անբերրի էր, բացառությամբ ուռիների ու եղեգների, որոնք աճում էին լեռներից դեպի լիճը հոսող առվակների երկայնքով։ Չկային շինություններ, բայց Բրիգամ Յանգը նախորդ կիրակի ասել էր. «Սա է այդ տեղը»։

Գագաթը, որտեղ նրանք կանգնած էին, կոչվեց Դրոշի գագաթ, որը վերցված է Եսայիայի հետևյալ մարգարեական խոսքերից. «Եվ նա [խոսվում է Աստծո մասին] դրոշակ է բարձրացնելու հեռու ազգերի համար, և սուլելու է նորանց երկրի ծայրիցը. և ահա, նորանք շուտով հեշտությամբ գալիս են»։ (Եսայ. 5.26։)

«Եվ նա դրոշակ կբարձրացնէ ազգերի համար, և կժողովէ Իսրայէլի տարագրեալներին, և Յուդայի ցրուեալներին կհաւաքէ երկրի չորս անկիւններիցը»։ (Եսայ. 11.12։) . . .

Ես կարծում եմ [այդ Եղբայրները] այդ առիթով խոսել են նաև տաճարի շենքի մասին . . . ի կատարումն Եսայիայի խոսքերի.

«Եվ կլինի օրերի վերջին, որ հաստատ կլինի Տիրոջ տան սարը՝ սարերի գլխին, և վեր կխոյանայ բլուրներիցը. և յորդելով նորա մոտ կգան բոլոր ազգերը։

Եվ շատ ժողովուրդներ կգնան ու կասեն. Եկէ՛ք, եկեք վեր գնանք դեպի Տիրոջ սարը՝ Յակոբի Աստուծոյ տունը. և նա կսովորեցնէ մեզ իր ճանապարհներիցը, և մենք կգնանք նորա

Սոլթ Լեյքի հովիտ հասնելուց երկու օր անց Բրիգամ Յանգը և մի քանի այլ եղբայրներ մագլցեցին գմբեթանման գագաթը, որը կոչվեց Դրոշի Գագաթ և գնեցին իրենց շրջապատը:

շաւիղներումը. քանզի Սիոնիցը դուրս է գալու օրէնքը, և Տիրոջ խոսքը՝ Երուսաղէմիցը»: (Եսայ. 2.2–3:)

Եթե ինչ-որ մեկը լսեր այս մարդկանց 1847 թվականի այդ հուլիսյան առավոտ, հավանաբար կասեր. «Ինչպիսի հիմարություն»: Նրանք նման չէին մեծ երազանքներ ունեցող պետական այրերի: Նրանք նման չէին ղեկավարների, ովքեր խորհում էին քարտեզների վրա խոնարհված՝ ծրագրելով ստեղծել կայսրություն: Նրանք աքսորյալներ էին, ովքեր Միսիսիպի գետի մոտ գտնվող իրենց գեղեցիկ քաղաքից քշվել էին դեպի Արևմուտքի այս անապատային տարածքը: Բայց նրանք գտնվում էին տեսիլքի իշխանության տակ, որը վերցված էր սուրբ գրություններից և հայտնության խոսքերից:

Ես հիանում եմ այդ փոքրիկ խմբի կանխատեսությամբ: Այն թե՞ համարձակ էր, թե՞ խիզախ: Այն համարյա անհավատալի էր: Նրանք այստեղ էին, համարյա հազար մղոն [1600 կիլոմետր] մոտակա բնակավայրից հեռու՝ դեպի արևելք և համարյա ութ հարյուր մղոն [1300 կիլոմետր] հեռու Խաղաղ օվկիանոսի ափից: Նրանք անծանոթ էին կլիմային: Հողը տարբերվում էր Իլինոյսի և Այովայի սև պարարտ կավահողից, որտեղ նրանք ապրում էին մինչ այդ: Նրանք երբևէ բերք չէին

ստացել այստեղ: Նրանք չգիտեին ինչպիսին է ձմեռն այստեղ: Նրանք որևէ շինություն չէին կառուցել: Այս մարգարեները, ովքեր կրում էին հին, ճամփորդությունից մաշված հագուստներ ու կոշիկներ, որոնք մաշվել էին Նավուից մինչև այս հովիտը քայլելիս, խոսում էին հազարամյակի տեսիլքի մասին: Մարգարեական տեսանկյունից նրանք խոսում էին այս առիթի սքանչելի ճակատագրի մասին: Նրանք իջան լեռնագագաթից այդ օրը և գնացին աշխատելու, որպեսզի իրականություն դարձնեն իրենց երազանքը:[5]

3

Մենք երբեք տեսադաշտից չպիտի կորցնենք Աստծո աշխատանքի աստվածային ճակատագիրը և այն դերը, որը մենք կատարում ենք այդ աշխատանքում:

Երբեմն, երբ քայլում ենք մեր կյանքի նեղ արահետներով և կատարում մեր փոքրիկ պարտականությունները, մենք տեսադաշտից կորցնում ենք այդ հոյակապ պատկերը: Երբ ես փոքրիկ տղա էի, բեռնատար ձիերը շատ տարածված էին: Սանձը լծասարքի կարևոր մասն է: Սանձի վրա կային աչքակալներ՝ յուրաքանչյուր կողմում մեկ հատ: Դրանք այդպես էին տեղադրված, որպեսզի ձին միայն ուղիղ առաջ նայեր և ոչ երկու կողմերը: Դրանք նախատեսված էին, որպեսզի թույլ չտային, որ նա վախենար կամ շեղվեր և կենտրոնացներ ուշադրությունը իր ոտքերի ճանապարհին:

Մեզանից ոմանք կատարում են աշխատանքն այնպես, կարծես աչքակալներ կան մեր աչքերին: Մենք տեսնում ենք միայն մեր փոքրիկ, նեղ ուղին: Ավելի լայն հայացք ձգելիս մենք ոչինչ չենք տեսնում: Հնարավոր է, մեր պարտականությունը շատ փոքր է Եկեղեցում: Լավ է, երբ ջանասիրաբար ենք կատարում այդ պարտականությունը: Եվ նաև լավ է իմանալ, թե այդ պարտականությունը ինչպիսի ներդրում է կատարում Աստծո աճող արքայության մեծ ընդհանուր ծրագրում:

Մի անգամ Նախագահ Հարոլդ Բ. Լին, մեջբերելով մի անհայտ գրողի ասել է. «Զննեք մեծ դաշտերը և մշակեք փոքրերը»:

Այս ձևակերպման իմ մեկնաբանությունն այն է, որ մենք պիտի ինչ-որ բան իմանանք Տիրոջ մեծ ու հրաշալի, ընդարձակ և միավորող ծրագրի լայնության, խորության, բարձրության

մասին և ապա աշխատենք ջանասիրաբար, որպեսզի կատարենք պարտականության մեր բաժինն այդ ծրագրում։

Մեզանից յուրաքանչյուրը մի փոքր դաշտ ունի մշակելու։ Այս գործն անելիս մենք երբեք չպիտի տեսադաշտից կորցնենք ավելի մեծ պատկերը՝ այս աշխատանքի աստվածային ճակատագրի մեծ համակցությունը։ Այն մեզ է տրվել Աստծո՝ մեր Հավերժական Հոր կողմից, և մեզանից յուրաքանչյուրը դեր ունի կատարելու դրա հոյակապ գոբելենի գործվածքի մեջ։ Մեր անհատական ներդրումը կարող է փոքր լինել, բայց դա կարևոր չէ։ . . .

. . . Մինչ դուք կատարում եք այն դերը, որի համար կանչված եք, երբեք տեսադաշտից մի կորցրեք այս նպատակի վսեմ ու հրաշալի ամբողջական պատկերը՝ ժամանակների լրության տնտեսությունը։ Գեղեցիկ հյուսեք ձեր փոքրիկ թելը մեծ գոբելենի նմուշի վրա, որը Երկնային Հոր կողմից նախագծված է մեզ համար։ Բարձր պահեք չափանիշը, որի ներքո մենք քայլում ենք։ Եղեք ջանասեր, հավատարիմ, առաքինի, որպեսզի որևէ թերություն չլինի այդ դրոշի վրա։

Այս արքայության տեսիլքը գիշերվա թվացյալ երազ չէ, որն աղոտանում է արևածագի հետ։ Այն Աստծո՝ մեր Հավերժական Հոր ճշմարիտ ծրագիրն ու աշխատանքն է։ Այն վերաբերում է Նրա բոլոր զավակներին։

Մինչ նրանք օշինդրից մաքրում էին [Յուտայի] այս արևմտյան հովիտները, որպեսզի դնեին համատիրության հիմքը, մինչ նրանք կատարում էին այս բոլոր սովորական գործերը, որոնք նրանցից պահանջվում էր կատարել, որպեսզի ողջ մնային և աճեին, մեր [ռահվիրա] նախնիները միշտ առջևում պահում էին մեծ գործի վեհությունը, որում նրանք ընդգրկված էին։ Սա այն աշխատանքն է, որը մենք պիտի կատարենք այն նույն տեսիլքի հետ, որը նրանք պահպանում էին։ Սա այն աշխատանքն է, որը կշարունակվի, երբ մենք հեռանանք այս աշխարհից։ Աստված օգնում է մեզ մեր լավագույն ջանքերը գործադրել որպես ծառաներ, ովքեր կանչված են Նրա աստվածային կամքի ներքո՝ առաջ տանելու և կառուցելու թագավորությունը անկատար ձեռքերով և միասնաբար կյանքի կոչենք մի կատարյալ օրինակ։[6]

4

Մենք կարող ենք դրոշ դառնալ ազգերին, որից երկրագնդի մարդիկ կարող են ուժ հավաքել:

Իմ եղբայրներ և քույրեր, մեզ համար եկել է ժամանակը՝ մի քիչ ավելի բարձր կանգնելու, բարձրացնելու մեր աչքերը և տարածելու մեր մտքերը, որպեսզի լավագույնս հասկանանք և ըմբռնենք այս մեծ հազարամյակում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու առաքելությունը: Սա այն ժամանակն է, երբ պիտի ուժեղ լինենք: Ժամանակն է առանց երկմտելու առաջ շարժվել՝ լավ հասկանալով մեր առաքելության իմաստը, ընդարձակությունն ու կարևորությունը: Սա այն ժամանակն է, երբ մենք պիտի անենք այն, ինչը ճիշտ է, անկախ դրանից հետո եկող հետևանքներից: Սա համարվում է այն ժամանակը, երբ պիտի պահենք պատվիրանները: Սա այն ժամանակն է, երբ բարությամբ ու սիրով պիտի հասնենք նրանց, ովքեր վշտի մեջ են և նրանց, ովքեր թափառում են խավարի ու ցավի մեջ: Սա այն ժամանակն է, երբ միմյանց հանդեպ մեր բոլոր հարաբերություններում պիտի լինենք նրբազգաց ու բարի, վայելուչ ու քաղաքավարի: Այլ բառերով՝ դառնալ ավելի Քրիստոսանման:[7]

Եթե աշխարհը չփոխի իր ներկայիս ընթացքը (իսկ դա հավանական չէ), և եթե մյուս կողմից մենք շարունակենք հետևել մարգարեների ուսմունքներին, ապա կշարունակենք դառնալ յուրօրինակ և առանձնահատուկ ժողովուրդ, ում աշխարհը ուշադրություն կդարձնի: Օրինակ, երբ ընտանիքի ամբողջականությունը փուլ է գալիս աշխարհիկ ճնշման տակ, մեր վերաբերմունքը ընտանիքի սուրբ լինելու վերաբերյալ համեմատության մեջ կդառնա ավելի ակնհայտ և նույնիսկ ավելի յուրահատուկ, եթե մենք ունենք այդ վերաբերմունքը պահպանելու հավատը:

Քանի որ սեռի վերաբերյալ աճող թույլատրելի վերաբերմունքը շարունակում է տարածվել, Եկեղեցու վարդապետությունը, ինչպես հետևողականորեն ուսուցանվում է ավելի քան մեկ ու կես դար, շատերի համար կդառնա ավելի անսովոր և նույնիսկ տարօրինակ:

Քանի որ ալկոհոլի օգտագործումն ու թմրանյութի չարաշահումը տարեցտարի աճում են մեր հասարակության ավանդույթների շրջանակում, մեր վերաբերմունքը, որը ձևակերպվել

է Աստծո կողմից մեկ ու կես դար առաջ, աշխարհի համար կդառնա ավելի անսովոր։ . . .

Քանի որ Հանգստության օրը աճող տեմպերով դառնում է գնումներ կատարելու և ժամանցի օր, ապա նրանք, ովքեր հնազանդվում են այն օրենքին, որը Սինայ լեռան վրա գրվել է Տիրոջ ձեռքով և հիմնավորվել ժամանակակից հայտնությամբ, կթվան ավելի անսովոր։

Միշտ չէ, որ հեշտ է ապրել աշխարհում, չլինելով դրա մի մասը։ Մենք չենք կարող ապրել մեկուսի կյանքով և չենք էլ ցանկանա այդպես անել։ Մենք պիտի շփվենք ուրիշների հետ։ Եվ այդպես վարվելով, մենք կարող ենք գթասիրտ լինել։ Մենք կարող ենք մնալ անվնաս։ Մենք կարող ենք խուսափել երեսպաշտության ոգուց և դիրքորոշումից։ Սակայն մենք կարող ենք պահպանել մեր չափանիշները։ . . .

Եթե մենք պահպանենք սրանք և եկեղեցու այլ չափանիշները, շատերն աշխարհում կհարգեն մեզ և ուժ կգտնեն հետևելու այն կանոններին, որոնք նրանք ևս ճիշտ են համարում։

Եվ ինչպես Եսայիան է ասում. «Եվ շատ ժողովուրդներ կգնան ու կասեն. Եկէ՛ք, վեր գնանք դեպի Եհովայի սարը՝ Յակոբի Աստուծոյ տունը. և նա կսովորեցնի մեզ իր ճանապարհներիցը, և մենք կգնանք նրա շաւիղներումը. որովհետև Սիոնիցը դուրս է գալու օրենքը, և Տիրոջ խոսքը՝ Երուսաղէմիցը»։ (Եսայ. 2.3։)

Հարկ չկա փոխզիջման գնալ։ Մենք չպիտի գնանք փոխզիջման։ Այն լույսը, որը Տերն է վառել այս տնտեսությունում, կարող է դառնալ աշխարհի լույսը և ուրիշները, տեսնելով մեր լավ աշխատանքը, կարող են առաջնորդվել փառաբանելու Մեր Երկնային Հորը և իրենց սեփական կյանքում մրցել այն օրինակների հետ, որոնք նրանք տեսել են մեր կյանքում։

Սկսելով ինձանից և ձեզանից, կարող են լինել ամբողջ ժողովուրդներ, որոնք, մեր կյանքի, մեր կոչումների, նույնիսկ մեր զվարճանալու եղանակի շնորհիվ, կարող են դառնալ մի քաղաք լեռան վրա, որին մարդիկ կարող են նայել ու սովորել, մի դրոշ բոլոր ազգերի համար, որից երկրագնդի ժողովուրդները կարող են ուժ ստանալ։[8]

Եթե մենք պիտի բարձր պահենք այս Եկեղեցին՝ որպես դրոշ ազգերին և լույս՝ աշխարհին, մենք մեզ վրա ավելի շատ պիտի



«Եթե մենք պիտի բարձր պահենք այս Եկեղեցին՝ որպես դրոշ ազգերին և լույս՝ աշխարհին, մենք մեզ վրա ավելի շատ պիտի վերցնենք Քրիստոսի կյանքի լույսից»:

վերցնենք Քրիստոսի կյանքի լույսն անհատապես և մեր սեփական պայմաններով: Արդարությունը պաշտպանելու համար մենք չպիտի վախենանք հանգամանքներից: Մենք երբեք չպիտի վախենանք: Պողոսն ասաց Տիմոթեոսին.

«Որովհետև Աստուած չտուավ մեզ երկչոտության հոգի, այլ զորության և սերի և զգաստության:

Ուրեմն ամոթ մի համարիր մեր Տիրոջ վկայությունը» (4 Տիմոթեոս 1.7–8):[9]

Քրիստոսի այս գործը չպիտի ընդունեք, որ այդպես էլ պիտի լինի: Դուք չեք կարող պարզապես մի կողմ կանգնել և դիտել բարի ու չար ուժերի միջև ընթացող պայքարի ներկայացումը: . . .

. . . Ես շտապեցնում եմ ձեզ իմ ողջ կարողությամբ, որ ունեմ, որ կատարեք այն պարտականությունը, որը չի մտնում մեր առօրյա պարտականությունների մեջ, այսինքն՝ կանգնել ամուր, նույնիսկ դառնալ առաջնորդ՝ խոսելու այն գործերի անունից, որոնք լույս են տալիս մեր քաղաքակրթությանը, և որը մխիթարություն ու խաղաղություն է տալիս մեր կյանքին: Դուք կարող եք առաջնորդ լինել: Որպես այս Եկեղեցու անդամ, դուք պիտի ղեկավար լինեք այն գործերում, որոնց համար կանգնած է այս Եկեղեցին: Թույլ մի տվեք, որ վախը հաղթահարի ձեր ջանքերը:[10]

Մենք վախենալու ոչինչ չունենք: Աստված ղեկի մոտ է: Նա ի բարին կուղղորդի այս աշխատանքը: Նա կհեղի Իր օրհնությունները նրանց վրա, ովքեր հնազանդ են Իր պատվիրաններին: Այսպիսին է Նրա խոստումը: Խոստումը պահելու Նրա կարողության վերաբերյալ մեզանից ոչ ոք չի կարող երկմտել:

. . . Մեր Փրկիչը, ով մեր Քավիչն է, Մեծ Եհովան և հզոր Մեսիան խոստացել է. «Ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ» (ՎԿՈ 84.88):

«Ուստի, մի վախեցիր, փոքրի՛կ հոտ. բարիք գործիր. թող երկիրն ու դժոխքը միանան քո դեմ, քանզի, եթե դու կառուցված ես իմ վեմի վրա, նրանք չեն կարող գերիշխել: . . .

Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք:

Տեսեք խոցվածքը, որ ծակեց իմ կողը, և նաև բևեռների նշանները՝ իմ ձեռքերի ու ոտքերի վրա. եղեք հավատարիմ, պահեք իմ պատվիրանները և դուք կժառանգեք երկնքի արքայությունը» (ՎԿՈ 6.34, 36–37):

Ձեռք ձեռքի տված, միասնաբար աշխատելով, մենք առաջ կգնանք՝ որպես կենդանի Աստծո ծառաներ, կատարելով

աշխատանքը Նրա Սիրելի Որդու՝ մեր Ուսուցչի, ում մենք ծառայում ենք, և ում անունը մենք ջանում ենք փառաբանել:[11]

Մենք պիտի ամուր կանգնենք: Մենք պիտի զսպենք աշխարհին: Եթե մենք այդպես վարվենք, Ամենազորը կլինի մեր ուժն ու պաշտպանը, մեր առաջնորդը և մեր հայտնողը: Մենք հանգիստ կլինենք, իմանալով, որ անում ենք այն, ինչ Նա է ցանկանում, որ մենք անենք: Հնարավոր է, մյուսները չհամաձայնեն մեզ հետ, բայց վստահ եմ, որ նրանք կհարգեն մեզ: Մենք մենակ չենք լինի: Շատերը կան, ովքեր մեր հավատից չեն, բայց զգում են նույնը, ինչ մենք ենք զգում: Նրանք կաջակցեն մեզ: Նրանք կաջակցեն մեզ մեր ջանքերում:[12]

Եկեք փառաբանենք Աստծո աշխատանքի այս հրաշալի ժամանակը: Եկեք չլինենք հպարտ կամ ամբարտավան: Եկեք խոնարհաբար երախտապարտ լինենք: Եվ թող մեզանից յուրաքանչյուրն իր մեջ վճիռ կայացնի, որ մենք պիտի ավելացնենք Ամենազորի այս հիանալի աշխատանքի փառքը, որ այն փայլի ողջ երկրագնդով՝ որպես զորության ու բարության փարոս և տեսանելի լինի ողջ աշխարհին:[13]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Երբ կարդաք 1-ին բաժինը, ինչպիսի՞ն կլինեն ձեր զգացումները, երբ մտածեք Եկեղեցու աճի վերաբերյալ 1830 թվականից մինչև հիմա:
- Վերանայեք Նախագահ Հինքլիի պատմությունը առաջին ռահվիրաների մասին, ովքեր հասան Սոլթ Լեյքի հովիտ (տես բաժին 2): Ի՞նչ կարող ենք սովորել այս պատմությունից: Ի՞նչ օգուտ քաղեցիք Եկեղեցու վաղ շրջանի ղեկավարների մարգարեական տեսիլքներից: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «դրոշ ազգերի համար»: (Տես Եսայիայի 5.26, 11.12:)
- Բաժին 3-ում Նախագահ Հինքլին խրախուսում է մեզ տեսնել Աստծո աշխատանքի «մեծ պատկերը» և «ավելի ընդարձակ տեսլականը»: Ինչո՞ւ մենք պիտի տեսնենք մեծ պատկերը: Մենք ինչո՞ւ ենք երբեմն տեսադաշտից կորցնում այն: Մեր

փոքր ջանքերն ինչպե՞ս կարող են աջակցել Աստծո արքայության աճին:

- Վերանայեք, թե ըստ Նախագահ Հինքլիի, Վերջին Օրերի Սրբերն ինչպես են դառնում ավելի «յուրահատուկ և ինքնատիպ ժողովուրդ» (բաժին 4). Մենք ինչպե՞ս կարող ենք զարգացնել ավելի մեծ կանխատեսություն և քաջություն Աստծո աշխատանքն առաջ տանելու գործում: Մենք ինչպե՞ս կարող ենք ապրել աշխարհում, չլինելով աշխարհից: Ինչպե՞ս կարող ենք «ավելի շատ մեզ վրա վերցնել Քրիստոսի կյանքի լույսը»: Ինչո՞ւ է կարևոր մեզ համար պաշտպանել այն, ինչը ճիշտ է:

Առնչվող սուրբ գրություններ

Մատթեոս 5.14–16, 1 Նեփի 14.14, ՎԵՈՒ 1.1–6, 65.1–6, 88.81, 115.5–6

Օգնություն ուսուցչին

«Հավաստիացեք, որ չեք կարծում, թե դուք «ճշմարիտ ուսուցիչ» եք: Սա լուրջ սխալ է: . . . Զգույշ եղեք, որ այդ ճանապարհով չգնաք: Ուսուցչի հիմնական դերն այն է, որ նա նախապատրաստի ուղին այնպես, որ մարդիկ ունենան հոգևոր փորձառություն Տիրոջ հետ» (Ջին Ռ. Քուք, մեջբերում *«Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում»* [1999], 41):

Հղումներ

1. See Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 83–85.
2. Գորդոն Բ. Հինքլի, «Դրոշ ազգերին, լույս աշխարհին» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2003, 82-83:
3. «Թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2007, 115:
4. «Սարից մի քար կտրվեց» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր. 2007, 84:
5. “To the Women of the Church,” *Ensign,* Nov. 1989, 51-52.
6. “An Ensign to the Nations,” 52–54.
7. “This Is the Work of the Master,” *Ensign,* May 1995, 71.
8. “A City upon a Hill,” *Ensign,* July 1990, 4–5.
9. “An Ensign to the Nations, a Light to the World,” 84.
10. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 138.
11. “This Is the Work of the Master,” 71.
12. “An Ensign to the Nations, a Light to the World,” 83.
13. «Եկեղեցու վիճակը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2004, 6:

Զարգացնել երջանկության զգացում և լավատեսական ոգի

«Եղեք հավատացող: Եղեք երջանիկ: Մի հուսահատվեք: Ամեն բան լավ կլինի»:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի մայրը՝ Ադա Բիթներ Հինքլին, հաճախ ասում էր, որ «երջանկության զգացումը և դեմքի ժպտացող արտահայտությունը կարող է խրախուսել ցանկացած ձախորդության ժամանակ, և յուրաքանչյուր մարդ ինքն է պատասխանատու իր սեփական երջանկության համար»:[1] Նրա հայրը՝ Բրայենթ Ս. Հինքլին, նույնպես օժտված էր «ժառանգական դրական վերաբերմունքով»:[2] Նախագահ Հինքլին վերհիշում էր. «Երբ ես երիտասարդ էի և հակում ունեի քննադատաբար խոսելու, հայրս ասում էր. «Ցինիկները չեն նվիրաբերում, թերահավատները չեն ստեղծում, կասկածողները չեն հասնում»:[3] Իր ծնողների խորհրդի և օրինակի ազդեցությամբ երիտասարդ Գորդոն Հինքլին սովորեց կյանքին մոտենալ լավատեսությամբ և հավատով:

Երբ Երեց Հինքլին Անգլիայում ծառայում էր միսիայում, տքնաջան աշխատում էր, որպեսզի հետևեր իր ծնողների օրինակին: Ամեն առավոտ նա և իր զուգընկերները սեղմում էին միմյանց ձեռքերը և ասում. «Կյանքը հրաշալի է»:[4] Համարյա 70 տարի անց նա առաջարկեց, որ Ֆիլիպիններում միսիոներների մի խումբ հետևեր նույն փորձին: «Երեկ հրաշալի օր էր իմ կյանքում», նա ասաց նրանց: «Ամեն օրը հրաշալի է իմ կյանքում: Հուսով եմ, որ ամեն օրը հրաշալի է ձեզանից յուրաքանչյուրի կյանքում: Հուսով եմ, կարող եք առավոտյան պատրաստվել ու գնալ սեղմելու ձեր զուգընկերոջ ձեռքը և ասել. «Եղբայր (Քույր), կյանքը հրաշալի

«Մենք բոլոր պատճառներն ունենք լավատես լինելու»։

է: Եկեք դուրս գանք ու լավ օր անցկացնենք»: Եվ երբ տուն գաք երեկոյան, հուսով եմ դուք կարող եք ասել միմյանց. «Լավ օր էր: Մենք լավ ժամանակ անցկացրինք: Ճանապարհին մենք օգնեցինք մի մարդու: . . . Մենք կհետևենք նրանց, կաղոթենք ու կհուսանք, որ նրանք կգան Եկեղեցի»: Միսիայի ամեն մի օրը պիտի լինի լավ օր»:[5]

Այս խորհուրդը կյանքի հանդեպ ունեցած Նախագահ Հինքլիի մոտեցման արտահայտությունն է: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռասսել Մ. Նելսոնը կիսվել է Նախագահ Հինքլիի և նրա կնոջ՝ Մարջորիի վերաբերյալ հետևյալ դիտարկումներով. «Նրանք ժամանակը չեն վատնում, մտորելով անցյալի մասին, և չեն անհանգստանում ապագայի համար: Եվ նրանք շարունակեցին՝ չնայած ձախորդություններին»:[6] Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը, որը նույնպես Տասներկուսի Քվորումից, մեկնաբանել է. «Ամեն ինչ լավ կլինի» արտահայտությունը թող միշտ լինի Նախագահ Հինքլիի ամենակրկնվող հավաստիացումը ընտանիքին, ընկերներին և նրանց հետ կապված մարդկանց: «Շարունակեք փորձել», նա կասի: Հավատացեք: Եղեք երջանիկ: Մի հուսահատվեք: Ամեն ինչ լավ կլինի»:[7]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Նույնիսկ, երբ շատ մարդիկ բացասական և հոռետեսական են տրամադրված, մենք կարող ենք զարգացնել երջանկության և լավատեսության ոգի:

Երկրագնդի վրա կա հոռետեսություն կոչված մի սարսափելի հիվանդություն: Այն համարյա նման է համաճարակի: Մեզ մշտապես կերակրում են սպանության, քննադատության և միմյանց մասին չարախոսելու կայուն և թթվահամ սննդակարգով: . . .

Ես հանդես եմ գալիս . . . խնդրանքով, որ մենք դադարենք փոթորիկներ փնտրել և ավելի լիարժեք վայելենք արևի լույսը: Ես առաջարկում եմ, որ մենք շեշտադրենք դրականը: Ես խնդրում եմ, որ մենք մի փոքր խորը փնտրենք բարին գտնելու համար, որ հանդարտեցնենք վիրավորանքի ու ծաղրի մեր ձայնը, որ մենք ավելի շռայլ լինենք արժանիքներն ու ջանքերը գովելիս:

Ես չեմ խնդրում, որ քննադատությունն ամբողջովին անձայն լինի։ Աճը գալիս է, երբ ուղղվում են սխալները։ Զորությունը գալիս է ապաշխարության հետ։ Իմաստուն է այն կինը կամ տղամարդը, ով փոխում է իր գործելակերպը, երբ նրա կատարած սխալները մատնացույց են արվում ուրիշների կողմից։ Ես չեմ առաջարկում, որ մեր խոսակցությունը լինի մեղրի նման քաղցր։ Խելացի արտահայտությունը, որն անկեղծ է ու ազնիվ, մի հմտություն է, որը պիտի փնտրել և զարգացնել։ Այն, ինչ ես առաջարկում ու խնդրում եմ, մենք պիտի երես դարձնենք բացասական տրամադրվածությունից, որն այնքան տարածված է մեր հասարակությունում և բարիք փնտրենք այն հողում և այն ժամանակում, որում մենք ապրում ենք, որ մենք ավելի շատ խոսենք միմյանց արժանիքների մասին, քան մենք խոսում ենք միմյանց թերությունների մասին, այնպես, որ լավատեսությունը փոխարինի հոռետեսությանը։ Թող մեր վախերը փոխարինվեն մեր հավատով։[8]

Մենք ունենք ցանկացած պատճառ այս աշխարհում լավատես լինելու համար։ Այո, մեր շրջապատում ողբերգություն կա։ Խնդիրներ կան ամենուր։ Բայց . . . դուք չեք կարող, դուք չպիտի կառուցված լինեք հոռետեսությունից և լկտիությունից։ Երբ դուք նայում եք լավատեսությամբ, աշխատում հավատով, լավ բաները տեղի են ունենում։[9]

Մի հուսահատվեք։ Անձնատուր մի եղեք։ Ամպերի մեջ արևի լույս փնտրեք։ Հնարավորությունները ի վերջո կբացվեն ձեզ համար։ Թույլ մի տվեք, որ խավարի գուշակը սպառնա ձեր հնարավորություններին։[10]

Զարգացրեք երջանկության զգացում։ Զարգացրեք լավատեսական ոգին։ Քայլեք հավատով, հրճվելով բնության գեղեցկություններով, ձեր սիրած մարդկանց բարությամբ, աստվածային բաների վկայությամբ, որը կրում եք ձեր սրտում։[11]

Տիրոջ ծրագիրը երջանկության ծրագիր է։ Ճանապարհն ավելի թեթև կլինի, մտահոգություններն ավելի քիչ կլինեն, դիմակայելն ավելի հեշտ կլինի, եթե մենք երջանկության ոգի զարգացնենք։[12]

2

Մեր խնդիրների վրա կենտրոնանալու փոխարեն մենք կարող ենք թույլ տալ, որ գոհությունը ուղղորդի և օրհնի մեզ:

Որքան հրաշալի ենք մենք օրհնված: Որքան շնորհակալ պիտի լինենք մենք: . . . Զարգացրեք շնորհակալության ոգին կյանքի օրհնության համար և այն սքանչելի պարգևների ու արտոնությունների համար, որ մեզանից յուրաքանչյուրը վայելում է: Տերն ասել է, որ հեզերը կժառանգեն երկիրը: (Տես Մատթեոսի 5.5:) Ես չեմ կարող խուսափել մեկնաբանությունից, որ հեզությունը ենթադրում է երախտագիտության ոգի՝ ի տարբերություն ինքնաբավ վերաբերմունքի, ճանաչում է ավելի մեծ ուժը, որը վեր է մարդու հնարավորություններից, ճանաչում է Աստծուն և ընդունում Նրա պատվիրանները: Սա իմաստության սկիզբն է: Երախտագիտությամբ քայլեք նրա առաջ, ով կյանք և ամեն բարի պարգևի տվողն է:[13]

Երկրի վրա ապրելու համար աշխարհի պատմության մեջ երբեք ավելի լավ ժամանակ չի եղել, քան սա է: Որքան երախտապարտ պիտի զգա մեզանից յուրաքանչյուրը՝ ապրելով այս հրաշալի ժամանակում բոլոր այս սքանչելի օրհնություններով, որ մենք ունենք:[14]

Երբ ես մտածում եմ այն հրաշքների մասին, որոնք իրականացել են իմ կյանքի ընթացքում և ավելի շատ են, քան մարդկության պատմության մնացած ողջ ընթացքում, ես ուրքի եմ կանգնում ակնածանքով և երախտագիտությամբ: Ես մտածում եմ ավտոմեքենայի և ինքնաթիռի, համակարգիչների, ֆաքսի սարքերի, է-փոստի և համացանցի մասին: Այս ամենն այնքան հրաշալի ու զարմանալի է: Ես մտածում եմ այն հսկայական քայլերի մասին, որոնք կատարվել են բժշկության և առողջապահության բնագավառում: . . . Եվ այս ամենի հետ միասին տեղի է ունեցել Հիսուս Քրիստոսի իսկական ավետարանի վերականգնումը: Ես և դուք մաս ենք կազմում այս մեծ նպատակի և արքայության հրաշքի, որն ընդգրկում է երկրագունդը, օրհնելով շատ մարդկային կյանքեր, ուր էլ որ հասնում է: Ես խորապես երախտապարտ եմ:[15]

Մենք ապրում ենք ժամանակների լրության մեջ: Նշեք այդ արտահայտությունը: Նշեք *լրություն* բառը: Այն մատնանշում է

այն ամբողջ բարին, որն ի մի է բերվել անցյալից և վերականգնվել երկրի վրա այս վերջին տնտեսությունում:

Իմ սիրտը լի է երախտագիտությամբ դեպի Ամենազոր Աստված: Նրա Որդու պարգևի շնորհիվ, ով այս աշխարհի Աստվածն է, մենք այնքան հրաշալիորեն օրհնված ենք: Իմ սիրտը ողողանջում է հիմնի բառերից. «Օրհնություններդ հաշվիր, թվիր մեկ առ մեկ: Տես, թե Աստվածը ինչ է տվել քեզ» (*Հիմներ,* հմր. 8):[16]

Երախտագիտությունը մեր սրտում եկեք կանգ չառնենք այն մի քանի խնդիրների վրա, որ մենք ունենք: Եկեք ավելի լավ է հաշվենք մեր օրհնությունները և երախտագիտության մեծ ոգով, թելադրված մեծ հավատով, առաջ գնանք՝ կառուցելու Աստծո արքայությունը երկրի վրա:[17]

Թող գոհաբանության ոգին ուղեցույց լինի և օրհնի ձեզ օր ու գիշեր: Աշխատեք այդ ուղղությամբ: Դուք կտեսնեք, որ այն հրաշալի արդյունք կտա:[18]

3

Հիսուս Քրիստոսի ավետարանը մեզ ուրախանալու առիթ է տալիս:

Տերն ասել է. «Ուստի, բարձրացրու սիրտդ և ցնծա, և հավատարիմ մնա այն ուխտերին, որոնք դու արել ես» [ՎԿՈՒ 25.13]: Ես հավատում եմ, որ նա ասում է մեզանից յուրաքանչյուրին՝ երջանիկ եղիր: Ավետարանը ուրախության ավետարան է: Այն առիթ է տրամադրում ուրախության համար:[19]

Հիշեք՝ ով եք դուք: . . . Դուք իրականում Աստծո զավակն եք: . . . Նա մեր Երկնային Հայրն է: Նա սիրում է ձեզ: . . . Նա ցանկանում է, որ Իր որդիներն ու դուստրերը երջանիկ լինեն: Մեղքը երբեք երջանկություն չի բերել: Հանցանքը երբեք երջանկություն չի բերել: Անհնազանդությունը երբեք երջանկություն չի բերել: Երջանկություն տանող ուղին գտնվում է Երկնային Հոր ծրագրում և Նրա Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի պատվիրաններին հնազանդվելու մեջ:[20]

Անկախ այն բանից, թե ինչպես էիք անում այդ անցյալում, ես ձեզ կոչ եմ անում . . . կարգավորել ձեր կյանքը ավետարանի ուսմունքների համաձայն, սիրով վերաբերվել այս Եկեղեցուն և հարգել ու գնահատել որպես ձեր հավատքի մայր, ապրել ձեր

«Շատ ուրախացեք և ծիծաղեք: Կյանքը պիտի վայելել, այլ ոչ պարզապես հանդուրժել»:

կյանքը որպես օրինակ այն բանի, թե Հիսուս Քրիստոսի ավետարանը ինչ կանի, որպեսզի երջանկություն բերի մարդկանց:[21]

Ապաշխարությունն ավետարանի առաջին սկզբունքներից է: Ներումը աստվածայնության նշան է: Կա հույս ձեզ համար: Ձեր կյանքն առջևում է, և այն կարող է լցվել երջանկությամբ, չնայած անցյալը աղավաղված է մեղքով: Սա իրենց խնդիրներից մարդկանց փրկելու և օգնելու աշխատանքն է: Սա է ավետարանի նպատակը:[22]

Ես հանդիպում եմ շատ մարդկանց, ովքեր մշտապես բողոքում են իրենց պարտականությունների բեռից: Իհարկե, ճնշումները մեծ են: Շատ գործ կա կատարելու: Գոյություն ունեն ֆինանսական խնդիրներ, որոնք ավելանում են այս ճնշումներին, և այս բոլորի հետ միասին մենք հակված ենք դժգոհելու՝ հաճախ տանը, երբեմն էլ հասարակավ: Շրջեք ձեր մտածելակերպը: Ավետարանը բարի լուր է: Մարդիկ ստեղծվել են, որպեսզի ունենան ուրախություն [տես 2 Նեփի 2.25]: Երջանիկ եղեք: Թող այդ երջանկությունը փայլի ձեր դեմքին և խոսի ձեր վկայությունների միջոցով: Դուք կարող եք խնդիրներ ակնկալել: Կարող են լինել

պատահական ողբերգություններ։ Բայց Աստծո խնդրանքն է փայլել՝ այս ամենի միջով անցնելիս.

«Ինձ մոտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կտամ ձեզ։

Ձեզ վերայ առէք իմ լուծը եւ ինձանից սովորեցէք. Որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ. Եւ ձեր անձերի համար հանգստութիւն կ'գտնէք։

Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը թեթև» (Մատթեոսի 11.28–30)։

Ես բավականություն եմ ստանում Ջեկինս Լոյդ Ջոնեսի հետևյալ խոսքերից, որոնք ես կտրել հանել եմ *«Դեզերեթ նյուսից»* մի քանի տարի առաջ։ Ես ձեզ եմ փոխանցում այդ խոսքերը։ . . . Նա ասել է.

«Ամեն ոք, ով կարծում է, որ երանության մշտական վիճակը նորմալ է, պատրաստվում է շատ ժամանակ վատնել, վազվզելով և բացականչելով, թե իրեն կողոպտել են։

Հարվածների մեծ մասը տեղ չեն հասնում։ Տավարի միսը պինդ է։ Երեխաների մեծ մասը մեծանում են պարզապես ժողովուրդ դառնալու համար։ Հաջող ամուսնությունների մեծ մասը պահանջում են բարձր աստիճանի փոխադարձ հանդուրժողականություն։ Աշխատանքների մեծ մասը հաճախ տաղտկալի է։ . . .

Կյանքը նման է հին ժամանակների երկաթուղային ուղևորությանը՝ ուշացումներ, շեղումներ, ծուխ, փոշի, մոխիր և ցնցումներ, որոնք ընդհատվում են միայն ժամանակ առ ժամանակ գեղեցիկ հեռապատկերով և արագության ցնցող պոռթկումներով։

Բանն այն է, որ շնորհակալություն պիտի հայտնեք Աստծուն, որ ձեզ թույլ է տալիս զբոսնել» (*Deseret News,* 12 June 1973)։

Ես կրկնում եմ, իմ եղբայրներ և քույրեր, բանն այն է, որ շնորհակալություն պիտի հայտնեք Աստծուն, որ ձեզ թույլ է տալիս զբոսնել և իրոք, մի՞թե դա հրաշալի զբոսանք չէ։ Վայելեք այն։ Ծիծաղեք դրա վրա։ Երգեք դրա մասին։ Հիշեք այն բառերը, որ գրել է Առակաց գրքի հեղինակը.

«Ուրախ սիրտը օգտակար է ինչպէս դեղ, բայց կոտրած սիրտը ոսկորները կչորացնէ»։ (Առակաց 17.22։)[23]

Թող ձեր կյանքում լինի հանդարտ տոնայնության նման ինչ-որ բան: Թող այնտեղ լինի ուրախություն և երջանկություն, հումորի զգացում և ուրախ բաների վրա երբեմն ծիծաղելու կարողություն:[24]

Շատ ուրախացեք և ծիծաղեք: Կյանքը պիտի վայելել, այլ ոչ պարզապես տոկալ:[25]

4

Ավետարանը հաղթանակի ուղերձ է, որը պիտի ընդունել խանդավառությամբ, ջերմությամբ և լավատեսությամբ:

Ես կանգնած եմ այստեղ՝ որպես Տիրոջ աշխատանքին լավատեսորեն վերաբերվող մարդ: Ես չեմ կարծում, որ Աստված հիմնել է իր աշխատանքը երկրի վրա, որ այն ձախողվի: Ես չեմ կարող հավատալ, որ այն թուլանում է: Ես գիտեմ, որ այն գնալով ուժեղանում է: . . . Ես ունեմ պարզ ու սուրբ հավատ, որ արդարությունը կհաղթի և ճշմարտությունը կգերակշռի:[26]

Քաղեբի, Հեսուի և Իսրայելի մյուս լրտեսողների պատմությունը միշտ էլ հետաքրքրել է ինձ: Մովսեսն առաջնորդեց Իսրայելի զավակներին Եգիպտոսից դեպի անապատ: Դեգերումների երկրորդ տարում նա ներկայացուցիչներ ընտրեց յուրաքանչյուր տասներկու ցեղից, որպեսզի ուսումնասիրեին Քանանի երկիրը և տեղեկություն բերեին դրա ռեսուրսների ու ժողովրդի մասին: Քաղեբը ներկայացնում էր Հուդայի ցեղը, իսկ Հեսուն՝ Եփրեմի: Այդ տասներկուսը գնացին Քանանի երկիրը: Նրանք տեսան, որ այն բարեբեր երկիր է: Նրանք այնտեղ մնացին քառասուն օր: Նրանք իրենց հետ բերեցին «խաղողի մի ողկույզ»՝ որպես մի վկայություն երկրի պտղաբերության վերաբերյալ (Թվոց 13.20):

Նրանք կանգնեցին Մովսեսի, Ահարոնի և հավաքված Իսրայելի զավակների առաջ և Քանանի երկրի մասին ասացին հետևալը. «Իրաւ որ կաթ ու մեղր է բղխում նա, և նորա պտուղը սա է» (հ. 27):

Բայց լրտեսողներից տասը իրենց սեփական կասկածների ու վախերի զոհն էին: Նրանք բացասական լուրեր բերեցին Քանանացիների թվի ու հասակի մասին: Նրանք եզրակացրին, որ «նորանք մեզանից զորաւոր են» (հ. 31): Նրանք իրենց մորեխներ համարեցին այդ երկրում տեսած հսկաների համեմատությամբ: Նրանք իրենց իսկ երկչոտության զոհերն էին:

Հետո Հեսուն ու Քաղեբը կանգնեցին ժողովրդի առաջ և ասացին. «Երկիրը, որի միջով մենք անցանք նորան լրտեսելու համար, շատ բարի երկիր է:

Եթե Եհովան մեզ վերայ հաճէ, նա մեզ այն երկիրը կտանէ և այն մեզ կտա, որ կաթ ու մեղր բղխող երկիր է:

Միայն թէ Եհովայի դէմ մի ապստամբիք, և այն երկրի ժողովրդիցը մի վախենաք, որովհետև նորանք մեր կերակուրն են, նորանց պաշտպանութիւնը գնացել է իրանց վերայից, ու Եհովան մեզ հետ է. նորանցից մի վախենաք» (14.7–9):

Բայց մարդիկ ավելի հակված էին հավատալ տասը կասկածողներին, քան հավատալ Քաղեբին ու Հեսուին:

Հետո Տերը հայտարարեց, որ Իսրայելի զավակները պիտի թափառեն անապատում քառասուն տարի, մինչև անհետանա այն սերունդը, որը քայլում էր կասկածով ու վախով: Սուրբ գրությունները գրանցում են, որ «այն մարդիկն, որ այն երկրի վերայ վատ լուր հանեցին, հարուածով մեռան Եհովայի առաջին:

Բայց Յեսուն . . . և Քաղէբը . . . , որ երկիրը լրտեսելու գնացող մարդկանցից էին, ողջ մնացին» (հավտած 37–38): Նրանք խմբի միակ մարդիկ էին, ովքեր վերապրել էին այն չորս տասնամյակների թափառումները և ովքեր արտոնություն ունեին մտնելու խոստացված երկիրը, որի վերաբերյալ նրանք դրական հայտարարություն էին արել:

Մեր շրջապատում տեսնում ենք այս գործի ապագայի նկատմամբ անտարբեր որոշ մարդկանց, ովքեր խոսում են սահմանափակումներից, ովքեր վախ են արտահայտում, ովքեր իրենց ժամանակը վատնում են պեղելով և գրելով այն մասին, թե, ըստ իրենց, որոնք են թուլությունները, որոնք իրոք հետևանք չունեն: Դրա անցյալի վերաբերյալ ունեցած կասկածով հանդերձ, նրանք չունեն որևէ տեսիլք դրա ապագայի վերաբերյալ:

«Առանց մարգարէության ժողովուրդը կվայրենանայ» (Առակաց. 29.18): Այս աշխատանքում տեղ չկա նրանց համար, ովքեր հավատում են միայն կործանումի ու խավարի ավետարանին: Ավետարանը բարի լուր է: Այն հաղթանակի ուղերձ է: Այն առիթ է խանդավառությամբ գրկախառնվելու համար:

Տերը չի ասել, որ փորձանքներ չեն լինելու։ Մեր ժողովուրդը տեսել է ամեն տեսակի նեղություններ, որոնք եկել են նրանց վրա, ովքեր ընդդիմացել են այս աշխատանքին։ Բայց հավատն ուղեկցել է նրանց այդ բոլոր դժբախտությունների ընթացքում։ Այս աշխատանքը մշտապես առաջ է շարժվում և երբևէ հետադարձ քայլ չի կատարել ի սկզբանե։ . . .

. . . Սա Ամենազորի աշխատանքն է։ Մեզանից է կախված, թե որպես անհատներ՝ մենք կգնանք առաջ, թե ոչ։ Բայց Եկեղեցու առաջընթացը երբեք չի ձախողվի։ . . .

Երբ Տերը Մովսեսին իր մոտ տարավ, հետո ասաց Հեսուին. «Զօրացիր և քաջ եղիր. մի վախենար և մի զարհուրիր. որովհետև քո Տէր Աստուածը քեզ հետ է ամէն տեղ, ուր որ գնաս» (Յեսուի 1.9)։ Սա Նրա աշխատանքն է։ Եկեք երբեք չմոռանանք։ Ընդունեք այն խանդավառությամբ և սիրով։[27]

5

Այն գիտելիքով, որ մենք Աստծո զավակներն ենք, մենք կարող ենք կանգնել մի փոքր ավելի բարձր, մի փոքր ավելի աճել և լինել մի փոքր ավելի լավը։

Ժամանակակից աշխարհում մարդիկ մի ցավալի միտում ունեն՝ վիրավորել մեկը մյուսին։ Երբևէ գիտակցե՞լ եք, որ շատ բան չի պահանջվում մտավոր կարողությունների սահմաններում դիտողություններ անել, որը կարող է վիրավորել մեկ ուրիշի։ Փորձեք հակառակն անել։ Փորձեք հաճոյախոսություններ շռայլել։ . . .

Մեր հասարակության մեջ կա մի տխուր միտում ևս. մեզանից շատերը սիրում են նսեմացնել իրենք իրենց։ Երբեմն ուրիշները կարող են մեզ ինքնավստահ թվալ, բայց փաստն այն է, որ մեզանից շատերն ունեն թերարժեքության զգացում։ Կարևոր է, որ ինքներս մեզ հետ չխոսենք այդ մասին։ . . . Կարևորն այն է, որ մենք ինքներս լավագույնս օգտագործենք մեր ունեցածը։

Ժամանակ մի վատնեք՝ խղճալով ինքներդ ձեզ։ Մի ստորացրեք ինքներդ ձեզ։ Երբեք մի մոռացեք, որ դուք Աստծո զավակն եք։ Դուք ի ծնե ունեք այդ աստվածային արտոնությունը։ Աստծո բնույթի այդ մի մասնիկը ձեր մեջ է։[28]

«Աստծո զավակն եմ» (*Հիմներ,* համար 58)։ Դա պարզապես հնարովի մի բան չէ կամ բանաստեղծական երևակայություն, այն ապրող ճշմարտություն է։ Մեզանից յուրաքանչյուրի մեջ կա աստվածային ինչ-որ բան, որը կարիք ունի զարգանալու, որը պիտի դուրս գա մակերես, որն արտահայտման կարիք ունի։ Դուք՝ հայրեր և մայրեր, սովորեցրեք ձեր երեխաներին, որ նրանք ինչ-որ չափով, թեկուզ մի փոքր, բայց Աստծո որդիներն ու դուստրերն են։ Ողջ աշխարհում չկա ավելի մեծ ճշմարտություն, քան այն գիտելիքը, որ մենք ինչ-որ աստվածային բան ենք կրում մեր մեջ։[29]

Հավատացեք ինքներդ ձեզ։ Հավատացեք, որ դուք ունեք մեծ ու բարի գործեր անելու կարողություն։ Հավատացեք, որ չկա որևէ բարձր լեռ, որ դուք չկարողանաք մագլցել։ Հավատացեք, որ չկա այնպիսի փոթորիկ, որին դուք չկարողանաք դիմանալ։ . . . Դուք Աստծո զավակն եք, ով ունի անսահման կարողություն։[30]

Կանգնեք մի փոքր ավելի բարձր, մի փոքր ավելի աճեք և եղեք մի փոքր ավելի լավը։ Էրացուցիչ ջանքեր ներդրեք։ Դուք ավելի երջանիկ կլինեք։ Դուք ավելի մեծ բավականություն կստանաք, մի նոր ուրախություն կունենաք ձեր սրտում։[31]

Իհարկե, ճանապարհին կլինեն որոշ խնդիրներ։ Կծագեն դժվարություններ, որոնք պիտի հաղթահարեք։ Բայց դրանք հավերժ չեն տևելու։ [Աստված] չի լքի ձեզ։ . . .

Դրական տրամադրվեք։ Իմացեք, որ Նա հսկում է ձեզ, որ Նա լսում է ձեր աղոթքները և կպատասխանի դրանց, որ Նա սիրում է ձեզ և կդրսևորի այդ սերը։[32]

Այնքան շատ քաղցր, պատշաճ և գեղեցիկ բաներ կան, որոնց վրա կարելի է կառուցել։ Մենք Հիսուս Քրիստոսի ավետարանի մասնակիցներն ենք։ Ավետարան բառը նշանակում է «բարի լուր»։ Տիրոջ ուղերձը հույս ու փրկություն է։ Տիրոջ ձայնը ուրախ լուրերի ձայն է։ Տիրոջ աշխատանքը փառավոր նվաճումների աշխատանք է։

Խավարի ու փորձանքի ժամին Տերն ասաց իր սիրելիներին. «Ձեր սիրտը չխռովի եւ չվախենայ»։ (Հովհաննեսի 14.27։)

Վստահության այս հրաշալի բառերը փարոս են յուրաքանչյուրիս համար։ Նրան մենք իրոք կարող ենք վստահել։ Քանի որ նա երբեք չի թերանում իր խոստումները կատարելիս։[33]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Մտածեք Նախագահ Հինքլիի հետևյալ խորհուրդների մասին՝ նայել «ավելի խորը» բարին գտնելու համար և «զարգացնել երջանկության զգացում [և] լավատեսական ոգի» (բաժին 1)։ Ինչո՞ւ մենք այսօր ունենք այս խորհրդի կարիքը։ Ինչպե՞ս կարող ենք զարգացնել երջանկության զգացում։
- Նախագահ Հինքլին ասել է, որ «հրաշալի արդյունքները» գալիս են, երբ մենք «թույլ ենք տալիս, որ երախտագիտության ոգին ուղղորդի [մեզ]» (բաժին 2)։ Ձեր կարծիքով, ինչո՞ւ են գալիս այս «հրաշալի արդյունքները»։ Ինչպե՞ս եք դուք օրհնվում, երբ երախտագիտության ոգին ձեզ հետ է լինում։
- Որո՞նք են ձեր խոհերն այն համանմանության մասին, որ կյանքը նման է «հին ժամանակների երկաթուղային ուղևորության»։ (Տես բաժին 3։) Ավետարանի «բարի լուրը» ինչպե՞ս է ազդում այն մոտեցմանը, որը դուք ունեք այդ ուղևորության հանդեպ։
- Ըստ ձեզ Քաղեբի ու Հեսուի պատմությունն ինչպե՞ս է կիրառվում մեր կյանքում։ (Տես բաժին 4։) Ի՞նչ օրինակներ եք տեսել, երբ մարդիկ ընդունում են ավետարանը խանդավառությամբ։ Երբ մենք հուսալքված ենք, կարո՞ղ ենք վերականգնել լավատեսությունը։ Ինչպիսի՞ փորձառություններ ունեցաք, որոնք մեծացրին ձեր հավատը Տիրոջ աշխատանքի վերաբերյալ։
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ գոյություն ունի մեզ և ուրիշներին նվաստացնելու միտումը։ Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել այս հակումը։ Որպես անհատներ և ընտանիքներ, մենք ի՞նչ կարող ենք անել, որպեսզի օգնենք ուրիշներին «կանգնել մի փոքր բարձր» և «բարձրանալ մի փոքր ավելի վեր»։ (Տես բաժին 5։)

Առնչվող սուրբ գրություններ

Հովհաննես 16.33, Փիլիպպեցիս 4.13, Մոսիա 2.41, Ալմա 34.38, Եթեր 12.4, ՎևՈւ 19.38–39, 128.19–23

Օգնություն ուսումնասիրողին

«Գործելով ըստ ձեր սովորածի, դուք ձեռք կբերեք մշտապես խորացող հասկացողություն (տես Հովհաննես 7.17)» (*Քարոզիր*

Իմ Ավետարանը [2004], 19): Հարցրեք ինքներդ ձեզ, թե ինչպես կարող եք կիրառել ավետարանի ուսմունքները տանը, աշխատանքում և Եկեղեցու ձեր պարտականություններում:

Հղումներ

1. Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 37.
2. Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 37:
3. "The Continuing Pursuit of Truth," *Ensign,* Apr. 1986, 4.
4. See Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 76.
5. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1: 1995–1999* (2005), 343.
6. Russell M. Nelson, "Spiritual Capacity," *Ensign,* Nov. 1997, 15.
7. Jeffrey R. Holland, "President Gordon B. Hinckley: Stalwart and Brave He Stands," *Ensign,* June 1995, 4.
8. "The Lord Is at the Helm" (Brigham Young University devotional, Mar. 6, 1994), 3–4, speeches.byu.edu.
9. Quoted in Jeffrey R. Holland, "President Gordon B. Hinckley: Stalwart and Brave He Stands," 4.
10. "The Continuing Pursuit of Truth," 4.
11. "If Thou Art Faithful," *Ensign,* Nov. 1984, 92.
12. "Each a Better Person," *Ensign,* Nov. 2002, 100.
13. "With All Thy Getting Get Understanding," *Ensign,* Aug. 1988, 3–4.
14. "The Spirit of Optimism," *New Era,* July 2001, 4.
15. "Keep the Chain Unbroken" (Brigham Young University devotional, Nov. 30, 1999), 1–2, speeches.byu.edu.
16. "My Redeemer Lives," *Ensign,* Feb. 2001, 70.
17. "The Lord Is at the Helm," 6.
18. "A Prophet's Counsel and Prayer for Youth," *Ensign,* Jan. 2001, 4.
19. "If Thou Art Faithful," 91–92.
20. "Stand True and Faithful," *Ensign,* May 1996, 93–94.
21. "True to the Faith," *Ensign,* June 1996, 4.
22. "Stand True and Faithful," 94.
23. "Four Imperatives for Religious Educators" (address to religious educators, Sept. 15, 1978), 4.
24. "Four Imperatives for Religious Educators" (address to religious educators, Sept. 15, 1978), 4.
25. "Stand True and Faithful," 94.
26. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 410.
27. "Stay the Course—Keep the Faith," *Ensign,* Nov. 1995, 71–72.
28. "Strengthening Each Other," *Ensign,* Feb. 1985, 3–4.
29. *One Bright Shining Hope: Messages for Women from Gordon B. Hinckley* (2006), 90–91.
30. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 452
31. "The Quest for Excellence" (Brigham Young University devotional, Nov. 10, 1998), 5, speeches.byu.edu.
32. "How Can I Become the Woman of Whom I Dream?" *Ensign,* May 2001, 96:
33. "The Continuing Pursuit of Truth," 6.

Ռահվիրաների հավատքի և զոհաբերության ժառանգությունը

«Արդյոք դուք ունեք ռահվիրա նախահայրեր, թե եկել եք Եկեղեցի միայն երեկ, դուք այս ողջ սքանչելի պատկերի մասն եք կազմում, որի մասին երազել են այդ տղամարդիկ և կանայք: . . . Նրանք դրեցին հիմքը: Մեր պարտականությունն է կառուցել դրա վրա»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Քլամբոս Օհայո Տաճարի նվիրագործման ժամանակ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին անդրադարձավ իր ռահվիրա նախնիներին: Նա հետագայում վերհիշում է.

Երբ ես նստած էի սելեստիալ սենյակում, ես մտածեցի պապիկիս հոր մասին: . . . Ես վերջերս էի այցելել նրա գերեզմանին Կանադայում՝ հենց Նյու Յորքի հյուսիսային սահմանագծի մոտ: Նա մահացել էր 38 տարեկանում:

Երբ Նախագահ Հինքլիի նախապապը մահացավ, նրա որդի Իրան, ով դառնալու էր Նախագահ Հինքլիի պապը, դեռ երեք տարեկան չկար: Իրայի մայրը շուտով կրկին ամուսնացավ և մի քանի տարի հետո տեղափոխվեց Օհայո, այն ժամանակ Իլլինոյս: Նա մահացավ 1842 թվականին, որբ թողնելով Իրային 13 տարեկանում: Շարունակելով այս պատմությունը, Նախագահ Հինքլին ասել է.

«Իմ պապիկը [Իրա Հինքլին] մկրտվեց Նավուում և . . . հետագայում կտրեց անցավ տափաստանները [ռահվիրաների] գաղթի ժամանակ: 1850 թվի այդ ճանապարհորդության ժամանակ Իրայի «երիտասարդ կինը և նրա [խորթ եղբայրը] մահացան



«Ուժը, որն առաջ էր մղում մեր ավերտարանի նախնիներին դեպի Աստված՝ հայրենիքի ուժն էր։»

նույն օրը: Նա սարքեց անտաշ փայտից դագաղներ և թաղեց նրանց, ապա վերցրեց իր փոքր երեխային և տարավ նրան [Սոլթ Լեյքի] հովիտ:

Բրիգամ Յանգի խնդրանքով նա կառուցեց Քով Ֆորտը, դարձավ Ֆիլմորի [Յուտա] առաջին ցցի նախագահը և բազում այլ գործեր արեց այս աշխատանքն առաջ տանելու համար:

Հետո գալիս է հայրս: . . . Նա դարձավ ավելի քան 15000 անդամությամբ Եկեղեցու ամենամեծ ծխի նախագահը:

Նախագահ Հինքլիի խոհերը շուտով իր նախնիներից դարձան դեպի իր սերունդը: Նա շարունակել է.

«Երբ նստած էի տաճարում, անդրադառնալով այս երեք մարդկանց կյանքին, մտածեցի իմ դստեր, իմ թոռնուհու և նրա երեխաների՝ իմ ծոռների մասին: Ես հանկարծ հասկացա, որ ես կանգնած էի այս յոթ սերունդների հենց մեջտեղում՝ երեք սերունդ՝ ինձանից առաջ և երեք սերունդ՝ ինձանից հետո:

Այդ սրբազան և նվիրագործված տանը վիթխարի պատասխանատվության մի զգացում պատեց ինձ, որ ես պիտի փոխանցեի այն ամենը, ինչ ստացել էի որպես ժառանգություն իմ նախնիներից այն սերունդներին, ովքեր արդեն եկել էին ինձանից հետո»:[1]

Բացի երախտագիտություն հայտնելուց իր ռահվիրա նախնիների և Վերջին Օրերի Սուրբ ռահվիրաների ժառանգության համար, Նախագահ Հինքլին հաճախ շեշտում էր, որ Եկեղեցու անդամները ողջ աշխարհում ռահվիրաներ են այսօր: 1997 թվականին նա ասաց Գվատեմալայի Սրբերին. «Այս տարի մենք նշում ենք Մորմոն ռահվիրաների Սոլթ Լեյքի հովիտ ժամանելու 150-ամյակը: Նրանք երկար ճանապարհ անցան կառքերով և ձեռնասայլերով: Նրանք ռահվիրաներ էին: Բայց ռահվիրա լինելը անընդհատ շարունակվում է առաջ ընթանալ: Ամբողջ աշխարհում մենք ունենք ռահվիրաներ և դուք այդ ռահվիրաների շարքում եք»:[2] Թաիլանդի Սրբերին նա հայտարարեց. «Դուք ռահվիրաներ եք՝ առաջ տանելով Տիրոջ աշխատանքը այս հիանալի ազգի մեջ»:[3] Երբ այցելեց Ուկրաինա 2002 թվականին, նա նույնանման խոսքեր արտահայտեց. «Եկեղեցին ունեցել է իր ռահվիրաները վաղ օրերում, իսկ դուք ռահվիրաներ եք այս ժամանակաշրջանում»:[4]

Երբ Նախագահ Հինքին խոսեց, նա ավելի շատ կենտրոնացավ ներկայիս ռահվիրաների վրա, քան վաղ շրջանի ռահվիրաների վրա։ Նա նայեց դեպի ապագան, հուսալով, որ այդ Սրբերի հավատքը և զոհաբերությունները «կդառնային պարտադրող դրդապատճառ մեզանից յուրաքանչյուրի համար, քանի որ մեզանից յուրաքանչյուրը հաճախ ռահվիրա է իր իսկ ընտանիքում»։[5]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Աստծո զորության հանդեպ հեռանկարով, աշխատանքով և վստահությամբ Վերջին Օրերի Սուրբ վաղ շրջանի ռահվիրաները իրենց հավատքը դարձրին իրականություն։

Հավատքի միջոցով էր, որ վաղ նորադարձների մի փոքրիկ խումբ [Միացյալ Նահանգների արևելյան մասից] տեղափոխվեց Նյու Յորքից Օհայո, Օհայոյից Միսսուրի և Միսսուրիից դեպի Իլլինոյս՝ որոնելով խաղաղություն և ազատություն՝ երկրպագելու Աստծուն համաձայն իրենց խղճի թելադրանքի։

Հավատքի աչքով էր, որ նրանք տեսան մի գեղեցիկ քաղաք [Նավուն], երբ առաջին անգամ նրանք քայլելով անցան Իլլինոյսի Քոմմերսի ճահիճները։ Համոզմունքով, որ հավատքն առանց գործերի մեռած է, նրանք չորացրին այդ ճահճահողը, նախագծեցին քաղաք, հիմնավոր տներ կառուցեցին երկրպագության ու կրթության համար և պսակադրեցին այդ ամենը մի հիասքանչ տաճարով, որն այդ ժամանակ ամենահիանալի շենքն էր ողջ Իլլինոյսում։

. . .[Շուտով հետևեց] հալածանքը պիղծ և արյունարբու ավազակների կողմից։ Նրանց մարգարեն սպանված էր։ Նրանց երազանքները կործանված էին։ Կրկին հավատքով նրանք միավորվեցին այն օրինակի համաձայն, որ նա նախօրոք գծել էր և կազմակերպել ևս մեկ ելիցի համար։

Արցունքներով և մղկտացող սրտերով նրանք թողեցին իրենց հարմարավետ տները և արհեստանոցները։ Նրանք ետ նայեցին իրենց սրբազան տաճարին, իսկ հետո հավատքով իրենց աչքերը հառեցին դեպի Արևմուտք, դեպի անհայտը և

քարտեզի վրա չնշված մի վայր, և մինչ ձմռան ձյունները տեղում էին նրանց վրա, նրանք անցան Միսիսիպի [գետը] 1846 թվականի փետրվարին և իրենց ցեխոտ ճանապարհը հարթեցին Այովայի տափաստաններով:

Հավատքով նրանք հիմնադրեցին Ուինթեր Քվորթերսը Միսսուրի գետի վրա: Հարյուրավոր մարդիկ մահացան, երբ համաճարակ սկսվեց, դիզինտերիան և սև ժանտախտը հնձեց նրանց: Բայց հավատքը պահպանեց նրանց, ովքեր դիմացան: Նրանք թաղեցին իրենց սիրելիներին գետի վերևում գտնվող բարձունքում և 1847թվականի գարնանը ճանապարհ ընկան . . . դեպի արևմուտքում գտնվող լեռները:

Հավատքով էր, որ Բրիգամ Յանգը նայեց [Սոլթ Լեյքի] հովտին, որտեղ այն ժամանակ շոգ էր, հողն անբերրի և հայտարարեց. «Սա է տեղը»: Չորս օր անց կրկին հավատքով , նա իր ձեռնափայտով հպվեց գետնին . . . և ասաց. «Այստեղ կլինի մեր Աստծո տաճարը»: Սքանչելի և սրբազան [Սոլթ Լեյքի Տաճարը] վկայությունն է հավատքի ոչ միայն նրանց, ովքեր կառուցել են այն, այլև նրանց, ովքեր այժմ օգտագործում են այն՝ սիրո մեծ անձնազոհ աշխատանքի համար:

Պողոսը գրել է եբրայեցիներին .«Հավատքն էլ յուսացած բաների հաստատութիւնը՝ եւ չերեւացող բաների ապացոյցն է:» (Եբր. 11.1:) Բոլոր մեծ նվաճումները, որոնց մասին ես խոսել եմ մի ժամանակ, ընդամենը «հավատքն էլ յուսացած բաների հաստատութիւնը՝ եւ չերեւացող բաների ապացոյցն է»: Բայց Աստծո զորության հանդեպ հեռանկարով, աշխատանքով և վստահությամբ գործելով, Վերջին Օրերի Սուրբ վաղ ռահվիրաները իրենց հավատքը դարձրին իրականություն:[6]

Ուժը, որն առաջ էր մղում մեր ավետարանի նախնիներին առ Աստված, հավատքի ուժն էր: Այդ նույն ուժն էր, որը հնարավոր դարձրեց ելիցը Եգիպտոսից, անցումը Կարմիր ծովի միջով, երկար ճանապարհորդությունը անապատի միջով և Իսրայելի հաստատումը Խոստացված Երկրում: . . .

Մենք կենդանի Աստծո և Նրա կենդանի, հարություն առած Որդու հանդեպ այնքան շատ, այնքան սաստիկ բոցկլտացող այդ հավատքի կարիքն ունենք, քանզի սա էր մեծ, մեր ավետարանի նախահայրերի առաջ մղող հավատքը:

Նրանցն էր անսահման և բոլոր մյուս նկատառումները գերակշռողկանխատեսությունը: Երբ նրանք եկան արևմուտք, նրանք հազարավոր հոգնեցուցիչ մղոններ [1600 կիլոմետր] հեռու էին դեպի արևելք գտնվող ամենամոտիկ բնակավայրերից և ութ հարյուր մղոն [1300 կիլոմետր] դեպի արևմուտք գտնվողներից: Աստծուն՝ իրենց Հավերժական Հորը, ում նրանք կարող էին նայել հավատքով, անհատապես և անձնապես ճանաչելու վրա էր նրանց ուժի բուն էությունը: Նրանք հավատում էին սուրբ գրքյան այդ մեծ մանդատին. «Նայիր առ Աստված և ապրիր»: (Ալմա 37.47:) Հավատքով նրանք ձգտում էին կատարել Նրա կամքը: Հավատքով նրանք կարդում էին և ընդունում աստվածային ուսուցում: Հավատքով էին նրանք տքնում, մինչև որ ընկնում էին, միշտ այն համոզմունքով, որ Նրան, ով իրենց Հայրն էր և Իրենց Աստվածը, հաշիվ պետք է տային:[7]

Մեր ետևում է մի փառահեղ պատմություն: Այն գեղազարդված է հերոսականությամբ, սկզբունքի հանդեպ հաստատակամությամբ և չթուլացող նվիրվածությամբ: Դա հավատքի արդյունքն էր: Մեր առջևում է մեծ ապագան: Այն այսօր է սկսվում: Մենք չենք կարող կանգ առնել: Մենք չենք կարող դանդաղել: Մենք չենք կարող թուլացնել մեր քայլվածքը կամ կարճացնել մեր քայլերը:[8]

2

Վաղեմի Վերջին Օրերի ռահվիրաները նայում էին դեպի ապագան Սիոնի մասին մեծ երազանքով:

Պատշաճ է, որ մենք կանգ առնենք հարգանքի ակնածալից տուրք մատուցելու նրանց, ովքեր դրեցին այս վիթխարի աշխատանքի հիմքը: . . . Նրանց կարևոր նպատակն էր Սիոնը [տես ՎևՈ 97.21, Մովսես 7.18]: Նրանք երգում էին այդ մասին: Նրանք երազում էին այդ մասին: Դա էր նրանց մեծ հույսը: Նրանց պատմական ճանապարհորդությունը պետք է հավերժ կանգուն մնա որպես անզուգական ձեռնարկում: Տասնյակ հազարավորների շարժումը դեպի արևմուտք ուղեկցվում էր բոլոր հնարավոր խոչընդոտներով, ներառյալ՝ մահը, որի մռայլ իրականությանը ծանոթ էին կառքերի ամեն քարավանում և ձեռնասայլերի ամեն ընկերությունում:

Ես ակնածալից հարգանքով եմ լցված Բրիգամ Յանգի հանդեպ: Նա տեսավ Սոլթ Լեյքի հովիտը տեսիլքով, նախքան իր սեփական աչքերով այն կտեսներ: Այլապես ես կասկածում եմ, որ նա երբևէ կկանգներ այստեղ: Կալիֆորնիայում և Օրեգանում ավելի կանաչ տարածքներ կային: Այլ տեղերում կային ավելի խորը և ավելի հարուստ հողեր: Այլ վայրերում կային անտառանյութի հսկայական տարածքներ , ավելի շատ և ավելի կայուն ու հաճելի կլիմայական պայմաններ:

Ճիշտ է, այստեղ կային լեռնային վտակներ, բայց դրանցից ոչ մեկը շատ մեծ չէր: Հողը բացարձակապես մշակված չէր: Ոչ մի գութան երբևէ չէր վարել դրա արևախանձ մակերեսը: Ես ուղղակի զարմանում եմ, որ Նախագահ Յանգը կառաջնորդեր մի մեծ խումբ . . . մի տեղ, որտեղ երբեք նախկինում չէր եղել սերմնացան և բերքահավաք: . . .

Այդ ռահվիրաները ճանապարհորդությունից հոգեմաշ էին: Այն տևել էր 111 օր՝ նրանց Ուինթեր Քվորթերսից Սոլթ Լեյքի հովիտ բերելու համար: Նրանք հոգնած էին: Նրանց հագուստները մաշված էին: Նրանց անասունները՝ ուժասպառ եղած: Հուլիսյան շոգ և չոր եղանակ էր: Բայց ահա նրանք այստեղ էին՝ տարիների հեռվից նայելով և երազելով մի հազարամյա երազ՝ մի մեծ երազանք Սիոնի մասին:[9]

Օրերս ես կանգնած էի Անգլիայում՝ Լիվերպուլի հին նավահանգստում: Ուրբաթ առավոտյան, երբ մենք այնտեղ էինք, փաստորեն ոչ մի իրարանցում չկար: Բայց կար ժամանակ՝ դա մի իսկական փեթակ էր: 1800-ականներին մեր մարդկանցից տասնյակ հազարավորներ քայլել են նույն սալահատակով, որի վրայով մենք քայլեցինք: Նրանք եկան Բրիտանական կղզիներից և Եվրոպայի երկրներից, ովքեր նորադարձներ էին Եկեղեցում: Նրանք եկան վկայությունն իրենց շուրթերին և հավատքն իրենց սրտերում: Արդյոք դժվա՞ր էր նրանց համար թողնել իրենց տները և քայլ կատարել դեպի մի նոր աշխարհի անհայտությունը: Իհարկե, դժվար էր: Սակայն նրանք արեցին դա լավատեսությամբ և խանդավառությամբ: Նրանք նավեր նստեցին: Նրանք գիտեին, որ անցումը, լավագույն դեպքում, վտանգավոր էր: Նրանք շուտով պարզեցին, որ մեծամասամբ այն ողորմելի էր: Նրանք ապրում էին նեղվածքի մեջ շաբաթ շաբաթի ետևից: Նրանք դիմացան փոթորիկներին, հիվանդություններին,

սրտխառնոցին: Շատերը մահացան ճանապարհին և թաղվեցին ծովում: Դա լարված և զարհուրելի ճանապարհորդություն էր: Այո, նրանք կասկածներ ունեին: Բայց նրանց հավատքը բարձրացավ այդ կասկածներից վեր: Նրանց լավատեսությունը բարձրացավ նրանց երկյուղներից վեր: Նրանք ունեին Սիոնի մասին իրենց երազանքը, և նրանք գտնվում էին այն իրականացնելու ճանապարհին:[10]

3

«Ուիլլի և Մարտին ընկերության» ձեռնասայլերով ռահվիրաների փրկությունը խոսում է Հիսուս Քրիստոսի ավետարանի բուն էության մասին:

Ես ետ եմ տանում ձեզ դեպի . . .1856 թվականի հոկտեմբերը: Շաբաթ օրը [հոկտեմբերի 4-ին] Ֆրանկլին Դ. Ռիչարդսը և մի քանի ընկերակիցներ ժամանեցին [Սոլթ Լեյքի] հովիտ: Նրանք ճանապարհորդել էին Ուինթեր Քվուորթերսից ուժեղ խմբերով և թեթև կառքերով և կարողացել էին ճիշտժամանակին հասնել: Եղբայր Ռիչարդսն անմիջապես փնտրեց և գտավ Նախագահ Յանգին: Նա հաղորդեց, որ հարյուրավոր տղամարդիկ, կանայք և երեխաներ ցրված էին այդ երկար ճանապարհի երկայնքով . . . դեպի [Սոլթ Լեյքի] հովիտ: Նրանցից մեծ մասը ձեռնասայլեր էին հրում: . . . Նրանց առջևում ընկած էր մի ճանապարհ, որը բարձրանում էր բլուրն ի վեր, դեպի մայրցամաքային ջրաբաժանը, շատ-շատ մղոններ էլ՝ դրանից այն կողմ: Նրանք հուսահատ վիճակում էին: . . . Նրանք բոլորը կոչնչանային, եթե նրանց փրկելու չգնային:

Կարծում եմ, Նախագահ Յանգը չքնեց այդ գիշերը: Կարծում եմ, այդ թշվառ. . . մարդկանց տեսապատկերը անընդհատ անցնում էր նրա մտքով:

Հաջորդ առավոտ նա . . . ասաց մարդկանց.

«Ես այժմ այս ժողովրդին կտամ թեման և տեքստը Երեցների համար, ովքեր կարող են խոսել: . . . Ահա այն: . . .Մեր եղբայրներից և քույրերից շատերը ձեռնասայլակներով գտնվում են տափաստաններում և հավանաբար, շատերն այժմ գտնվում են 700 մղոն [շուրջ 1100 կիլոմետր] հեռու այստեղից և նրանց պետք է բերել այստեղ, մենք պետք է օգնություն ուղարկենք նրանց: Տեքստն է. «նրանց այստեղ հասցնել»:

«Երբ փրկարարները հասան պաշարված Սրբերին, նրանք նման էին երկնքից իջած հրեշտակների:

Սա է իմ կրոնը, սա է ինձ հետ գտնվող Սուրբ Հոգու թելադրանքը, որ ես ունեմ: Պետք է փրկել մարդկանց:

Այսօր ես կոչ եմ անում եպիսկոպոսներին: Ես չեմ սպասի մինչև վաղը, ոչ էլ մյուս օրը, պետք են 60 լավ ջորիներ և 12 կամ 15 կառքեր: Ես չեմ ուզում ուղարկել եզներ: Ես ուզում եմ լավ ձիեր և ջորիներ: Նրանք այս տարածքում են, և մենք պետք է ունենանք դրանք: Նաև 12 տոննա ալյուր և 40 լավ կառապաններ, բացի նրանցից, ովքեր կառավարում են թիմերը:

Ես ասում եմ ձեզ, որ ձեր ողջ հավատքը, կրոնը և կրոնի գործադրումը, ձեր հոգիներից և ոչ մեկը չեն փրկվի մեր Աստծո սելեստիալ արքայության մեջ, եթե դուք չկիրառեք այդ նույն սկզբունքները, որոնք այժմ ես ուսուցանում եմ ձեզ: *Այժմ գնացեք և բերեք այն մարդկանց ովքեր տապիաստաններում են»* (in LeRoy R. Hafen and Ann W. Hafen, *Handcarts to Zion* [1960], 120–21):

Այդ օրը կեսօրին մեծ քանակությամբ սպիտակեղեն և հագուստ հավաքվեց կանանց կողմից։

Հաջորդ առավոտ ձիերը պայտվեցին և կառքերը վերանորոգվեցին ու բարձվեցին։

Հաջորդ առավոտ, երեքշաբթի օրը, 16 լծված ջորիներ դուրս եկան և ուղղվեցին դեպի արևելք։ Հոկտեմբերի վերջին օգնություն հասցնող 250 անձնակազմեր կային ճանապարհին։[11]

Երբ փրկարարները հասան պաշարված Սրբերին, նրանք նման էին երկնքից իջած հրեշտակների։ Ժողովուրդն արտասվում էր երախտագիտության արցունքներ թափելով։ Ձեռնասայլակներով մարդիկ տեղափոխվեցին կառքեր, որպեսզի ավելի արագ ճանապարհորդեին Սոլթ Լեյքի համայնք։

Մոտ երկու հարյուր մարդ մահացան, բայց հազար հոգի փրկվեցին։[12]

[Այդ] պաշարված Սրբերի և նրանց տառապանքների և մահվան մասին պատմությունները նորից կկրկնվեն։ . . . Նրանց փրկության մասին պատմությունները պետք է կրկնվեն նորից ու նորից։ Դրանք խոսում են Հիսուս Քրիստոսի ավետարանի բուն էության մասին։

. . . Ես շնորհակալ եմ, որ մենք չունենք ձյան ծանծաղուտի մեջ խրված ցրտահարված և մահացող եղբայրներ և քույրեր, ովքեր փորձում էին հասնել . . . իրենց Սիոնին լեռներում։ Բայց կան մարդիկ, ոչ քիչ, ում հանգամանքները հուսահատեցնող են, և ովքեր աղաղակում են օգնության և մխիթարության համար։

Այնքան շատ մարդիկ կան ովքեր սոված են և չքավոր այս աշխարհում, ովքեր օգնության կարիք ունեն։ Ես երախտապարտ եմ, որ կարող եմ ասել, որ մենք շատերին ենք օգնում, ովքեր մեր հավատքից չեն, բայց ում կարիքները լուրջ են, և ում մենք ունենք ռեսուրսներ օգնելու։ Բայց պետք չէ, որ գնանք այդքան հեռու։ «Մեզանից ոմանք աղաղակում են ցավից ու տառապանքից, մենակությունից ու վախից։ Մեր մեծ ու սուրբ պարտականությունն է հասնել ու օգնել, բարձրացնել նրանց, կերակրել նրանց, եթե քաղցած են, սնուցել նրանց հոգիները, եթե նրանք ծարավ են ճշմարտության և արդարության։

Կան այնքան շատ երիտասարդներ, ովքեր թափառում են աննպատակ և քայլում թմրադեղերի, բանդաների, անբարոյականության ու արատների ողբերգական արահետում և ամեն տեսակի հիվանդություններով, որոնք ուղեկցում են այս բաներին: Կան այրիներ, ովքեր կարոտ են ընկերական ձայների և անհանգիստ մտահոգված հոգու ձայնին, որը խոսում է սիրո մասին: . . . Կան մարդիկ, ովքեր մի ժամանակ ջերմ հավատք ունեին, բայց նրանց հավատը սառել է: Նրանցից շատերը ցանկանում են վերադառնալ, բայց չգիտեն, թե ինչպես անել այդ: Նրանք սիրալիր ձեռքերի կարիք ունեն, որոնք օգնության կհասնեն իրենց: Քիչ ջանքերի շնորհիվ նրանցից շատերը կարող են կրկին ետ բերվել Տիրոջ սեղանի մոտ խնջույքի:

Իմ եղբայրներ և քույրեր, ես հույս եմ տածում, աղոթում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը . . . կորոշի փնտրել նրանց, ովքեր օգնության կարիք ունեն, ովքեր հուսահատության և դժվար իրավիճակում են և սիրո ոգով կբերի նրանց Եկեղեցու ջերմ միջավայր, որտեղ ամուր ձեռքներն ու սիրող սրտերը կջերմացնեն, կսփոփեն, կաջակցեն նրանց և կդնեն դեպի երջանիկ ու բեղմնավոր կյանք տանող ուղու վրա:[13]

4

Մեզանից յուրաքանչյուրը ռահվիրա է:

Լավ է նայել դեպի անցյալը՝ ձեռք բերելու գնահատանք ներկայի համար և հեռանկար՝ ապագայի համար: Լավ է նայել նրանց առաքինություններին, ովքեր գնացել են նախկինում, ձեռք բերելու ուժ նրա համար, ինչ սպասվում է առջևում: Լավ է մտածել նրանց աշխատանքի մասին, ովքեր այնքան տքնաջան են աշխատել և ձեռք բերել այնքան քիչ այս աշխարհում, բայց որոնց երազանքներից և վաղ ծրագրերից, այնքան լավ դաստիարակված, առաջացել է մեծ բերքահավաք, որի շահառուներն ենք մենք: Նրանց վիթխարի օրինակը կարող է դառնալ համոզիչ դրդապատճառ մեզ բոլորիս համար, քանի որ մեզանից յուրաքանչյուրը ռահվիրա է իր իսկ կյանքում և մեզանից շատերը ռահվիրա են ամեն օր՝ փորձելով հաստատել ավետարանական մի հենակետ աշխարհի հեռավոր մասերում:[14]

Մենք դեռ ռահվիրաներ ենք: Մենք երբեք չենք դադարել ռահվիրա լինելուց այն ժամանակից ի վեր, . . . երբ մեր մարդիկ

«Անկախ նրանից դուք ռահվիրա նախահայրեր եք ունեցել, թե եկել եք Եկեղեցի միայն երեկ, դուք այս ողջ աքանչելի պատկերի մասն եք կազմում»:

թողեցին Նավուն և եկան . . . ի վերջո Մեծ Սոլթ Լեյքի հովիտը: Դրանում արկած կար: Բայց դրա նպատակն էր գտնել մի տեղ, որտեղ նրանք կկարողանային հիմնվել և երկրպագել Աստծուն համաձայն խղճի թելադրանքի: . . .

Այժմ, մենք դեռ օգնության ենք հասնում ողջ աշխարհում այն վայրերին, որոնք [մի ժամանակ], հազիվ թե հնարավոր լիներ մատչելի համարել: . . . Ես անձնապես ականատես եմ եղել Եկեղեցու աճին Ֆիլիպիններում: Ես արտոնությունն եմ ունեցել միսիոներական աշխատանք բացել այնտեղ 1961թվականին, երբ կարողացանք գտնել մի տեղացի ֆիլիպինցի Եկեղեցու անդամ մի ժողովում, որը մենք կազմակերպեցինք 1961թվականի մայիսին: [1996 թվականին] մենք Մանիլայում էինք և ունեցանք . . . մոտ 35000 հոգուց բաղկացած հավաքույթ այդ մեծ Արանեթա Կոլիզեումում: . . . Ինձ համար դա հրաշք է այն

ժամանակից, երբ բացեցինք աշխատանքը Ֆիլիպինների այդ մեծ երկրում [տես էջեր 29–30-ը ավելի շատ բան իմանալու այս փորձառության մասին]:

Մենք օգնության ենք հասնում ամենուրեք, իսկ դա պահանջում է ռահվիրա լինել: Մեր միսիոներները չեն ապրում լավագույն պայմաններում, երբ նրանք գնում են այս տարածքներից մի քանիսը, բայց նրանք առաջ են գնում և կատարում իրենց աշխատանքը և այն պտուղ է տալիս: Ոչ շատ առաջ մենք ունեինք մի բուռ անդամներ, ապա հարյուր անդամ, իսկ հետո հինգ հարյուր անդամ, իսկ հետո հազար անդամ: [15]

Եկեղեցում ռահվիրա լինելու օրերը դեռ մեզ հետ են, դրանք չեն վերջացել ծածկված կառքերով և ձեռնասայլերով: . . . Միսիոներների շարքերում գտնվում են ռահվիրաներ, ովքեր ուսուցանում են ավետարանը, և դրանք գտնվում են նորադարձների մեջ, ովքեր գալիս են Եկեղեցի: Դա սովորաբար դժվար է նրանցից յուրաքանչյուրի համար: Այն անշուշտ ներառում է զոհաբերություն: Այն կարող է ներառել հալածանքներ: Բայց սրանք գին են, որոնք հոժարակամությամբ կրում են և արժեքը, որը վճարվում է, նույնքան իրական է, ինչպես նրանց արժեքը, ովքեր կտրեցին անցան տափաստանները ռահվիրաների իրենց մեծ ջանքերում ավելի քան մեկ դար առաջ:[16]

Անկախ նրանից դուք ռահվիրա նախահայրեր եք ունեցել, թե եկել եք Եկեղեցի միայն երեկ, դուք այս ողջ սքանչելի պատկերի մասն եք կազմում, որի մասին երազել են այդ տղամարդիկ և կանայք: Նրանցը վիթխարի նախաձեռնություն էր: Մերը՝ շարունակվող մեծ պատասխանատվություն: Նրանք դրեցին հիմքը: Մեր պարտականությունն է կառուցել դրա վրա:

Նրանք նշեցին ուղին և ցույց տվեցին ճանապարհը: Մերն է պարտավորությունը՝ ընդարձակել, լայնացնել ու զորացնել այդ ուղին, մինչև այն պարուրի ողջ աշխարհը: . . . Հավատքը առաջնորդող սկզբունք էր այն դժվարին օրերին: Հավատքը առաջնորդող սկզբունք է, որին մենք պետք է հետևենք այսօր:[17]

5

Մենք հարգում ենք այդ ռահվիրաների զոհաբերություններն ու ժառանգությունը՝ հետևելով նրանց օրինակին և կառուցելով նրանց հիմքի վրա:

Ինչպիսի սքանչելի բան է ունենալ մեծ ժառանգություն, իմ եղբայրներ և քույրեր: Ինչ մեծ բան է իմանալ, որ կան այնպիսիք, ովքեր գնացել են առջևից և բացել են ուղին, որով մենք պետք է քայլենք, ուսուցանելով այն մեծ հավերժական սկզբունքները, որոնք պետք է լինեն առաջնորդող աստղեր մեր կյանքում և նրանց կյանքում, ովքեր կգան մեզանից հետո: Մենք այսօր կարող ենք հետևել նրանց օրինակին: Ռահվիրաները մեծ հավատքի, վիթխարի հավատարմության, աներևակայելի աշխատասիրության և բացարձակ ամուր ու անկոտրում ազնվության տեր մարդիկ էին:[18]

«Մենք այսօր կանգնած ենք որպես [ռահվիրաների] մեծ ջանքերի ստացողներ: Հուսով եմ, որ մենք շնորհակալ ենք դրա համար: Հուսով եմ, որ մենք մեր սրտում խորը երախտագիտություն ենք զգում այն ամենի համար, որ նրանք արել են մեզ համար:

. . . Ինչպես նրանցից էին մեծ բաներ սպասվում, այդպես էլ սպասվում են մեզանից: Նրանց արած գործերը համեմատելի էին իրենց ունեցածի հետ: Մենք ունենք շատ ավելին, որ մեծ մարտահրավերով առաջ գնանք և Աստծո թագավորությունը կառուցենք: Այնքան շատ բան կա անելու: Մենք ունենք ավետարանը ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի տանելու աստվածային մանդատ: Մենք պարտավորություն ունենք ուսուցանելու և մկրտելու Տեր Հիսուս Քրիստոսի անունով: Հարություն առած Փրկիչն ասել է. «Գնացեք բոլոր աշխարհք, ավետարանը քարոզեցեք ամեն արարածի» [Մարկոս 16.15]: . . .

Մեր նախնիները դրել են ամուր և սքանչելի հիմք: Այժմ մենք ունենք մեծ հնարավորություն կառուցելու մի վերնաշենք, ամբողջությամբ պատշաճորեն հարմարեցված միմյանց հետ, որի գլխավոր անկյունաքարը Քրիստոսն է:[19]

Դուք բոլոր [ռահվիրաների] պլանավորման և բոլոր նրանց աշխատանքների պտուղն եք: Ի՜նչ հրաշալի ժողովուրդ էին նրանք: Ողջ պատմության մեջ նրանց նախաձեռնության նմանը

չկա։ . . .Թող Աստված օրհնի նրանց հիշատակը մեզ համար ի բարին։ Երբ ուղին դժվարին է թվում, երբ մենք հուսալքված ենք՝ մտածելով, որ ամեն ինչ կորած է, մենք կարող ենք նայել նրանց և տեսնել, թե որքան ավելի վատ էր նրանց վիճակը։ Երբ մենք մտահոգվում ենք ապագայի համար, մենք կարող ենք նայել նրանց և նրանց հավատքի մեծ օրինակին։ . . .

Այսպիսի մեծ ժառանգությամբ մենք պետք է առաջ գնանք։ Մենք երբեք չպիտի իջնենք։ Մենք պետք է բարձր պահենք գլուխներս։ Մենք պետք է ապրենք ազնվությամբ։ Մենք պետք է «անենք այն ինչ ճիշտ է [և] թողնենք, որ արդյունքը հետևի»(“Do What Is Right,” *Hymns,* 1985, no. 237).[20]։

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Ինչո՞ւ էր հավատքը կարևոր ռահվիրաների համար, ովքեր կամենում էին հավաքվել Սոլթ Լեյքի Հովտում։ (Տես բաժին 1։) Ինչպե՞ս նրանք գործի դրեցին իրենց հավատքը։ Ինչպե՞ս կարող ենք գործի դնել մեր հավատքը՝ օգնելու հասնել մեզ սպասվող «մեծ ապագային»։
- Նախագահ Հինքլին ուսուցանեց, որ վաղ ռահվիրաները նայում էին դեպի ապագան, Սիոնը որպես իրենց «մեծ նպատակ», «մեծ հույս» և «երազանք» (բաժին 2)։ Ինչո՞ւ եք կարծում, որ սա այդպիսի հզոր շարժիչ ուժ էր վաղ ռահվիրաների համար։ Ի՞նչ նմանատիպ հույսեր են դրդապատճառներ հանդիսանում մեզ համար այսօր։
- Ի՞նչն է տպավորություն թողել ձեզ վրա «Ուիլլի և Մարտին ընկերության» ձեռնասայլակներով ռահվիրաների մասին Նախագահ Հինքլիի պատմության մեջ։ (Տես բաժին 3։) Բրիգամ Յանգի կողմից փրկության կոչը ինչպե՞ս է ցույց տալիս նրա մարգարեական ոգեշնչումը։ Ի՞նչ կարող ենք սովորել նրանցից, ովքեր արձագանքեցին նրա կոչին։ Ի՞նչ կարող ենք անել, փրկելու և բարձրացնելու նրանց, ովքեր կարիքի մեջ են այսօր։
- Վերադարձը դեպի անցյալ ինչպե՞ս է օգնում ձեզ «ձեռք բերել գնահատական ներկայի համար և հեռանկար ապագայի

համար»: (Տես բաժին 4:) Ի՞նչ առումներով է մեզանից յուրաքանչյուրը ռահվիրա:

- Ինչո՞ւ պիտիհարգենք վաղ ռահվիրաներին: (Տես բաժին 5:) Ի՞նչ իմաստով են Եկեղեցու բոլոր անդամներն օրհնված այդ ռահվիրաների հավատքով և զոհաբերություններով: Ինչպե՞ս կարող է վաղ շրջանի ռահվիրաների օրինակը օգնել մեզ, երբ մենք դիմակայում ենք մարտահրավերների:

Սոնչվող սուրբ գրություններ

Մատ. 25.40, Եթեր 12.6–9, ՎևՈւ 64.33–34, 81.5, 97.8–9, 98.1–3

Օգնություն ուսուցչին

«Իմաստալից քննարկումները կարևոր են ավետարանի ուսուցման մեծ մասի համար: . . . Լավ վարվող քննարկումների միջոցով սովորողների հետաքրքրությունը և ուշադրությունը մեծանում է: Յուրաքանչյուր ներկա գտնվող կարող է քաջալերվել ակտիվորեն ներգրավված լինել ուսուցման գործընթացում: . . .Ուղղեք հարցեր, որոնք խրախուսում են լրջամիտ մեկնաբանությունները և օգնում մարդկանց իսկապես խորհել ավետարանի շուրջ» (*Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում* [1999], 63):

Հղումներ

1. “Keep the Chain Unbroken” (Brigham Young University devotional, Nov. 30, 1999), 2, speeches.byu.edu.
2. Address given at the Guatemala City North and South Regional Conference, Jan. 26, 1997, 2; Church History Library, Salt Lake City.
3. “Obedience” (address given at the Hawaii Area Conference, June 18, 1978), 2, Church History Library, Salt Lake City.
4. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 360–61.
5. “The Faith of the Pioneers,” *Ensign,* July 1984, 3.
6. “God Grant Us Faith,” *Ensign,* Nov. 1983, 52–53.
7. “The Faith of the Pioneers,” 5–6.
8. “God Grant Us Faith,” 53.
9. “These Noble Pioneers” (Brigham Young University devotional, Feb. 2, 1997), 1–2, speeches.byu.edu.
10. “Stay the Course—Keep the Faith,” *Ensign,* Nov. 1995, 72.
11. “Reach with a Rescuing Hand,” *Ensign,* Nov. 1996, 85–86.
12. “The Faith to Move Mountains,” *Ensign* or *Liahona,* Nov. 2006, 84.
13. “Reach with a Rescuing Hand,” 86.
14. “The Faith of the Pioneers,” 3.
15. In Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 592.
16. In Gerry Avant, “Present-Day Pioneers: Many Are Still Blazing Gospel Trails,” *Church News,* July 24, 1993, 6.
17. “These Noble Pioneers,” 2, 4.
18. “These Noble Pioneers,” 2.
19. “True to the Faith,” *Ensign,* May 1997, 66–67.
20. “These Noble Pioneers,” 2, 6.

Աստծո դուստրեր

«Սքանչելի է հավատքի կանանց զորությունը»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Իր ողջ կյանքի ընթացքում Գորդոն Բ. Հինքլին տվել է իր բարձր գնահատականը կանանց կարողությունների և զոհաբերությունների վերաբերյալ: Նա արտահայտել է նաև իր ամուր վկայությունը Աստծո հավերժական ծրագրում կանանց դերի մասին: Նա հիացած էր կանանց ավելացող հնարավորություններով, ինչպես նաև Փրկիչի հանդեպ ունեցած նրանց հավատով և իրենց ընտանիքների հանդեպ ունեցած նրանց նվիրումով:

Գորդոն Բ. Հինքլիի մայրը՝ Ադան, խելացի, կրթված կին էր, սիրում էր գրականություն, երաժշտություն և նկարչություն: 29 տարեկանում նա ամուսնացավ այրի Բրայանթ Հինքլիի հետ և ստանձնեց նրա ութ երեխաների խնամքը, ովքեր սգում էին իրենց մոր մահը: Նա մեծացրեց նրանց սիրով, տվեց նրանց այն աջակցությունը, որի կարիքն ունեին և սովորեց կառավարել մեծ տնտեսությունը: Գորդոնը առաջինն էր հինգ երեխաներից, որոնք Ադան ու Բրայանթը համատեղ ունեցան: Չնայած Ադան մահացավ, երբ Գորդոնը 20 տարեկան էր, նրա ուսմունքներն ու օրինակը ընդմիշտ մնացին նրա հետ և ուժ տվեցին նրան ողջ կյանքում: Երբ նա խոսում էր իր մոր մասին, միշտ նշում էր վերջինիս վիթխարի ազդեցությունն իր վրա:

Գորդոն Բ. Հինքլիի կինը՝ Մարջորի Փեյը, նույնպես խորը ազդեցություն է ունեցել նրա վրա: Նա ուժեղ կին էր, ով նվիրված էր Հիսուս Քրիստոսի ավետարանին: Նա ուներ արտասովոր հավատ, ուրախ բնավորություն և սեր կյանքի հանդեպ: Նրան ուղղված մի քնքուշ նամակում Նախագահ Հինքլին արտահայտել է իր սերն ու հարգանքը նրա հանդեպ.

«Ձեզանից յուրաքանչյուրն Աստծո դուստրն է: Խորհեք այդ կարևոր փաստի ողջ սքանչելի իմաստի շուրջ»:

«Մենք միասին ենք ճամփորդել ամեն տեղ։ Մենք այցելել ենք յուրաքանչյուր մայրցամաք։ Մենք ժողովներ ենք անցկացրել աշխարհի մեծ ու փոքր շատ քաղաքներում։ . . . Մենք խոսել ենք միլիոնավոր մարդկանց հետ, ովքեր քեզ այնքան բարձր են գնահատել։ Քո հայտնի բառերով դու ձեռք ես բերել բոլոր նրանց սերը, ովքեր լսել են քեզ։ Քո առողջ դատողությունը, փայլուն և անսովոր խելքը, հանդարտ ու անվրեպ իմաստությունը և քո մեծ ու հաստատուն հավատը գերել են բոլոր նրանց սրտերը, ովքեր լսել են քեզ։ . . . Ընթերցանության հանդեպ քո անհագ ցանկությունը և գիտելիքի քո անդադար փնտրտուքը քեզ պահում են աչալուրջ և աշխույժ քո երկար ու բեղմնավոր կյանքի ընթացքում»։[1]

Նախագահ Հինքլին հաճախ էր խոսում կանանց աստվածային բնույթի մասին և խրախուսում էր նրանց դեպի ավելի մեծ ձեռքբերումների ու հավատի։ Երիտասարդ կանանց դիմելիս նա հայտարարել է. «Դուք Ամենազորի իսկական դուստրերն եք։ Ձեր ներուժը սահմանափակում չունի։ Եթե դուք վերահսկում եք ձեր կյանքը, ապա ձեր ապագան լի է հնարավորություններով և ուրախությամբ։ Դուք չեք կարող վատնել ձեր տաղանդներն ու ձեր ժամանակը։ Մեծ հնարավորություններ են փռված ձեր առջև»։[2] Չափահաս կանանց մասին խոսելիս նա ասել է. «Աշխարհն ունի կանանց ձեռքի կարիքը, նրանց սիրո, նրանց սփոփանքի ու նրանց ուժի կարիքը։ Մեր դաժան միջավայրը ունի նրանց քաջալերող ձայնի կարիքը, գեղեցկության կարիքը, որը կարծես դրված է նրանց բնույթի մեջ և գթության ոգու կարիքը, որը նրանց ժառանգությունն է»։[3]

Իր կնոջ՝ Մարջորիի մահվանը հաջորդող գերագույն համաժողովի ժամանակ Նախագահ Հինքլին եզրափակեց իր ելույթներից մեկը երախտագիտության սրտառուչ արտահայտությամբ. «Որքան երախտապարտ եմ ես, որքան երախտապարտ պիտի լինենք մենք՝ բոլորս, այն կանանց համար, ովքեր կան մեր կյանքում։ Աստված օրհնի նրանց։ Թող Նրա մեծ սերը հեղվի նրանց վրա և թագադրի նրանց շուքով ու գեղեցկությամբ, շնորհով և հավատով»։[4]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Աստծո հավերժական ծրագրում կանայք ունեն բարձր ու սուրբ տեղ։

Ձեզանից յուրաքանչյուրը Աստծո դուստրն է։ Խորհեք այդ կարևոր փաստի ողջ սքանչելի իմաստի շուրջ։ . . .

Ես հիշեցնում եմ ձեզ Ջոզեֆ Սմիթի խոսքերը՝ ուղղված Սփոփող Միության կանանց 1842 թվականի ապրիլին։ Նա ասել է. «Եթե դուք ապրեք ըստ ձեր առավելությունների, հրեշտակները չեն վարանի լինել ձեր ընկերակիցը» [*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 454]։ Ինչ հրաշալի ներուժ է թաքնված ձեր մեջ։[5]

Դուք շատ թանկ եք, ձեզանից յուրաքանչյուրն անհատապես։ . . . Դուք բարձր ու սուրբ տեղ եք զբաղեցնում Աստծո՝ մեր Երկնային Հոր ծրագրում։ Դուք Նրա դուստրերն եք, թանկ եք Նրա համար և շատ կարևոր եք Նրա համար։ Նրա մեծ ծրագիրը չի հաջողվի առանց ձեզ։[6]

Թույլ տվեք ասել ձեզ, քույրեր, որ դուք երկրորդական տեղ չեք զբաղեցնում մեր Հոր՝ հավերժական երջանկության և Նրա զավակների բարօրության համար ծրագրում։ Դուք այդ ծրագրի բացարձակ կարևոր մասն եք։ Առանց ձեզ ծրագիրը չէր կարող գործել։ Առանց ձեզ ողջ ծրագիրը կձախողվեր։[7]

Ի ծնե դուք օժտված եք ինչ-որ գեղեցիկ ու աստվածային բանով։ Երբեք մի մոռացեք այդ։ Ձեր Երկնային Հայրը տիեզերքի մեծ Տերն է։ Նա կառավարում է ամենի վրա, բայց Նա կլսի ձեր՝ որպես Իր դուստրերի, աղոթքները և կունկնդրի ձեզ, երբ դուք խոսեք Նրա հետ։ Նա կպատասխանի ձեր աղոթքներին։ Նա ձեզ մենակ չի թողնի։[8]

2

Էմմա Սմիթին տված Տիրոջ խորհուրդը կիրառելի է բոլորի համար։

Վարդապետություն և Ուխտերի քսանհինգերորդ բաժինը . . . հայտնություն է, որը Ջոզեֆ Սմիթի միջոցով տրվել է նրա կնոջը՝ Էմմա Սմիթին։ . . . Նա ասաց Էմմային և մեզանից յուրաքանչյուրին։

«Մի հայտնություն եմ տալիս քեզ իմ կամքի վերաբերյալ, և եթե դու հավատարիմ լինես ու իմ առաջ քայլես առաքինության շավիղներում, ես կպահպանեմ քո կյանքը, և դու ժառանգություն կստանաս Սիոնում» [ՎևՈւ 25.2, տես նաև հատված 16]: . . .

Մեծ չափով մեզանից յուրաքանչյուրն իր վրա կրում է Ամենազորի օրհնությունների բանալին: Եթե մենք ցանկանում ենք այդ օրհնությունները, մենք պիտի վճարենք գինը: Այդ գնի մի մասը գտնվում է հավատարիմ լինելու մեջ: Հավատարիմ ինչի՞ն: Հավատարիմ մեզ, այն ամենալավին, ինչը մեր ներսում է: Ոչ մի կին չպիտի ստորացնի ինքն իրեն, չնվաստացնի ինքն իրեն, չթերագնահատի իր կարողություններն ու ընդունակությունները: Թող որ մենք հավատարիմ լինենք այս մեծ, աստվածային հատկություններին, որ նա ունի: Եղեք հավատարիմ ավետարանին: Եղեք հավատարիմ Եկեղեցուն: Մեր մեջ կան մարդիկ, ովքեր ջանում են քայքայել այն, թուլություններ փնտրել նրա վաղ շրջանի ղեկավարների մեջ, թերություններ փնտրել դրա ծրագրերում, քննադատաբար խոսել դրա մասին: Ես վկայություն եմ բերում, որ սա Աստծո գործն է և նրանք, ովքեր դրա դեմ են խոսում, խոսում են Նրա դեմ:

Հավատարիմ եղեք Նրան: Նա է ձեր ուժի միակ ճշմարիտ աղբյուրը: Նա ձեր Հայրն է երկնքում: Նա ապրում է: Աստված լսում և պատասխանում է աղոթքներին: Հավատարիմ եղեք Աստծուն:

Տերը շարունակեց, ասելով Էմմային. «Եթե դու . . . քայլես առաքինության շավիղներում»:

Կարծում եմ յուրաքանչյուր կին . . . հասկանում է դրա իմաստը: Ես կարծում եմ այդ բառերը, որոնք տրվել են Էմմա Սմիթին և հետևաբար մեր բոլորին, տրվել են որպես մի պայման, որին պիտի հետևել, եթե մենք պիտի ժառանգություն ստանանք Աստծո արքայությունում: Առաքինության պակասը ամբողջովին անհամատեղելի է Տիրոջ պատվիրաններին հնազանդվելու հետ: Չկա ավելի գեղեցիկ բան, քան առաքինությունը: Չկա մի ուժ, որն ավելի մեծ է, քան առաքինության ուժը: Չկա մեկ այլ վեհանձնություն, որը հավասար լինի առաքինության վեհանձնությանը: Չկա որևէ հատկանիշ, որն այնքան պատշաճ լինի, և չկա ոչ մի զարդարանք, որն այնքան գրավիչ լինի: . . .

Տերն Էմմայիին կոչեց «ընտրյալ տիկին» [ՎԼՈՒ 25.3]։ Այսինքն, ըստ սուրբ գրության մեկ այլ տողի, նա «Տիրոջ ընտրյալ անոթ» էր։ (Տես Մորոնի 7.31։) Ձեզանից յուրաքանչյուրը ընտրյալ տիկին է։ Դուք աշխարհ եք եկել որպես Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասնակիցներ։ Դուք կատարել եք ձեր ընտրությունը, և եթե դուք ապրում եք դրան արժանավոր կյանքով, Տերը կմեծարի ու կզորացնի ձեզ։ . . .

Էմման պիտի կարգվեր[9] Ջոզեֆ Սմիթի ձեռքի ներքո «բացատրելու սուրբ գրքերը և հորդորելու եկեղեցին՝ համաձայն նրա, ինչ կտրվի քեզ իմ Հոգու կողմից» [ՎԼՈՒ 25.7]։

Նա պիտի ուսուցիչ լիներ։ Նա պիտի լիներ արդարության ու ճշմարտության ուսուցիչ։ Քանի որ Տերն ասաց այս կոչման վերաբերյալ. «Դու կստանաս Սուրբ Հոգին, և քո ժամանակը պիտի նվիրվի գրելուն և շատ սովորելուն» [ՎԼՈՒ 25.8]։

Նա պիտի սովորեր ավետարանը։ Նա պիտի սովորեր նաև այն աշխարհի մասին, որտեղ ինքն ապրում էր։ Դա պարզ դարձավ այն բանից հետո, երբ տրվեցին մեզ՝ բոլորիս վերաբերող հայտնություններ։ Նա պիտի իր ժամանակը նվիրեր «շատ սովորելուն»։ Նա պիտի գրեր՝ արտահայտելով իր խոհերը։

Ձեզ՝ այսօրվա կանայք, երիտասարդ կամ ծեր, կարող եմ առաջարկել, որ դուք գրեք, օրագրեր պահեք և ձեր խոհերը հանձնեք թղթին։ Գրառումներ կատարելը կարգապահության հրաշալի օրինակ է։ Այն հսկայական կրթական ջանք է։ Դա կօգնի ձեզ տարբեր ուղիներով, իսկ դուք կօրհնեք շատերի կյանքը։ . . .

Հայտնության բառերով արտահայտած, [Էմման] պիտի «բացատրեր սուրբ գրքերը և հորդորեր եկեղեցին՝ համաձայն նրա, ինչ կտրվի քեզ իմ Հոգու կողմից»։

Ինչ ուշագրավ պարտականություն է նրա ու Եկեղեցու բոլոր կանանց համար։ Պիտի լինի ուսումնասիրություն, նախապատրաստություն, պիտի լինի մտքերի կազմակերպում, պիտի լինի սուրբ գրությունների մեկնաբանում, պիտի լինի բարի գործեր կատարելու հորդորանք՝ ինչպես կուղղորդի Սուրբ Հոգին։

Տերը շարունակեց. «Եվ ճշմարիտ եմ ասում քեզ, որ դու մի կողմ պետք է դնես այս աշխարհի բաները, և ավելի լավ բաների ձգտես» [ՎԼՈՒ 25.10]։

Ես կարծում եմ, որ Տերը չէր ասում Էմմային, թե նա չպիտի անհանգստանար գլխավերևում ծածկ ունենալու, սեղանի վրա ուտելիք ու հագին հագուստ ունենալու համար: Տերն ասում էր, որ նա իր միտքը չպիտի սևեռեր այս խնդիրների վրա միայն, և մեզանից շատերը նույնպես չպիտի այդպես վարվեն: Տերը հորդորում էր նրան մտքերը կենտրոնացնել կյանքի ավելի բարձր գաղափարների վրա՝ արդարության ու բարության, գթության և ուրիշների հանդեպ սիրո, ինչպես նաև հավերժության բաների վրա: . . .

Շարունակելով, Տերն ասել է. «Ուստի, բարձրացրու սիրտդ և ցնծա, և հավատարիմ մնա այն ուխտերին, որոնք դու արել ես» [ՎևՈ 25.13]:

Ես հավատում եմ, որ նա ասում է մեզանից յուրաքանչյուրին՝ երջանիկ եղիր: Ավետարանը ուրախության ավետարան է: Այն մեզ առիթ է տրամադրում ուրախության համար: Իհարկե կլինեն նաև վշտի ժամանակներ: Իհարկե կլինեն մտահոգության ու անհանգստության ժամեր: Մենք բոլորս անհանգստանում ենք: Բայց Տերը հորդորել է մեզ բարձրացնել մեր սրտերն ու ցնծալ:[10]:

3

Մայրերը սուրբ կոչում ունեն՝ դաստիարակելու իրենց երեխաներին լույսի և ճշմարտության մեջ:

Յուրաքանչյուր ազգի, հասարակության կամ ընտանիքի ուժը գտնվում է բնավորության այն հատկանիշների մեջ, որոնք ձեռք են բերվել գլխավորապես երեխաների միջոցով, որոնք ուսուցանվել են իրենց մայրերի ամենօրյա խաղաղ ու պարզ վարվելակերպի շնորհիվ:[11]

Տունն այն տեղն է, որտեղ դաստիարակվում է նոր սերնդի մանուկների հիմնական մասը: Հուսով եմ, որ մայրերը կգիտակցեն, որ երբ ամեն բան ասված ու արված է, դուք այլևս չունեք անհաղթահարելի պարտականություն, ոչ էլ որևէ բեռ՝ ավելի մեծ հատուցումով, քան այն խնամքը, որը դուք տալիս եք ձեր երեխաներին ապահովության, խաղաղության, սիրո ու նպատակասլացության միջավայրում:[12]

Ես հիշեցնում եմ մայրերին ամենուր ձեր կոչման սրբության մասին: Ոչ ոք համարժեք չի կարող լինել ձեզ: Չկա ավելի մեծ պարտականություն, ոչ մի պատասխանատվություն ավելի

«Աստված օրհնի ձեզ, մայրեր: . . . Դուք կլինեք այնտեղ, դուք պիտի լինեք այնտեղ՝ որպես ոժ նոր սերնդի համար:

պարտավորեցնող չէ, քան այն, որ դուք սիրո, խաղաղության ու ազնվության մեջ դաստիարակում եք նրանց, ում աշխարհ եք բերել:[13]

Մեծացրեք ձեր երեխաներին լույսի ու ճշմարտության մեջ: Երեխաներին աղոթել սովորեցրեք վաղ հասակից: Սուրբ գրություններ կարդացեք նրանց համար, նույնիսկ եթե նրանք չեն հասկանում այն ամենը, ինչ դուք կարդում եք: Սովորեցրեք նրանց վճարել իրենց տասանորդն ու նվիրատվությունները այն առաջին գումարից, որ նրանք ստացել են: Թող այս գործառույթը սովորություն դառնա նրանց համար: Ձեր որդիներին սովորեցրեք մեծարել կանանց: Ձեր դուստրերին սովորեցրեք քայլել առաքինության շավիղներում: Պարտականություն ստանձնեք Եկեղեցում և Տիրոջը վստահեք ձեզ՝ ձեր կոչմանը հավասար դարձնելու գործը: Ձեր օրինակը նախատիպ կծառայի ձեր երեխաների համար:[14]

Աստված օրհնի ձեզ, մայրեր: Երբ մարդկային ջանքերի բոլոր հաղթանակներն ու պարտությունները համատեղված են, երբ կյանքի պայքարի փոշին սկսում է նստել, երբ այն ամենն, ինչի համար մենք այդքան տքնաջան աշխատում ենք նվաճումների

այս աշխարհում, թոշնում է մեր աչքի առաջ, դուք կլինեք այնտեղ, դուք պիտի լինեք այնտեղ՝ որպես ուժ նոր սերնդի համար, որպես մրցավազքի մշտապես կատարելագործվող առաջադեմ շարժում: Դրա որակը կախված կլինի ձեզանից:[15]

4

Կանայք մեծ պարտականություններ ունեն փրկության ծրագրում:

Այս Եկեղեցու կանանց մեջ մեծ ուժ ու կարողություն կա: Կա առաջնորդություն և ուղղություն, որոշակի անկախության ոգի, և սակայն Տիրոջ արքայության մի մասը լինելու մեծ բավականությունը և ձեռք ձեռքի տված քահանայություն կրողների հետ աշխատելը այն առաջ կտանի:[16]

Աստված այս Եկեղեցու կանանց աշխատանք է տվել կատարելու իր արքայությունում: Դա վերաբերում է մեր եռակի պարտականությունների բոլոր կողմերին. նախ՝ ուսուցանել ավետարանն աշխարհին, երկրորդը՝ ուժեղացնել Եկեղեցու անդամների հավատը և կառուցել նրանց երջանկությունը, և երրորդը՝ առաջ տանել փրկության մեծ աշխատանքը մահացածների համար:[17]

Եկեղեցու կանայք զուգընկերներ են իրենց եղբայրների հետ՝ Տիրոջ այս հզոր աշխատանքն առաջ տանելու գործում: . . . Կանայք կրում են վիթխարի պարտականություններ, և նրանք հաշվետու են այդ պարտականությունների կատարման համար: Նրանք գլխավորում են իրենց սեփական կազմակերպությունները, և այդ կազմակերպությունները մշտապես ուժեղ, կենսունակ ու կարևոր ուժեր են աշխարհում: Նրանք կանգնած են քահանաների կողքին որպես գործընկերներ, և բոլորը միասին ջանում են կառուցել Աստծո արքայությունը երկրի վրա: Մենք մեծարում ու հարգում ենք ձեզ՝ ձեր կարողության համար: Մենք ակնկալում ենք առաջնորդություն, ուժ և տպավորիչ արդյունքներ այն կազմակերպությունների կառավարումից, որոնց համար դուք պատասխանատու եք: Մենք խրախուսում և աջակցում ենք ձեզ՝ որպես Աստծո դուստրեր, ովքեր աշխատում են հրաշալի ընկերության մեջ աջակցելու նրան իրականացնելու Աստծո բոլոր որդիների ու դուստրերի անմահությունը և հավերժական կյանքը:[18]

5

Սփոփող Միությունը անչափելի օրհնությունների աղբյուր է:

Սփոփող Միության կանայք բառացիորեն շրջապատված են Աստծո հավերժական բազուկներով: Իմ կարծիքով, սա կանանց ամենամեծ կազմակերպությունն է ողջ աշխարհում: Սա Աստծո կողմից տրված ստեղծագործություն է: Ջոզեֆ Սմիթը ելույթ ունեցավ և հանդես եկավ որպես մարգարե, երբ 1842 թվականին կազմավորեց Սփոփող Միությունը:[19]

Անչափ կարևոր է, որ Եկեղեցու կանայք ամուր և անսասան կանգնեն այն ամենի համար, ինչը Տիրոջ ծրագրի լույսի ներքո ճիշտ է ու պատշաճ: Ես համոզված եմ, որ ոչ մի տեղ չկա մի այլ կազմակերպություն, որ հավասար լինի այս Եկեղեցու Սփոփող Միությանը: . . . Եթե նրա անդամները միավորված լինեն և խոսեն մի լեզվով, նրանց ուժը անչափելի կլինի:[20]

Ես մասնակցել եմ ցցի մի համաժողովի, որտեղ մի երիտասարդ կին, ով ամուրիների ծխի Սփոփող Միության նախագահն էր, խոսում էր ծառայության ու այն հրաշալի հնարավորության մասին, որը տրված է իր ծխի երիտասարդ կանանց: Դուք ունեք այդ ամենը: Դուք ունեք ձեր կազմակերպությունը: Դուք ունեք ունակ ղեկավարներ, ովքեր ձեզ խորհուրդներ կտան: Եկեղեցում դուք ունեք անդամներ, ովքեր կհասնեն ձեզ, որպեսզի օգնեն ձեզ ձեր փորձանքի ու վշտի ժամին:[21]

Ո՞վ կարող է չափել այն հրաշագործ ազդեցությունը միլիոնավոր կանանց կյանքի վրա, ում գիտելիքը աճել է, ում մտապատկերն ընդարձակվել է, ում կյանքն ընդլայնվել է, և ում հասկացողությունը Աստծո բաների վերաբերյալ հարստացել է այն անթիվ դասերի շնորհիվ, որոնք արդյունավետորեն ուսուցանվել ու սովորել են Սփոփող Միության դասերին:

Ո՞վ կարող է չափել այն ուրախությունը, որ եկել է այս կանանց կյանք, երբ նրանք շփվել են միմյանց հետ ճյուղի կամ ծխի միջավայրում, հարստացնելով միմյանց կյանքը ընկերակցության միջոցով, որը քաղցր է ու բարձր գնահատելի:

Երևակայության ամենախելացնոր թռիչքում անգամ ո՞վ կարող է հաշվել գթության անհաշվելի գործողությունները, որոնք կատարվել են՝ ուտելիքը, որը դրվել է դատարկ սեղաններին,

հավատը, որը սնուցվել է հիվանդության հուսահատ ժամերին, վերքերը, որոնք վիրակապվել են, ցավերը, որոնք ամոքվել են սիրող ձեռքերով և հանգիստ ու համոզիչ բառերով, սփոփանքը, որը ցուցաբերվել է մահվան ու դրան հաջորդող մենակության պահերին։ . . .

Ոչ ոք չի կարող հավանաբար հաշվարկել այն ծրագրերը, որոնք նախաձեռնել և ավարտին են հասցրել տեղական Սփոփող Միությունները։ Ոչ ոք հավանաբար չի կարող գնահատել այն լավը, որը եկել է այն կանանց կյանք, ովքեր պատկանում են այս կազմակերպություններին և նրանց, ում նրանք օգուտ են տվել իրենց լավ գործերով։ . . .

Աստված օրհնի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Սփոփող Միությունը։ Թող սիրո ոգին, որը մղում է իր անդամներին . . . շարունակի աճել և թող աշխարհը զգա այն։ Թող նրանց բարի գործերն ընդմիշտ դիպչեն անթիվ մարդկանց կյանքին, որտեղ էլ դրանք կատարվեն։ Եվ թող լույսն ու ըմբռնումը, ուսումնասիրությունն ու գիտելիքը և հավերժական ճշմարտությունը զարդարի այն բազմաթիվ սերունդների կանանց կյանքը, ովքեր դեռ պիտի գան երկրագնդի բոլոր ազգերի մեջ այս եզակի ու աստվածայնորեն հիմնված հաստատության շնորհիվ։[22]

6

Ձեր մեջ զարգացրեք աստվածային հատկանիշներ։

Դուք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հսկայական միավորում եք։ . . . Ոչ ոք երբեք չի կարող հաշվել այն վիթխարի ուժը, որը դուք կարող եք դառնալ։ . . . Ես պարտավորեցնում եմ ձեզ կանգնել բարձր և լինել ուժեղ՝ ի պաշտպանություն այն մեծ արժանիքների, որոնք հանդիսանում են մեր սոցիալական առաջընթացի հիմքը։ Երբ դուք միաբան եք, ձեր ուժը անսահմանափակ է։ Դուք կարող եք իրականացնել ամեն բան, որ ցանկանում եք իրականացնել։ Եվ օ~, որքան մեծ է ձեր կարիքը քայքայվող արժեքների աշխարհում, որտեղ թվում է, թե հակառակորդը հսկողության տակ է։[23]

Ցանկանում եմ կոչ անել կանանց ամենուր՝ աճեք ձեր մեծ ներուժի սահմանում։ Ես չեմ խնդրում, որ դուք հասնեք ձեր կարողությունից վեր սահմանների։ Հուսով եմ, ինքներդ ձեզ չեք տանջի ձախողման մտքերով։ Հուսով եմ, դուք չեք փորձի

«Ես . . . հրավիրում եմ կանանց ամենուր՝ աճեք ձեր ներուժի սահմանում»:

նպատակ սահմանել ձեր կարողությունների սահմաններից դուրս: Ես հուսով եմ, որ դուք պարզապես կանեք այն ամենն, ինչ կարող եք ձեր իմացած լավագույն ձևով: Եթե դուք այդպես անեք, դուք վկա կլինեք կատարվող հրաշքների:[24]

Ես իմ երախտագիտությունն եմ արտահայտում ձեզ՝ Վերջին Օրերի Սուրբ կանայք, ովքեր հիմա հաշվվում են միլիոններով և ապրում են ողջ աշխարհում: Մեծ է բարին կատարելու ձեր ուժը: Սքանչելի են ձեր տաղանդներն ու նվիրումը: Մեծ է ձեր հավատը և ձեր սերը Աստծո հանդեպ, Նրա աշխատանքի հանդեպ և Նրա որդիների ու դուստրերի հանդեպ: Շարունակեք ապրել ավետարանով: Մեծարեք այն ձեր բոլոր ընկերների մոտ: Ձեր լավ աշխատանքը ավելի մեծ կշիռ կունենա, քան ցանկացած այլ բառ, որ դուք կխոսեք: Քայլեք առաքինության ու ճշմարտության մեջ, հավատով ու հավատարմությամբ: Դուք հավերժական ծրագրի մասն եք, մի ծրագրի, որը նախատեսված է Երկնային Հոր կողմից: Յուրաքանչյուր օրը այդ հավերժության մի մասն է:

Ես գիտեմ, որ ձեզանից շատերը ծանր բեռներ են կրում: Թող Եկեղեցու ձեր ընկերները՝ ձեր եղբայրներն ու քույրերը, օգնեն

ձեզ այդ բեռների հետ: Թող ձեր աղոթքները բարձրանան Նրա մոտ, ով ամենազորավորն է, ով սիրում է ձեզ, և ով կարող է կենտրոնացնել ուժերն ու գործոնները, որոնք կարող են օգնել ձեզ: Սա հրաշքների աշխատանք է: Դուք գիտեք դա, ես ևս գիտեմ: Ինձ համար հեշտ է ասել ձեզ, որ չհուսահատվեք, այնուհանդերձ ես ասում եմ այդ, քանի որ ես հորդորում եմ ձեզ առաջ գնալ հավատի մեջ:[25]

Սքանչելի է հավատի կանանց ուժը: Այն նորից ու նորից է ցուցադրվել այս Եկեղեցու պատմության մեջ: Այն շարունակվում է այսօր: Ես կարծում եմ, որ այն աստվածայնության մի մասն է ձեր մեջ:

Քույրեր, բարձրացեք աստվածայնության աստիճանի: Ջանքեր գործադրեք, որպեսզի այս աշխարհը ավելի լավ ապրելու վայր դարձնեք ձեր և բոլոր նրանց համար, ովքեր կգան ձեզանից հետո:[26]

Աստված շնորհակալ է այս Եկեղեցու հրաշալի կանանց համար: Թող նա հպարտության զգացում սերմանի ձեր սրտերում, ձեր հնարավորություններում և ճշմարտության ձեր համոզվածության մեջ, որը որպես ղեկ կծառայի, որպեսզի ձեզ ապահով պահի բոլոր փոթորիկների ժամանակ:[27]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Ի՞նչ ենք մենք սովորում Նախագահ Հինքլիի ուսմունքներից այն մասին, թե Երկնային Հայրն ինչպե՞ս է վերաբերվում Իր դուստրերին: (Տես բաժին 1:) Ինչո՞ւ է կարևոր հասկանալ կանանց «բարձր ու սուրբ տեղը» Աստծո հավերժական ծրագրում:
- Տիրոջ կողմից Էմմա Սմիթին տրված խորհրդի ո՞ր կողմերն են ձեզ համար հատկապես կարևոր: (Տես բաժին 2:) Ի՞նչ կարող ենք սովորել 2-րդ բաժնից հավատարիմ լինելու մասին: Ի՞նչ կարող ենք մենք սովորել «ընտրյալ տիկին» լինելու մասին: Ի՞նչ կարող ենք մենք սովորել այն մասին, թե ինչպես կիրառել սուրբ գրությունները մեզ համար:

- Ի՞նչ տպավորություններ ունեցաք, մինչ կարդում էիք Նախագահ Հինքլիի խորհուրդները մայրերին: (Տես բաժին 3:) Ինչպե՞ս եք դուք օրհնվել ձեր մոր ազդեցությամբ: Ինչո՞ւ ծնողների համար «չկա ավելի պարտավորեցնող պարտականություն», քան իրենց երեխաներին «սիրո, խաղաղության և ազնվության» մեջ մեծացնելը:
- Կանանց «ուժի և մեծ կարողության» ի՞նչ օրինակներ եք տեսել Եկեղեցում: (Տես բաժին 4:) Որո՞նք են այն մի քանի եղանակները, որոնցով կանայք կարող են օգնել իրականացնել «Աստծո բոլոր դուստրերի ու զավակների անմահությունն ու հավերժական կյանքը»: Ինչո՞ւ է կարևոր, որ կանայք ու տղամարդիկ աշխատեն միասին, որպեսզի առաջ տանեն Տիրոջ աշխատանքը: Այս համատեղ աշխատանքի ինչպիսի՞ օրինակներ եք տեսել:
- Վերանայեք այն օրհնությունները, որոնք գալիս են Սփոփող Միությունից, ինչպես Նախագահ Հինքլին է նկարագրում բաժին 5-ում: Ի՞նչ օրհնություններ եք ստացել Սփոփող Միության քույրերի ջանքերի շնորհիվ, ներառյալ նրանց, ովքեր ծառայում են Երիտասարդ Կանանց և Երեխաների Միությունում: Դուք ինչպե՞ս կարող եք զորացնել ձեր Ծխի Սփոփող Միությունը: Ինչպե՞ս կարող է Սփոփող Միությունն օգնել կանանց ընդմիշտ ավելացնել իրենց ազդեցությունը:
- Խորհեք Նախագահ Հինքլիի քաջալերանքի մասին՝ «բարձրանալ մեր ներուժի սահմաններին» (բաժին 6): Մենք ինչպե՞ս կարող ենք ավելի լավ ըմբռնել, թե ըստ Աստծո ցանկության ինչպիսի՞ն պիտի լինի մեր ներուժը: Ինչպե՞ս կարող ենք առաջ ընթանալ մեր ներուժի սահմանին հասնելու համար: Ե՞րբ եք դուք տեսել «հավատքի կանանց սքանչելի . . . զորությունը»:

Առնչվող սուրբ գրություններ

Առակաց 31.10–31, Ղուկաս 10.38–42, Գործք 9.36–40, Հռովմայեցիս 16.1–2, Բ Տիմոթեոս 1.1–5, Ալմա 56.41–48

Օգնություն ուսուցչին

Պատրաստվելով ուսուցանել յուրաքանչյուր դասը, աղոթեք, որ Հոգին օգնի ձեզ իմանալ, թե երբ կիսվել ձեր սուրբ զգացմունքներով: Հնարավոր է, դուք հուշում ստանաք բերել ձեր

վկայությունը դասի ընթացքում մի քանի անգամ, ոչ միայն ավարտելիս» (*Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում* [1999], 44):

Հղումներ

1. In *Glimpses into the Life and Heart of Marjorie Pay Hinckley,* ed. Virginia H. Pearce (1999), 194–95.
2. «Թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար», *Ensign* կամ *Լիահոնա,* Մայիս 2007, 115;
3. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 509–10.
4. "Կանայք մեր կյանքում" *Ensign* կամ *Լիահոնա,* Նոյեմբեր 2004, 85:
5. "Stand Strong against the Wiles of the World," *Ensign,* Nov. 1995, 98.
6. "Daughters of God," *Ensign,* Nov. 1991, 97.
7. "To the Women of the Church," *Ensign,* Nov. 1996, 67–97.
8. «Մնացեք ուղիղ ճանապարհի վրա» *Ensign* կամ *Լիահոնա,* Մայիս 2004, 112:
9. Նախագահ Հինքլիի կողմից *կկարգվես* բառի օգտագործումը արտացոլում է այդ բառի կիրառումը Վարդապետություն և Ուխտերի 25.7-ում, որի մի մասը նա մեջբերում է այս նախադասության մեջ: Սուրբ գրության անգլերեն հրատարակության մեջ *կկարգվես* բառի ծանոթագրությունը այս հատվածում ասում է «քո ընդունակություններն ի սպաս կդրվեն»: Վերականգնման վաղ օրերին *կարգվել* և *ի սպաս դրվել* բառերը հաճախ կիրառվում են փոխարինաբար. *կարգվել* բառը միշտ չէ, որ վերաբերում է քահանայության պաշտոններին (տես օրինակ՝ ՎևՈ 63.45):
10. "If Thou Art Faithful," *Ensign,* Nov. 1984, 90–92.
11. *Մայրություն. A Heritage of Faith* (pamphlet, 1995), 6.
12. "Stand Strong against the Wiles of the World," Ensign, 99.
13. "Bring Up a Child in the Way He Should Go," *Ensign,* Nov. 1993, 60.
14. "Stand Strong against the Wiles of the World," Ensign, 99.
15. *Մայրություն. A Heritage of Faith,* 13.
16. "Women of the Church," 68.
17. "Live Up to Your Inheritance," *Ensign,* Nov. 1983, 84.
18. "If Thou Art Faithful," 89.
19. "In the Arms of His Love," *Ensign* or *Liahona,* Nov. 2006, 115.
20. Գորդոն Բ. Հինքլի, «Կանգնենք ամուր ու անսասան», *Ղեկավարների համաշխարհային ուսուցում,* հունվ. 10, 2004, 20:
21. "The BYU Experience" (Brigham Young University devotional, Nov. 4, 1997), 2, speeches.byu.edu.
22. "Ambitious to Do Good," *Ensign,* Mar. 1992, 4–6.
23. "Your Greatest Challenge, Mother," *Ensign,* Nov. 2000, 97.
24. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 696.
25. "Daughters of God," 100.
26. "Rise to the Stature of the Divine within You," *Ensign,* Nov. 1989, 97–98.
27. "Live Up to Your Inheritance," 84.

«Խնդրեք և կտրուի ձեզ. որոնեցէք և կգտնէք, դուռը թակեցէք և կբացուի ձեզ» (Մատթեոս 7.7):

Ինչ հզոր բան է աղոթքը

«Ինչ կարևոր ու հրաշալի է, երբ մենք հնարավորություն ունենք դիմելու Տիրոջը մեր կարողություններից վեր իմաստություն ստանալու համար, ուժ ստանալու համար՝ անելու այն, ինչ մենք պիտի անենք, սփոփանք ու միխթարություն ստանալու և երախտագիտություն արտահայտելու համար»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

«Մեզանից ոչ ոք իրականում չի կարող անել այդ մենակ», ասել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին: «Մենք օգնության կարիք ունենք, այնպիսի օգնության, որը գալիս է ի պատասխան աղոթքին»:[1] Նախագահ Հինքլին կիրառում էր այս սկզբունքը այն որոշումները կայացնելիս, որոնց նա բախվում էր որպես Եկեղեցու Նախագահ: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը հետևյալն է ասել նրա մասին. «Նա փայլուն անձնավորություն է՝ արտասովոր դատողությամբ, բայց երբ բախվում է անլուծելի խնդրի, նա ծնկի է իջնում»:[2]

Նախագահ Հինքլին ու նրա կինը՝ Մարջորին, այս սկզբունքը կիրառել են նաև իրենց տանը: Նրանց որդի Ռիչարդն ասել է. «Ես չեմ հիշում մի օր, երբ մենք ընտանիքով չենք աղոթել: Երբ Հայրիկի հերթը գալիս էր, նա աղոթում էր շատ անկեղծորեն, բայց ոչ երբեք թատերական կամ զգացմունքային տեսքով: Մենք շատ բան էինք սովորում նրա հավատի խորության մասին, երբ լսում էինք, թե ինչպես էր նա աղոթում: Նա դիմում էր Աստծուն ակնածանքով, կարծես մի իմաստուն ու հարգալից ուսուցիչ կամ դաստիարակ լիներ և Փրկիչին դիմում էր խորին զգացմունքով: Ես երեխա էի, բայց գիտեի, որ նրանք իրական անձեր էին նրա համար, որ նա սիրում ու պաշտում էր նրանց»:[3] Մարջորին

նկատել է. «Ես կարծում եմ, որ ընտանեկան աղոթքը խորապես կախված է այն ձևից, որով մեր զավակները պատասխանում են մեզ: Չնայած Գորդոնը նրանց չէր քարոզում, նրանք լսում էին ամեն բան, որն, ըստ մեզ, պիտի լսեին ընտանեկան աղոթքում»:[4]

Որպես Բարձրագույն Իշխանավոր, իր ողջ ծառայության ընթացքում Նախագահ Հինքլին խրախուսում էր Եկեղեցու անդամներին «հավատալ աղոթքին ու աղոթքի զորությանը»:[5] Նա վկայում էր, որ «աղոթքը մեզ համար բացում է երկնքի զորությունը»:[6] Նա խոստացել է. «Շատ աղոթեք և երկնքի Աստվածը կժպտա ու կօրհնի ձեզ և կտա երջանկություն ձեր սրտին ու խաղաղություն՝ ձեր կյանքին»:[7]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Աստված մեր Հայրն է, և Նա հրավիրում է մեզ աղոթել Իրն անհատապես:

Բոլոր այն մեծ, հրաշալի ու ոգեշնչող խոստումներից, որոնք ես կարդացել եմ, ամենից հավաստիացնողը ինձ համար Փրկիչի խոսքերն են. «Խնդրեք և կտրուի ձեզ. որոնեցէք և կգտնէք, դուռը թակեցէք և կբացուի ձեզ»: (Մատթ. 7.7:)[8]

Երբեք մի մոռացեք՝ ով եք դուք: . . . Իրականում, դուք Աստծո զավակն եք: . . . Նա մեր Երկնային Հայրն է: Նա սիրում է ձեզ: Դուք կարող եք դիմել Նրան աղոթքով: Նա հրավիրել է ձեզ՝ այդպես վարվել: . . . Ինչ հրաշալի է սա: Նա է Ամենամեծը: Նա ողջ տիեզերքի Արարիչն ու Կառավարիչն է: Այնուամենայնիվ, Նա կլսի ձեր աղոթքները:[9]

Մեր աղոթքներով մենք կարող ենք մոտենալ Տիրոջը: Սրանք կարող են զոհության խոսակցություններ դառնալ: Ես երբեք լիովին չեմ հասկանա, թե ինչպես է Տիեզերքի մեծ Աստվածը՝ Ամենազորը, հրավիրում մեզ՝ որպես Իր զավակների, խոսել Իր հետ անհատապես: Ինչ անգնահատելի հնարավորություն է սա: Ինչ հրաշալի է, որ սա իրականում տեղի է ունենում: Ես վկայում եմ, որ Տերը լսում է խոնարհությամբ ու անկեղծությամբ ասված մեր աղոթքները և պատասխանում դրանց: Սա նման է հրաշքի, բայց այն իսկական է:[10]

Եղբայրներ և քույրեր, ես գիտեմ, որ դուք աղոթասեր ժողովուրդ եք: Սա հրաշալի է մեր օրերի ու ժամանակների համար, երբ աղոթքի կիրառությունը դուրս է մղվում շատերի կյանքից: Կարևոր ու հրաշալի բան է, երբ մենք հնարավորություն ունենք դիմել Տիրոջը մեր կարողություններից վեր իմաստություն ստանալու համար, ուժ ստանալու համար՝ անելու այն, ինչ մենք պիտի անենք, սփոփանք ու մխիթարություն ստանալու և երախտագիտություն արտահայտելու համար:[11]

Ես խնդրում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը ջանք գործադրի ապրել Տիրոջն ավելի մոտ և զրուցի նրա հետ ավելի հաճախ ու աճող հավատով:

Հայրեր և մայրեր, աղոթեք ձեր երեխաների համար: Աղոթեք, որ նրանք պաշտպանված լինեն աշխարհի չարիքից: Աղոթեք, որ նրանք կարողանան աճել հավատով ու գիտելիքով: Աղոթեք, որ նրանք կարողանան ուղղորդվել կյանքում, որը կլինի օգտակար ու լավը: Ամուսիններ, աղոթեք ձեր կանանց համար: Ձեր երախտագիտությունն արտահայտեք Տիրոջը նրանց համար և խնդրեք Նրան նրանց անունից: Կանայք, աղոթեք ձեր ամուսինների համար: Նրանցից շատերը քայլում են շատ դժվար ճանապարհներով, որոնք լի են բազում խնդիրներով ու մեծ խոչընդոտներով: Խնդրեք Աստծուց, որ առաջնորդի, օրհնի, պաշտպանի ու ոգեշնչի նրանց իրենց արդար ջանքերում:

Աղոթեք խաղաղության համար երկրի վրա, որ Ամենազորը, ով կառավարում է տիեզերքը, ձգի Իր ձեռքը և թույլ տա, որ Իր Հոգին մտորի իր ժողովրդի մասին, որ ազգերը ցասում չթափեն միմյանց վրա: . . . Աղոթեք իմաստություն ու հասկացողություն ձեռք բերելու համար, երբ քայլում եք ձեր կյանքի դժվար ճանապարհով:[12]

Աղոթքի մի հրաշալի կողմն այն է, որ այն անձնական է, այն անհատական է, և ոչ ոք չի կարող միջամտել ձեր խոսակցությանը ձեր Երկնային Հոր հետ՝ Հիսուս Քրիստոսի անունով: Հաճախակի աղոթեք: Խնդրեք Տիրոջից ներել ձեր մեղքերը: Տիրոջից օգնություն խնդրեք: Տիրոջից խնդրեք օրհնել ձեզ: Խնդրեք Տիրոջից օգնել ձեզ հասկանալ ձեր արդար ձգտումները: . . . Խնդրեք Տիրոջից այն բոլոր կարևոր բաների համար, որոնք ձեր կյանքում այնքան մեծ նշանակություն ունեն ձեզ համար: Նա պատրաստ է օգնել ձեզ: Երբեք մի մոռացեք այդ:[13]

2

Ընտանեկան աղոթքը հրաշքներ է բերում անհատներին, ընտանիքներին ու հասարակությանը:

Մեր ժամանակներում ազնվությունը, վարքագիծն ու շիտակությունը նորովի շեշտադրման կարիք ունեն: Մեր ժամանակների մոդելը կփոխվի միայն այն դեպքում, երբ մենք նորովի կառուցենք մեր բնավորությունը այն արժեքներով, որոնք ճշմարիտ քաղաքականության էությունն են: Հարցը, որին մենք բախվում ենք, այն է, թե որտեղից սկսենք:

Ես բավարարված եմ, որ այն պիտի սկսվի Աստծո՝ որպես մեր Երկնային Հոր ճանաչումից, Նրա ու Նրա զավակների հետ ունեցած մեր հարաբերություններից, Նրա հետ հաղորդակցումից՝ ընդունելով Նրա գերիշխանությունը, և մեր առօրյա գործերի համար Նրա առաջնորդությունը ստանալու համար խնդրանքից:

Ես հաստատում եմ, որ վերադարձը աղոթքի հին ձևին՝ ընտանեկան աղոթքին, հանդիսանում է հիմնական դեղը, որը կկասեցնի սարսափելի հիվանդությունը, որը քայքայում է հասարակության բնույթը: Մենք չենք կարող հրաշք ակնկալել մեկ օրում, բայց մի սերունդ հետո մենք կունենանք այդ հրաշքը: . . .

Ծնկի իջնելու դիրքի մեջ կա ինչ-որ բան, որը հակասում է Պողոսի նկարագրած վերաբերմունքին. «ամբարտավան . . . հանդուգն, գոռոզ»:

Երբ հայրը, մայրը և երեխաները միասին ծնկի են իջնում, ինչ-որ ձևով անհետանում են այն հատկանիշները, որ նա նկարագրել է. «ծնողներին անհնազանդ, . . . անգութ»:

Ինչ-որ բան կա Աստվածությանը դիմելու գործում, որը հավասարակշռում է միտումը դեպի սրբապղծությունն ու հաճույքի սիրահարներ դառնալը ավելի, քան Աստծո երկրպագուներ դառնալը: [Տես Բ Տիմոթեոս 3.1-4:]

Ոչ սուրբ լինելու հակումը, ինչպես Պողոսը նկարագրել է որպես անշնորհակալ, մաքրվում է, երբ ընտանիքի անդամները միասին շնորհակալություն են հայտնում Տիրոջը կյանքի ու խաղաղության և իրենց ունեցած ամեն բանի համար: Եվ երբ նրանք շնորհակալություն են հայտնում Աստծուն միմյանց համար, ընտանիքում զարգանում է նոր արժեքավորում, նոր հարգանք, նոր կապվածություն միմյանց հանդեպ: . . .

Մենք կարող ենք ուժեղացնել մեր ընտանիքը միասին ծնկի եկած աղոթքով:

Երբ Աստծո առաջ միասին հիշում ենք աղքատներին, կարիքավորներին, կեղեքվածներին, մեր մեջ զարգանում է չգիտակցված, բայց իրական ու անշահախնդիր սեր ուրիշների հանդեպ և ցանկություն՝ ծառայելու ուրիշների կարիքներին: Մենք չենք կարող Աստծուն խնդրել օգնել վշտի մեջ գտնվող մեր մերձավորին, առանց այդ մերձավորին օգնելու մեր ցանկության: Ինչ հրաշքներ կպատահեն աշխարհի զավակների կյանքում, եթե նրանք մի կողմ դնեն սեփական եսասիրությունը և կորցնեն իրենց ուրիշներին ծառայելու մեջ: Սերմը, որը կաճի այս պաշտպանիչ ու պտղաբեր ծառից, կաճի, եթե լավ տնկվի ու խնամվի ամենօրյա ընտանեկան աղոթքներում: . . .

Ես չգիտեմ մի ուրիշ բան, որն այնքան շատ կօգնի թուլացնել ընտանեկան լարվածությունը, նուրբ հարգանք կառաջացնի ծնողների հանդեպ և կհանգեցնի հնազանդության, որը կմեծացնի ակնածանքի ոգին, ինչն էլ զգալիորեն կմաքրի հուսահատությունը քայքայված ընտանիքներից, քան միասին աղոթելը, միասին թուլությունները խոստովանելը Տիրոջ առաջ և Տիրոջից օգնություն խնդրելը մեր տների ու այնտեղ ապրողների համար: . . .

Ընտանիքը հասարակության հիմնական միավորն է: Աղոթող ընտանիքը ավելի լավ հասարակության հույսն է: «Խնդրեցէք Տիրոջը, քանի որ նա գտնվում է»: (Եսայիա 55.6:)[14]

Ես հուզվեցի . . . մի երիտասարդ միսիոների սրտաճմլիկ հայտարարությունից: Նա ասաց. «Ես արդեն մի քանի ամիս այստեղ եմ: Ես չեմ կարողանում սովորել լեզուն: Ես չեմ սիրում մարդկանց: Ես ընկճված էի ցերեկը և արտասվում էի գիշերները: Ես ցանկանում էի մեռնել: Ես գրեցի մայրիկիս ու պատճառ խնդրեցի, որ տուն վերադառնամ: Ես ստացա նրա պատասխանը: Նա ասում է. «Մենք աղոթում ենք քեզ համար: Մենք բոլորս ամեն օր միասին ծնկի ենք իջնում առավոտյան նախաճաշից առաջ և երեկոյան՝ նախքան քնելը ու խնդրում ենք Տիրոջից, որ օրհնի քեզ: Բացի աղոթքից, մենք նաև ծոմ ենք պահում, և երբ քո փոքր եղբայրներն ու քույրերն աղոթում են, նրանք ասում են. «Երկնային Հայր, օրհնիր Ջոննին . . . և օգնիր, որ նա սովորի լեզուն և կատարի այն աշխատանքը, որին նա կանչվել է»:

Այդ երիտասարդը շարունակեց, ասելով արցունքների միջից. «Ես նորից կփորձեմ: Ես իմ աղոթքներն ու ծոմը կավելացնեմ նրանց աղոթքներին ու ծոմին»:

Հիմա, չորս ամիս անց, ես մի նամակ եմ ստացել նրանից, որում ասվում է. «Մի հրաշք է պատահել: Լեզուն տրվել է ինձ որպես պարգև Տիրոջից: Ես սովորեցի սիրել մարդկանց ու այս գեղեցիկ երկիրը: Շնորհակալություն Աստծուն իմ ընտանիքի աղոթքների համար»:[15]

Կարո՞ղ ենք մենք մեր տներն ավելի գեղեցիկ դարձնել: Այո, եթե մեր ընտանիքներին վերաբերվենք որպես ողջ ճշմարիտ գեղեցկության Սկզբնաղբյուրի: Արդյո՞ք մենք կարող ենք ուժեղացնել հասարակությունը և դարձնենք այն ավելի լավ վայր ապրելու համար: Այո, ուժեղացնելով մեր ընտանեկան կյանքի առաքինությունը, միասին ծնկի գալով ու խնդրելով Ամենազորին՝ Սիրելի Որդու անունով:

Վերադարձը դեպի ընտանեկան երկրպագության, որը կտարածվի ողջ երկրով ու երկրագնդով մեկ, մի սերնդի սահմաններում զգալի չափով կվերացնի հուսահատությունը, որը քայքայում է մեզ: Այն կվերականգնի ազնվությունը, փոխադարձ հարգանքը և երախտագիտության ոգին մարդկանց սրտերում:[16]

Արդյո՞ք աղոթքն այսպիսի դժվար բան է: Մի՞թե այդքան դժվար է քաջալերել հայրերին ու մայրերին ծնկի իջնել իրենց փոքր երեխաների հետ և դիմել Աստվածությանը, արտահայտելով երախտագիտություն օրհնությունների համար, աղոթել վշտի մեջ գտնվողների և իրենց համար, իսկ հետո խնդրել այն աշխարհի Փրկիչի ու Քավիչի անունով: Ինչ հզոր բան է աղոթքը: Ես կարող եմ վկայել դրա մասին և դուք նույնպես կարող եք: Ինչ ողբերգական է ցանկացած ընտանիքի համար, որը թերանում է օգտվել այս անգին ու պարզ գործառույթից:[17]

Եթե ձեր մեջ կան այնպիսիները, ովքեր չեն աղոթում ընտանիքով, թող սկսեն աղոթել հիմա, միասին ծնկի իջնեն, եթե դուք կարողանաք անել այդ ամեն առավոտ ու երեկո, խոսել Տիրոջ հետ և շնորհակալություն հայտնել, խնդրել, որ Նրա օրհնությունները տարածվեն կարիքավորների վրա և խոսել Նրա հետ ձեր բարեկեցության համար ևս:[18]

Ես բերում եմ ձեզ իմ վկայությունը, որ եթե դուք անկեղծորեն կիրառեք ընտանեկան աղոթքը, դուք առանց հատուցման չեք մնա: Հնարավոր է, փոփոխությունները միանգամից ակնհայտ չլինեն: Դրանք կարող են չափազանց աննկատ լինել: Բայց դրանք կլինեն իսկական, քանի որ Աստված «իրան խնդրողներին վարձահատույց կլինի»: (Եբր. 11.6:)

Թող մենք հավատարիմ լինենք այս գործում աշխարհին օրինակ ծառայելիս և այդպես վարվելու համար ուրիշներին խրախուսելիս:[19]

3

Մենք պիտի շատ աղոթենք և լսենք, քանի որ մենք կստանանք աղոթքների պատասխանը:

Երբեք պատասխանատվություն մի ստանձնեք, որ կարող եք անել դա մենակ: Դուք ունեք Տիրոջ կարիքը: Երբեք մի տատանվեք ծնկի իջնելու որևէ մեկուսի տեղ և խոսելու Նրա հետ: Ինչ սքանչելի ու հրաշալի բան է աղոթքը: Մտածեք այդ մասին: Իրականում, մենք կարող ենք խոսել մեր Երկնային Հոր հետ: Նա կարող է լսել ու պատասխանել, բայց մենք պիտի ականջալուր լինենք այդ պատասխանին: Ոչինչ չափազանց լուրջ չէ և ոչինչ չափազանց կարևոր չէ Նրա հետ կիսվելու համար:[20]

Աղոթեք Տիրոջը՝ պատասխանի ակնկալիքով։ . . . Մեր աղոթքի հետ կապված խնդիրներից մեկն այն է, որ մենք աղոթում ենք այնպես, կարծես վերցնում ենք հեռախոսը և պատվիրում նպարեղեն՝ տալիս ենք պատվերն ու անջատում հեռախոսը։ Մենք պիտի խորհենք, մտածենք, թե ինչի մասին և ինչի համար ենք աղոթում, իսկ հետո խոսենք Տիրոջ հետ՝ կարծես մի մարդ խոսում է մեկ ուրիշի հետ։ «Հիմա եկէք ու վիճաբանենք, ասում է Տերը» (Եսայիա 1.18)։[21]

Ոչինչ մեզ այնքան չի օգնում, որքան երբ խնդիրը հանձնում ենք Տիրոջ ձեռքը։ . . . Ես չեմ երկմտում ասել, որ ես ստացել եմ աղոթքների պատասխանը։ Ես գիտեմ դա։ Ես չեմ կարող ժխտել դա։ Այս դժվար դարում մենք պիտի աղոթենք առաջնորդություն ստանալու համար։ . . . Սքանչելին այն է, որ պարտադիր չէ, որ դուք հանճար լինեք աղոթելու համար։ Նա կլսի ամենախոնարհների ձայնը։ . . . Դիմեք Տիրոջը։ Նա է հրավեր առաջարկում և Նա էլ կպատասխանի։[22]

Հավատացեք աղոթքի զորությանն ու վեհությանը։ Տերը պատասխանում է մեր աղոթքներին։ Ես գիտեմ դա։ Ես այդ հրաշքին կրկին ու կրկին ականատես եմ եղել։ Աղոթքի շնորհիվ մենք ընկերակցում ենք Աստծո հետ։ Այն մեզ հնարավորություն է տալիս խոսել Նրա հետ, շնորհակալություն հայտնել Նրան Իր հրաշալի օրհնությունների համար և խնդրել Նրանից ուղղորդություն և պաշտպանություն, երբ մենք քայլում ենք կյանքի ճանապարհով։ Այս մեծ աշխատանքը, որը տարածվում է երկրի վրա, գտավ իր արմատները մի տղայի աղոթքի մեջ։ Նա կարդացել էր ընտանեկան Աստվածաշնչում. «Եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատությամբ և չէ նախատում, և կտրուի նորան։ Միայն թե թող հավատքով խնդրէ առանց երկմտելու, որովհետև երկմտողը նման է ծովի հողմակոծուած և տատանուած ալիքին» (Հակոբոսի 1.5–6)։ Սա է խոստումը։ Կա՞ ավելի մեծ խոստում որևէ տեղ այս երկրի վրա, քան այս խոստումը։[23]

Աղոթեք, իմ ընկերներ և լսեք։ Հնարավոր է, դուք երբեք ձայն չլսեք։ Հնարավոր է։ Բայց ինչ-որ ձևով, որը դուք չեք կարող բացատրել, կստանաք հուշում և կօրհնվեք։ Քանի որ Տերը խոստացել է. «Ես կասեմ քեզ . . . քո սրտում, Սուրբ Հոգով, որը կիջնի քո վրա . . .» (ՎևՈւ 8.2)։

Աղոթեք և դուք կիմանաք, որ Աստված լսում և պատասխանում է աղոթքներին: Միշտ չէ, որ նա կցանկանա պատասխանել, բայց երբ տարիներն անցնեն, մենք կհասկանանք, որ ինչպես արևածագն է անտարակուսելի, այնպես էլ Նա է լսում ու պատասխանում:[24]

Պահպանեք այդ խոնարհությունը, որը կստիպի ձեզ ծնկի իջնել աղոթքով՝ որպես Նրա զորության և բարության հասատում: Նա չի լքի ձեզ: Նա կլսի ձեր աղոթքները: Նա կպատասխանի ձեր աղոթքներին: Գիշերվա լռության մեջ դուք կլսեք Նրա Հոգու շշուկները, որոնք կուղղորդեն ձեզ վշտի ու կարիքի ժամանակ: Այդպիսի ժամանակները կգան ձեզ համար, ինչպես որ այցելում են բոլորին: Հավատացեք Աստծուն, և Նա երբեք չի հիասթափեցնի ձեզ: Նա երբեք չի շրջվի ձեզանից:[25]

Թող որ ձեր Երկնային Հայրը միշտ լինի ձեր ընկերը, ում դուք կարող եք դիմել աղոթքով:[26]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Ինչպե՞ս է աղոթքն օգնել ձեզ ավելի մոտենալ ձեր Երկնային Հորը: Վերանայեք Նախագահ Հինքլիի խորհուրդն այն մասին, թե ինչ ընդգրկել աղոթքի մեջ (տես բաժին 1): Ե՞րբ է աղոթքն օգնել ձեզ գտնել «ավելի մեծ իմաստություն»: Ե՞րբ է աղոթքը ձեզ «հանգստություն ու սփոփանք» բերել: Ինչո՞ւ պիտի որոշ աղոթքներ լինեն «գոհության զրույցներ»:
- Խորհեք յուրաքանչյուր օրհնության մասին, որն, ըստ Նախագահ Հինքլիի, կարող է գալ ընտանեկան աղոթքի միջոցով (տես բաժին 2): Ինչպե՞ս է ձեր ընտանիքն օրհնվել՝ միասին աղոթելով: Ի՞նչն է խոչընդոտում հետևողական ընտանեկան աղոթքին: Ընտանիքի անդամներն ինչպե՞ս կարող են աշխատել միասին, որպեսզի հաղթահարեն այս խոչընդոտները:
- Բաժին 3-ում տրված Նախագահ Հինքլիի ուսմունքներն ինչպե՞ս կարող են օգնել մեզ մեր աղոթքներն ավելի իմաստալից դարձնել: Ըստ ձեր սովորածի, Տերն ինչպե՞ս է պատասխանում մեր աղոթքներին: Աղոթքն ինչի՞ շնորհիվ զորություն ունի մեզ «ընկերակից դարձնել Աստծո հետ»:

Սոնչվող սուրբ գրություններ

Մատթեոս 6.5–15, Ղուկաս 18.9–18, 2 Նեփի 32.8–9, Ալմա 34.17–28, 37.36–37, 3 Նեփի 18.15–25, ՎևՈւ 19.28

Օգնություն ուսումնասիրողին

«Վերանայեք՝ արագ կարդալով գիրքը, բաժինը, հատվածը կամ վերանայելով վերնագրերը: Փորձեք հասկանալ ենթատեքստը և նախապատմությունը» (*Քարոզիր Իմ Ավետարանը* [2004], 23): Կարդացեք որևէ գլուխ կամ հատված ավելի քան մեկ անգամ, որպեսզի կարողանաք ավելի խորը հասկանալ այն: Երբ այդպես վարվեք, կհայտնաբերեք հիմնարար գաղափարներ:

Հղումներ

1. "Stand True and Faithful," *Ensign,* May 1996, 94.
2. Robert D. Hales, in Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 444.
3. Richard G. Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 171.
4. Marjorie Pay Hinckley, in Sheri L. Dew, *Go Forward with Faith,* 171.
5. *Teachings of Gordon B. Hinckley,* (1997), 469.
6. *Teachings of Gordon B. Hinckley,* 470.
7. "Dedication of Gordon B. Hinckley Building" (Brigham Young University–Idaho, Oct. 22, 2002), byui.edu/Presentations/transcripts/devotionals/2002_10_22_hinckley.htm; accessed Sept. 21, 2015.
8. "Pillars of Truth," *Ensign,* Jan. 1994, 2.
9. "Stand True and Faithful," 93.
10. "An Humble and a Contrite Heart," *Ensign,* Nov. 2000, 89.
11. "The Fabric of Faith and Testimony," *Ensign,* Nov. 1995, 89.
12. "Benediction," *Ensign* or *Liahona,* May 2003, 99–100.
13. *Teachings of Gordon B. Hinckley,* 638.
14. "The Blessings of Family Prayer," *Ensign,* Feb. 1991, 2, 4–5.
15. In Conference Report, Apr. 1963, 128.
16. "The Blessings of Family Prayer," 5.
17. "Four Simple Things to Help Our Families and Our Nations," *Ensign,* Sept. 1996, 8.
18. *Teachings of Gordon B. Hinckley* 217.
19. "The Blessings of Family Prayer," 5.
20. "Stay on the High Road," *Ensign* or *Liahona,* May 2004, 114.
21. *Teachings of Gordon B. Hinckley,* 469.
22. *Teachings of Gordon B. Hinckley,* 469.
23. Fear Not; Only Believe," *New Era,* Jan. 2000, 6; bold and italics removed.
24. "Watch the Switches in Your Life," *Ensign,* Jan. 1973, 93.
25. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 346.
26. "Born of God," *Ensign,* July 1991, 100.

Հոգու հուշումները

«Ես աղերսում եմ, որ մենք անընդհատ որոնենք Տիրոջ ոգեշնչումը և նրա Սուրբ Հոգու ընկերակցությունը՝ օրհնելու մեզ մեր ջանքերը բարձր պահելու հոգևոր մակարդակում»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

1995 թվականի հունիսի 24-ին Նախագահ Գորդոն Բ. Հինքլին խոսեց նոր միսիայի նախագահների և նրանց կանանց ժողովում, խորհուրդ տալով նրանց՝ ինչպես առաջնորդվել հաջորդ երեք տարիների ծառայության ընթացքում: Նա պատմեց այն հրահանգի մասին, որ ինքն էր ստացել, երբ Նախագահ Հարոլդ Բ. Լին, ով այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, նրան կարգեց որպես ցցի նախագահ.

«Ես հիշում եմ միայն մեկ բան,- ասաց նա,- Լսիր Հոգու շշուկներին գիշերվա կեսին և արձագանքիր այդ շշուկներին»: Ես չգիտեմ, թե ինչու է հայտնությունը երբեմն գալիս գիշերը, բայց այն գալիս է: Իհարկե, դա գալիս է նաև օրվա ընթացքում: Բայց լսեք Հոգու շշուկներին, որը հայտնության պարգևն է, որի իրավունքը դուք ունեք»:[1]

Նա շարունակեց այդ հրահանգավորումը՝ անդրադառնալով իր փորձառություններին. «Տերը խոսեց հանդարտ: . . . Գիշերվա կեսին գաղափարներ եկան միտքս, որոնք կարծում եմ մարգարեական էին իրենց բնույթով»:[2] Օրինակ, 1992 թվականի հուլիսին նա Հոնգ Կոնգում էր Եկեղեցու մյուս ղեկավարների հետ, որոնելով վայր՝ տաճարը կառուցելու համար: Նա մի գիշեր գնաց քնելու՝ մի հարցի վերաբերյալ առանց որոշում ընդունելու : Հետո Հոգու հուշումները վաղ արթնացրին նրան հաջորդ առավոտ:

Հոնգ Կոնգ Չինաստան Տաճարը

«Միտքս եկավ մի շատ հետաքրքիր բան,- գրել է նա իր օրագրում: Իմ սեփական ականջներով ես ձայն չլսեցի: Բայց միտքս եկավ Հոգու ձայնը: Այն ասաց. «Ինչո՞ւ ես անհանգստանում դրա վերաբերյալ: Դուք ունեք մի հիանալի սեփականություն, որտեղ միսիայի տունն է գտնվում և փոքրիկ ժողովատունը: Դրանք Քոուլունի հենց սրտում են՝ լավագույն փոխադրամիջոցներով մի տեղում: . . . Կառուցեք [մի քանի] հարկերով մի շենք: Այն կարող է ներառել մի ժողովատուն և դասասենյակներ առաջին երկու հարկերում և տաճար վերին երկու կամ երեք հարկերում»: Այդ հայտնությունը ստանալուց հետո Նախագահ Հինքլին ասաց, որ «հանգստացավ և ետ գնաց քնելու»:[3]

Այսօր Քոուլունում՝ Հոնգ Կոնգի խիտ բնակեցված մասում, մի շենք է կանգնած, որտեղ մի ժամանակ կանգնած էին մի ժողովատուն և միսիայի տունը: Այն շենքը, որտեղ գտնվում է ժողովատուն, միսիայի տուն և սրբազան տաճար, Հոգու շշուկների վկայությունն է Աստծո մարգարեին:

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Սուրբ Հոգին Մխիթարիչն է և ճշմարտության մասին վկայողը:

Սուրբ Հոգին կանգնում է որպես Աստվածության երրորդ անդամ՝ Մխիթարիչը, որը խոստացված է Փրկիչի կողմից, ով կուսուցաներ Իր հետևորդներին բոլոր բաները և կբերեր դրանք նրանց հիշողության մեջ այն, ինչ Նա ասել էր նրանց (տես Հովհաննես 14.26):[4]

Սուրբ Հոգին վկայում է մեր սրտերում Հոր և Որդու մասին:[5]

Իմ վկայությունը [Հիսուս Քրիստոսի] մասին գալիս է Սուրբ Հոգու զորությամբ: Դա սրբազան և հիանալի պարգև է, որը բերվում է հայտնությամբ `Աստվածության երրորդ անդամի կողմից:[6]

Սուրբ Հոգին Ճշմարտության մասին Վկայողն է, ով կարող է ուսուցանել [մեզ] այն, ինչը [մենք] չենք կարող ուսուցանել մեկս մյուսին: Մորոնիի այդ մեծ և մարտահրավեր նետող խոսքերում Մորմոնի Գրքի ճշմարտության մասին գիտելիք է խոստացվում «Սուրբ Հոգու զորությամբ»: Այնուհետև Մորոնին հայտարարում

է. «Եվ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.4–5)։

Ես հավատում եմ, որ այս զորությունը, այս պարգևն այսօր մատչելի է մեզ։[7]

2

Մենք Սուրբ Հոգու կարիքն ունենք, որը կառաջնորդի մեզ ծառայության մեջ տանը և Եկեղեցում։

Չկա ավելի մեծ օրհնություն, որը կարող է գալ մեր կյանք, քան Սուրբ Հոգու պարգևը՝ Սուրբ Հոգու ընկերակցությունը, որը կառաջնորդի մեզ, կպաշտպանի և կօրհնի մեզ, որպես կրակի սյուն կգնա մեր առջևից և կառաջնորդի մեզ արդարակեցության և ճշմարտության ուղիներում։ Աստվածության երրորդ անդամի առաջնորդող զորությունը կարող է լինել մերը, եթե մենք Նրան արժանի կյանքով ապրենք։[8]

Մենք Սուրբ Հոգու կարիքն ունենք մեր բազմաթիվ վարչական պարտականություններում։ Մենք նրա կարիքն ունենք, երբ ուսուցանում ենք ավետարանը մեր դասարաններում և աշխարհին։ Մենք նրա կարիքն ունենք մեր ընտանիքները կառավարելիս և ուսուցանելիս։

Երբ մենք ուղղորդում ենք և ուսուցանում այդ Հոգու ազդեցության ներքո, մենք կբերենք հոգևորություն նրանց կյանք, ում համար մենք պատասխանատու ենք։ . . .

. . . Քաղցր են այն ուսուցման պտուղները, որոնք արվում են Սուրբ Հոգու ոգեշնչման ներքո։ Նրանք կերակրում են ոգին և սնուցում հոգին։

Կարելի՞ է տալ մի հատուկ խորհուրդծնողներին, ովքեր կանգնած են որպես ընտանիքների ղեկավարներ. մենք կարիք ունենք Սուրբ Հոգու ուղղորդմանը այդ նուրբ և վիթխարի խնդրում, որը մերն է՝ մեր օջախների հոգևորությունը զորացնելիս։[9]

Ականջ դրեք Հոգու հուշումներին։ Եղեք խոնարհ։ Դուք զուցե առաջնորդվեք դեպի որևէ մեկը Տիրոջ ձեռքով ձեր ոգու, ձեր վերաբերմունքի, ձեր զգացմունքների, ձեր համեստության շնորհիվ։[10]

3

Հայտնությունը գրեթե միշտ գալիս է մեզ մեղմ, բարակ ձայնի միջոցով՝ Հոգու շշուկով:

Ժամանակ առ ժամանակ ես հարցազրույց եմ ունեցել մամուլի ներկայացուցիչների հետ: Գրեթե միշտ նրանք հարցրել են.«Ինչպե՞ս է հայտնությունը գալիս Եկեղեցու մարգարեին»:

Ես պատասխանել եմ, որ այժմ էլ այն գալիս է այնպես , ինչպես եկել է անցյալում: Սրա վերաբերյալ մամուլի այդ ներկայացուցիչներին ես պատմեցի Եղիայի փորձառության մասին, որը հետևել էր Բահաղի քահանաների հետ իր մրցույթին.

«Եվ ահա Տէրը անց էր կենում. եւ մի մեծ եւ զօրաւոր հողմ պատառեց սարերը եւ կոտրատեց ապառաժները Տիրոջ առաջին. բայց Տէրն այն հողմի մէջ չէր:Եւ հողմից յետոյ երկրաշարժ եղաւ, բայց Տէրը երկրաշարժի մէջ չէր:

Եւ երկրաշարժից յետոյ կրակ, բայց Տէրը կրակի մէջ չէր. եւ կրակից յետոյ մի մեղմ ու բարակ ձայն» (Գ Թագավորաց 19.11–12):

Այդ կերպ է գործում հայտնությունը: Կա մի մեղմ, բարակ ձայն: Այն գալիս է ի պատասխան աղոթքին: Այն գալիս է Հոգու շշուկների միջոցով: Այն կարող է գալ գիշերվա լռության մեջ:

Արդյոք ես որևէ հարց ունե՞մ դրա վերաբերյալ: Ոչ մի հարց: Ես տեսել եմ դրա շատ օրինակներ:[11]

Այսպիսին է գրեթե միշտ եղել Աստծո խոսքը, երբ այն եկել է մեզ ոչ թե շեփորներով, ոչ թե կրթյալների խորհրդարաններից, այլ հայտնության մեղմ բարակ ձայնով: Լսելով նրանց, ովքեր զուր իմաստություն են որոնում և հայտարարում բարձրաձայն, որ գտել են բալասանը [կամ բժշկությունը] աշխարհի հիվանդությունների համար, ուզում ես պատասխանել Սաղմոսողի բառերով. «Դադարեցեք եւ ճանաչեցէք, որ ես եմ Աստված. . . .» (Սաղ. 46.10) և Փրկիչի հետ, «Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ» (Մատ. 11.15:)[12]

4

Հոգու բաները լուսավորում են, շենացնում և վեհացնում մեզ:

Ինչպե՞ս ենք մենք իմանում Հոգու բաները: Ինչպե՞ս ենք իմանում, թե դա Աստծուց է: Դրա պտուղներով: Եթե այն տանում է դեպի աճ և զարգացում, եթե այն տանում է դեպի հավատքի և վկայության, եթե այն տանում դեպի գործեր կատարելու ավելի լավ ուղի, եթե այն տանում դեպի բարեպաշտություն, ապա դա Աստծուց է: Եթե այն տապալում է մեզ, եթե այն տանում է դեպի խավար, եթե այն շփոթեցնում է մեզ և անհանգստացնում, եթե այն տանում է դեպի անհավատություն, ապա դա դևից է:[13]

Դուք ճանաչում եք Հոգու հուշումները Հոգու պտուղների միջոցով, այն ինչ լուսավորում է, այն ինչ շենացնում է, այն ինչ լավատեսական է, հաստատական, վեհացնող և տանում է մեզ դեպի ավելի լավ մտքերի, ավելի լավ խոսքերի և ավելի լավ գործերի, Աստծո Հոգուց է: Այն, ինչ տապալում է այն, ինչ տանում է մեզ դեպի արգելված ուղիներ, դա հակառակորդից է: Կարծում եմ դա այնքան հասարակ ուայնքան պարզ է:[14]

Մի գիտնական մի անգամ արտահայտեց այն տեսակետը, որ Եկեղեցին թշնամի է ինտելեկտուալիզմին: Եթե նա դրանով նկատի ուներ փիլիսոփայության այն ճյուղը, որն ուսուցանում է «այն վարդապետությունը, որ գիտելիքը ամբողջությամբ կամ գլխավորապես սկիզբ է առնում զուտ բանականությունից», «որ բանականությունը իրականության վերջնական սկզբունքն է», այդ դեպքում, այո, մենք դեմ ենք այդպիսի նեղ մեկնաբանությանը, երբ այն կիրառվում է կրոնի հանդեպ: (Quotations from the *Random House Dictionary of the English Language,* p. 738.) Այդպիսի մեկնաբանությունը բացառում է Սուրբ Հոգու զորությունը [մեզ] հետ և մեր միջոցով խոսելուն:

Իհարկե, մենք հավատում ենք մտքի մշակմանը, բայց բանականությունը գիտելիքի միակ աղբյուրը չէ: Կա մի խոստում տրված Ամենակարողի ոգեշնչմամբ, որը ձևակերպված է այս գեղեցիկ խոսքերով. «Աստված ձեզ գիտելիք կտա իր Սուրբ Հոգու միջոցով, այո, Սուրբ Հոգու անասելի պարգևով, որը հայտնի չի դարձվել աշխարհի սկզբից մինչև հիմա» (ՎևՈ 121.26:)

«Աստծո բաները հասկացվում են Աստծո Հոգու միջոցով: Այդ Հոգին իրական է:»

Հումանիստները, ովքեր քննադատում են Տիրոջ աշխատանքը, այսպես կոչված ինտելեկտուալները, ովքեր նսեմացնում են, խոսում են միայն հոգևոր դրսևորումներից անտեղյակության պատճառով: Նրանք չեն լսել Հոգու ձայնը: Նրանք չեն լսել այն, որովհետև նրանք չեն ձգտել դրան և չեն պատրաստել իրենց՝ դրան արժանի լինելու համար: Ապա, ենթադրելով, որ գիտելիքը գալիս է միայն բանականությունից և մտքի աշխատանքից, նրանք ժխտում են այն, ինչ գալիս է Սուրբ Հոգու զորությամբ:

Աստծո բաները հասկացվում են Աստծո Հոգու միջոցով: Այդ Հոգին իրական է: Նրանց համար, ովքեր զգացել են նրա գործունեությունը, այդպես ձեռք բերված գիտելիքը այնքան իրական է, ինչպես այն, ինչ ձեռք է բերվում հինգ զգայարանների գործունեության միջոցով: Ես վկայում եմ սրա մասին: Եվ ես վստահ եմ, որ Եկեղեցու անդամների մեծ մասը կարող են վկայել այդ մասին: Ես հորդորում եմ մեզանից յուրաքանչյուրին շարունակել զարգացնել ներդաշնակությունը սրտի և Հոգու հետ: Եթե մենք անենք այդպես, մեր կյանքը կհարստանա: Մենք կզգանք ազգակցական կապ Աստծո՝ մեր Հավերժական

Հոր հետ: Մենք կճաշակենք ուրախության քաղցրություն, որը չի կարող գալ այլ ուղիով:

Եկեք չընկնենք աշխարհի սոփեստության թակարդը, որը մեծ մասամբ բացասական է, և որն այնքան հաճախ դառը պտուղ է տալիս: Եկեք քայլենք հավատքով ապագայի հանդեպ, խոսելով հաստատապես և մշակելով վստահության վերաբերմունք: Երբ սա անենք, մեր ուժը կտա ուժ ուրիշներին:[15]

Ես աղերսում եմ, որ մենք մշտապես ձգտենք Տիրոջ ոգեշնչմանը և Նրա Սուրբ Հոգու ընկերակցությանը, որ օրհնեն մեզ բարձր հոգևոր մակարդակի վրա պահել մեր ջանքերը: Այդ աղոթքները չեն մնա անպատասխան:[16]

5

Սուրբ Հոգին կլինի մեր մշտական ուղեկիցը, երբ մենք ապրենք այս օրհնության համար:

Տերն ասել է, եթե մենք պահենք պատվիրանները, «Սուրբ Հոգին կլինի [մեր] մշտական ընկերը»՝ (ՎԿՈ 121.46) վեր բարձրացնելու, ուսուցանելու, առաջնորդելու, մխիթարելու և հաստատելու մեզ: Այս ընկերակցությունը ձեռք բերելու համար մենք պետք է խնդրենք Նրա համար, ապրենք Նրա համար, հավատարիմ լինենք Տիրոջը:[17]

«Ինչպե՞ս եք պահում Տիրոջ Հոգին ձեզ հետ ամբողջ ժամանակ»: Իհարկե, դուք ապրում եք դրան արժանի, դուք ապրում եք Տիրոջ Հոգուն արժանի: Դա այն է, ինչ դուք անում եք: Եվ դուք կունենանք այն: . . . Ուղղակի ճիշտ ապրեք: Հեռու մնացեք թմրադեղերից: Հեռու մնացեք պոռնոգրաֆիկ նյութերի դիտումից: Հեռու մնացեք այս բաներից, որոնք ձեզ տապալում են: Գրքերը, որ կարդում եք, ամսագրերը, որ ընթերցում եք, տեսաֆիլմերը, հեռուստածրագրերը, ներկայացումները, որոնք դիտում եք, ազդեցություն են ունենում և կունենան ձեր վրա, եթե դուք ենթարկվեք դրանց գրավչությանը, որոնք նախատեսված են ձեզ աղքատացնելու և ինչ-որ մեկին հարստացնելու համար: Հեռու մնացեք դրանցից:[18]

Ամեն կիրակի դուք նորոգում եք ձեր խոստումը և ուխտը՝ վերցնելով ձեր վրա Տեր Հիսուս Քրիստոսի անունը: Դուք երբևէ մտածե՞լ եք, թե որքան կարևոր է դա, թե ինչ է նշանակում ձեր վրա վերցնել Տեր Հիսուս Քրիստոսի անունը երդմամբ և խոստումով՝

Նրա պատվիրանները պահելու համար: Եվ Նա երդում ու խոստում է տալիս ձեզ, որ Նա կտա ձեզ Իր Հոգին՝ ձեզ հետ լինելու համար: Ի՜նչ հրաշալի բան է դա:[19]

Ինչպիսի՞ մեծ օրհնություն է ունենալ Աստվածության անդամի սպասավորող ազդեցությունը, ստանալով այդ օրհնությունը նրանց ձեռքերով, ովքեր գործում էին աստվածային իշխանությամբ: Եթե մենք շարունակենք քայլել առաքինությամբ, մենք կվայելենք Տիրոջ կողմից տրված խոստման իրականացումը, երբ Նա ասել է. «Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը, և քո գավազանը կլինի արդարության ու ճշմարտության անփոփոխ գավազան. և քո տիրապետությունը կլինի հավիտենական տիրապետություն և առանց հարկադրանքի կհոսի դեպի քեզ հավիտյանս հավիտենից»: (ՎևՈւ 121.46:)[20]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Մենք ինչո՞ւ Սուրբ Հոգու կարիքն ունենք: (Տես բաժիններ 1-ը և 2-ը:) Ե՞րբ եք դուք զգացել, որ Սուրբ Հոգին ուսուցանում է և առաջնորդում ձեզ: Ի՞նչ եք դուք սովորել այդ փորձառություններից:
- Ի՞նչ կարող ենք սովորել Մարգարե Հինքլիի բացատրությունից այն մասին, թե ինչպես է հայտնություն գալիս մարգարեին: (Տես բաժին 3:) Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Սուրբ Հոգին սովորաբար հաղորդակցվում է «մեղմ և բարակ ձայնով»: Ի՞նչ եք դուք սովորել ձեր փորձառություններից Սուրբ Հոգուց եկած հաղորդակցությունները ճանաչելու համար:
- Վերանայեք «Հոգու պտուղները», որոնք Նախագահ Հինքլին ամփոփում է բաժին 4-ում: Ինչպե՞ս կարող են այս ուսմունքներն օգնել մեզ ճանաչել Հոգու ազդեցությունը: Որո՞նք են «բանականությունը. . . գիտելիքի միակ աղբյուրն է» գաղափարին հավատալու վտանգները: Ինչպիսի՞ փորձառություններ եք ունեցել հոգևոր գիտելիք ձեռք բերելիս:
- Որո՞նք են ձեր զգացումները, երբ բաժին 5-ում խորհում եք Սուրբ Հոգու ընկերակցության վերաբերյալ Նախագահ

Հինքլիի ուսմունքների մասին: Ինչպե՞ս եք դուք օրհնվել Սուրբ Հոգու կողմից:

Սոնչվող սուրբ գրություններ

Ա Կորնթացիս 2.9–14; 1 Նեփի 10.17; 2 Նեփի 31.17–18; Մոսիա 3.19; Մորոնի 8.25–26; ՎևՈւ 11.12–14

Օգնություն ուսուցչին

«Երբ մենք սիրում ենք նրանց, ում ուսուցանում ենք, մենք աղոթում ենք նրանցից յուրաքանչյուրի համար: Մենք անում ենք այն ամենը, ինչ կարող ենք՝ իմանալու նրանց հետաքրքրությունները, ձեռքբերումները, կարիքները և մտահոգությունները: Մենք փորձում ենք բավարարել նրանց կարիքները, նույնիսկ, եթե դա ավելի շատ ժամանակ և ջանք է պահանջում: Մենք նկատում ենք, երբ նրանք բացակայում են և ճանաչում նրանց, երբ նրանք ներկա են: Մենք օգնություն ենք առաջարկում, երբ դրա կարիքը կա» (*Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում* [1999], 32):

Հղումներ

1. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 638.
2. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1: 1995–1999* (2005), 441.
3. In Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 481.
4. "The Father, Son, and Holy Ghost," *Ensign,* Nov. 1986, 51.
5. "Latter-day Counsel: Excerpts from Recent Addresses of President Gordon B. Hinckley," *Ensign,* July 1999, 72.
6. "The Father, Son, and Holy Ghost," 51.
7. "The Father, Son, and Holy Ghost," 51.
8. *Teachings of Gordon B. Hinckley,* 259.
9. "Feed the Spirit, Nourish the Soul," *Ensign,* Oct. 1998, 2, 4–5.
10. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1,* 440.
11. "The Quorum of the First Presidency," *Ensign,* Dec. 2005, 49.
12. In Conference Report, Apr. 1964, 38–39.
13. "Inspirational Thoughts," *Ensign,* July 1998, 5.
14. *Teachings of Gordon B. Hinckley,* 261.
15. "The Continuing Pursuit of Truth," *Ensign,* Apr. 1986, 6.
16. "Feed the Spirit, Nourish the Soul," 2.
17. "Living with Our Convictions," *Ensign,* Sept. 2001, 5.
18. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1,* 377–78.
19. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1,* 319.
20. "Priesthood Restoration," *Ensign,* Oct. 1988, 72.

Մենք ապավինում ենք Քրիստոսին

«Մենք հավատում ենք Քրիստոսին: Մենք ուսուցանում ենք Քրիստոսի մասին: Մենք ապավինում ենք Քրիստոսին: Նա մեր Քավիչն է, մեր Տերն ու մեր Փրկիչը»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

1975 թվականի ապրիլի գերագույն համաժողովի ժամանակ Երեց Գորդոն Բ. Հինքլին՝ այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, կիսվեց հետևյալ փորձառությամբ:

«Վերջերս մենք անցկացրինք բաց դռների օրեր [Մեսա] Արիզոնա Տաճարում: Այդ կառույցի ամբողջական վերանորոգմանը հաջորդող ժամանակահատվածում մոտ կես միլիոն մարդ տեսան տաճարի ներսի գեղեցկությունը: Բացման հենց առաջին օրը, որպես հատուկ հյուրեր, հրավիրված էին այլ հավատների հոգևորականներ, և հարյուրավորներն արձագանքեցին այդ հրավերին: Ես պատիվ ունեցա խոսել նրանց հետ և պատասխանել նրանց հարցերին՝ որպես նրանց շրջագայությունների ամփոփում: Ես ասացի նրանց, որ ուրախ կլինենք պատասխանել նրանց յուրաքանչյուր հարցին: Շատերը հարցեր ունեին: Նրանց թվում կար մեկը, ով բողոքական քահանա էր:

Նա ասաց. «Ես շրջեցի այս ամբողջ կառույցով, տեսա այս տաճարը, որն իր ճակատին կրում է Հիսուս Քրիստոսի անունը, բայց ոչ մի տեղ չտեսա խաչ, որը քրիստոնեության խորհրդանիշն է: Ես ձեր շենքերը տեսել եմ նաև ուրիշ տեղերում և նորից նկատել եմ խաչի բացակայությունը: Ինչո՞ւ է դա այդպես, երբ դուք ասում եք, որ հավատում եք Հիսուս Քրիստոսին»:

Ես պատասխանեցի. «Ես չէի ցանկանա վիրավորել իմ քրիստոնյա եղբայրներից որևէ մեկին, որ օգտագործում են խաչը

«Մեր հավատի համար բացարձակապես առաջնային է Հիսուս Քրիստոսի՝ որպես Աստծո Որդու մասին վկայությունը: . . . Նա գլխավոր անկյունաքարն է այն Եկեղեցու, որը կրում է Նրա անունը»:

իրենց տաճարների զանգակատների վրա և ժամատների խորաններում, ովքեր կրում են այն իրենց զգեստների վրա և դրոշմում իրենց գրքերի և այլ գրականության վրա: Բայց մեզ համար խաչը մեռնող Քրիստոսի նշանն է, մինչ մեր ուղերձը կենդանի Քրիստոսի հռչակումն է»:

Այնուհետև նա հարցրեց. «Եթե դուք չեք օգտագործում խաչը, ապա ո՞րն է ձեր կրոնի խորհրդանիշը»:

Ես պատասխանեցի, որ մեր ժողովրդի կյանքը պիտի դառնա մեր հավատի միակ իմաստալից արտահայտությունը և հետևաբար մեր երկրպագության խորհրդանիշը: . . .

. . . Ոչ մի նշան, ոչ մի արվեստի գործ, ոչ մի պատկեր բավարար չէ՝ արտահայտելու Ապրող Քրիստոսի փառքն ու հրաշքը: Նա հայտնեց մեզ, թե որը պիտի լինի այդ խորհրդանիշը, երբ ասաց. «Եթե սիրում եք ինձ, պահեք իմ պատվիրանները»: (Հովհաննես 14.15:)

Որպես Նրա հետևորդներ, դրսևորելով անազնիվ, տգետ, անբարեկիրթ վարքագիծ, մենք կաղոտացնենք նրա պատկերը: Իսկ եթե լինենք բարի, գթասիրտ և առատաձեռն, ավելի պայծառ կփայլեցնենք նրա խորհրդանիշը, ում անունը մենք վերցրել ենք մեզ վրա:

Եվ այսպիսով, մեր կյանքը պիտի դառնա Կենդանի Քրիստոսի՝ Կենդանի Աստծո Հավերժական Որդու մասին մեր վկայության հայտարարության խորհրդանիշն ու իմաստալից արտահայտությունը:

Իմ եղբայրներ և քույրեր, սա այնքան պարզ է և այնքան խորիմաստ, ու մենք երբեք չպիտի մոռանանք այդ»:[1]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Հիսուս Քրիստոսը Կենդանի Աստծո Կենդանի Որդին է:

Մեր հավատի համար բացարձակապես առաջնային է Հիսուս Քրիստոսի՝ որպես Աստծո Որդու մասին վկայությունը: . . . Նա գլխավոր անկյունաքարն է այն Եկեղեցու, որը կրում է Նրա անունը:[2]

Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին: Մենք ուսուցանում ենք Քրիստոսի մասին: Մենք ապավինում ենք Քրիստոսին: Նա մեր Քավիչն է, մեր Տերը և մեր Փրկիչը:[3]

Երկրային ծառայություն

Նա, ով Աստծո Որդին էր, Միածին Որդին, թողեց Իր Հոր սելեստիալ պալատը, որպեսզի դառնա մահկանացու: Նրա ծննդյան ժամանակ հրեշտակներն ու մոգերը եկան պարգևներ շնորհելու: Նա մեծացավ ինչպես Գալիլեայի Նազարեթ քաղաքի մյուս տղաները: Այնտեղ Նա «զարգանում էր իմաստութիւնով և հասակով, և շնորհքով՝ Աստուծոյ և մարդկանց մոտ» (Ղուկաս 2.52):

Մարիամի և Հովսեփի հետ Նա այցելեց Երուսաղեմ, երբ 12 տարեկան էր: Տան ճանապարհին նրանք կորցրին Հիսուսին: Վերադառնալով Երուսաղեմ, նրանք Հիսուսին գտան տաճարում՝ վարդապետների հետ զրուցելիս: Երբ Մարիամը կշտամբեց Նրան իրենց հետ չգնալու համար, Նա պատասխանեց. «Դուք չգիտեի՞ք, թե պետք է, որ ես իմ Հոր տանը լինեմ» (Ղուկասի 2.49): Նրա բառերը նախազգուշացնում էին Իր ապագա ծառայության մասին:

Այդ ծառայությունը սկսվեց Նրա մկրտության հետ՝ Հորդանան գետում Իր զարմիկ Հովհաննես Մկրտիչի ձեռքով: Երբ նա դուրս եկավ ջրից, Սուրբ Հոգին եկավ և աղավնու պես իջավ նրա վրա: Եվ մի ձայն երկնքից ասաց. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցի» (Մատթեոսի 3.17): Այդ հայտարարությունը դարձավ Նրա աստվածության հաստատումը:

Նա ծոմ պահեց 40 օր, գայթակղվեց սատանայի կողմից, որը ձգտում էր Նրանից վերցնել աստվածությամբ նշանակված Նրա առաքելությունը: Իր հակառակորդի հրավերին Նա պատասխանեց. «Մի փորձիր Տիրոջը՝ քո Աստծուն» (Մատթեոս 4:7), նորից հայտարարելով Իր՝ Աստծո որդի լինելու փաստը:

Նա քայլեց Պաղեստինի փոշոտ ճամփաներով: Նա չուներ Իր սեփական տունը, ոչ էլ մի տեղ, որ գլուխը դներ: Նրա պատգամը խաղաղության ավետարանն էր: Նրա ուսմունքները վեհանձնության ու սիրո ուսմունքներ էին: «Եւ ով որ ուզէ քեզ հետ դատ վարել ու քո շապիկն առնել, քո բաճկոնն էլ թող նրա մոտ» (Մատթեոս 5.40):

Նա ուսուցանում էր առակներով: Նա գործեց հրաշքներ, որոնց նմանը երբեք չէին կատարվել նախկինում և չէին կատարվելու դրանից հետո: Նա բժշկեց նրանց, ովքեր երկար ժամանակ հիվանդ էին եղել: Նա օգնեց կույրերին տեսնել, խուլերին՝ լսել, կաղերին՝ քայլել: Նա կենդանացրեց մահացածներին, և նրանք նորից ապրեցին՝փառաբանելու Նրան: Անշուշտ որևէ մարդ նախկինում երբեք այդպես չէր վարվել:

Քիչ մարդիկ հետևեցին Նրան, բայց շատերն էին ատում Նրան: Նա խոսում էր դպիրների ու փարիսեցիների մասին՝ որպես կեղծավորների, որպես ծեփած գերեզմանների մասին: Նրանք դավադրություն էին նյութում Նրա դեմ: Նա դրամափոխներին դուրս քշեց Տիրոջ տնից: Դրամափոխներն առանց երկմտելու միացան նրանց, ովքեր ծրագրում էին ոչնչացնել Նրան: Բայց Նա ապստամբ չէր: Նա «ման եկաւ բարի անելով» (Գործք 10.38):

Մի՞թե այսքանը բավական չէր, որ Նա անմահանար: Մի՞թե բավական չէր, որ Նրա անունը դասվեր այն մեծ մարդկանց անունների թվին և նույնիսկ բարձր նրանցից, ովքեր քայլել են այս երկրի վրա, և ում անունները հիշվել են իրենց ասած խոսքերի և կատարած գործերի համար: Անշուշտ, Նա կդասվեր բոլոր ժամանակների մեծագույն մարգարեների շարքում:

Բայց այս ամենը բավարար չէր Ամենազորի Որդու համար: Դա նախաբանն էր այն մեծ գործերի, որոնք հետո պիտի գային: Դրանք եկան տարօրինակ ու սարսափելի ձևով:[4]

Ձերբակալություն, խաչելություն և մահ

Նրան դավաճանեցին, ձերբակալեցին, դատապարտեցին մահվան, որպեսզի Նա մահանար խաչելության սոսկալի չարչարանքներով: Նրա կենդանի մարմինը գամվեց փայտե խաչին: Նրա կյանքը դանդաղ մարում էր անասելի ցավերի մեջ: Նա, մինչ շնչում էր,աղաղակեց. «Հայր, թողիր դորանց. որովհետև չգիտեն թէ ինչ են անում» (Ղուկասի 23.34):

Երբ Նա ավանդեց հոգին, երկիրը ցնցվեց: Հարյուրապետը, ով տեսել էր այդ, հանդիսավորությամբ հայտարարեց. «Ճշմարիտ, որ սա Աստուծոյ Որդին էր» (Մատթեոսի 27.54):

Նրանք, ովքեր սիրում էին Նրան, Նրա մարմինը հանեցին խաչից։ Նրանք հագցրին նրան ու տեղավորեցին նոր գերեզմանում։ . . .

Նրա ընկերները, հավանաբար, արտասվում էին։ Առաքյալները, ում Նա սիրում էր և կոչում էր Իր աստվածության վկաներ, արտասվում էին։ Կանայք, ովքեր սիրում էին Նրան, արտասվում էին։ Ոչ ոք չհասկացավ, թե Նա ինչ ասաց երրորդ օրը հարություն առնելու մասին։ Ի՞նչ կարող էին նրանք հասկանալ։ Այսպիսի բան նախկինում երբեք չէր պատահել։ Դա միանգամայն աննախադեպ էր։ Դա անհավատալի էր, նույնիսկ նրանց համար։

Նրանք հավանաբար ունեին ճնշվածության, հուսահատության ու թշվառության զգացում, երբ մտածում էին այն մասին, որ մահը վերցրեց իրենց Տիրոջը։[5]

Հարություն

Սակայն դա վերջը չէր։ Երրորդ օրը առավոտյան Մարիամ Մագդաղենացին և մյուս Մարիամը վերադարձան գերեզմանի մոտ։ Ի մեծ զարմանս նրանց, քարը գերեզմանից հեռու էր գլորված, իսկ գերեզմանը բաց էր։ Նրանք ուշադիր զննեցին ներսը։ Երկու արարածներ սպիտակ հագած նստել էին գերեզմանի երկու կողմերում։ Մի հրեշտակ հայտնվեց նրանց և ասաց. «Ի՞նչ եք կենդանին մեռելների մեջ որոնում։

Այստեղ չէ, այլ յարութիւն առաւ. յիշեցէք ինչպէս նա ձեզ հետ խօսեց, երբոր Գալիլեայումն էր,

Որ ասում էր, թե պետք է մարդի Որդին մեղաւոր մարդկանց ձեռը մատնուի՝ և խաչուի և երրորդ օրը յարութիւն առնէ» (Ղուկաս 24.5–7)։

Այս պարզ խոսքերը՝ «Նա այստեղ չէ, այլ յարութիւն առաւ», դարձել են գոյություն ունեցող ամբողջ գրականության ամենախորիմաստ խոսքերը։ Այդ խոսքերը դատարկ գերեզմանի հռչակումն են։ Դրանք իրականացումն են այն ամենի, ինչ Նա խոսել էր նորից հարության առնելու մասին։ Սրանք հաղթական պատասխանն են այն հարցին, որին բախվում է յուրաքանչյուր մարդ, կին և երեխա, ով երբևէ ծնվել է երկրի վրա։

Հարություն առած Տերը խոսեց Մարիամի հետ, իսկ Մարիամը պատասխանեց։ Նա տեսիլք չէր։ Դա երևակայություն չէր։ Նա

«Նրա պատգամը խաղաղության ավետարանն էր: Նրա ուսմունքները վեհանձնության և սիրո ուսմունքներ էին»:

իրական էր, որքանով Նա եղել էր մահկանացու կյանքում: Նա թույլ չտվեց նրան դիպչել իրեն: Նա դեռ չէր բարձրացել Իր Երկնային Հոր մոտ: Դա տեղի էր ունենալու շուտով: Ինչպիսի վերամիավորում պիտի լիներ այդ. գրկվել Հոր կողմից, ով սիրում էր Նրան և արտասվում Նրա համար Նրա հոգեվարքի ժամանակ:

Նա պիտի հայտնվեր երկու մարդկանց Էմմաուսի ճանապարհին: Նա պիտի զրուցեր և ճաշեր նրանց հետ: Նա պիտի հանդիպեր Իր Առաքյալներին փակ դռների ետևում և ուսուցաներ նրանց: Թովմասը ներկա չէր առաջին հնարավորության ժամանակ: Երկրորդ հնարավորության ժամանակ Տերը խնդրեց նրանց շոշափել Իր ձեռքերը և Իր կողը: Մեծագույն զարմանքով նա բացականչեց. «Ով իմ Տէրը, և ով իմ Աստուածը» (Հովհաննեսը 20.28): Մի [ուրիշ] անգամ Նա խոսեց 500 մարդու հետ: . . .

Եվ ահա մեկ այլ վկայություն: Սուրբ Գրքի այս ուղեկիցը՝ Մորմոնի Գիրքը, վկայում է, որ Նա հայտնվեց ոչ միայն Հին Աշխարհի մարդկանց, այլև Նոր Աշխարհի մարդկանց: Քանի որ մի անգամ նա հայտարարեց. «Եւ ուրիշ ոչխարներ էլ ունիմ,

որ այս գավիթիցը չեն, և նորանց էլ պետք է բերեմ. և իմ ձայնին կլսեն, և մի հոտ ու մի հովիվ կլինին» (Հովհաննես 10.16)։

Այս կիսագնդի մարդկանց Նա հայտնվեց Իր Հարությունից հետո։ Երբ Նա իջնում էր երկնքի ամպերի միջով, Հավերժական Հայր Աստծո ձայնը կրկին հանդիսավոր հռչակեց. «Ահա իմ Սիրելի Որդին, որից ես շատ գոհ եմ, որով ես փառավորեցի իմ անունը, լսե՛ք նրան» (3 Նեփի 11.7)։ . . .

Եվ եթե այս ամենը բավարար չէ, ահա Ջոզեֆ Սմիթի՝ այս տնտեսության մեծ մարգարեի հավաստի, վստահելի ու որոշակի վկայությունը։ Տղան գնաց իր տան մոտ գտնվող անտառը և աղոթեց՝ փնտրելով լույս և ըմբռնում։ Եվ այնտեղ երկու Անձնավորություն հայտնվեցին նրան, նրանից վեր՝ օդի մեջ կանգնած, ում պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր։ Նրանցից մեկը խոսեց նրա հետ, դիմելով նրան «անունով և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. *Սա է Իմ Սիրելի Որդին։ Լսի՛ր Նրան*» [Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17]։

Այս նույն Ջոզեֆը հայտարարեց հաջորդ հնարավորության դեպքում. «Եվ մենք տեսանք փառքը Որդու, Հոր աջ կողմում և ստացանք նրա լիությունից, . . .

Եվ արդ, բազմաթիվ վկայություններից հետո, որ տրվել են նրա մասին, սա է վկայությունը, ամենավերջինը, որ մենք տալիս ենք նրա մասին. Որ նա ապրո՛ւմ է»։ (ՎևՈ 76.20, 22)։[6]

Բոլոր նրանց համար, ովքեր, հնարավոր է, կասկածներ ունեն, ես կրկնում եմ այն բառերը, որոնք ասվեցին Թովմասին, երբ նա շոշափեց Տիրոջ վիրավոր ձեռքերը։ «Մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ» [Հովհաննես 20.27]։ Հավատացեք Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, ժամանակի և հավերժության մեջ ամենամեծ գործիչին։ Հավատացեք, որ նրա անզուգական կյանքը գնում էր ետ՝ նախքան աշխարհի կազմավորումը։ Հավատացեք, որ Նա էր Արարիչը այն երկրի, որի վրա ապրում ենք։ Հավատացեք, որ Նա Եհովան էր Հին Կտակարանում և Մեսիան էր Նոր Կտակարանում, որ Նա մահացավ ու հարություն առավ, այցելեց արևմտյան մայրցամաքները և ուսուցանեց մարդկանց այստեղ, որ Նա առաջնորդ էր այս վերջին տնտեսությունում, և որ ապրում է Նա՝ Կենդանի Աստծո Կենդանի Որդին, մեր Փրկիչը և մեր Քավիչը։[7]

2

Մեզանից յուրաքանչյուրը կարող է իմանալ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է և աշխարհի Քավիչը՝ հարություն առած գերեզմանից:

Մարդիկ պայքար են մղում հավատի համար, բայց սահմանները միշտ չէ, որ հստակ են գծված, քանի որ նույնիսկ քրիստոնեության ուժերի միջև կան այնպիսիները, որոնք կկործանեին Քրիստոսի աստվածությունը, ում անունից խոսում են: Նրանք կարող էին անուշադրության մատնվել, եթե նրանց ձայները չլինեին այդքան զայթակղիչ, եթե նրանց ազդեցությունն այդքան հեռուն գնացող չլիներ, եթե նրանց պատճառներն այդքան նուրբ չլինեին:

Բազմություններ կհավաքվեն հազարավոր բարձունքներում՝ դիմավորելու Զատիկի օրվա այգաբացը և հիշելու պատմությունը Հիսուս Քրիստոսի մասին, ում հարությունը նրանք կնշեն: Տարբեր հավատների քարոզիչներ գեղեցիկ ու լավատեսական լեզվով կպատմեն դատարկ գերեզմանի պատմությունը: Նրանց ու ձեզ ես ուղղում եմ նույն հարցը: «Դուք իրականում հավատո՞ւմ եք դրան»:

Դուք իրականում հավատո՞ւմ եք, որ Հիսուսը Աստծո որդին էր, Հոր ուղիղ ժառանգը:

Դուք հավատո՞ւմ եք, որ Աստծո՝ Հավերժական Հոր ձայնը հռչակեց Հորդանանի ջրերի վրա. «Դա է իմ սիրելի Որդին, որին ես հաւանեցի»: (Մատթեոսի 3.17:)

Դուք հավատո՞ւմ եք, որ այդ նույն Հիսուսը հրաշքներ էր գործում, բժշկում հիվանդներին, վերականգնում թույլերին ու կյանքի կոչում մահացածներին:

Դուք հավատո՞ւմ եք, որ սարի վրա իր մահից և Հովսեփի գերեզմանում իր թաղումից հետո Նա հարություն առավ երրորդ օրը:

Դուք իրականում հավատո՞ւմ եք, որ Նա այնուամենայնիվ ապրում է՝ իրական, եռանդուն և անձնապես, որ Նա կգա նորից՝ ինչպես հրեշտակները խոստացան Նրա համբարձման ժամանակ:

Դուք իրականում հավատո՞ւմ եք այս բաներին: Եթե այո, ապա դուք մաս եք կազմում այն քչացող իրատեսների, ում քմծիծաղով

Հարություն առած Տերը երկու մարդու հետ քայլեց Էմմաուս տանող ճանապարհին:

են վերաբերվում փիլիսոփաները, ում ծաղրում են որոշ մանկավարժներ, և որոնց նեղ շրջանակի կրոնի ծառաներն ու ազդեցիկ աստվածաբանները բոլորից շատ են «անտեղյակ» համարում:

. . . Այդ մտավորականների աչքում սրանք առասպելներ են. Հիսուս Քրիստոսի՝ որպես Աստծո Որդու ծնունդը, ում համար հրեշտակները երգեցին Հուդայի հովիտներում, հրաշագործը, ով բժշկեց հիվանդներին, կենդանացրեց մահացածներին, Քրիստոսը հարություն առավ մեռելներից, համբարձումն ու խոստացված վերադարձը:

Այս ժամանակակից աստվածաբանները զրկում են նրան աստվածությունից, իսկ հետո զարմանում են, թե մարդիկ ինչու չեն երկրպագում Նրան:

Այս գիտունները Հիսուսից վերցրել են աստվածության թիկնոցը և թողել են միայն մարդուն։ Նրանք փորձել են հարմարեցնել Նրան իրենց սեփական մտածողությանը։ Նրանք կողոպտել են Նրան՝ խլելով նրա աստվածային ծագումը և աշխարհից վերցրել են դրա օրինական Թագավորին։ . . .

. . . Ես տալիս եմ հանդիսավոր վկայություն, որ Աստված ապրում է, բացառությամբ, եթե Նա չդիտարկվի անկյանք մեկնաբանությամբ։ . . .

. . . Այստեղ հարկավոր է ավելին, քան խելամիտ հավատը։ Անհրաժեշտություն կա հասկանալու Նրա եզակի ու անօրինակ դերը՝ որպես աստվածային Քավիչի և խանդավառության անհրաժեշտություն՝ հասկանալու Նրան ու Նրա պատգամը՝ որպես Աստծո որդու։

Այդ ըմբռնումը և այդ խանդավառությունը մատչելի են բոլորին, ովքեր կվճարեն գինը։ Դրանք անհամատեղելի են բարձրագույն կրթության հետ, բայց նրանք չեն գա միայն փիլիսոփայություն կարդալուց։ Ոչ, նրանք գալիս են պարզ գործընթացի արդյունքում։ Աստծո բաները հասկացվում են միայն Աստծո Հոգու միջոցով։ (Ա Կորնթացիս 2.11։) Այդպես է հայտարարում հայտնության ոգին։

Տիրոջը հասկանալու և Նրա հանդեպ խանդավառություն ձեռք բերելու համար պիտի հետևենք հետևյալ պարզ կանոններին։ . . . Ես կկամենայի առաջարկել երեք կանոն, որոնք տարրական են իրենց հասկացողության մեջ, համարյա մաշված՝ իրենց կրկնողության մեջ, բայց հիմնարար՝ իրենց կիրառության մեջ և բեղմնավոր՝ իրենց արդյունքում։ . . .

Առաջինը՝ կարդալ, կարդալ Տիրոջ խոսքը։ . . . Օրինակ՝ կարդալ Հովհաննեսի ավետարանը սկզբից մինչև վերջ։ Թող Տերը ինքը խոսի ձեզ հետ, և այս բառերը կգան լուռ համոզմունքով, որն անիմաստ կդարձնի իր քննադատների խոսքերը։ Կարդացեք նաև Նոր Աշխարհի վկայությունը՝ Մորմոնի Գիրքը, որը ստեղծվեց որպես վկայություն այն բանի, «որ Հիսուսը Քրիստոսն է՝ Հավերժական Աստվածը, որն իրեն հայտնում է բոլոր ազգերին»։ (Մորմոնի Գիրք. տիտղոսաթերթ։)

Հաջորդը ծառայելն է՝ ծառայել Տիրոջ գործին։ . . . Քրիստոսի գործը ձեր կասկածների կարիքը չունի, այն ունի ձեր ուժի,

ժամանակի ու տաղանդների կարիքը, և երբ դուք գործադրեք սրանք ծառայության մեջ, ձեր հավատը կաճի, իսկ ձեր կասկածները կպակասեն։ . . .

Երրորդը՝ աղոթելն է։ Խոսեք ձեր Հավերժական Հոր հետ՝ Իր Միրելի Որդու անունով։ «Ահա,- ասում է նա,- Ես դռան առաջին կանգնած եմ եւ թակում եմ. եթէ մէկը լսէ իմ ձայնը եւ դուռը բանայ, կ'մտնեմ նորա մօտ եւ ընթրիք կ'անեմ նորա հետ, եւ նա ինձ հետ»։ (Հայտն. 3.20։)

Սա Նրա հրավերն է, իսկ խոստումը՝ վստահելի։ Դուք հավանաբար ձայներ չլսեք երկնքից, բայց երկնքից կգա խաղաղ ու վստահելի հավաստիացում։ . . .

. . . Փայլելով փիլիսոփայության ողջ խառնաշփոթի մեջ, այսպես կոչված բարձրագույն քննադատության և բացասական աստվածաբանության մեջ կգա Սուրբ Հոգու վկան, որ Հիսուսն իրոք Աստծո Որդին է, ծնված մարմնում, աշխարհի Փրկիչը՝ գերեզմանից հարություն առած, Տերը, ով կգա թագավորելու որպես թագավորների Թագավոր։ Դուք հնարավորություն ունեք իմանալու այդ ամենը։ Ձեր պարտականությունն է պարզել։[8]

3

Մենք պիտի մշտապես հարցնենք ինքներս մեզ. «Ապա ի՞նչ անենք մենք Հիսուսին, որ Քրիստոս է կոչվում»։

Ես նորից եմ տալիս հարցը, որն առաջարկվել էր Պիղատոսի կողմից երկու հազար տարի առաջ. «Ապա ի՞նչ անեմ Հիսուսին, որ Քրիստոս է կոչվում»։ (Մատթեոսի 27.22։) Իրականում մենք պիտի մշտապես հարցնենք ինքներս մեզ. «Ի՞նչ անենք *մենք* Հիսուսին, որ Քրիստոս է կոչվում»։ Մենք ի՞նչ պիտի անենք Նրա ուսմունքների հետ, և ինչպե՞ս կարող ենք դարձնել դրանք մեր կյանքի անբաժանելի մասը։ . . .

. . . «Ահա Աստուծոյ Գառը, որ վեր է առնում աշխարհի մեղքը»։ (Հովհաննեսի 1.29։) Որքան աղքատ կլիներ մեր կյանքն առանց Նրա ուսմունքների ազդեցության ու Նրա անզուգական օրինակի։ Մյուս այտը շրջելու, երկրորդ մղոնը գնալու, անառակ որդու վերադարձի, և բազմաթիվ այլ անզուգական ուսմունքների դասերը զտվել են դարերի միջով, որպեսզի, կատալիզատոր դառնալով, հայտնաբերեն մարդու բարությունն ու ողորմածությունը նրա դաժանության միջից։

Դաժանությունը թագավորում է այնտեղ, որտեղից Քրիստոսը վտարվում է: Բարությունն ու համբերությունը տիրում են այնտեղ, որտեղ Քրիստոսին ընդունում են և նրա ուսմունքներին հետևում են:

Ապա մենք ի՞նչ անենք Հիսուսին, որ Քրիստոս է կոչվում: «Քեզ հայտնե, ով մարդ, թե ինչ է բարին. և Տերը ի՞նչ է ուզում քեզանից, այլ միայն իրաւունք անել, ողորմութիւն սիրել, և խոնարհութեամբ վարվիլ քո Աստուծոյ հետ» (Միքիա 6.8:)

«Ուստի, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է ներեք միմյանց. քանզի, ով իր եղբորը չի ներում նրա զանցանքները, դատապարտված կանգնած է Տիրոջ առաջ. քանզի նրա մեջ ավելի մեծ մեղք է մնում» (ՎևՈւ 64.9): . . .

Ապա մենք ի՞նչ անենք Հիսուսին, որ Քրիստոս է կոչվում: «Որովհետեւ սովեցի, եւ դուք տուիք ինձ ուտել. Ծարաւեցի եւ խմեցրիք ինձ, օտար էի, եւ ինձ ձեզ մօտ առաք. Օտար էի, և ինձ ձեզ մոտ առաք. Մերկ էի, եւ հագցրիք ինձ. Հիւանդ էի, և ինձ այցելեցիք. Բանտի մէջ էի, եւ ինձ մօտ եկաք»: (Մատթեոսի 25.35–36) . . .

Ապա մենք ի՞նչ անենք Հիսուսին, որ Քրիստոս է կոչվում:

Նրանից սովորեցեք: Քննեցեք սուրբ գրությունները, քանի որ դրանք վկայում են Նրա մասին: Խորհեք Նրա կյանքի ու առաքելության մասին: Փորձեք մի փոքր ավելի ջանասիրաբար հետևել Նրա օրինակին և ուսումնասիրել Նրա ուսմունքները:[9]

4

Մենք ապավինում ենք Հիսուս Քրիստոսին՝ որպես մեր փրկության վեմի, Նա է մեր փրկությունը, մեր ուժը, մեր սփոփանքը և մեր հավատի կենտրոնը:

Մենք չգիտենք, ինչ է սպասվում մեզ ապագայում: Մենք չգիտենք, ինչ կբերեն մեզ գալիք օրերը: Մենք ապրում ենք անորոշության աշխարհում: Ոմանց համար կլինեն մեծ ձեռքբերումներ: Մյուսները կունենան հիասթափություններ: Ոմանց համար կլինի հրճվանք և ուրախություն և կունենան փարթամ ապրելակերպ: Ուրիշները, հավանաբար, կունենան հիվանդություններ և վիշտ: Մենք չգիտենք: Բայց մի բան մենք գիտենք: Ինչպես բևեռային աստղը երկնքում, անկախ այն բանից, թե ինչ

է պահում ապագան մեզ համար, այնտեղ կանգնած է աշխարհի Քավիչը, Աստծո Որդին, որոշակի և վստահ՝ ինչպես մեր մահկանացու կյանքի խարիսխը։ Նա է մեր փրկության վեմը, մեր ուժը, մեր սփոփանքը, մեր հավատի կենտրոնը։

Մենք ապավինում ենք Նրան լավ և վատ ժամանակներում, և Նա այնտեղ է, որպեսզի հավաստիացնի և ժպտա մեզ։[10]

Գիտեմ, ապրում է Փրկիչն իմ,
Հաղթական Փրկիչը, Աստծո Որդին,
Հաղթելով ցավն ու մահը
Իմ թագավորը, առաջնորդն ու Տերը։

Նա ապրում է, իմ հավատի միակ ամուր վեմը,
Մարդկանց միակ պայծառ հույսը երկրի վրա,
Նա է փարոսը դեպի լավ կյանք։
Լույսը՝ մահվան վարագույրից այն կողմ։

Օ, տուր ինձ Հոգու քաղցր հանդարտություն։
Խաղաղություն, որ միայն քեզնից է գալիս,
Հավատ՝ մենակ քայլելու ճանապարհով,
Որը տանում է դեպի քո հավերժությունը։[11]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Վերանայեք Նախագահ Հինքլիի վկայության խոսքերը բաժին 1-ում և ժամանակ հատկացրեք խորհելու Հիսուս Քրիստոսի մասին ձեր վկայության վերաբերյալ։ Ինչո՞ւ եք դուք երախտապարտ Փրկիչի ծառայության ու Քավության համար։ Փրկիչի կյանքի ո՞ր պատմություններն ու ուսմունքներն ունեն հատուկ նշանակություն ձեզ համար։
- Ինքներդ ձեզ ուղղեք 2-րդ բաժնում տրված հարցերից յուրաքանչյուրը։ Ձեր պատասխաններն ինչպե՞ս են անդրադառնում ձեր առօրյա կյանքի վրա։ Նույն բաժնում վերանայեք Նախագահ Հինքլիի երեք «պարզ կանոնները», որպեսզի ձեռք բերեք «Աստծո բաների» հասկացողությունը։ Այս սկզբունքներն ինչպե՞ս օգնեցին ձեզ խորացնել ձեր հոգևոր ըմբռնումը։

- Նախագահ Հինքլին բազմիցս հարցնում էր. «Ապա ի՞նչ անենք մենք Հիսուսին, որ Քրիստոս է կոչվում» (բաժին 3)։ Ի՞նչ կարող ենք սովորել նրա պատասխաններից։ Մտածեք, թե դուք ինչպես կպատասխանեիք այդ հարցին։ Ինչպիսի՞ն կլիներ ձեր կյանքը, եթե դուք չիմանայիք Փրկիչի ուսմունքների և օրինակի մասին։
- Նախագահ Հինքլին շեշտել է, որ Հիսուս Քրիստոսը մեր խարիսխն է անորոշության աշխարհում (տես բաժին 4)։ Ե՞րբ եք զգացել Փրկիչի զորությունն ու սփոփանքը դժվար ժամանակներում։ Խորհեք 4-րդ բաժնում գտնվող Նախագահ Հինքլիի ուսմունքների մասին։ Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսը դառնում մեր «միակ պայծառ հույսը»։ Ինչո՞ւ է Նա մեր «խարիսխը դեպի ավելի լավ ուղի»։

Առնչվող սուրբ գրություններ

Ղուկաս 24.36–39, Հովհաննես 1.1–14, Գործք 4.10–12, 2 Նեփի 2.8, 25.26, Ալմա 5.48, ՎևՈւ 110.3–4

Օգնություն ուսումնասիրողին

«Մշակեք ուսումնասիրության այնպիսի վարժություններ, որոնք կկառուցեն Փրկիչի հանդեպ ձեր հավատը» (*Քարոզիր Իմ Ավետարանը* [2004], 22)։ Օրինակ, ուսումնասիրելիս ինքներս մեզ կարող ենք տալ նմանատիպ հարցեր. Ինչպե՞ս են այս ուսմունքներն օգնում ինձ մեծացնել իմ հասկացողությունը Հիսուս Քրիստոսի Քավության մասին։ Ինչպե՞ս կարող են այս ուսմունքներն օգնել ինձ ավելի նմանվել Փրկիչին։

Հղումներ

1. “The Symbol of Christ,” *Ensign,* May 1975, 92, 94.
2. “Four Cornerstones of Faith,” *Ensign,* Feb. 2004, 4.
3. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 280.
4. “He Is Not Here, but Is Risen,” *Ensign,* May 1999, 71.
5. “He Is Not Here, but Is Risen,” 71.
6. “He Is Not Here, but Is Risen,” 71–72.
7. “Be Not Faithless,” *Ensign,* Apr. 1989, 2.
8. In Conference Report, Apr. 1966, 85-87.
9. «Ապա ի՞նչ անեմ Հիսուսին, որ Քրիստոս է կոչվում»։ *Ensign,* Dec. 1983, 3-5.
10. “We Look to Christ,” *Ensign,* May 2002, 90.
11. «Գիտեմ, ապրում է Փրկիչն իմ»*Հիմներ,* հ. 38, խոսքերի հեղինակ՝ Գորդոն Բ. Հինքլի։



Որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք միաբան ենք Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայության մեջ։

Վկայության անգին պարգևը

«Մենք խոսում ենք տարբեր լեզուներով:
Մենք ապրում ենք տարբեր պայմաններում:
Բայց մեզանից յուրաքանչյուրի սրտում
բաբախում է մի ընդհանուր վկայություն»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

«Ամենավաղ դեպքը, որից ես հոգևոր զգացմունքների հիշողություն ունեմ,- ասել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին,- պատահեց, երբ ես հինգ տարեկան փոքրիկ տղա էի: Ես լաց էի լինում ականջիս ցավից: . . . Մայրիկս կերակրի աղի մի տոպրակ պատրաստեց և դրեց գազօջախին տաքանալու: Հայրիկս ձեռքերը քնքշորեն դրեց իմ գլխին՝ քահանայության իշխանությամբ և զորությամբ հանդիմանելով ցավն ու հիվանդությունը Հիսուս Քրիստոսի անունով: Ապա նա հոգատարությամբ առավ ինձ իր բազուկների մեջ և տաք աղի տոպրակը դրեց ականջիս: Ցավը թուլացավ ու անցավ: Ես ապահով քնեցի հորս գրկում: Երբ քուն էի մտնում, նրա բառերը լողում էին իմ մտքում: Դա ամենավաղ հիշողությունն է, որ ես ունեմ քահանայության իշխանության գործադրման վերաբերյալ՝ Հիսուս Քրիստոսի անունով:

«Ավելի ուշ, իմ պատանեկության տարիներին, ես ու եղբայրս ձմռանը քնում էինք չջեռուցվող ննջասենյակում: . . . Նախքան տաք անկողին մտնելը մենք ծնկաչոք աղոթում էինք: Մենք մեր երախտագիտությունն էինք արտահայտում պարզ խոսքերով: . . . Հիշում եմ, թե ինչպես էի ցատկում անկողնու մեջ «ամեն» ասելուց հետո, վերմակը քաշում մինչև վիզս և մտածում հենց նոր իմ կատարածի մասին՝ խոսելով իմ Երկնային Հոր հետ՝ Նրա Որդու անունով: Ավետարանի մասին ես շատ գիտելիքներ չունեի: Բայց մի տեսակ երկարատև խաղաղություն և ապահովություն կար Հիսուս Քրիստոսի միջոցով երկինքների հետ հաղորդակցվելու մեջ: . . .

Այդ վկայությունն աճեց իմ սրտում, երբ որպես միսիոներ ես կարդում էի Նոր Կտակարանը և Մորմոնի Գիրքը, որը ևս մի վկայություն տվեց Նրա մասին: Այդ գիտելիքը հետագայում դարձավ իմ կյանքի հիմքը՝ կանգնելով իմ մանկության պատասխանված աղոթքների հենարանի վրա: Այս ժամանակից ի վեր իմ հավատն ավելի շատ է աճել: Ես դարձել եմ Նրա Առաքյալը, ով նշանակված է կատարելու Նրա կամքը և ուսուցանելու Նրա խոսքը: Ես դարձել եմ նրա վկան աշխարհի համար»:[1]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Վկայությունը Եկեղեցու մեծ ուժն է և հավատի ու գործունեության անսպառ աղբյուրը:

Մենք դարձել ենք մի մեծ ընտանիք, որը սփռված է այս հսկայական աշխարհում: Մենք խոսում ենք տարբեր լեզուներով: Մենք ապրում ենք տարբեր պայմաններում: Բայց մեզանից յուրաքանչյուրի սրտում բաբախում է մի ընդհանուր վկայություն. Ես և դուք գիտենք, որ Աստված ապրում է և Նա Իր սուրբ գործի ղեկի մոտ է: Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է և այս Եկեղեցու գլուխը, որը կրում է Նրա անունը: Մենք գիտենք, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր և մարգարե, ով այս տնտեսության գլուխն է ժամանակների լրության մեջ: Մենք գիտենք, որ քահանայությունը վերականգնվեց նրա միջոցով և ներկայումս անխախտ գծով մեզ է հասել: Մենք գիտենք, որ Մորմոնի Գիրքը Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարտության և աստվածության ճշմարիտ վկայությունն է:[2]

Այն, ինչը մենք կոչում ենք վկայություն, Եկեղեցու մեծ ուժն է: Այն հավատի ու գործունեության անսպառ աղբյուրն է: . . . Այն այնքան իրական ու հզոր է, որքան ցանկացած ուժ՝ երկրագնդի վրա: Տերը նկարագրեց այն, երբ Նա խոսեց Նիկոդեմոսի հետ. «Քամին որտեղ ուզում է՝ փչում է, և նորա ձայնը լսում ես. բայց չգիտես թե որտեղի՞ց է գալիս և որտե՞ղ է գնում. այսպես է ամեն Հոգուցը ծնուածը» (Հովհաննեսի 3.8): Այն, ինչը մենք վկայություն ենք կոչում, դժվար է սահմանել, բայց դրա պտուղները պարզորեն ակնհայտ են: Այդ Սուրբ Հոգին է վկայում մեր միջոցով:[3]

2

Վկայությունը մեղմ, քաջալերող ձայն է, որն աջակցում է մեզ, երբ մենք քայլում ենք հավատով և մղում է մեզ գործողության:

Անձնական վկայությունն այն գործոնն է, որը փոխում է մեզ շրջապատող մարդկանց կյանքը, երբ նրանք գալիս են այս Եկեղեցին: Սա այն տարրն է, որը մղում է անդամներին թողնել ամեն բան Տիրոջը ծառայելու համար: Սա այն մեղմ, քաջալերող ձայնն է, որն աջակցում է նրանց, ովքեր հավատով քայլում են դեպի իրենց կյանքի վերջին օրերը:

Այն մի առեղծվածային ու հրաշալի բան է, որն Աստծուց է տրված մարդուն: Այն վեր է կանգնում աղքատությունից կամ հարստությունից, երբ մարդը ծառայության է կանչվում: Այս վկայությունը, որը մեր մարդիկ կրում են իրենց սրտերում, մղում է նրանց կատարելու իրենց պարտականությունները: Այդպիսի վկայություն ունեն և՛ երիտասարդները, և՛ մեծահասակները: Սեմինարիայի ուսանողը, միսիոները, եպիսկոպոսն ու ցցի նախագահը, Սփոփող Միության քույրը և ցանկացած Բարձրագույն Իշխանավոր ունի այսպիսի վկայություն: Այն կարելի է լսել նաև անդամներից: Սա այս աշխատանքի բուն էությունն է: Այն առաջ է շարժում Տիրոջ աշխատանքը ողջ աշխարհում: Այն մղում է գործողության: Այն պահանջում է, որ մենք անենք այն, ինչ մեզանից խնդրվում է: Այն հավաստիացնում է տալիս, որ կյանքը նպատակ ունի, որ որոշ բաներ շատ ավելի կարևոր են, քան մյուսները, որ մենք հավերժի ճամփորդներ ենք և հաշվետու Աստծո առաջ: . . .

Սա այն տարրն է, որը սկզբում թեև թույլ ու մասամբ տկար է, սակայն դեպի դարձն է տանում ամեն լսողի: Այն հավատով առաջ է մղում բոլոր նորադարձներին դեպի ապահովություն: . . .

Որտեղ էլ որ կազմավորվի Եկեղեցին, դրա ուժը զգացվում է: Մենք ամուր կանգնում ենք մեր ոտքերի վրա և ասում, որ մենք գիտենք: . . . Պարզ փաստն այն է, որ մենք *իրոք* գիտենք, որ Աստված ապրում է, որ Հիսուսը Քրիստոսն *է*, որ սա նրանց աշխատանքն է ու նրանց թագավորությունը: Բառերը պարզ են, քանի որ խոսքերը գալիս են սրտից: Այն աշխատանքի մեջ է, որտեղ էլ որ Եկեղեցին կազմակերպվի, որտեղ էլ որ միսիոներներն

ուսուցանեն ավետարանը, որտեղ էլ որ անդամները կիսվեն իրենց հավատով։

Դա մի բան է, որը չի կարող հերքվել։ Ընդդիմախոսները կարող են մեջբերել սուրբ գրությունները և անվերջ վիճարկել վարդապետությունը։ Նրանք կարող են լինել խելացի ու համոզիչ։ Բայց եթե ասեք. «Ես գիտեմ», այլևս չի կարող լինել որևէ լրացուցիչ փաստարկ։ Հնարավոր է, որ հավանություն չլինի, բայց ով կարող է հերքել կամ մերժել հոգու ներքին մեղմ ձայնը, որը խոսում է անձնական համոզվածությամբ։[4]

«Լույսը մեր կյանքում»

[Դեյվիդ Կաստանեդան], նրա կինը՝ Թոմասան ու նրանց երեխաներն ապրում էին մի փոքր կիսաքանդ ագարակում Մեքսիկայի Տորրեոն քաղաքի մոտ։ Նրանք ունեին 30 հավ, 2 խոզ և մի նիհար ձի։ Հավերը մի քանի ձու էին ածում ու դրանով նրանք երբեմն կարողանում էին հազիվ մի պեսո վաստակել։ Նրանք ապրում էին աղքատության մեջ։ Հետո միսիոներներն այցելեցին նրանց։ Քույր Կաստանեդան պատմում էր. «Երեցները վերցրին աչքակապերը մեր աչքերից ու լույս բերեցին մեր կյանք։ Մենք ոչինչ չգիտեինք Հիսուս Քրիստոսի մասին։ Մինչև նրանց գալը ոչինչ չգիտեինք Աստծո մասին»։

Նա երկու տարի դպրոց էր գնացել, իսկ ամուսինն ընդհանրապես կրթություն չուներ։ Երեցներն ուսուցանեցին նրանց, և նրանք ի վերջո մկրտվեցին։ . . . Նրանք աստիճանաբար ստեղծեցին մի ծաղկող բիզնես, որում հայրն ու նրա հինգ որդիներն աշխատում էին։ Իրենց պարզ հավատով նրանք տասանորդ էին վճարում։ Նրանք ապավինում էին Տիրոջը։ Նրանք ապրում էին ավետարանով։ Նրանք ծառայում էին, ուր էլ որ կանչվեին։ Նրանց որդիներից չորսը և դուստրերից երեքը ծառայեցին միսիայում։ . . . Քննադատները ծաղրում էին նրանց։ Իսկ նրանց պատասխանը իրենց կյանքում Տիրոջ զորության մասին վկայությունն է։

Նրանց ազդեցության շնորհիվ մոտ 200 մարդ նրանց ընտանիքներից ու ընկերներից միացան Եկեղեցուն։ Ընտանիքի անդամների ու ընկերների ավելի քան 30 որդիներ ու դուստրեր ծառայեցին միսիաներում։ Նրանք նվիրաբերեցին հողը, որի վրա այժմ կանգնած է ժողովատունը։

Երեխաները հիմա արդեն հասուն մարդիկ են, իսկ ծնողները ամեն ամիս հերթով գնում են Մեխիկո Սիթի՝ աշխատելու տաճարում: Նրանք կանգնած են որպես կենդանի վկայություն Տիրոջ այս աշխատանքի մեծ զորության, որպեսզի բարձրացնեն ու փոխեն մարդկանց: Նրանք տիպիկ օրինակ են ողջ աշխարհում սփռված այն հարյուր հազարավորների, ովքեր ճաշակում են Մորմոնիզմի հրաշքը՝ որպես իրենց կյանք մուտք գործած աշխատանքի աստվածության վկայություն:[5]

«Չէ՞ որ դա ակնհայտ է: Ճիշտ է, այդպես չէ՞: Այդ դեպքում ուրիշ ի՞նչն է ավելի կարևոր»:

Ես հանդիպել եմ ռազմածովային նավատորմի մի սպայի, մի փայլուն երիտասարդի, ով Միացյալ Նահանգներ էր եկել որակավորման բարձրացման դասընթաց անցնելու: Միացյալ Նահանգների Ռազմածովային Նավատորմի նրա գործընկերներից մի քանիսը, ում վարքը գրավել էր նրան, նրա խնդրանքով կիսվել էին իրենց կրոնական համոզմունքներով: Նա քրիստոնյա չէր, բայց դա հետաքրքրել էր նրան: Գործընկերները պատմել էին նրան աշխարհի Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի մասին, ով ծնվել էր Բեթլեհեմում ու Իր կյանքը տվել էր ողջ մարդկության փրկության համար: Նրանք պատմել էին նաև, թե ինչպես Աստված՝ Երկնային Հայրն ու հարություն առած Տերը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին: Նրանք խոսեցին ժամանակակից մարգարեների մասին: Նրանք ուսուցանեցին նրան Տիրոջ ավետարանը: Հոգին դիպավ նրա սրտին և նա մկրտվեց:

Այդ սպային ներկայացրին ինձ իր հայրենիք գնալուց անմիջապես առաջ: Մենք զրուցեցինք այդ ամենի մասին, իսկ հետո ես ասացի. «Քո ժողովուրդը քրիստոնյա չէ: Ի՞նչ կպատահի, երբ դու տուն վերադառնաս որպես քրիստոնյա և հատկապես՝ մորմոն քրիստոնյա»:

Նրա դեմքը մթնեց, ու նա պատասխանեց. «Իմ ընտանիքը կհիասթափվի: Նրանք ինձ դուրս կնետեն և մեռած կհամարեն: Ինչ վերաբերում է իմ ապագային ու իմ կարիերային, կասեմ, որ բոլոր հնարավորությունները կփակվեն իմ առաջ»:

Ես հարցրի. «Դու պատրա՞ստ ես այդքան մեծ գին վճարելու ավետարանի համար»:

Արցունքով լցված նրա սև աչքերը փայլում էին նրա գեղեցիկ թուխ դեմքին, երբ նա պատասխանեց. «Չէ՞ որ դա ակնհայտ է: Ճիշտ է, այդպես չէ՞:»:

Ամաչելով իմ հարցից, ես պատասխանեցի. «Այո, ակնհայտ է, որ ճիշտ է»:

Իսկ նա պատասխանեց. «Այդ դեպքում ուրիշ ի՞նչն է ավելի կարևոր»:

Սրանք այն հարցերն են, որ ես կկամենայի ուղղել ձեզ: «Չէ՞ որ դա ակնհայտ է: Ճիշտ է, այդպես չէ՞: Այդ դեպքում ուրիշ ի՞նչն է ավելի կարևոր»:[6]

Նոր հայացք կյանքին

Մի անգամ ես լսեցի մի ինժեների փորձառության մասին, ով վերջերս էր միացել Եկեղեցուն: Միսիոներներն այցելել էին նրա տուն, և նրա կինը նրանց տուն էր հրավիրել: Կինն անմիջապես արձագանքել էր նրանց ուղերձին, մինչդեռ նա իր կամքին հակառակ էր ներգրավվել դրա մեջ: Մի երեկո կինը վկայեց, որ ցանկանում էր մկրտվել: Ամուսինը խիստ բարկացավ: Մի՞թե կինը չգիտեր, թե դա ինչ էր նշանակում: Դա նշանակում էր, որ դրան հարկավոր էր ժամանակ հատկացնել: Դա նշանակում էր, որ հարկավոր է տասանորդ վճարել: Նշանակում էր հրաժարվել ընկերներից: Նշանակում էր, որ այլևս ծխել չի կարելի: Նա հագավ վերարկուն ու դուրս եկավ գիշերվա խավարի մեջ՝ դուռն իր ետևից շրխկացնելով: Նա քայլում էր փողոցներով՝ անիծելով իր կնոջը, միսիոներներին, իրեն՝ այն բանի համար, որ նրանց ներս էր թողել իրենց ուսուցանելու: Երբ հոգնեց, զայրույթն անցավ և աղոթքի հոգին կարծես դիպավ նրա սրտին: Նա աղոթեց քայլելիս: Աղոթքով խնդրեց Աստծուն պատասխանել իր հարցերին: Իսկ հետո մի հստակ ու պարզորոշ պատասխան եկավ, ասես մի ձայն խոսեց նրա հետ. «Ակնհայտ է»:

«Ակնհայտ է», ասում էր նա ինքն իրեն կրկին ու կրկին: «Ակնհայտ է»: Խաղաղություն իջավ նրա սրտին: Երբ նա տուն էր քայլում, սահմանափակումները, պարտականությունները, պահանջները, որոնց պատճառով նա այնքան զայրացած էր, սկսեցին թվալ որպես հնարավորություններ: Երբ նա բացեց դուռը, տեսավ իր կնոջը՝ ծնկի իջած աղոթելիս:



«Ո՞վ կարող է հերքել կամ մերժել ներքին հոգու մեղմ ձայնը, որը խոսում է անձնական համոզվածությամբ»:

. . . Հավաքվածներին այս ամենը պատմելուց հետո նա խոսեց այն ուրախության մասին, որ եկել էր իրենց կյանք: Տասանորդի վճարումն այլևս խնդիր չէր: Աստծո հետ, ով նրանց տվել էր ամեն բան, իրենց ունեցածով կիսվելը բավական փոքր բան էր թվում: Ծառայությանը ժամանակ հատկացնելն այլևս խնդիր չէր: Այն ընդամենը պահանջում էր շաբաթվա ժամանակի մի փոքր խնամքով ծրագրավորում: Պատասխանատվությունը խնդիր չէր: Դրանից էր բխում զարգացումը և հայացքը նոր կյանքին: Իսկ հետո այս խելացի և ուսում առած ինժեները սովորեց առնչվել նյութական աշխարհի փաստերի հետ, որում մենք ապրում ենք, թաց աչքերով հանդիսավոր վկայություն բերեց այն հրաշքի մասին, որը եկել էր իր կյանք:[7]

«Ամենակարևոր բանն իմ կյանքում»

Մի քանի տարի առաջ մի փայլուն ու կրթված երիտասարդ կին Գերմանիայի Բերքսգադեն քաղաքում ելույթ ունեցավ զինվորական աշխատակազմի համաժողովի ժամանակ, որի մասնակիցները եկեղեցու անդամներ էին: Ես այնտեղ էի ու լսեցի նրան: Նա բանակի մայոր էր, բժիշկ և իր ոլորտում մեծ հարգանք վայելող մասնագետ: Նա ասաց.

«Ամեն ինչից առավել այս աշխարհում ես ցանկանում էի ծառայել Աստծուն: Բայց որքան փորձեցի, չկարողացա գտնել նրան: Ողջ հրաշքը կայանում է նրանում, որ Նա ինձ գտավ: 1969 թվականի սեպտեմբերյան մի շաբաթ օր ցերեկը ես տանն էի՝ Բերկլիում (Կալիֆորնիա) և լսեցի իմ դռան զանգը: Երկու երիտասարդ էին այնտեղ՝ կոստյումով, սպիտակ վերնաշապիկով ու փողկապով: Նրանց մազերը կոկիկ սանրված էին: Ես այնքան տպավորված էի նրանց արտաքինով, որ ասացի. «Ես չգիտեմ, թե դուք ինչ եք վաճառում, բայց կգնեմ այն»: Երիտասարդներից մեկն ասաց. «Մենք ոչինչ չենք վաճառում: Մենք Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներներ ենք և կկամենայինք խոսել ձեզ հետ»: Ես երիտասարդներին ներս հրավիրեցի, և նրանք խոսեցին իրենց հավատքի մասին:

Սա վկայության սկիզբն էր: Բառեր չեմ գտնում արտահայտելու իմ երախտագիտությունը Վերջին Օրերի Սուրբ լինելու արտոնության ու պատվի համար: Այն ուրախությունն ու խաղաղությունը, որն այս ուրախ ավետարանը բերել է իմ սիրտ, երկինքն է երկրի վրա: Իմ վկայությունն այս աշխատանքի մասին ամենաթանկն է իմ կյանքում. մի պարգև իմ Երկնային Հորից, որի համար ես հավերժ երախտապարտ կլինեմ»:[8]

Այսպես է նաև շատ երկրներում ապրող հարյուր հազարավոր տղամարդկանց ու կանաց համար, ովքեր ունեն ունակություն և կրթություն, բիզնես և մասնագիտություն, ովքեր համառ ու գործունյա են, ովքեր աշխարհիկ գործեր են կատարում, և ում սրտում վառվում է մի լուռ վկայություն, որ Աստված ապրում է, որ Հիսուսը Քրիստոսն է, որ այս աշխատանքն աստվածային է, որ այն վերականգնվել է երկրի վրա՝ ի օրհնություն այն բոլոր մարդկանց, ովքեր կօգտվեն դրա հնարավորություններից:[9]

3

Մեզանից յուրաքանչյուրը կարող է վկայություն ձեռք բերել Աստծո, Նրա Սիրելի Որդու և Նրանց աշխատանքի վերականգնման ճշմարտության մասին:

Այս վկայությունը կարող է լինել ամենաթանկագինը Աստծո բոլոր պարգևներից: Սա երկնային պարգև է, եթե արդար ջանք է գործադրվում: Այս Եկեղեցու անդամ յուրաքանչյուր կնոջ և տղամարդու հնարավորությունն ու պարտականությունն

է ինքնուրույն համոզմունք ձեռք բերել հետևյալ ճշմարտությունների մասին՝ վերջին օրերի այս հրաշալի աշխատանքի ու դրա ղեկավարների մասին, նաև կենդանի Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի մասին։

Հիսուսը նշեց այսպիսի վկայություն ձեռք բերելու ճանապարհը, երբ Նա ասաց. «Իմ վարդապետութիւնն իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է։

Եթե մեկը կամենում է նորա կամքն անել, նա կիմանա այս վարդապետութեան համար, թե արդեոք Աստվածանի՞ց է, կամ եթե ես իմ անձիցն եմ խոսում» (Հովհաննես 7.16–17)։

Մեր հավատը և գիտելիքն աճում է, երբ ծառայում, ուսումնասիրում և աղոթում ենք։

Երբ Հիսուսը կերակրեց 5000 մարդու, նրանք տեսան ու զարմացան այն հրաշքի վրա, որը նա կատարեց։ Ոմանք նորից վերադարձան։ Նա ուսուցանեց նրանց Իր աստվածության վարդապետությունը և Իր մասին՝ որպես կյանքի հացի։ Նա մեղադրեց նրանց, քանի որ վերջիններս հետաքրքրված էին ոչ թե վարդապետությունով, այլ միայն իրենց մարմնի քաղցը հագեցնելով։ Ոմանք, լսելով Նրան ու Նրա վարդապետությունը, ասացին. «Խիստ է այդ բանը, ո՞վ կարող է լսել դորան» (Հովհաննես 6.60)։ Ո՞վ կարող է հավատալ այն ամենին, ինչ այս մարդը սովորեցնում է։

«Սորանից հետո նորա աշակերտներից շատերը ետ գնացին և այլևս ման չէին գալի Նորա հետ։

Հիսուսն էլ ասեց տասներկուսին [կարծում եմ հիասթափության որոշ զգացումով]. Մի՞թե դուք էլ եք ուզում գնալ։

Սիմոն Պետրոսն էլ պատասխանեց նորան. Տէր ո՞ւմ մոտ գնանք. հավիտենական կեանքի խոսքերն ունիս դու։

Եվ մենք հաւատացինք և ճանաչեցինք, թե դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին» (Հովհաննես 6.66–69)։

Սա այն մեծ հարցն է և պատասխանը, որին մենք բոլորս պիտի բախվենք։ «Տեր ո՞ւմ մոտ գնանք. հավիտենական կյանքի խոսքերն ունիս դու։ Եվ մենք հաւատացինք և ճանաչեցինք, թե դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին»։

Այս մեծ համոզվածությունն է, կենդանի Աստծո իսկության ներքին լուռ համոզվածությունն է, Նրա Սիրելի Որդու աստվածության, մեր ժամանակներում նրանց աշխատանքի վերականգնման և այն փառավոր դրսևորումների, որին մենք հետևել ենք, որը մեզ համար դարձել է մեր հավատի հիմքը: Սա դառնում է մեր վկայությունը:

. . . Վերջերս ես եղա Նյու Յորք նահանգի Պալմիրա քաղաքում [մոտիկ այն տեղին, որտեղ Ջոզեֆ Սմիթը ստացավ իր Առաջին Տեսիլքը]: Այս տարածքում տեղի ունեցած իրադարձությունները հանգեցնում են հետևյալ հարցին. «Նրանք կամ տեղի են ունեցել կամ ոչ: Անցումային կամ միջին վիճակ չկա»:

Իսկ հետո հավատի ձայնը շշնջում է. «Այդ ամենը տեղի է ունեցել: Այն տեղի ունեցավ, հենց որ նա ասաց, որ տեղի է ունեցել»:

Մոտակայքում գտնվում է Կումորա բլուրը: Այնտեղից է ծագել այն հին հիշատակարանը, որից թարգմանվել է Մորմոնի Գիրքը: Պետք է ընդունել կամ մերժել դրա աստվածային ծագումը: Վկայության մասին խորհելը պիտի հանգեցնի այն բանին, որ յուրաքանչյուր տղամարդ ու կին, ով կարդացել է, հավատով կասի. «Չէ՞ որ ակնհայտ է»:

Եվ այսպիսով, այս հրաշքը՝ մյուս տարրերով հանդերձ, մենք կոչում ենք հին ավետարանի, հին քահանայության և հին Եկեղեցու վերականգնում:

Ինչպես միշտ, այս վկայությունը այժմ էլ հայտարարություն է, ազնիվ հաստատումն այն ճշմարտության, ինչպես մենք գիտենք այն:[10]

4

Մենք պիտի ապրենք ըստ այս վկայության և կիսվենք դրանով:

Պողոսն ասաց Տիմոթեոսին. «Զգույշ կաց անձիդ և վարդապետութեանդ, և դորանում յարատեւիր, որովհետև այդ անելով քո անձն էլ կապրեցնես, և քեզ լսողներին էլ» (Ա Տիմոթեոս 4.16): Ինչ հրաշալի հրահանգ է տվել Պողոսը երիտասարդ Տիմոթեոսին:

Նա շարունակել է՝ ասելով. «Որովհետև Աստուած չտուավ մեզ երկչոտության հոգի, այլ զորության և սերի և զգաստության» (Բ Տիմոթեոսի 1.7): Աստված մեզ երկչոտության ոգի չի տվել,

այլ տվել է զորության ոգի, պատգամի զորության և սիրո ոգի, սեր դեպի մարդիկ, սեր այն բանի հանդեպ, ինչը մենք պիտի առաջարկենք, տվել է առողջ միտք և Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի պարզ, հասկանալի սկզբունքները։

«Ուրեմն ամոթ մի համարիր մեր Տիրոջ վկայությունը» (Բ Տիմոթեոս 1.8)։ Իմ եղբայրներ և քույրեր, երբեք ամոթ մի համարեք մեր Տիրոջ վկայությունը։ . . . Ահա մի մեծ պարտականություն ու լիազորություն, որը դրված է մեզ վրա. «Որովհետև Աստուած չտուավ մեզ երկչոտության հոգի, այլ զորության և սերի և զգաստության։ Ուրեմն ամոթ մի համարիր մեր Տիրոջ վկայությունը»։[11]

Սա Աստծո սուրբ գործն է։ Սա Նրա Եկեղեցին է ու Նրա արքայությունը։ Տեսիլքը, որ տեղի ունեցավ Սրբազան Պուրակում, այնպես էր, ինչպես Ջոզեֆն ասաց, որ եղել է։ Իմ սրտում կա մի ճշմարիտ ըմբռնում այնտեղ տեղի ունեցածի կարևորության վերաբերյալ։ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է։ Այն վկայում է Տեր Հիսուս Քրիստոսի մասին։ Նրա քահանայությունը վերականգնվել է և քահանաները մեզ հետ են։ Քահանայության բանալիները, որոնք գալիս են երկնային էակներից, գործադրվում են մեր հավերժական օրհնությունների համար։ Ասպիսին է մեր վկայությունը՝ ձերը և իմը, վկայություն, որի համաձայն մենք պիտի ապրենք և որով պիտի կիսվենք ուրիշների հետ։ Ես թողնում եմ այս վկայությունը, իմ օրհնությունն ու իմ սերը ձեզանից յուրաքանչյուրի հետ և իմ հրավերը՝ շարունակել մաս կազմել Վերջին Օրերի այս մեծ հրաշքի, որն է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին։[12]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Ինչպե՞ս է ձեր անձնական վկայությունն աջակցում Եկեղեցու հզորացմանը։ (Տես բաժին 1։)
- Նախագահ Հինքլին շեշտում է, որ վկայությունն աջակցում և մեզ «մղում է գործողության» (բաժին 2)։ Ինչպե՞ս է Տերը սփոփել ձեզ։ Ինչպե՞ս է ձեր վկայությունն ազդել ձեր գործողությունների վրա։ Ինչպե՞ս կարող եք անձնապես կիրառել բաժին 2-ում տրված պատմությունները։

- Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքներից ի՞նչ կարող ենք սովորել վկայություն ձեռք բերելու մասին: (Տես բաժին 3:) Ինչպիսի՞ փորձառություններ են օգնել ձեզ վկայություն ձեռք բերել: Ի՞նչ կարող ենք անել մեր վկայությունն ամրացնելու համար:
- Ձեր կարծիքով, մեր վկայություններն ինչո՞ւ են ավելի ամրանում, երբ կիսվում ենք դրանցով: Ինչպե՞ս եք հաղթահարել վախի զգացումը ձեր վկայությամբ կիսվելու ժամանակ: Ինչպե՞ս եք դուք օրհնվել ուրիշների վկայությամբ: (Տես բաժին 4:)

Առնչվող սուրբ գրություններ

Ա Կորնթացիս 12.3, Ա Պետրոս 3.15, Ալմա 5.43–46, 32.26–30, Մորոնի 10.3–5, ՎևՈւ 8.2–3, 80.3–5

Օգնություն ուսուցչին

Երբ ծանոթանաք ու հասկանաք յուրաքանչյուր մարդու, դուք ավելի լավ կպատրաստվեք ուսուցանելու այն դասերը, որոնք համապատասխանում են նրանց անհատական կարիքներին: Այս հասկացողությունը կօգնի ձեզ ուղիներ գտնել՝ օգնելու յուրաքանչյուր մարդու մասնակցել քննարկմանը և այլ ուսումնական վարժություններին» (*Teaching, No Greater Call* [1999], 34):

Հղումներ

1. “My Testimony,” *Ensign,* May 2000, 70–71.
2. “Listen by the Power of the Spirit,” *Ensign,* Nov. 1996, 5.
3. “Testimony,” *Ensign,* May 1998, 69.
4. “Testimony,” 69-70.
5. “Testimony,” 70.
6. «Չէ՞ որ դա ակնհայտ է»: *Ensign,* July 1993, 2.
7. «Չէ՞ որ դա ակնհայտ է»: 5.
8. «Չէ՞ որ դա ակնհայտ է»: 6.
9. «Չէ՞ որ դա ակնհայտ է»: 5.
10. “Testimony,” 70–71.
11. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 369.
12. “A Perfect Brightness of Hope: To New Members of the Church,” *Ensign,* Oct. 2006, 5.

Փայփայել ամուսնության հավերժական ընկերակցությունը

«Կյանքի ամենաքաղցր զգացմունքները, մարդկային սրտի շոայլ ու գոհացնող ազդակներն իրենց դրսևորումն են գտնում ամուսնության մեջ, որը կանգնած է մաքուր ու անարատ՝ աշխարհի չարիքից վեր»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Մի երեկո, երբ Նախագահ և Քույր Հինքլին լուռ նստած էին միասին, Քույր Հինքլին ասաց.«Դու միշտ ինձ թևեր ես տվել թռչելու համար և ես սիրել եմ քեզ դրա համար»:[1] Մեկնաբանելով իր կնոջ կողմից արված այդ արտահայտությունը, Նախագահ Հինքլին ասել է. «Ես փորձել եմ ճանաչել [նրա] անհատականությունը, ինքնությունը, նրա ցանկությունները, նախադրյալները, նրա հավակնությունները: Թող նա թռչի: Այո, թող նա թռչի: Թող նա զարգացնի իր սեփական տաղանդները: Թող նա գործի իր ուրույն ձևով: Դուրս եկ նրա ճանապարհից և հիացիր նրանով, ինչ նա անում է»:[2] Քույր Հինքլին նմանապես աջակցում էր իր ամուսնուն՝ որպես հայր, նրա անձնական հետաքրքրություններում և նրա Եկեղեցու լայնածավալ ծառայության մեջ:

Իրենց չափահաս տարիների մեծ մասը Գորդոն Բ. Հինքլին և Մարջորի Փեյը ապրել են նույն ծխում. նրանք ապրումէին փողոցի հակառակ կողմերում: «Ես նրան առաջին անգամ տեսա Երեխաների Միությունում», հետագայում հիշում էր Նախագահ Հինքլին: «Նա կարդում էր: Ես չգիտեմ, թե դա ինչ արեց ինձ հետ, բայց ես երբեք դա չմոռացա: Ապա նա մեծացավ, դարձավ

Նախագահ և Քույր Հինքլին վայելեցին երջանիկ և սիրառատ ամուսնություն և զորացրեցին «վերամիավորման և հավերժական զուգընկերության խաղաղ ու հաստատ համոզմունքով»:

գեղեցիկ օրիորդ, և ես այնքան ողջամիտ գտնվեցի, որ ամուսնացա նրա հետ»:[3]

Նրանց առաջին ժամադրությունը Եկեղեցու պարերի ժամանակ էր, երբ Հինքլին 19 տարեկան էր, իսկ Մարջորին՝ 18 տարեկան: «Այս երիտասարդը ինչ-որ մտադրություն ունի»,- ասաց Մարջորին իր մորը հետագայում:[4] Նրանց հարաբերությունները շարունակում էին զարգանալ, մինչ Գորդոնը հաճախում էր Յուտայի Համալսարանը: Ապա 1933 թվականինավարտելուց հետո նա կանչվեց միսիա ծառայելու Անգլիայում: Երբ նա վերադարձավ 1935 թվին, նրանք վերսկսեցին իրենց սիրավեպը և 1937թվին նրանք ամուսնացան Սոլթ Լեյք Տաճարում: Վերհիշելով իրենց ամուսնության վաղ օրերը, Քույր Հինքլին ասել է.

«Փողը քիչ էր, բայց մենք լցված էինք հույսով և լավատեսությամբ: Սկզբում ոչ բոլոր օրերն էին երանելի, բայց դրանք լի էին վճռականությամբ և երջանիկ տուն հիմնելու մեծ ցանկությամբ: Անկասկած, մենք սիրում էինք իրար: Բայց մենք պետք է հարմարվեինք միմյանց: Կարծում եմ, յուրաքանչյուր զույգ պետք է հարմարվի մեկմեկու:

Ավելի ուշ ես հասկացա, որ ավելի լավ կլիներ, եթե մենք ջանասիրաբար ձգտեինք հարմարվել միմյանց, քան անընդհատ փորձեինք միմյանց փոխել, ինչը ես պարզեցի, որ անհնար էր: . . . Պետք է լինի մի քիչ տալ և վերցնել, և ավելի մեծ ճկունություն, երջանիկ տուն ստեղծելու համար:[5]

Նախագահ Հինքլին կանչվեց Գերագույն Իշխանավոր 1958 թվին և իր ծառայության վաղ տարիներին Քույր Հինքլին սովորաբար մնում էր տանը՝ հոգ տանելու իրենց հինգ երեխաներին, մինչ նա ճանապարհորդում էր Եկեղեցու հանձնարարություններով: Երբ նրանց երեխաները մեծացան, Հինքլիները հաճախ էին ճանապարհորդում միասին, մի բան, որը նրանք բարձր էին գնահատում: 1977 թվականի ապրիլին նրանց ամուսնության 40-ամյակն էր, որը համընկավ այն ժամանակի հետ, երբ նրանք երկար ճամփորդում էին Ավստրալիայում՝ հանդիպելու Սրբերի հետ: Այդ օրը Նախագահ Հինքլին գրել է իր օրագրում.

«Մենք այսօր գտնվում ենք Փերթում, (Ավստրալիա), մեր ներկայությունը վկայում է, թե տարիները ինչ էին բերել մեզ: Մենք անցկացրինք օրը՝ հանդիպելով Ավստրալիայի Փերթի միսիայի

միսիոներների հետ: Դա սքանչելի օր էր, որի ընթացքում մենք լսեցինք վկայություններ և հրահանգավորում: Միսիոներները Մարջորիին նվիրեցին փոքրիկ ծաղկեփունջ, որը ես ինքս ժամանակ չէի ունեցել գնել նրա համար:

«Մենք կարող ենք մի ամբողջ հատոր գրել անցած 40 տարիների մասին: . . . Մենք ունեցել ենք մեր մաքառումներն ու խնդիրները: Բայց ընդհանուր առմամբ կյանքը հիանալի է եղել: Մենք հրաշալիորեն օրհնված ենք եղել: Այս տարիքում մարդ սկսում է զգալ հավերժության իմաստը և հավերժական զուգընկերության արժեքը: Եթե մենք այս երեկո տանը լինեինք, հավանաբար ընտանեկան ինչ-որ ճաշկերույթ կունենայինք: Քանի որ մենք հեռու ենք տանից՝ Տիրոջ ծառայության մեջ, դա քաղցր փորձառություն էր մեզ համար:[6]

Քսաներկու տարի անց, երբ նա ծառայում էր Եկեղեցու Նախագահ, Նախագահ Հինքլին մի նամակ գրեց Քույր Հինքլիին՝ արտահայտելով իր զգացմունքները ավելի քան 60 տարի ամուսնացած լինելուց հետո: «Ինչպիսի թանկագին զուգընկեր ես եղել դու»,- ասել է նա: Այժմ մենք միասին ծերացել ենք և դա քաղցր փորձառություն է եղել: . . . Երբ ապագայում մահվան ձեռքը նրբորեն դիպչի մեզանից մեկն ու մեկին, կլինեն արցունքներ, այո, բայց նաև կլինի մի հանդարտ և հաստատուն համոզվածություն՝ վերամիավորման և հավերժական ընկերակցության վերաբերյալ:[7]

2004 թվի սկզբին Հինքլիները տուն էին վերադառնում Ակրա Գանա Տաճարի նվիրագործումից, երբ Քույր Հինքլին հոգնածությունից ուշագնաց եղավ: Նա երբեք չվերականգնեց իր ուժերը և հեռացավ կյանքից 2004 թվի ապրիլի 6-ին: Վեց ամիս անց, հոկտեմբերի գերագույն համաժողովում, Նախագահ Հինքլին ասաց.

«Երբ ես պահել էի նրա ձեռքը և տեսա, թե ինչպես էր կյանքը հեռանում նրա մատներից, խոստովանում եմ, որ սիրտս փլվեց: Նախքան նրա հետ ամուսնանալը, նա իմ երազանքների աղջիկն էր: . . . Նա իմ սիրելի ընկերն է եղել ավելի քան մի դարի երկու երրորդը, ինձ հավասարը Տիրոջ առջև, իսկապես ինձանից ավելի բարձրը: Եվ այժմ իմ ծեր հասակում նա կրկին դարձել է իմ երազանքների աղջիկը»:[8]

Իր վշտի մեջ Նախագահ Հինքլին հաստատվեց՝ գիտենալով, որ նա և Մարջորին կնքվել էին հավերժության համար: «Կորցնել մի շատ սիրելի ընկերոջ, ում հետ քայլել ես երկար՝ ուրախության և տխրության պահերին, բացարձակապես անտանելի է»,- ասաց նա: «Կա մի մաշող մենություն, որը գնալով ուժեղանում է: Այն ցավագին տնքում է մարդու հենց հոգում: Բայց գիշերվա լռության մեջ մի լուռ շշուկ է լսվում, որն ասում է. «Ամեն ինչ լավ է: Ամեն ինչ լավ է»: Եվ անհայտությունից եկած այդ ձայնը բերում է խաղաղություն, համոզվածություն և չտատանվող համոզմունք, որ մահը վերջը չէ, որ կյանքը շարունակվում է կատարվող գործերով և ձեռք բերվող հաղթանակներով: Այդ ձայնը հանդարտ, նույնիսկ, մահկանացուի ականջների համար անլսելի, բերում է հավաստիացում, որ ինչպես եղել է բաժանում, կլինի նաև ուրախ վերամիավորում»:[9]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Երկնային Հայրը ծրագրել է ամուսնությունը ի սկզբանե:

Ի՞նչ հրաշալի բան է ամուսնությունը մեր Հավիտենական Հոր ծրագրում, մի ծրագիր, որ տրվել է Նրա աստվածային իմաստությամբ Նրա զավակների երջանկության և ապահովության, ինչպես նաև սերունդների շարունակության համար:

Նա մեր Արարիչն է, և Նա է ծրագրել ամուսնությունը ի սկզբանե: Եվայի ստեղծման ժամանակից ի վեր, «Ադամն ասաց. Սա հիմա ոսկր է իմ ոսկրիցը եւ մարմին է իմ մարմնիցը. . . .Դրա համար, մարդ կթողնի իր հորն ու մորը, և կհարի իր կնոջը, և նրանք կլինեն մեկ մարմին: Ծն. 2.23–24:)

Պողոսը գրել է Կորնթացի Սրբերին. «Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տէրումը»: (1 Կոր. 11.11:)

Ժամանակակից հայտնության մեջ Տերն ասել է.«Եվ բացի այդ, ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նա, ով արգելում է ամուսնանալը, կարգված չէ Աստծու կողմից, քանզի ամուսնությունն Աստծու կողմից է կարգված մարդու համար» (ՎևՈւ 49.15:) . . .

Անշուշտ, կարդալով սուրբ գրությունները, ինչպես հին, այնպես էլ՝ ժամանակակից, ոչ ոք չի կարող կասկածի տակ առնել

ամուսնության աստվածային բնույթը: Կյանքի ամենաքաղցր զգացմունքները, մարդկային սրտի շռայլ ու գոհացնող ազդակները, իրենց դրսևորումն են գտնում ամուսնության մեջ, որը կանգնած է մաքուր ու անարատ՝ աշխարհի չարիքից վեր:

Այսպիսի ամուսնությունը, կարծում եմ, ցանկություն է, որի համար հույս ունեն, որին ձգտում են, և որի համար աղոթում են տղամարդիկ ու կանայք՝ ամենուրեք:[10]

2

Տիրոջ տաճարներում ամուսինը և կինը կարող են կնքվել միասին ողջ հավերժության համար:

Տաճարները . . . տալիս են օրհնություններ, որոնք ոչ մի ուրիշ տեղ չեն տրվում: Այն բոլորը, ինչ տեղի է ունենում այս սրբազան տներում, գործ ունի մարդու հավերժական բնույթի հետ: Այստեղ ամուսինները, կանայք ու երեխաները կնքվում են միմյանց հետ՝ որպես ընտանիքներ ողջ հավերժության համար: Ամուսնությունը չի տևում «մինչև մահը բաժանի ձեզ»: Այն հավերժ է, եթե կողմերն ապրում են արժանի այդ օրհնությանը:[11]

Արդյոք չի՞ եղել տղամարդ, որն իրոք սիրի մի կնոջ, կամ կին, որն իսկապես սիրի մի տղամարդու, և չաղոթի, որ իրենց կապը շարունակվի մահից հետո: Արդյոք չի՞ եղել դեպք, երբ ծնողները հողին հանձնելով իրենց զավակին, չեն ցանկացել ունենալ հավաստիացում, որ իրենց սիրելի զավակը գալիք աշխարհում կրկին իրենցը կլինի: Կարո՞ղ է հավերժական կյանքին հավատացողը կասկածել, որ երկնքի Աստվածը Իր որդիներին և դուստրերին չի շնորհի կյանքի այդ ամենաթանկ բանը՝ սերը, որն իր ամենահիմաստալից դրսևորումն է գտնում ընտանեկան հարաբերություններում: Ոչ, բանականությունը պահանջում է, որ ընտանեկան հարաբերությունը պետք է շարունակվի մահից հետո: Մարդկային սիրտը փափագում է դա, և երկնքի Աստվածը հայտնել է, թե ինչպես կարելի է ապահովել դա: Տիրոջ տան սրբազան ծեսերը ապահովում են դրանք:[12]

Որքան քաղցր է հավաստիացումը, որքան մխիթարիչ է խաղաղությունը, որոնք գալիս են այն գիտելիքից, որ եթե մենք ճիշտ ամուսնանանք և ապրենք ճիշտ, մեր հարաբերությունը կշարունակվի, չնայած մահվան անխուսափելիությանը և ժամանակի ընթացքին: Տղամարդիկ գուցե սիրային երգեր գրեն և

երգեն դրանք: Նրանք կարող են տենչալ և հուսալ ու երազել: Բայց այս բոլորը կլինի միայն ռոմանտիկ ցանկություն, մինչև որ չլինի իշխանության գործադրում, որը դուրս է գալիս ժամանակի և մահվան զորությունների սահմաններից:[13]

3

Ամուսիններն ու կանայք քայլում են կողք կողքի հավերժական ճանապարհորդության ընթացքում:

Իր մեծ նախագծում, երբ Աստված ստեղծեց մարդուն, Նա ստեղծեց երկու սեռ : Այդ երկակիության ազնվացնող արտահայտությունը գտնվում է ամուսնության մեջ: Մեկ անձնավորությունը լրացնում է մյուսին:[14]

Ամուսնական ընկերակցության մեջ չկա ոչ անլիարժեքություն, ոչ էլ գերազանցություն: Կինը չի քայլում տղամարդուց առաջ, ոչ էլ տղամարդն է քայլում կնոջից առաջ: Նրանք քայլում են կողք կողքի՝ որպես Աստծո որդի և դուստր, հավերժական ճանապարհորդության ընթացքում:[15]

Ամուսնությունը իր իսկական իմաստով հավասարների ընկերակցություն է, ոչ թե իշխանության գործադրում մյուսի վրա, այլ յուրաքանչյուրը պիտի խրախուսի և աջակցի մյուսին, ինչ պարտականություններ կամ ձգտումներ էլ տղամարդը կամ կինը ունենան:[16]

Կանայք, նայեք ձեր տղամարդկանց որպես ձեր թանկագին ընկերոջ և արժանի ապրեք այդ ընկերակցությանը: Ամուսիններ, տեսեք ձեր կանանց մեջ ամենաթանկ արժանիքները ժամանակի կամ հավերժության մեջ, յուրաքանչյուրը Աստծո դուստր, կողակից է, ում հետ դուք կարող եք քայլել ձեռք ձեռքի, ուրախության, թե տխրության , կյանքի բոլոր վտանգների և հաղթանակների միջով:[17]

Ես մտածում եմ երկու [ընկերների] մասին, որոնց ես գիտեի. . . ավագ դպրոցի տարիներին և համալսարանում: Նա գյուղաքաղաքի տղա էր, հասարակ արտաքինով, առանց փողի կամ ակնհայտ խոստումների: Նա մեծացել էր ազարակում, և եթե որևէ գրավիչ հատկանիշ ուներ՝ աշխատելու կարողությունն էր: . . . Բայց իր գյուղական արտաքինով, նա մի ժպիտ ուներ և անհատականություն, որը թվում էր, երգում էր բարության

մասին: Նա քաղաքի աղջիկ էր, ով դուրս էր եկել ապահովված օջախից: . . .

Մի ինչ-որ կախարդական բան պատահեց նրանց միջև: Նրանք սիրահարվեցին: . . . [Նրանք] ծիծաղում էին, պարում ու սովորում միասին այդ տարիների ընթացքում: Նրանք ամուսնացան, երբ մարդիկ զարմանում էին, թե ինչպես նրանք կարող էին երբևէ բավարար փող աշխատել գոյատևելու համար: Նա մաքառում էր իր մասնագիտական դպրոցում և դարձավ իր դասարանի գրեթե լավագույնը: Նա կարիքի մեջ էր, խնայում էր, աշխատում ու աղոթում: Նա խրախուսում էր, աջակցում, և երբ գործերն իսկապես վատացան, նա հանդարտ ասաց.«Մենք մի կերպկհաղթահարենք»: Ոգևորված իր հանդեպ նրա հավատից, նա շարունակում էր անցնել այս դժվարին տարիների միջով: Նրանք երեխաներ ունեցան, և միասին սիրում էին նրանց, սնուցում ու տալիս նրանց ապահովություն, որը գալիս էր իրենց սիրո և միմյանց հանդեպ հավատարմության սեփական օրինակից: Այժմ անցել է մոտ քառասունհինգ տարի : Նրանց երեխաները մեծացել են և պատիվ են բերում նրանց, Եկեղեցուն և համայնքներին , որտեղ նրանք ապրում են:

Վերջերս, երբ մենք ինքնաթիռով գալիս էինք Նյու Յորքից, ես քայլեցի միջանցքի կիսամութ տաղավարով և տեսա սպիտակ մազերով մի կնոջ, ով ննջում էր գլուխն իր ամուսնու ուսին, իսկ ձեռքով ջերմորեն սեղմել էր ամուսնու ձեռքը: Ամուսինն արթուն էր և ճանաչեց ինձ: Կինն արթնացավ, երբ մենք սկսեցինք խոսել: Նրանք նույնպես վերադառնում էին Նյու Յորքից, որտեղ նա զեկուցումով հանդես էր եկել ազգային գիտական մեծ միություններից մեկի առջև: Նա քիչ բան պատմեց այդ մասին, բայց կինը հպարտորեն խոսեց նրան տրված պարգևների մասին: . . .

Ես մտածեցի այդ մասին, երբ վերադարձա իմ տեղը ինքնաթիռում: Եվ ես ասացի ինքս ինձ, այն ժամանակ նրանց ընկերները տեսան միայն մի գյուղացի տղայի և քթի վրա պեպեններով մի ժպտացող աղջկա: Բայց այդ երկուսը միմյանց մեջ տեսան սեր, հավատարմություն, խաղաղություն, հավատք և ապագա: Կոչեք դա քիմիա, եթե կամենում եք, գուցե մի փոքր բան կար դրանից, բայց կար շատ ավելին : Կար ավելի շուտ աստվածային ծաղկող ինչ-որ բան, սերմանված այնտեղ այն Հոր կողմից, ով մեր Աստվածն է: Համալսարանում ուսանելու տարիներին նրանց

ապրած կյանքը արժանի էր այդ ծաղկմանը: Նրանք ապրել էին առաքինությամբ, հավատով, գնահատանքով և հարգանքով՝ իրենց և միմյանց հանդեպ: Իրենց դժվարին մասնագիտական և տնտեսական մաքառումների տարիներին, նրանք գտել էին իրենց մեծագույն երկրային ուժը և ընկերակցությունը: Այժմ՝ տարեց հասակում, նրանք գտան իրենց խաղաղությունը, իրենց հանգիստ բավարարվածությունը միմյանցով: Բացի այդ, նրանք համոզված էին ուրախ ընկերակցության հավերժության մեջ՝ այն ուխտերի ներքո, որոնք երկար տարիներ առաջ արվել էին և խոստումների, որոնք տրվել էին Տիրոջ տանը:[18]

4

Աստված չի մերժի ոչ մի օրհնություն արժանավոր անձանց, ովքեր ամուսնացած չեն:

Ինչ-որ պատճառով մենք դրել ենք մի նշան Եկեղեցու մի շատ կարևոր խմբի վրա: Այն ասում է. «Միայնակներ»: Կցանկանայի, որ մենք չանեինք դա: Դուք անհատներ եք՝ տղամարդիկ և կանայք, Աստծո որդիներ և դուստրեր, ոչ թե «նմանակիցներ» կամ «գործակցողներ»: Այն, որ դուք ամուսնացած չեք, ձեզ չի դարձնում մյուսներից էականորեն տարբեր: Մենք բոլորս շատ նման ենք արտաքինով և հուզական արձագանքներով, մեր մտածելու, տրամաբանելու, թշվառ լինելու, երջանիկ լինելու, սիրելու և սիրված լինելու կարողությամբ:

Դուք ճիշտ նույնքան կարևոր եք, որքան բոլոր մյուսները մեր Երկնային Հոր ծրագրում և Նրա ողորմածության ներքո ոչ մի օրհնություն, որին դուք այլապես կարող էիք արժանանալ, հավերժ ետ չի պահվի ձեզանից:[19]

Թույլ տվեք այժմ մի խոսք ասել նրանց, ովքեր երբեք հնարավորություն չեն ունեցել լինել ամուսնացած : Ես հավաստիացնում եմ ձեզ, որ մենք զգայուն ենք ձեր մենակության հանդեպ, որը ձեզանից շատերն են զգում: Մենակությունը դառը և ցավոտ է: Կարծում եմ բոլոր մարդիկ զգացել են դա այս կամ այն պահին: Մեր սրտերը ուղղված են դեպի ձեզ ըմբռնումով և սիրով: . . .

. . . Ձեր կյանքի այս շրջանը կարող է սքանչելի լինել: Դուք հասունություն ունեք: Դուք դատողություն ունեք: Ձեզանից շատերն ունեն ուսուցում և փորձառություն: Դուք ունեք

ֆիզիկական, մտավոր և հոգևոր ուժ՝ բարձրացնելու, օգնելու և խրախուսելու։

Այնքան շատ մարդիկ կան դրսում, ովքեր ունեն ձեր կարիքը։ . . . Ձեր հոգևոր մարտկոցները լրիվ լիցքավորված պահեք և վառեք ուրիշների լամպերը։[20]

Ձեզ, որ չեք ամուսնացել, . . . Աստված տվել է այս կամ այն տաղանդը։ Նա տվել է ձեզ կարողություն՝ ծառայելու ուրիշների կարիքներին և օրհնելու նրանց կյանքը բարությամբ և մտահոգությամբ։ Օգնության հասեք կարիքի մեջ գտնվող ինչ-որ մեկին։ . . .

Ավելացրեք գիտելիք գիտելիքի վրա։ Կատարելագործեք ձեր միտքն ու հմտությունները գիտության որևէ ընտրված բնագավառում։ Կան վիթխարի հնարավորություններ ձեզ համար, եթե դուք պատրաստ եք դրանցից օգուտ քաղել։ . . . Մի մտածեք, որ եթե դուք միայնակ եք, Աստված լքել է ձեզ։ Աշխարհն ունի ձեր կարիքը։ Եկեղեցին ունի ձեր կարիքը։ Այնքան շատ մարդիկ և գործեր ունեն ձեր ուժի և իմաստության կարիքը։

Աղոթեք և մի կորցրեք ձեր հույսը։ . . . Ապրեք ամենալավ կյանքով, որը դուք կարող եք, և Տերն Իր ավելի մեծ իմաստությամբ և իր հավերժական ժամանակին կտա պատասխան ձեր աղոթքներին։[21]

Ձեզ, ովքեր ամուսնալուծված եք, խնդրում ենք իմացեք, որ մենք չենք նայում ձեզ վերևից, որպես ձախողակների, որովհետև ամուսնությունը ձախողվել է։ . . . Մեր պարտականությունն է չդատապարտել, այլ ներել և մոռանալ, բարձրացնել և օգնել։ Ձեր մենակության ժամերին դիմեք Տիրոջը, ով ասել է. «Ինձ մոտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կտամ ձեզ։ Որովհետեւ իմ լուծը քաղցր է, եւ իմ բեռը՝ թեթեւ»։ (Մատ. 11.28, 30։)

Տերը ձեզ չի մերժի, ոչ էլ ձեզ հեռու կվանի։ Պատասխանները ձեր աղոթքներին, հնարավոր է, չլինեն ազդեցիկ, դրանք կարող են հեշտությամբ չհասկացվել կամ նույնիսկ գնահատվել։ Բայց կգա ժամանակը, երբ դուք կիմանաք, որ օրհնվել եք։[22]

«Սնուցեք և զարգացրեք ձեր ամուսնությունը: Վերահսկեք և աշխատեք պահել այն ամուր և գեղեցիկ»:

5

Երջանկությունը ամուսնության մեջ գալիս է զուգընկերոջ հանդեպ սիրագորով մտահոգություն ցուցաբերելուց:

Փայփայեք և զարգացրեք ձեր ամուսնությունը: Վերահսկեք այն և աշխատեք ամուր ու գեղեցիկ պահել այն: . . . Ամուսնությունը պայմանագիր է, այն կուռ է, միություն է տղամարդու և կնոջ միջև՝ Ամենազորի ծրագրի ներքո: Այն կարող է փխրուն լինել: Այն պահանջում է սնուցում և մեծ ջանքեր:[23]

Տարիներ շարունակ հարյուրավոր ամուսնալուծությունների հետ գործ ունենալուց հետո, ես բավարարված եմ, որ մի հատիկ գործընթացի կիրառումը ավելի շատ բան կտա, քան բոլոր այլ բաները՝ այս ցավալի խնդիրը լուծելու համար:

Եթե յուրաքանչյուր ամուսին և յուրաքանչյուր կին անընդհատ անի՝ ինչ կարող է՝ ապահովելու իր զուգընկերոջ հարմարավետությունն ու երջանկությունը, շատ քիչ թվով ամուսնալուծություններ կլինեին, եթե իհարկե լինեին: Վիճաբանություններ երբեք չեն լսվի Մեղադրանքները երբեք չեն հավասարեցվի: Տեղի չեն ունենա բարկացկոտ պոռթկումներ: Ավելի շուտ սերը և մտահոգությունը կփոխարինեն բռնությանն ու ստորությանը: . . .

Ամուսնությունների լարվածության մեծամասնության համար բուժումը ամուսնալուծությունը չէ: Այն գտնվում է ապաշխարության և ներման մեջ, բարության և մտահոգության արտահայտությունների մեջ: Այն գտնվում է Ոսկե Կանոնի կիրառման մեջ:

Դա հիանալի գեղեցկության տեսարանի մեջ է, երբ երիտասարդ տղամարդը և երիտասարդ կինը միացնում են իրենց ձեռքերը խորանի մոտ՝ ուխտի մեջ մտնելով Աստծո առջև, որ նրանք կպատվեն և կսիրեն միմյանց: Այնուհետև որքան թշվառ է պատկերը, երբ մի քանի ամիս կամ մի քանի տարի հետո, լինում են վիրավորական դիտողություններ, ստոր և կտրուկ խոսքեր, բարձրձայներ, ծանր մեղադրանքներ:

Դա չպիտի լինի, իմ սիրելի եղբայրներ և քույրեր: Մենք կարող ենք բարձրանալ այս ստոր և ողորմելի տարրերից վեր մեր կյանքում: (տես Գաղատացիս 4.9): Մենք կարող ենք փնտրել և ճանաչել մեկս մյուսի մեջ այն աստվածային էությունը, որը գալիս է մեզ՝ որպես մեր Երկնային Հոր զավակներ: Մենք կարող ենք ապրել միասին Աստծո տված ամուսնության օրինակով՝ իրականացնելով այն, ինչ մենք կարող ենք, եթե գործադրենք ինքնակարգավարժում և ձեռնպահ մնանք մեր զուգընկերոջը կարգավարժելուց:[24]

Ամեն ամուսնություն ենթակա է պատահական փոթորկի : Բայց համբերությամբ, փոխադարձ հարգանքով և հանդուրժողականության ոգով, մենք կարող ենք դիմանալ այդ փոթորիկներին: Որտեղ սխալներ են գործվել, կարող է լինել ներողություն, ապաշխարություն և ներում: Բայց դա պետք է լինի երկուստեք պատրաստակամություն: . . .

Ես պարզել եմ, որ ամուսնության մեջ երջանկության իսկական էությունը կայանում է . . . զուգընկերոջ հարմարավետության և բարօրության համար անհանգիստ մտահոգության մեջ: Միայն անհատական և անձնական ցանկությունները բավարարելու մասին մտածելը չի կառուցի ոչ վստահություն, ոչ սեր, ոչ երջանկություն: Միայն այն ժամանակ, երբ կա անշահախնդրություն, սերն իրեն ուղեկցող հատկանիշներով կբողբոջի և կծաղկի:[25]

Մեզանից շատերը պետք է դադարեն որոնել թերություններ և սկսեն փնտրել արժանիքներ: . . . Դժբախտաբար, որոշ կանայք

ուզում են վերափոխել իրենց ամուսիններին ըստ իրենց սեփական մտադրության: Որոշ ամուսիններ համարում են իրենց բացառիկ իրավունքը ստիպել իրենց կանանց հարմարվել իրենց չափանիշներին, նրա վերաբերյալ, ինչ իրենք են համարում իդեալական: Դա երբեք չի աշխատում: Դա միայն տանում է դեպի հակառակություն, թյուրըմբռնում և վիշտ:

Պետք է լինի հարգանք միմյանց հետաքրքրությունների հանդեպ: Պետք է լինեն հնարավորություններ և խրախուսանք՝ զարգացման անձնական տաղանդի արտահայտման համար:[26]

Եղեք բացարձակապես ճշմարիտ և հավատարիմ ձեր ընտրած զուգընկերոջ հանդեպ: Ժամանակի և հավերժության տեսակետից, [ինչպես տղամարդը, այնպես էլ կինը] կլինեն մեծագույն արժեքը, որ դուք երբևէ կունենաք: [Ինչպես կինը, այնպես էլ տղամարդը] արժանի են լավագույնին, որ ձեր մեջ է:[27]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Նախագահ Հինքլին ուսուցանել է, որ Երկնային Հայրն է ծրագրել ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև «Իր զավակների երջանկության և անվտանգության համար» (բաժին 1): Ինչպե՞ս կարող է այս գիտելիքն ազդել տղամարդու և կնոջ միջև փոխհարաբերության վրա: Ինչպե՞ս կարող են ամուսինն ու կինը «մաքուր և անարատ աշխարհի չարիքից վեր» պահել իրենց ամուսնությունը:
- Որո՞նք են հավերժական ամուսնության օրհնություններն այս կյանքում և հավերժության մեջ: (Տես բաժին 2:) Ո՞ր փորձառություններ են ձեզ տվել ավելի մեծ գնահատանք հավերժական փոխհարաբերությունների համար: Ինչպե՞ս կարող ենք ուսուցանել մեր երեխաներին հավերժական ամուսնության կարևորության մասին:
- Ինչո՞ւ ամուսնությունը պետք է լինի «հավասարների ընկերակցություն»: (Տես բաժին 3.) Ի՞նչ եք դուք սովորում 3-րդ բաժնում գտնվող պատմությունից: Ինչպե՞ս կարող են ամուսինը և կինը զարգացնել այս տեսակի ուժ իրենց ամուսնության մեջ:

- Ինչպե՞ս կարող է Նախագահ Հինքլիի խոստումներն ու խորհուրդը բաժին 4-ում օգնել մարդկանց, ովքեր ամուսնացած չեն: Ինչպե՞ս են այս բաժնի ուսմունքները վերաբերում բոլոր մարդկանց: Ինչո՞ւ է կարևոր օգտագործել մեր տաղանդները և հմտությունները ուրիշներին ծառայելու համար:
- Որո՞նք են այն ուղիները, որոնցով ամուսինն ու կինը կարող են «սնուցել և զարգացնել» իրենց ամուսնությունը: (Տես բաժին 5:) Ի՞նչ եք դուք սովորել այն մասին, թե ամուսինը և կինը ինչպես կարող են հաղթահարել մարտահրավերները և միասին գտնել ավելի մեծ երջանկություն: Ինչպիսի՞ օրինակներ եք դուք տեսել:

Սոնչվող սուրբ գրություններ

1 Կորնթացիս 11.11, Մատթեոս 19.3–6, ՎևՈւ 42.22, 132.18–19, Մովսես 2.27–28, 3.18, 21–24

Օգնություն ուսուցչին

Երբ դուք ժամանակ եք նվիրաբերում ամեն օր, անձնապես և ձեր ընտանիքի հետ Աստծո խոսքի ուսումնասիրությանը, խաղաղությունը կգերիշխի ձեր կյանքում: Այդ խաղաղությունը չի գա դրսի աշխարհից: Այն կգա ձեր տան ներսից, ձեր ընտանիքի ներսից, ձեր իսկ սրտի ներսից:» (Ռիչարդ Գ. Սքոթ, «Դարձրեք հավատքի գործադրումը ձեր առաջնահերթությունը» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2014, 93):

Հղումներ

1. «Կանայք մեր կյանքում» *Ensign* կամ *Լիահոնա,*նոյ. 2004, 85:
2. In "At Home with the Hinckleys," *Ensign,* Oct. 2003, 22.
3. In Jeffrey R. Holland, "President Gordon B. Hinckley: Stalwart and Brave He Stands," *Ensign,* June 1995, 10–11.
4. In *Glimpses into the Life and Heart of Marjorie Pay Hinckley,* ed. Virginia H. Pearce (1999), x.
5. In *Glimpses,* 184.
6. Gordon B. Hinckley journal, Apr. 29, 1977.
7. In Gerry Avant, "A Tender Farewell to an Elect Lady," *Church News,* Apr. 17, 2004, 4.
8. "The Women in Our Lives," 82.
9. In Marjorie Pay Hinckley, *Letters* (2004), 264; see also R. Scott Lloyd, "Apostle's Work Continues beyond Veil," *Church News,* July 31, 2004, 3.
10. "What God Hath Joined Together," *Ensign,* May 1991, 71.
11. "The Things of Which I Know," *Ensign* or *Liahona,* May 2007, 85.
12. «Ինչի՞ համար են այս տաճարները» *Ensign,* Oct. 2010, 24; see also *Ensign,* Aug. 1974, 39–40.
13. "The Marriage That Endures," *Ensign,* July 2003, 6–7; see also *Ensign,* May 1974, 24.
14. "The Women in Our Lives," 84.
15. "Personal Worthiness to Exercise the Priesthood," *Ensign,* May 2002, 54.
16. "I Believe," *Ensign,* Aug. 1992, 6.

17. “What God Hath Joined Together,” 74.
18. “And the Greatest of These Is Love” (Brigham Young University devotional, Feb. 14, 1978), 2–3, speeches.byu.edu.
19. “To Single Adults,” *Ensign,* June 1989, 72.
20. «Երիտասարդ ամուրիներին»,72–73:
21. “Live Up to Your Inheritance,” *Ensign,* Nov. 1983, 82–83.
22. “To Single Adults,” 74.
23. “Walking in the Light of the Lord,” *Ensign,* Nov. 1998, 99.
24. “The Women in Our Lives,” 84.
25. “I Believe,” 5–6.
26. *Cornerstones of a Happy Home* (pamphlet, 1984), 5–6.
27. “Thou Shalt Not Covet,” *Ensign,* Mar. 1990, 6.

«Մենք կոչ ենք անում ծնողներին իրենց լավագույն ջանքերը նվիրել իրենց երեխաների ուսուցմանը և դաստիարակությանը։

Տուն՝ արդարակյաց կյանքի հիմքը

«Անշուշտ որքան շատ եք դաստիարակում ձեր երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանով , սիրով և բարձր ակնկալիքներով, այնքան ավելի հավանական է, որ նրանց կյանքում խաղաղություն կլինի»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

1973 թվականի վերջին Գորդոն և Մարջորի Հինքլիները դժկամությամբ որոշեցին տեղափոխվել Յուտայի Իսթ Միլլ Քրիքի իրենց տնից, որպեսզի ավելի մոտ ապրեին Եկեղեցու վարչության շենքին Սոլթ Լեյք Սիթիում: Նախագահ Հինքլին, ով այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, ժամանակ տրամադրեց Նոր Տարվա նախաշեմին գրելու իրենց տան մասին: Նրա խոսքերը բացահայտեցին իր զգացումները այդ տեղի մասին, բայց ավելի շատ, դրանք բացահայտեցին նրա զգացմունքները սիրող ընտանիքի մասին:

«Որքան տրտմած են մեր հոգիները՝ հեռանալու պատճառով»,- գրել է նա: Նա վերհիշում էր ընտանիքի աշխատանքը տունը կառուցելիս և շրջակա հողակտորը մշակելիս: Ապա նրա մտքերը ուղղվեցին դեպի փոխհարբերությունները՝ միմյանց և Աստծո հետ:

«Այստեղ մենք խաղում էինք միասին, երբ մեր երեխաները մեծանում էին, և այստեղ մենք միասին աղոթում էինք: Այստեղ մենք և մեր երեխաները սկսեցինք ճանաչել մեր Երկնային Հորը, իմանալ, որ Նա ապրում է, լսում է ու պատասխանում:

«Ես գուցե գիրք գրեմ . . . ոչ թե աշխարհի համար, այլ այն հինգ երեխաների, նրանց կողակիցների և ժառանգների համար: Եվ

եթե ես կարողանամ խոսքերով արտահայտել այդ տան պատմությունը, կլինեն արցունքներ և ծիծաղ, հիանալի, խաղաղ սիրո համատարած ոգի, որը կհուզի նրանց սրտերը, ովքեր կկարդան այն, քանի որ նրանք, ովքեր ապրեցին և մեծացան այնտեղ, սիրում էին միմյանց, նրանք սիրում էին իրենց մերձավորներին, նրանք սիրում էին իրենց Աստծուն և Տեր Հիսուս Քրիստոսին»:[1]

Իր ծառայության ընթացքում Նախագահ Հինքլին վկայեց հավատարիմ ընտանիքներին սիրելու կարևորության մասին: Նրա ղեկավարության ներքո Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը թողարկեց «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթուղթը, որը Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը նկարագրեց, որպես «շեփորի ձայն ընտանիքները պաշտպանելու և զորացնելու համար»:[2] 1995 թվականի սեպտեմբերին Սփոփող Միության գերագույն ժողովին այս հայտարարությունը կարդալուց հետո Նախագահ Հինքլին հայտարարեց. «Ցանկացած ազգի ուժը գտնվում է նրա տների պատերի մեջ: Մենք հորդորում ենք մեր ժողովրդին ամենուրեք ամրացնել իրենց տները՝ համաձայն դարերով սրբագործված այս արժեքների»:[3]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Ընտանեկան հարաբերությունները ամենասրբազանն են բոլոր հարաբերություններից:

Ընտանիքը աստվածային է: Այն հաստատվել է մեր Երկնային Հոր կողմից: Այն ընդգրկում է ամենասրբազանը բոլոր հարաբերություններից: Տիրոջ նպատակները կարող են իրականանալ միայն դրա կազմակերպության միջոցով:[4]

Մենք մի եկեղեցի ենք, որը վկայություն է բերում ընտանիքի՝ հոր, մոր երեխաների կարևորության մասին, և այն փաստի մասին, որ մենք բոլորս Աստծո՝ մեր Երկնային Հոր զավակներն ենք: Ծնողները, ովքեր երեխաներ են աշխարհ բերում, պատասխանատվություն ունեն սիրելու այդ երեխաներին, դաստիարակելու նրանց և հոգ տանելու նրանց մասին, ուսուցանելու նրանց այն արժեքները, որոնք կօրհնեն նրանց կյանքը, որպեսզի նրանք մեծանան դառնալու լավ քաղաքացիներ: . . .

Ես կամենում եմ շեշտադրել այն, ինչն արդեն ծանոթ է ձեզ, և դա մեր ընտանիքները միասին սիրով և բարությամբ, արժևորմամբ և հարգանքով կապելու կարևորության մասին է և Տիրոջ ուղիներն ուսուցանելու, որպեզի ձեր երեխաները մեծանան արդարակեցության մեջ և խուսափեն այն ողբերգություններից, որոնք հաղթում են այնքան շատ ընտանիքների ողջ աշխարհում:[5]

Անհրաժեշտ է, որ դուք չանտեսեք ձեր ընտանիքները: Դուք ավելի արժեքավոր ոչինչ չունեք:[6]

2

Հայրերն ու մայրերը արտոնություն ունեն հոգ տանելու իրենց երեխաներին և ուսուցանելու նրանց Հիսուս Քրիստոսի ավետարանը:

Մենք կոչ ենք անում ծնողներին իրենց լավագույն ջանքերը նվիրել իրենց երեխաներին ըստ ավետարանի սկզբունքների ուսուցանելուն և դաստիարակելուն, ինչը նրանց մոտ կպահի Եկեղեցուն: Տունը արդարակյաց կյանքի հիմքն է և ոչ մի այլ միջոց չի կարող փոխարինել կամ կատարել նրա հիմնական գործառույթները՝ այդ աստվածատուր պատասխանատվությունն իրականացնելու գործում:[7]

Ես բավարարված եմ, որ ոչ մի բան չի հավաստիացնի ավելի մեծ հաջողություն ծնող լինելու վտանգավոր նախաձեռնության մեջ, քան ընտանեկան կյանքի ծրագիրը, որը գալիս է ավետարանի սքանչելի ուսմունքից, որ տան հայրը կարող է հանդերձավորվել Աստծո քահանայությամբ, որ դա նրա արտոնությունն է և պարտավորությունը՝ որպես Երկնային Հոր զավակների կառավարիչ, նրանց կարիքները հոգալը, որ նա է կառավարում տունը քահանայության ոգով «համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով» (ՎևՈւ 121.41–42), որ տանը մայրը Աստծո դուստրն է, խելամիտ, նվիրված և սիրող հոգի, ով կարող է հանդերձավորվել Աստծո Հոգով, որ նրա արտոնությունն է և պարտավորությունը, որպեսզի հոգ տանի՝ որպես տնտեսուհի մեր Երկնային Հոր զավակներին իրենց ամենօրյա կարիքներում, որ իր ամուսնու ընկերակցությամբ նա պետք է նաև ուսուցանի իր երեխաներին «հասկանալ ապաշխարության վարդապետությունը, հավատքն առ Քրիստոս՝ կենդանի Աստծո Որդին և մկրտությունն ու Սուրբ Հոգու պարգևը

ձեռնադրմամբ . . . [և] աղոթելն ու Տիրոջ առջև ուղիղ քայլելը»: (ՎԵՈՒ 68.25, 28:)

Այդպիսի տանը ծնողներին սիրում են, ոչ թե նրանցից սարսափում, նրանց գնահատում են, ոչ թե վախենում: Իսկ երեխաները համարվում են Տիրոջ պարգևները, հոգ տանելու, դաստիարակելու, խրախուսելու և ուղղության տալու համար:

Կարող են լինել պատահական անհամաձայնություններ, կարող են լինել փոքր վեճեր: Բայց, եթե ընտանիքում կա աղոթք, սեր ու քննարկում, այնտեղ մնացած կլինի քնքշանք, որը հավերժ կկապի և հավատարմություն, որը միշտ կառաջնորդի:[8]

Այժմ, խոսք՝ ուղղված միայնակ ծնողներին: . . . [Դուք] կրում եք հոգնեցուցիչ բեռներ, տալով ամենօրյա ճակատամարտեր, որոնք տեղի են ունենում երեխաներին մեծացնելիս և հոգ եք տանում, որ նրանց կարիքները բավարարվեն: Սա միայնակ պարտավորություն է: Բայց դուք կարիք չունեք ամբողջապես միայնակ լինել: Կան այնքան շատ մարդիկ այս Եկեղեցում, ովքեր կկամենային օգնության հասնել ձեզ նրբազգացությամբ և ըմբռնումով: Նրանք չեն ուզում խառնվել այն բաներին, որտեղ իրենց կարիքը չի զգացվում: Բայց նրանց հետաքրքրությունն անկեղծ է, անմիջական, և նրանք օրհնում են իրենց սեփական կյանքը, երբ օրհնում են ձեր և ձեր երեխաների կյանքը: Ընդունեք նրանց օգնությունը: Նրանք պետք է դա մատուցեն հանուն իրենց ու ձեր օգտի:

Մենք ունենք հազարավոր լավ եպիսկոպոսներ այս Եկեղեցում: Մենք ունենք հազարավոր քվորումի լավ պաշտոնյաներ: Մենք ունենք Սփոփող Միության հազարավոր լավ կանայք: Մենք ունենք տնային ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ: Նրանք ձեր ընկերներն են, տեղում նշանակված Տիրոջ կողմից, որ տան իրենց ուժը ձեզ օգնելու համար: Եվ երբեք մի մոռացեք, որ Ինքը Տերը, ուժի ավելի մեծ աղբյուր է, քան որևէ մեկ ուրիշը: Ես հուզվեցի մի փորձառությունից, որը պատմեց . . . մի միայնակ ծնող, ով մեծացնում էր յոթ երեխա. նա աղաչել էր իր Երկնային Հորը, որ հնարավորություն տար իրեն գնալ Նրա մոտ, գոնե մի գիշեր՝ մխիթարություն և ուժ գտնելու վաղվա փորձությունների համար: Քնքուշ պատասխանը, որը եկավ նրա միտքը, գրեթե հայտնություն էր. «Դու չես կարող գալ ինձ մոտ, բայց ես կգամ քո մոտ»:[9]

Անշուշտ, որքան ավելի շատ եք դաստիարակում ձեր երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանով , սիրով և բարձր ակնկալիքներով, այնքան ավելի հավանական է, որ նրանց կյանքում խաղաղություն կլինի։[10]

3

Ընտանեկան աղոթքի միջոցով երեխաները աճում են հավատով կենդանի Աստծո հանդեպ։

Նայեք ձեր փոքրիկներին։ Աղոթեք նրանց հետ։ Աղոթեք նրանց համար և օրհնեք նրանց։ Աշխարհը, որի միջով նրանք շարժվում են, բարդ և դժվարին է։ Նրանք մտնելու են ձախորդության հորձանուտը։ Նրանք ձեր ողջ ուժի և հավատքի կարիքը կունենան, որը դուք կարող եք տալ նրանց, մինչ նրանք դեռ ձեր մոտ են։ Եվ նրանք նաև ավելի մեծ ուժի կարիք կունենան, որը գալիս է ավելի բարձր զորությունից։ Նրանք պետք է անեն ավելին, ոչ թե հարմարվեն այն բաներին, ինչ իրենք գտնեն։ Նրանք պետք է բարձրացնեն աշխարհը, և միակ լծակները, որ կունենան, իրենց սեփական կյանքի օրինակն է և համոզելու ուժը, որը կգա նրանց վկայություններից և Աստծո մասին նրանց գիտելիքից։ Նրանք Տիրոջ օգնության կարիքը կունենան։ Քանի դեռ նրանք երիտասարդ են, աղոթեք նրանց հետ, որպեսզի կարողանան ճանաչել այն ուժի աղբյուրը , որըկարիքի դեպքում միշտ մատչելի կլինի։[11]

Ես չգիտեմ որևէ այլ գործընթաց, որը կարող է ունենալ այնպիսի նպաստավոր ազդեցություն ձեր կյանքի վրա, որը միասին ծնկի իջնելու աղոթքի գործընթացն է։ Հենց մեր «Երկնային Հայր» խոսքերը վիթխարի ազդեցություն ունեն։ Դուք չեք կարող ասել դրանք անկեղծորեն և ճանաչումով՝ Աստծո հանդեպ առանց որևէ պատասխանատվության զգացում ունենալու։։ . . .

Ձեր ամենօրյա զրույցները Նրա հետ կբերեն խաղաղություն ձեր սրտերին և ուրախություն ձեր կյանքում, որն ուրիշ ոչ մի այլ աղբյուրից չի կարող է գալ։ . . . Ձեր սերը կուժեղանա։ Դուք ավելի բարձր կգնահատեք միմյանց։։

Ձեր երեխաները կօրհնվեն ապահովության զգացումով, որը գալիս է մի տան մեջ ապրելուց, որտեղ բնակվում է Աստծո Հոգին։ Նրանք կճանաչեն և կսիրեն ծնողներին, ովքեր հարգում են միմյանց, և հարգանքի մի զգացում կաճի նրանց սրտերում։

Նրանք կզգան մեղմորեն ասված բարի խոսքերի ապահովությունը: Նրանք պաշտպանված կլինեն հոր և մոր կողմից, ովքեր ազնվորեն ապրելով Աստծո հետ, ազնիվ են ապրում միմյանց հետ և իրենց մերձավորների հետ: Նրանք կհասունանան երախտագիտության զգացումով, լսելով, թե իրենց ծնողներն ինչպես են աղոթքի ժամանակ երախտագիտություն հայտնում մեծ ու փոքր օրհնությունների համար: Կենդանի Աստծո հանդեպ նրանց հավատը կաճի:[12]

4

Ընտանեկան երեկոն կարող է ծնողներին և երեխաներին միավորել Տիրոջ խոսքը սովորելիս:

Ես հիշում եմ, երբ հինգ տարեկան փոքր տղա էի, Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հայտարարեց ամբողջ Եկեղեցուն, որ պետք է հավաքեն իրենց ընտանիքներին միասին՝ ընտանեկան երեկոյի: Հայրս ասաց. «Եկեղեցու Նախագահը խնդրել է, որ մենք անենք դա, և մենք պատրաստվում ենք անել»:

Այսպիսով, մենք բոլորս հավաքվեցինք ընտանեկան երեկոյի: Ծիծաղելի էր: Նա ասաց. «Մենք կերգենք մի երգ»: Դեհ, մենք երգիչներ չէինք: . . . Մենք ուղղակի փորձում էինք երգել և ծիծաղում էինք միմյանց վրա: Այդպես վարվեցինք շատ այլ բաների հետ: Բայց այդ փորձառությունից աստիճանաբար դուրս եկավ մի բան, որը սքանչելի էր՝ մի գործընթաց, որն օգնեց մեզ, որը մեզ միավորեց որպես ընտանիք, որն ուժեղացրեց մեզ և մեր սրտերում աճեց մի համոզմունք ընտանեկան երեկոյի կարևորության վերաբերյալ:[13]

Ես երախտապարտ եմ, որ մենք, որպես Եկեղեցի, որպես մեր ծրագրի հիմնական մաս՝ ունենք ամենշաբաթյա ընտանեկան երեկոյի սովորույթը: Նշանակալի է, որ այս մշտազբաղ օրերին հազարավոր ընտանիքներ ողջ աշխարհում անկեղծ ջանք են գործադրում սրբագործելու շաբաթվա մեկ երեկոն ՝ միասին երգելու, միմյանց ուսուցանելու Տիրոջ խոսքը, աղոթքով միասին ծնկի իջնելու, շնորհակալություն հայտնելու Տիրոջը Նրա ողորմածությունների համար, խնդրելու Նրա օրհնությունները մեր կյանքի, մեր տների, մեր գործերի ու մեր երկրի համար: Կարծում եմ, մենք քիչ ենք գնահատում այն մեծ բարիքը, որ կգա այս ծրագրից:[14]

Եթե դուք ունեք որևէ կասկածներ ընտանեկան երեկոյի զորության վերաբերյալ, փորձեք այն: Հավաքեք ձեր երեխաներին ձեր շուրջը, ուսուցանեք նրանց, բերեք վկայություն , միասին կարդացեք սուրբ գրությունները և միասին լավ ժամանակ անցկացրեք:[15]

5

Ծնողները պետք է սկսեն ուսուցանել իրենց երեխաներին, երբ երեխաները շատ փոքր են:

Մեր ամուսնությունից ոչ շատ անց մենք կառուցեցինք մեր առաջին տունը: Մենք քիչ փող ունեինք, և ես կատարեցի աշխատանքի մեծ մասը: Կանաչապատումը ամբողջապես իմ պարտականությունն էր: Բազմաթիվ ծառերից առաջինը, որը ես տնկեցի, անփուշ քաղցր սպիտակ ակացիան էր, և ես պատկերացնում էի օրը, երբ դրա ստվերը ամռանը կօգներ հով պահել տունը: Ես այն տնկեցի անկյունում, որտեղ ուժեղ քամի էր փչում արևելյան կիրճից: Ես մի փոս փորեցի, տեղավորեցի մերկ արմատը, հող լցրի դրա շուրջը, ջրեցի և լրիվմոռացա: Այն պարզապես ծառի մի շիվ էր, երևի երեք քառորդ մատնաչափ [2 սանտիմետր] տրամագծով: Դա այնքան ճկուն էր, որ ես կարող էի ճկել այն հեշտությամբ ցանկացած ուղղությամբ: Ես գրեթե ուշադրություն չէի դարձնում դրա վրա, մինչ տարիներն անցնում էին: Ապա մի ձմեռային օր, երբ ծառը տերևաթափ էր եղել, ես պատահաբար պատուհանից տեսա ծառը: Ես նկատեցի, որ այն թեքվել էր դեպի արևմուտք, տձև էր և համաչափ չէր: Դժվարանում էի հավատալ: Ես դուրս գնացի և հենվելով ծառին կարծես ուզում էի հրել այն, որ ուղիղ կանգներ: Բայց բնի տրամագիծն այժմ մոտավորապես մեկ ոտնաչափ էր: Իմ ուժը կարծես ոչինչ էր դրա դեմ: Ես իմ գործիքների պահեստից վերցրի ծանրություն բարձրացնող հարմարանք և մի թոկ՝ մի ծայրը կցելով ծառին, իսկ մյուսը ամուր տեղադրված նեցուկին: Ես քաշեցի պարանը: Փոկանիվները մի փոքր շարժվեցին, իսկ ծառի բունը թեթևակի դողաց: Բայց սա էր ընդամենը: Այն կարծես ասում էր ինձ. «Դու չես կարող ինձ ուղղել: Շատ ուշ է: Ես այսպես եմ աճել, քո անփութության պատճառով և չեմ թեքվի»:

Ի վերջո ես հուսահատ վերցրի սղոցս և կտրեցի արևմտյան կողմի մեծ ծանր ճյուղը: Ես ետ քայլեցի և զննեցի արածս: Ես

«Հսկեցեք ձեր երեխաներին ձեր շուրջը, ուսուցանեք նրանց, բերեք վկայություն, միասին կարդացեք սուրբ գրությունները և լավ ժամանակ անցկացրեք»:

կտրել էի ծառի մեծ մասը, թողնելով մի հսկայան սպի՝ մոտ ութ մատնաչափ [20 սանտիմետր] հորիզոնական ուղղությամբ և դեպի երկինք խոյացող միայն մեկ փոքրիկ ճյուղ:

. . . Ես վերջերս կրկին նայեցի ծառին: Այն մեծ է, նրա ձևը ավելի լավն է և այն մեծ պաշտպանություն է տան համար: Բայց որքան մեծ էր մատղաշ ծառի վնասվածքը և որքան ցավոտ էր բուժումը, որը ես օգտագործել էի այն ուղղելու համար: Երբ ծառը տնկում էի, սկզբում մի փոքրիկ պարանը այն կպահեր քամու ուժերի դեմ: Ես կարող էի և պետք է օգտագործեի այդ պարանը, որն այնքան քիչ ջանք էր պահանջում, բայց ես չարեցի: Եվ ծառը թեքվեց այն ուժերից, որոնք եկան նրա դեմ:

Երեխաները նման են ծառերին: Երբ նրանք փոքր են, նրանց կյանքը կարելի է ձևավորել և ուղղորդել, սովորաբար այնքան քիչ ջանքերով: Առակացի գրողն ասել է. «Կրթիր երեխային իր ճանապարհին համեմատ, որ ծերացած էլ՝ չի հեռանալ նորանից» (Առակաց 22.6): Այդ ուսուցումը իր արմատներն է գտնում տանը:[16]

Եսայիան ասել է. «Եվ բոլոր քո զավակները պիտի ուսուցանվեն Տիրոջ կողմից. և մեծ պիտի լինի քո զավակների խաղաղությունը» (Եսա. 54.13)։

Այսպիսով, առաջնորդեք ձեր որդիներին և դուստրերին, այսպիսով, ուղեկցեք և ուղղորդեք նրանց այն ժամանակից, երբ նրանք շատ փոքր են, այսպիսով, ուսուցանեք նրանց Տիրոջ ուղիներով, որպեսզի խաղաղությունը նրանց ընկերակիցը լինի կյանքի ընթացքում։[17]

6

Եթե երեխաներն ըմբոստանում են, ծնողները պետք է շարունակեն աղոթել նրանց համար, սիրեն և օգնության հասնեն նրանց։

Ես ընդունում եմ, որ ծնողները, ովքեր, չնայած սիրո զեղումներին, և նրանց ուսուցանելու ջանասեր և հավատարիմ ջանքերին, տեսնում են, որ իրենց երեխաներն աճում են հակառակ ձևով և արտասվում են իրենց մոլորված որդիների և դուստրերի համար, երբ նրանք միտումնավոր հետապնդում են ողբերգական հետևանքներով վարքագծի։ Այդպիսիների հանդեպ ես մեծ համակրանք եմ տածում և նրանց համար ես կամենում եմ մեջբերել Եզեկիելի խոսքերը. «Որդին պիտի չկրէ հօր անօրէնութիւնը. եւ հայրը պիտի չկրէ որդիի անօրէնութիւնը» (Եզեկիել 18.20)։[18]

Երբեմն, չնայած ձեր բոլոր փորձերին , երեխան ըմբոստ է մեծանում։ «Բայց շարունակեք գործել։ Անձնատուր մի եղեք։ Դուք երբեք չեք կորցնի, քանի դեռ փորձում եք։ Շարունակեք գործել։[19]

Եթե որևէ մեկը ձեզանից ունի երեխա կամ սիրելի մեկը այդ վիճակում [ըմբոստության], անձնատուր մի եղեք։ Աղոթեք նրանց համար և սիրեք նրանց, հասեք նրանց և օգնեք նրանց։[20]

Երբեմն կարող է թվալ, թե շատ ուշ է։ . . . Սակայն հիշեք իմ անփուշ սպիտակ ակացիայի ծառը [տես էջեր 171–72]։ Վիրահատությունն ու տառապանքը առաջացրին գեղեցիկ մի բան, որի հետագա կյանքն ապահովեց հյուրընկալ ստվեր օրվա տապից։[21]

7

Մենք զորացնում ենք մեր ընտանիքները, երբ որոնում ենք երկնքի օգնությունը և դաստիարակում սիրո ոգի և հարգանք միմյանց հանդեպ։

[Ընտանիք աճեցնելը] կարող է հեշտ չլինել։ Այն լի է հիասթափությամբ և մարտահրավերով։ Այն կպահանջի քաջություն և համբերություն։ . . . Սերը կարող է տարբեր լինել՝ մանկության տարիներին տրված և մինչև երկչոտ պատանեկության տարիները հասնող շռայլ սերը։ Դա կանի այն, ինչ երեխաների վրա շռայլորեն ծախսված փողը երբեք չի անի։

—Եվ համբերությունը՝ լեզվի զսպմամբ և բարկության վրա ինքնատիրապետումով։ . . .

—Եվ քաջալերանքը, որն արագ է հաճոյախոսություն անելիս և դանդաղ՝ քննադատելիս։

Սրանք աղոթքների հետ կիրականացնի հրաշքներ։ Դուք չեք կարող ակնկալել, որ միայնակ եք դա անելու։ Դուք երկնքի օգնության կարիքն ունեք՝ մեծացնելու երկնքի երեխա՝ ձեր երեխան, ով նաև իր Երկնային Հոր զավակն է։[22]

Ամեն երեխա, քիչ հնարավոր բացառություններով, տան արդյունքն է, լինի լավ, վատ կամ անտարբեր։ Երբ երեխաները մեծանում են , նրանց կյանքը մեծ մասամբ, դառնում է ընտանեկան ուսուցման շարունակությունն ու արտացոլումը։ Եթե առկա է կոպտություն, վիրավորանք, անվերահսկելի բարկություն, անհավատարմություն, պտուղները կլինեն որոշակի և նկատելի, և ամենայն հավանականությամբ դրանք կկրկնվեն հաջորդ սերնդում։ Եթե, մյուս կողմից, առկա է համբերատարություն, ներողամտություն, հարգանք, ուշադրություն, բարություն, ողորմածություն և կարեկցանք, պտուղները կրկին նկատելի կլինեն և դրանք կլինեն հավերժ հատուցվող։ Դրանք կլինեն դրական, քաղցր ու սքանչելի։ Եվ երբ ողորմածություն է ցույց տրվում և ուսուցանվում ծնողների կողմից, այն կկրկնվի հաջորդ սերնդի կյանքում և գործերում։

Ես խոսում եմ հայրերի և մայրերի հետ ամենուրեք մի աղերսանքով, որ մեր տներում կոպտությունը թողնենք մեր ետևում, սանձենք մեր բարկությունը, ցածրացնենք մեր ձայնը և գործենք ողորմածությամբ, սիրով ու հարգանքով մեկս մյուսի հանդեպ։[23]

Հնում ասում էին.«Մեղմ պատասխանը կհանգստացնէ բարկութիւնը» Առակ. 15.1։) Մենք հազվադեպ ենք տհաճության մեջ ընկնում, երբ մեղմ ենք խոսում։ Միայն այն դեպքում, երբ մենք բարձրացնում ենք մեր ձայնը, թռչում են կայծերը և հողի փոքրիկ բլրակները դառնում են հակառակության մեծ լեռներ։ . . . Երկնքի ձայնը մեղմ ցածր ձայն է [տես 1 Թագ. 19.11–12], նմանապես, տնային խաղաղության ձայնը հանդարտ ձայն է։[24]

Իհարկե, ընտանիքներում կարգ ու կանոնի կարիք կա։ Բայց կարգ ու կանոնը խստությամբ, դաժանությամբ, անխուսափելիորեն տանում են ոչ թե ուղղվելու, այլ ավելի շուտ զայրույթի և դառնության։ Այն չի բժշկում ոչինչ և միայն բարդացնում է խնդիրը։ Այն դատապարտված է ձախողման։[25]

Չկա սիրո կարգուկանոնի նման ոչ մի կարգուկանոն ողջ աշխարհում։ Այն ունի իր ուրույն կախարդանքը։[26]

Եկեք անընդհատ աշխատենք զորացնել մեր ընտանիքները։ Թող ամուսիններն ու կանայք զարգացնեն միմյանց հանդեպ բացարձակ հավատարմության ոգին։ Եկեք չմտածենք միմյանց վերաբերյալ, թե այդպես էլ պետք է լիներ, այլ եկեք անընդհատ աշխատենք դաստիարակել սիրո և հարգանքի ոգի միմյանց հանդեպ։[27]

Ով Աստված, մեր Հավերժական Հայր, օրհնիր ծնողներին սովորեցնել սիրով, համբերությամբ ու քաջալերանքով նրանց, ովքեր ամենաթանկն են՝ երեխաներին, ովքեր Քո մոտից են եկել, որպեսզի նրանք միասին կարողանան անվտանգ լինել և ուղղորդվել դեպի բարին և զարգացման ընթացքում բերեն օրհնություններ աշխարհին, որի մասն են նրանք լինելու։[28]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Նախագահ Հինքլին ուսուցանել է, որ ընտանիքն «ընդգրկում է՝ ամենասրբազանը բոլոր հարաբերություններից» (բաժին 1)։ Ինչպե՞ս կարող է այս ճշմարտությունն ազդել ընտանիքի անդամների հետ մեր փոխհարաբերությունների վրա։ Ինչպե՞ս կարող է այն ազդել մեր ժամանակի և գործերի առաջնահերթությունները սահմանելիս։

- Ինչո՞ւ պետք է ծնողները «իրենց լավագույն ջանքերը նվիրաբերեն իրենց երեխաներին ավետարանի սկզբունքներն ուսուցանելուն»: (Տես բաժին 2:) Ինչպե՞ս է ավետարանի ուսուցումն օրհնել ձեր ընտանիքը: Ինչպե՞ս կարող են ծնողները բարելավել իրենց ջանքերը՝ օգնելու իրենց երեխաներին ավետարանով ապրելու համար:
- Վերանայեք Նախագահ Հինքլիի ուսմունքները ընտանեկան աղոթքի օրհնությունների մասին (տես բաժին 3): Ինչո՞ւ եք կարծում, որ ընտանեկան աղոթքն օրհնություններ է բերում: Ինչպիսի՞ օրհնություններ եք ստացել ձեր ընտանիքի հետ կանոնավոր աղոթելու արդյունքում: Ի՞նչ ենք մենք կորցնում, եթե անտեսում ենք ընտանեկան աղոթքը:
- Ի՞նչ կարող ենք սովորել Գորդոն Բ. Հինքլիի ընտանեկան երեկոյի փորձառությունից, երբ նա փոքրիկ տղա էր: (Տես բաժին 4:) Ի՞նչ օրհնություններ են եկել ձեզ և ձեր ընտանիքին ընտանեկան երեկոների միջոցով:
- Վերանայեք Նախագահ Հինքլիի պատմությունը քաղցր սպիտակ ակացիայի ծառի մասին (տես բաժին 5): Ի՞նչ կիրառումներ կարող է այս պատմությունն ունենալ ձեզ համար::
- Ինչպե՞ս կարող է Նախագահ Հինքլիի ուսմունքների բաժին 6-ն օգնել այն երեխայի ծնողներին, ով շեղվել է: Ի՞նչ եղանակներով ծնողները և մյուսները կարող են օգնության հասնել սիրով:
- Ինչո՞ւ է կարևոր ծնողների համար կարգավարժել իրենց երեխաներին սիրով, և ոչ թե բարկությամբ: Ի՞նչ կարող ենք մենք անել որպես ծնողներ սիրով կարգավարժելու համար: Ինչպե՞ս կարող են ընտանիքի անդամները զարգացնել սիրո և հարգանքի ոգի միմյանց հանդեպ: (Տես բաժին 7:)

Առնչվող սուրբ գրություններ

Երկրորդ Օրինաց 11.19, Ենովս 1.1–5, Մոսիա 4.14–15, Ալմա 56.45–48,3 Նեփի 18.21, տես նաև «Ընտանիք՝ *Հայտարարություն աշխարհին»,* Ensign կամ *Լիահոնա,* նոյ. 2010, 129:

Օգնություն ուսուցչին

«Ձեզ կարող է թվալ, թե հասկացողության պակաս ունեք այն սկզբունքի հետ կապված, որը պատրաստվում եք ուսուցանել: Սակայն, մինչ դուք աղոթքով ուսումնասիրում եք այն, ձգտում

եք ապրել դրանով, պատրաստվում եք սովորեցնել այն և այնուհետև կիսվում եք դրանով ուրիշների հետ, ձեր անձնական վկայությունը ամրանում և խորանում է» (*Teaching, No Greater Call* [1999], 19)։

Հղումներ

1. In Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 333.
2. M. Russell Ballard, in "Today's Family: Proclamation Still a Clarion Call," lds.org/prophets-and-apostles/unto-all-the-world/proclamation-on-family-is-still-a-clarion-call; accessed May 12, 2015.
3. "Stand Strong against the Wiles of the World," *Ensign,* Nov. 1995, 101.
4. "Pillars of Truth," *Ensign,* Jan. 1994, 5.
5. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 208.
6. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 387.
7. First Presidency letter, Feb. 11, 1999, in "Policies, Announcements, and Appointments," *Ensign,* June 1999, 80.
8. "Pillars of Truth," 5.
9. "To Single Adults," *Ensign,* June 1989, 74.
10. "Stand Strong against the Wiles of the World," 99.
11. "Behold Your Little Ones," *Ensign,* June 2001, 5.
12. *Cornerstones of a Happy Home* (pamphlet, 1984), 10–11.
13. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2,* 402.
14. In Conference Report, Oct. 1965, 51.
15. *Teachings of Gordon B. Hinckley,* 212.
16. "Four Simple Things to Help Our Families and Our Nations," *Ensign,* Sept. 1996, 6–7.
17. "Great Shall Be the Peace of Thy Children," *Ensign,* Nov. 2000, 52.
18. "These, Our Little Ones," *Ensign,* Dec. 2007, 8.
19. "Inspirational Thoughts," *Ensign,* Aug. 1997, 4.
20. *Teachings of Gordon B. Hinckley,* 54.
21. "Four Simple Things to Help Our Families and Our Nations," 8.
22. "Bring Up a Child in the Way He Should Go," *Ensign,* Nov. 1993, 60.
23. "Blessed Are the Merciful," *Ensign,* May 1990, 70.
24. "Except the Lord Build the House . . ." *Ensign,* June 1971, 72.
25. "Behold Your Little Ones," 4.
26. "The Environment of Our Homes," *Ensign,* June 1985, 6.
27. "Thanks to the Lord for His Blessings," *Ensign,* May 1999, 88–89.
28. "Bring Up a Child in the Way He Should Go," 60.

Նեփիի հնազանդության օրինակը ներշնչել է
երիտասարդ Գորդոն Բ. Հինքլիին։

Հնազանդություն. Պարզապես ապրեք ավետարանով

«Ավետարանի ուղին մի պարզ ուղի է: . . . Խոնարհվեք և քայլեք հնազանդության ճանապարհով»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Երբ Գորդոն Բ. Հինքլին 14 տարեկան էր, նա մի փորձառություն ունեցավ Սոլթ Լեյք Թաբերնաքլում, որը ստիպեց նրան կարևոր որոշում կայացնել: Նա հետագայում հիշում է.

«Ես [լսել եմ], թե ինչպես էր Հեբեր Ջ. Գրանտը պատմում Մորմոնի Գրքի ընթերցանության հետ կապված իր փորձառության մասին, երբ դեռ պատանի էր: Նա խոսում էր Նեփիի մասին և այն մեծ ազդեցության մասին, որ նա ունեցել էր իր կյանքում: Իսկ հետո համոզմունքով զնգուն ձայնով, որը երբեք չեմ մոռանա, նա մեջբերեց Նեփիի հետևյալ հրաշալի բառերը: «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է, քանզի գիտեմ, որ Տերը պատվիրաններ չի տալիս մարդկանց զավակներին՝ առանց ուղի պատրաստելու նրանց համար, որպեսզի նրանք կարողանան իրագործել այն, ինչ նա պատվիրել է իրենց» (1 Նեփի 3.7):

«Ապա դրա վերաբերյալ իմ պատանի սրտում մի որոշում ծնվեց՝ փորձել անել այն, ինչ Տերն է պատվիրել»:[1]

Գորդոն Բ. Հինքլին իր սրտում միշտ կրեց այդ որոշումը: Տարիներ անց, երբ նա Եկեղեցու Նախագահն էր, իր ուսմունքներում միշտ վերադառնում էր այն ուղերձին, որը նա լսել էր, երբ երիտասարդ տղա էր: Տարածքային համաժողովում խոսելով մի խումբ Սրբերի հետ, նա ասաց.

«Ես շատ հարցազրույցներ եմ տվել լրագրողներին: Միակ բանը, որը նրանք ասել են, հետևյալն է. «Հիմա ո՞րն է լինելու ձեր թեման ձեր նախագահության ընթացքում»: Ես պարզապես ասում եմ. «Նույն թեման, որը կրկնվում է այս Եկեղեցում՝ Եկեղեցու Նախագահի և առաքյալների կողմից, որքան ես հիշում եմ. Պարզապես ապրեք ավետարանով և յուրաքանչյուր ոք, ով այդպես կանի, իր սրտում կհամոզվի այն ճշմարտության վերաբերյալ, որով ինքն ապրում է»:[2]

Որպես Եկեղեցու Նախագահ՝ գերագույն համաժողովի իր առաջին ելույթում Նախագահ Հինքլին կոչ արեց բոլորին ավելի ջանասիրաբար ապրել ավետարանով:

«Իմ եղբայրներ և քույրեր, հիմա մեզ համար եկել է ժամանակը կանգնել մի փոքր ավելի բարձր, բարձրացնել մեր աչքերը, լարել մեր միտքը, որպեսզի ավելի լավ ըմբռնենք ու հասկանանք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մեծ առաքելությունն այս հազարամյակում: Սա ուժեղ լինելու ժամանակ է: Սա առանց երկմտելու առաջ գնալու ժամանակ է՝ լավ հասկանալով մեր առաքելության իմաստը, մեծությունն ու կարևորությունը: Սա մի ժամանակ է անելու այն, ինչ ճիշտ է, անկախ դրան հետևող հետևանքներից: Սա պատվիրանները պահելու ժամանակ է: Սա մի ժամանակ է, երբ պիտի սիրով ու բարությամբ հասնենք նրանց, ովքեր վշտի մեջ են, ովքեր թափառում են խավարի ու ցավի մեջ: Սա ժամանակ է, երբ միմյանց նկատմամբ պիտի լինենք ուշադիր ու բարի, վայելուչ ու քաղաքավարի մեր բոլոր հարաբերություններում: Այլ կերպ ասած՝ դառնանք ավելի Քրիստոսանման:[3]

Նախագահ Հինքլին մշտապես ընդգծում էր այս ուղերձի կարևորությունը: Տասը տարի անց նա կրկնեց այս բառերը գերագույն համաժողովի ժամանակ. «Ձերն է հերթը դատելու, թե մենք որքանով ենք առաջադիմել 10 տարի առաջ տրված այդ հրավերի կատարումն իրականացնելու գործում»:[4]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Մենք ուխտի ժողովուրդ ենք և մեծ են պարտականությունները, որոնք կապված են այդ ուխտի հետ։

Մենք ուխտի ժողովուրդ ենք և դա շատ լուրջ հարց է։ Երբ այս աշխատանքը վերականգնվեց, և Տերը սահմանեց այդ վերականգնման նպատակները, Նա ասաց, որ վերականգնման պատճառներից մեկն այն էր, որ Իր հավերժական ուխտը պիտի վերահաստատվի։ Այդ ուխտը . . . կապվել էր Աբրահամի ու Եհովայի միջև, երբ հզոր Եհովան մեծ ու հանդիսավոր խոստում տվեց Աբրահամին։ Նա ասաց, որ իր սերմը պիտի դառնա ինչպես ծովափի ավազը, որ բոլոր ազգերը պիտի օրհնվեն դրա միջոցով։ Նա կապեց այս ուխտը նրա հետ, որ Նա պիտի լինի նրանց Աստվածը, և նրանք պիտի լինեն Նրա ժողովուրդը։ . . . Հետո հաստատվեց այն հարաբերությունը, որը հավերժական նշանակություն ուներ այն բոլորի հավերժական կյանքում, ովքեր պիտի մուտք գործեին այնտեղ։ Սքանչելի են դրա ենթիմաստները. եթե մենք գործենք որպես Աստծո զավակներ, Նա կլինի մեր Աստվածը, ով մեզ կօրհնի, կսիրի, կառաջնորդի և կօգնի։

Հիմա, այս տնտեսությունում, այդ հավերժական ուխտը վերահաստատվել է։ Մենք փաստորեն կապել ենք այդ ուխտը մկրտվելիս։ Մենք դարձել ենք Նրա աստվածային ընտանիքի մասը, ինչպես այն կար։ Աստծո բոլոր զավակները Նրա ընտանիքից են, բայց մի հատուկ ու հրաշալի կապ կա Աստծո և Նրա ուխտի զավակների միջև։ Եվ երբ մենք Եկեղեցի էինք գալիս, . . . դառնում էինք ուխտյալ ժողովրդի մի մաս և ամեն անգամ, երբ մենք ճաշակում ենք հաղորդությունից, անում ենք դա ոչ միայն ի հիշատակ Աստծո Որդու զոհաբերության, ով Իր կյանքը տվեց մեզանից յուրաքանչյուրի համար, այլ կա նաև մի հավելյալ տարր, որ մենք մեզ վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը և երդվում պահել Նրա պատվիրանները, իսկ Նա խոստանում է, որ կօրհնի մեզ Իր Սուրբ Հոգով։

Մենք ուխտյալ ժողովուրդ ենք և մեծ են պարտականությունները, որոնք ուղեկցում են այդ ուխտին։ Մենք չենք կարող

«Երբ մենք ընդունում ենք հաղորդությունը, . . . մենք մեզ վրա ենք վերցնում Հիսուս Քրիստոսի անունը և երդվում միշտ պահել Նրա պատվիրանները»:

սովորական մարդիկ լինել: Մենք պիտի վեր կանգնենք ամբոխից: Մենք պիտի կանգնենք մի փոքր բարձր: Մենք պիտի լինենք մի փոքր ավելի լավը, մի քիչ ավելի բարի, մի փոքր ավելի շռայլ, մի քիչ ավելի քաղաքավարի, մի փոքր ավելի խոհուն, մի քիչ ավելի շատ ուրիշներին հասնող:[5]

Մենք այն ժողովուրդն ենք, որ մեզ վրա ենք վերցրել հանդիսավոր ուխտ և Հիսուս Քրիստոսի անունը: Եկեք ձգտենք մի փոքր ավելի ջանասիրաբար պահել ուխտերը, ապրել՝ ինչպես Տերն է խնդրել մեզանից, որ ապրենք:[6]

2

Տերն ակնկալում է, որ մենք ավետարանով ապրենք բոլոր ոլորտներում:

Մենք ապրում ենք փոխզիջման ու համաձայնության դարաշրջանում: Իրավիճակներում, որոնց հետ մենք բախվում ենք, մենք գիտենք որն է ճիշտը, բայց մեր հասակակիցների ճնշման և մեզ համոզողների ձայների ներքո մենք անձնատուր ենք լինում: Մենք գնում ենք փոխզիջման: Մենք համաձայնվում ենք: Մենք

տեղի ենք տալիս ու ամաչում ինքներս մեզնից։ Մենք պիտի զարգացնենք մեր համոզմունքներին հետևելու զորություն։[7]

Ավետարանի ուղին պարզ ուղի է։ Պահանջներից մի քանիսը կարող են թվալ տարրական ու ոչ անհրաժեշտ։ Մի արհամարհեք դրանք։ Խոնարհվեք և քայլեք հնազանդության մեջ։ Ես խոստանում եմ, որ դրան հաջորդող արդյունքը սքանչելի կլինի տեսնել և բավարարող՝ զգալ։[8]

Ես մեծապես խնդրում եմ, որ մենք բոլորս մի փոքր ավելի ջանասիրաբար փորձենք ապրել՝ հասնելու այն աստվածային բարձրությանը, որը մեր մեջ է։ Մենք կարող ենք ավելի լավ անել դա, քան հիմա անում ենք։ Մենք կարող ենք ավելը լավը լինել, քան կանք իրականում։ Եթե մեր առջևում մշտապես ունենանք աստվածային ժառանգության, Աստծո Հայրության և մարդու եղբայրության պատկերը՝ որպես իրականություն, մենք կլինենք մի փոքր ավելի հանդուրժող, մի քիչ ավելի բարի, մի փոքր ավելի հասնող՝ բարձրացնելու, օգնելու և աջակցելու մեզ շրջապատող մարդկանց։ Մենք ավելի քիչ հակված կլինենք իջնելու այն մակարդակին, որն անշուշտ անվայելուչ է մեզ։[9]

Կրոնը, որի մի մասն եք դուք, շաբաթը յոթ օր է, այլ ոչ միայն կիրակի օրը։ . . . Այն մշտական է՝ քսանչորս ժամ՝ օրական, յոթ օր՝ շաբաթական, 365 օր՝ տարեկան։[10]

Տերն ակնկալում է, որ մենք ապրենք պատշաճ կյանքով ու կիրառենք ավետարանը կյանքի բոլոր ոլորտներում։[11]

3

Աստված կհեղի Իր օրհնությունները նրանց վրա, ովքեր ապրում են՝ հնազանդվելով Իր պատվիրաններին։

Տերը պատվիրեց Եղիային գնալ ու թաքնվել Քերիթ հեղեղատի մոտ, խմել հեղեղատի ջրից, իսկ ագռավները կկերակրեին նրան։ Սուրբ գրությունը մի պարզ ու հրաշալի ձևակերպում է կատարում Եղիայի մասին. «Եւ նա գնաց և արաւ Տիրոջ խոսքի համեմատ» (Գ Թագավորաց 17.5)։

Ոչ մի առարկություն չեղավ։ Ոչ մի արդարացում չեղավ։ Խուսափողական պատասխան չեղավ։ Եղիան պարզապես «գնաց ու արավ Տիրոջ խոսքի համեմատ»։ Եվ նա փրկվեց սարսափելի

աղետներից, որոնք պատահեցին նրանց, ովքեր ծաղրում էին, վիճում էին ու կասկածի տակ առնում:[12]

Մորմոնի Գրքի ողջ պատմությունը խոսում է այն մարդկանց մասին, ովքեր արդարակյաց կյանքով ապրելով, երկրպագում էին Հիսուս Քրիստոսին, բարգավաճում էին այդ հողի վրա և առատորեն օրհնվում Տիրոջից, իսկ երբ նրանք մեղանչում էին, մոլորվում ու մոռանում իրենց Աստծուն, հայտնվում էին աղքատության, պատերազմի ու փորձանքների մեջ: Ձեր ապահովությունը, ձեր խաղաղությունն ու բարգավաճումը կախված է Ամենազորի պատվիրանների հանդեպ ձեր հնազանդությունից:[13]

«Պահիր իմ պատվիրանները շարունակ, և արդարության պսակը կստանաս դու» [ՎԵՌ 25.15]: Դա էր Էմմա Սմիթին տրված Տիրոջ խոստումը: Սա Տիրոջ խոստումն է ձեզանից յուրաքանչյուրին: Երջանկությունը գալիս է պատվիրանները պահելիս: Վերջին Օրերի Սրբի համար . . . այդ պատվիրանների կոպիտ խախտումը կարող է միայն դժբախտություն բերել: Իսկ յուրաքանչյուրի համար, ով կհետևի այդ պատվիրաններին, կա հավերժական ճշմարտության արդարության պսակը:[14]

Իրական ազատությունը գալիս է Աստծո խորհուրդներին հնազանդվելիս: Հին կտակարանում ասվում է. «Որովհետև պատուիրանքը ճրագ է, իսկ օրէնքը՝ լույս» (Առակաց 6.23):

Ավետարանը ճնշման միջոցի փիլիսոփայություն չէ, ինչպես շատերը վերաբերվում են դրան: Այն ազատության ծրագիր է, որը կարգավարժում է ցանկությունը և ուղղորդում վարքագիծը: Դրա պտուղները քաղցր են, իսկ պարգևները՝ շռայլ: . . .

«Արդ այն ազատութիւնովը, որ Քրիստոսը մեզ ազատեց, հաստատ կացեք, և դարձեալ ծառայութեան լծի տակ մի մտնէք»: (Գաղ. 5.1:)

«Որտեղ որ Տիրոջ Հոգին է՝ այնտեղ է ազատութիւն»: (2 Կոր. 3.17:)[15]

Մեր ապահովությունը մեր ապաշխարության մեջ է: Մեր ուժը գալիս է Աստծո պատվիրաններին հնազանդվելուց: . . . Եկեք ամուր կանգնենք չարի դեմ՝ տանը և դրսում: Եկեք ապրենք երկնային օրհնություններին արժանավոր կյանքով, բարեփոխելով մեր կյանքը՝ որտեղ անհրաժեշտ է և ապավինենք Նրան՝ մեր բոլորի Հորը:[16]

Մենք վախենալու ոչինչ չունենք: Աստված ղեկի մոտ է: Նա դեպի բարին կուղղորդի այս գործը: Նա կհեղի Իր օրհնությունները նրանց վրա, ովքեր հնազանդվում են Իր պատվիրաններին: Այսպիսին է եղել Նրա խոստումը: Ոչ ոք չի կասկածում այդ խոստումը պահելու նրա կարողությանը:[17]

4

Եկեղեցու ղեկավարները ցույց են տալիս ուղին և հրավիրում անդամներին ապրել ավետարանով:

Կան մարդիկ, ովքեր ասում են. «Եկեղեցին չպիտի թելադրի ինձ՝ ինչպես մտածել այս կամ այն բանի մասին կամ ինչպես ապրել իմ կյանքը:

Ես պատասխանում եմ՝ ոչ, քանի որ Եկեղեցին ոչ մի մարդու չի թելադրում, թե նա ինչպես պիտի մտածի կամ ինչ պիտի անի: Եկեղեցին ցույց կտա ճանապարհը և կհրավիրի յուրաքանչյուր անդամի ապրել ավետարանով ու վայելել այն օրհնությունները, որոնք գալիս են այդպիսի ապրելակերպից: Եկեղեցին չի թելադրի որևէ մեկին, բայց խորհուրդ կտա, կհամոզի, կքաջալերի և հավատարմություն կակնկալի նրանցից, ովքեր կընդունեն Եկեղեցու անդամությունը:

Երբ ես համալսարանի ուսանող էի, մի առիթով հորս ասացի. «Ես զգում եմ, որ Բարձրագույն Իշխանավորները խախտել են իրենց բացառիկ իրավունքների սահմանները, երբ պաշտպանել են որևէ հատուկ գործընթաց»: Նա շատ իմաստուն ու բարի մարդ էր: Նա ասաց. «Եկեղեցու Նախագահը հրահանգել է մեզ, և ես աջակցում եմ նրան՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող, ու ես մտադիր եմ հետևել նրա խորհրդին»:

Երկար տարիներ ես ծառայել եմ այս Եկեղեցու ընդհանուր խորհուրդներում: . . . Ես ցանկանում եմ վկայություն բերել, որ չնայած մասնակցել եմ բառացիորեն հազարավոր ժողովների, որտեղ քննարկվել են Եկեղեցու քաղաքականությունն ու ծրագրերը, ես երբեք չեմ մասնակցել որևէ ժողովի, որտեղ չփնտրվեր Տիրոջ առաջնորդությունը կամ էլ ներկաներից մեկը ցանկանար պաշտպանել կամ կատարել որևէ գործընթաց, որը կվնասեր կամ հարկադրական կլիներ ինչ-որ մեկի համար:[18]

Ես ասում եմ դա յուրաքանչյուրի ու բոլորի համար, որ մենք [ովքեր նստած են Եկեղեցու ընդհանուր խորհրդում], չունեն

անձնական օրակարգ։ Մենք ունենք միայն Տիրոջ օրակարգը։ Կան մարդիկ, ովքեր քննադատում են, երբ մենք խորհրդի որևէ հայտարարություն կամ նախազգուշացում ենք անում։ Խնդրում եմ իմացեք, որ մեր դիմումները հիմնավորված չեն որևէ եսասիրական ցանկությամբ։ Խնդրում եմ իմացեք, որ մեր նախազգուշացումները զուրկ չեն հիմքից ու պատճառից։ Խնդրում եմ իմացեք, որ տարբեր խնդիրների վերաբերյալ արտահայտվելու որոշումները չեն կայացվում առանց քննարկման, որոշման և աղոթքի։ Խնդրում եմ իմացեք, որ մեր միակ ձգտումը ձեզանից յուրաքանչյուրին օգնելն է ձեր խնդիրների, ձեր ընտանիքների, ձեր կյանքի հետ կապված հարցերում։ . . . Ցանկություն չկա որևէ բան ուսուցանելու, որը կտարբերվի նրանից, ինչ Տերն է ուսուցանել։ . . .

Մերն է պարտականությունը, որն ընդհանուր գծերով ներկայացրել է Եզեկիելը. «Մարդի որդի, ես քեզ դէտ եմ դրել Իսրայէլի տան համար. եւ դու պետք է իմ բերանից խօսք լսես եւ զգուշացնես նորանց իմ կողմանէ» (Եզեկ. 3.17։)

Մենք եսասիրական ցանկություն չունենք այս հարցերից ոչ մեկում, բացի այն ցանկությունից, որ մեր եղբայրներն ու քույրերը երջանիկ լինեն, որ խաղաղություն ու սեր լինի նրանց ընտանիքներում, որ նրանք օրհնված լինեն Ամենազորի զորությամբ՝ իրենց տարբեր արդար ձեռնարկումներում։[19]

Աստված իր եղանակներով մշտապես հայտնում է իր կամքը իր ժողովրդի վերաբերյալ։ Ես բերում եմ ձեզ իմ վկայությունը, որ այս Եկեղեցու ղեկավարները երբեք չեն խնդրի մեզ անել որևէ բան, որը մենք չենք կարող կատարել առանց Տիրոջ կամքի։ Գուցե մենք անհարմար զգանք։ Այն, ինչը մեզանից խնդրում են անել, կարող է հաճելի կամ հարմար չլինել մեր գաղափարներին։ Բայց եթե մենք փորձենք հավատով, աղոթքով ու հասատակամությամբ, մենք կարող ենք իրականացնել այն։

Ես ձեզ վկայություն եմ բերում, որ Վերջին Օրերի Սրբերի երջանկությունը, խաղաղությունը, զարգացումը, բարգավաճումը և այս ժողովրդի հավերժական փրկությունն ու վեհացումը կայանում է Աստծո քահանայության խորհուրդներին հնազանդությամբ հետևելու մեջ։[20]

5

Փոքր որոշումները կարող են հանգեցնել հսկայական հետևանքների:

Ես կարող եմ նկարագրել մի սկզբունք, . . . որին հետևելը կարող է մեծացնել հնարավորությունը, որ մեր որոշումները ճիշտ կլինեն և հետևաբար, մեր կյանքի զարգացումն ու երջանկությունը անսահման կաճեն: Այս հրաշալի սկզբունքն է՝ *պահել հավատը:* . . .

Ես չեմ կարող մանրամասն պատմել ձեզ ինչպես որոշել ամեն ինչ: Բայց ես կարող եմ խոստանալ, որ եթե դուք որոշումներ կայացնեք ըստ ավետարանի չափանիշների ու Եկեղեցու ուսմունքների, եթե դուք պահեք հավատը, ձեր կյանքը բարու մեծ պտուղներ կտա և դուք կլինեք երջանիկ ու կունենաք ձեռքբերումներ:[21]

Տարիներ առաջ ես աշխատում էի երկաթգծի ընկերությունում: . . . Դա այն ժամանակ էր, երբ համարյա բոլորն օգտվում էին մարդատար գնացքներից: Մի առավոտ ես զանգ ստացա Նյուարքի (Նյու Ջերսի) իմ պաշտոնակցից: Նա ասաց. «Այսինչ համարի գնացքը ժամանել է, բայց ուղեբեռների վագոնը չկա: Ինչ-որ տեղ 300 ուղևորներ կորցրել են իրենց ուղեբեռները և շատ զայրացած են»:

Ես անմիջապես գնացի աշխատանքի՝ պարզելու, թե վագոնն ուր կարող էր գնացած լինել: Ես պարզեցի, որ այն պատշաճ ձևով բեռնված էր ու հասել էր Կալիֆորնիայի Օուքլանդ քաղաքը: Այն տեղափոխեցին մեր երկաթուղի Սոլթ Լեյք Սիթիում և ի վերջո հասավ Սենթ Լուիս: Այնտեղ այն կցեցին մեկ այլ երկաթուղու, որը հասցրեց այն Նյուարք (Նյու Ջերսի): Բայց մի անխոհեմ սլաքավար Սենթ Լուիս կայարանում տեղափոխեց սլաքը, որը պողպատի մի փոքր կտոր է, ընդամենը 7,5 սանտիմետր տեղափոխման կետից, ապա ձգեց լծակը վագոնը անջատելու համար: Մենք պարզեցինք, որ Նյուարքին (Նյու Ջերսի) պատկանող ուղեբեռների վագոնը փաստորեն Նոր Օռլեանում էր (Լուիզիանա)՝դրա նշանակման վայրից 2400 կիլոմետր հեռու: Ընդամենը 7,5 սանտիմետր տեղափոխությունը Սենթ Լուիս կայարանում մի անփույթ աշխատողի կողմից սկսել էր այն սխալ ռելսուղով և հեռավորությունը դրա իսկական նշանակման

Նախագահ Հինքլին մեր որոշումները համեմատել է ազարակի դարպասի հանգույցների հետ:

վայրից կտրուկ մեծացավ: Ահա թե ինչպես է լինում մեր կյանքում: Մեր կյանքի կայուն ընթացքին հետևելու փոխարեն մեր մի սխալ գաղափարով շեղում ենք մեր ուղին մեկ այլ ուղղությամբ: Մեր իսկական նշանակակետից շեղումը կարող է լինել շատ փոքր, բայց եթե շարունակվի, այդ փոքր շարժումը դառնում է մեծ ճեղք և մենք հայտնվում ենք շատ հեռու այն տեղից, որտեղ մենք մտադիր էինք գնալու: . . . Սրանք շատ փոքր բաներ են, որոնց պատճառով կյանքը շրջվում է և մեծ տարբերություն ստեղծում:[22]

Մի օր ես մոտեցա մի մեծ ագարակի դարպասի: Ես բարձրացրի փականը և բացեցի դուռը: Շարժումը հանգույցների մոտ այնքան թեթևակի էր, որ հազիվ էր նկատվում: Բայց դարպասի մյուս ծայրին կար մի մեծ կամար՝ տասնվեց ոտնաչափ շառավղով: Նայելով փականների շարժմանը, երբեք չես կարող պատկերացնել այն կարևոր գործողությունը, որը գալիս է այդ փոքրիկ շարժման արդյունքում:

Այդպես է նաև մեր կյանքում կայացրած որոշումների դեպքում: Մի փոքր միտք, մի փոքր բառ, մի փոքր գործողություն կարող է հանգեցնել վիթխարի հետևանքների:[23]

6

Ավետարանով ապրելով մենք ուժեղացնում ենք Եկեղեցին և օգնում, որ Աստծո աշխատանքը տարածվի աշխարհով մեկ:

Դուք կարող եք ուժեղացնել [Եկեղեցին] ձեր ապրելակերպով: Թող ավետարանը լինի ձեր սուրն ու վահանը: . . .

. . . Ինչ հրաշալի կլինի ապագան, երբ Ամենազորը առաջ տանի Իր փառահեղ աշխատանքը, հավերժ դիպչելով նրանց, ովքեր կընդունեն և կապրեն Նրա ավետարանով:[24]

Ես տեսնում եմ մի հրաշալի ապագա այս անհաստատ աշխարհում: Եթե մենք կառչենք մեր արժեքներից, եթե մենք կառուցենք մեր ժառանգության վրա, եթե մենք ապրենք Տիրոջ խոսքին հնազանդվելով, եթե մենք պարզապես ապրենք ավետարանով, մենք օրհնված կլինենք հրաշալի ձևով: Մեզ կվերաբերվեն որպես մի հատուկ ժողովրդի, որը գտել է յուրահատուկ երջանկության բանալին:[25]

Թող ամեն տղամարդ, կին ու երեխա որոշի Տիրոջ աշխատանքը դարձնել ավելի լավը, ավելի ուժեղ ու ավելի հրաշալի, քան այն եղել է նախկինում: Սա մեր կյանքի որակն է, որը տարբերություն է ստեղծում: Մերն է որոշումը ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանով, որը ստեղծում է այդ տարբերությունը: Սա անհատական գործ է: Եթե բոլորս աղոթենք, Եկեղեցին կդառնա ավելի ուժեղ: Այդպես է նաև ավետարանի յուրաքանչյուր սկզբունքի հետ: Եկեք դառնանք ավետարանն առաջ տանող այս գործի մի մասը, որն աճում է ողջ աշխարհում: Մենք չենք կարող անշարժ կանգնել, մենք պիտի առաջ շարժվենք: Անհրաժեշտ է, որ մենք այդպես գործենք: Մեր անձնական համոզմունքը, որն ապրում է յուրաքանչյուրիս սրտում, Եկեղեցու իրական ուժն է: Առանց դրա մենք համարյա ոչինչ չունենք, դրա հետ մենք ունենք ամեն ինչ:[26]

Ես հրավիրում եմ ձեզանից յուրաքանչյուրին, որտեղ էլ որ լինեք՝ որպես Եկեղեցու անդամ, կանգնել ձեր ոտքերի վրա և երգը ձեր սրտում առաջ շարժվել՝ ապրելով ավետարանով, սիրելով Տիրոջը և կառուցելով արքայությունը: Միասին մենք կմնանաք այդ ուղու վրա և կպահենք մեր հավատը, իսկ ամենազորը կլինի մեր ուժը:[27]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Լինելով Տիրոջ ուխտի ժողովուրդ, ինչո՞ւ «մենք չենք կարող սովորական մարդիկ լինել»: (Տես բաժին 1:) Տիրոջ հետ կապած ուխտերը ինչպե՞ս են ազդում ձեր առօրյա կյանքի վրա:
- Նախագահ Հինքլին ուսուցանել է, որ «մենք պիտի ուժ զարգացնենք՝ հետևելու մեր համոզմունքներին» (բաժին 2): Ինչպե՞ս ենք մենք երբեմն ընդգծում մեր համոզմունքները: Ինչպե՞ս կարող ենք ինքներս զորանալ գայթակղությանը դիմակայելու համար:
- Եղիայի մասին նախագահ Հինքլիի պատմությունը ինչպե՞ս կարող ենք կիրառել մեր կյանքում: (Տես բաժին 3:) Ինչպե՞ս դուք կպատասխանեք մեկին, ով կարծում է, որ պատվիրանները խիստ սահմանափակող են: Ի՞նչ օրինակներ եք տեսել, երբ պատվիրաններին հնազանդվելը բերել է ազատություն, ապահովություն և խաղաղություն:
- Վերանայեք Նախագահ Հինքլիի բացատրությունն այն մասին, թե Եկեղեցու ղեկավարներն ինչպես են խորհուրդներ ու նախազգուշացումներ տալիս (տես բաժին 4): Ինչպե՞ս եք դուք օրհնվել Եկեղեցու ղեկավարների խորհուրդներին հետևելով:
- Ի՞նչ կարող ենք սովորել ուղեբեռների կորած վագոնի մասին Նախագահ Հինքլիի պատմությունից: (Տես բաժին 5:) Ինչո՞ւ են փոքր որոշումներն այդքան մեծ տարբերություն ստեղծում մեր կյանքում: Ո՞րն է այն փոքրիկ որոշումը, որը մեծ տարբերություն է բերել ձեր կյանք: Մենք ինչպե՞ս կարող ենք ճանաչել այն փոքր շեղումները, որոնք կարող են մեզ հեռու պահել Աստծո ճանապարհից:
- Ավետարանով ապրելն ինչպե՞ս է օգնում մեզ հաղթահարել այս աշխարհի անորոշությունները: (Տես բաժին 6:) Ավետարանով ապրելն ինչպե՞ս կարող է հեշտացնել մեր կյանքը: Մտածեք, թե դուք ինչպե՞ս կարող եք ավելի ակտիվորեն հզորացնել Եկեղեցին և օգնել, որ Աստծո աշխատանքն աճի ողջ աշխարհով մեկ:

Սոնչվող սուրբ գրություններ

Երկրորդ Օրինաց 4.39–40, Եբրայեցիս 5.8–9, ՎևՈւ 64.33–34, 93.26–28, 98.22, Աբրահամ 3.24–26, Հավատո Հանգանակներ 1.3

Օգնություն ուսումնասիրողին

«Կարդալը, ուսումնասիրելը և խորհելը նույնը չեն: Մենք կարդում ենք բառեր և կարող ենք ունենալ գաղափարներ: Մենք ուսումնասիրում ենք և սուրբ գրքերում կարող ենք հայտնաբերել օրինակներ և հարաբերություններ: Բայց, երբ մենք խորհում ենք, հայտնություն ենք հրավիրում Հոգու միջոցով: Խորհելը ինձ համար մտածելն ու աղոթելն է, որ ես անում եմ սուրբ գրություններն ուշադիր կարդալուց և ուսումնասիրելուց հետո» (Հենրի Բ. Այրինգ, «Ծառայեք Հոգով», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2010, 60):

Հղումներ

1. "If Ye Be Willing and Obedient," *Ensign,* July 1995, 2.
2. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 404.
3. "This Is the Work of the Master," *Ensign,* May 1995, 71.
4. "Opening Remarks," *Ensign* or *Liahona,* May 2005, 4.
5. *Teachings of Gordon B. Hinckley,* 148–49.
6. *Teachings of Gordon B. Hinckley,* 146.
7. "Building Your Tabernacle," *Ensign,* Nov. 1992, 52.
8. "Everything to Gain—Nothing to Lose," *Ensign,* Nov. 1976, 96.
9. *Teachings of Gordon B. Hinckley,* 160–61.
10. *Teachings of Gordon B. Hinckley,* 404.
11. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 412.
12. "If Ye Be Willing and Obedient," 4.
13. *Teachings of Gordon B. Hinckley,* 406–7.
14. "If Thou Art Faithful," *Ensign,* Nov. 1984, 92.
15. In Conference Report, Apr. 1965, 78.
16. "The Times in Which We Live," *Ensign,* Nov. 2001, 74.
17. "This Is the Work of the Master," 71.
18. "Loyalty," *Ensign* or *Liahona,* May 2003, 60.
19. "The Church Is on Course," *Ensign,* Nov. 1992, 59–60.
20. "If Ye Be Willing and Obedient," *Ensign,* Dec. 1971, 125.
21. "Keep the Faith," *Ensign,* Sept. 1985, 3, 6.
22. "A Prophet's Counsel and Prayer for Youth," *Ensign,* Jan. 2001, 5–7.
23. "Keep the Faith," 3.
24. "Stay the Course—Keep the Faith," *Ensign,* Nov. 1995, 72.
25. "Look to the Future," *Ensign,* Nov. 1997, 69.
26. *Teachings of Gordon B. Hinckley,* 138–39.
27. "Stay the Course—Keep the Faith," 72.

Երկնքի տակ չկա որևէ բան, որը կփոխարինի արդյունավետ աշխատանքին: Սա այն գործընթացն է, որով իրականանում են երազանքները:

Ձեռք բերել խաղաղություն և բավարարություն ինքնապահովման միջոցով

«Մենք ուսուցանում ենք ինքնապահովումը որպես կյանքի սկզբունք, որ մենք պիտի ապահովենք ինքներս մեզ և հոգ տանենք մեր սեփական կարիքների մասին»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Երբ Գորդոն Բ. Հինքլին երեխա էր, նա սովորում էր ինքնապահովման սկզբունքը, մինչ աշխատում էր իր ծնողների, քույրերի ու եղբայրների հետ: Նա հետագայում հիշում է.

«Մենք ապրում էինք մի մեծ տան մեջ: . . . Մենք ունեինք մի մեծ մարգագետին բազմաթիվ ծառերով, որոնք ծածկված էին միլիոնավոր տերևներով և կար շատ աշխատանք, որը մշտապես պիտի արվեր:

. . . Մենք մի գազօջախ ունեինք խոհանոցում և մեկն էլ՝ ճաշասենյակում: Հետագայում տեղադրվեց մի հնոց, որը հրաշալի բան էր: Բայց այն ուներ ածուխի անհագ ախորժակ և չկար ավտոմատ հնոցապան: Ածուխը պիտի բահով նետվեր հնոցի մեջ և զգուշորեն կուտակվեր ամեն երեկո:

Ես մի մեծ դաս սովորեցի հնոցի այդ հրեշից. եթե դուք ցանկանում եք տաքություն ստանալ, պիտի տքնաջան աշխատեք բահով:

Հայրիկս մի լավ գաղափար ուներ այն մասին, որ իր որդիները պիտի սովորեն աշխատել՝ լինի ձմեռ, թե ամառ, և այսպիսով նա գնեց մոտ հինգ ակր [20000 քառակուսի մետր] մակերես ունեցող ագարակ, որն ի վերջո մեծացավ, դառնալով ավելի քան երեսուն ակր: Մենք ապրում էինք այնտեղ ամռանը և վերադառնում քաղաք, երբ դասերը սկսվում էին:

Մենք ունեինք մի մեծ պտղատու այգի և ծառերը պիտի էտվեին ամեն գարուն: Հայրս տանում էր մեզ էտման ցուցադրություններին, որոնք կատարվում էին գյուղատնտեսական քոլեջի փորձառու մասնագետների կողմից: Մենք իմացանք մի մեծ ճշմարտություն. դուք կարող եք շատ հեշտ որոշել, թե ինչպիսի պտուղ կքաղեք սեպտեմբերին, կախված այն բանից, թե ինչպես եք դուք էտել փետրվարին»:[1]

Այս ճշմարտություններն ընդունելով որպես իր սեփական հիմունքներից մեկը, Նախագահ Հինքլին հաճախ է ուսուցանել գործնական դասեր ավետարանով ապրելու վերաբերյալ: Նա վկայում էր այն օրհնությունների մասին, որոնք գալիս են տքնաջան աշխատանքի շնորհիվ և խրախուսում էր Վերջին Օրերի Սրբերին ապրել իրենց միջոցների սահմաններում և պատրաստվել այն աղետներին, որոնք կարող են գալ ապագայում:

Ի լրումն այս սկզբունքների ուսուցմանը, Նախագահ Հինքլին օգնեց տրամադրել եղանակներ, որպեսզի Սրբերը հետևեն դրանց: Օրինակ, 2001 թվականի ապրիլին նա ներկայացրեց Կրթության մշտական ֆոնդը, որն ըստ նրա ոգեշնչված էր Աստծո կողմից:[2] Այս ծրագրի միջոցով մարդիկ կարող էին գումարներ ներդնել մի հիմնադրամի, որը կապահովեր կարճաժամկետ վարկեր՝ օգնելու Եկեղեցու արժանավոր անդամներին, հիմնականում վերադարձած միսիսոներներին, ձեռք բերել կրթություն կամ մասնագիտական ուսուցում, որը կհանգեցներ նշանակալի զբաղվածության: Երբ մարդիկ վերադարձնեին այդ վարկերը, այդ գումարները կներգրավվեին ֆոնդում՝ օգնելու ապագա մասնակիցներին: Կրթության մշտական ֆոնդն օգնել է տասնյակ հազարավոր մարդկանց դառնալ ինքնապահով: Ինչպես Նախագահ Հինքլին մի անգամ ասաց, այն տալիս է «հույսի պայծառ շող»:[3]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Երբ մենք աշխատում ենք ազնվորեն, մեր կյանքը օրհնվում է ընդմիշտ:

Մենք հավատում ենք աշխատանքի ավետարանին: Երկնքի տակ չկա որևէ բան, որը կփոխարինի արդյունավետ աշխատանքին: Սա մի գործընթաց է, որի միջոցով իրականանում

«Երեխաները կարիք ունեն աշխատելու իրենց ծնողների հետ: . . . Նրանք կտեսնեն, որ աշխատանքը մաքրության, առաջընթացի ու բարգավաճման գինն է»:

են երազանքները: Սա այն գործընթացն է, որի միջոցով սին երազանքները դառնում են ակտիվ ձեռքբերումներ:[4]

Մի փոքր խաղը և մի փոքր պարապությունը լավ է: Բայց աշխատանքն է, որ տղամարդու և կնոջ կյանքը հավասարազոր է դարձնում: Աշխատանքն է, որ տրամադրում է սնունդ, որը մենք ուտում ենք, հագուստ, որը մենք կրում ենք, տուն, որտեղ ապրում ենք: Մենք չենք կարող ժխտել հմուտ ձեռքերով ու կրթված ուղեղներով աշխատանքի կարիքը, եթե մենք պիտի աճենք ու բարգավաճենք անհատապես և հավաքականորեն:[5]

Ես բացահայտել եմ, որ կյանքը մեծ հերոսական գործերի շարք չէ: Կյանքը լավագույն դեպքում մշտական բարության ու պարկեշտության խնդիր է, առանց բարձրաձայնելու այն, որը պիտի արվի, երբ դա անելու կարիքը կա: Ես նկատել եմ, որ հանճարները չեն, որ տարբերություն են ստեղծում այս աշխարհում: Ես նկատել եմ, որ աշխարհի գործը հիմնականում կատարվում է սովորական տղամարդկանց ու կանանց տաղանդի շնորհիվ, ովքեր աշխատել են արտասովոր ձևով:[6]

Երեխաները պիտի աշխատեն իրենց ծնողների հետ՝ նրանց հետ լվանալով ամանեղենը, հատակը, էտելով ծառերը և թփուտները, ներկեն, վերանորոգեն, մաքրեն և կատարեն հարյուրավոր այլ գործեր, որտեղ նրանք կսովորեն, որ աշխատանքը մաքրության, առաջընթացի ու բարգավաճման գինն է:[7]

Այս Եկեղեցու մեծ հանճարեղությունը աշխատանքն է: Բոլորն աշխատում են: Դուք չեք աճում, եթե չեք աշխատում: Հավատը, ճշմարտության վկայությունը նման են իմ ձեռքի մկաններին: Եթե դուք օգտագործեք այն, այն կուժեղանա: Եթե դուք դնեք այն վիրակապի մեջ, այն կթուլանա և կախ կընկնի: Մենք մարդկանց աշխատանք ենք տալիս: Մենք մեծ բաներ ենք սպասում նրանցից և սքանչելին ու հրաշալին այն է, որ նրանք հաջողության են հասնում: Նրանք ստեղծում են:[8]

Եկեղեցում ոչինչ չի պատահում, եթե դուք չեք աշխատում: Այն նման է ձեռնասայլակի: Այն չի շարժվի, մինչև դուք չբռնեք երկու բռնակները և հրեք: Տքնաջան աշխատանքը Տիրոջ գործը առաջ է մղում, և եթե դուք սովորեք աշխատել ազնվորեն, այն ընդմիշտ կօրհնի ձեր կյանքը: Ես նկատի ունեմ այդ իմ ողջ սրտով: Այն ընդմիշտ կօրհնի ձեր կյանքը:[9]

2

Մենք պարտականություն ունենք օգնել ուրիշներին բարձրանալ և դառնալ ինքնապահով:

Կա մի հին ասացվածք, որ եթե դուք մարդուն ձուկ տաք, նա ուտելիք կունենա մի օրվա համար: Բայց եթե դուք նրան սովորեցնեք ձուկ բռնել, նա ուտելիք կունենա իր մնացած ողջ կյանքի համար: . . .

Թող Տերը մեզ տա տեսողություն և հասկացողություն՝ կատարելու այն բաները, որոնք կօգնեն մեր անդամներին ոչ միայն

հոգևոր առումով, այլև աշխարհիկ։ Մենք մեզ վրա շատ լուրջ պարտականություն ենք վերցրել։ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ասել է, . . . որ եթե կրոնը չի օգնի մարդուն այս կյանքում, ապա հավանաբար այն շատ բան չի անի նրա համար գալիք կյանքում (տես «Ճշմարտությունը մորմոնիզմի մասին», *Out West* magazine, Sept. 1905, 242)։

Որտեղ համատարած աղքատություն է տիրում մեր ժողովրդի շրջանում, մենք պետք է անենք ամեն հնարավորը, որպեսզի օգնենք նրանց բարձրանալ, հաստատել իրենց կյանքն ինքնապահովման հիմքի վրա, որն իրագործելի է վերապատրաստման շնորհիվ։ Կրթությունը հնարավորություններ բացող բանալի է։ . . .

Մեր կարևոր պարտականությունն է . . . «սատարել թույլերին, բարձրացնել ընկած ձեռքերը և ամրացնել տկար ծնկները» (ՎևՈւ 81.5)։ Մենք պիտի օգնենք նրանց դառնալ ինքնապահով և հաջողակ։

Կարծում եմ, որ Տերը չի ցանկանում, որ Իր ժողովուրդը դատապարտված ապրի աղքատության մեջ։ Կարծում եմ, որ Նա կցանկանար, որ հավատարիմները վայելեն երկրի բարիքները։ Նրա ցանկությունն է, որ մենք կատարենք այս քայլերը նրանց օգնելու համար։[10]

Մենք սովորեցնում ենք, որ անհատն իրեն օգնելու համար պիտի անի ամեն բան իր կարողությունների սահմաններում։ Երբ նա սպառի իր միջոցները, նա պիտի դիմի իր ընտանիքին՝ օգնելու իրեն։ Երբ ընտանիքը չի կարող անել այդ, Եկեղեցին իր վրա է վերցնում նրա հոգսերը։ Եվ երբ Եկեղեցին իր վրա է վերցնում նրա հոգսերը, մեր մեծ ցանկությունն է նախ հոգալ նրա անհետաձգելի կարիքները, իսկ հետո աջակցել այնքան ժամանակ, քանի դեռ կարիք կա, բայց այդ գործընթացում ուսուցանել, ապահովել աշխատանքով, գտնել որոշ ուղիներ նրան ոտքի կանգնեցնելու համար։ Սա է [Եկեղեցու] բարօրության հրաշալի ծրագրի ողջ նպատակը։[11]

Նրանք, ովքեր մասնակցել են այս ծրագրին, ազատվել են «անգործության նզովքից և նպաստի չարիքներից»։ Նրանց ազնվությունը և ինքնահարգանքը պահպանվում է։ Իսկ այն բազմաթիվ տղամարդիկ ու կանայք, ովքեր չեն եղել բարօրության ծրագրի անմիջական մասնակիցները, բայց աճեցրել ու մշակել

են մթերք և մասնակցել նմանատիպ մեծաքանակ նախաձեռնությունների, բերում են այնպիսի ուրախության վկայություն, որը կարելի է գտնել ուրիշներին անշահախնդրորեն ծառայելու մեջ:

Բոլոր նրանք, ովքեր ականատես են եղել այս ծրագրին իր վիթխարի արդյունքներով, չեն կարող կասկածի տակ առնել հայտնության ոգին, որն իրականացրել է այն և ընդմիշտ ընդարձակել դրա գործնական ուժը:[12]

Մենք պիտի շարունակենք այս աշխատանքը: Կարիքը միշտ էլ գոյություն ունի: Սովը, կարիքը և աղետները միշտ մեզ հետ կլինեն: Եվ միշտ էլ կլինեն նրանք, ում սրտերին է դիպել ավետարանի լույսը, ովքեր կկամենան ծառայել, աշխատել ու բարձրացնել կարիքավորներին աշխարհում:

Այդ ջանքերին զուգահեռ մենք հիմնել ենք Կրթության մշտական ֆոնդը: Այն ստեղծվել է ձեր շռայլ ներդրումների շնորհիվ: . . . Կրթական վարկեր են տրամադրվում արժանավոր երիտասարդ կանանց ու տղամարդկանց կրթության համար: Այլապես նրանք անգործության կմատնվեին աղքատության ծուղակում, որի մեջ եղել են նրանց ծնողներն ու նախնիները: . . .

Տիրոջ Հոգին առաջնորդում է այս աշխատանքը: Բարօրության ծրագիրը աշխարհիկ ծրագիր է, որն արտահայտվում է բրնձի և լոբու, վերմակների ու վրանների, հագուստի ու դեղորայքի, աշխատանքի ու կրթության տեսքով՝ ավելի լավ աշխատանք ունենալու համար: Բայց այսպես կոչված աշխարհիկ աշխատանքը ներքին հոգու արտաքին արտահայտությունն է, ում մասին ասվել է. Նա «ման եկաւ բարի անելով» (Գոր. 10.38):[13]

3

Մարգարեները խրախուսել են մեզ հոգևոր և աշխարհիկ առումներով պատրաստվել գալիք աղետներին:

Մենք ուսուցանում ենք ինքնապահովումը որպես կյանքի սկզբունք, որ մենք պիտի ապահովենք մեզ ու հոգ տանենք մեր կարիքների մասին: Եվ այսպիսով մենք խրախուսում ենք մեր ժողովրդին ամեն բան ծրագրավորել նախօրոք. ծայրահեղ վիճակների համար պահեստավորել . . . սնունդ, ստեղծել խնայողական հաշիվ, եթե հնարավոր է: Երբեմն աղետները պատահում են, երբ մարդիկ ամենաքիչն են սպասում դրանց՝ գործազրկություն, հիվանդություն և նման բաներ:[14]

Այս հին աշխարհը ծանոթ է դժբախտությունների ու աղետների հետ։ Մեզանից նրանք, ովքեր կարդում են սուրբ գրությունները և հավատում դրանց, իրազեկ են այն նախազգուշացումներին, որոնք մարգարեները տալիս են աղետների վերաբերյալ, որոնք տեղի են ունեցել և դեռ տեղի են ունենալու։ . . .

Ինչ նախանշական չարագուշակ են հայտնության բառերը Վարդապետություն և Ուխտերի 88-րդ բաժնում, որոնք վերաբերում են այն աղետներին, որոնք պիտի կատարվեն երեցների վկայություններից հետո։ Տերն ասում է.

«Քանզի ձեր վկայությունից հետո, գալիս է վկայությունը երկրաշարժերով, որի հետևանքով երկիրը կհառաչի իր ներսում, և մարդիկ կընկնեն գետնին և չեն կարողանա կանգնել։

Եվ գալիս է նաև վկայությունը որոտների ձայնով, և կայծակների ձայնով, և փոթորիկների ձայնով, և իրենց սահմաններից դուրս եկող ծովի ալիքների ձայնով։

Եվ բոլոր բաները կլինեն խառնաշփոթության մեջ. և, անկասկած, մարդկանց սրտերը կնվաղեն. քանզի երկյուղը կպատի բոլոր մարդկանց» (ՎևՈւ 88.89–91)։ . . .

. . . Աղետները տեղի են ունեցել անցյալում, ավելի շատ աղետներ ենք ակնկալում, որ տեղի կունենան ապագայում։ Ի՞նչ ենք մենք անում։

Ինչ-որ մեկն ասել է՝ անձրև չէր գալիս, երբ Նոյը կառուցում էր իր տապանը։ Բայց նա կառուցեց այն և անձրևներ եկան։

Տերն ասել է. «Եթե պատրաստ լինեք, դուք չեք վախենա» (ՎևՈւ 38.30)։

Նախնական պատրաստվածության մասին նույնպես ասված է Վարդապետություն և Ուխտերում. «Ուստի կանգնեք . . .. սուրբ տեղերում, և մի շարժվեք, մինչև որ Տիրոջ օրը գա» (ՎևՈւ 87.8)։ . . .

Մենք պիտի ապրենք այնպես, որ կարողանանք դիմել Տիրոջը՝ Նրա պաշտպանությունն ու առաջնորդությունը խնդրելու համար։ Սա առաջնահերթություն է։ Մենք չենք կարող ակնկալել Նրա օգնությունը, եթե չենք կամենում պահել Նրա պատվիրանները։ Այս Եկեղեցում մենք բավականաչափ վկայություն ունենք անհնազանդության խնդիրների հետ կապված՝ թե հարեդացիների, թե նեփիացիների օրինակներով։ Յուրաքանչյուրը

գնաց փառքից մինչև լիակատար կործանման ամբարշտության պատճառով։

Իհարկե, մենք գիտենք, որ անձրևը թափվում է ինչպես արդարների, այնպես էլ անարդարների վրա (տես Մատթեոսի 5.45)։ Բայց եթե նույնիսկ նրանք մահանում են, նրանք չեն կորչում, այլ փրկվում են Փրկիչի Քավության միջոցով։ Պողոսը գրել է հռոմեացիներին. «Որովհետև եթե ապրենք՝ Տիրոջ ենք ապրում, և եթե մեռնենք՝ Տիրոջ ենք մեռնում» (Հռովմայեցիս 14.8)։ . . .

Մեր ժողովրդին . . . խորհուրդ ենք տվել և խրախուսել նախապատրաստական աշխատանքներ կատարել գոյատևման համար, երբ աղետները գան։

Մենք կարող ենք որոշ քանակությամբ ջուր, հիմնական մթերքներ, դեղորայք պահեստավորել և հագուստ դնել մի կողմ, որ չմրսենք։ Մենք պիտի մի փոքր գումար դնենք մի կողմ, այն դեպքում, եթե աղետներ լինեն։[15]

Մենք ունենք բարօրության հրաշալի ծրագիր, որն ունի հարմարություններ այնպիսի բաների համար, ինչպես հացահատիկի պահեստը տարբեր վայրերում։ Կարևոր է, որ մենք անենք այդ։ Բայց մթերք պահելու ամենալավ վայրը մեր տներն են, մի փոքր խնայված գումարով հանդերձ։ Բարօրության ամենալավ ծրագիրը մեր սեփական բարօրության ծրագիրն է։ Ցորենի հինգ-վեց տուփերը տանն ունենալը ավելի լավ է, քան մի բուշելը բարօրության ամբարում։ . . .

Մենք կարող ենք սկսել ամենաքչից։ Կարող ենք սկսել մեկ շաբաթյա սննդի պաշարից և աստիճանաբար հասցնել մի ամսի, ապա երեք ամսի։ Ես հատկապես խոսում եմ այն սննդի մասին, որը կապահովի հիմնական կարիքները։ Բոլորդ էլ գիտեք, որ այս խորհուրդը նոր չէ։ Բայց վախենում եմ, որ շատերը համարում են, որ սննդի երկարաժամկետ պաշար հավաքելը հասանելի չէ իրենց և ոչ մի ջանք չեն թափում դրա համար։

Սկսեք քչից . . . և աստիճանաբար հասեք խելամիտ նպատակին։ Կանոնավոր կերպով գումար խնայեք և դուք կզարմանաք, թե ինչքան հավաքվեց։[16]

4

Մենք վայելում ենք անկախություն ու ազատություն, երբ հնարավորինս խուսափում ենք պարտքերից և գումար խնայում այն ժամանակի համար, երբ դրա կարիքը լինի:

Մեզ կրկին ու կրկին խորհուրդ են տալիս ինքնապահովման, պարտքերի և խնայողության վերաբերյալ: Մեր անդամներից շատերը խրված են պարտքերի մեջ այնպիսի բաների համար, որոնք առաջնային անհրաժեշտության չեն: . . . Ես հորդորում եմ ձեզ՝ որպես այս Եկեղեցու անդամներ, ազատվել պարտքերից, որտեղ հնարավոր է, և մի քիչ գումար խնայել, երբ կգա անհրաժեշտության օրը:[17]

Ժամանակը եկել է մեր տներում կարգ ու կանոն հաստատելու համար: . . .

Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը 1938 թվականի համաժողովի քահանայության ժողովի ժամանակ ասել է. «Երբ պարտքի մեջ եք, տոկոսը ձեր ուղեկիցն է օր ու գիշեր, դուք չեք կարող խուսափել, հեռանալ կամ խույս տալ դրանից. այն աճում է հակառակ աղերսանքին, պահանջներին կամ հրամաններին, և երբ դուք ելնում եք նրա ճանապարհին, հատում դրա ընթացքը կամ թերանում կատարել դրա պահանջները, այն ջախջախում է ձեզ:

Ես իհարկե ընդունում եմ, որ երևի անհրաժեշտ է լինում պարտք վերցնել տուն գնելու նպատակով: Բայց եկեք գնենք այնպիսի տուն, որը կարող ենք ֆինանսապես թույլ տալ մեզ և դրանով թեթևացնել այն վճարումները, որոնք մշտապես անգթորեն կախված են մեր գլխին՝ առանց հետաձգման հնարավորության: . . .

Եկեղեցու հիմնադրման օրից Տերը խոսել է պարտքի խնդրի մասին: Մարտին Հարրիսին տված իր հայտնության միջոցով Նա ասել է. «Վճարիր տպագրիչին պարտավորված պարտքը: Ազատիր քեզ գերությունից» (Վև Ու 19.35):

Նախագահ Հեբեր Ջ. Գրանտը հաճախ է խոսել այս խնդրի վերաբերյալ: . . . Նա ասել է. «Եթե կա մի բան, որը խաղաղություն և գոհունակություն կբերի մարդու սրտին և ընտանիքին, դա մեր միջոցների սահմաններում ապրելն է: Եվ եթե կա մի բան, որը ճնշում, հուսահատեցնում ու վիատեցնում է, դա այնպիսի

պարտք ունենալն է, որը հնարավոր չէ փակել» (*Gospel Standards,* comp. G. Homer Durham [1941], 111)։

Մենք ողջ Եկեղեցուն ենք հասցնում ինքնապահովման ուղերձը։ Ինքնապահովումը չի կարող գոյություն ունենալ, երբ տան վրա լուրջ պարտք կա կախված։ Մարդը ոչ անկախություն ունի, ոչ էլ ազատություն գերությունից, երբ պարտք է ուրիշներին։

Եկեղեցու գործերը կառավարելիս մենք փորձում ենք օրինակ ծառայել։ Որպես քաղաքականության մաս, մենք խստորեն հետևում ենք այն գործընթացին, որ յուրաքանչյուր տարի Եկեղեցու եկամտից ինչ-որ տոկոս դրվում է մի կողմ նեղ օրերի համար։

Ես երախտապարտ եմ, որ կարող եմ ասել, որ Եկեղեցին իր բոլոր գործողություններում, բոլոր ձեռնարկումներում և բաժիններում կարող է գործել առանց պարտքով փող վերցնելու։ Եթե մենք չկարողանանք այդպես վարվել, մենք կկրճատենք մեր ծրագրերը։ Մենք կպակասեցնենք մեր ծախսերը, որպեսզի հարմարվենք մեր եկամտին։ Մենք պարտք չենք վերցնի։ . . .

Ինչ հրաշալի զգացում է, երբ ազատ ես պարտքից և ունես մի քիչ խնայված գումար արտակարգ իրավիճակների համար, որտեղից այն կարելի է վերադարձնել, երբ անհրաժեշտ է։ . . .

Ես հորդորում եմ ձեզ նայել ձեր ֆինանսական վիճակին։ Ես հորդորում եմ ձեզ համեստ լինել ձեր ծախսերի մեջ, կարգապահ լինել ծախսերի մեջ և հնարավորինս խուսափել պարտքերից։ Վճարեք ձեր պարտքերը որքան կարող եք արագ, և ազատեք ձեզ գերությունից։

Սա աշխարհիկ ավետարանի մի մասն է, որին մենք հավատում ենք։ Թող Տերը օրհնի ձեզ . . . ձեր տներում կարգ ու կանոն հաստատելու համար։ Եթե դուք վճարել եք ձեր պարտքերը, եթե խնայողություն ունեք, չնայած փոքր, ապա երբ փոթորիկներ անցնեն ձեր գլխով, ձեր ընտանիքը օթևան կունենա, իսկ դուք խաղաղություն՝ ձեր սրտում։[18]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Նախագահ Հինքլին ուսուցանել է, որ «չկա ոչինչ, . . . որը կփոխարինի արդյունավետ աշխատանքին» (բաժին 1)։ Ինչպե՞ս է աշխատանքը օրհնել ձեր կյանքը։ Ի՞նչ եք սովորել տքնաջան աշխատանքի միջոցով։ Ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել իրենց երեխաներին սովորել աշխատել։
- Որո՞նք են մեր պարտականությունները նրանց հանդեպ, ովքեր ունեն ժամանակավոր կարիքներ։ (Տես բաժին 2։) Ինչպե՞ս կարող ենք օգնել մյուսներին դառնալ ինքնապահով։ Ինչպե՞ս է ձեր կյանքն օրհնվել, երբ ծառայել եք ուրիշներին և ուրիշներն են ձեզ ծառայել։
- Վերանայեք այն նախապատրաստությունները, որոնք Նախագահ Հինքլին է մեզ խորհուրդ տվել կատարել կյանքի փոթորիկներին դիմակայելու համար (բաժին 3)։ Ե՞րբ եք դուք բախվել նեղ օրերին պատրաստվելու կարևորության հետ։ Որո՞նք են այն փոքր, աստիճանական քայլերը, որոնք մենք կարող ենք անել պատրաստվելու համար։
- Վերանայեք Նախագահ Հինքլիի խորհուրդը պարտքի և խնայողության մասին (տես բաժին 4)։ Ինչո՞ւ է կարևոր, որ մենք կարգավարժենք այն եղանակը, որով ծախսում ենք գումարը։ Պարտքը ինչպիսի՞ հոգևոր ու աշխարհիկ ազդեցություն կարող է ունենալ մեզ վրա։ Ծնողներն ինչպե՞ս կարող են ուսուցանել երեխաներին իմաստուն կերպով ծախսել գումարը։

Սոնչվող սուրբ գրություններ

Ա Թեսաղոնիկեցիս 4.11–12, ՎևՈւ 1.11–13, 78.13–14, 104.13–18, Մովսես 5.1

Օգնություն ուսուցչին

«Ուշադիր եղեք, որպեսզի չափազանց շուտ չավարտեք լավ քննարկումը՝ փորձելով ներկայացնել ձեր պատրաստած ողջ նյութը։ Չնայած կարևոր է ընդգրկել նյութը, բայց ավելի կարևոր է օգնել սովորողներին զգալ Հոգու ազդեցությունը, լուծել իրենց հարցերը, մեծացնել ավետարանի իրենց հասկացողությունը և

խորացնել պատվիրանները պահելու իրենց պարտավորությունը» (*Teaching, No Greater Call* [1999], 64):

Հղումներ

1. “Some Lessons I Learned as a Boy,” *Ensign,* May 1993, 52.
2. See “The Perpetual Education Fund,” *Ensign,* May 2001, 52.
3. “Reaching Down to Lift Another,” *Ensign,* Nov. 2001, 54.
4. “I Believe,” *New Era,* Sept. 1996, 6.
5. “I Believe,” 6.
6. *One Bright Shining Hope: Messages for Women from Gordon B. Hinckley* (2006), 24.
7. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 707.
8. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 532.
9. “Inspirational Thoughts,” *Ensign,* Aug. 2000, 5.
10. “The Perpetual Education Fund,” 52–53.
11. “This Thing Was Not Done in a Corner,” *Ensign,* Nov. 1996, 50.
12. “President Harold B. Lee: An Appreciation,” *Ensign,* Nov. 1972, 8; see also Heber J. Grant, in Conference Report, Oct. 1936, 3.
13. “I Was an Hungred, and Ye Gave Me Meat,” *Ensign* or *Liahona,* May 2004, 61.
14. “This Thing Was Not Done in a Corner,” 50.
15. “If Ye Are Prepared Ye Shall Not Fear,” *Ensign* or *Liahona,* Nov. 2005, 61–62.
16. “To Men of the Priesthood,” *Ensign* or *Liahona,* Nov. 2002, 58.
17. “The Times in Which We Live,” *Ensign,* Nov. 2001, 73.
18. “To the Boys and to the Men,” *Ensign,* Nov. 1998, 53–54.

Կորցնելով ինքներս մեզ ուրիշներին ծառայելիս

«Թող ավետարանի իրական իմաստը լցվի մեր սրտերը, որպեսզի մենք կարողանանք հասկանալ, որ մեր Հայր Աստծո կողմից մեզ տրված կյանքը պիտի օգտագործվի ուրիշներին ծառայելու գործին»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Երիտասարդ Գորդոն Բ. Հինքլին Անգլիայում իր լիաժամկետ միսիայի առաջին շաբաթների ընթացքում մաքառում էր դժվարությունների հետ: Նա հիվանդ էր, երբ տեղ հասավ, իսկ ավետարանը քարոզելու նրա ջանքերը բազմիցս մերժվում էին: Այդ դժվար ժամանակ նա օրնիվեց նրանով, ինչը հետո կոչեց իր «որոշման օրը»՝ մի փորձառություն, որն ազդեց նրա ծառայության վրա ողջ կյանքում:

«Ես հուսահատված էի», վերհիշում է նա: «Ես մի նամակ գրեցի իմ բարի հորը՝ ասելով, որ զգում էի, որ վատնում եմ իմ ժամանակը և նրա փողը»: Նա իմ հայրն էր ու ցցի նախագահը, մի իմաստուն ու ոգեշնչված մարդ: Նա մի կարճ նամակ գրեց ինձ, որում ասում էր, «Թանկագին Գորդոն, ես ստացա քո վերջին նամակը: Ես միայն մի առաջարկ ունեմ. մոռացիր քեզ և գնա աշխատելու»: Այդ օրը վաղ առավոտյան մեր սուրբ գրությունների ուսումնասիրության դասին իմ զուգընկերն ու ես կարդացինք Տիրոջ հետևյալ բառերը. «Որովհետեւ ով որ կամենայ իր անձն ապրեցնել՝ կկորցնէ նորան. եւ ով որ իր անձն ինձ համար եւ աւետարանի համար կորցնէ, նա կապրեցնէ նորան» (Մարկոս 8.35):

Տիրոջ այդ խոսքերը, հայրիկիս նամակն իր խորհրդով՝ մոռանալ ինքս ինձ և աշխատել, թափանցեցին իմ էության մեջ: Հայրիկիս նամակը ձեռքիս ես մտա Վադիամ Ռոուդի 15 հասցեում

«Եթե մենք երկրպագենք ու հետևենք Տիրոջը, մի՞թե չենք ձգտի նմանվել ծառայությանը նվիրված նրա կյանքին»:

գտնվող տան իմ ննջասենյակը, ծնկի իջա և Տիրոջը խոստում տվեցի: Ես ուխտեցի, որ կփորձեմ մոռանալ և կորցնել ինձ Նրա ծառայության մեջ:

1933 թվի հուլիսյան այդ օրը իմ որոշման օրն էր: Մի նոր լույս եկավ իմ կյանք, և մի նոր ուրախություն մտավ իմ սիրտը»:[1]

Այդ լույսը երբեք չհեռացավ Գորդոն Բ. Հինքլիի կյանքից: Այդ օրից ի վեր նա նվիրվեց Տիրոջը՝ ծառայելով ուրիշներին: Նախագահ Հինքլիի հուղարկավորության ժամանակ Նախագահ Հենրի Բ. Այրինգը թվարկեց Նախագահ Հինքլիի ներդրումներից մի քանիսը. տաճարների կառուցումը ողջ երկրագնդով մեկ, փոքր տաճարների կառուցում տաճարային աշխատանքն արագացնելու համար, Կրթության մշտական ֆոնդի հիմնումը և Համաժողովների կենտրոնի կառուցումը: Ապա նա ասաց.

«Նրա անձնական ժառանգությունը շատ ավելի մեծ է, քան այս ցուցակը և իմ ուժից վեր է այն թվարկելը: Բայց նրա ձեռքբերումներն ունեն մի ընդհանուր բան: Դրանք միշտ պիտի մարդկանց հնարավորություններով օրհնեն: Եվ նա միշտ մտածում էր նվազագույն հնարավորություն ունեցողների, սովորական մարդկանց մասին, ովքեր մաքառում էին՝ հաղթահարելու առօրյա կյանքի դժվարությունները և Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելու մարտահրավերները: Նա բազմիցս մատով խփել է իմ կրծքավանդակին, երբ ես առաջարկություն եմ արել և ասել է. «Հալ, դու հիշու՞մ ես այն մարդուն, ով մաքառումների մեջ է»:[2]

«Ես կցանկանայի վեր կենալ ու գործի անցնել», ասում էր Նախագահ Հինքլին: «Ես կցանկանայի ամեն օր դեմ առ դեմ բախվել լուծումների ու նպատակների հետ: Ես կկամենայի իմ ամեն արթուն ժամն օգտագործել՝ խրախուսելու և օրհնելու նրանց, ում բեռը ծանր է, օգնել կառուցելու նրանց հավատը և ամրացնելու վկայությունը»:[3]

Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Մեր կյանքը պարգև է Աստծուց և պիտի օգտագործվի ուրիշներին ծառայելու գործին:

Աշխարհում շատ է աղքատությունն ու կարիքը, խռովությունն ու անազնվությունը, անբարոյականությունն ու

անպարկեշտությունը, այնքան շատ են քայքայված տներն ու ամուսնալուծված ընտանիքները, այնքան շատ վիշտ կա ամենուրեք, այնքան շատ են միայնակ մարդիկ, ովքեր ապրում են գորշ կյանքով՝ առանց հույսի նշույլի։

Եվ այսպիսով խնդրում եմ ձեզ։ Ես խնդրում եմ ձեզ, որ դուք՝ ձեր ձեռք բերածով աշխարհը մի փոքր ավելի լավը դարձնեք։[4]

Եթե աշխարհը պիտի ավելի լավը դառնա, ապա սերն է, որ պիտի փոփոխություն բերի մարդկանց սրտերում։ Այդպես կլինի, երբ մենք, բարձր կանգնելով մեր եսից, տանք մեր սերը Աստծուն և ուրիշներին և անենք այդ մեր ողջ սրտով, հոգով ու մտքով։

Ժամանակակից հայտնությունում Տերը հայտարարել է. «Եվ եթե ձեր աչքն ուղղված լինի միայն իմ փառքին, ձեր ամբողջ մարմինը լցված կլինի լույսով, և ձեր մեջ չի լինի խավար»։ (ՎևՈ 88.67)

Երբ մենք սիրով ու երախտագիտությամբ նայում ենք Աստծուն, երբ ծառայում ենք՝ մեր աչքն ուղղված նրա փառքին, մեզանից հեռանում է մեղքի, եսասիրության և հպարտության խավարը։ Մեր սերը կաճի մեր Երկնային Հոր և նրա Սիրելի Որդու՝ մեր Փրկիչի ու Մեր Քավիչի հանդեպ։ Մարդկանց ծառայելու մեր ցանկությունն ավելի կմեծանա, ավելի քիչ կմտածենք մեր մասին և ավելի շատ օգնության կհասնենք ուրիշներին։

Սիրո այս սկզբունքը Հիսուս Քրիստոսի ավետարանի հիմնական էությունն է։[5]

Եթե մենք շարունակենք երկրպագել ու հետևել Տիրոջը, մի՞թե մենք չենք ձգտի հետևել նրա կյանքում կատարած ծառայությանը։ Մեզանից ոչ մեկը չի կարող արդարացիորեն ասել, որ իր կյանքն իր սեփականությունն է։ Մեր կյանքը Աստծո պարգևն է։ Մենք աշխարհ ենք գալիս ոչ մեր սեփական կամքով։ Եվ աշխարհից չենք հեռանում մեր ցանկությամբ։ Մեր օրերը հաշվվում են ոչ թե մեր կողմից, այլ Աստծո կամքին համաձայն։

Մեզանից ոմանք օգտագործում են իրենց կյանքն այնպես, կարծես այն ամբողջովին մերը լինի։ Մերն է ընտրությունը վատնել այն, եթե մենք ցանկանում ենք։ Բայց այն դառնում է դավաճանություն մեծ ու սուրբ վստահության հանդեպ։ Ինչպես Տերն է հստակորեն մեկնաբանել. «Որովհետեւ ով որ կամենայ

իր անձն ապրեցնել՝ կկորցնէ նորան. եւ ով որ իր անձն ինձ համար եւ աւետարանի համար կորցնէ, նա կապրեցնէ նորան։ (Մարկոս 8.35։)[6]

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մարտահրավերը մեծ է։ Բոլոր հնարավորությունները մեզ համար են։ Աստված ցանկանում է, որ մենք կատարենք Իր գործը և կատարենք այն եռանդուն ու կենսուրախ կերպով։ Այդ աշխատանքը, ինչպես Նա է սահմանել, հետևյալն է. «Մատարել թույլերին, բարձրացնել ընկած ձեռքերը և ամրացնել տկար ծնկները»։ (ՎԵՌ 81.5)

Այն ծառայելն է կարիքի մեջ գտնվողներին։ Դա սփոփելն է նրանց, ովքեր զրկվել են հարազատներից։ Դա այցելությունն է այրիներին ու հայրազուրկներին նրանց դժբախտության ժամին։ Դա կարիքավորներին կերակրելն է, մերկերին հագցնելը և օթևանի տրամադրումը նրանց, ովքեր տանիք չունեն գլխավերևում։ Այն պիտի արվի, ինչպես Տերն արեց, ով «ման եկավ բարիք գործելով»։ (Գործք 10.38։)[7]

Իմ ուղերձը ձեզ այսօր . . . այն է, որ երբ դուք տնօրինում եք ձեր կյանքի ժամանակը, վճռեք դրա մի մասը նվիրել նրանց, ովքեր վշտի ու կարիքի մեջ են, առանց հաշվի առնելու, հատուցում կլինի, թե ոչ։ Ձեր հմտությունների կարիքը կա, ինչ տեսակի էլ որ դրանք լինեն։ Ձեր օգնող ձեռքերը դուրս կբերեն ինչ-որ մեկին վշտի ճահիճից։ Ձեր հանդարտ ձայնը կխրախուսի այն մի քանիսին, ովքեր այլապես տեղի կտային։ Ձեր հմտությունները կարող են ուշագրավ ու հրաշալի եղանակով փոխել այն մարդկանց կյանքերը, ովքեր կարիքի մեջ են։ Եթե ոչ հիմա, ապա ե՞րբ։ Եթե ոչ դուք, ապա ո՞վ։[8]

Թող ավետարանի իրական իմաստը մուտք գործի մեր սրտերը, որ մենք կարողանանք հասկանալ, որ մեր Հայր Աստծո կողմից մեզ տրված կյանքը պիտի ծառայեցվի ուրիշներին։

Եթե մենք տրամադրենք այսպիսի ծառայություն, մեր օրերը կլցվեն հրճվանքով ու ուրախությամբ։ Եվ որ ավելի կարևոր է, նրանք կկենտրոնացվեն մեր Տիրոջ և Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի և բոլոր նրանց օրհնությունների վրա, ում կյանքին մենք դիպչում ենք։[9]

2

Ծառայությունը ամենալավ բուժումն է ինքնախղճահարության, եսասիրության, հուսահատության և մենակության դեմ:

Ես հիշում եմ, թե ինչպես էի այցելում քոլեջի տարածք, որտեղ ես լսում էի երիտասարդների սովորական, ծեծված դժգոհությունները. բողոքները դպրոցի ճնշումների մասին, կարծես այն ավելի շուտ բեռ լիներ, քան հնարավորություն՝ օգտվելու աշխարհիկ գիտելիքից, բողոքներ բնակարանային պայմաններից ու սննդից: . . .

Ես այդ երիտասարդներին խորհուրդ տվեցի, որ եթե դպրոցում մեծ էր ծանրաբեռնվածությունը, եթե համարում էին, որ պիտի բողոքեն իրենց բնակարանային պայմաններից ու սննդից, ապա ես կարող եմ մի բուժում առաջարկել նրանց խնդիրներից: Ես առաջարկեցի, որ նրանք մի քանի ժամով մի կողմ դնեին իրենց գրքերը, հեռանային իրենց սենյակներից և այցելեին մի ծեր ու միայնակ մարդու կամ մի հուսահատ հիվանդի: Ընդհանուր առմամբ, ես հասկացել եմ, որ եթե մենք բողոքում ենք կյանքից, ապա դա այն պատճառով է, որ մենք մտածում ենք միայն մեր մասին:

Երկար տարիներ իմ հովանավորած կոշիկի վերանորոգման կրպակի պատին մի գրառում կար: Այն ասում էր. «Ես բողոքում էի, որովհետև ես կոշիկներ չունեի, մինչև ես տեսա մի մարդու, ով ոտքեր չուներ»: Ամենաարդյունավետ դեղը հիվանդության և ինքնախղճահարության դեմ ուրիշներին ծառայելու մեջ ինքներս մեզ մոռանալն է:[10]

Ես հավատում եմ, որ մեզանից շատերի համար մենակության դեմ դեղը ի օգուտ ուրիշների ծառայելն է: Մի փոքրացրեք ձեր խնդիրները, բայց մի վարանեք ասել, որ կան շատ ուրիշ մարդիկ, ում խնդիրները ավելի լուրջ են, քան ձերը: Օգնության հասեք նրանց, ծառայեք նրանց, խրախուսեք նրանց: Այնքան շատ աղջիկներ ու տղաներ կան, ովքեր դպրոցում հաջողության չեն հասնում մի փոքր անձնական ուշադրության և խրախուսանքի պակասի պատճառով: Կան շատ տարեց մարդիկ, ովքեր ապրում են թշվառության, մենակության ու վախի մեջ, ում հետ մի պարզ խոսակցությունը նրանց հույս ու զվարթություն կբերեր: . . .

«Այնքան շատ մարդիկ կան դրսում, ում բեռները դուք կարող եք բարձրացնել»:

Շատ են այնպիսի մարդիկ, ովքեր վիրավոր են ու մի բարի Սամարացու կարիք ունեն, ով կկապի նրանց վերքերը և կօգնի նրանց իրենց ճանապարհին: Մի փոքր բարությունը կարող է մեծ օրհնություն բերել վշտի մեջ գտնվող ինչ-որ մեկին ու մի քաղցր զգացում տալ նրան, ով ընկերանա նրա հետ:[11]

Այնքան մարդիկ կան դրսում, ում բեռները դուք կարող եք բարձրացնել: Կան անօթևան, քաղցած և աղքատ մարդիկ մեր շրջապատում: Կան ծեր մարդիկ, ովքեր մենակ են ծերանոցներում: Կան շատ հաշմանդամ երեխաներ, թմրանյութ օգտագործող երիտասարդներ, տանը գամված մարդիկ, ովքեր մի բարի խոսք են աղերսում: Եթե դուք չանեք դա, ապա ո՞վ պիտի անի:

Հոգսերի դեմ ամենամեծ հակաթույնը աշխատանքն է: Ամենալավ դեղը հուսահատության դեմ ծառայությունն է: Հոգնածության դեմ ամենալավ բուժումը ինչ-որ մեկին, ով ավելի հոգնած է, նրան օգնելու նախաձեռնությունն է:[12]

Ինչո՞ւ են միսիոներները երջանիկ: Որովհետև նրանք կորցնում են իրենց ուրիշներին ծառայելու մեջ:

Ինչո՞ւ են տաճարում աշխատողները երջանիկ: Քանի որ սիրով կատարած նրանց աշխատանքը հենց այն գործի մեջ

է, որը ներդաշնակ է մարդկության Փրկիչի մեծ փոխարինող աշխատանքի հետ: Նրանք չեն խնդրում կամ ակնկալում որևէ շնորհակալական խոսք այն ամենի համար, ինչ անում են, նրանք հիմնականում անունից բացի ոչինչ չգիտեն այն մարդկանց մասին, ում անունից նրանք մկրտվում են:[13]

Թույլ տվեք, որ ձեր սրտում եղած վսեմ ցանկություններն արտահայտվեն ու հասնեն ուրիշներին՝ սփոփելու, աջակցելու և կատարելագործելու նրանց: Երբ այդպես վարվեք, եսասիրության ապականող թույնը կհեռանա ձեզանից և կփոխարինվի մի քաղցր ու հրաշալի զգացումով, որն ուրիշ ճանապարհով չի գալիս:[14]

3

Երբ մենք հասնում ենք ուրիշներին օգնության, մենք դրսևորում ենք մեր ճշմարիտ էությունը:

Մի քանի տարի առաջ մի կիրակի առավոտ ես գտնվում էի Այդահո նահանգի մի փոքր քաղաքի ցցի նախագահի տանը: Նախքան առավոտյան աղոթքը, ընտանիքը միասին կարդաց սուրբ գրության մի քանի հատված: Սրանց թվում էին Հիսուսի հետևյալ խոսքերը Հովհաննեսի 12.24-ում. «Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, եթե ցորենի հատը հողի մեջ չընկնի ու մեռնի, ինքը միանակ կմնայ. բայց եթե մեռնի, շատ պտուղ կբերէ»:

Կասկած չկա, որ Տերը վկայակոչում էր իր սեփական մոտալուտ մահը, հայտարարելով, որ եթե ինքը չմահանա, իր կյանքի առաքելությունը իզուր կլինի: Բայց այս խոսքերում ես լրացուցիչ իմաստ եմ տեսնում: Ես կարծում եմ, որ Տերն ասում է մեզանից յուրաքանչյուրին, որ եթե մենք կորցնենք ինքներս մեզ ուրիշներին ծառայելու գործում, ապա մեր ապրած կյանքը հիմնականում իսկական իմաստ չի ունենա, քանի որ Հիսուսը շարունակեց՝ ասելով. «Իր անձը սիրողը՝ կկորցնե նորան, և իր անձն ատողը այս աշխարհքումը, յաւիտենական կեանքի մեջ կպահէ նորան» (Հովհաննես 12.25): Կամ ինչպես գրված է Ղուկասի ավետարանում. «Որովհետեւ ով որ կամենայ իր անձն ապրեցնել՝ կկորցնէ նորան. եւ ով որ իր անձն ինձ համար եւ աւետարանի համար կորցնէ, նա կապրեցնէ նորան»: (Ղուկաս 17.33:) Այլ բառերով՝ նա, ով ապրում է միայն իր համար, թոշնում

է ու մահանում, մինչ նա, ով մոռանում է իրեն ուրիշներին ծառայելու մեջ, աճում ու ծաղկում է իր կյանքում ու հավերժության մեջ:

Այդ առավոտ ցցի համաժողովին այն նախագահը, ում տանը հյուրընկալվել էի, ետ կանչվեց իր ծառայությունից տասներեք տարի հավատարիմ ծառայելուց հետո: Սիրո և բարձր գնահատանքի խոսքեր հնչեցին ոչ թե նրա ունեցվածքի կամ համայնքի գործերում ունեցած նրա դիրքի համար, այլ այն մեծ ծառայության համար, որ նա անշահախնդրորեն մատուցել էր: Առանց անձնական շահի մասին մտածելու, նա վարել էր մեքենան հազարավոր կիլոմետրեր ցանկացած եղանակին: Նա բառացիորեն հազարավոր ժամեր էր անցկացրել ուրիշների շահերի համար: Նա անտեսել էր իր անձնական գործերը՝ օգնելու նրանց, ովքեր ունեին իր կարիքը: Եվ այդպես վարվելով նա կենդանի մնաց և մեծ մնաց նրանց աչքում, ում նա ծառայել էր:[15]

Տարիներ առաջ ես մի պատմություն կարդացի մի երիտասարդ կնոջ մասին, ով գնացել էր մի գյուղական վայր՝ աշխատելու որպես դպրոցի ուսուցիչ: Նրա աշակերտների մեջ մի աղջիկ կար, ով նախկինում լավ չէր սովորել և կրկին լավ չէր սովորում: Ուսանողը չէր կարողանում կարդալ: Նա աղքատ ընտանիքից էր, որը միջոցներ չուներ նրան տանելու մի մեծ քաղաք բժշկական քննության համար և պարզելու, թե արդյոք նա որևէ խնդիր ուներ, որը կարելի էր բուժել: Զգալով, որ խնդիրը աղջկա աչքերի մեջ է, երիտասարդ ուսուցիչը իր հաշվին տարավ ուսանողին ստուգելու նրա աչքերը: Խնդիրը հայտնաբերվեց, որը հնարավոր եղավ լուծելու ակնոցի միջոցով: Շուտով մի ամբողջ նոր աշխարհ բացվեց ուսանողի համար: Իր կյանքում առաջին անգամ նա կարողացավ տառերը պարզորոշ տեսնել իր առջև: Դպրոցական ուսուցչի աշխատավարձը աղքատիկ էր, բայց իր ունեցած քչից նա ներդրում կատարեց, որն ամբողջովին փոխեց թերացող ուսանողի կյանքը, և այդպես վարվելով, նա մի նոր տարածություն բացեց իր սեփական կյանքում:[16]

Երբ դուք ծառայեք այդպես, մի նոր տարածություն կավելանա ձեր կյանքում: Դուք կգտնեք նոր ու ոգևորիչ հարաբերություններ: Դուք կգտնեք ընկերներ և ընկերակցություն: Ձեր գիտելիքները, հասկացողությունը, իմաստությունը և գործելու կարողությունը կավելանան:[17]

Ես վկայում եմ, որ երբ ձեզանից յուրաքանչյուրը հասնի ուրիշներին օգնության, դուք կգտնեք ձեր իսկական եսը և կօրհնեք ու մեծապես կփառաբանեք աշխարհը, որում դուք ապրում եք:[18]

4

Եկեղեցին տրամադրում է անշահախնդիր ծառայության շատ հնարավորություններ:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, դուք երբեք երջանիկ չեք լինի, եթե ապրում եք ձեր կյանքը միայն ձեր մասին մտածելով: Կորցրեք ինքներդ ձեզ աշխարհի ամենալավ գործում՝ Տիրոջ գործում: Քվորումների աշխատանքը, օժանդակ կազմակերպությունների և տաճարային աշխատանքը, բարօրության ծառայության աշխատանքը, միսիոներական աշխատանքը: Դուք կօրհնեք ձեր սեփական կյանքը, երբ օրհնեք ուրիշների կյանքը:[19]

Ողջ աշխարհում չկա մեկ ուրիշ աշխատանք, որն այնքան լցված լիներ երջանկությամբ, որքան այս աշխատանքը: Այդ երջանկությունը յուրահատուկ է: Այն գալիս է ուրիշներին ծառայելուց: Այն իսկական է: Այն եզակի է: Այն հրաշալի է:[20]

Թող Եկեղեցին լինի ձեր թանկագին ընկերը: Թող այն լինի ձեր հրաշալի ուղեկիցը: Ծառայեք, ինչի համար էլ որ կանչված կլինեք ծառայելու: Կատարեք այն, ինչ ձեզ խնդրվում է կատարել: Յուրաքանչյուր պաշտոն, որը դուք կկատարեք, կավելացնի ձեր կարողությունը: Ես ծառայել եմ շատ կոչումներում այս հրաշալի կազմակերպությունում: Յուրաքանչյուր ծառայություն բերում էր իր հատուցումը:

Սա . . . ձեզանից կպահանջի անշահախնդիր նվիրում, անկոտրում հավատարմություն ու հավատ: Դուք կծառայեք շատ կոչումներում, նախքան ձեր կյանքն ավարտվի: Նրանցից մի քանիսը կարող են փոքր թվալ, բայց Եկեղեցում չկան փոքր կամ անկարևոր կոչումներ: Յուրաքանչյուր կոչում կարևոր է: Յուրաքանչյուր կոչում կարևոր է աշխատանքի զարգացման համար: Երբեք մի թերագնահատեք որևէ կոչում Եկեղեցում: . . .

Ձեր կյանքում տեղ պատրաստեք Եկեղեցու համար: Թույլ տվեք, որ նրա վարդապետության մասին ձեր գիտելիքն աճի: Թույլ տվեք, որ նրա կազմակերպության մասին ձեր հասկացողությունն աճի: Թող ձեր սերը նրա հավերժական ճշմարտությունների հանդեպ ավելի ու ավելի ուժեղանա:

Երբ դուք . . . ծառայեք, մի նոր տարածություն կավելանա ձեր կյանքում։

Եկեղեցին կարող է ձեզ զոհաբերության կոչ անել։ Նա կարող է կոչ անել ձեզ տալ լավագույնը, որը դուք կարող եք առաջարկել։ Սա գին չունի, քանի որ դուք կբացահայտեք, որ այն կդառնա ներդրում, որը ձեզ կվճարվի շահութաբաժնի տեսքով ձեր ողջ կյանքում։ Եկեղեցին հավերժական ճշմարտության մեծ շտեմարան է։ Գրկեք այն և ամուր կառչեք դրանից։[21]

Ցանկանու՞մ եք երջանիկ լինել։ Մոռացեք ինքներդ ձեզ և կորցրեք ձեզ այս մեծ աշխատանքում։ Ձեր ջանքերն ուղղեք մարդկանց օգնելու գործին։ Ձեր սրտում զարգացրեք ներողամտության ոգի բոլոր նրանց դեմ, ովքեր վիրավորել են ձեզ։ Ձեր

աչքերը հառեք Տիրոջը և ապրեք ու աշխատեք՝ Նրա որդիներին ու դուստրերին բարձրացնելու և ծառայելու համար։ Դուք կճանաչեք այնպիսի երջանկություն, որը երբեք նախկինում չեք տեսել, եթե անեք այդ։ Ես չեմ մտահոգվում, թե քանի տարեկան եք դուք կամ արդյոք երիտասարդ եք։ Դուք կարող եք բարձրացնել մարդկանց ու օգնել նրանց։ Երկինքը գիտե, որ կան այնքան շատ մարդիկ այս աշխարհում, ովքեր օգնության կարիք ունեն։ Օ, շատ, շատ մարդիկ։ Իմ եղբայրներ և քույրեր, եկեք մեր կյանքից հեռացնենք թունոտ, եսասեր վերաբերմունքը և կանգնենք մի փոքր ավելի ուղիղ և հասնենք մի փոքր ավելի բարձր մակարդակի ուրիշներին ծառայելու գործում։ . . .Կանգնեք ավելի ուղիղ, կանգնեք ավելի բարձր, բարձրացրեք նրանց, ում ծնկները տկար են, բարձր պահեք նրանց ընկած բազուկները։ Ապրեք Հիսուս Քրիստոսի ավետարանին համաձայն։ Մոռացեք ինքներդ ձեզ։[22]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Նախագահ Հինքլին ուսուցանում էր, որ մեր կյանքը պարգև է Աստծո կողմից, որը պիտի նվիրվի ուրիշներին ծառայելու գործին (տես բաժին 1)։ Մենք ինչպե՞ս կարող ենք ուրիշներին ծառայելը դարձնել մեր կյանքի ուղի։ Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում աչքը ուղղված միայն Աստծո փառքին։ Ինչպե՞ս է ինչ-որ մեկի ծառայությունն օրհնել ձեզ։
- Ինչու՞ է ծառայությունն օգնում մեզ հաղթահարել ինքնախղճահարությունը, եսասիրությունը և մենակությունը։ (Տես բաժին 2։) Ինչպե՞ս է ծառայությունը ձեզ երջանկություն բերել։ Երբ կարդում եք, թե ինչպես է Նախագահ Հինքլին նկարագրում կարիքի մեջ գտնվող մարդկանց, որոշեք, թե դուք և ձեր ընտանիքը ինչպես կարող եք ծառայել նրանց։
- Ինչո՞ւ ուրիշներին ծառայելու գործում ինքներս մեզ կորցնելով, կարող ենք օգնել «գտնել մեր ճշմարիտ եսը»։ (Տես բաժին 3։) Մենք ի՞նչ կարող ենք սովորել 3-րդ բաժնում տրված պատմություններից։

- Նախագահ Հինքլին խորհուրդ է տվել. «Կորցրեք ինքներդ ձեզ աշխարհի ամենալավ գործում՝ Տիրոջ գործում»: Եկեղեցու ձեր ծառայությունը ի՞նչ օրհնություններ է բերել ձեր կյանքը (բաժին 4):

Առնչվող սուրբ գրություններ

Մատթեոս 20.25–28, 25.34–40, Հովհաննես 13.35, Մոսիա 2.16–18, 18.8–9, ՎԵՈՒ 64.33

Օգնություն ուսումնասիրողին

«Երբ ուսումնասիրեք, հատուկ ուշադրություն դարձրեք գաղափարներին, որոնք գալիս են ձեր միտքը և այն զգացումներին, որոնք գալիս են ձեր սիրտը» (*Քարոզիր իմ ավետարանը* [2004], 18): Գրի առեք ձեր ստացած տպավորությունները, նույնիսկ, եթե թվում է, դրանք կապ չունեն այն խոսքերի հետ, որոնք դուք կարդում եք: Դրանք գուցե հենց այն բաներն են, որոնք Տերը կամենում է, որ դուք սովորեք:

Հղումներ

1. "Taking the Gospel to Britain: A Declaration of Vision, Faith, Courage, and Truth," *Ensign,* July 1987, 7.
2. Henry B. Eyring, "Things Will Work Out," *In Memoriam: President Gordon B. Hinckley, 1910–2008* (supplement to the *Ensign,* Mar. 2008), 27; see also page 26.
3. "Testimony," *Ensign,* May 1998, 69.
4. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1: 1995–1999* (2005), 543.
5. "And the Greatest of These Is Love," *Ensign,* Mar. 1984, 5.
6. "The Gift of Self," *Tambuli,* Dec. 1986, 3; see also lds.org/liahona/1986/12/the-gift-of-self.
7. "To Single Adults," *Ensign,* June 1989, 75.
8. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1,* 544–45.
9. "Giving Ourselves to the Service of the Lord," *Ensign,* Mar. 1987, 5.
10. "Whosoever Will Save His Life," *Ensign,* Aug. 1982, 5.
11. "A Conversation with Single Adults," *Ensign,* Mar. 1997, 61.
12. "To Single Adults," 73–74.
13. "Giving Ourselves to the Service of the Lord," 5.
14. "To a Man Who Has Done What This Church Expects of Each of Us" (Brigham Young University devotional, Oct. 17, 1995), 6, speeches.byu.edu.
15. "Whosoever Will Save His Life," 3–4.
16. "And the Greatest of These Is Love," 4.
17. "Women of the Church," *Ensign,* Nov. 1996, 69.
18. "Whosoever Will Save His Life," 6.
19. "Pillars of Truth," *Ensign,* Jan. 1994, 7.
20. "Rejoicing in the Privilege to Serve," *Worldwide Leadership Training Meeting,* June 21, 2003, 23.
21. "Life's Obligations," *Ensign,* Feb. 1999, 4.
22. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 597.

«[Քահանայության] հետո անհնարին ոչինչ չկա Աստծո թագավորության աշխատանքն առաջ տանելիս:

Սուրբ Քահանայությունը

«Ես սիրում եմ այս Եկեղեցու քահանայությունը: Այն կարևոր է և կենսունակ: Այն հանդիսանում է այս աշխատանքի սիրուն ու զորությունը: Դա այն զորությունն է և իշխանությունը, որի միջոցով Աստված՝ մեր Հավերժական Հայրը իրականացնում է Իր աշխատանքը երկրի վրա»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

1980 թվականին Գորդոն Բ. Հինքլին և նրա կինը՝ Մարջորին մեկնեցին երեք շաբաթյա ուղևորության Ասիայում, որտեղ տարածքային համաժողովներում ելույթ ունեցան և մասնակցեցին Ճապոնիա Տոկիո Տաճարի նվիրագործմանը: Նախքան տուն վերադառնալը, նրանք մեկնեցին Ճապոնիայի Սենդայի Միսիա, որտեղ Երեց Հինքլին նախագահեց առաջին ցցի ստեղծման ժողովը : Նոր ցցի նախագահության հետ հենց ժողովից առաջ, Երեց Հինքլին մոտեցավ միսիայի Նախագահ Կիյոշի Սակայիին: «Նա հարցրեց զարմացած Նախագահ Սակայիին, թե արդյո՞ք նա ուներ սրբագործված յուղ, իսկ հետո ավելացրեց.«Ես այնքան հոգնած եմ, ինձ օրհնություն կտա՞ք»: Նախագահ Սակային հիշում էր. «Ես այնքան վախենում էի և շատ թույլ էի զգում Տիրոջ Առաքյալին օրհնություն տալու համար: Ես ասացի, որ չէի կարող օրհնությունն անգլերեն տալ: Երեց Հինքլին ասաց, որ ճապոներենով լավ է: Այսպիսով Երեց Հիտոշի Կաշիկուրան, տարածքային ներկայացուցիչը և ես սկսեցինք: Օրհնությունը տալուց հետո, Երեց Հինքլին պարզապես ասաց. «Շնորհակալություն, շնորհակալություն ձեզ: Այժմ ես կարող եմ վաղը տուն գնալ»:

«Հաջորդ առավոտ Երեց Հինքլին ուժեղ և առողջ էր երևում, և երբ Նախագահ Սակային հարցրեց, թե ինչպես էր նա զգում, նա պատասխանեց. «*Dai Jobu,* ավելի, քան լավ: Ես լավ եմ»: Մի քանի

օր հետո Նախագահ Սակային նամակ ստացավ Երեց Հինքլիից, ով գրել էր. «. . . Այնքան շնորհակալ եմ այն օրհնության համար, որ դուք տվեցիք ինձ: Ես անմիջապես ավելի լավ սկսեցի զգալ դրանից հետո: Իմ ապաքինումը արագ էր և լիակատար: Քույր Հինքլին և ես խորապես երախտապարտ ենք այն հնարավորության համար, որ մենք մնացինք ձեր միսիայի տանը»:[1]

Նախագահ Հինքլին հաճախ վկայում էր քահանայության օրհնությունների վերաբերյալ, սկսած հրաշագործ, բայց ժամանակավոր օրհնություններից՝ ֆիզիկական ապաքինումից, մինչև հավերժական, կապող օրհնություններ տաճարային արարողությունների միջոցով: Նա հայտարարել է. «Ես հավատում եմ, որ Նրա քահանայությունում կա աստվածային իշխանություն՝ օրհնելու զորություն, բժշկելու զորություն, կառավարելու զորություն Աստծո երկրային գործերում, ուժ կապելու երկինքներում, այն ինչ կապվում է երկրի վրա»:[2]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Աստված վերականգնել է քահանայությունը և երկնքի արքայության բանալիները:

Քահանայության զորությունն ու իշխանությունը մարդկանց տրվել [էին] հնուց: Ավելի ցածր իշխանությունը տրվել էր Ահարոնի որդիներին ժամանակավոր բաներում, ինչպես նաև որոշ սրբազան եկեղեցական արարողություններում սպասավորելու համար: Ավելի բարձր քահանայությունը տրվել էր Իր ՝ Տիրոջ կողմից Իր Առաքյալներին՝ համաձայն Պետրոսին արված Նրա հայտարարության: «Եվ ես կտամ քեզ երկնքի արքայության բանալիները, և այն որ կապես երկրի վրա, կապուած կլինի երկնքումը. և այն որ երկրի վրա արձակես, արձակուած կլինի երկնքումը» (Մատթեոս 16.19):

Քահանայության լիակատար վերականգնումը ներառում էր Հովհաննես Մկրտիչի . . . և Պետրոսի, Հակոբոսի ու Հովհաննեսի գալուստը: . . . Այն ընդգրկում էր Մովսեսին, Եղիասին և Եղիային. նրանցից յուրաքանչյուրը բերում էր քահանայության բանալիները, որպեսզի ավարտի վերականգնման աշխատանքը նախորդ

տնտեսությունների բոլոր գործերում և արարողություններում, ժամանակների լրիվության այս մեծ, վերջին տնտեսությունում։

Քահանայությունն այստեղ է։ . . . Մենք գիտենք, որովհետև մենք տեսել ենք այս քահանայության զորությունը։ Մենք տեսել ենք հիվանդներին բժշկվելիս, կաղերին քայլելիս, և լույսի, գիտելիքի ու հասկացողության հասնելը նրանց, ովքեր եղել են խավարում։[3]

Մարգարե Ջոզեֆ Սմիթը մի առիթով նկարագրել է [քահանայությունը] հետևյալ բառերով. «Քահանայությունը հավիտենական սկզբունք է և գոյություն է ունեցել Աստծո հետ հավերժությունից և [գոյություն] կունենա մինչև հավերժություն, առանց օրերի սկզբի կամ տարիների վերջի»։ (*History of the Church,* 3:386.)

Այն իսկապես Ամենազորի ուժն է, որը տրվել է մարդուն՝ գործելու Նրա անունով և Նրա փոխարեն։ Դա լիազորումն է աստվածային իշխանության, որը տարբեր է երկրի երեսին գոյություն ունեցող բոլոր ուժերից և իշխանություններից։ Զարմանալի չէ, որ այն վերականգնվեց մարդու համար՝ հարություն առած էակների կողմից, ովքեր կրում էին այն հնում, որպեսզի հարց չառաջանար դրա իշխանության կամ իսկության վերաբերյալ։ Առանց դրա կլիներ միայն անունով եկեղեցի՝ Աստծո բաները սպասավորելու իշխանությունից զուրկ։ Դրանով ոչինչ անհնարին գոյություն չունի Աստծո արքայության աշխատանքը առաջ տանելու համար։ Այն իր բնույթով աստվածային է։ Այն, ինչպես ժամանակավոր է, այնպես էլ՝ հավերժական իր իշխանությամբ։ Դա միակ ուժն է երկրի վրա, որը հասնում է մահվան վարագույրից այն կողմ։[4]

2

Քահանայությունն այն ուժն է և իշխանությունը, որի միջոցով Աստված իրականացնում է Իր աշխատանքը երկրի վրա։

Ես սիրում եմ այս Եկեղեցու քահանայությունը։ Այն կարևոր է և կենսունակ։ Այն հանդիսանում է այս աշխատանքի սիրտն ու զորությունը։ Դա այն զորությունն է և իշխանությունը, որի միջոցով Աստված՝ մեր Հավերժական Հայրը, իրականացնում է Իր աշխատանքը երկրի վրա։[5]

Սուրբ քահանայությունը իր հետ կրում է իշխանություն՝ կառավարելու Աստծո արքայության գործերը երկրի վրա: Տիրոջ հայտնությունների ներքո Եկեղեցին պետք է նախագահվի երեք նախագահող քահանայապետերի կողմից: Նրանց պետք է աջակցի Տասներկու Առաքյալների խորհուրդը, որոնց իրենց հերթին պետք է աջակցի . . . Յոթանասունը: Երեք հոգուց բաղկացած Նախագահող Եպիսկոպոսությունը պատասխանատու է աշխարհիկ գործերի համար Նախագահության ղեկավարության առաջ: Սրանք բոլորը քահանայության պաշտոնյաներ են: Աստվածայնորեն տրված այդ զորությունը իշխանությունն է, որի միջոցով նրանք կառավարում են: Դա այդպես է ցցերում և ծխերում, նախագահություններում և եպիսկոպոսություններում: Դա այդպես է քվորումներում: Օժանդակ ծառայողները կատարում են իրենց աշխատանքը քահանայության ղեկավարությամբ և լիազորությամբ: Առանց քահանայության կարող է լինել եկեղեցու ձևը, բայց ոչ թե իսկական բովանդակությունը: Սա Հիսուս Քրիստոսի եկեղեցին է, և այն ղեկավարվում է այդ իշխանությամբ, որը «ըստ Աստծո Որդու կարգի է»: (ՎևՈւ 107.3:)[6]

3

Քահանայության օրհնությունները պետք է վայելեն բոլորը:

[Քահանայությունը] . . . Աստծո՝ մեր Երկնային Հոր ծրագրի մասն է կազմում, որ օրհնի բոլոր սերունդների Նրա որդիների և դուստրերի կյանքը:[7]

Սուրբ քահանայությունը ներառում է օրհնելու զորությունը: Սահարոնյան Քահանայություն կրողների համար այն իշխանություն ունի սպասավորելու համայնքին Տիրոջ մարմնի և արյան խորհրդանիշները, ով տվեց Իր կյանքը որպես զոհաբերություն բոլորի համար: Հաղորդությունը և այս խորհրդանիշերի ճաշակումը կիրակնօրյա երկրպագության սիրտն է հանդիսանում: Այն ներառում է Աստծո հետ ուխտերի նորոգումը: Այն իր հետ կրում է Նրա Սուրբ Հոգին մեզ հետ ունենալու խոստում: Դա իր հավասարը չունեցող օրհնություն է, որը պիտի բոլորը վայելեն և հնարավոր է դառնում իշխանությամբ, որը տրվում է արժանավոր երիտասարդ տղամարդկանց: . . .

Մելքիսեդեկյան Քահանայությունը իր հետ կրում է Սուրբ Հոգին շնորհելու իշխանություն։ Ինչպիսի մեծ օրհնություն է ունենալ Աստվածագլխի անդամի սպասավորող ազդեցությունը, ստանալով այդ պարգևը նրանց ձեռքերով, ովքեր գործել են աստվածային իշխանությամբ։ Եթե մենք շարունակենք քայլել առաքինությամբ, մենք կարող ենք վայելել խոստման կատարումը, որը արվել է Տիրոջ կողմից, երբ Նա ասել է. «Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը, և քո գավազանը կլինի արդարության ու ճշմարտության անփոփոխ գավազան. և քո տիրապետությունը կլինի հավիտենական տիրապետություն և առանց հարկադրանքի կհոսի դեպի քեզ հավիտյանս հավիտենից» (ՎևՈւ 121.46։)

Քահանայությունը ներառում է հիվանդներին օրհնելու զորությունը։ Արդյոք կա՞ որևէ մեկը, ում հասնում է իմ ձայնը, ով չի գործադրել կամ զգացել այդ աստվածային զորությունը։ Կա՞ արդյոք մեզանից որևէ մեկը, ով կասկած ունի դրա արդյունավետության վերաբերյալ։ Մենք կարող ենք պատմել սրբազան և սքանչելի հրաշքների մասին, որոնց մենք ականատես ենք եղել մեր սեփական փորձառության ընթացքում։ . . .

Այս սուրբ Մելքիսեդեկյան Քահանայությունը իր հետ կրում է մարգարեությամբ օրհնելու, մխիթարելու, հաստատելու, ղեկավարելու զորություն։ Մենք ունենք հայրապետներ, ովքեր իրենց կրած իշխանության համաձայն, հայտարարում են տոհմագիծը և արտաբերում օրհնություններ մեր առաջնորդության համար։ Այս օրհնությունները կարող են դառնալ մի խարիսխ, որից մենք կարող ենք բռնել՝ մեզ ամուր պահելով կյանքի փոթորիկների ժամանակ։

Վերջնական արտահայտությունը, որը սուրբ քահանայությունը կրում է իր հետ, երկրի վրա կնքելու իշխանությունն է և այդ կնքումը երկինքներում արդյունավետ ունենալու իշխանությունը։ Դա եզակի է և սքանչելի։ Դա այն իշխանությունն է, որը գործադրվում է Աստծո տաճարներում։ Դա վերաբերում է ինչպես ապրողներին, այնպես էլ մահացածներին։ Դա հավերժության բուն էությունն է։ Դա աստվածային զորությունն է, որը շնորհվում է Ամենազորի կողմից, որպես Իր մեծ ծրագրի մաս՝ մարդու անմահության և հավերժական կյանքի համար։

Որքա՜ն թանկ է Աստծո պարգևը, որը եկել է մեզ։[8]

4

Աստծո որդիները, ովքեր կրում են Նրա աստվածային իշխանությունը, պետք է հավատարիմ լինեն իրենց մեջ եղած լավագույնին:

Յուրաքանչյուր արժանավոր մարդ, անկախ ազգությունից, էթնիկական ծագումից կամ որևէ այլ գործոնից, իրավունք ունի ստանալու քահանայություն: Նրա հնազանդությունը Աստծո պատվիրաններին դառնում է վճռական գործոն: Նրա շնորհումը հիմնված է միայն Տիրոջ առջև արժանավորության վրա: . . .

Այդպիսին է այս քահանայության հրաշքը: Հարստությունը գործոն չէ: Կրթությունը գործոն չէ: Մարդկանց գովասանքները գործոն չեն: Վերահսկող գործոնը՝ Տիրոջ համար ընդունելի լինելն է:[9]

Եկել է ժամանակը մեզ բոլորիս համար, ովքեր ձեռնադրվել են Ահարոնյան, Մելքիսեդեկյան Քահանայությամբ կամ դրա որևէ պաշտոններում, մտածել մեր կյանքի մասին, որոշել մեր թերությունները և ապաշխարել վարքագծի այն հարցերից, որոնք հակասում են այն բարձր և սուրբ լիազորությանը, որ մենք ենք ստացել: . . .

Ոչ մի մարդ՝ երիտասարդ թե ծեր, . . . ով . . . կարգվել է, չի կարող արհամարհանքով վերաբերվել նրան, ինչը նա կրում է: Նա ընկերակցության մեջ է գտնվում Աստծո հետ, և նրա վրա հանգչում է ծանրակշիռ և սրբազան պարտականություն՝ այնպես ապրել, որպես մարդ, որ արժանի լինի խոսելու և գործելու Աստծո անունով, որպես Նրա արժանավոր ներկայացուցիչ:[10]

Չնայած նրանք, ովքեր իշխանություն ունեն, մեր գլխին դնում են իրենց ձեռքերը և մենք ձեռնադրվում ենք, մենք կարող ենք մեր վարքով զրոյացնել և վտանգի ենթարկել որևէ իրավունք՝ այդ աստվածային իշխանությունը գործադրելու համար:

. . .«Ոչ մի զորություն կամ ազդեցություն չի կարող և չպետք է պահպանվի քահանայության շնորհիվ. միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով.

Բարությամբ և մաքուր գիտելիքով, որոնք անչափ մեծացնում են հոգին՝ առանց կեղծավորության ու առանց նենգության» (ՎևՈւ 121.41–42):

Այսպիսով, իմ եղբայրներ դրանք չափորոշիչներ են, որոնց սահմաններում այս քահանայությունը պետք է արտահայտություն գտնի: Այն վերարկու չէ, որը կարող եք հագնել կամ հանել ըստ ցանկության: Այն արդարակեցությամբ գործադրվելիս, ինչպես մեր մարմնի հյուսվածքները, պիտի կազմի մեր մի մասը բոլոր ժամանակներում և բոլոր հանգամանքներում:[11]

Մենք պետք է հավատարիմ լինենք մեր մեջ եղած լավագույնին: Մենք պատվի արժանացած Աստծո որդիներն ենք՝ կրելու Նրա աստվածային իշխանությունը: Բայց մենք ապրում ենք չարի աշխարհում: Կա մի մշտական ուժ, որը մեզ ներքև է քաշում, հրավիրելով մեզ ճաշակել այն բաներից, որոնք բացարձակապես անհամատեղելի են աստվածային քահանայության հետ, որը մենք կրում ենք: . . .

Ձեզ, տղամարդիկ, ես հղում եմ մի մարտահրավեր: Փախեք աղտոտության ալիքից, որը կհաղթահարի ձեզ: Փախեք աշխարհի չարիքներից: Հավատարիմ եղեք ձեր ինքնության ավելի լավ մասին: Եղեք հավատարիմ այն լավագույնին, որ ձեզանում կա: Եղեք հավատարիմ և ազնիվ ուխտերին, որոնք կապված են Աստծո քահանայության հետ:[12]

Յուրաքանչյուր պաշտոնյա, յուրաքանչյուր ուսուցիչ այս Եկեղեցում, ով գործում է քահանայության պաշտոնում, ենթարկվում է սրբազան պատասխանատվության՝ մեծարելու այդ քահանայության կոչումը: Մեզանից յուրաքանչյուրը պատասխանատու է մյուսների բարօրության և աճի համար: Մենք չենք ապրում միայն մեզ համար: Եթե մենք մեծարենք մեր կոչումները, մենք չենք կարող ապրել միայն մեզ համար:[13]

Շատ տղամարդիկ, թվում է, մտածում են, որ իրենք ձեռնադրվել են, ուրեմն քահանայությունն իրենցն է՝ մշտապես գործադրելու այն, ինչպես իրենք կնախընտրեն: Նրանք համարում են, թե իրենք կարող են այստեղ ու այնտեղ խախտել ուխտը և պատվիրանը և մեղանչել այս կամ այն ձևով, և այնուամենայնիվ, դեռ իրենց մեջ ունենալ քահանայության զորությունը, և որ Աստված կվավերացնի այն, ինչ իրենք կխոսեն Նրա սուրբ անունով և Քավիչի անունով: Սա ծաղր է դառնում, և ես հավատում եմ, որ այսպիսի գործադրման ժամանակ, նրանք զուր են օգտագործում Աստծո անունը: Նրանք պղծում են Նրա Միրելի Որդու անունը: Նրանք սրբապղծում են այն սրբազան պարգևը, որը

եկել է ձեռնադրման միջոցով և այն իշխանությունը, որը նրանք կորցրել են՝ օրինազանցության պատճառով։ . . .

. . .Ես նախազգուշացնող ձայն եմ բարձրացնում բոլորին, տղաներին և տղամարդկանց, խուսափել մեղքից։ Օրինազանցությունն անհամատեղելի է աստվածային իշխանության հետ։ Խուսափեք պոռնոգրաֆիկ նյութերից, ինչպես կխուսափեիք ժանտախտից։ Խուսափեք որևէ աստիճանի սեռական մեղքից։ Զգուշացեք անազնվությունից և խաբեությունից։ Ես աղերսում եմ ձեզ, հսկել հպարտության կամ սին փառասիրության որևէ տարր։ Ես խնդրում եմ ձեզ, նայեք ինքներդ ձեր մեջ, տեսնեք , որ չլինի իշխանության կամ հարկադրանքի որևէ վարվելակեպ ձեր կանանց և երեխաների հանդեպ։ . . .

. . . Ես բավարարված եմ, որ մեր Երկնային Հայրը գոհ չէ որևէ մարդուց կամ տղայից, ով ընդունում է կարգումը, իսկ հետո զբաղվում չար գործերով։ Հենց կարգումը ստանալու ընթացքում նա իր և իր Աստծո միջև երդման և ուխտի մեջ է մտնում։[14]

Ոչ մի մարդ, լինի երիտասարդ թե ծեր, քահանայության չափանիշներով չի ապրում, ով նվաստացնում է կամ պղծում կանանց, ով թերանում է ընդունել հարգանքի այն չափը Աստծո դուստրերի հանդեպ, որը մեր Հայրը երկնքում կկամենար, որ նրանց ցույց տրվեր։[15]

Եկեք լավ ամուսիններ և հայրեր լինենք։ Որևէ մարդ, որը բռնապետ է իր սեփական տանը, անարժան է քահանայության։ Նա չի կարող հարմար գործիք լինել Տիրոջ ձեռքում, երբ նա հարգանք, բարություն ու սեր չի ցուցաբերում իր ընտրած զուգընկերոջ հանդեպ։ Նմանապես, որևէ մարդ, ով վատ օրինակ է իր երեխաների համար, ով չի կարողանում վերահսկել իր տրամադրությունը, կամ, ով ներքաշվում է անազնիվ ևանբարոյական գործերի մեջ, կգտնի իր քահանայությունը զրոյացված վիճակում։[16]

Կինը, որին դուք ընտրում եք, կլինի ձեր հավասարը։ . . . Նա ձեր ծառան չէ, ձեր կայքը, կամ որևէ նման բան։ Որքան ողբերգական և ծայրաստիճան զզվելի երևույթ է կնոջն անարգելը։ Այս Եկեղեցում որևէ մարդ, ով անարգում է իր կնոջը, ով նվաստացնում է նրան, ով վիրավորում է նրան, ով գործադրում է անարդար իշխանություն նրա վրա, անարժան է քահանայություն կրել։

Չնայած նա կարող է կարգված լինել, երկինքները ետ են քաշվում, Տիրոջ Հոգին տրտմում է և կլինի ամեն այդ մարդու քահանայության իշխանությանը: Որևէ մարդ, ով զբաղվում է այդպիսի գործերով, անարժան է կրել տաճարային երաշխավորագիր: . . .

. . . Եթե կան ոմանք, . . . ովքեր մեղավոր են այդպիսի վարքագծում, ես կոչ եմ անում ձեզ ապաշխարել: Ծնկի իջեք և խնդրեք Տիրոջը ներել ձեզ: Աղոթեք Նրան ուժի համար, որպեսզի վերահսկեք ձեր լեզուն և ձեր ծանր ձեռքը: Խնդրեք ներողություն ձեր կնոջից և ձեր երեխաներից: . . .

Ես վստահ եմ, որ երբ մենք կանգնենք Աստծո դատարանի առջև, այնտեղ չի նշվի, թե որքան շատ հարստություն ենք կուտակել կյանքում կամ պարգևներ, որոնք մենք նվաճել ենք: Բայց կլինեն հետազոտող հարցեր մեր ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ: Եվ ես համոզված եմ, որ միայն նրանք, ովքեր քայլել են կյանքում սիրով և հարգանքով ու գնահատել իրենց զուգընկերներին և երեխաներին , կստանան մեր հավերժական դատավորից հետևյալ խոսքերը. «Լաւ, բարի եւ հաւատարիմ ծառայ. . . . մտիր քո տիրոջ ուրախութիւնը» (Մատթ. 25.21):[17]

5

Քահանայության քվորումը կարող է ուժի խարիսխ լինել իր անդամների համար:

Ես համոզված եմ, որ Տերը նախատեսել է, որ քահանայության քվորումը պիտի լինի ավելին, քան կիրակի առավոտյան աստվածաբանության դասը: Իհարկե, հոգևորության կառուցումն ու վկայության զորացումը արդյունավետ ավետարանական ուսուցման միջոցով քահանայության կարևոր պարտավորությունն է: Բայց սա քվորումի գործունեության մի հատվածն է: Յուրաքանչյուր քվորում պետք է լինի գործող եղբայրություն ամեն անդամի համար, եթե պիտի իրականացվի դրա նպատակը: . . .

. . . Քահանայության քվորումը Տիրոջ կազմակերպությունն է Եկեղեցու տղամարդկանց համար, ճիշտ ինչպես Մփոփող Միությունը Տիրոջ կազմակերպությունն է Եկեղեցու կանանց համար: Յուրաքանչյուրն ունի իր պարտավորությունները, իր գոյության համար հիմնական պատճառով՝ օգնելու նրանց, ովքեր կարիքի մեջ են:

Երբ կազմակերպվեց Սփոփող Միությունը, Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասաց Միության կանաց մասին. «Նրանք կսլանան անծանոթին սփոփելու համար, նրանք յուղ և գինի կլցնեն թշվառների վիրավոր սրտերին, կչորացնեն որբի արցունքները և կուրախացնեն այրու սիրտը» [*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ. Ջոզեֆ Սմիթ* (2007), 452]: Ես հուսով եմ, որ նույնը կարելի է ասել քահանայության տղամարդկանց մասին:

Աքանչելի օր կլինի . . . երբ մեր քահանայության քվորումները դառնան ամրության խարիսխ յուրաքանչյուր տղամարդու համար, ով պատկանում է դրան, երբ յուրաքանչյուր այդպիսի մարդ կարող է ասել. «Ես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու քահանայության քվորումի անդամ եմ: Ես պատրաստ կանգնած եմ բոլոր նրանց կարիքների համար, ինչպես որ վստահ եմ, նրանք էլ կանգնած են պատրաստ՝ աջակցելու ինձ իմ կարիքների մեջ: Միասին աշխատելով՝ մենք կաճենք հոգեպես որպես Աստծո ուխտի որդիներ: Միասին աշխատելով, մենք կարող ենք կանգնել առանց ամաչելու և առանց վախի ձախորդության ամեն քամու դեմ, որը կարող է փչել, լինի դա տնտեսական, սոցիալական, թե հոգևոր:[18]

6

Օջախներում և Եկեղեցում տղամարդիկ և կանայք աշխատում են միասին առաջ տանել Տիրոջ արքայությունը:

Այո, տղամարդիկ կրում են քահանայություն, : Բայց իմ կինը իմ զուգընկերն է: Այս Եկեղեցում տղամարդը չի քայլում ոչ իր կնոջից առաջ և ոչ իր կնոջից ետ, այլ նրա կողքին: Նրանք հավասարներ են այս կյանքում՝ այս մեծ ձեռնարկման մեջ:[19]

Այս Եկեղեցու կանանց մեջ կա ուժ և մեծ կարողություն: Կա առաջնորդություն և ուղղություն, որոշ անկախության ոգի, այնուամենայնիվ Տիրոջ արքայության մասը լինելու մեծ բավականություն, կա նաև քահանայություն [կրողների] հետ ձեռք ձեռքի աշխատելու ոգի՝այն առաջ տանելու համար:[20]

Ես շնորհակալ եմ իմ Հավերժական Հորը սուրբ քահանայության վերականգնման համար, որպեսզի «ամեն մարդ

Եկեղեցու առաջնորդները և անդամները, ինչպես տղամարդիկ այնպես էլ կանայք, աշխատում են միասին «առաջ տանել իրենց աշխատանքը քահանայության ղեկավարության և լիազորության ներքո»:

կարողանա խոսել Տեր Աստծո, այսինքն աշխարհի Փրկիչի անունով» (ՎԵՈՒ 1.20): Ես տեսել եմ այդ քահանայության գեղեցկությունն ու կառավարումը այս նշանավոր եկեղեցում: Ես զգացել եմ, թե ինչպես է դրա ուժը իմ միջով հոսում հիվանդներին օրհնելիս և բժշկելիս: Ես տեսել եմ այն ազնվացումը, որը դա տվել է խոնարհ տղամարդկանց, ովքեր կանչվել են մեծ և լուրջ պարտականության: Ես տեսել եմ դա, երբ նրանք խոսել են զորությամբ և իշխանությամբ բարձրից, կարծես Աստծո ձայնն էր խոսում նրանց միջոցով:

Ես շնորհակալություն եմ հայտնում Տիրոջը այն վկայության համար, որ Նա տվել է ինձ ավետարանի ամբողջականության, նրա լայնության, երկարության և խորության վերաբերյալ: Այն նախատեսված է օրհնելու բոլոր ժամանակների սերունդների որդիներին և դուստրերին, ինչպես ողջերին, այնպես էլ մահացածներին:[21]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Վերանայեք Նախագահ Հինքլիի ուսմունքների բաժին 1-ը՝ քահանայության վերականգնման վերաբերյալ: Ինչպիսի՞ փորձառություններ են օգնել վկայություն ձեռք բերել այս ճշմարտությունների մասին:
- Նախագահ Հինքլին ուսուցանել է. «Սուրբ քահանայությունը կրում է իր հետ իշխանություն՝ կառավարելու Աստծո արքայության գործերը երկրի վրա» (բաժին 2): Ինչպե՞ս է այս ճշմարտությունը կիրառվում ծխերում և ճյուղերում, քվորումներում, Սփոփող Միությունում: Ինչպե՞ս է քահանայության իշխանությունը զորացնում ձեր ծառայությունը Աստծո արքայությունում:
- Բաժին 3-ում վերանայեք այն օրհնությունները, որոնք մենք բոլորս կարող ենք ստանալ քահանայության միջոցով: Ինչպե՞ս եք զգացել քահանայության ուժն ու օրհնությունները:
- Ի՞նչ կարող ենք սովորել Նախագահ Հինքլիի ուսմունքներից այն տարբերության վերաբերյալ, որը գոյություն ունի քահանայության իշխանության և քահանայության զորության միջև: (Տես բաժին 4:) Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում քահանայություն կրողի համար «հավատարիմ լինել [իր] մեջ եղած լավագույնին»: Քահանայություն կրողներն ինչո՞ւ չպիտի «ապրեն միայն իրենց համար»:
- Բաժին 5-ում, ի՞նչն է տպավորում ձեզ Նախագահ Հինքլիի կողմից նկարագրված քահանայության քվորումների և Սփոփող Միության վերաբերյալ: Ի՞նչ կարող ենք անել մեր ծխերում կամ ճյուղերում՝ նրա խորհրդին հետևելու համար:
- Ինչո՞ւ տղամարդիկ և կանայք պետք է աշխատեն միասին որպես «հավասարներ»՝ Տիրոջ աշխատանքն իրականացնելու համար: (Տես բաժին 6:)

Առնչվող սուրբ գրություններ

Եբրայեցիս 5.1–4, 1 Նեփի 14.12–14, Ալմա 13.1–9, ՎևՈւ 84.33–44, 88.133, 112.30–32

Օգնություն ուսուցչին

«Ուղղեք հարցեր, որոնք պահանջում են սովորողներից գտնել պատասխաններ սուրբ գրություններում և վերջին օրերի մարգարեների ուսմունքներում» (*Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում* [1999], 62):

Հղումներ

1. Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 377.
2. "The Father, Son, and Holy Ghost," *Ensign,* Mar. 1998, 5.
3. "Four Cornerstones of Faith," *Ensign,* Feb. 2004, 6–7.
4. "Priesthood Restoration," *Ensign,* Oct. 1988, 71.
5. "Why We Do Some of the Things We Do," *Ensign,* Nov. 1999, 54.
6. "Priesthood Restoration," 72.
7. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 475.
8. "Priesthood Restoration," 72.
9. "The Stake President," *Ensign,* May 2000, 49.
10. In "News of the Church: Priesthood Restoration Honored," *Ensign,* July 1983, 76.
11. "Personal Worthiness to Exercise the Priesthood," *Ensign,* May 2002, 52.
12. "Loyalty," *Ensign* or *Liahona,* May 2003, 58–59.
13. "Magnify Your Calling," *Ensign,* May 1989, 47.
14. "Only upon Principles of Righteousness," *Ensign,* Sept. 1992, 70.
15. In "News of the Church: Priesthood Restoration Honored," 76.
16. "Reaching Down to Lift Another," *Ensign,* Nov. 2001, 52.
17. "Personal Worthiness to Exercise the Priesthood," 53–54.
18. "Welfare Responsibilities of the Priesthood Quorums," *Ensign,* Nov. 1977, 86.
19. "This Thing Was Not Done in a Corner," *Ensign,* Nov. 1996, 49.
20. "Women of the Church," *Ensign,* Nov. 1996, 68.
21. "My Testimony," *Ensign,* Nov. 1993, 52.



«Դրա [Մորմոնի Գրքի] ճշմարտացիության և վավերականության ապացույցն ընկած է գրքի կազմերի մեջ։ Դրա ճշմարտացիության ստուգումը հիմնված է այն կարդալու մեջ»։

Մորմոնի Գրքի զորությունը

«Մորմոնի Գիրքը հզոր վկայություն է Տիրոջ աստվածայնության մասին այս աշխարհում, որը փոփոխական է իր հավատի մեջ»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Երբ Գորդոն Բ. Հինքլին երիտասարդ էր, նա ստեղծեց սուրբ գրությունների ուսումնասիրության մի եղանակ: «Երբ միսիոներ էի, ամեն երեկո անկողին մտնելուց առաջ ես մի քանի գլուխ էի կարդում Մորմոնի Գրքից,- ասել է նա,- և մի համոզմունք պատեց իմ սիրտը, որը երբեք չլքեց ինձ. որ սա Աստծո խոսքն է, որը երկրի վրա վերականգնվել է Ամենազորի զորությամբ, թարգմանվել է Աստծո զորության պարգևով, որպեսզի հավաստիացնի հրեաներին ու հեթանոսներին, որ Հիսուսը Քրիստոսն է»:[1]

Մորմոնի Գրքի մասին նրա գիտելիքներն ու վկայությունը ներգործել է շատ մարդկանց վրա նրա միսիայից հետո, երբ նա աշխատում էր Եկեղեցու ռադիոյի, հասարակայնության և միսիայի գրականության հանձնաժողովում: Նա հանձնարարություն ստացավ ռադիոյի համար գրել սցենարների մի շարք *«Քրիստոսի նոր վկան»* վերնագրով: Այս շարքը ռադիոլսողների շրջանում մեծ հետաքրքրություն առաջացրեց Մորմոնի Գրքի նկատմամբ: Այդ ժամանակ նա մեկնաբանել է իր պաշտոնակցին. «Ես միշտ մտածել եմ, որ մենք կկատարենք ամենալավ գործը, երբ մարդկանց մոտ հետաքրքրություն առաջացնենք Մորմոնի Գրքի հանդեպ մինչև այն կետը, որտեղ նրանք կկարդան այն: Հենց այդ ժամանակ է, որ Հոգին կարող է վկայություն բերել իր աստվածայնության մասին:[2]

Իր ողջ ծառայության ընթացքում Նախագահ Հինքլին շեշտել է Մորմոնի Գրքի կարևորությունը: 2005 թվականի օգոստոսին, որպես Եկեղեցու Նախագահ, նա Վերջին Օրերի Սրբերին կոչ

արեց կարդալ ամբողջ գիրքը մինչև տարվա վերջը: Նա հետագայում հիշում է. «Ապշեցուցիչ է, թե քանի մարդ արձագանքեց այդ կոչին: Բոլոր նրանք, ովքեր կարդացին գիրքը, օրհնվեցին իրենց ջանքերի համար: Երբ նրանք խորասուզվեցին մեր Քավիչի մասին այս հավելյալ վկայության մեջ, նրանց սրտերի բաբախյունն արագացավ, իսկ հոգիները հուզվեցին»:[3]

Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Աստվածաշնչի հետ ձեռք ձեռքի տված Մորմոնի Գիրքը վկայում է Հիսուս Քրիստոսի մասին:

Ասվել է հին ժամանակներում, ասվել է Փրկիչի կողմից, որ երկու վկաների բերանով բոլոր բաները կհաստատվեն:[4]

Քանի որ Աստվածաշունչը հին աշխարհի վկայությունն է, Մորմոնի Գիրքը նորի վկայությունն է: Նրանք ձեռք ձեռքի քայլում են՝ հռչակելու Հիսուսին որպես Հոր Որդին:[5]

Մորմոնի Գիրքը . . . վկայում է Նրա մասին, ով ծնվել էր Հրեաստանի Բեթլեհեմում, և ով մահացավ Կումորա բլրի վրա: Մորմոնի Գիրքը հզոր վկայություն է Տիրոջ աստվածայնության մասին մի աշխարհում, որը փոփոխական է իր հավատի մեջ: Գրքի տիտղոսաթերթում, որը գրված է մարգարեի կողմից, ով մեկ ու կես հազարամյակ առաջ քայլեց Ամերիկաներում՝ վճռական հաստատելով, որ այն գրվել է՝ «համոզելու հրեային և հեթանոսին, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Հավերժական Աստվածը, որն իրեն հայտնում է բոլոր ազգերին»:[6]

Չկա ավելի կարևոր բան, որ մենք կարողանայինք անել, որպեսզի հարստացնենք մեր անձնական կյանքը անսասան համոզվածությամբ, որ Հիսուսը Քրիստոսն է: . . . Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, սա է նրա նշանավոր ու հրաշալի գրքի ստեղծման նպատակը:[7]

2

Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող եք վկայություն ստանալ Մորմոնի Գրքի աստվածային ծագման մասին:

Ես կարդացել եմ Մորմոնի Գիրքը, որը [Ջոզեֆ Սմիթը] թարգմանել է Աստծո պարգևով ու զորությամբ: Սուրբ Հոգու

զորությամբ ես վկայություն եմ ստացել այս սուրբ գրքի աստվածային ծագման մասին։[8]

Դրա ծագումը հրաշք է. երբ դրա ծագման մասին առաջին անգամ պատմվում է մեկին, ով անծանոթ է դրա հետ, համարյա անհավանական է թվում։ Բայց գիրքն այստեղ է, որպեսզի այն շոշափեն, դիպչեն և կարդան։ Ոչ ոք չի կարող կասկածի ենթարկել դրա ներկայությունը։ Գրքի ծագման վերաբերյալ բոլոր տեղեկությունները, որոնք տարբերվում են Ջոզեֆ Սմիթի կողմից տրված նկարագրությունից, զուրկ են հիմքից։[9]

Մի աշխարհում, որը սովոր է հիմնվել ապացույցների վրա, դրա ճշմարտացիության և վավերականության ապացույցը հիմնված չէ հնեաբանության կամ մարդաբանության վրա, թեև դա կարող է օգտակար լինել ոմանց համար։ Այն հիմնված չէ բառերի ուսումնասիրության կամ պատմական վերլուծության վրա, թեև դա կարող է հաստատող լինել։ Դրա ճշմարտացիության և վավերականության ապացույցն ընկած է գրքի կազմերի մեջ։ Դրա ճշմարտացիության ստուգումը հիմնված է այն կարդալու մեջ։ Դա Աստծո գիրքն է։ Խելամիտ մարդիկ կարող են անկեղծորեն հարցականի տակ դնել նրա ծագումը, բայց նրանք, ովքեր աղոթքով կարդացել են այն՝ իրենց բնական զգայարաններից վեր մի զորության միջոցով, իմացել են, որ այն ճշմարիտ է, որ այն պարունակում է Աստծո խոսքը, որ այն ընդգրկում է հավիտենական ավետարանի փրկող ճշմարտությունները, որ այն «ի հայտ է եկել Աստծո պարգևի զորությամբ . . . համոզելու համար հրեային և հեթանոսին, որ Հիսուսը Քրիստոսն է»։[10]

[Մորոնին] գրել է իր վերջին վկայությունը մի գրքում, որը կրում է նրա անունը և եզրափակում է Նեփիի հիշատակարանը։ Նա գրել է որոշակի իմացությամբ, որ իր արձանագրությունը ի վերջո հայտնի կդառնա։ . . .

Իր ստեղծագործության վերջին գլխում նա բերել է իր ժողովրդի պատմության մասին վկայությունը և վճռականորեն խոստացել է, որ նրանք, ովքեր կարդան այն, Սուրբ Հոգու միջոցով կարող են իմանալ դրա ճշմարտացիությունը [տես Մորոնի 10.3–5]։

Ոչ մի այլ գիրք չի ընդգրկում այսպիսի խոստում: Եթե Մորոնին ուրիշ ոչինչ չգրեր, իր եզրափակիչ վկայության այս խոստումը նրան ընդմիշտ կդարձներ հավերժական ճշմարտության պերճախոս վկան: Քանի որ նա ասել է. «Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.5):[11]

3

Մորմոնի Գրքի վկայությունը հանգեցնում է այլ ճշմարտությունների համոզմունքին:

Ամեն անգամ, երբ մենք քաջալերում ենք ուրիշներին կարդալ Մորմոնի Գիրքը, մենք նրանց օգտի համար ենք դա անում: Եթե նրանք կարդան այն աղոթքով և անկեղծ սրտով՝ իմանալու ճշմարտությունը, նրանք Սուրբ Հոգու զորությամբ կիմանան, որ գիրքը ճշմարիտ է:

Այդ գիտելիքից կառաջանա համոզմունք շատ այլ բաների ճշմարտության վերաբերյալ: Քանի որ, եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ապա Աստված ապրում է: Վկայությունը վկայության ետևից գրված է նրա էջերում, որ մեր Հայրը Իրական է, որ նա անձնական է, որ նա սիրում է իր զավակներին և որոնում է նրանց երջանկությունը:

Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ապա Հիսուսը Աստծո Որդին է, Հոր Միածինը մարմնում, Մարիամից ծնված, «մի կույս . . . մնացած բոլոր կույսերից զեղեցկագույն» (տես 1 Նեփի 11.13–21), քանի որ գիրքն այդպես է վկայում նկարագրության մեջ, որն անգերազանցելի է ողջ գրականության մեջ:

Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ապա Հիսուսն իսկապես մեր Քավիչն է՝ Փրկիչն աշխարհի: . . .

Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, Ջոզեֆ Սմիթը Աստծո Մարգարեն է, քանի որ նա Աստծո ձեռքերում գործիք էր՝ բացահայտելու այս վկայությունը մեր Տիրոջ աստվածայնության մասին:

Եթե այս գիրքը ճշմարիտ է, [Եկեղեցու նախագահը մարգարե է], քանի որ նա կրում է բոլոր բանալիները, պարգևները և իշխանությունը, որը կրում էր Մարգարե Ջոզեֆը, ով ստեղծեց այս վերջին օրերի աշխատանքը:

Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, Եկեղեցին ճշմարիտ է, քանզի նույն իշխանությունը, որի ներքո այս սրբազան հիշատակարանը բացահայտվեց, ներկա է և դրսևորվում է մեր մեջ այսօր: Սա Պաղեստինում Փրկիչի կողմից հաստատված Եկեղեցու վերականգնումն է: Սա մի Եկեղեցու վերականգնումն է, որը հաստատվեց Փրկիչի կողմից, երբ Նա այցելեց այս մայրցամաք [Ամերիկյան], ինչպես նկարագրվում է այս սրբազան հիշատակարանում:

Քանի որ, եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ապա Աստվածաշունչը նույնպես ճշմարիտ է: Աստվածաշունչը հին աշխարհի մասին վկայությունն է, Մորմոնի Գիրքը նոր աշխարհի վկայությունն է: Մեկը Հուդայի հիշատակարանն է, մյուսը Հովսեփի հիշատակարանը, և դրանք միասին եկել են Տիրոջ ձեռքը ի կատարումն Եզեկիելի մարգարեության: (Տես Եզեկ. 37.19): Դրանք միասին հռչակեցին աշխարհի Փրկիչի Թագավորությունը և նրա թագավորության իսկությունը:[12]

4

Մորմոնի Գիրքն առաջարկում է ուսմունքներ, որոնք կարող են օգնել մեզ լուծումներ գտնել այսօրվա հասարակության խնդիրների համար:

[Մորմոնի Գրքի] պատմությունը վաղուց անհետացած ազգերի պատմությունն է: Բայց ներկայիս հասարակության խնդիրների նկարագրության գործում այն այնքան արդիական է, որքան առավոտյան լրագիրը և շատ ավելի ամբողջական, ոգեշնչված ու ոգեշնչող, երբ վերաբերում է այդ խնդիրների լուծմանը:[13]

Ես բացում եմ դրա էջերը և կարդում, դրա լեզուն թե գեղեցիկ է, թե վսեմ: Հնադարյան հիշատակարանը, որից այն թարգմանվել է, դուրս է եկել երկրագնդի ծոցից՝ որպես մի ձայն, որը խոսում է փոշու միջից: Այն եկել է որպես տղամարդկանց ու կանանց սերունդների վկայություն, ովքեր ապրել են երկրի վրա, ովքեր մաքառել են ձախորդության դեմ, ովքեր վիճել են ու կռվել, ովքեր տարբեր ժամանակներում ապրել են աստվածային օրենքով և բարգավաճել են, իսկ երբեմն լքել իրենց Աստծուն ու կործանվել:[14]

Ես չգիտեմ մեկ այլ գրվածք, որն այսպիսի հստակությամբ հասարակությանն է լուսաբանում այն ողբերգական

հետևանքները, որոնք հետևում են Աստծո պատվիրաններին հակառակվելիս: Դրա էջերում ներկայացվում են երկու տարբեր քաղաքակրթությունների պատմություններ, որոնք բարգավաճում էին արևմտյան կիսագնդում: Յուրաքանչյուրը սկիզբ է առել, որպես փոքր ազգ, որի ժողովուրդն ապրում էր աստվածավախ կյանքով: Յուրաքանչյուր ծաղկում էր, բայց դրա հետ միասին աճում էր նաև չարը: Ժողովուրդը չէր դիմանում փառասեր ու նենգ ղեկավարների խաբեություններին, ովքեր կեղեքում էին նրանց ծանր հարկերով, ովքեր հանգստացնում էին նրանց դատարկ խոստումներով, ովքեր սատարում և նույնիսկ խրախուսում էին անբարոյական ու վավաշոտ ապրելակերպը, ովքեր տանում էին նրանց սարսափելի պատերազմների, որն էլ հանգեցրեց երկու տարբեր տարածքներում միլիոնավոր զոհերի և երկու մեծ քաղաքակրթությունների ոչնչացման:

Ոչ մի ուրիշ գրավոր վկայություն այնքան պարզորոշ չի լուսաբանում այն փաստը, որ երբ մարդիկ ու ազգերը ապրում են՝ հետևելով Տիրոջ երկյուղին ու նրա պատվիրաններին հնազանդ, նրանք ծաղկում և աճում են, բայց երբ նրանք անտեսում են նրա խոսքը և մոռանում արդարակյաց ապրելակերպը, անկում են ապրում, որը հանգեցնում է անզորության ու մահվան: Մորմոնի գիրքը Հին Կտակարանի հետևյալ առածի հաստատումն է. «Արդարությունը կբարձրացնէ մի ազգ, բայց մեղքը անարգանք է ժողովուրդներին»: (Առակ. 14.34:)[15]

5

Մորմոնի Գիրքը զորություն ունի փոխելու մեր կյանքը և մեր հեռանկարը:

1830 թվականի օգոստոսին Փարլի Պարքեր Պրատը, որպես աշխարհիկ քարոզիչ, ուղևորվում էր Օհայոյից արևելյան Նյու Յորք: Նյուարքի Էրի ջրանցքի մոտ նա թողեց իր նավակը և ջրանցքի երկայնքով քայլեց տասը մղոն [16 կիլոմետր] դեպի գյուղական վայրը, որտեղ նա հանդիպեց Մկրտական սարկավագ Համիլին, ով հայտնեց նրան մի *գրքի*, մի ՏԱՐՕՐԻՆԱԿ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ, մի ՇԱՏ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԳՐՔԻ մասին: . . . «Այս գիրքը,- նա ասաց,- ենթադրվում է, որ սկզբում գրված է եղել կամ ոսկե, կամ պղնձե թիթեղների վրա Իսրայելի ցեղերի



Մորմոնի Գիրքը խորը ազդեցություն թողեց Փարլի Պ. Պրատի վրա, ով ավելի ուշ դարձավ Առաքյալ։

մի ճյուղի կողմից և հայտնաբերվել է Նյու Յորք նահանգի Պալմիրայի մոտ ու թարգմանվել մի երիտասարդի կողմից տեսիլքների օգնությամբ ու հրեշտակների ծառայությամբ։ Ես նրանից տեղեկացա, թե գիրքը որտեղից պիտի ձեռք բերվի։ Նա ինձ խոստացավ դրա ընթերցումը իր տան մոտ հաջորդ օրը։ . . . Հաջորդ օրը ես գնացի նրա տուն, որտեղ առաջին անգամ իմ աչքերը նայեցին «ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻՆ»՝ այդ գրքերի գրքին, . . . որը հիմնական միջոցն էր Աստծո ձեռքերում՝ ուղղորդելու իմ ողջ կյանքը։

«Ես անհամբերությամբ բացեցի այն և կարդացի տիտղոսաթերթը: Ապա կարդացի մի քանի վկաների վկայությունն այն մասին, թե ինչպես էր այն գտնվել և թարգմանվել: Դրանից հետո ես սկսեցի կարդալ բովանդակությունը ըստ հաջորդականության: Ես կարդացի ամբողջ օրը, ուտելը բեռ էր, ես ցանկություն չունեի ուտելու, քնելը բեռ էր, երբ եկավ գիշերը, քանի որ ես նախընտրեցի կարդալը քնելուց:

Երբ ես կարդում էի, Տիրոջ հոգին ինձ վրա էր, ես գիտեի և հասկանում էի, որ գիրքը ճշմարիտ էր, այնպես հստակ և այնպես ակնհայտ, ինչպես մարդն է հասկանում և գիտի, որ ինքը գոյություն ունի»: (*Autobiography of Parley P. Pratt,* 3rd ed., Salt Lake City: Deseret Book Co., 1938, pp. 36–37.)

Փարլի Պրատը այն ժամանակ քսաներեք տարեկան էր: Մորմոնի Գրքի ընթերցանությունը այնքան խորը ազդեց նրա վրա, որ շուտով մկրտվեց Եկեղեցում ու դարձավ նրա ամենաարդյունավետ ու հզոր պաշտպաններից մեկը: . . .

Մորմոնի Գրքի հետ կապված Փարլի Պրատի փորձառությունը եզակի չէր: Երբ առաջին հրատարակության գրքերը կարդացին ու շրջանառվեցին, հարյուրավոր տղամարդիկ ու կանայք այնքան խորը հուզվեցին, որ հրաժարվեցին այն ամենից, ինչ ունեին, և հաջորդ տարիների ընթացքում շատերը իրենց կյանքը տվեցին այս գրքում բերված այն ճշմարտության վկայության համար, որը նրանք կրում էին իրենց սրտերում:

Այսօր . . . այն ավելի շատ է կարդացվում, քան երբևէ պատմության մեջ: . . . Նրա կոչը նույնքան հավերժ է, որքան ճշմարտությունը, նույնքան տիեզերական, որքան մարդկությունը:[16]

[Մորմոնի Գիրքը] ընդմիշտ կապվել է միլիոնավոր մարդկանց կյանքին, ովքեր աղոթքով կարդացել են այն և խորհել են դրա լեզվի շուրջ: Կարո՞ղ եմ ասել ձեզ այսպիսի մի բան: . . .

Նա գործարար էր ու հաջողակ իր ձեռնարկումներում: Իր ճամփորդություններից մեկի ընթացքում նա հանդիպեց մեր երկու միսիոներներին: Նրանք փորձեցին հանդիպում նշանակել նրան ուսուցանելու համար: Նա հետաձգում էր հանդիպումները, բայց ի վերջո համաձայնվեց լսել նրանց: Նա մասամբ մակերեսայնորեն էր ընդունում այն, ինչ նրանք պիտի ասեին:

Նա իր մտքում սկսեց համոզվել, որ նրանք ճշմարտությունն էին խոսում, բայց սրտում փոփոխություն չէր զգում:

Նա վճռեց, որ պիտի կարդա Մորմոնի Գիրքը: Նա ասաց, որ երբեք նախկինում չէր արտասվել: Բայց երբ նա կարդում էր գիրքը, արցունքները հոսում էին նրա այտերի վրայով: Գիրքն ինչ-որ բան էր արել նրա հետ: Նա կրկին կարդաց այն և ունեցավ նույն զգացումները: Նրա մտքի դարձը դարձավ նրա սրտի դարձը:

Նրա կենսակերպը փոխեց ուղղությունը, նրա հեռանկարը ևս փոխվեց: Նա գլխովին նետվեց Տիրոջ աշխատանքի մեջ: Այսօր նա ունի բարձր ու սուրբ կոչում այն գործում, որն ինքը սիրեց:[17]

Թույլ տվեք պատմել [մեկ այլ] պատմություն Մորմոնի Գրքի մասին: Մի բանկիր Կալիֆորնիայում պատմել է ինձ հետևյալ պատմությունը: Նա ասաց, որ իր քարտուղարը հաճախակի ծխում էր: Նա կախվածություն ուներ ծխելուց: Նա չէր կարողանում այն դնել մի կողմ: Մի օր քարտուղարը հարցրեց բանկիրին. «Ինչպե՞ս կարող եմ ծխելը թողնել»:

Վերջինս իր սեղանի դարակից հանեց Մորմոնի Գիրքը և մեկնեց նրան: Նա ասաց. «Կարդա այս գիրքը»:

Նա ասաց. «Եղավ, կկարդամ»:

Նա վերադարձավ մի քանի օր անց և ասաց. «Ես կարդացի 200 տող և ոչ մի տեղ չտեսա *ծխել* բառը: Ես չտեսա *ծխախոտ* բառը որևէ տեղ: Դրան վերաբերող ոչինչ չտեսա»:

Նա ասաց. «Շարունակեք կարդալ»:

Նա վերադարձավ մի քանի օր անց և ասաց, «Ես կարդացի ևս 200 էջ, ոչ մի նշում ծխելու մասին, ոչինչ նիկոտինի մասին, ծխախոտի հետ կապված ոչ մի նշում»:

Նա ասաց. «Շարունակեք կարդալ»:

Քարտուղարուհին վերադարձավ երեք կամ չորս օր անց: Նա ասաց. «Ես կարդացել եմ ամբողջ գիրքը: Ես ոչ մի տեղ չհանդիպեցի ծխախոտ բառը, ես չտեսա ծխել բառը ոչ մի տեղ»: Բայց,- նա ասաց,-այս գրքի ընթերցանությունը իմ սրտին ինչ-որ ազդեցություն և ուժ է բերել, որն ինձնից խլել է ծխելու ցանկությունը և դա հրաշալի է»:[18]

Թույլ տվեք պատմել ձեզ մի նամակի մասին, որը մենք ստացել ենք : . . . Մի մարդ գրել էր. «Ես ֆեդերալ բանտում եմ:

Վերջերս բանտի գրադարանում ես հանդիպեցի Մորմոնի Գրքի մի օրինակի: Ես սկսեցի կարդալ այն և երբ կարդացի Մորմոնի ողբը իր ընկած ժողովրդի վրա. «Ա՜խ, դո՛ւք, սիրուննե՛ր, ինչպես կարողացաք հեռանալ Տիրոջ ուղիներից: Ա՜խ, դո՛ւք, սիրուննե՛ր, ինչպես կարողացաք ուրանալ այն Հիսուսին, որը կանգնած էր՝ գրկաբաց ընդունելու ձեզ: Ահա, եթե դուք արած չլինեիք այս, չէիք ընկնի» (Մորմ. 6.17–18), ես զգացի, որ Մորմոնը խոսում էր ինձ հետ: Կարո՞ղ եմ ձեռք բերել այդ գրքի մի օրինակ»:

Ես նրան ուղարկեցի մի օրինակ: Որոշ ժամանակ անց նա իմ գրասենյակ մտավ որպես մի փոխված մարդ: Նրան դիպել էր Մորմոնի Գրքի ոգին և այսօր նա մի հաջողակ մարդ է, լիովին վերականգնված և ազնվորեն վաստակում է իր ընտանիքի ապրուստը:

Այսպիսին է այս մեծ գրքի ազդեցությունը նրանց կյանքում, ովքեր կարդում են այն աղոթքով:

Եղբայրներ և քույրեր, առանց վերապահության ես խոստանում եմ ձեզ, որ եթե դուք աղոթքով կարդաք Մորմոնի Գիրքը, անկախ այն բանից, թե քանի անգամ եք կարդացել այն նախկինում, Տիրոջ Հոգին հավելյալ չափով կլցվի ձեր հոգիները: Դուք կվճռեք ապրել նրա պատվիրաններին հնազանդ և կունենաք ավելի մեծ վկայություն Աստծո Որդու կենդանի իրականության վերաբերյալ:[19]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Ինչո՞ւ մենք ունենք Մորմոնի Գրքի կարիքը: Որո՞նք են Մորմոնի Գրքի այն մի քանի հատվածները, որոնք ուժեղացրել են ձեր վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին: Ի՞նչ օրինակներ եք տեսել, երբ Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը «ձեռք ձեռքի տված» գնում են՝ վկայելով Փրկիչի մասին: (Տես բաժին 1:)
- Ձեր կարծիքով, Մորոնի 10.3–5 հատվածներում տրված խոստումն ինչո՞ւ է ավելի կարևոր, քան Մորմոնի Գրքի ֆիզիկական վկայությունը: (Տես բաժին 2:) Ինչպիսի՞ փորձառություններ եք ունեցել այս խոստումով:

- Երբ վերանայեք գլուխ 3-ը, նշեք այն ճշմարտությունները, որոնք մենք կարող ենք իմանալ, երբ վկայություն ունենանք Մորմոնի Գրքի վերաբերյալ: Մորմոնի Գիրքն ինչպե՞ս է վկայում այս ճշմարտությունների մասին:
- Մտածեք «ժամանակակից հասարակության խնդիրներից» մի քանիսի մասին (բաժին 4): Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքն օգնում մեզ լուծումներ գտնել այդ խնդիրներին: Որո՞նք են Մորմոնի Գրքի այն մի քանի հատվածները, որոնք օգնել են ձեզ անձնական դժվարությունների ժամանակ:
- Խորհեք գլուխ 5-ում նկարագրված պատմությունների մասին: Եթե ինչ-որ մեկը հարցներ ձեզ Մորմոնի Գրքի մասին, ի՞նչ կարող էիք ասել ձեր կյանքի վրա թողած նրա ազդեցության վերաբերյալ:

Առնչվող սուրբ գրություններ

Եսայիա 29.9–18, 1 Նեփի 13.35–41, 2 Նեփի 29.6–9, Մորոնի 10.27–29, ՎևՈւ 20.8–12, 42.12–13

Օգնություն ուսումնասիրողին

«Ես երախտապարտ եմ, որ հատուկ նշանակություն է տրվում սուրբ գրությունների ընթերցանությանը: Ես հուսով եմ, որ ձեզ համար սա կդառնա ավելի շուտ հաճույք, քան պարտականություն, որ այն ավելի շուտ կդառնա սիրային կապ Աստծո խոսքի հետ: Ես խոստանում եմ ձեզ, որ երբ դուք կարդում եք, ձեր միտքը լուսավորվում է և ձեր հոգին բարձրանում է: Սկզբում այն կարող է ձանձրալի թվալ, բայց հետո կփոխակերպվի հրաշալի փորձառության՝ աստվածային բաների խոհերով ու խոսքերով» (Gordon B. Hinckley, "The Light within You," *Ensign,* May 1995, 99):

Հղումներ

1. "Gifts to Bring Home from the Mission Field," *New Era,* Mar. 2007, 2.
2. In Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 100.
3. "Let Virtue Garnish Thy Thoughts Unceasingly," *Ensign* or *Liahona,* May 2007, 116.
4. "Inspirational Thoughts," *Ensign,* July 1998, 2.
5. «Մեծ բաներ, որոնք Աստված հայտնությամբ է տվել», *Ensign* կամ *Լիահոնա,* May 2005, 82.
6. "The Symbol of Our Faith," *Ensign,* Apr. 2005, 4; quoting the title page of the Book of Mormon.
7. "Excerpts from Recent Addresses by President Gordon B. Hinckley," *Ensign,* July 1997, 72.
8. "Believe His Prophets," *Ensign,* May 1992, 51.

9. "An Angel from on High, the Long, Long Silence Broke," *Ensign,* Nov. 1979, 7.
10. "Four Cornerstones of Faith," *Ensign,* Feb. 2004, 6; quoting the title page of the Book of Mormon.
11. In *Heroes from the Book of Mormon* (1995), 198.
12. "The Power of the Book of Mormon," *Ensign,* June 1988, 6.
13. "The Power of the Book of Mormon," 4.
14. "Four Cornerstones of Faith," 5.
15. "The Power of the Book of Mormon," 5.
16. "The Power of the Book of Mormon," 2, 4.
17. "*Mormon* Should Mean 'More Good,'" *Ensign,* Nov. 1990, 52.
18. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 402–3.
19. "The Power of the Book of Mormon," 6.

Շարունակեք կրթության մեծ գործընթացում

«Մենք պետք է շարունակենք աճել: Մենք պետք է շարունակենք սովորել: Սա աստվածայնորեն տրված մանդատ է, որ մենք շարունակենք ավելացնել մեր գիտելիքը»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

«Ես սիրում եմ սովորել»,- ասել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին: Ես բավականություն եմ ստանում գիտելիք ձեռք բերելու յուրաքանչյուր հնարավորությունից: Իսկապես, ես հավատում եմ և մեծապես աջակցել եմ ողջ իմ կյանքի ընթացքում կրթության հանդեպ ձգտումին ինչպես ինձ այնպես էլ ուրիշների համար: . . . Իմ տեսակետից, սովորելը ինչպես գործնական հարց է, այնպես էլ հոգևոր»:[1]

Եկեղեցու ղեկավարությունում Նախագահ Հինքլիի ծառայակից ընկերները զարմանում էին գիտելիք կուտակելու և աշխատանքում այն կիրառելու նրա պարգևի վրա: Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է. «Ես երբեք չեմ հանդիպել մի անձնավորության, ով կարող է այնքան լավ տեղեկացված դառնալ ընթերցանության և մարդկանց հետ շփվելու միջոցով: Երբ նա որևէ մեկի հետ երեկոյան ճաշում է, նա հեռանում է՝ իմանալով ինչ-որ բան այդ անձնավորության գիտելիքների մասին: Երեց Նիլ Ա. Մաքսվելը, նույնպես, Տասներկու Առաքյալների Քվորումից ուսուցանել է. «Այն, ինչ դարձնում է Նախագահ Հինքլիին առանձնահատուկ, այն է, որ նա հիշում է, թե ինչ է կարդացել և թորում է այն, ինչ նա ցանկանում է պահպանել: Նա ինտեգրացված բանականություն է: Նա խելամիտ որոշումներ ընդունելու համար կարողանում է հիմնվել նրա վրա, ինչ գիտի:[2]

«Ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով» (ՎԱՌ 88.118):

Իր կյանքի ընթացքում սովորելու և իրեն բարեփոխելու ջանքերում Նախագահ Հինքլին հետևեց իր ծնողների օրինակին: Նա անդրադարձել է հետևյալ պատմությունը, թե ինչպես իր հայրը՝ Բրյանթ Ս. Հինքլին, իրեն նվիրել էր սովորելուն.

Երբ նա մոտավորապես իմ այժմյան տարիքին էր, նա թոշակի էր անցել: Բայց նա ակտիվ էր: Նա ապրում էր մի բավական հասարակ, բայց հարմարավետ տանը՝ մի գյուղական տարածքում: Նա մի մրգատու այգի ուներ և բավականություն էր ստանում միրգ բաժանելով: Նրա տան բակում կային մարգեր, թփուտներ ու ծառեր: Այն ուներ մոտ երկու ոտնաչափ բարձրությամբ քարե պատ, որն առանձնացնում էր մի մակարդակը մյուսից: Երբ եղանակը լավ էր, նա նստում էր պատի վրա, մի հին գլխարկ գլխին՝ ստվերելու իր աչքերը ամառային արևից: Երբ մենք գնում էինք նրան այցելության , ես նստում էի նրա կողքին: Մի փոքրիկ հուշումով նա սկսում էր խոսել իր կյանքի մասին: . . .

«Նա ուսուցիչ էր եղել: Նա հաջողակ գործարար էր եղել: Նա նախագահել էր ավելի քան 15000 անդամից բաղկացած Եկեղեցու ամենամեծ ցցում: Նա ծառայել էր որպես միսիայի նախագահ և շատ ուրիշ պաշտոններում: Իսկ այժմ նա թոշակի էր անցել: Նա հիանալի ընթերցող էր և ուներ սքանչելի գրադարան: Նա գերազանց հոետոր էր և գրող: Գրեթե մինչև իր մահը՝ 94 տարեկանից մի քիչ պակաս, նա գրում էր ու կարդում և խորհում էր իր ստացած գիտելիքների մասին:

«Ես հայտնաբերեցի, որ երբ նա նստած էր լինում ժամերով պատի վրա, սովորաբար մտածում էր այն ամենի մասին, որ ընթերցել էր իր գրադարանի գրքերից:

Կարծում եմ, նա շնորհալի և հիանալի ծերացավ: Նա ուներ իր գրքերը, որոնք պարունակում էին թանկարժեք գանձեր, դրանք պարունակում էին բոլոր ժամանակների ու դարերի մեծ տղամարդկանց և կանանց մտքերը: Նա երբեք չդադարեց սովորելուց և երբ նստում էր պատի վրա, խորապես մտածում էր այն բաների մասին, որ ինքը կարդացել էր նախորդ գիշեր: . . .

«. . . Ինչո՞ւ եմ պատմում ձեզ մի ծեր մարդու մասին և այն պատի մասին, որի վրա նա նստում էր: Ես պատմում եմ ձեզ, որովհետև ես կարծում եմ դա մեզանից յուրաքանչյուրի համար դաս ունի: Մենք երբեք չպիտի դադարենք սովորելուց: Մենք

հավատում ենք հավերժական առաջընթացին, և այս կյանքը հավերժության մի մասն է, որն օգտակար ձևով պետք է ապրենք ընդհուպ մինչև դրա ավարտը»[3]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Տերը կամենում է, որ մենք կրթենք ինքներս մեզ, որպեսզի կարողանանք առաջադիմել անձնապես և ներդրում կատարել հասարակության մեջ:

Դուք պատկանում եք մի Եկեղեցու, որն ուսուցանում է կրթության կարևորությունը: Դուք մանդատ ունեք Տիրոջից՝ կրթելու ձեր մտքերը, սրտերը և ձեր ձեռքերը: Տերն ասել է.« Ուսուցանեք ջանասիրաբար . . . բաների մասին, որ երկնքում են, և երկրի վրա, և երկրի տակ. բաներ, որոնք եղել են, որոնք կան, որոնք շուտով պիտի լինեն. բաներ, որոնք տանն են, բաներ, որոնք դրսում են. պատերազմներն ու հուզումներն ազգերի, և դատաստանները, որոնք երկրի վրա են. և նաև գիտելիք՝ երկրների ու թագավորությունների մասին,–որպեսզի դուք կարողանաք պատրաստ լինել բոլոր բաներում» (ՎևՈ 88.78–80):[4]

Մեզ այս Եկեղեցում տրվել է մի սքանչելի խոստում Տիրոջ կողմից: Նա ասել է. «Այն, ինչ Աստծուց է՝ լույս է. և նա, ով ստանում է լույսը և շարունակում է Աստծո հետ, ստանում է ավելի շատ լույս. և այդ լույսն ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում» (ՎևՈ 50.24):

Ինչպիսի՜ նշանավոր հայտարարություն է սա: Դա սուրբ գրությունների իմ սիրելի հատվածներից մեկն է: Այն խոսում է աճի, զարգացման, դեպի աստվածություն առաջնորդող երթի մասին: Այն ձեռք ձեռքի տված գնում է այս մեծ հայտարարագրերի հետ. «Աստծո փառքը բանականություն է, կամ այլ խոսքով, լույս և ճշմարտություն» (ՎևՈ 93.36),«Եթե մի մարդ ավելի շատ գիտելիք և բանականություն ձեռք բերի այս կյանքում, իր ջանասիրության և հնազանդության միջոցով, քան մեկ ուրիշը, նա կունենա նույնքան առավելություն գալիք աշխարհում (ՎևՈ 130.19): . . .

Ինչպիսի խորը մարտահրավեր է գտնվում այս սքանչելի հայտարարություններում: Մենք պետք է շարունակենք աճել: (Մենք պետք է շարունակենք սովորել: Սա աստվածայնորեն

տրված մանդատ է, որ մենք շարունակենք ավելացնել մեր գիտելիքը»: . . .

. . . Տերն ասել է ձեզ և ինձ. «Իմաստության խոսքեր փնտրեք լավագույն գրքերից. ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով: . . . Կազմակերպվեք: . . . Դադարեք ծույլ լինել» (ՎևՈ 88.118–119, 124).[5]

Տերն ուզում է, որ դուք կրթեք ձեր միտքն ու ձեռքերը, ինչ ոլորտ էլ դուք ընտրեք: Անկախ նրանից, թե դուք սառնարան կվերանորոգեք, թե կկատարեք հմուտ վիրաբույժի աշխատանք, պիտի սովորեք: Ձեռք բերեք լավագույն մատչելի կրթությունը: Դարձեք ազնվության ջատագով աշխարհում, որը ձեր առջևում է գտնվում: . . . Դուք պատիվ կբերեք Եկեղեցուն և առատորեն կօրհնվեք այդ ուսուցման համար:

Համենայն դեպս որևէ կասկած չի կարող լինել, որ կրթությունը շահութաբեր է: Խոչընդոտներ մի ստեղծեք ձեր կյանքում: Եթե այդպես վարվեք, դուք դրա համար կվճարեք կրկին ու կրկին:[6]

Բավական չէ ուղղակի ապրել, ուղղակի գոյատևել: Անհրաժեշտ է, որ մեզանից յուրաքանչյուրը հոգ տանի այն մասին, որ որևէ արժանավոր բան անի հասարակության համար, ձեռք բերի ավելի ու ավելի շատ լույս, որպեսզի մեր անձնական լույսը կարողանա օգնել լուսավորել խավարած աշխարհը: Եվ սա հնարավոր է դառնում գիտելիքի միջոցով, մեզ կրթելու միջոցով, առաջադիմության միջոցով և աճի միջոցով՝ ինչպես մտքով, այնպես էլ հոգով:[7]

2

Ծրագրելով և ինքնակարգապահության միջոցով ծնողները կարող են ստեղծել ուսուցման մթնոլորտ իրենց տներում:

Ինչքան սքանչելի ու հետաքրքիր է հետևել, թե ինչպես են երիտասարդ մտքերը աճում և ուժեղանում: Ես այն մարդն եմ, ով մեծապես գնահատում է հեռուստատեսության հսկայական ուժը բարիք գործելու համար: Բայց ես նաև այն մարդն եմ, ով դատապարտում է ժամանակի և հնարավորության սոսկալի վատնումը, երբ երեխաները որոշ ընտանիքներում ժամ ժամի ետևից դիտում են այն, ինչը ոչ լուսավորում է, ոչ զորացնում:

«Սկսեք երեխաներին մանկուց ծանոթացնել գրքերի հետ»:

«Երբ երիտասարդ էի, մենք ապրում էինք մի մեծ և հին տան մեջ: Սենյակներից մեկը կոչվում էր գրադարան: Այն ուներ մի ամուր սեղան, մի լավ լամպ, երեք-չորս հարմարավետ աթոռներ լավ լուսավորված տեղում և գրքեր դարակներում, որոնք շարված էին պատերին: Այնտեղ կային շատ տարիների ընթացքում մայրիկիս և հայրիկս կողմից գնված բազմաթիվ հատորներ:

Մեզ երբեք չէին ստիպում կարդալ դրանք, բայց դրանք ձեռքի տակ էին, և որտեղից մենք կարող էինք վերցնել դրանք, երբ կամենայինք:

Այդ սենյակում լռություն էր: Հասկանալի էր, որ այն սովորելու վայր էր:

Այնտեղ կային նաև ամսագրեր՝ Եկեղեցու ամսագրերը, և մեկ-երկու ուրիշ լավ ամսագրեր: Կային պատմության և գրականության գրքեր, գրքեր տեխնիկական առարկաների վերաբերյալ, բառարաններ, հանրագիտարանների հավաքածու և աշխարհի ատլասը: Այդ ժամանակ, իհարկե, հեռուստացույց չկար: Ռադիոն եկավ, երբ ես մեծանում էի: Բայց կար միջավայր, ուսման միջավայր: Ես չէի կամենա ստիպել ձեզ հավատալ, որ մենք մեծ գիտնականներ էինք: Բայց մեզ ներկայացված էր մեծ գրականություն, մեծ գաղափարներ մեծ մտածողներից, և

տղամարդկանց և կանանց խոսքը, ովքեր խորը մտածում էին ու զեղեցիկ գրում:

Այսօր մեր շատ տներում այդպիսի գրադարան ունենալու հնարավորություն չկա: Մեծ մասամբ ընտանիքները տարածության խնդիր ունեն: Բայց, եթե ճիշտ պլանավորվի, կարող է լինել մի անկյուն, որը կդառնա մի թաքստոց, հեռու շրջապատի աղմուկից, որտեղ մարդ կարող է նստել, կարդալ ու մտածել: Սքանչելի է ունենալ մի պարզ գրասեղան կամ սեղան, , որի վրա գտնվում են Եկեղեցու կանոնիկ գրքերը, մի քանի լավ գրքեր, Եկեղեցու լույս ընծայած ամսագրերը և այլն, որոնք արժե, որ ընթերցենք:

Սկսեք երեխաներին մանկուց ծանոթացնել գրքերին: Մայրը, ում չի հաջողվում կարդալ իր փոքրիկ երեխաների համար, իրեն ու նրանց համար վատ ծառայություն է մատուցում: Դա ժամանակ է պահանջում, այո, շատ ժամանակ: Դա ինքնակարգապահություն է պահանջում: Այն պահանջում է օրվա րոպեների և ժամերի կազմակերպում և բյուջետավորում: Բայց այն երբեք չի լինի ձանձրալի, երբ դուք հետևեք, թե ինչպես են երիտասարդ մտքերը ճանաչում բնավորություններ, արտահայտություններ և գաղափարներ: Լավ ընթերցանությունը կարող է դառնալ սիրելի գործ, շատ ավելի արգասաբեր՝ հետագա ազդեցություններով, քան շատ ուրիշ զբաղմունքներ, որոնց վրա երեխաները օգտագործում են իրենց ժամանակը: . . .

Ծնողներ, . . . թույլ տվեք, որ ձեր երեխաները մեծ մտքերի, մեծ գաղափարների, հավերժական ճշմարտության ազդեցությանը ենթարկվեն, և այն բաների, որոնք կշենացնեն և խթան կհանդիսանան բարու համար: . . . Փորձեք ստեղծել ձեր տանը ուսման և զարգացման մթնոլորտ, որը կգա դրանից:[8]

3

Կրթությունը պատանիների և երիտասարդ չափահասների համար բացում է հնարավորության դուռը:

Սա հնարավորության մեծ օր է ձեզ համար երիտասարդներ, սա սքանչելի ժամանակ է՝ երկրի վրա լինելու համար: Դուք կանգնած եք բոլոր անցած դարերի գագաթնակետին: Դուք ենթակա եք բոլոր նրանց գիտելիքների ազդեցությանը ,

ովքեր քայլել են երկրի վրա. այդ գիտելիքները թորվել են այն դասընթացներում, որտեղ դուք կարող եք ձեռք բերել գիտելիք համեմատաբար կարճ ժամանակաընթացքում, այն գիտելիքը, որը մարդիկ դժվարությամբ են ձեռք բերելանցած դարերի ընթացքում: Ինքներդ ձեզ էժան մի վաճառեք: Բաց մի թողեք ձեր մեծ հնարավորությունը: Հաջողության հասեք, աշխատեք այդ ուղղությամբ, տքնաջան սովորեք:[9]

Այնքան կարևոր է, որ դուք, երիտասարդ տղամարդիկ և կանայք, ստանաք այն կրթությունը, որը դուք կարող եք: . . . Կրթությունը այն բանալին է, որը ձեզ համար ամեն հնարավորության առջև դուռ կբացի: Արժե դրա համար զոհաբերել: Արժե դրա վրա աշխատել, և եթե դուք կրթեք ձեր միտքը և ձեր ձեռքերը, դուք կկարողանաք անել մեծ ներդրում հասարակության համար, որի մասն եք հանդիսանում և կկարողանաք պատվով արտացոլել Եկեղեցին, որի անդամն եք հանդիսանում ինքներդ: Իմ սիրելի երիտասարդ եղբայրներ և քույրեր, օգտվեք կրթական ամեն հնարավորությունից, որ դուք կարող եք ձեզ թույլ տալ, և դուք, հայրեր և մայրեր, քաջալերեք ձեր որդիներին և դուստրերին՝ կրթություն ձեռք բերել, որը կօրհնի նրանց կյանքը:[10]

Հավանաբար դուք չունեք այն ֆոնդերը, որպեսզի ստանաք այն կրթությունը, որ դուք կկամենայիք: Փող աշխատեք՝ գնալու այնքան հեռու, որքան կարող եք, և օգտվեք կրթաթոշակներից, դրամաշնորհներից և ավանդներից ետ վճարելու ձեր կարողության համաձայն:[11]

Ինձ համար նշանակություն չունի, թե ինչ եք դուք ուզում դառնալ, քանի դեռ այն պատվաբեր է: Մեքենայի մեխանիկ, աղյուսագործ, ջրմուղագործ, էլեկտրիկ, բժիշկ, փաստաբան, վաճառական, բայց ոչ գող: Բայց ինչ էլ որ դառնաք, օգտվեք ուսանելու հնարավորությունից: Հասարակությունը կվարձատրի ձեզ՝ համաձայն ձեր արժեքի, երբ զգա այդ արժեքը: Այժմ ձեզանից յուրաքանչյուրի համար նախապատրաստության մեծ օր է: Եթե դա նշանակում է զոհաբերություն, ապա զոհաբերեք: Այդ զոհաբերությունը կդառնա լավագույն ներդրումը, որ երբևէ արել եք, քանի որ դուք տոկոսներ կինձեք դրանից ձեր կյանքի բոլոր օրերում:[12]

Ես հորդորում եմ ձեզանից յուրաքանչյուրին երիտասարդ կանայք, ստանալ այն կրթությունը, որ կարող եք ստանալ: Դուք դրա կարիքը կունենաք երբ կյանք մտնեք: Կյանքը դառնում է չափազանց մրցակցական: . . . Աշխարհը փոխվում է և այնքան կարևոր է, որ մենք զինվենք՝ այդ փոփոխության հետ շարժվելու համար: Բայց բոլոր այս բաների համար կա մի պայծառ կողմ: Ոչ մի ուրիշ սերունդ ողջ պատմության ընթացքում կանանց չի ներկայացրել այսքան շատ հնարավորություններ: Ձեր առաջին նպատակը պետք է լինի Տիրոջ տաճարում կնքված երջանիկ ամուսնությունը, և հետո լավ ընտանիք ունենալը: Կրթությունը կարող է ավելի լավ զինել ձեզ այդ իդեալների իրականացման գործում:[13]

Եկեղեցում, ինչպես և համայնքում, կան վիթխարի պարտականություններ կանանց համար, , որոնք համապատասխանում են և լիակատար ներդաշնակության մեջ են ամուսնության, մայրության, լավ և ունակ երեխաներ մեծացնելու հետ:[14]

Այժմ մարդկային գործունեության բոլոր ոլորտները բաց են կանանց համար: Չկա ոչինչ , որ դուք չկարողանաք անել, եթե կենտրոնանաք դրա վրա: Դուք կարող եք ներառել ձեր երազանքի մեջ այն կնոջը, որը կկամենայիք լինել՝ մի կնոջ պատկեր, ով իրավունք ունի ծառայելու հասարակությանը և կատարելու նշանակալի ներդրում աշխարհում, որի մասն է նա կազմում:[15]

Ես երախպտապարտ եմ, որ կանայք այսօր ստանում են նույնպիսի հնարավորություն [ինչպես տղամարդիկ], սովորել գիտություն, մասնագիտություններ և գիտելիքներայլ ոլորտներում: Դուք և տղամարդիկ նույն իրավունքն ունեք Քրիստոսի Հոգու համար, որը լուսավորում է ամեն տղամարդու և կնոջ, ով գալիս է աշխարհ: (Տես ՎևՈւ 84.46:) Առաջնահերթ համարեք՝ ամուսնությունը և ընտանիքը, բայց նաև ձգտեք այնպիսի կրթական ծրագրերի, որոնք կտանեն դեպի բավարարող աշխատանք և արդյունավետ աշխատանքի այն դեպքում, եթե դուք չամուսնանաք կամ կբերեն ապահովության և կայացված լինելու զգացում, այն դեպքում, եթե ամուսնանաք:[16]

Դուք [երիտասարդ տղամարդիկ] դիմակայում եք մեծ մարտահրավերների, որոնք առջևում են: Դուք շարժվում եք դեպի կատաղի մրցակցությամբ մի աշխարհ: Դուք պետք է ստանաք ողջ այն կրթությունը, որ կարող եք: Տերը հրահանգել է մեզ

կրթության կարևորության վերաբերյալ: Այն ձեզ իրավունք կտա ստանալ ավելի մեծ հնարավորություններ: Այն կապահովի ձեզ անելու ինչ-որ արժանի բան հնարավորության մեծ աշխարհում, որը գտնվում է առջևում: Եթե դուք կարող եք սովորել քոլեջում և դա ձեր ցանկությունն է, ապա արեք դա: Եթե դուք ցանկություն չունեք քոլեջ գնալու, ապա գնացեք արհեստակցական կամ գործարարության դպրոց՝ զարգացնելու ձեր հմտությունները և մեծացնելու ձեր կարողությունը:[17]

Ես հուսով եմ [երիտասարդներ], դուք կնայեք կրթական հնարավորության վրա՝ որպես մեծ օրհնություն: Ես գիտեմ՝ դա տաղտկալի աշխատանք է: Ես գիտեմ՝ այն դժվար է: Գիտեմ, դուք երբեմն հուսահատվում եք: Ես գիտեմ, որ երբեմն դուք զարմանում եք, թե ինչու եք դա անում: Բայց շարունակեք, շարունակեք տքնել և շարունակեք սովորել: Դուք երբեք չեք զղջա դրա համար, քանի դեռ ապրում եք, այլ կհամարեք այն մեծ օրհնություն:[18]

4

Հոգու կրթումը նույնքան կարևոր է, եթե ոչ ավելի, քան մտքի կրթումը:

Ես հիացած եմ գիտելիքի այն մեծ ուժերից, որոնք ներկայացվում են մեր ժամանակներում: Նախկինում երբևէ այդքան շատ կրթվածներ չեն եղել աշխարհիկ կրթությամբ: Ինչ հզոր բան է՝ աշխարհի երիտասարդության մեծ մասի ինտենսիվ ուսուցումը, ովքեր ամեն օր հանդիպում են դասախոսների հետ՝ գիտելիք ստանալու համար բոլոր դարերի մարդու մասին:

Այդ գիտելիքի չափը ցնցող է: Այն ներառում է տիեզերքի աստղերը, երկրագնդի երկրաբանությունը, ազգերի պատմությունը, ժողովուրդների մշակույթն ու լեզուն, կառավարությունների գործունեությունը, առևտրի օրենքները, ատոմի շարժումը, մարմնի ֆունկցիաները, և մտքի հրաշքները:

Այսքան շատ մատչելի գիտելիքով հանդերձ մարդ կարող է մտածել, որ աշխարհը ամենայն հաջողությամբ կարող է մոտ լինել կատարելության վիճակի: Սակայն մենք մշտապես տեղեկացվում ենք դրամի մյուս կողմի մասին՝ հասարակության հիվանդության, հակառակությունների և դժբախտությունների մասին, որոնք միլիոնավորների կյանք են բերում թշվառություն:

Յուրաքանչյուր օր մենք տեղեկացվում ենք այն փաստի մասին, որ կյանքն ավելին է, քան գիտությունը և մաթեմատիկան, ավելի քան պատմությունը և գրականությունը: Կարիք կա ևս մեկ կրթության, առանց որի աշխարհիկ ուսուցման նյութը կարող է տանել միայն կործանման: Ես նկատի ունեմ սրտի, խղճի, բնավորության, հոգու կրթությունը՝ մեր անհատականության այս անսահմանելի կողմերը, որոնք որոշում են այնքան որոշակիորեն, թե ով ենք մենք, և ինչ ենք մենք անում միմյանց հետ փոխհարաբերություններում:

. . . Երբ Անգլիայում ծառայում էի որպես միսիոներ, ես գնացի Լոնդոնի կենտրոնական YMCA-ը: Ենթադրում եմ, որ այդ հին շենքը վաղուց արդեն չկա, բայց ես երբեք չեմ մոռանա այն խոսքերը, որոնք դիմավորում էին այցելուներին նախասրահում ամեն անգամ, երբ նրանք մտնում էին այնտեղ: Սրանք Սողոմոնի խոսքերն էին. «Իմաստութեան սկիզբն է՝ «իմաստութիւն ստացիր» Առակաց 4.7:)

Ինչի՞ մասին իմաստություն: Իմաստություն մեր մասին, կյանքի նպատակների մասին, Աստծո հետ մեր փոխհարաբերությունների մասին, ով է մեր Հայրը, աստվածայնորեն տրված մեծ սկզբունքների մասին, որոնք դարեր շարունակ շարժիչ ուժ են եղել՝ մարդու իսկական առաջընթացի համար: . . .

Երբ մենք հետամուտ ենք լինում մեր աշխարհիկ ուսումնասիրություններին, եկեք մեր կյանքին ավելացնենք նաև Հոգու զարգացումը: Եթե մենք այդպես անենք, Աստված կօրհնի մեզ այն խաղաղությամբ և այն օրհնություններով, որը միայն Նրանից է գալիս:[19]

Հիսուսն ասել է. «Ինձանից սովորեցէք: Որովհետեւ իմ լուծը քաղցր է, եւ իմ բեռը՝ թեթեւ»: (Մատթ. 11.29–30:)

Ես կկամենայի առաջարկել, որ մենք հետևենք այդ հորդորին, որը տրվել է Աստծո Որդու կողմից: Մեր ողջ կրթությամբ հանդերձ, եկեք սովորենք նաև Նրանից: Մեր բոլոր հետազոտություններով հանդերձ, մենք պետք է գիտելիք փնտրենք Վարդապետից: Այդ գիտելիքը հիանալի ձևով կլրացնի մեր աշխարհիկ ուսուցումը և կտա մեզ բնավորություն և լիարժեք կյանք , որը չի կարող գալ որևէ այլ ձևով:[20]



«Մեր բոլոր ուսումնասիրություններով հանդերձ, մենք պետք է գիտելիք փնտրենք Վարդապետից»:

Ես կոչ եմ անում ձեզ երբեք չմոռանալ, որ հոգու կրթումը նույնքան կարևոր է, եթե ոչ ավելի, քան մտքի կրթումը:[21]

Եկեղեցու կրթության մեր մեծ ծրագիրն առաջ է շարժվում: Ուսանողներին ուսուցանելու աշխատանքը սեմինարիայի և ինստիտուտի ծրագրի միջոցով անընդհատ ընդարձակվում է: . . . Դուք, ովքեր եղել եք այս ծրագրի ստացողները, գիտեք դրա վիթխարի արժեքի մասին: Մենք հորդորում ենք բոլորին, ում այն մատչելի է, օգտվել դրանից: Մենք անշուշտ խոստանում ենք, որ ավետարանի վերաբերյալ ձեր գիտելիքը կաճի, ձեր հավատքը կուժեղանա և դուք ձեռք կբերեք հրաշալի կապեր և ընկերներ:[22]

Եկեք մեզ վրա վերցնենք Տիրոջ անունը և ապա առաջ գնանք հավատքով և պատշաճությամբ կիսվելու նրանով, ինչը կազդի մարդկության կյանքի վրա և խաղաղություն և ուրախություն կբերի աշխարհին: Աշխարհը կարիք ունի գիտելիք և ազդեցություն ունեցող տղամարդկանց և կանանց մի սերնդի, ովքեր կարող են կանգնել ու անկեղծորեն, առանց տատանվելու հայտարարել, որ Աստված ապրում է, և Հիսուսը Քրիստոսն է:[23]

5

Անկախ մեր տարիքից մենք կարող ենք ձեռք բերել գիտելիք, հավաքել իմաստություն և շարունակել աճել:

Ինչպիսի՞ նշանակալի բան է ուսումը, այն գործընթացը, որի միջոցով դարերի ընթացքում կուտակված գիտելիքը ամփոփվում է և զտվում, որպեսզի կարճ ժամանակում մենք կարողանանք սովորել այն, ինչն առաջին անգամ իմացվել է միայն երկար հետազոտական վարժությունների և փորձարկումների և սխալների միջոցով:

Կրթությունը մեծ դարձի գործընթաց է, որի ներքո վերացական գիտելիքը դառնում է օգտակար և արդյունավետ գործողություն: Այն մի բան է, որը երբեք չպիտի կանգ առնի: Անկախ մեր տարիքից մենք կարող ենք ձեռք բերել գիտելիք և օգտագործել այն: Մենք կարող ենք հավաքել իմաստություն և օգուտ քաղել դրանից: Մենք կարող ենք բավականություն ստանալ ընթերցանության և արվեստների ազդեցության հրաշքի միջոցով և գիտելիք ավելացնել ապրելու օրհնությանն ու կայացմանը: Որքան ավելի եմ մեծանում, ավելի շատ եմ բավականություն ստանում հնադարյան և ժամանակակից խորամիտ գրողների խոսքերից և ըմբոշխնում դրանք, ինչ նրանք գրել են:[24]

Մեզանից ոչ մեկը . . . բավականաչափ չգիտի: Սովորելու գործընթացը անվերջանալի գործընթաց է: Մենք պետք է կարդանք, մենք պետք է յուրացնենք, մենք պետք է համատեղենք և մենք պետք է խորհենք այն ամենի մասին, ինչ բացվում է մեր մտքում: Ես հավատում եմ բարեփոխվելուն: Ես հավատում եմ աճին: . . .

Շարունակեք աճել, իմ եղբայրներ և քույրեր, անկախ այն բանից՝ երեսուն թե յոթանասուն տարեկան եք»: Ձեր աշխատասիրությունն այդ անելիս կօգնի որ տարիներն ավելի արագ անցնեն, քան դուք կկամենայիք, բայց դրանք լցված կլինեն քաղցր և սքանչելի համով, որը կավելացնի համ ու հոտ ձեր կյանքին և ուժ՝ ձեր ուսուցմանը:[25]

[Պրովոյում, Յուտա, Բրիգամ Յանգի Համալսարանից] անմիջապես դեպի արևելք կա մի լեռ: Վստահ եմ, որ [շատերը] նայել են այդ լեռանը և մտածել, «Եթե միայն մագլցեմ դրա գագաթը, հետաքրքիր կլինի տեսնել հովիտը մյուս կողմում»: Բայց ձեզանից նրանք, ովքեր մագլցել են այնտեղ, հայտնաբերել են,

որ հովիտն ընդամենը մի փոքրիկ և բավական մակերեսային գոգավորություն է, և դրանից այն կողմ կան շատ ուրիշ ավելի բարձր լեռներ մագլցելու համար։

Այսպես էլ հուսով եմ կլինի ձեզ հետ։ . . . Դուք կընդունեք, որ չնայած ձեր սովորելու փորձառությունը մեծ է եղել, կան նույնիսկ ավելի մեծ հնարավորություններ և մարտահրավերներ առջևում։ Ավելացրեք ձեր տեղեկությունների պաշարի վրա, ընդարձակեք ձեր գիտելիքները, շարունակեք սովորելու մեծ գործընթացը։[26]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցանման համար

Հարցեր

- Ինչո՞ւ է կարևոր «ձեռք բերել ավելի ու ավելի շատ լույս» կրթության միջոցով։ (Տես բաժին 1։) Ինչպե՞ս կարող է սովորելն օգնել մեզ անհատապես առաջադիմել։ Ինչպե՞ս կարող է սովորելն օգնել մեզ «լուսավորել խավարած աշխարհը»։
- Վերանայեք Նախագահ Հինքլիի պատմությունը, թե ինչպես նրա ծնողները սովորելու մթնոլորտ ստեղծեցին իրենց տանը։ Ինչպե՞ս կարող ենք օգնել երեխաներին սեր զարգացնել ուսման հանդեպ։ Ինչպե՞ս կարող ենք օգնել երեխաներին, որ ցանկանան ձգտել ուսում ստանալ այն աղբյուրներից, որոնք լուսավորում են և մղում դեպի բարին։
- Ինչպե՞ս է կրթությունը պատանիների և երիտասարդ չափահասների համար «բացում հնարավորության դուռը»։ (Տես բաժին 3.) Ինչպե՞ս կարող են պատանիներն ու երիտասարդ չափահասները խելամիտ լինել կրթության հնարավորություններից օգտվելիս։
- Ինչպե՞ս կարող եք բացատրել «հոգու ուսուցումը» արտահայտության իմաստը։ (Տես բաժին 4.) Ինչպե՞ս կարող եք կրթել սիրտը, բնավորությունը և հոգին։ Ինչպե՞ս են ձեր կյանքում հոգևոր գիտելիքը և աշխարհիկ գիտելիքը միմյանց լրացրել։
- Ինչո՞ւ պետք է շարունակել սովորել ողջ մեր կյանքում։ (Տես բաժին 5։) Ինչպե՞ս կարող ենք ողջ կյանքի ընթացքում պահպանել սերը ուսման հանդեպ։ Ի՞նչ եք վերջերս սովորել, որը հատկապես արժեքավոր է եղել ձեզ համար։

Սոնչվող սուրբ գրություններ

Առակաց 1.5, 2 Պետրոս 1.1–8,2 Նեփի 9.28–29, 28.29–30, ՎևՈ 6.7, 90.15, 131.6, 136.32–33

Օգնություն ուսուցչին

Նախագահ Հինքլիի ուսմունքների քննարկումը խրախուսելու համար խնդրեք մասնակիցներին կիսվել նրա վերաբերյալ, ինչ իրենք սովորել են այդ գլխի իրենց անձնական ուսումնասիրության ժամանակ (տես էջեր viii–x այս գրքում լրացուցիչ գաղափարների համար):

Հղումներ

1. *Standing for Something: Ten Neglected Virtues That Will Heal Our Hearts and Homes* (2000), 59.
2. In Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 449–50.
3. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1: 1995–1999* (2005), 406–7.
4. "A Prophet's Counsel and Prayer for Youth," *Ensign,* Jan. 2001, 4–5.
5. "A Conversation with Single Adults," *Ensign,* Mar. 1997, 62.
6. "A Prophet's Counsel and Prayer for Youth," 7.
7. *Standing for Something,* 67.
8. "The Environment of Our Homes," *Ensign,* June 1985, 4–5.
9. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 171–72.
10. "Inspirational Thoughts," *Ensign,* June 1999, 4.
11. "Stay on the High Road," *Ensign* or *Liahona,* May 2004, 113.
12. *Teachings of Gordon B. Hinckley,* 172–73.
13. "Stand True and Faithful," *Ensign,* May 1996, 92.
14. "Youth Is the Season," *New Era,* Sept. 1988, 47.
15. "How Can I Become the Woman of Whom I Dream?" *Ensign,* May 2001, 95.
16. "Ten Gifts from the Lord," *Ensign,* Nov. 1985, 89.
17. "Converts and Young Men," *Ensign,* May 1997, 49–50.
18. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1,* 370.
19. "With All Thy Getting Get Understanding," *Ensign,* Aug. 1988, 2, 5.
20. "With All Thy Getting Get Understanding," 5.
21. In "President Hinckley Visits New Zealand, Australia, and Mexico," *Ensign,* Aug. 1997, 77.
22. "The Miracle Made Possible by Faith," *Ensign,* May 1984, 47.
23. "With All Thy Getting Get Understanding," 5.
24. "I Believe," *Ensign,* Aug. 1992, 4.
25. *Teachings of Gordon B. Hinckley,* 298–99.
26. *Teachings of Gordon B. Hinckley,* 299.

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին խորհուրդ է տվել. «Թող առաքինությունը անկյունաքար լինի, որի վրա դուք պիտի կառուցեք ձեր կյանքը»։

Առաքինություն՝ անկյունաքար, որի վրա պիտի կառուցենք մեր կյանքը

«Դուք՝ ձեզանից յուրաքանչյուրդ, Երկնային Հոր աստվածային զավակն եք: Դուք ստեղծվել եք Նրա նախագծով ձեր Արարիչի պատկերով: Ձեր մարմինը սրբազան է: Այն ձեր ոգու տաճարն է: Մի պղծեք այն մեղքով:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին 2007 թվականին խոսելով Բրիգամ Յանգի Համալսարանի ուսանողների հետ ասել է.

«Օրերս ես մի շատ հետաքրքիր բան նկատեցի: Սոլթ Լեյք Սիթիում շաբաթ վաղ առավոտյան , Քի Բանկի շենքը տապալվեց գետնին մի շարք լավ տեղադրված պայթեցումներից: Այդ բոլորը տեղի ունեցավ երեք կամ չորս վայրկյանում, փոշու մի մեծ ամպով, որը գլորվեց դեպի հյուսիս արևմուտք: Այդ գործընթացը կոչվում է ներպայթեցում՝ ի տարբերություն պայթեցումի:

«Շենքը կառուցվել էր մոտ 30 տարի առաջ: Կարծում եմ, շինարարությունը տևել էր առնավազն մեկ-երկու տարի: Այժմ այն վերացավ վայրկյանների ընթացքում:

Իմ ընկերներ, դա այնքան շատերի կյանքի պատմությունն է: Մենք այնքան զգույշ ենք նրանց դաստիարակում տարիների ընթացքում: Ապա մենք հայտնվում ենք շատ լարված հանգամանքներում: Սխալներ են գործվում: Մաքրաբարոյությունը վտանգված է: Ներպայթեցում է տեղի ունենում և մի գունդ փոշին այն ամենն է, ինչ մնում է:

Ես հիշեցի այդ մասին, երբ մտաբերեցի մի երիտասարդ տղամարդու և կնոջ, ովքեր եկան իմ գրասենյակ: Նա գեղեցիկ

տղա էր, իսկ նա՝ սքանչելի աղջիկ: Նրանք համալսարանի ուսանողներ էին: Նրանց ապագան թվում էր պայծառ և հիանալի: Բայց նրանք տեղի տվեցին գայթակղությանը: •

Նրանց աչքերը լցվեցին արցունքներով, երբ խոսում էին ինձ հետ: Բայց չկար փախուստ այն իրականությունից, որին նրանք դիմակայում էին: Նրանց կյանքը ենթարկվել էր ներպայթեցման և երազանքների մի աշտարակ վայր էր գլորվել:

Մի թույլ տվեք, որ դա պատահի ձեզ հետ: Ձեզ էժան մի ծախեք՝ վտանգելով բարոյականության հանդեպ ձեր պարտավորությունը: Դուք, ձեզանից յուրաքանչյուրդ, աստվածային Երկնային Հոր զավակներն եք: Դուք ստեղծվել եք Նրա նախագծով ձեր Արարիչի պատկերով: Ձեր մարմինը սրբազան է: Այն ձեր ոգու տաճարն է: Մի պղծեք այն մեղքով:

«Այսպիսով, ականջ դնելով փլված աշտարակի վերաբերյալ օրինակին, ես հիշեցնում եմ ձեզ, որ դրա տեղում կկառուցվի մի նոր և գեղեցիկ շենք: Նմանապես, նրանք, ովքեր մեղանչել են, կարող են դառնալ դեպի իրենց Քավիչը, մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը և Նրա Քավության զորությամբ մաքրվել և նորացվել»:[1]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Առաքինի ապրելակերպը բերում է սքանչելի և հոյակապ օրհնություններ:

Ողջ աշխարհում չկա ոչ մի բան, որ լինի այնքան վսեմ, որքան առաքինությունը: Այն փայլում է առանց աղոտանալու: Այն թանկարժեք է և գեղեցիկ: Այն գին չունի: Այն չի կարող գնվել կամ վաճառվել: Այն ինքնատիրապետման պտուղն է:

. . . Տերը տվել է հիանալի հանձնագիր: Նա ասել է.«Թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար» (ՎԵՈՒ 121.45): Սա դառնում է պատվիրան, որը պետք է պահվի ջանասիրությամբ և կարգ ու կանոնով: Եվ դրան կցված է սքանչելի և հոյակապ օրհնություններով խոստում: Նա ասել է նրանց, ովքեր ապրում են առաքինությամբ.

«Այդ ժամանակ ձեր վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ: . . .

Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը, և քո գավազանը կլինի արդարության ու ճշմարտության անփոփոխ գավազան. և քո տիրապետությունը կլինի հավիտենական տիրապետություն և առանց հարկադրանքի կհոսի դեպի քեզ հավիտյանս հավիտենից» (ՎևՈւ 121.45–46)։

Արդյոք կարո՞ղ է լինել ավելի մեծ և զեղեցիկ խոստում, քան սա։[2]

Կա արդյոք գործող օրինակ առաքինության համար։ Դա զղջումից միակ ուղին է դեպի ազատություն։ Խղճի խաղաղությունը, որը հորդում է դրանից, միակ անձնական խաղաղությունն է, որը կեղծված չէ։

Եվ բացի այդ բոլորից, Աստծո անխափան խոստումն է նրանց, ովքեր քայլում են առաքինությամբ։ Նազարեթցի Հիսուսը հայտարարել է, խոսելով լեռան վրա. «Երանելի են բոլոր սրտով մաքուրները, քանզի նրանք կտեսնեն Աստծուն» (Մատ. 5.8)։ Սա ուխտ է, որը կապվել է Նրա կողմից, ով իշխանություն ունի այն կատարելու։[3]

Դուք պիտի ընդունեք, դուք *պետք է* ընդունեք, որ ինչպես փորձառությունը, այնպես էլ աստվածային իմաստությունն է թելադրում, որ առաքինությունն ու բարոյական մաքրությունն է այն ուղին, որն առաջնորդում է դեպի բնավորության ուժի, սրտի խաղաղության և կյանքի երջանկության։[4]

Թող առաքինությունը անկյունաքար լինի, որի վրա դուք պիտի կառուցեք ձեր կյանքը։[5]

2

Երբ մենք բարձրանում ենք աշխարհի կեղտից և անբարոյականությունից վեր, մենք վայելում ենք ավելի մեծ երջանկություն, անվտանգություն և մտքի խաղաղություն։

Երբ մենք նայում ենք աշխարհին, թվում է, թե բարոյականությունը մի կողմ է գցված։ Հին չափանիշների խախտումը դարձել է սովորական։ Ուսումնասիրությունները մեկը մյուսի ետևից ցույց են տալիս, որ տեղի է ունեցել ժամանակով ստուգված սկզբունքներից հրաժարում։ Ինքնակարգապահությունը մոռացված է և սեռական անմաքուր կյանքի հանդեպ ամենաթողությունը դարձել է լայնատարած։

Բայց իմ սիրելի ընկերներ, մենք չենք կարող ընդունել այն, ինչ սովորական է դարձել աշխարհում: Ձերը, որպես այս Եկեղեցու անդամներ, ավելի բարձր չափանիշ է և ավելի պահանջկոտ: Այն հայտարարում է որպես ձայն Սինայից, որ դուք չպիտի անձնատուր լինեք: Դուք պետք է վերահսկեք ձեր ցանկությունները:[6]

Կորնթացիներին ուղղված Պողոսի խոսքերն այսօր նույնքան կիրառելի են մեզ համար, որքան դրանք նրանց համար էին, ում նա գրել էր: Նա ասել է.

«Չգիտէ՞ք որ դուք Աստուծոյ տաճար էք եւ Աստուծոյ Հոգին բնակուած է ձեզանում:

«Եթէ մէկն Աստուծոյ տաճարն ապականէ, նորան էլ Աստուած կապականէ, որովհետեւ Աստուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք եք» (Ա Կորնթացիս 3.16–17):[7]

Կրկին Պողոսի խորհուրդը Տիմոթեոսին. «Քո անձը սուրբ պահիր» (Ա Տիմ. 5.22):

Դրանք պարզ խոսքեր են: Բայց դրանք միշտ այնքան կարևոր են: Պողոսն ասում է ի դեպ, հեռու մնացեք այն բաներից, որոնք կքայքայեն ձեզ և կկործանեն ձեզ հոգեպես: Հեռու մնացեք հեռուստահաղորդումներից, որոնք տանում են ձեզ դեպի անմաքուր մտքեր և անմաքուր խոսքեր: Հեռու մնացեք տեսաֆիլմերից, որոնք կտանեն ձեզ դեպի չար մտքեր: Դրանք չեն օգնի ձեզ: Դրանք միայն ցավ կպատճառեն ձեզ: Հեռու մնացեք գրքերից և ամսագրերից, որոնք զզվելի են և կեղտոտ այն ամենում, ինչ նրանք ասում են և նկարագրում: Սուրբ պահեք ձեր անձը:[8]

Ամուսնությունը կարգված է Աստծուց՝ ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև: Դա այն հաստատությունն է, որտեղ, ըստ Նրա ծրագրի, զավակներ պիտի աշխարհ գան: Սեռական հարաբերությունները այլ հանգամանքներում դառնում են օրինազանցություն և միանգամայն անհամատեղելի են Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսմունքների հետ:[9]

Մենք հավատում ենք մաքրաբարոյությանը՝ մինչև ամուսնությունը և լիակատար հավատարմությանը՝ ամուսնությունից հետո: Այն ամփոփում է արդյունքները: Դա է ապրելու երջանկության ուղին: Դա է բավարարվածության ուղին: Այն բերում է խաղաղություն սրտին և խաղաղություն տանը:[10]

Մաքրաբարոյությունը «երջանիկ ապրելու ուղին է»:

Ոչ մի ընտանիք չի կարող ունենալ խաղաղություն, ոչ մի կյանք չի կարող ազատ լինել ձախորդության փոթորիկներից, մինչև այդ ընտանիքը և այդ տունը չկառուցվեն բարոյականության, հավատարմության և փոխադարձ հարգանքի հիմքի վրա: Չի կարող խաղաղություն լինել այնտեղ, որտեղ չկա վստահություն, չի կարող ազատություն լինել այնտեղ, որտեղ չկա նվիրվածություն: Միրո ջերմ արևալույսը չի բարձրանա անբարոյականության ճահճից:[11]

Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր երեխայի օրհնությունը պիտի լինի ծնվել մի տանը, որտեղ այդ երեխային ողջունում են, դաստիարակում, սիրում, և նա օրհնվում է ծնողներով՝ հորով և մորով, ովքեր ապրում են հավատարմությամբ միմյանց և իրենց երեխաների հետ: . . . Ամուր կանգնեք աշխարհի խաբեությունների դեմ: Մեր զվարճությունները հնարողները, մեր գրականությունը մատակարարողների մեծ մասը կկամենային հավատացնել ձեզ հակառակը: Դարերով կուտակված իմաստությունը հայտարարում է հստակ և անկասկած , որ ավելի մեծ երջանկությունը, ապահովությունը, մտքի խաղաղությունը, սիրո խորը աղբյուրները զգացվում են միայն նրանց կողմից, ովքեր քայլում են ըստ ժամանակով ստուգված առաքինության չափանիշների ամուսնությունից առաջ և լիակատար հավատարմությամբ ամուսնության մեջ:[12]

Մենք ապրում ենք անպարկեշտ, անբարոյական ու աղետալի մի աշխարհում: Բարձրացեք դրանից վեր, ուղիղ կանգնեք, աշխարհը թողեք ձեր ետևում և քայլեք, ինչպես Տերը կկամենար, որ դուք քայլեք:[13]

3

Պոռնոգրաֆիան կախվածություն առաջացնող է և կործանարար, բայց մենք կարող ենք բարձրանալ դրանից վեր:

Ես բավական դժկամությամբ եմ խոսում մի թեմայի վերաբերյալ, որի հետ առնչվել եմ նախկինում: Ես անում եմ դա Ալմայի խոսքերի ոգով, ով ասել է. «Սա է իմ հրճվանքը, որ գուցե կարողանամ Աստծո ձեռքում գործիք լինել, որ ինչ-որ մի հոգու ապաշխարության բերեմ» (Ալմա 29.9):

. . . Ես խոսում եմ պոռնոգրաֆիայի մասին իր բոլոր դրսևորումներով: . . . Այն դիվական է: Այն բացարձակապես անհամատեղելի է ավետարանի ոգու հետ, Աստծո բաների վերաբերյալ անձնական վկայության հետ: . . .

. . . Բոլոր նրանք, ովքեր ներգրավված են, դառնում են զոհեր: Երեխաները շահագործվում են և նրանց կյանքը դաժանորեն վնասվում է: Երիտասարդների մտքերը պարուրվում կեղծ տեսակետներով: Շարունակվող ներգործությունը տանում է դեպի կախվածության, որը գրեթե անհնար է վերացնել: . . . Այնքան շատերն են . . . գտնում, որ իրենք չեն կարող այն թողնել: Նրանց էներգիան և նրանց հետաքրքրությունները սպառվում են իրենց այս անփորձ և անմաքուր զբաղմունքի փակուղում:

Բերվում է պատճառաբանություն, որ դժվար է խուսափելը, որ այն ընդամենը մեր մատների ծայրերի հպումով է և որ չկա փախուստ:

Պատկերացրեք, որ փոթորիկը մոլեգնում է, հողմերը շառաչում և ձյունը մրրկում է ձեր շուրջը: Դուք անկարող եք զգում այն դադարեցնել: Բայց դուք կարող եք համապատասխանաբար հագնվել,ապաստան որոնել և փոթորիկը ձեր վրա ոչ մի ազդեցություն չի ունենա:

Նմանապես, չնայած համացանցը հագեցած է անմաքուր նյութերով, դուք չպիտի նայեք դրանք: Դուք կարող եք նահանջել

դեպի ավետարանի ապաստանը, դրա մաքրությունը, առաքինությունն ու կյանքի անարատությունը:

Ես գիտեմ, որ խոսում եմ ուղղակի և հստակ: Ես այդպես եմ անում, որովհետև համացանցում պոռնոգրաֆիան ավելի մատչելի է դարձել՝ ավելացնելով այն, ինչ մատչելի է DVD-ներում և տեսաֆիլմերում, հեռուստացույցով և ամսագրերի կրպակներում: Այն տանում է երևակայությունների, որոնք կործանարար են ձեր ինքնահարգանքի համար: Այն տանում է ապօրինի հարաբերությունների, հաճախ հիվանդության և հանցագործ բռնարարքների:[14]

Դուք ապրում եք սոսկալի գայթակղությունների մի աշխարհում: Պոռնոգրաֆիան իր նողկալի կեղտով թափ է վերցրել երկրի վրա , ամենակուլ սարսափելի ալիքի նման: Այն թույն է: Մի դիտեք կամ կարդացեք այն: Այն կկործանի ձեզ, եթե դուք դա անեք: Այն կվերացնի ձեր ինքնահարգանքը: Այն կխլի ձեզանից կյանքի գեղեցկությունների զգացումը: Այն ձեզ կտապալի և կտանի ձեզ չար մտքերի հոսանքով և, հնարավոր է, չար գործողությունների մղի: Հեռու մնացեք դրանից: Խուսափեք դրանից, ինչպես վտանգավոր հիվանդությունից, քանի որ այն ճիշտ նույնչափ մահացու է: Եղեք առաքինի մտքով և գործով:[15]

Այնքան շատ կեղտոտություն, ագահություն և պոռնոգրաֆիա կա այս աշխարհում: Մենք, որպես Վերջին Օրերի Սրբեր, պետք է վեր լինենք դրանից և բարձր կանգնենք դրա դեմ: Դուք չեք կարող զբաղվել դրանով: Դուք ուղղակի չեք կարող զբաղվել դրանով: Դուք պետք է այն դուրս պահեք ձեր սրտից: Ծխախոտի նման այն կախվածություն է առաջացնում և այն կկործանի նրանց, ովքեր զբաղվում են դրանով: «Թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար»[ՎևՈւ 121.45]:[16]

4

Կարգապահությամբ և ջանասիրությամբ մենք կարող ենք վերահսկել մեր մտքերն ու գործողությունները:

Եղեք մտքով մաքուր, և այդ դեպքում դուք կունենաք ավելի մեծ վերահսկողություն ձեր մարմնի վրա: Հնում ասվել է.« Քանի որ ինչպես որ [մարդ] մտածում է իր սրտում, նա հենց այդպիսին է »(Առակ. 23.7): Անմաքուր մտքերը տանում են անմաքուր գործերի[17]

Երբ գայթակղվում ենք, մենք կարող ենք փոխարինել չար մտքերը [մեր Փրկիչի] մտքերով և Նրա ուսմունքներով: Նա ասել է. «Եվ եթե ձեր աչքն ուղղված լինի միայն իմ փառքին, ձեր ամբողջ մարմինը լցված կլինի լույսով, և ձեր մեջ չի լինի խավար. և այն մարմինը, որը լցված է լույսով, ըմբռնում է բոլոր բաները:

Հետևաբար, սրբագործեք ձեզ, որ ձեր միտքն ուղղված լինի միայն առ Աստված, և օրերը կգան, որ դուք կտեսնեք նրան. քանզի նա ձեզ համար բաց կանի իր երեսի քողը» (ՎԿՈՒ 88.67–68):[18]

Հիսուսը պատվիրան տվեց վերահսկել մեր մտքերը, ինչպես նաև մեր արարաքները: Նա ասել է.«Ով որ մի կնկայ վերայ մտիկ տայ նորան ցանկանալու համար, նա արդէն շնացաւ նորա հետ իր սրտի մէջ» (Մատթեոս 5.28): . . .

Մտավոր վերահսկողությունը պետք է ավելի ուժեղ լինի, քան ֆիզիկական ախորժակը կամ մարմնական ցանկությունները: Երբ մտքերը բերվեն լիակատար ներդաշնակության բացահայտված ճշմարտության հետ, այդ դեպքում գործողությունները կդառնան պատշաճ: . . .Մեզանից յուրաքանչյուրը կարգապահությամբ և ջանասիրությամբ կարողություն ունի վերահսկելու իր մտքերը և գործողությունները: Սա հոգևոր, ֆիզիկական և էմոցիոնալ հասունություն զարգացնելու գործընթացի մասն է կազմում: . . .

Մենք աղերսում ենք մարդկանց ամենուրեք ապրել Արարիչի ուսմունքների համաձայն և բարձրանալ մարմնական հրապուրանքներից, որոնք հաճախ առաջացնում են ողբերգություններ, որոնց հաջորդում են բարոյական օրինազանցություններ:[19]

5

Նրանք, ովքեր ներգրավված են եղել անբարոյական վարքագծի մեջ, կարող են ներվել և բարձրանալ անցյալից վեր:

Ես չեմ ուզում հոռետես լինել: Ես բնույթով լավատես եմ: Բայց ինչ վերաբերում է [պոռնորգրաֆիային և անբարոյականությանը], ես իրատես եմ: Եթե մենք ներքաշված ենք այդպիսի վարքագծի մեջ, հիմա է ժամանակը փոխվելու: Թող սա լինի մեր վճռի ժամը: Եկեք շրջվենք դեպի ավելի լավ ուղի:[20]

Եթե ձեզ գտնում եք հանգամանքների ճնշման տակ սայթաքելիս, կարգավարժեք ձեզ: Կանգ առեք՝ քանի շատ ուշ չէ: Դուք հավիտյանս երախտապարտ կլինեք, որ այդպես վարվեցիք:

Հավատարիմ եղեք ինքերդ ձեզ և այն լավագույնին, որ դուք ունեք ձեր մեջ:[21]

Թույլ տվեք . . . հավաստիացնել ձեզ, որ եթե դուք սխալ եք գործել, եթե ներքաշվել եք անբարոյական վարքագծի մեջ, ամեն ինչ կորած չէ: Այդ սխալի հիշողությունը հավանաբար կմնա, բայց արարքը կարող է մոռացվել, և դուք կկարողանաք բարձրանալ անցյալից վեր՝ Տիրոջ համար լիովին ընդունելի կյանքով ապրելու, երբ տեղի է ունեցել ապաշխարություն: Նա խոստացել է, որ Նա կների ձեր մեղքերը և այլևս ձեր դեմ չի հիշի (տես ՎԿՈ 58.42):

. . . Եկեղեցու առաջնորդները [կարող են] աջակցել ձեզ՝ ձեր դժվարին պահերին: Դուք կարող եք ձեր ետևում թողնել ամեն չարիք, որին դուք առնչվել եք: Դուք կարող եք առաջ գնալ նորոգված հույսով և ընդունելությամբ՝ դեպի կյանքի ավելի լավ ուղի:[22]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Նախագահ Հինքլին ուսուցանել է, որ կա «իրական դեպք առաքինության համար» (բաժին 1): Ինչպե՞ս դուք կպատասխանեք մեկին, ով վիճում է, որ *չկա* «գործող օրինակ առաքինության համար»:
- Ինչո՞ւ է մաքրաբարոյությունը «ապրելու երջանիկ ուղի»: Ինչո՞ւ է մաքրաբարոյությունը «խաղաղություն բերում սրտին և տանը»: (Տես բաժին 1 և 2:)
- Նախագահ Հինքլին ասել է. «Մենք, որպես Վերջին Օրերի Սրբեր, պետք է վեր բարձրանանք [պոռնոգրաֆիայից] և բարձր կանգնենք դրա դեմ » (բաժին 3): Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի դրանից վեր բարձրանանք: Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին դրանից վեր բարձրանալ: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում բարձր կանգնելդրա դեմ:

- Երբ կարդում եք Նախագահ Հինքլիի խորհուրդը բաժին 4-ում, ի՞նչ եք դրանից սովորում ձեր մտքերը վերահսկելու մասին: Ի՞նչ կարող ենք անել մեր մտքերն առաքինի պահելու համար:

Առնչվող սուրբ գրություններ

Սաղմոս 24.3–4, Մատթեոս 5.27–28, Փիլիպպեցիս 4.6–8, Հակոբ 3.2, ՎԵՈՒ 46.31–33, 59.6, Հավատո Հանգանակ 1.13

Օգնություն ուսումնասիրողին

Երբ կարդաք, «ընդգծեք և նշեք խոսքերն ու արտահայտությունները, որպեսզի առանձնացնեք գաղափարները մեկ [հատվածում]: . . . Լուսանցքներում գրեք սուրբ գրության հղումները, որոնք հստակեցնում են ձեր ուսումնասիրած հատվածները» (*Քարոզիր Իմ Ավետարանը* [2004], 23):

Հղումներ

1. "True to the Faith" (Brigham Young University devotional, Sept. 18, 2007), 2–3, speeches.byu.edu.
2. "How Can I Become the Woman of Whom I Dream?" *Ensign,* May 2001, 95.
3. "Words of the Prophet: Blessed Are the Pure in Heart," *New Era,* July 1999, 4.
4. "Reverence and Morality," *Ensign,* May 1987, 48.
5. In Conference Report, Oct. 1964, 118.
6. "Stay on the High Road," *Ensign* or *Liahona,* May 2004, 114.
7. "In These Three I Believe," *Ensign,* July 2006, 4.
8. "Converts and Young Men," *Ensign,* May 1997, 49.
9. "True to the Faith," *Ensign,* June 1996, 5.
10. "This Thing Was Not Done in a Corner," *Ensign,* Nov. 1996, 49.
11. "In Search of Peace and Freedom," *Ensign,* Aug. 1989, 5.
12. "Stand Strong against the Wiles of the World," *Ensign,* Nov. 1995, 99.
13. "Inspirational Thoughts," *Ensign,* Feb. 2007, 7.
14. "A Tragic Evil among Us," *Ensign* or *Liahona,* Nov. 2004, 59–62.
15. "Some Thoughts on Temples, Retention of Converts, and Missionary Service," *Ensign,* Nov. 1997, 51.
16. "Inspirational Thoughts," *Ensign,* Aug. 1997, 6–7.
17. "Be Ye Clean," *Ensign,* May 1996, 48.
18. "A Tragic Evil among Us," 62.
19. "Reverence and Morality," 47.
20. "A Tragic Evil among Us," 62.
21. "Stand True and Faithful," *Ensign,* May 1996, 92.
22. "How Can I Become the Woman of Whom I Dream?" 95.

Քահանայական ղեկավարումը Հիսուս Քրիստոսի Եկեղեցում

«Տերը հսկում է Իր աշխատանքը: Սա Նրա աշխատանքն է: Մենք ոչխարներ չենք առանց հովվի: Մենք բանակ չենք առանց հրամանատարի»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Իմ առաջին պարտականությունը Եկեղեցում, առաջին կոչումը, որը ես երբևէ ունեցել եմ, այն էր, որ ես խորհրդական էի մի տղայի, ով մեր սարկավագների քվորումի նախագահն էր: Մեր լավ եպիսկոպոսը կանչեց ինձ և խոսեց ինձ հետ այս կոչման մասին: Ես չափազանց տպավորված էի: Ես անհանգիստ էի ու մտահոգ: Հավատում եք, թե ոչ, ես բնույթով բավական ամաչկոտ էի և կարծում եմ, որ սարկավագների քվորումի նախագահի խորհրդականի այս կոչումը ինձ համար մեծ մտահոգություն էր՝ ելնելով իմ տարիքից և փորձից, ինչպես իմ ներկայիս կոչումը՝ ելնելով իմ տարիքից ու փորձից»:[1]

Նախագահ Հինքլին ուներ նույն զգացումները, երբ 1961 թվին կանչվեց ծառայելու որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ: Որպես Առաքյալ, իր առաջին գերագույն համաժողովում նա ասաց.

«Կարծում եմ, ես ունեմ այս պարտականության բեռի որոշակի զգացում՝ կանգնել որպես Տեր Հիսուս Քրիստոսի վկա աշխարհի առաջ, որը դժկամությամբ է ընդունում նրան: «Հիսուսի մեծ սիրուց ես մնում եմ զարմացած»: Ես ճնշվում եմ Տիրոջ Մարգարեի ունեցած վստահությունից իմ հանդեպ և ձեր արտահայտած սիրուց, իմ սիրելի եղբայրներ: . . . Ես աղոթում եմ զորության համար, ես աղոթում եմ օգնության համար, ես աղոթում եմ հավատի ու հնազանդ լինելու կամքի համար»:[2]

Առաջին Նախագահությունը, 1995 թվական Նախագահ Գորդոն Բ. Հինքլի (կենտրոնում), *Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, Առաջին Խորհրդական* (ձախից) *և Նախագահ Ջեֆրի Ռ. Ֆաուստ, Երկրորդ Խորհրդական* (աջից)։

1995 թվականի ապրիլին Նախագահ Հինքլին ելույթ ունեցավ գերագույն համաժողովի քահանայության նիստում, երբ անդամներն առաջին անգամ աջակցեցին նրան որպես իրենց մարգարե ու Նախագահ: Նախորդ 14 տարիների ընթացքում նա ծառայել էր որպես Եկեղեցու երեք այլ Նախագահների խորհրդական: Նա բազմիցս վկայել էր նրանց աստվածային կոչման մասին և խորհուրդ էր տալիս Վերջին Օրերի Սրբերին հետևել նրանց խորհրդին: Հիմա, հայտնվելով այդ պաշտոնում, Տիրոջից նրա կախվածության զգացումը չէր տարբերվում այն ժամանակվա նրա զգացումներից, երբ նա սարկավագ էր կամ նոր կանչված Առաքյալ: Ավելի շուտ, նա ավելի իրազեկ էր դարձել, որ ինքը Տիրոջ աջակցող զորության կարիքն ուներ: Նա ասել է.

«Այս առավոտ հանդիսավոր ժողովի ժամանակ ձեր բարձրացրած ձեռքերը դարձան ձեր պատրաստակամության ու ցանկության արտահայտությունը աջակցելու մեզ՝ ձեր եղբայրներին ու ձեր ծառաներին, ձեր վստահությամբ, հավատով ու աղոթքով: Ես խորապես երախտապարտ եմ այդ արտահայտության համար: Ես շնորհակալ եմ ձեզանից յուրաքանչյուրին: Ինչպես դուք արդեն գիտեք, և ես հավաստիացնում եմ ձեզ, որ Տիրոջ գործընթացում չկա պաշտոնի ձգտում: Ինչպես Տերն ասաց Իր աշակերտներին. «Ոչ թէ դուք ինձ ընտրեցիք. այլ ես ընտրեցի ձեզ, և կարգեցի ձեզ» (Հովհաննեսի 15.16): Այս պաշտոնին չեն ձգտում: Ընտրության իրավունքը Տիրոջն է: Նա է մահվան ու կյանքի տերը: Նրանն է կանչելու զորությունը: Նրանն է ետ կանչելու զորությունը: Նրանն է պահպանելու զորությունը: Ամեն բան Նրա ձեռքերում է:

Ես չգիտեմ, թե ինչու Նրա մեծ ծրագրում պիտի տեղ գտներ ինձ նման մեկը: Բայց կրելով այս թիկնոցն ինձ վրա, ես այժմ կրկին Տիրոջ գործին եմ նվիրում այն, ինչ ունեմ՝ ուժ, ժամանակ, տաղանդ ու կյանք՝ իմ եղբայրներին ու քույրերին ծառայելու գործում: Կրկին շնորհակալ եմ ձեզ . . . ձեր այսօրվա գործողությունների համար: Իմ աղոթքի բեռը կլինի այն, որ ես արժանավոր լինեմ: Ես հուսով եմ, որ ինձ կհիշեք ձեր աղոթքներում»:[3]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Տերը կանչում է Եկեղեցու յուրաքանչյուր Նախագահի նրան փորձելուց, մաքրելուց և հղկելուց հետո:

Ես աշխատել եմ Եկեղեցու Նախագահների հետ՝ սկսած Նախագահ Հեբեր Ջ. Գրանտի ժամանակից: . . . Ես ճանաչել եմ այս մարդկանց բոլոր խորհրդականներին, և ես ճանաչել եմ Տասներկուսի Խորհրդին այս նախագահների ղեկավարության տարիներին: Նրանք բոլորը մարդիկ էին: Նրանք ունեին մարդկային հատկանիշներ և հավանաբար, մարդկային թուլություններ: Բայց այդ ամենից զատ, նրանց յուրաքանչյուրի կյանքում եղել է Աստծո ոգեշնչման անհաղթահարելի դրսևորում: Նրանք, ովքեր եղել են Նախագահներ, եղել են նաև իսկական մարգարեներ: Ես անձամբ վկա եմ եղել այն բանին, թե հայտնության ոգին ինչպես է իջնում նրանց վրա: Յուրաքանչյուր մարդ Նախագահ է դառնում երկար տարիներ որպես Տասներկուսի Խորհրդի անդամ և այլ պաշտոններում ծառայելուց հետո: Տերը մաքրել ու հղկել է յուրաքանչյուրին, թույլ տալով, որ նա ճանաչի հիասթափությունն ու ձախողումը, հիվանդանա, իսկ որոշ դեպքերում էլ կրի խորը վիշտ: Այս ամենը դարձել է մաքրման մեծ գործընթացի մի մասը, և այդ գործընթացի արդյունքը շատ հրաշալի ակնհայտ է նրանց կյանքում:

Իմ սիրելի ավետարանական բարեկամներ, սա Աստծո գործն է: Սա նրա Եկեղեցին է և Եկեղեցին է Նրա Սիրելի Որդու, ում անունը այն կրում է: Աստված երբեք թույլ չի տա, որ որևէ ինքնակոչ մարդ կանգնի նրա գլխին: Նա կնշանակի իր մարգարեներին և կոգեշնչի ու կուղղորդի նրանց:[4]

Որոշ մարդիկ մտահոգություն են արտահայտում, որ Եկեղեցու Նախագահը միշտ պիտի լինի բավական տարեց մարդ, որին ես պատասխանում եմ. «Ինչպիսի օրհնություն»: . . . Նա չպիտի լինի երիտասարդ: Նա ունի և կունենա ավելի երիտասարդ տղամարդիկ, ովքեր կճամփորդեն աշխարհով մեկ՝ ծառայություն կատարելով: Նա նախագահող քահանայապետ է, սուրբ քահանայության բոլոր բանալիների պահոցը և հայտնության ձայնը՝ Աստծուց իր ժողովրդին: . . .

Իմ կարծիքով ինչ-որ մեծ ու հուսալի բան կա այն իմացության մեջ, որ . . . մենք կունենանք Նախագահ, ում կարգավարժել են և ուսուցանել, փորձել են ու ստուգել, ում նվիրվածությունը գործին, ում ազնվությունը աշխատանքում կոփվել է ծառայության դարբնոցում, ում հավատը հասունացել է, ում մոտիկությունը Աստծուն զարգացել է երկար տարիների ընթացքում:[5]

Ես խոսում եմ . . . ի երախտագիտություն մեր մարգարեի, ով կառաջնորդի մեզ այս վերջին օրերում: Ես խնդրում եմ, որ հավատարիմ լինեք նրան, ում Տերը կանչել ու օծել է: Ես խնդրում եմ, որ անսասան հավատարմությամբ աջակցեք նրան և ուսումնասիրեք նրա ուսմունքները: Ես ասել եմ, . . . որ եթե մենք ունենք մարգարե, ապա ունենք ամեն ինչ: Եթե մենք մարգարե չունենք, մենք ոչինչ չունենք: Բայց մենք մարգարե ունենք: Մենք մարգարե ենք ունեցել Եկեղեցու հիմնադրումից սկսած: Մենք երբեք չենք լինի առանց մարգարե, եթե ապրենք մարգարեին արժանավոր կյանքով:

Տերը հսկում է Իր աշխատանքը: Սա Նրա աշխատանքն է: Մենք ոչխարներ չենք առանց հովվի: Մենք բանակ չենք առանց հրամանատարի:[6]

2

Երբ Եկեղեցու Նախագահը մահանում է, ավագ Առաքյալը դառնում է հաջորդ Նախագահը:

Իշխանության անցումը [Եկեղեցու նոր նախագահին], որին ես մասնակցել եմ մի քանի անգամ, գեղեցիկ է իր պարզությամբ: Սա այն հատկանշական ուղին է, որով Տերը կատարում է իր գործը: Նրա ընթացակարգի համաձայն մարգարեի կողմից ընտրվում է մի մարդ, ով դառնում է Տասներկու Առաքյալների Խորհրդի անդամ: Նա չի ընտրում սա որպես մասնագիտություն: Նա կանչվում է այնպես, ինչպես Առաքյալները Հիսուսի ժամանակ, ում Տերն ասաց. «Ոչ թէ դուք ինձ ընտրեցիք. Այլ ես ընտրեցի ձեզ, և կարգեցի ձեզ» (Հովհաննեսի 15.16): Տարիներն անցնում են: Նա ուսուցանվում և կարգավարժվում է իր պաշտոնի պարտականություններին համապատասխան: Նա ճամփորդում է աշխարհով մեկ՝ կատարելով իր առաքելական պարտականությունները: Սա նախապատրաստական երկար ընթացք է, որի ժամանակ նա ծանոթանում է Վերջին Օրերի

Սրբերին, ուր էլ որ նրանք լինեն, իսկ նրանք ծանոթանում են նրա հետ: Տերը ստուգում է նրա սիրտը և էությունը: Իրադարձությունների բնականոն ընթացքում թափուր պաշտոններ են ի հայտ գալիս այդ խորհրդում և կատարվում են նոր նշանակումներ: Ընթացակարգի համաձայն մի հատուկ մարդ դառնում է ավագ Առաքյալ: Քահանայության բոլոր բանալիները կարգման ժամանակ տրվում են նրան ու նրա գործընկեր Եղբայրներից յուրաքանչյուրին: Սակայն այդ բանալիները գործածելու իշխանությունը տրված է Եկեղեցու Նախագահին: Երբ [մարգարեն] մահանում է, այդ իշխանությունը գործում է ավագ Առաքյալի միջոցով, ով այնուհետև նշանակվում, ձեռնադրվում և կարգվում է որպես մարգարե և Նախագահ՝ Տասներկուսի Խորհրդի իր գործընկերների կողմից:

Չկա նախընտրական կամպանիա: Չկա քարոզարշավ: Կա միայն աստվածային ծրագրի խաղաղ ու պարզ մի գործընթաց, որն ապահովում է ոգեշնչված ու ստուգված առաջնորդություն:

Ես ականատես և մասնակից եմ եղել այս հրաշալի գործընթացին: Ես բերում եմ ձեզ իմ վկայությունը, որ Տերն է [ընտրում մարգարեին]:[7]

Նախագահ [Հովարդ Վ.] Հանթերի մահից հետո Առաջին Նախագահությունը լուծարվեց: Ես և Նախագահ Մոնսոնը, նրա խորհրդականները, գրավեցինք մեր տեղերը Տասներկուսի Քվորումում, որը դարձավ Եկեղեցու նախագահող իշխանությունը:

. . . Բոլոր ապրող կարգված Առաքյալները ծոմապահության ու աղոթքի ոգով հավաքվեցին տաճարի վերևի սենյակում: Այստեղ մենք երգեցինք մի սուրբ հիմն և միասին աղոթեցինք: Մենք մասնակցեցինք Տիրոջ ընթրիքի հաղորդությանը, այս սուրբ խորհրդանշական վկայությամբ նորոգելով մեր ուխտերն ու մեր կապը Նրա հետ, ով մեր աստվածային Քավիչն է:

Հետո վերակազմավորվեց նախագահությունը, հիմնվելով նախադեպի վրա, որը հաստատվել է անցյալի սերունդների միջոցով:

Չկար քարոզարշավ, մրցակցություն և պաշտոնի հավակնություն: Այն հանգիստ էր, խաղաղ, պարզ և սուրբ: Դա կատարվեց, հետևելով այն օրինակին, որը Տերն Ինքն էր սահմանել:[8]

3

Տերը տրամադրել է սկզբունքներ և ընթացակարգ Իր Եկեղեցին ղեկավարելու համար, եթե Նախագահը ի վիճակի չլինի լիարժեք կատարել իր պաշտոնի պարտականությունները:

1992 թվականին Նախագահ Հինքլին, որ ծառայում էր որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, կատարել է հետևյալ հայտարարությունը. Եկեղեցու ղեկավարը Տեր Հիսուս Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին է: Բայց երկրային ղեկավարը մեր մարգարեն է: Մարգարեները մարդիկ են, ովքեր օժտված են աստվածային կոչումով: Չնայած այդ կոչման աստվածայնությանը, նրանք մարդիկ են: Նրանք ենթակա են մահկանացու կյանքի բոլոր փորձություններին:

Մենք սիրում, հարգում, մեծարում և ապավինում ենք ներկայիս մարգարեին՝ Էզրա Թաֆտ Բենսոնին: Նա եղել է մեծ ու տաղանդավոր առաջնորդ, մի մարդ, ում ձայնը հնչել է ողջ աշխարհով մեկ՝ այս աշխատանքի մասին վկայությամբ: Այսօր նա կրում է քահանայության բոլոր բանալիները երկրի վրա: Բայց նա հասել է մի տարիքի, երբ չի կարող անել շատ բաներ, որոնք մի ժամանակ անում էր: Սա չի նսեմացնում նրա կոչումը որպես մարգարե: Բայց այն որոշ սահմանափակումներ է դնում նրա ֆիզիկական ակտիվության վրա:[9]

1994 թվականին Նախագահ Հինքլին, որ ծառայում էր որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, կատարել է հետևյալ հայտարարությունը: Մարդիկ ողջ Եկեղեցում իրոք մտահոգված են Նախագահի առողջական վիճակով: Նախագահ Բենսոնը հիմա իննսունհինգ տարեկան է: . . . Նա տառապում է ծերունական հիվանդության լուրջ հետևանքներից և չի կարողացել կատարել իր սուրբ պաշտոնի կարևոր պարտականությունները: Այս իրավիճակը աննախադեպ չէ: Եկեղեցու այլ Նախագահներ նույնպես հիվանդ են եղել և չեն կարողացել լիարժեք կատարել իրենց պաշտոնի պարտականությունները: Հնարավոր է, որ սա նորից տեղի կունենա ապագայում:

Սկզբունքներն ու ընթացակարգերը, որոնք Տերը սահմանել է Իր եկեղեցու կառավարման համար, նախատեսված են . . . բոլոր նման հանգամանքների համար: Կարևոր է, . . . որ չլինի որևէ կասկած կամ մտահոգություն եկեղեցու կառավարման և

Տասներկու Առաքյալների Քվորումը, 1965 թվական։ Ձախից աջ նստած են՝ *Էզրա Թաֆտ Բենսոնը, Մարկ Ի. Պետերսենը (բազկաթոռին), Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը (քվորումի նախագահը) և Լեգրան Ռիչարդսը։* Ձախից աջ կանգնած են՝ *Գորդոն Բ. Հինքլին, Դելբերտ Լ. Ստեպլին, Թոմաս Ս. Մոնսոնը, Սպենսեր Վ. Քիմբալը, Հարոլդ Բ. Լին, Մարիոն Գ. Ռոմնին, Ռիչարդ Լ. Էվանսը և Հոմարդ Վ. Հանթերը։*

մարգարեական պարգևների գործածության վերաբերյալ, այդ թվում այն իրավունքի, որը տրված է ոգեշնչմամբ և հայտնությամբ Եկեղեցու գործերն ու ծրագրերը ղեկավարելու համար այն իրավիճակում, երբ նախագահը հիվանդ է կամ ի վիճակի չէ լիարժեք գործել։

Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների խորհուրդը կանչված և կարգված են կրելու քահանայության բանալիները, ունենալու իշխանություն և պատասխանատվություն՝ կառավարելու Եկեղեցին, սպասավորելու եկեղեցական արարողությունները, ինչպես նաև մեկնաբանելու եկեղեցու վարդապետությունը, սահմանելու և վարելու նրա գործերը։ Յուրաքանչյուր մարդ, ով ձեռնադրվում է որպես Առաքյալ և կարգվում որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, հաստատվում է որպես մարգարե, տեսանող և հայտնող։ Ինչպես իրենից առաջ եղած Նախագահները, Նախագահ Բենսոնը նույնպես ավագ Առաքյալ էր, երբ նա կանչվեց որպես Եկեղեցու

Նախագահ։ Նրա խորհրդականները կանչվել էին Տասներկուսի Խորհրդից։ Հետևաբար, Առաջին Նախագահության Քվորումի պարտադիր անդամները և Տասներկուսի Խորհրդի անդամները եղել են սուրբ աշակերտության բանալիների, իրավունքների և իշխանության ստացողները։

Ես մեջբերում եմ Վարդապետություն և Ուխտերից.

«Մելքիսեդեկյան Քահանայությունից երեք Նախագահող Քահանայապետ, ընտրվելով Տասներկուսի կողմից, նշանակվելով ու կարգվելով այդ պաշտոնին, և աջակցվելով եկեղեցու վստահությամբ, հավատքով ու աղոթքով, կազմում են Եկեղեցու Նախագահության քվորումը» (ՎևՈւ 107.22)։

Երբ նախագահը հիվանդ է կամ չի կարողանում լիարժեք կատարել իր պաշտոնի բոլոր պարտականությունները, նրա երկու խորհրդականները միասին կազմում են Առաջին Նախագահության Քվորումը։ Նրանք շարունակում են Նախագահության ամենօրյա աշխատանքը։ Բացառիկ հանգամանքներում, երբ միայն մեկն է ի վիճակի աշխատել, նա կարող է գործել Նախագահության պաշտոնի լիազորությամբ՝ ինչպես պարզաբանված է Վարդապետություն և Ուխտերի 102-րդ բաժնի հատվածներ 10-11-ում։ . . .

. . . Առաջին Նախագահության խորհրդականները կատարում են այս պաշտոնի սովորական աշխատանքը։ Իսկ եթե քաղաքականության, ընթացակարգերի, ծրագրերի կամ վարդապետության վերաբերյալ լուրջ հարց է առաջանում, ապա այն միասնաբար խորաքննվում է ու այդ մասին աղոթում են և Առաջին Նախագահությունը, և Տասներկուսի քվորումը։ Այս երկու քվորումները՝ Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումները հանդիպում են, և յուրաքանչյուր մարդ ունի լիակատար ազատություն արտահայտվելու և քննարկելու յուրաքանչյուր կարևոր հարց։

Իսկ հիմա ես կրկին մեջբերում եմ Տիրոջ խոսքը. «Եվ յուրաքանչյուր որոշում, որը կայացվում է այս քվորումներից որևէ մեկի կողմից, պետք է լինի միաբան ձայնով. այսինքն՝ ամեն մի քվորումի յուրաքանչյուր անդամ պետք է համաձայն լինի նրա որոշումների հետ, որպեսզի նրանց որոշումները մեկը մյուսի հետ նույն զորությունը կամ օրինականությունն ունենան» (ՎևՈւ 107.27)։ . . .

. . . Թող բոլորը հասկանան, որ Հիսուս Քրիստոսն այս եկեղեցու գլուխն է, որը կրում է Նրա անունը: Նա հսկում է այն: Նա առաջնորդում է այն: Կանգնելով Իր Հոր աջ կողմում, Նա ուղղորդում է մեզ: Նա ունի բացառիկ արտոնություն, զորություն, ընտրություն՝ կանչելու մարդկանց Իր բարձր ու սուրբ պաշտոններին և ազատել նրանց համաձայն Իր կամքի՝ ետ կանչելով նրանց: Նա կյանքի ու մահվան Տերն է: Մենք չենք անհանգստանում այն հանգամանքների համար, որոնցում հայտնվում ենք: Ես ընդունում եմ այս հանգամանքները՝ որպես Նրա կամքի արտահայտություն: Ես նաև ընդունում եմ պատասխանատվությունը, գործելով իմ Եղբայրների հետ, անելու հնարավոր ամեն բան՝ առաջ տանելու այս սուրբ աշխատանքը նվիրաբերման ոգով, սիրով, համեստությամբ, պատասխանատվությամբ ու հավատարմությամբ:[10]

4

Առաքյալները Քրիստոսի անվան հատուկ վկաներն են ողջ աշխարհում:

Կարգվելով սուրբ աշակերտությանը և . . . ձեռնադրվելով որպես Տասներկուսի Խորհրդի անդամներ, ակնկալվում է, որ [Առաքյալները] հիմնականում նվիրվեն ծառայության գործին: Նրանք . . . իրենց կյանքում ամեն բանից առավել առաջին տեղում դնում են աշխարհում Քրիստոսի անվան հատուկ վկաները լինելու պարտականությունը: . . .

Ինչպես մենք բոլորս, նրանք նույնպես մարդիկ են: Նրանք ունեն իրենց ուժեղ և թույլ կողմերը: Բայց այսուհետև, իրենց կյանքի մնացած մասի համար, քանի դեռ հավատարիմ են, նրանց միակ գլխավոր մտահոգությունը պիտի լինի Աստծո գործի զարգացումը երկրի վրա: Նրանք պիտի մտահոգվեն Հոր զավակների բարօրության խնդրով՝ լինի Եկեղեցում, թե Եկեղեցուց դուրս: Նրանք պիտի անեն հնարավոր ամեն բան՝ սփոփելու վշտի մեջ գտնվողներին, ուժ տալու նրանց, ովքեր թույլ են, քաջալերել նրանց, ովքեր վարանում են, ընկեր դառնան միայնակին, կերակրեն չքավորին, օրհնեն հիվանդներին, բերեն վկայություն ըստ հատուկ գիտելիքի Աստծո Որդու՝ իրենց Ընկերոջ ու Տիրոջ մասին, ում ծառաներն են նրանք: . . .

. . . Ես վկայություն եմ բերում նրանց եղբայրության, նրանց նվիրումի, նրանց հավատի, նրանց աշխատասիրության ու նրանց վիթխարի աշխատանքի մասին՝ Աստծո արքայությունն առաջ տանելու գործում։[11]

5

Առաջին Նախագահությունը և Տասներկուսը կարիք ունեն հայտնության և լիակատար ներդաշնակության, նախքան որոշում կայացնելը։

Ոչ մի որոշում չի կայացվում Առաջին Նախագահության և Տասներկուսի քննարկումների արդյունքում, առանց բոլոր ներգրավվածների ընդհանուր համաձայնության։ Քննարկվող գործի սկզբում կարող են լինել տարակարծություններ։ Դրանք պիտի ակնկալվեն։ Այդ մարդիկ պատկանում են հասարակության տարբեր խավերին։ Նրանք ինքնուրույն մտածող մարդիկ են։ Սակայն նախքան վերջնական որոշում կայացնելը, տիրում է մտքի ու խոսքի համերաշխություն։

Սա պիտի ակնկալվի, եթե Տիրոջ հայտնած խոսքը հետևում է դրան [տես ՎևՈւ 107.27, 30–31]։ . . .

. . . [Երբ] ես ծառայում էի Տասներկուսի Խորհրդի անդամ, և [երբ] ես ծառայում էի Առաջին Նախագահությունում, երբեք որևէ մեծ քայլ չի ձեռնարկվել առանց այդ ընթացակարգը պահպանելու։ . . . Իրենց մտքերն արտահայտող տղամարդկանց հենց այդ գործընթացի ժամանակ տիրում է գաղափարների ու հասկացողությունների վերլուծություն ու տեսակավորում։ Սակայն իմ եղբայրների շրջանում ես չեմ նկատել որևէ լուրջ տարաձայնություն կամ անձնական թշնամանք։ Ընդհակառակը, ես նկատել եմ հրաշալի և ուշագրավ մի բան, որ տարբեր հայացքների տեր մարդիկ հավաքվում են Սուրբ Հոգու առաջնորդող ազդեցության և հայտնության զորության ներքո այնքան ժամանակ, մինչև որ տիրում է լիակատար ներդաշնակություն և լիարժեք համաձայնություն։ . . .

Ես չգիտեմ մեկ այլ կառավարման մարմին, որի մասին կարելի է նույնը ասել։[12]

6

Ցցի նախագահը կանչվում է ոգեշնչման միջոցով՝ ծառայելու որպես խորհրդական եպիսկոպոսներին ու ղեկավար ժողովրդի համար։

Ցցի նախագահը այն պաշտոնյան է, ով կանչվում է հայտնությամբ՝ կանգնելու ծխերի եպիսկոպոսների և Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունների միջև։ Դա ամենապատասխանատու պարտականությունն է։ Նա ուսուցանվում է Բարձրագույն Իշխանությունների կողմից և իր հերթին ուսուցանում եպիսկոպոսներին։ . . .

Ցցի նախագահը ծառայում է որպես եպիսկոպոսների խորհրդական։ Յուրաքանչյուր եպիսկոպոս գիտի, որ երբ նա ստիպված է առնչվել դժվար խնդրի հետ, կա մեկը, ում նա կարող է դիմել, որպեսզի կիսվի իր բեռով և խորհուրդ ստանա։

Նա տրամադրում է ապահովության երկրորդական միջոց՝ որոշելու նրանց արժանավորության աստիճանը, ովքեր պիտի գնան Տիրոջ տուն։ . . . Նախագահը նմանապես դառնում է երկրորդ պաշտպանությունը՝ որոշելու նրանց արժանավորությունը, ովքեր գնում են ներկայացնելու Եկեղեցին միսիոներական դաշտում։ Նա նույնպես հարցազրույց է ունենում թեկնածուների հետ, և միայն այն ժամանակ, երբ նա համարում է նրան արժանավոր, հաստատում է երաշխավորագիրը։ Նմանապես, նրան իշխանություն է տրվում ձեռնադրել նրանց, ովքեր կանչվում են միսիայի և ետ կանչել, երբ նրանք արդեն ավարտում են ծառայությունը։

Ամենակարևորը՝ նա ցցի կարգապահական գլխավոր պաշտոնյան է։ . . . Նա շատ ծանր պարտականություն ունի հետևելու, որ ցցում ուսուցանված վարդապետությունը պահվի մաքուր ու անբիծ։ Նրա պարտականությունն է հետևել, որ չուսուցանվի կեղծ վարդապետություն և չկատարվի կեղծ գործառույթ։ Եթե կա որևէ Մելքիսեդեկյան Քահանայություն կրող, ով շեղվում է ընդունված կարգից կամ մեկ ուրիշը ևս ունի այդ խնդիրը՝ որոշակի հանգամանքների բերումով, նախագահը պիտի խորհրդակցի նրանց հետ, և եթե մարդը շարունակում է իր գործողությունները, ապա նախագահը պարտավոր է միջոցներ ձեռք առնել։ Նա օրինախախտին կհրավիրի կարգապահական խորհրդի, որտեղ

միջոցներ ձեռք կառնվեն նշանակելու փորձաշրջան, կամ զրկելու անդամությունից, կամ հեռացնելու Եկեղեցուց։

Սա ամենածանր և տհաճ հանձնարարությունն է, բայց նախագահը պիտի պատրաստ լինի դրան առանց վախի ու համակրանքի։ Այս ամենն արվում է Հոգու ուղղորդմանը համահունչ և ինչպես հաստատված է Վարդապետություն և Ուխտերի 102-րդ բաժնում։

Հետագայում նա պիտի անի ամեն բան իր կարողությունների սահմաններում, որպեսզի աշխատի ու ժամանակին ետ բերի այն մարդուն, ում կարգավարժել են։

Այս ամենը և շատ ավելի ուրիշ բաներ կազմում են նրա պարտականությունների շրջանակը։ Այստեղից հետևում է, որ նրա անձնական կյանքը պիտի օրինակ լինի իր ժողովրդի համար։ . . .

. . . Քանի որ մենք շատ ենք վստահում [ցցի նախագահներին], տեղական անդամներին խնդրում ենք խորհրդի և իրենց օրհնելու համար չդիմել Բարձրագույն Իշխանավորներին։ Նրանց ցցի նախագահները կանչվել են նույն ոգեշնչումով, որով կանչվել են Բարձրագույն Իշխանավորները։[13]

7

Եպիսկոպոսները իրենց հոտի հովիվն են։

[Եկեղեցին] կարող է աճել և անդամների թիվը բազմապատկվել, որն անշուշտ տեղի կունենա։ Ավետարանը պիտի տարվի բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին և ժողովուրդներին։ Կանխատեսելի ապագայում երբեք չի կարող լինել փակուղի կամ ձախողում, պիտի առաջ շարժվենք, կառուցենք և տարածենք Սիոնը ողջ աշխարհում։ Բայց այս ամենի հետ միասին պիտի լինեն մշտական մտերմիկ հովվական հարաբերություններ յուրաքանչյուր անդամի և իմաստուն ու հոգատար եպիսկոսպոսի կամ ճյուղի նախագահի միջև։ Նրանք հոտի հովիվներն են, ում պատասխանատվությունն է հոգ տանել համեմատաբար փոքր քանակությամբ մարդկանց մասին այնպես, որ ոչ ոք չմոռացվի, բաց թողնվի կամ անտեսվի։ Հիսուսը ճշմարիտ հովիվ էր, ով մեկ առ մեկ հասնում էր բոլոր նրանց, ովքեր վշտի մեջ էին, նրանց շնորհելով անհատական օրհնություն։[14]

Եկեղեցու եպիսկոպոսները . . . Իսրայելի հովիվներ են իսկական իմաստով: Բոլորը [Եկեղեցում] պատասխանատու են եպիսկոպոսի և ճյուղի նախագահի առաջ: Վիթխարի է այն բեռը, որը նրանք կրում են, և ես հրավիրում եմ Եկեղեցու յուրաքանչյուր անդամի անել ամեն հնարավորը, որպեսզի բարձրացնեն այն բեռը, որի տակ աշխատում են մեր եպիսկոպոսներն ու ճյուղի նախագահները:

Մենք պիտի աղոթենք նրանց համար: Նրանք օգնության կարիք ունեն իրենց ծանր բեռները կրելու համար: Մենք կարող ենք լինել ավելի աջակցող և ավելի քիչ կախում ունենալ նրանցից: Մենք կարող ենք աջակցել նրանց բոլոր հնարավոր եղանակներով: Մենք կարող ենք շնորհակալ լինել նրանցից այն ամենի համար, որ նրանք անում են: Մենք կարճ ժամանակում ուժասպառ ենք անում նրանց այն բեռներով, որոնք դնում ենք նրանց վրա:

. . . Յուրաքանչյուր [եպիսկոպոս] կանչված է մարգարեության ու հայտնության ոգով և ձեռնադրված ու կարգված է: Յուրաքանչյուրը կրում է իր ծխի նախագահության բանալիները: Յուրաքանչյուրը քահանայապետ է և իր ծխի նախագահող քահանայապետն է: Յուրաքանչյուրը կրում է տնտեսվարության վիթխարի պարտականություններ: Յուրաքանչյուրը կանգնած է որպես հայր իր ժողովրդի համար:

Ոչ մեկը գումար չի ստանում իր ծառայության համար: Ոչ մի ծխի եպիսկոպոս փոխհատուցում չի ստանում իր աշխատանքի համար:

Եպիսկոպոսին ներկայացված պահանջները ներկայումս նույնն են, ինչ որ Պողոսի ժամանակ էին, ով գրել է Տիմոթեոսին [տես Ա Տիմոթեոս 3.2–6]: . . .

Տիտոսին գրված իր նամակում Պողոսն ավելացնում է, որ «եպիսկոպոսը պետք է անարատ լինի ինչպես Աստուծոյ տնտես. . . .

Հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խոսքը, որ կարող լինի ողջամիտ վարդապետութիւնով հորդորել էլ և հակառակողներին հանդիմանել էլ» (Տիտոս 1.7, 9):

Այդ բառերը պատշաճ կերպով բնութագրում են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու եպիսկոպոսին այսօր:[15]

Ես խորհուրդ եմ տալիս Եկեղեցու ժողովրդին՝ ուր էլ որ լինեք, երբ բախվում եք խնդիրների հետ, նախ փորձեք լուծել դրանք ինքներդ: Մտածեք դրանց մասին, ուսումնասիրեք ձեզ հասանելի այլընտրանքները, աղոթեք դրանց մասին և դիմեք Տիրոջը առաջնորդության համար: Եթե դուք չեք կարող լուծել ձեր խնդիրները ինքներդ, ապա խոսեք ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ: Նա Աստծո մարդն է, ով կանչվել է սուրբ քահանայության իշխանության ներքո՝ որպես հոտի հովիվ:[16]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Ինչու՞ մենք ապրող մարգարեների կարիք ունենք: Ի՞նչն է ձեզ վրա տպավորություն գործում Տիրոջ «մաքրող գործընթացում»՝ Եկեղեցու Նախագահի պատրաստելու և կանչելու համար: (Տես բաժին 1:)
- Որո՞նք են ձեր տպավորությունները, երբ վերանայում եք Նախագահ Հինքլիի նկարագրությունը այն եղանակի մասին, որով ընտրվում են Եկեղեցու Նախագահները: (Տես բաժին 2:) Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Նախագահն ընտրվում է համաձայն «աստվածային ծրագրի, որն ապահովում է ոգեշնչված և ստուգված առաջնորդություն»:
- Ի՞նչ սկզբունքներ ու ընթացակարգեր է հաստատել Տերը Եկեղեցին ղեկավարելու համար, եթե Նախագահն ի վիճակի չէ լիարժեք կատարել իր պարտականությունները: (Տես բաժին 3:)
- Վերջին Օրերի Սրբերն ինչպե՞ս են արտահայտում մտահոգությունը Աստծո բոլոր զավակների համար՝ «ինչպես Եկեղեցու անդամների, այնպես էլ ոչ անդամների»: (Տես բաժին 4:) Համաժողովի ելույթներն ինչպե՞ս են արտացոլում այս մտահոգությունը: Դուք ինչպե՞ս եք օգտվել կենդանի մարգարեների և առաքյալների ուսմունքներից:
- Վերանայեք Նախագահ Հինքլիի ուսմունքներն այն մասին, թե Առաջին Նախագահությունն ու Տասներկուսի Քվորումը ինչպես են որոշումներ կայացնում (տես բաժին 5): Ի՞նչ կարող ենք սովորել այն եղանակից, որով նրանք կայացնում են

որոշումները: Ինչպե՞ս կարող ենք կիրառել այդ սկզբունքները մեր ընտանիքներում և Եկեղեցում:

- Երբ վերանայում եք բաժիններ 6-ը և 7-ը, ի՞նչ եք սովորում ցցի նախագահի և եպիսկոպոսի կոչումների մասին: Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ աջակցել Եկեղեցու ղեկավարներին:

Սոնչվող սուրբ գրություններ

Եփեսացիս 2.19–20, 4.11–14, ՎևՈւ 1.38, 21.1–6, Աբրահամ 3.22–23, Հավատո Հանգանակներ 1.5–6

Օգնություն ուսուցչին

«Վկայեք, երբ Հոգին ձեզ հուշում է անել այդ, ոչ թե ուղղակի ամեն դասի վերջում: Հնարավորություն տվեք նրանց, ում ուսուցանում եք, բերել իրենց վկայությունը» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 45):

Հղումներ

1. “In . . . Counsellors There Is Safety,” *Ensign,* Nov. 1990, 49.
2. In Conference Report, Oct. 1961, 115–16; quoting “I Stand All Amazed,” *Hymns,* no. 193.
3. “This Work Is Concerned with People,” *Ensign,* May 1995, 51.
4. “Strengthening Each Other,” *Ensign,* Feb. 1985, 5.
5. “He Slumbers Not, nor Sleeps,” *Ensign,* May 1983, 6–7.
6. “Believe His Prophets,” *Ensign,* May 1992, 53.
7. “Come and Partake,” *Ensign,* May 1986, 46–47.
8. “This Is the Work of the Master,” *Ensign,* May 1995, 69.
9. “The Church Is on Course,” *Ensign,* Nov. 1992, 53–54.
10. “God Is at the Helm,” *Ensign,* May 1994, 54, 59.
11. “Special Witnesses for Christ,” *Ensign,* May 1984, 49–51.
12. “God Is at the Helm,” 54, 59.
13. “The Stake President,” *Ensign,* May 2000, 50–51.
14. “This Work Is Concerned with People,” 52–53.
15. «Իսրայելի հովիվները» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2003, 60.
16. “Live the Gospel,” *Ensign,* Nov. 1984, 86.

Ընկերանալ նրանց հետ, ովքեր մեր հավատքից չեն

«Եկեք օգնության հասնենք բարի կամքով տղամարդկանց և կանանց, ինչպիսին էլ լինեն նրանց կրոնական համոզմունքները, և որտեղ էլ նրանք ապրեն»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

1994 թվականի նոյեմբերի կրոնական առաջնորդների համաժողովում ելույթ ունենալով՝ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասաց.

«Մենք տարբեր վարդապետական համոզմունքներ ունենք: Չնայած մենք ընդունում ենք մեր աստվածաբանական տարբերությունները, ես կարծում եմ, մենք մտքով մեկ ենք մեր իրազեկությամբ աշխարհի չարիքների և խնդիրների և հասարակության վերաբերյալ, որում մենք ապրում ենք, և այն մեծ պատասխանատվության և հնարավորության վերաբերյալ, որով պետք է կանգնենք միասնական այն հատկանիշների համար հասարակության մեջ և անձնական կյանքում, որոնք խոսում են առաքինության և բարոյականության, բոլոր տղամարդկանց և կանանց հանդեպ հարգանքի մասին՝ որպես Աստծո զավակների, մեր փոխհարաբերություններում բարյացակամության և քաղաքավարության մասին և ընտանիքի պահպանման մասին՝ որպես աստվածայնորեն կարգված հասարակության հիմնական միավոր:

. . . Մենք բոլորս մեր սրտերում կրում ենք մի ցանկություն՝ օգնել աղքատին, բարձրացնել չարչարվածին, տալ մխիթարություն, հույս և օգնել բոլորին, ովքեր դժբախտության և ցավի մեջ են, ինչ պատճառով էլ դա լինի:

Մենք ընդունում ենք հասարակության վերքերը բժշկելու և մեր ժամանակների հոռետեսությունը լավատեսությամբ ու

Նախագահ Հինքլին խրախուսում էր մեզ միանալ նրանց, ովքեր մեր հայտքից չէին «հասարակական բարի գործերում»:

հավատքով փոխարինելու կարիքը : Մենք պետք է ընդունենք, որ կարիք չկա միմյանց մեղադրելու կամ քննադատելու : Մենք պետք է օգտագործենք մեր ազդեցությունը՝ հանդարտեցնելու բարկացած և վրեժխնդիր փաստարկները:

. . .Մեր ուժը կայանում է մեր ընտրելու ազատության մեջ: Նույնիսկ ուժ կա մեր բազմազանության մեջ: Բայց ավելի մեծ ուժ կա Աստծո կողմից մեզանից յուրաքանչյուրին տրված մանդատի մեջ, որով մենք պիտի աշխատենք Նրա որդիներին ու դուստրերին բարձրացնելու և օրհնելու համար , անկախ նրանց էթնիկական կամ ազգային ծագումից և այլ տարբերություններից: . . .

Թող որ Աստված օրհնի մեզ աշխատել միասնաբար՝ վերացնելու մեր սրտերից և հեռացնելու մեր հասարակությունից ատելության, մոլեռանդության, ռասիզմի և այլ պառակտող խոսքերի ու գործողությունների բոլոր տարրերը: Թունոտ դիտողությունները, ռասայական թունավոր ակնարկները, ատելությամբ լեցուն մակդիրները, չարամիտ բամբասանքը և ստոր ու արատավոր լուրերի տարածումը չպիտի տեղ ունենան մեզանում:

Թող Աստված օրհնի մեզ բոլորիս այն խաղաղությամբ, որ գալիս է Նրանից: Թող Նա օրհնի մեզ երախտապարտ սրտերով և միմյանց հետ հարգանքով շփվելու կամքով, միավորելու մեր ջանքերը՝ ի օրհնություն համայնքների, որտեղ մեզ վիճակված է ապրել»:[1]

Այս ուղերձը հաղորդելուց մեկ տարի անց Նախագահ Հինքլին խոսեց աշխարհիկ առաջնորդների մի խմբի հետ: Դա մի փոքր խումբ էր, ընդամենը 30, բայց ազդեցիկ մարդկանցից բաղկացած, խումբ՝ նախագահներ, գլխավոր խմբագիրներ, արտադրողներ և լրագրողներ, ովքեր ներկայացնում էին գլխավոր նորությունների թողարկումները Միացյալ Նահանգներում: «Բարեհաճ և երբեմն հումորի զգացումով», նա ներկայացրեց «մի ակնարկ Եկեղեցու միջազգային մասշտաբի մասին, անդրադարձավ նրա միսիոներական, մարդասիրական և կրթական ձգտումներին , իսկ հետո առաջարկեց պատասխանել հարցերին: . . . Նա յուրաքանչյուր հարցին պատասխանեց անկեղծորեն և առանց տատանվելու կամ որևէ անհարմարության ակնարկի»: Մասնակիցներն արտահայտեցին որոշ զարմանք նրա անկեղծության վերաբերյալ, որին նա պատասխանեց, որ միակ բանը, որ ինքը չէր քննարկի, սրբազան տաճարային

արարողությունների մանրամասներն էին: «Դուռը լայն բաց է ամեն ինչի առջև»,-ասաց նա:

Հարց ու պատասխանի նիստի ինչ-որ պահի Մայք Ուոլլիսը՝ *«60 Ռոպե»* հեռուստաշոուի գլխավոր լրագրողն ասաց, որ կամենում էր հատուկ հաղորդում պատրաստել Նախագահ Հինքլիի մասին: Նախագահ Հինքլին մի պահ կանգ առավ և հետո պատասխանեց. «Շնորհակալություն, ես կօգտագործեմ այդ հնարավորությունը»:[2]

Նախագահ Հինքլին հետագայում ընդունեց, որ նա ինչ-որ նախազգացում ունեցավ Մայք Ուոլլիսի հետ հարցազրույց ունենալու առթիվ, ով կոպիտ լրագրողի համբավ ուներ: Նա բացատրեց, թե ինչու ինքը համաձայնվեց հարցազրույցին՝ չնայած այդ նախազգացմանը.

«Ես զգացի, որ այն հնարավորություն էր տալիս ներկայացնել մեր մշակույթի և ուղերձի դրական կողմերը միլիոնավոր մարդկանց համար: Ես եզրակացրի, որ ավելի լավ էր ընդառաջ գնալ հնարավորության ուժեղ քամուն, քան պարզապես ետ քաշվել և ոչինչ չանել»:[3]

Ծավալուն հարցազրույցն ընդգրկում էր հետևալ երկխոսությունը.

Պ-ն Ուոլլիս. «Ինչպե՞ս եք նայում ոչ-մորմոններին»:

Նախագահ Հինքլի. «Սիրով և հարգանքով: Ես ունեմ շատ ոչ-մորմոն ընկերներ: Ես հարգում եմ նրանց: Ես հիանում եմ նրանցով»:

Պ-ն Ուոլլիս. «Չնայած այն փաստին, որ նրանք իրականում դեռ չե՞ն տեսել լույսը:

Նախագահ Հինքլի. «Այո: Ամենքին, ովքեր այս Եկեղեցուց չեն, ես ասում եմ, որ մենք ընդունում ենք բոլոր արժանիքները և բարին, որ դուք ունեք: Բերեք այն ձեզ հետ և տեսեք, թե մենք արդյոք կարո՞ղ ենք ավելացնել դրա վրա»:[4]

Նախքան հարցազրույցի ավարտը Նախագահ Հինքլին և Մայք Ուոլլիսը դարձան ընկերներ: Պ-ն Ուոլլիսը Նախագահ Հինքլիին նկարագրել է որպես «ջերմ, լրջամիտ, օրինավոր ու լավատես առաջնորդ», ով «լիովին արժանի է այն համընդհանուր հիացմունքին, որը նա վայելում է»:[5]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Երբ մենք հիշում ենք, որ բոլոր մարդիկ Աստծո զավակներն են, մենք ավելի շատ ենք օգնության հասնում՝ բարձրացնելու և օգնելու նրանց մեր շարքերում:

Մենք չպիտի մոռանանք, որ մենք ապրում ենք մեծ բազմազանության մի աշխարհում: Երկրագնդի բոլոր մարդիկ մեր Հոր զավակներն են և ունեն բազմաթիվ ու տարբեր կրոնական համոզմունքներ: Մենք պետք է մշակենք հանդուրժողականություն, գնահատանք ու հարգանք միմյանց հանդեպ:[6]

Կարիք չկա, որ որևէ երկրում որևէ տեսակի կոնֆլիկտ լինի տարբեր խմբերի միջև: Թող որ մարդկանց տներում ուսուցանվի, որ մենք բոլորս Աստծո՝ մեր Երկնային Հոր զավակներն ենք, և անկասկած,, որտեղ կա հայրություն, կարող է և պիտի լինի եղբայրություն:[7]

Եթե մենք մեր առջևում մշտապես պահենք աստվածային ժառանգության այդ պատկերը՝ Աստծո հայրությունը և մարդու եղբայրությունը՝ որպես իրականություն, մենք մի քիչ ավելի հանդուրժողական կլինենք, մի փոքր ավելի բարի, մի քիչ ավելի հասնող, բարձրացնող, օգնող ու աջակցող նրանց, ովքեր մեր մեջ են: Մենք ավելի քիչ հակված կլինենք խոնարհվելու այն բաների առջև, որոնք հստակորեն ոչ սազական են մեզ: Մենք Աստծո զավակներն ենք և մենք սիրում ենք Նրան: Մի քիչ ավելի շատ գործեք այդ ձևով:[8]

2

Մենք պետք է ապրենք հարգանքով, գնահատանքով և ընկերասիրությամբ այն մարդկանց հանդեպ, ովքեր մեր հավատքից չեն:

«Մենք պահանջում ենք մեր խղճի թելադրանքով Ամենազոր Աստծուն երկրպագելու արտոնությունը, և նույն արտոնությունը վերապահում ենք բոլոր մարդկանց. թող նրանք երկրպագեն ինչպե՛ս, որտե՛ղ կամ ինչին կամենում են» (Հավատո Հանգանակ 1.11):

Որքա՜ն շատ է կարևոր, որ մինչ մենք հավատում ենք Աստծուն երկրպագելուն ըստ մեր վարդապետության, չդառնանք

գոռոզ, ինքնահավան կամ հպարտ, այլ արտոնություն տանք ուրիշներին՝ երկրպագել ըստ իրենց ցանկությունների: Աղետների մեծ մասը աշխարհում ծագում է կրոնների միջև առաջացող կոնֆլիկտներից: Ես երջանիկ եմ, որ կարող եմ ասել, որ կարող եմ նստել իմ Կաթոլիկ ընկերների հետ և խոսել նրանց հետ, որ ես կարող եմ նստել իմ Բողոքական ընկերների հետ և խոսել նրանց հետ: Ես կկանգնեմ ի պաշտպանություն նրանց, ինչպես այս Եկեղեցին է արել և կշարունակեմ անել՝ պաշտպանելով նրանց այս աշխարհում:[9]

Ես աղերսում եմ մեր մարդկանց՝ ամենուրեք ապրել հարգանքով և գնահատանքով նրանց հանդեպ, ովքեր մեր հավատքից չեն: Այնքան մեծ կարիք կա քաղաքավարության և փոխադարձ հարգանքի նրանց միջև, ովքեր տարբեր հավատներից և փիլիսոփայություններից են: Մենք չպիտի լինենք որևէ էթնիկական գերազանցության վարդապետության համախոհներ: Մենք ապրում ենք բազմազանության աշխարհում: Մենք կարող ենք և պետք է հարգալիր լինենք նրանց հանդեպ , ում ուսմունքերի հետ մենք գուցեև համաձայն չենք: Մենք պետք է պատրաստակամ լինենք պաշտպանելու ուրիշների իրավունքը, ովքեր գուցե զոհեր են դարձել մոլեռանդության:

Ես ձեր ուշադրությունն եմ հրավիրում այս ցնցող խոսքերի վրա, որոնք Ջոզեֆ Սմիթը ասել է 1843 թվականին:

«Եթե ես ակնարկեցի, որ կկամենամ մահանալ ցանկացած «մորմոնի» համար, ես համարձակություն ունեմ հայտարարել երկնքի առջև, որ ես պատրաստ եմ իմ կյանքը տալ, պաշտպանելով ցանկացած երիցականի կամ մկրտականի կամ որևէ այլ դավանանքի պատկանող լավ մարդու, քանի որ նույն սկզբունքը, որը ոտնակոխ կարող է անել Վերջին Օրերի Սրբերի իրավունքները, ոտնակոխ կանի նաև հռոմեական կաթոլիկների իրավունքները կամ որևէ այլ դավանանքի, որը կարող է ժողովրդականություն չվայելել և խիստ թույլ լինել իրեն պաշտպանելու համար» (*History of the Church,* 5:498):[10]

Մենք չպիտի լինենք կլանային: Մենք չպիտի երբեք որդեգրենք «ավելի սուրբ ենք, քան դուք» վարվելակերպը: Մենք չպիտի լինենք ինքնահավան: Մենք պետք է լինենք վեհանձն, անկեղծ ու ընկերական: Մենք կարող ենք պահել մեր հավատքը: Մենք կարող ենք կիրառել մեր կրոնը: Մենք կարող ենք պահպանել

երկրպագության մեր ձևը, առանց վիրավորելու ուրիշներին: Ես օգտագործում եմ այս առիթը աղերսելու հանդուրժողականության, բարի դրացիական, ընկերության և սիրո ոգու համար նրանց հանդեպ, ովքեր այլ հավատքներից են:[11]

Մենք չպիտի դառնանք անհանդուրժողական , երբ խոսում ենք վարդապետական տարբերությունների մասին: Տեղ չկա թունոտության համար: Բայց մենք չենք կարող անձնատուր լինել կամ փոխզիջման գնալ այն գիտելիքով, որը եկել է մեզ հայտնության միջոցով և ուղղակի շնորհվել է բանալիների և Նրանց ձեռքերի իշխանության ներքո, ովքեր կրում էին դրանք հին ժամանակներում: Եկեք երբեք չմոռանանք, որ այս վերականգնումն է նրա, ինչը հաստատվել է աշխարհի Փրկիչի կողմից: . . .

Մենք կարող ենք հարգել մյուս կրոնները, և պետք է այդպես անենք: Մենք պետք է ճանաչենք մեծ բարիքը, որ նրանք են իրականացնում: Մենք պետք է սովորեցնենք մեր երեխաներին հանդուրժող և ընկերական լինել նրանց հանդեպ, ովքեր մեր հավատքից չեն:[12]

Մենք չպիտիվնասենք մյուս եկեղեցիներին: Մենք չպիտի վիրավորենք մյուս եկեղեցիներին: Մենք չենք վիճում մյուս եկեղեցիների հետ: Մենք չենք բանավիճում մյուս եկեղեցիների հետ: Մենք պարզապես ասում ենք նրանց, ովքեր զուցե ուրիշ հավատքներից են կամ ոչ մի հավատքից. «Դուք բերեք ձեզ հետ այն ճշմարտությունը, ինչ դուք ունեք և եկեք տեսնենք, թե մենք արդյոք կարո՞ղ ենք ավելացնել դրա վրա»:[13]

3

Մենք կարող ենք աշխատել ուրիշների հետ՝ բարի գործեր կատարելով, առանց փոխզիջման գնալու մեր վարդապետության հարցերում:

Մենք կարող ենք և իսկապես աշխատում ենք այլ կրոնների հետ տարբեր ձեռնարկումներում՝ մշտապես պայքարելով սոցիալական չարիքների դեմ, որոնք սպառնում են նվիրական արժեքներին, որոնք այնքան կարևոր են մեզ բոլորիս համար: Այդ մարդիկ մեր հավատքից չեն, բայց նրանք մեր ընկերներն են, հարևանները և գործընկերները մի շարք պատճառներով: Մենք գոհ ենք, որ կարող ենք մեր ուժը տրամադրել նրանց ջանքերին:

«Մեր բարությունը կարող է լինել ամենահամոզիչ փաստը նրա համար, ինչին մենք հավատում ենք:

Բայց բոլոր այս բաներում չկա փոխզիջում վարդապետության հարցում : Կարիք չկա, որ լինի և չպիտի լինի մեր կողմից: Բայց կա ընկերակցության ինչ-որ աստիճան, երբ մենք աշխատում ենք միասին:[14]

Եկեք չմոռանանք, որ մենք հավատում ենք բարեգործ լինելուն և բոլոր մարդկանց բարիք անելուն: Ես համոզված եմ, որ մենք կարող ենք ուսուցանել մեր երեխաներին բավական արյունավետ, որ մենք չպիտի վախենանք, որ նրանք կկորցնեն իրենց հավատքը, երբ ընկերական լինեն և հոգատար նրանց հանդեպ, ովքեր չեն համաձայնվում այս Եկեղեցու վարդապետության հետ: . . . Եկեք ներգրավվենք համայնքի բարի գործերում: Կարող են լինել իրավիճակներ, երբ լուրջ բարոյական հարցեր են ներքաշվում, մենք չենք կարող զիջել սկզբունքային հարցերում: Բայց այդպիսի դեպքերում, լինելով բարեհամբույր, մենք կարող ենք քաղաքավարի ձևով չհամաձայնվել: Մենք կարող ենք ընդունել նրանց անկեղծությունը, ում դիրքորոշումները մենք չենք կարող ընդունել: Մենք կարող ենք խոսել ավելի շուտ սկզբունքների մասին, քան անձնավորությունների:

Այն հարցերում, որոնք ուժեղացնում են հասարակական միջավայրը, և որոնք նախատեսված են նրա քաղաքացիների օրհնության համար, եկեք քայլ կատարենք առաջ և լինենք օգտակար։ . . .

. . . Ուսուցանեք նրանց, ում համար դուք պատասխանատու եք քաղաքացիական լավ վարվելակերպի կարևորության հարցում։ Խրախուսեք նրանց մասնակցել՝ հիշելով, որ հասարակական քննարկումներում հիմնավորված փաստարկներով հանդարտ ձայնը ավելի համոզիչ է, քան բողոքի աղմկոտ ճչացող ձայնը։ Ընդունելով այդպիսի պարտականություններ, մեր ժողովուրդը կօրհնի իրենց համայնքները, իրենց ընտանիքները և Եկեղեցին։[15]

Մենք երբեք չպիտի անձնատուր լինենք չարի ուժերին։ Մենք կարող ենք և պետք է պահպանենք չափանիշները, որոնց համար այս Եկեղեցին կազմավորվել է։ Կա ավելի լավ ուղի, քան աշխարհի ուղին։ Եթե դա նշանակում է միայնակ կանգնել, մենք պետք է անենք այդ։

Բայց մենք միայնակ չենք լինի։ Ես վստահ եմ, որ կան միլիոնավոր մարդիկ ողջ աշխարհում, ովքեր սգում են չարիքի համար, որ իրենք տեսնում են իրենց մեջ։ Նրանք սիրում են առաքինին, բարին և վեհացնողը։ Նրանք ևս կբարձրացնեն իրենց ձայները և կտան իրենց ուժը՝ այն արժեքների պահպանման համար, որոնք արժանի են օգտագործման և զարգացման համար։[16]

Եկեք աղոթենք բարու ուժերի համար։ Եկեք օգնության հասնենք բարի կամքով տղամարդկանց և կանանց, ինչպիսին էլ որ լինեն նրանց կրոնական համոզմունքները և որտեղ էլ որ նրանք ապրեն»։ Եկեք ամուր կանգնենք չարի դեմ, ինչպես տանը, այնպես էլ ամենուրեք։ . . . Այս աշխարհում մեզանից յուրաքանչյուրը կարող է լինել ազդեցություն բարու համար։[17]

4

Երբ մենք վերաբերվում ենք ուրիշներին սիրով, հարգանքով և բարությամբ, մենք ցույց ենք տալիս, որ մենք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն ենք։

Երբ մենք առաջ ենք տանում մեր որոշակի առաքելությունը, մենք աշխատում ենք հարություն առած Տիրոջ կողմից մեզ տրված մանդատի ներքո, ով խոսել է այս վերջին և եզրափակիչ

տնտեսությունում: Սա է Նրա եզակի և սքանչելի գործը: «Մենք բերում ենք վկայություն և ապացույց Նրա մասին: Բայց մենք չպիտի անենք դա զոռոզությամբ կամ ինքնագոհությամբ:

Ինչպես Պետրոսն արտահատեց դա, մենք «ընտիր ազգ, թագավորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ» ենք: Ինչո՞ւ: Որպեսզի մենք կարողանանք «քարոզել նորա առաքինութիւնները, որ [մեզ] խաւարիցը կանչեց իր զարմանալի լոյսի մեջ» (1 Պետ. 2.9): . . .

. . . Եկեք լինենք Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ, պահելով Ոսկե Կանոնը, անելով մյուսների համար այն, ինչ մենք կկամենայինք, որ նրանք անեն մեզ համար: Եկեք զորացնենք մեր սեփական հավատքը և մեր երեխաների հավատքը, լինելով ողորմած նրանց հանդեպ, ովքեր մեր հավատքից չեն: Սերն ու հարգանքը կհաղթահարի թշնամության ամեն տարր: Մեր բարությունը կարող է լինել ամենահամոզիչ փաստը նրա վերաբերյալ, ինչին մենք հավատում ենք:[18]

Ես ցանկանում եմ առաջարկել, որ մենք զարգացնենք օգնության հասնելու վերաբերմունք՝ օգնելու նրանց, ովքեր մեզանից չեն, խրախուսել նրանց, առաջնորդել նրանց ողորմածությամբ և բարությամբ դեպի այն ընկերակցությունները, որոնք կարող են նրանց բացահայտել Եկեղեցու հրաշալի ծրագրերը:

Ես մտածում եմ Էդվին Մարքհամի բանաստեղծության մասին.

Նա գծեց շրջան, որն ինձ դուրս թողեց.
Հերետիկոս, ապստամբ, ծաղրի առարկա:
Բայց Մեր ունեի ես և խելք հաղթելու.
Մենք գծեցինք շրջան, որը նրան իր մեջ ընդգրկեց:[19]

Մենք իհարկե չպիտի պարծենանք [մեր կրոնով] կամ զոռոզ լինենք որևէ ձևով: Այդպիսին դառնում է նա, ով մերժում է Քրիստոսի Հոգին, ում մենք պարտավոր ենք ընդօրինակել: Այդ Հոգին արտահայտություն է գտնում սրտում և հոգում, մեր խաղաղ ու համեստ կյանքում:

Մենք բոլորս տեսել ենք մարդկանց, ում երևի նախանձում ենք, որովհետև նրանք զարգացրել են մի խոսելաձև, որն առանց նույնիսկ նշելու դա, խոսում է ավետարանի գեղեցկության մասին, որը նրանք միավորել են իրենց վարվելաձևի մեջ:

Մենք կարող ենք ցածրացնել մեր ձայնը մի քանի աստիճանով: Մենք կարող ենք բարությամբ պատասխանել չարին: Մենք կարող ենք ժպտալ, որտեղ բարկանալը շատ ավելի հեշտ կլիներ: Մենք կարող ենք գործադրել ինքնավերահսկողություն և ինքնակարգավարժում և վանել մեզ վնասելու ամեն մի փորձ:[20]

Արդյոք մենք հասկանո՞ւմ ենք, արդյոք մենք ըմբռնո՞ւմ ենք վիթխարի նշանակությունը նրա, ինչը մենք ունենք: Սա մարդկային սերունդների ամփոփումն է, մարդկային փորձառության ողջ համայնապատկերի եզրափակիչ գլուխը:

Բայց դա մեզ չի դնում զերազանցության դիրքում: Այն ավելի շուտ պետք է խոնարհեցնի մեզ: Դա դնում է մեզ վրա անողոք պատասխանատվություն. օգնության հասնել մտահոգությամբ բոլոր մյուսներին Տիրոջ Հոգով, ով ուսուցանել է.«սիրիր քո ընկերին քո անձի պէս» (Մատթեոս 19.19): Մենք պետք է վանենք մեզանից ինքնագոհությունը և վեր բարձրանանք մանրախնդիր անձնական շահերից: . . .

Այս սերնդից մենք վերջին բերքահավաքն ենք բոլոր նրանցից, ովքեր հեռացել են նախկինում: Բավական չէ պարզապես ճանաչվել որպես այս Եկեղեցու անդամ: Մեր վրա է դրված մի լուրջ պարտականություն: Եկեք ճշմարտության դեմքին նայենք և աշխատենք այդ ուղղությամբ:

Մենք պետք է ապրենք որպես Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ, բոլորի հանդեպ գթությամբ, վերադարձնելով բարիք՝ չարիքի փոխարեն, օրինակով ուսուցանելով Տիրոջ ուղիները, և իրականացնելով այն վիթխարի ծառայությունը, որը Նա ուրվագծել է մեզ համար:[21]

Սոլթ Լեյք Սիթի Յուտա Համաժողովների Կենտրոնի նվիրագործման աղոթքից. Թող մենք, որ Քո Եկեղեցուց ենք, լինենք հյուրասեր և ողորմած: Թող որ մենք պահպանենք չափանիշները և գործառույթները, որոնց համար մենք ճանաչված ենք և վերապահենք արտոնություն ուրիշներին երկրպագելու ում, «որտե՛ղ կամ ինչ-որ կամենում են» [Հավատո Հանգանակ 1.11]: Օրհնիր մեզ օգնության հասնել որպես լավ հարևաններ և օգտակար լինել բոլորին: Թող որ մենք բարձրացնենք ընկած ձեռքերը և ամրացնենք տկար ծնկներն ամեն մեկի, ով դժբախտության մեջ է [տես ՎևՈւ 81.5]: Թող մենք ապրենք բոլորս

միասին խաղաղության մեջ՝ արժեվորելով և հարգանքով մեկս մյուսի հանդեպ։[22]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Ուրիշների հետ մեր փոխհարաբերություններում, ինչո՞ւ է օգտակար հիշել, որ մենք բոլորս Աստծո զավակներն ենք։ (Տես բաժին 1։) Ինչպե՞ս կարող ենք զարգացնել ավելի մեծ արժևորում և հարգանք ուրիշների հանդեպ։ Ինչպե՞ս կարող են չափահասներն ուսուցանել երեխաներին, որպեսզի նրանք արժևորեն և հարգեն ուրիշներին։
- Ուրիշ մարդկանց հետ, ովքեր մեր հավատքից չեն, վերանայեք Նախագահ Հինքլիի խորհուրդը մեր փոխհարաբերությունների վերաբերյալ (տես բաժին 2)։ Ինչպե՞ս կարող ենք ճանաչել, թե մենք արդյոք ցույց տալի՞ս ենք գոռոզամտություն կամ ինքնագոհություն այս փոխհարաբերություններում։ Ինչպե՞ս մենք կարող ենք ցույց տալ ավելի մեծ ընկերություն և սեր նրանց հանդեպ, ովքեր ունեն այլ համոզմունքներ։
- Ինչո՞ւ է կարևոր, որ Եկեղեցու անդամները աշխատեն միասին ուրիշ մարդկանց հետ բարի գործեր անելիս։ (Տես բաժին 3։) Որո՞նք են այդպիսի ջանքերի որոշ օրինակներ։ Ինչպե՞ս կարող ենք ավելի մեծ ազդեցություն ունենալ ի բարին մեր համայնքում։
- Ի՞նչ կարող ենք սովորել աշակերտության վերաբերյալ Նախագահ Հինքլիի ուսմունքներից բաժին 4-ում։ Տեսե՞լ եք, թե սերն ու հարգանքը ինչպե՞ս են հաղթում թշնամությանը։ Ինչո՞ւ է մեր վարվելակերպը ուրիշների հանդեպ «ամենահամոզիչ փաստարկը նրա վերաբերյալ, ինչին մենք հավատում ենք»։ Մտածեք առանձնահատուկ ուղիներ, որոնցով դուք կարող եք օգնության հասնել ուրիշներին։

Առնչվող սուրբ գրություններ

Մատթեոս 7.12, Ղուկաս 9.49–50, Հովհաննես 13.34–35, 1 Հովհաննես 4.7–8, ՎԵՈՒ 1.30, 123.12–14, Հավատո Հանգանակ 1.13

Օգնություն ուսուցչին

«Երբ զգաք ուրախությունը, որը գալիս է ավետարանը հասկանալուց, դուք կկամենաք կիրառել, ինչ սովորում եք: Ձգտեք ապրել ներդաշնակության մեջ ձեր հասկացողության հետ: Այդպես վարվելը կզորացնի ձեր հավատքը, գիտելիքը և վկայությունը» (*Քարոզիր Իմ Ավետարանը* [2004], 19):

Հղումներ

1. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 663–64.
2. In Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 537–38.
3. "Remember . . . Thy Church, O Lord," *Ensign,* May 1996, 83.
4. "This Thing Was Not Done in a Corner," *Ensign,* Nov. 1996, 51.
5. Mike Wallace, in Gordon B. Hinckley, *Standing for Something: Ten Neglected Virtues That Will Heal Our Hearts and Homes* (2000), viii.
6. "The Work Moves Forward," *Ensign,* May 1999, 5.
7. "Four Simple Things to Help Our Families and Our Nations," *Ensign,* Sept. 1996, 7.
8. «Ոգեշնչված ուղերձներ Նախագահ Հինքլիից», *Church News,* հոկտ. 5, 1996, 2:
9. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 417.
10. "This Is the Work of the Master," *Ensign,* May 1995, 71; see also *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 345.
11. "Remarks at Pioneer Day Commemoration Concert," *Ensign,* Oct. 2001, 70.
12. "We Bear Witness of Him," *Ensign,* May 1998, 4.
13. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2,* 350.
14. "We Bear Witness of Him," 4–5.
15. *Teachings of Gordon B. Hinckley,* 131.
16. Գորդոն Բ. Հինքլի, «Կանգնենք ամուր ու անսասան», *Ղեկավարների համաշխարհային ուսուցում,* հունվ. 10, 2004, 20:
17. "The Times in Which We Live," *Ensign,* Nov. 2001, 74.
18. "We Bear Witness of Him," 5.
19. "Four B's for Boys," *Ensign,* Nov. 1981, 41; quoting Edwin Markham, "Outwitted," in *The Best Loved Poems of the American People,* sel. Hazel Felleman (1936), 67.
20. "Each a Better Person," *Ensign* or *Liahona,* Nov. 2002, 100.
21. "The Dawning of a Brighter Day," *Ensign* or *Liahona,* May 2004, 83–84.
22. Dedicatory prayer for the Conference Center, in "This Great Millennial Year," *Ensign,* Nov. 2000, 71.

«Եկեք օգնության հասնենք աշխարհին մեր միսիոներական ծառայությամբ, ուսուցանելով բոլոր նրանց, ովքեր կկամենան լսել ավետարանի վերականգնման վերաբերյալ»:

Վերջին Օրերի միսիոներական աշխատանքի հրաշքը

«Ես հրավիրում եմ ձեզ դառնալ այս աշխատանքի համար խանդավառությամբ լցված, ընդհանուր ցանկությամբ տոգորված մի վիթխարի բանակ և միսիոներներին օգնել այն հսկայական պատասխանատվության մեջ, որ նրանք ունեն:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Գորդոն Բ. Հինքլին երիտասարդ տարիքում հավատարիմ քահանայություն կրող էր, բայց նա չէր ակնկալում, որ կանչվելու էր լիաժամկետ միսիայում ծառայելու: «Աշխարհի պատմության մեջ դա վատթարագույն տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանն էր»,- հետագայում բացատրել է նա: Գործազրկությունը [Սոլթ Լեյք Սիթիում] մոտ 35 տոկոս էր կազմում և գործազուրկների մեծ մասը ամուսիններ և հայրեր էին, քանի որ համեմատաբար քիչ կանայք էին զբաղված աշխատանքով: Շատ քիչ միսիոներներ էին գնում միսիայի այդ ժամանակ: . . . Ես ստացել էի բակալավրի աստիճան և ծրագրում էի ինչ-որ ձևով ընդունվել ասպիրանտուրա: Այնուհետև եկավ եպիսկոպոսը, և ինչպես ինձ էր թվում, ցնցող առաջարկությամբ: Նա խոսեց միսիայի մասին»:[1]

Գորդոնը ընդունեց իր եպիսկոպոսի «ցնցող առաջարկությունը» և 1933 թվին կանչվեց ծառայելու Անգլիայում՝ որպես 525 միսիոներներից մեկը, ովքեր կանչվել էին այդ տարի:[2] Նա դիմակայեց շատ փորձությունների իր միսիայի ընթացքում, բայց նրա ծառայությունը խարսխվում էր իր հավատքի վրա:

Միսիոներական աշխատանքը հեշտ չէր: Այն դժվարին էր և հուսահատեցնող: Բայց ի՜նչ հրաշալի փորձառություն էր այն: Հետադարձ հայացք ձգելով, ես ընդունում եմ, որ ես երևի

եսասեր երիտասարդ տղամարդ էի, երբ ժամանեցի Բրիտանիա: Ինչպիսի՜ օրհնություն դարձավ այն, որ ես մի կողմ դրեցի իմ սեփական եսասիրական հետաքրքրությունները Տիրոջ աշխատանքում: . . .

Շատ երախտապարտ եմ այդ միսիայի փորձառության համար: Ես ազդեցի մի քանիսի կյանքի վրա, ովքեր տարիների ընթացքում արտահայտեցին իրենց շնորհակալությունը: Կարևորը դա է եղել: Բայց ես երբեք խիստ մտահոգված չեմ եղել մկրտությունների թվով, որ ես կամուրիշ միսիոներներունեցել են: Իմ բավարարվածությունը եկել է այն հավաստիացումից, որ ես արել եմ այն, ինչ Տերն է կամեցել, որ ես անեմ, և ես գործիք եմ եղել Նրա ձեռքերում՝ Նրա նպատակների իրականացման համար: Այդ փորձառության ընթացքում մի համոզմունք և գիտելիք սևեռուն դարձավ իմ բուն էության մեջ, որ սա իրոք Աստծո ճշմարիտ և կենդանի աշխատանքն է, վերականգնված մի մարգարեի կողմից բոլորի օրհնության համար, ովքեր կկամենան ընդունել այն և ապրել դրա սկզբունքներով»:[3]

Նախագահ Հինքլիի միսիան ուղղություն տվեց կյանքի մի ժամանակահատվածի, որը նվիրաբերվեց Տիրոջ աշխատանքին: Իր ծառայության ընթացքում, որպես Եկեղեցու Նախագահ, նա ճանապարհորդեց ավելի քան մեկ միլիոն մղոն (1.6 միլիոն կիլոմետր), ավելի քան 70 երկրներ՝ բերելու վկայություն Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի մասին:[4]

Նախագահ Հինքլին հաճախ էր կոչ անում Եկեղեցու անդամներին միանալու իրեն՝ ավետարանով կիսվելու համար: Իր Նախագահության տարիներին ավելի քան 400000 լիաժամկետ միսիոներներ պատասխանեցին այս կոչին: Նրանց ծառայության օգնությամբ և անդամ միսիոներների աշխատանքի միջոցով, ավելի քան 3500000 նորադարձներ մկրտվեցին այդ ժամանակ:[5]

Միշտ լավատեսական Նախագահ Հինքլին կիսվեց մի լայնածավալ հեռանկարով, թե ինչպես Տիրոջ աշխատանքը կշարունակի աճել.

«Եթե մենք առաջ գնանք, երբեք չկորցնելով մեր նպատակակետը, վատը չխոսելով որևէ մարդու մասին, ապրելով մեծ սկզբունքներով, որոնք գիտենք որ ճշմարիտ են, այս գործը կշարունակվի առաջ ընթանալ վեհափառությամբ և զորությամբ՝

երկիրը լցնելու համար: Այժմ ավետարանը քարոզելու համար փակ դռները կբացվեն»:[6]

«Մեր հույսն ապագայի վերաբերյալ մեծ է և մեր հավատքն ուժեղ է: Մենք գիտենք, որ հազիվ մակերեսն ենք բացել այն բանի, ինչ տեղի է ունենալու հետագա տարիներին: . . . Առաջ գնալու մեր բեռը հսկայական է: Բայց մեր հնարավորությունը փառահեղ է»:[7]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Մենք պետք է օգնության հասնենք աշխարհին միսիոներական ծառայությամբ՝ ուսուցանելով բոլոր նրանց, ովքեր կկամենան լսել ավետարանի վերականգնման վերաբերյալ:

Մենք ունենք աստվածային `հանձնագիր`տանել ավետարանը բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին և ժողովուրդներին: Մենք հանձնարարություն ունենք ուսուցանելու և մկրտելու Տեր Հիսուս Քրիստոսի անունով: Հարություն առած Փրկիչն ասել է.«Գնացեք բոլոր աշխարհք, ավետարանը քարոզեցեք ամեն արարածի» [Մարկոս 16.15]: Մենք ներգրավված ենք ճշմարտության և բարության համար մղվող մեծ և ընդգրկուն խաչակրաց պատերազմի մեջ[8]:

Նախքան Եկեղեցու կազմավորվելը միսիոներական աշխատանք կար: Դա շարունակվել է այդ ժամանակից ի վեր, չնայած բոլոր ժամանակների դժվարություններին, որոնցով մեր մարդիկ անցել են: Եկեք ամեն մեկս վճռենք ինքներս մեր մեջ բարձրանալ դեպի նոր հնարավորություն, պատասխանատվության նոր զգացում և պարտավորության նոր բեռ ստանձնել՝ օգնելով մեր Երկնային Հորը երկրի վրա Իր որդիներին և դուստրերին անմահություն և հավերժական կյանք բերելու Նրա փառահեղ աշխատանքում:[9]

Եկեք որպես Վերջին Օրերի Սրբեր օգնության հասնենք ուրիշներին, ովքեր մեր հավատքից չեն: Եկեք երբեք չգործենք գոռոզության ոգով կամ «ավելի սուրբ ենք, քան դուք» վերաբերմունքով: Ավելի շուտ, եկեք ցույց տանք սեր, հարգանք և օգտակարություն նրանց հանդեպ: Մեզ հիմնականում սխալ

են հասկանում, և ես վախենում եմ, որ դա մեր պատճառով է: Մենք կարող ենք ավելի հանդուրժողական լինել, ավելի դրացիական, ավելի ընկերական, ավելի օրինակելի, քան եղել ենք անցյալում: Եկեք ուսուցանենք մեր երեխաներին ուրշներին վերաբերվել ընկերասիրությամբ, հարգանքով, սիրով և հիացմունքով: Դա առաջ կբերի ավելի լավ արդյունք, քան եսասիրության զգացումը: . . .

«Եկեք օգնության հասնենք աշխարհին մեր միսիոներական ծառայությամբ, ուսուցանելով բոլոր նրանց, ովքեր կկամենան լսել ավետարանի վերականգման վերաբերյալ, խոսելով առանց վախի, բայց նաև առանց ինքնագոհության, խոսելով Առաջին Տեսիլքի մասին, վկայելով Մորմոնի Գրքի մասին և քահանայության վերականգնման մասին: Եկեք իմ եղբայրներ և քույրեր, ծնկի իջնենք և աղոթենք ուրիշներին դեպի ավետարանը բերելու ուրախության հնարավորության համար:[10]

Սքանչելի և հիանալի է, որ հազարավորները ազդվում են Սուրբ հոգու հրաշքի կողմից, որ նրանք հավատում են, ընդունում և դառնում անդամներ: Նրանք մկրտվում են: Նրանց կյանքը հավերժական ազդեցություն է կրում: Տեղի են ունենում հրաշքներ: Հավատքի մի սերմ է գալիս նրանց սրտերը: Այն մեծանում է, երբ նրանք սովորում են: Եվ նրանք ընդունում են սկզբունք առ սկզբունք,մինչև յուրաքանչյուրն ունենում է սքանչելի օրհնություններ, որոնք գալիս են նրանց, ովքեր քայլում են հավատքով Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի այս Եկեղեցում:[11]

2

Մենք պետք է օգնենք լիաժամկետ միսիոներներին՝ ուրիշներին բերել դեպի ճշմարտության գիտությանը:

Ես հանդիպեցի մի կնոջ Հարավային Ամերիկայում, ով հենց նոր էր միացել Եկեղեցուն: Բոցավառված մեծ սիրով այն բանի հանդեպ, ինչ նա գտել էր, նա խանդավառված շրջել էր ամենուր՝ պատմելով ուրիշներին: Իր մկրտությունից յոթ ամիս հետո նա միսիոներներին տեղեկացրեց երեք հարյուր ծանոթների մասին, որպեսզի նրանց բացատրեին ավետարանը: Ինչ-որ պահ, վաթսուն մարդ եկան Եկեղեցի: Ավելի շուտ, գալով Սան Պաուլո, (Բրազիլիա) ես հանդիպեցի երիտասարդ այն միսիոներին, ով առաջինն էր նրան սովորեցրել ավետարանը: Նա ևս

նորադարձ էր, գնացել էր միսիա ներկայացնելու Եկեղեցին՝ կատարելով զգալի ֆինանսական զոհաբերություն։ Կինը, որի մասին ես խոսում եմ, քառասուներեքից մեկն էր, ում նա օգնել էր՝ բերելով եկեղեցի այդ պահին։ Այս բրազիլացի երիտասարդը մեծացրել էր մկրտվողների քանակը ավելի քան հարյուր անգամ՝ քառասուներեք նորադարձներ ինքնուրույն և վաթսուն հոգի՝ իր դարձի բերածներից մեկի միջոցով և դեռ ավելի շատ եկողներ մյուս նորադարձների կողմից։[12]

Մեզանից շատերն են նայում միսիոներական աշխատանքի վրա՝ որպես պարզապես զբաղմունքի։ Բոլորը, ովքեր ծանոթ են այս աշխատանքին, գիտեն, որ կա ավելի լավ ուղի։ Այդ ուղին Եկեղեցու անդամների միջոցով է։ Երբ որևէ անդամ ներկայացնում է ունկնդրի, լինում է անմիջական աջակցող համակարգ։ Անդամը վկայություն է բերում աշխատանքի ճշմարտության մասին։ Նա մտահոգվում է իր ունկնդիր ընկերոջ երջանկությամբ։ Նա հուզվում է, երբ այդ ընկերը առաջընթաց է կատարում՝ սովորելով ավետարանը։

Լիաժամկետ միսիոներները կարող են անել ընթացիկ ուսուցումը, բայց անդամը, որտեղ հնարավոր է, կլրացնի այդ ուսուցումը՝ առաջարկելով իր տունը այս միսիոներական ծառայությունը շարունակելու համար։ Նա կբերի անկեղծ վկայություն այդ աշխատանքի աստվածայնության վերաբերյալ։ Նա կլինի այնտեղ, որ պատասխանի հարցերին, երբ միսիոներները մոտակայքում չլինեն։ Նա կլինի ընկեր նորադարձի համար, ով կատարում է մեծ և հաճախ դժվար փոփոխություն։

Ավետարանի համար չեն ամաչում։ Դրանով պետք է հպարտանալ։ «Ուրեմն ամոթ մի համարիր մեր Տիրոջ վկայությունը»,- գրել է Պողոսը Տիմոթեոսին։ (2 Տիմ. 1.8)։ Ավետարանով կիսվելու հնարավորություններն ամենուր են։ . . .

Եկեղեցի նոր մարդկանց բերելու գործընթացը միայն միսիոներների պարտականությունը չէ։ Նրանք լավագույն ձևով են հաջողության հասնում, երբ անդամներն են դառնում այն աղբյուրը, որոնց միջոցով նոր ունկնդիրներ են գտնում։ . . .

Յուրաքանչյուր անդամի սրտում թող զարգացանահիրազեկություն իր ներուժի մասին, որով ուրիշներին կբերիճշմարտության

Ավետարանով կիսվելու հնարավորություններն ամենուր են:

իմացությունը: Թող նա աշխատի դրա վրա: Թող նա մեծ լրջությամբ աղոթի դրա մասին: . . .

. . . Իմ եղբայրներ և քույրեր, մենք կարող ենք թողնել միսիոներներին, որ փորձեն դա մենակ անել կամ մենք կարող ենք օգնել նրանց: Եթե նրանք մենակ անեն, նրանք կթակեն դռները օրեցօր և բերքահավաքն աղքատիկ կլինի: Կամ որպես անդամներ մենք կարող ենք նրանց օգնել գտնել և ուսուցանել ունկնդիրների: . . .

Թող ամեն ցցում զարգացնեն իրազեկություն այն հնարավորության վերաբերյալ , որի միջոցով կգտնեն նրանց, ովքեր կլսեն ավետարանի ուղերձը: Այս գործընթացում մենք չպիտի վիրավորող լինենք: Մենք չպիտի զոռոզ լինենք: Ամենաարդյունավետ ուղին, որով մենք կարող ենք իրականացնել դա, կլինի մեր կյանքի բարությունը և օրինակը: Եվ երբ մենք զբաղվենք այս ծառայությամբ, մեր կյանքը կբարելավվի, քանի որ մենք զգոն կլինենք, որ չանենք կամ չասենք որևէ բան, որը կարող է խոչընդոտել նրանց առաջընթացը, ում մենք փորձում ենք առաջնորդել դեպի ճշմարտություն: . . .

Անհրաժեշտ է, որ լինի խանդավառության ներհոսք Եկեղեցու ամեն մակարդակում: Եկեք այս նյութին [միսիոներական

աշխատանքին] երբեմն անդրադառնանք հաղորդության ժողովի ժամանակ: Թող այն քննարկվի քահանայության և Սփոփող Միության կողմից իրենց ամենշաբաթյա ժողովներում: Թող Երիտասարդ Տղամարդիկ և Երիտասարդ Կանայք խոսեն և պլանավորեն ուղիներ՝ օգնելու այս ամենակարևոր նախաձեռնությանը: Թող նույնիսկ Երեխաների Միության երեխաներն ուղիներ մտածեն օգնելու համար: Շատ ծնողներ եկել են Եկեղեցի երեխայի պատճառով, ում հրավիրել էին Երեխաների խումբ: . . .

Եղբայրներ և քույրեր, ծխերում և ցցերում, շրջաններում ու ճյուղերում, ես հրավիրում եմ ձեզ դառնալ ընդհանուր ցանկությամբ տոգորված այս աշխատանքի համար խանդավառությամբ լցված մի վիթխարի բանակ՝ միսիոներներին օգնելու այն հսկայական պատասխանատվության մեջ, որ նրանք ունեն՝ ավետարանը ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի տանելու համար: «Արտը սպիտակ է [և պատրաստ] արդեն հնձին է հասել» (ՎևՈւ 4.4): Տերը հաճախ է հայտարարել այս: Արդյոքմենք չպիտի՞ընդունենք Նրան՝ համաձայն Իր խոսքի:[13]

Միսիոներների անունից ես ուզում եմ աղերսել Սրբերին անել այն ամենը, ինչ դուք հնարավորինս կարող եք՝ տալով տեղեկություններ [մարդկանց մասին], ում նրանք կարող են ուսուցանել: Դուք երջանիկ կլինեք, եթե դուք այդպես վարվեք: Ում դուք տեսնեք Եկեղեցի գալիս՝ ձեր ջանքերի շնորհիվ, այն երջանկություն կբերի ձեր կյանք: Ես դա դարձնում եմ խոստում ձեզանից յուրաքանչյուրի համար:[14]

3

Լիաժամկետ միսիոներական աշխատանքը բերում է հարատև երջանկություն նրանց, ովքեր ծառայում են:

Մենք պետք է բարձրացնենք արժանավորության և որակավորումների սանդղակը նրանց համար, ովքեր աշխարհ են մտնում՝ որպես Տեր Հիսուս Քրիստոսի դեսպաններ:[15]

Աշխարհն այսօր անկեղծ վկայության ուժի կարիքն ունի: Այն Հիսուս Քրիստոսի ավետարանի կարիքն ունի, և եթե աշխարհը պետք է լսի այդ ավետարանը, պետք է լինեն սուրհանդակներ այն ուսուցանելու համար:

Մենք խնդրում ենք ծնողներից վաղ սկսել իրենց երեխաներին ուսուցանելը [միսիոներական ծառայության համար]: Որտեղ

կա ընտանեկան աղոթք, որտեղ կան ընտանեկան երեկոներ, որտեղ կա սուրբ գրությունների ընթերցում, որտեղ հայրը և մայրը ակտիվ են Եկեղեցում և խոսում են խանդավառությամբ Եկեղեցու և ավետարանի մասին, երեխաները այդպիսի տներում, բնականաբար, տոգորվում ուրիշներին ավետարանը սովորեցնելու ցանկությամբ: Սովորաբար այդպիսի տներում միսիոներական աշխատանք կատարելու ավանդույթ է առաջանում: Խնայողական հաշիվներ են բացվում, երբ երեխաները փոքր են: Տղաները մեծանում են բնական ակնկալիքով, որ իրենք Եկեղեցու համար կանչվելու են ծառայելու որպես միսիոներներ: Միսիան դառնում է ամեն մի տղայի կյանքի ծրագրի նույնպիսի մասը, ինչպես կրթությունը:[16]

Միսիոներական աշխատանքը հիմնականում քահանայության պարտականություն է: Որպես այդպիսին, մեր երիտասարդ տղամարդիկ պետք է կրեն գլխավոր բեռը: Սա նրանց պատասխանատվությունն է և նրանց պարտականությունը:[17]

Երիտասարդ [տղամադիկ], հուսով եմ դուք բոլորդ նպատակաուղղված եք դեպի միսիոներական ծառայությունը: Ես չեմ կարող խոստանալ ձեզ զվարճություն: Ես չեմ կարող խոստանալ ձեզ անհոգություն և հարմարավետություն: Ես չեմ կարող խոստանալ ձեզ ազատություն հուսահատությունից, վախից, երբեմն ուղղակի թշվառությունից: Բայց ես կարող եմ խոստանալ ձեզ, որ դուք կաճեք այնպես, ինչպես երբևէ չէիք աճի ձեր ողջ կյանքի նմանատիպ ժամանակահատվածում: Ես կարող եմ խոստանալ ձեզ մի երջանկություն, որը կլինի առանձնահատուկ, սքանչելի ու հարատև: Ես կարող եմ խոստանալ ձեզ, որ դուք կվերագնահատեք ձեր կյանքը, որ դուք կհաստատեք նոր առաջնահերթություններ, որ դուք ավելի մոտ կապրեք Տիրոջը, որ աղոթքը կդառնա մի իրական և սքանչելի փորձառություն, որ դուք կքայլեք հավատքով՝ արդյունքում անելով բարի գործեր:[18]

«Մենք որոշ երիտասարդ կանանց կարիքն ունենք [միսիաներում ծառայելու համար]: Նրանք ուշագրավ աշխատանք են կատարում: Նրանք կարող են մտնել այնպիսի տներ, ուր երեցները՝ չեն կարող: . . .

[Սակայն], . . .երիտասարդ կանայք չպիտի է զգան, որ նրանք երիտասարդ տղամարդկանց հետ համեմատվող պարտականություն ունեն: Նրանցից ոմանք շատ կցանկանան գնալ: Եթե

«Աշխարհն այսօր . . . Հիսուս Քրիստոսի ավետարանի կարիքն ունի, և եթե աշխարհը պետք է լսի այդ ավետարանը, պետք է լինեն սուրհանդակներ այն ուսուցանելու համար»:

այդպես է, նրանք պետք է խորհրդակցեն իրենց եպիսկոպոսի, ինչպես նաև իրենց ծնողների հետ: . . . Քույրերին ես ասում եմ, որ դուք մեծապես հարգված կլինեք, դուք կհամարվեք որպես պարտականության կրողներ, ձեր ջանքերը նույնչափ ընդունելի կլինեն Տիրոջը և Եկեղեցուն, անկախ նրանից, դուք կգնաք միսիա, թե ոչ:[19]

Բացի երիտասարդ երեցների և քույրերի կարիքից, միսիոներական դաշտում կա զույգերի աճող կարիք: Տարեց ամուսնացած զույգերը կատարում են սքանչելի աշխատանք միսիաներում: Ավելի շատերի կարիք կա: Հատկապես մենք կարիք ունենք նրանց, ովքեր օտար լեզուների ունակություններ ունեն: Նրանք կարող են ծառայել շատ պարտականություններում՝ նրբազգաց և հոգատար միսիայի նախագահների ղեկավարության ներքո:

Թոշակի անցնող մարդկանց աճող քանակով, ովքեր դեռ առողջ են և կենսունակ, կան շատերը, ովքեր կարող են Տիրոջ աշխատանքում լրացնել վիթխարի կարիքը:[20]

Մենք [ունենք] պաշտոնաթող տղամարդիկ և կանայք, ովքեր այս Եկեղեցու համար աշխարհով մեկ, իրենց ողջ կարողությամբ,

իմաստալից միսիոներական ծառայություն են մատուցում: Թիվը մեծանում է: Նրանք գնում են այնտեղ, ուր կանչվում են: Նրանք ծառայում են այնտեղ, որտեղ իրենց կարիքը կա: Ընկերություն է հաստատվում, կիսվում են հմտություններով, հնարավորություններ են բացվում նրանց համար, ովքեր երբեք չեն մոռանա այն տղամարդկանց և կանանց, ովքեր եկել են իրենց մեջ լիակատար անձնազոհության ոգով ուսուցանելու և բարիք անելու համար: Նրանք փող չեն ստանում: Նրանք գնում են իրենց հաշվին: Նրանց նվիրվածության չափն անսահման է: Նրանց ջանքերի պտուղները վեր են հաշվարկներից:[21]

4

Երբ մենք ներկայացնում ենք ուրիշներին ավետարանը, Տիրոջ Հոգին օգնում է հաղթահարել մեր միջև գոյություն ունեցող տարբերությունները:

Քանի որ մենք բոլորս եկել ենք նույն ծնողներից [որպես Աստծո զավակներ], մենք արձագանքում ենք նույն ճշմարտությանը: Այն փաստը, որ մեկի մաշկի գույնը կարող է թեթևակի տարբեր լինել, որ մեկի աչքերը կարող են ունենալ թեթևակիորեն տարբեր կտրվածք, որ մեկը կարող է կրել տարբեր ձևի հագուստ, ոչ մի ձևով չի դարձնում նրան (կին թե տղամարդ) տարբեր տեսակի անձնավորուություն: Տղամարդիկ և կանայք ողջ աշխարհում արձագանքում են նույն ազդակներին հիմնականում նույն ձևով: Նրանք ձգտում են ջերմության, երբ մրսում են, նրանք ունենում են նույնատիպ ցավեր, նրանք զգում են տխրություն, և նրանք ունենում են ուրախություն: . . .

Երբ տարբերությունները մեր հարևանների կամ ուրիշ մշակույթներում, թվում է, խոչընդոտներ են դառնում, երբ մենք ձգտում ենք կիսվել ավետարանով, լուռ քաղաքավարությունը սովորաբար վերացնում է այդ խոչընդոտները: Երբ մենք պահում ենք Տիրոջ պատվիրանները, որպեսզի ուրիշներին ծանոթացնենք ավետարանի հետ, ես վկայում եմ, որ Տիրոջ Հոգին օգնում է հաղթահարել տարբերությունները նրանց միջև, ով ուսուցանում է, և ով ուսուցանվում է: Տերը գործընթացը հստակ դարձրեց, երբ ասաց. «Հետևաբար, նա, ով քարոզում է[Հոգու միջոցով], և նա, ով ստանում է[Հոգու միջոցով], հասկանում են միմյանց, և երկուսն էլ շենանում են և միասին ցնծում» (ՎևՈւ 50.22:)

Ես բավարարված եմ, որ ամենաարդյունավետ միջոցը, որը մեզանից յուրաքանչյուրն ունի ավետարանով կիսվելու մեր կոչման մեջ՝ Տիրոջ Հոգին է: Մենք բոլորս տեսել ենք դա ուրիշների մեջ: Երբ մենք կատարում ենք Տիրոջ աշխատանքը, մենք այն զգում ենք նաև ինքներս մեր մեջ: Այդ դեպքերում թվում է մակերեսային տարբերությունները մեր և ուրիշների միջև, ում մենք ուսուցանում ենք, թեփուկների պես ընկնում են մեր աչքերից: (Տես 2 Նեփի 30.6:) Առաջանում է ընտանեկան կապերի ջերմություն և փոխըմբռնում, որը սքանչելի է : Մենք բառացիորեն հասկանում ենք միմյանց և մենք բառացիորեն շենանում ենք և միասին ցնծում:[22]

5

Երբ մենք առաջ գնանք հավատքով, Տերը կօրհնի մեր ջանքերը՝ ուրիշներին ավետարանը ներկայացնելու համար:

Իսկապես, մենք ներգրավված ենք մի սքանչելի և հրաշալի աշխատանքում: . . . Երկնքի Աստվածը իրականացրել է այս վերջին օրերի հրաշքը, և այն, ինչ մենք տեսել ենք, կանխավ ճաշակում ենք ավելի մեծ բաները, որոնք դեռ գալու են: Աշխատանքը կիրականացվի խոնարհ տղամարդկանց և կանանց կողմից, երիտասարդ, թե տարեց:[23]

Աշխատանքը հաջողություն կունենա, որովհետև Տերն է խոստացել.

«Եվ որտեղ որ ձեզ ընդունեն, այնտեղ կլինեմ նաև ես, քանզի ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ»: (ՎևՈւ 84.88:)

Մեզ աստվածայնորեն տրված հանձնարարությամբ, աստվածայնորեն խոստացված օրհնություններով, եկեք առաջ գնանք հավատքով: Երբ մենք այդպես վարվենք, Տերը կօրհնի մեր ջանքերը: Եկեք կատարենք մեր բաժինը ավետարանով կիսվելով մեր շրջապատում գտնվող մարդկանց հետ, առաջինը՝ մեր օրինակով, իսկ հետո՝ ոգեշնչված պատվիրանով:

Քարը, որը կտրվել է սարից՝ առանց ձեռքի, կշարունակի գլորվել, մինչև որ լցնի ողջ երկիրը»: (Տես Դան. 2:) Ես տալիս եմ ձեզ իմ վկայությունը՝ այս ճշմարտության մասին և այն ճշմարտության,

որ մեզանից յուրաքանչյուրը կարող է օգնել այն ուղիներով, որոնք պատշաճ են մեր հանգամանքներում, եթե մենք որոնենք մեր Երկնային Հոր առաջնորդությունը և ոգեշնչումը: Սա Աստծո աշխատանքն է, որ մենք անում ենք և Նրա օրհնությամբ մենք չենք ձախողվի:[24]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Ինչո՞ւ ենք երբեմն վախենում կիսվել ավետարանով: Որո՞նք են այն մի քանի ուղիները, որոնցով մենք կարող ենք հաղթահարել այդ վախը և օգնության հասնել ուրիշներին: (Տես բաժին 1:) Որո՞նք են միսիոներական հրաշքներից մի քանիսը, որոնց դուք ականատես եք եղել:
- Ինչո՞ւ են միսիոներները «լավագույն հաջողությունն ունենում, երբ անդամներն են դառնում այն աղբյուրը, որոնց միջոցով նոր ունկնդիրներ են գտնվում»: (Տես բաժին 2:) Որո՞նք են մի քանի այլ ուղիները, որոնցով անդամները կարող ենք պատրաստվել հանգստության օրվան:
- Ինչո՞ւ են լիաժամկետ միսիաներն այդքան ազդեցիկ նրանց կյանքում, ովքեր ծառայում են: Ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել իրենց երեխաներին լիաժամկետ միսիոներական ծառայության նախապատրաստվել: (Տես բաժին 3:) Ինչպե՞ս կարող են ընտանիքներն օգնել տարեց զույգերին ծառայելու նախապատարաստվելիս:
- Վերանայեք Մաս 4-ը: Որո՞նք են բոլոր մարդկանց համար ընդհանուր հատկանիշներից մի քանիսը: Մենք ինչպե՞ս կարող ենք հաղթահարել տարբերությունները, որոնք կարծես խոչընդոտներ են ավետարանով կիսվելիս: Նկատե՞լ եք, թե ինչպես է Տիրոջ Հոգին օգնել մարդկանց հաղթահարել տարբերությունները:
- Նախագահ Հինքլին շեշտադրել է, որ Տերը կօրհնի մեր ջանքերը լ ավետարանով կիսվելիս, եթե մենք «առաջ գնանք հավատքով» (բաժին 5): Ինչպե՞ս կարող եք ավետարանով կիսվելու ձեր հավատքը մեծացնել:

Սոնչվող սուրբ գրություններ

Եսայիա 52.7, Մատթեոս 28.19–20, Ալմա 26.1–5, ՎևՈւ 1.20–23, 4, 18.15–16, 38.40–41

Օգնություն ուսուցչին

«Մի վախեցեք լռությունից: Հաճախ մարդկանց ժամանակ է անհրաժեշտ՝ մտածելու համար և պատասխանելու հարցերին կամ արտահայտելու այն, ինչ իրենք զգում են: Դուք կարող եք դադար տալ հարցը տալուց հետո, հոգևոր փորձառությունով կիսվելուց հետո, կամ երբ մարդը դժվարություն է ունենում արտահայտվելիս» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 67). ([1999], 67):

Հղումներ

1. "The Question of a Mission," *Ensign,* May 1986, 40.
2. See Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 58.
3. "The Question of a Mission," 40.
4. See "Opening Remarks," *Ensign* or *Liahona,* May 2005, 5.
5. See "I Am Clean," *Ensign* or *Liahona,* May 2007, 60.
6. "Look to the Future," *Ensign,* Nov. 1997, 68.
7. "Opening Remarks," 6.
8. "True to the Faith," *Ensign,* May 1997, 67.
9. "Find the Lambs, Feed the Sheep," *Ensign,* May 1999, 110.
10. "A Time of New Beginnings," *Ensign,* May 2000, 87.
11. "The Miracle of Faith," *Ensign,* May 2001, 68.
12. "Be Not Afraid, Only Believe," *Ensign,* Feb. 1996, 5.
13. "Find the Lambs, Feed the Sheep," 105–7, 110.
14. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 374.
15. "To Men of the Priesthood," *Ensign* or *Liahona,* Nov. 2002, 57.
16. "There Must Be Messengers," *Ensign,* Oct. 1987, 2.
17. "Some Thoughts on Temples, Retention of Converts, and Missionary Service," *Ensign,* Nov. 1997, 52.
18. "To the Boys and to the Men," *Ensign,* Nov. 1998, 52.
19. "Some Thoughts on Temples, Retention of Converts, and Missionary Service," 52.
20. "There Must Be Messengers," 4.
21. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 2: 2000–2004* (2005), 517–18.
22. "We Have a Work to Do," *Ensign,* Feb. 1988, 5–6.
23. "We Have a Work to Do," 6.
24. "We Have a Work to Do," 6.



«Տերը թողեց իննսուն և ինևին, որպեսզի գտնի մոլորված ոչխարին»:

Սիրով հասնել նորադարձներին և պակաս ակտիվ անդամներին

«Մենք պիտի մշտապես տեղյակ լինենք ընկերակցության հակայական պարտականության մասին . . . նրանց հանդեպ, ովքեր գալիս են Եկեղեցի որպես նորադարձներ, և սիրով հասնենք նրանց, . . . ովքեր թաքնվում են անտարբերության ստվերում»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

Մի թեմա, որը Նախագահ Հինքլին շեշտադրել է որպես Եկեղեցու Նախագահ իր ծառայության ընթացքում, Եկեղեցու ոչ ակտիվներին ու նորադարձներին հասնելու կարևորությունն է: Նա կիսվել է այս հարցին վերաբերող իր անձնական ջանքերի շատ օրինակներով, որոնցից մեկը առանձնակի սրությամբ նկարագրել է որպես՝ «մեկը իմ ձախողումներից»: Նա մեկնաբանել է.

«Երբ որպես միսիոներ ես ծառայում էի Բրիտանական կղզիներում, ես և իմ զուգընկերը ուսուցանում էինք, և ինձ համար հաճույք էր մկրտել մի երիտասարդի: Նա լավ կրթված էր: Նա մաքուր էր: Նա ջանասեր էր: Ես այնքան հպարտ էի այս շնորհալի երիտասարդով, ով եկել էր Եկեղեցի: Ես զգացի, որ նա ունի բոլոր որակավորումները, որպեսզի մեր մարդկանց մեջ ղեկավար դառնա:

Նա մեծ քայլերով առաջ էր գնում՝ նորադարձից դառնալով անդամ: Նախքան իմ միսիայի ավարտը, ես մի կարճ ժամանակով հնարավորություն ունեցա նրա ընկերը լինել: Հետո ես տուն վերադարձա: Նրան մի փոքր պարտականություն տվեցին Լոնդոնի իր ճյուղում: Նա չգիտեր, թե ինչ է ակնկալվում իրենից:

Եվ մի սխալ գործեց: Կազմակերպության ղեկավարը, որտեղ նա ծառայում էր, մի մարդ էր, ով քիչ սեր էր ցուցաբերում և շատ քննադատում: Բավական անգութ եղանակով նա հետապնդում էր իմ ընկերոջը, ով մի պարզ սխալ էր թույլ տվել:

Երիտասարդն այդ երեկո մեր վարձած սրահից հեռացավ կսկիծով ու վիրավորված: . . . Նա ասաց ինքն իրեն. «Եթե մարդիկ այսպիսին են այստեղ, ապա ես ետ չեմ վերադառնա»:

Եվ նա դարձավ ոչ ակտիվ: Տարիներ անցան: . . . Երբ ես կրկին Անգլիայում էի, հուսահատ փորձեցի գտնել նրան: . . . Ես տուն եկա ու երկար որոնումներից հետո ի վերջո կարողացա գտնել նրա հետքը:

Ես գրեցի նրան: Նա պատասխանեց, բայց ոչ մի բառ չգրեց ավետարանի մասին:

Երբ հաջորդ անգամ կրկին Լոնդոնում էի, նորից փնտրեցի նրան: Ես գտա նրան իմ մեկնելու օրը: Զանգահարեցի նրան ու մենք հանդիպեցինք մետրոյի կայարանում: Մենք գրկախառնվեցինք: Ես քիչ ժամանակ ունեի մինչև իմ թռիչքը, բայց մենք համառոտ զրույց ունեցանք, մեծ հարգանք ցուցաբերելով միմյանց հանդեպ: Նա ինձ մի անգամ ևս գրկեց, նախքան իմ հեռանալը: Ես վճռեցի, որ երբեք այլևս չեմ կորցնելու նրա հետքը: . . .

Տարիներն անցան: Ես ծերացա, նա նույնպես: Նա պաշտոնաթող եղավ և տեղափոխվեց Շվեյցարիա: Մի առիթով, երբ Շվեյցարիայում էի, ես իմ ճանապարհը շեղեցի, որպեսզի գտնեմ այն գյուղը, որտեղ նա էր ապրում: Մենք միասին անցկացրինք օրվա ամենալավ կեսը՝ ես, իմ կինը և նա իր կնոջ հետ: Մենք հրաշալի ժամանակ անցկացրինք, բայց ակնհայտ էր, որ հավատի կրակը վաղուց մարել էր: Ես փորձեցի իմ իմացած բոլոր ճանապարհները, բայց չկարողացա ազդակ գտնել խթանելու այն: Ես շարունակեցի իմ նամակագրությունը: Ես նրան ուղարկում էի գրքեր, ամսագրեր, Թաբերնաքլի երգչախմբի ձայնագրություններ և այլ բաներ, որոնց համար նա իր երախտագիտությունն էր արտահայտում:

Մի քանի ամիս առաջ նա մահացավ: Նրա կինը գրեց ինձ, որ տեղեկացնի այդ մասին: Նա ասաց. «Դուք ամենալավ ընկերն էիք, որ նա երբևէ ունեցել էր»:

Արցունքներն իջնում էին իմ այտերով, երբ կարդում էի այդ նամակը: Ես գիտեի, որ նա ձախողվել էր: Հավանաբար, եթե ես այնտեղ լինեի՝ բարձրացնելու նրան, երբ նրան առաջին անգամ գետնով էին տվել, նրա կյանքը երևի այլ կերպ կդասավորվեր: Կարծում եմ, ես կարող էի օգնել նրան այն ժամանակ: Կարծում եմ, ես կարող էի կապել այն վերքը, որից նա տառապում էր: Ես միայն մի սփոփանք ունեմ: Ես փորձում էի: Ես միայն մի վիշտ ունեմ: Ինձ չհաջողվեց:

Մարտահրավերն այժմ ավելի մեծ է, քան երբևէ, քանի որ նորադարձների թիվն ավելի մեծ է, քան մենք երբևէ ունեցել ենք նախկինում: . . . Յուրաքանչյուր նորադարձ թանկ է մեզ համար: Յուրաքանչյուր նորադարձ Աստծո որդի կամ դուստր է: Յուրաքանչյուր նորադարձ մեծ ու լուրջ պարտականություն է»:[1]

Նախագահ Հինքլիի մտահոգությունը նորադարձների ու պակաս ակտիվ անդամների վերաբերյալ արդյունք էր այն բանի, որ նա իր փորձով տեսել էր, թե ավետարանն ինչպես է օրհնում մարդկանց կյանքը: Մի անգամ մի լրագրող հարցրեց նրան. «Ի՞նչն է ձեզ մեծագույն բավականություն պատճառում, երբ տեսնում եք Եկեղեցու աշխատանքն այսօր»: Նախագահ Հինքլին շարունակել է.

«Ես մեծագույն բավականություն եմ ստանում, տեսնելով, թե այս ավետարանն ինչ է անում մարդկանց համար: Դրա շնորհիվ նրանք նոր հայացքով են նայում կյանքին: Ավետարանը նրանց այնպիսի հեռանկար է տալիս, որը նրանք նախկինում երբեք չեն տեսել: Այն մեծացնում է նրանց տեսադաշտը՝ ազնիվն ու աստվածայինը տեսնելու համար: Ինչ-որ բան է պատահում նրանց հետ, որը նկատելի հրաշքներ է գործում: Նրանք նայում են Քրիստոսին և կենդանանում են»:[2]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Մենք մեծ պարտականություն ունենք՝ ծառայել մարդկանց:

Մենք պիտի հոգ տանենք մարդկանց մասին: Քրիստոսը միշտ խոսում էր անհատների մասին: Նա բուժում էր հիվանդներին անհատապես: Իր առակներում Նա խոսում էր անհատների

մասին։ Եկեղեցին մտահոգված է անհատներով, չնայած մեր թվերին։ Անկախ այն բանից, թե նրանք 6, 10, 12 կամ 50 միլիոն են, մենք երբեք տեսադաշտից չպիտի կորցնենք այն փաստը, որ անհատը կարևոր է մեզ համար։[3]

Մենք դառնում ենք մեծ համաշխարհային միություն։ Բայց մեր անդամները միշտ պիտի լինեն մեր հետաքրքրության և մտահոգության կենտրոնում։ Այս Եկեղեցու յուրաքանչյուր անդամ՝ տղամարդ թե կին, տղա թե աղջիկ, անհատականություն են։ Մեր մեծ պարտականությունն է տեսնել, որ յուրաքանչյուրը «հիշվի և սնուցվի Աստծո բարի խոսքով» (Մորոնի 6.4), որ Տիրոջ աշխատանքում և ճանապարհներում յուրաքանչյուրն ունենա աճի, արտահայտման և ուսուցման հնարավորություն, որ ոչ մեկը կենսական միջոցների պակաս չունենա, որ աղքատների կարիքների մասին հոգ տարվեն, որ յուրաքանչյուր անդամ խրախուսվի, ուսուցանվի և հնարավորություն ունենա առաջ շարժվելու անմահության ու հավերժական կյանքի ճանապարհով։ . . .

Այս աշխատանքը վերաբերում է մարդկանց, Աստծո յուրաքանչյուր որդուն ու դստերը։ Նկարագրելով այդ աշխատանքի ձեռբերումները, մենք խոսում ենք թվերի լեզվով, բայց մեր բոլոր ջանքերը պիտի նվիրված լինեն անհատի զարգացմանը։[4]

Ես ցանկանում եմ շեշտել, որ Եկեղեցում կա շատ դրական և հրաշալի ցանցային աճ։ . . . Մենք քաջալերված զգալու բոլոր պատճառներն ունենք։ Բայց եթե որևէ նորադարձի հավատը սառչում է, ողբերգություն է մեզ համար։ Ցանկացած անդամ, ով դառնում է ոչ ակտիվ, պիտի լուրջ մտահոգության առարկա դառնա։ Տերը թողեց իննսուն և իննին, որ գտնի իր կորած ոչխարին։ Նրա մտահոգությունն այդ [մեկի համար] այնքան լուրջ էր, որ Նա այն դարձրեց Իր մեծագույն դասերից մեկի թեման [տես Ղուկասի 15.1–7]։ Մենք չենք կարող հիասթափեցնել։ Եկեղեցու պաշտոնյաներին ու անդամությանը պիտի մշտապես տեղյակ պահենք ընկերակցության այն մեծ պարտականության մասին, որ նրանք ճշմարիտ, ջերմ ու հրաշալի եղանակով պիտի ընկերակցեն Եկեղեցու նորադարձներին և սիրով հասնեն նրանց, ովքեր այս կամ այն պատճառով թաքնվում են անտարբերության ստվերում։ Մի պարզ վկայություն կա, որ դա հնարավոր է կատարել, եթե այն կատարելու ցանկություն կա։[5]

2

Յուրաքանչյուր նորադարձ թանկ է և մեծ ու լուրջ պարտականություն է:

Ես համարում եմ, որ ամենամեծ ողբերգությունը Եկեղեցում այն է, որ մենք կորցնում ենք նրանց, ովքեր միանում են Եկեղեցուն, ապա հեռանում նրանից: Շատ քիչ բացառություններով հանդերձ, դա չպիտի պատահի: Ես համոզված եմ, որ բոլոր նրանք, ովքեր մկրտվում են միսիոներների կողմից, բավականաչափ ուսուցանվում են, որպեսզի բավարար գիտելիք ու վկայություն ստանան՝ որպես նրանց մկրտության երաշխավոր: Սակայն այս Եկեղեցուն միանալու գործընթացը պատահական անցում չէ: Դա նշանակում է խզել հին կապերը: Դա նշանակում է թողնել ընկերներին: Այն կարող է նշանակել նաև մի կողմ թողնել փայփայած համոզմունքները: Այն կարող է պահանջել սովորությունների փոփոխություն և ախորժակի զսպում: Շատ դեպքերում այն նշանակում է միայնակություն և վախ՝ անհայտի հանդեպ: Նորադարձի կյանքի այս դժվար ժամանակաշրջանում նա պիտի սնուցվի և ուժեղանա: Մեծ գին է վճարվել Եկեղեցում նրա ներկայության համար: Միսիոներների երկարատև ջանքերը և նրանց ծառայության գինը, հին կապերի խզումը և այս ամենի հետ զուգորդվող հոգեկան ցավը, որը հրամայական է դարձնում, որ այս անգին հոգիներին ողջունեն, հավաստիացնեն և օգնեն նրանց թուլության ժամին, հնարավորություն տան ուժեղանալու և խրախուսեն այն ամենի համար, ինչ նրանք անում են:[6]

Բացարձակ իմաստ չունի միսիոներական աշխատանքի կատարումը, եթե չպահպանենք այդ ջանքի պտուղները: Այդ երկուսը պիտի անբաժան լինեն: Նորադարձները թանկ են մեզ համար: . . . Յուրաքանչյուր նորադարձ մեծ ու լուրջ պարտականություն է: Բացարձակ անհրաժեշտ է, որ մենք հոգ տանենք նրանց մասին, ովքեր դարձել են մեր մի մասը: . . .

Օրերս ես մի հետաքրքիր նամակ ստացա: Այն գրվել էր մի կնոջ կողմից, ով Եկեղեցուն էր միացել մի տարի առաջ: Նա գրում է.

«Իմ մուտքը Եկեղեցի անօրինակ էր ու բավական դժվար: Այս անցյալ տարին ամենածանրն էր իմ կյանքում: Այն նաև

«Ես հրավիրում եմ յուրաքանչյուր անդամի՝ ընկերակցելով ու սիրով հասնել նրանց, ովքեր Եկեղեցի են գալիս որպես նորադարձներ»:

ամենաարդյունավետն էր: Որպես նոր անդամ, ես ամեն օր դժվարությունների եմ հանդիպում»: . . .

Նա հաստատում է, որ «Եկեղեցու անդամները չգիտեն, թե ինչ է նշանակում լինել Եկեղեցու նոր անդամ: Հետևաբար, նրանց համար համարյա անհնար է աջակցել մեզ»:

Իմ եղբայրներ և քույրեր, ես ձեզ կոչ եմ անում, որ եթե դուք չգիտեք, թե դա ինչպես է լինում, ապա գոնե փորձեք պատկերացնել, թե ինչպիսին է Եկեղեցու նոր անդամ լինելը: Այն կարող է մարդուն թողնել ահավոր մենակության մեջ: Այն կարող է հիասթափեցնող լինել: Այն կարող է վախեցնող լինել: Մենք՝ այս Եկեղեցու անդամներս, շատ ավելի ենք տարբերվում աշխարհից, քան պատկերացնում ենք: Ապա կինը շարունակում է.

«Երբ մենք՝ լսողներս, Եկեղեցու անդամներ ենք դառնում, զարմանում ենք, պարզելով, որ մենք մուտք ենք գործել բոլորովին նոր աշխարհ, աշխարհ, որն ունի իր ավանդույթները, մշակույթն ու լեզուն: Մենք հայտնաբերում ենք, որ չկա մի մարդ կամ մի տեղ, ուր կարող ենք դիմել, որպեսզի ուղղորդում ստանանք

այս նոր աշխարհում մեր ուղևորության համար: Սկզբում այս ուղևորությունը ոգևորիչ է, մեր սխալները նույնիսկ զվարճալի են, հետո ուղևորությունը դառնում է հիասթափեցնող և ի վերջո, հիասթափությունը վերածվում է զայրույթի: Եվ հիասթափության այս փուլում է, որ մենք հեռանում ենք: Մենք վերադառնում ենք այն աշխարհը, որտեղից եկել էինք, որտեղ մենք գիտեինք, թե ովքեր ենք մենք, որտեղ մենք ներդրում ունեինք, և որտեղ մենք կարողանում էինք խոսել դրա լեզվով»:[7]

Որոշ մարդիկ միայն մկրտվում են, բայց նրանց չեն ընկերակցում և երկու երեք ամիս անց նրանք հրաժեշտ են տալիս Եկեղեցուն: Իմ եղբայրներ և քույրեր, այնքան կարևոր է տեսնել, որ [նոր մկրտված անդամները] դարձի են գալիս, որ նրանք իրենց սրտում համոզվածություն ունեն այս հրաշալի աշխատանքի վերաբերյալ: Կարևոր է ոչ միայն գլուխը: Կարևոր է նաև սիրտը և այն, որ Սուրբ Հոգին դիպչի դրան, մինչև որ նրանք իմանան, որ այս աշխատանքը ճշմարիտ է, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո ճշմարիտ մարգարեն է, որ Մորմոնի գիրքը ճշմարիտ է, որ քահանայությունն այստեղ է՝ իր բոլոր պարգևներով և օրհնություններով: Ես պարզապես չեմ կարող չափազանց խիստ շեշտադրել սա:[8]

3

Յուրաքանչյուր նորադարձ կարիք ունի ընկերակցության, որևէ պարտականության ու Աստծո խոսքով սնուցվելու:

Մշտապես աճող նորադարձների թվի աճի հետ միասին մենք պիտի էական ջանքեր գործադրենք աջակցելու նրանց, երբ նրանք փորձում են գտնել իրենց ուղին: Նրանցից յուրաքանչյուրը երեք բանի կարիք ունի՝ ընկերոջ, պարտականության և «Աստծո բարի խոսքով» սնուցվելու (Մորոնի 6.4): Մեր պարտականությունն է ապահովել այս երեք կետերում նշվածները:[9]

Ընկերություն

[Նորադարձները] Եկեղեցի են գալիս, խանդավառվելով այն բանից, ինչ իրենք գտել են: Մենք պիտի անմիջապես կառուցենք այդ խանդավառության վրա: . . . Լսեք նրանց, ուղեկցեք նրանց, պատասխանեք նրանց հարցերին և եղեք նրանց կողքին բոլոր հանգամանքներում ու պայմաններում: . . . Ես հրավիրում եմ յուրաքանչյուր անդամի՝ ընկերակցությամբ ու սիրով հասնել նրանց, ովքեր Եկեղեցի են գալիս որպես նորադարձներ:[10]

Մենք նման պարտականություն ունենք նրանց նկատմամբ, ովքեր մկրտվում են Եկեղեցում: Մենք չենք կարող անտեսել նրանց: Մենք չենք կարող նրանց մենակ թողնել: Նրանք օգնության կարիք ունեն, երբ վարժվում են այս Եկեղեցու կենսակերպին ու մշակույթին: Եվ մեր մեծ օրհնությունն ու պարտականությունն է՝ առաջարկել այդ օգնությունը: . . . Մի ջերմ ժպիտը, մի ընկերական ձեռքսեղմումը և մի խրախուսական բառը կարող են հրաշքներ գործել:[11]

Եկեք օգնության հասնենք այս մարդկանց: Եկեք ընկերանանք նրանց հետ: Եկեք բարի լինենք նրանց հանդեպ: Եկեք խրախուսենք նրանց: Եկեք նրանց հավատին ու գիտելիքներին ավելացնենք Տիրոջ աշխատանքը:[12]

Ես խնդրում եմ, . . . որ դուք ձեր բազուկներով գրկեք նրանց, ովքեր գալիս են Եկեղեցի և նրանց համար լինեք ընկեր, սիրալիր ընդունեք ու սփոփեք նրանց, և մենք հրաշալի արդյունքներ կտեսնենք: Տերը կօրհնի ձեզ, որ դուք նպաստեք նորադարձների պահպանման այս մեծ գործընթացին:[13]

Պատասխանատվություն

Այս Եկեղեցին մարդկանցից ինչ-որ բան է սպասում: Նրա չափանիշները բարձր են: Այն ունի ուժեղ վարդապետություն: Այն մեծ ծառայություն է ակնկալում մարդկանցից: Նրանք ծուլորեն չեն շարժվում առաջ: Մենք ակնկալում ենք, որ նրանք գործեն: Մարդիկ արձագանքում են դրան: Նրանք սիրով են ընդունում ծառայելու հնարավորությունը, և երբ ծառայում են, աճում են գործելու իրենց ունակությամբ, հասկացողությամբ, որակավորումներով և առաջադիմում այդ գործերում:[14]

Ինչ-ոչ բան տվեք [նոր անդամներին] անելու: Առանց վարժանքի նրանց հավատը չի ամրանում: Հավատն ու վկայությունը նման են իմ թևերի մկաններին: Եթե ես օգտագործեմ այդ մկաններն ու սնուցեմ, նրանք կուժեղանան: Եթե ես դնեմ իմ ձեռքը վիրակապի մեջ և թողնեմ այնտեղ, այն կդառնա թույլ ու անօգուտ, և այդպես է նաև վկայության հետ:

Հիմա ձեզանից ոմանք ասում են, որ պատրաստ չեն պարտականություն ստանձնել: Բայց մեզանից ոչ մեկը պատրաստ չէր, երբ կոչում էր ստանում: Ես նույնը կարող եմ ասել իմ մասին: Կարծում եք, ես պատրա՞ստ էի այս մեծ ու սուրբ

Նախագահ Հինքլին սովորեցրել է, որ նորադարձները պիտի հնարավորություն ստանան ծառայելու Եկեղեցում:

կոչմանը: Ես ճնշված էի զգում: Ես անօգնական էի զգում: Ես դեռ ճնշված եմ զգում: Ես դեռ անօգնական եմ զգում: Բայց ես փորձում եմ առաջ գնալ, փնտրելով Տիրոջ օրհնությունները, փորձելով կատարել Նրա կամքը, հուսալով ու աղոթելով, որ իմ ծառայությունը ընդունելի լինի Նրա կողմից: Առաջին պարտականությունը, որ ես ունեցա այս Եկեղեցում, երբ տասներկու տարեկան էի, սարկավագների քվորումի նախագահի խորհրդականի կոչումն էր: Ես անօգնական էի զգում: Ես ճնշված էի զգում: Բայց ես փորձում էի, ինչպես որ դուք եք փորձում, իսկ դրանից հետո այլ պարտականություններ էին հանձնարարվում: Ջանքերը գործի դնելիս երբեք մի ունեցեք անօգնական լինելու զգացում, այլ միշտ ունեցեք երախտագիտության ու պատրաստակամության զգացում:[15]

Յուրաքանչյուր նորադարձ, ով գալիս է այս Եկեղեցի, պիտի անմիջապես պարտականություն ունենա: Այն երբեմն կարող է փոքր լինել, բայց փոփոխություն կբերի նրա կյանք:[16]

Իհարկե նորադարձը ամեն ինչ չէ, որ կիմանա: Նա հավանաբար սխալներ կգործի: Հետո ի՞նչ: Բոլորս էլ սխալներ ենք գործում: Կարևորը աճն է, որը կգա գործելու արդյունքում:[17]

Սնուցել Աստծո բարի խոսքով

Ես հավատում եմ, . . . որ այս նորադարձները վկայություն ունեն ավետարանի վերաբերյալ: Ես գիտեմ, որ նրանք հավատ ունեն Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ և գիտեն նրա աստվածային ճշմարտությունը: Ես հավատում եմ, որ նրանք անկեղծորեն ապաշխարել են իրենց մեղքերը և վճռականություն ունեն ծառայել Տիրոջը:

Մորոնին [ասում է] նրանց մկրտությունից հետո. «Եվ հետո, երբ նրանք մկրտության էին ընդունվում, և ներգործվում ու մաքրվում էին Սուրբ Հոգու զորությամբ, նրանք համարվում էին Քրիստոսի եկեղեցու ժողովրդի թվում. և նրանց անունները գրի էին առնվում, որպեսզի հիշվեին և սնուցվեին Աստծո բարի խոսքով՝ պահելու նրանց ճշմարիտ ուղու վրա, շարունակ պահելու նրանց արթուն աղոթքում, ապավինելով միմիայն Քրիստոսի արժանիքներին, որը նրանց հավատքի հեղինակն ու ամբողջացնողն էր» (Մորոնի 6.4):

Մեր օրերում, ինչպես այն ժամանակ, նորադարձները «դասվում էին եկեղեցու այն մարդկանց թվին . . . ում մասին պիտի հիշեին և սնուցեին Աստծո բարի խոսքով, մշտապես պահեին նրանց արդար ու մշտական աղոթքի ճանապարհի վրա»: . . . Եկեք օգնենք նրանց, քանի որ նրանք առաջին քայլերն են անում որպես անդամներ:[18]

Անհրաժեշտ է, որ [յուրաքանչյուր նորադարձ] քահանայության քվորումի, Սփոփող Միության, Երիտասարդ Տղամարդկանց կամ Երիտասարդ Կանանց, Կիրակնօրյա դպրոցի կամ Երեխաների Միության մաս կազմի: Նրան պիտի խրախուսել, որ գա հաղորդության ժողովին՝ ճաշակելու հաղորդությունը, նորոգելու ուխտերը, որոնք նա կապել է մկրտության ժամանակ:[19]

4

Վերադառնալով Եկեղեցու գործունեությանը կարելի է շատ բան ձեռք բերել և ոչինչ չկորցնել:

Ամբողջ աշխարհում կան հազարավոր մարդիկ, . . . ովքեր միայն անունով են Եկեղեցու անդամ, բայց հեռացել են, սակայն իրենց սրտի խորքում փափագում են վերադառնալ, բայց չգիտեն՝ ինչպես ու շատ երկչոտ են փորձելու համար: . . .

Ձեզ համար, իմ եղբայրներ և քույրեր, որ վերցրել եք ձեր հոգևոր ժառանգությունն ու հեռացել, իսկ հիմա դատարկություն եք զգում ձեր կյանքում, վերադարձի ճանապարհը բաց է։ . . . Եթե կատարեք առաջին երկչոտ քայլը վերադառնալու համար, դուք կգտնեք ձեզ ընդունող բաց բազուկներ՝ ողջունելու ձեզ և ընկերներ՝ խրախուսելու ձեզ։

Կարծում եմ, ստույգ գիտեմ, թե ձեզանից ոմանք ինչու են հեռացել։ Ձեզ վիրավորել էր մի անխոհեմ մարդ, իսկ դուք սխալմամբ նրա գործողություններն ընդունել եք որպես Եկեղեցուն բնորոշ երևույթ։ Կամ դուք երևի տեղափոխվել եք մի տարածքից, որտեղ ձեզ ճանաչում էին, մեկ այլ տարածք, որտեղ դուք հիմնականում մենակ էիք և այնտեղ մեծացել եք Եկեղեցու մասին շատ քիչ գիտելիքով։

Կամ երևի դուք ներքաշվել եք մի ուրիշ շրջապատի մեջ, կամ ձեռք եք բերել սովորություններ, որոնք անհամատեղելի էին Եկեղեցու զուգորդումների հետ։ Կամ երևի աշխարհի իմաստության մեջ ձեզ ավելի իմաստուն եք համարել Եկեղեցու ձեր ընկերներից և գոռոզ տեսքով հեռացել եք նրանց շրջապատից։

Ես այստեղ չեմ եկել կանգ առնելու պատճառների վրա։ Կարծում եմ՝ դուք ևս։ Անցյալը թողեք ետևում։ . . . Ձեռք բերելու շատ բան կա, իսկ կորցնելու՝ ոչինչ։ Վերադարձեք, իմ ընկերներ։ Եկեղեցում ավելի շատ խաղաղություն կգտնեք, քան դուք երբևէ ունեցել եք։ Կան շատ մարդիկ, ում ընկերությունը դուք կվայելեք։[20]

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, որ . . . հեռացել եք, Եկեղեցին ձեր կարիքն ունի, իսկ դուք՝ Եկեղեցու կարիքը։ Դուք կգտնեք շատ ականջներ, որ կլսեն ըմբռնումով։ Կլինեն շատ ձեռքեր՝ օգնելու ձեզ գտնել հետադարձի ուղին։ Կլինեն սրտեր, որոնք կջերմացնեն ձեր սրտերը։ Կլինեն արցունքներ, բայց ոչ դառնության, այլ հրճվանքի։[21]

5

Վերջին Օրերի Սրբերը, ովքեր վերադառնում են Եկեղեցու գործունեությանը, իրենց նորից կզգան, ինչպես տանը։

Մի կիրակի ես Կալիֆորնիա Սիթիում էի՝ ցցի համաժողովին մասնակցելու համար։ Իմ անունն ու նկարը տպվել էին

տեղական թերթում: Ցցի կենտրոնում լսվեց հեռախոսազանգ, երբ ես ու ցցի նախագահը մտնում էինք շենք այդ առավոտ: Զանգը ինձ էր վերաբերում, և զանգողը ներկայացավ: Նա ցանկանում էր տեսնել ինձ: Ես ներողություն խնդրեցի ժողովից հեռանալուց համար և խնդրեցի ցցի նախագահին, որ ինքը անցկացնի ժողովը: Ես ավելի կարևոր բան ունեի անելու:

Իմ ընկերը եկավ՝ երկչոտ ու վախեցած: Նա բացակայել էր երկար ժամանակ: Մենք գրկախառնվեցինք, որպես երկար ժամանակ բաժանված եղբայրներ: Սկզբում խոսակցությունը կցկտուր էր, բայց շուտով այն ջերմացավ, երբ քննարկեցինք շատ տարիներ առաջ Անգլիայում միասին անցկացրած օրերը: Այս ուժեղ մարդու աչքերում արցունքներ կային, երբ նա խոսում էր Եկեղեցու մասին, որի արդյունավետ մասն էր կազմում մի ժամանակ, ապա խոսում էր երկար, դատարկ տարիներից, որոնք հետևեցին դրան: Նա կանգ առավ դրանց վրա որպես մեկը, ով խոսում էր մղձավանջի մասին: Երբ նա նկարագրում էր այդ կորած տարիները, մենք խոսեցինք նրա վերադարձի մասին: Նա կարծում էր, որ դժվար կլինի, բայց համաձայնեց փորձել:

Վերջերս ես նրանից նամակ ստացա: Նա գրում էր. «Ես վերադարձա: Ես վերադարձա, ինչ հրաշալի է նորից տանը լինել»:

Այս նույն բանը ձեզ է վերաբերում, իմ ընկերներ, ովքեր նրա նման փափագում են վերադառնալ, բայց դժկամությամբ են կատարում առաջին քայլը: Մեզ թույլ տվեք դիմավորել ձեզ, որտեղ դուք հիմա կանգնած եք, բռնել ձեր ձեռքից և օգնել ձեզ: Խոստանում եմ, ձեզ լավ կզգաք նորից տանը լինելով:[22]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Մենք ինչո՞ւ պիտի «միշտ հետաքրքրված ու մտահոգ լինենք . . . անհատով», նույնիսկ աշխահասփյուռ եկեղեցում: (Տես բաժին 1:) Ե՞րբ եք օրհնվել ինչ-որ մեկի կողմից, ով անձնապես հետաքրքրվել է ձեզանով: Մենք ինչպե՞ս կարող ենք ավելի զգայուն լինել յուրաքանչյուր մարդու մասին հոգ տանելիս:

- Ի՞նչ կարող ենք սովորել և կիրառել այն նամակից, որով Նախագահ Հինքլին կիսվում է 2-րդ բաժնում: Խորհեք, թե ի՞նչ կարող եք անել, որպեսզի զորացնեք նրանց, ովքեր աշխատում են կառուցել իրենց հավատը:
- Ինչո՞ւ յուրաքանչյուր նորադարձ ընկերակցության, պարտականության և Աստծո խոսքով սնուցվելու կարիք ունի: (Տես բաժին 3:) Ինչպե՞ս կարող ենք ընկերակցել նորադարձներին: Ինչպե՞ս կարող ենք աջակցել նորադարձներին կատարել Եկեղեցու իրենց պարտականությունները: Ինչպե՞ս կարող ենք օգնել նորադարձներին՝ «սնուցվել Աստծո բարի խոսքով»:
- Անդամների համար ինչո՞ւ է երբեմն դժվար վերադառնալ Եկեղեցի: (Տես բաժին 4:) Ինչպե՞ս կարող ենք օգնել մարդկանց վերադառնալ: Ե՞րբ եք զգացել կամ ականատես եղել այն հրճվանքին, որն ուղեկցել է ինչ-որ մեկի վերադարձին դեպի Եկեղեցի:
- Ի՞նչ կարող ենք սովորել այն պատմությունից, որը Նախագահ Հինքլին մեջբերում է 5-րդ բաժնում: Խորհեք, թե ինչպես կարող եք օգնել որևէ ոչ ակտիվ անդամի «նորից տուն վերադառնալ»:

Առնչվող սուրբ գրություններ

Ղուկասի 15, Հովհաննեսի 10.1–16, 26–28, 13.34–35, Մոսիայի 18.8–10, Հելամանի 6.3, 3 Նեփիի 18.32, Մորոնիի 6.4–6, ՎևՈւ 38.24

Օգնություն ուսումնասիրողին

«Շատերը համարում են, որ ուսումնասիրության համար լավագույն ժամանակը առավոտն է՝ գիշերային հանգստից հետո: . . . Ուրիշները նախընտրում են ուսումնասիրել խաղաղ ժամերին, երբ աշխատանքն ու օրվա մտահոգություններն ավարտվել են: . . . Հավանաբար, օրվա մեջ նախընտրած ժամից ավելի կարևոր է, որ կանոնավոր ժամ սահմանվի ուսումնասիրության համար (Howard W. Hunter, "Reading the Scriptures," *Ensign,* Nov. 1979, 64):

Հղումներ

1. "Converts and Young Men," *Ensign,* May 1997, 47–48.
2. "Converts and Young Men," 48.
3. "Inspirational Thoughts," *Ensign,* Oct. 2003, 5.
4. "This Work Is Concerned with People," *Ensign,* May 1995, 52–53.
5. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 537–38.
6. "There Must Be Messengers," *Ensign,* Oct. 1987, 5.
7. "Find the Lambs, Feed the Sheep," *Ensign,* May 1999, 108.

8. "Messages of Inspiration from President Hinckley," *Church News,* Apr. 5, 1997, 2; see also "Inspirational Thoughts," 3.
9. "Converts and Young Men," 47
10. "Some Thoughts on Temples, Retention of Converts, and Missionary Service," *Ensign,* Nov. 1997, 51.
11. "Inspirational Thoughts," 4.
12. "Latter-day Counsel: Excerpts from Recent Addresses of President Gordon B. Hinckley," *Ensign,* July 1999, 73.
13. "Words of the Prophet: Reach Out," *New Era,* Feb. 2003, 7.
14. "Inspirational Thoughts," 3–4.
15. *Teachings of Gordon B. Hinckley,* 538.
16. "Inspirational Thoughts," *Ensign,* July 1998, 4.
17. "Find the Lambs, Feed the Sheep," 108.
18. "Converts and Young Men," 48.
19. "Find the Lambs, Feed the Sheep," 108.
20. "Everything to Gain—Nothing to Lose," *Ensign,* Nov. 1976, 95–96.
21. "And Peter Went Out and Wept Bitterly," *Ensign,* May 1979, 67.
22. "Everything to Gain—Nothing to Lose," 97.

Սուրբ Տաճարի օրհնությունները

«Տաճարային արարողությունները դառնում են բարձրագույն օրհնությունները, որ Եկեղեցին կարող է առաջարկել»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

«Ես հավատում եմ, որ ոչ մի Եկեղեցու անդամ չի ստանա այն մեծագույնը, որն այս Եկեղեցին պիտի տա, մինչև նա չստանա իր տաճարային օրհնությունները Տիրոջ տանը»,-ասել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին 1997 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովի քահանայության նիստում: Համապատասխանաբար մենք անում ենք այն ամենը, ինչ գիտենք, թե ինչպես անել, որ արագացնենք այս սրբազան շենքերի կառուցումը և ավելի մատչելի դարձնենք այն օրհնությունները, որոնք սովորաբար ստանում են այնտեղ»:[1] Նա անվանեց մի քանի տաճարներ, որոնք կառուցման և ծրագրման տարբեր փուլերում էին, իսկ հետո մի հայտարարություն արեց, որ փոխելու էր մարդկանց կյանքը ողջ աշխարհում.

«Կան Եկեղեցու շատ տարածքներ, որոնք հեռու են, որտեղ անդամությունը փոքր է և հավանաբար շատ չի աճի մոտ ապագայում: Միթե՞ նրանց, ովքեր ապրում են այս վայրերում, պիտի հավիտյան մերժվեն տաճարային արարողությունների օրհնությունները: Երբ մի քանի ամիս առաջ այցելեցինք այդպիսի մի տարածք, մենք աղոթքով խորհրդածեցինք այս հարցի շուրջ: Պատասխանը, թվում է, եկավ պարզ ու հստակ:

«Մենք կկառուցենք փոքր տաճարներ այդ տարածքներից մի քանիսում: . . . Դրանք կկառուցվեն տաճարային չափանիշների համաձայն, որոնք շատ ավելի բարձր են, քան ժողովատների չափանիշները: Դրանք կիրականացնեն մկրտություններ

Մեքսիկայի Քոլոնիա Զուարեզ Չիհուահուա Տաճարը

մահացածների համար, օժտման ծառայություն, կնքումներ և մյուս բոլոր արարողությունները, որոնք պետք է արվեն Տիրոջ տանը, ինչպես ողջերի, այնպես էլ մահացածների համար»:[2]

Այս ծրագրի համար ոգեշնչումը սկսվել էր 20 տարի առաջ, երբ Նախագահ Հինքլին ծառայում էր որպես նախագահ Եկեղեցու Տաճարային Հանձնաժողովում: Մտահոգված լինելով, որ շատ Վերջին Օրերի Սրբերի համար հասանելի չէին տաճարային օրհնությունները, նա գրել էր իր օրագրում.«Վաշինգտոնի Տաճարի գնով, որն [այդ ժամանակ շինարարության մեջ էր],Եկեղեցին կարող էր կառուցել [ավելի փոքր շատ] տաճարներ: Դա տաճարները կտաներ դեպի մարդիկ, փոխարենը մարդկանց ստիպելու երկար ճանապարհորդել մեծ տարածություններ դրանց հասնելու համար»:[3]

1997 թվականին մի հայտնություն Տիրոջից այս գաղափարը կյանքի կոչեց: Նախագահ Հինքլին ինչ-որ բանով կիսվեց այդ հայտնության վերաբերյալ, երբ նա հղեց նվիրագործման աղոթքը՝ Մեքսիկայի Կոլոնիա Ջուարեզ Չիհուահուա Տաճարի համար: «Այստեղ՝ Մեքսիկայի հյուսիսային մասում էր,- աղոթեց նա -, որ Դու հայտնեցիր ավելի փոքր տաճարների վերաբերյալ գաղափարն ու ծրագիրը, ամբողջական ամեն անհրաժեշտ մանրամասնով, բայց հարմարեցված չափսերով Եկեղեցու անդամների կարիքներին և հանգամանքներին Քո այգու այս տարածքում: Այդ հայտնությունը եկել է Քո ժողովրդին, ովքեր եղել են ճշմարիտ և հավատարիմ այս գաղութներում՝ օգնելու ձգտումից և աղոթքից»:[4]

Ավելի փոքր տաճարներ կառուցելու հայտարարությունից վեց ամիս անց Նախագահ Հինքլին արեց ևս մեկ նշանավոր հայտարարություն.

«Մենք ճանապարհորդել ենք և հանդիպել տարբեր պայմաններում ապրող Եկեղեցու անդամների հետ: Ես հանդիպել եմ շատերի հետ, ովքեր քիչ են օգտվել այս աշխարհի բարիքներից: Բայց նրանք ունեն իրենց սրտերում մի մեծ վառվող հավատ վերջին օրերի այս աշխատանքի վերաբերյալ: Նրանք սիրում են Եկեղեցին: Նրանք սիրում են ավետարանը: Նրանք սիրում են Տիրոջը և կամենում են կատարել Նրա կամքը: Նրանք վճարում են իրենց տասանորդը, որքան էլ այն համեստ լինի: Նրանք վիթխարի զոհողություններ են կատարում տաճարներ

այցելելու համար: Նրանք օրերով ճանապարհորդում են, երբեմն էժան ավտոբուսներով և հին նավակներով: Նրանք խնայում են իրենց փողը և մնում առանց փողի, այդ բոլորը հնարավոր դարձնելու համար:

«Նրանք կարիք ունեն մոտիկ գտնվող տաճարների՝ փոքրիկ, գեղեցիկ, ծառայողունակ տաճարների: Հետևաբար, օգտվելով առիթից ես հայտարարում եմ ողջ Եկեղեցուն մոտ 30 ավելի փոքր տաճարներ անմիջապես կառուցելու մի նախագծի մասին: . . .

«Սա կլինի վիթխարի նախաձեռնություն: Դրա նման որևէ բան երբևէ չի փորձվել նախկինում: . . . Ընդամենը դառնում է 47 նոր տաճար՝ ի հավելումն 51 այժմ գործող տաճարների: Կարծում եմ, լավ կլինի ավելացնել ևս 2-ը, դարձնելով կլոր 100՝ մինչև այս դարի վերջը, որը կլինի 2000 տարի «մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մարմնի մեջ գալուստից» սկսած (ՎևՈւ 20.1): Այս ծրագրում մենք առաջ ենք շարժվում այնպիսի արագությամբ, որը երբեք չի եղել նախկինում»:[5]

2000 թվականի հոկտեմբերի 1-ին Նախագահ Հինքլին նվիրագործեց Բոստոն Մասսաչուսեթս Տաճարը՝ 100-րդ գործող տաճարը: Մինչև տարվա վերջ նա նվիրագործեց երկու տաճար Բրազիլիայում: Եվ երբ նա մահացավ 2008 թվականի հունվարի 27-ին, Եկեղեցին ուներ 124 գործող տաճար, հայտարարված ունենալով ևս 13-ը: Նախագահ Հինքլին մասնակցել էր 124 գործող տաճարներից մեծ մասի պլանավորմանն ու կառուցմանը և անձնապես նվիրագործել էր դրանցից 85-ը:

Նույնիսկ, երբ Նախագահ Հինքլին հայտարարեց մեծ թվով նոր տաճարների մասին և, նույնիսկ, երբ նա հիանում էր նրանց գեղեցկությամբ, նա հիշեցրեց Վերջին Օրերի Սրբերին այդ սրբազան շինությունների նպատակի մասին՝ օրհնել անձանց և ընտանիքներին մեկ առ մեկ: Խոսելով Սան Դիեգո Կալիֆորնիայի Տաճարի մասին, նա ասել է. «Ինչ՞ հրաշակերտ գեղեցկությամբ կառույց է այն: Բայց իր ողջ գեղեցկությամբ հանդերձ, այդ կառույցը ընդամենը մի միջոց է նպատակին հասնելու համար, և ոչ թե ինքնանպատակ մի բան: Այդ շինությունը կառուցվել է և նվիրագործվել սրբազան արարողություններ կատարելու համար, որը Տերը հայտնել է այս ժամանակաշրջանում:[6]

Մեկ այլ առիթով նա ասել է. «Ոչ մի մարդ չունի ամբողջական ավետարանը, մինչև նա չկարողանա [ընդունել տաճարի օրհնությունները]: Իսկ պատասխանատվությունը մնում է մեզ վրա, որպեսզի մենք հոգ տանենք, որ շինությունները մատչելի լինեն: Ես չգիտեմ, թե որքան երկար ես կծառայեմ, բայց հուսով եմ ավարտել իմ օրերը Տիրոջ տաճարները կառուցելով, տանելով տաճարները ժողովրդին մոտ, որպեսզի նրանք ունենան սքանչելի օրհնությունները, որոնք պիտի ձեռք բերվեն այնտեղ»:[7]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Տաճարները մեր վկայության արտահայտություններն են, և դրանք ներկայացնում են մեր երկրպագության գագաթնակետը:

Յուրաքանչյուր տաճար, որ կառուցվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից, կանգնում է որպես այս ժողովրդի վկայության արտահայտություն, որ Աստված՝ մեր Երկնային Հայրը, ապրում է, որ Նա բոլոր սերունդների Իր որդիների և դուստրերի համար ծրագիր ունի, որ Նրա Միրելի Որդին՝ Հիսուս Քրիստոսը, ով ծնվել էր Հուդայի Բեթլեհեմում և խաչվել Գողգոթայի խաչի վրա, աշխարհի Փրկիչն է ու Քավիչը, որի քավող զոհաբերությունը հնարավոր է դարձնում այդ ծրագրի իրականացումը յուրաքանչյուրի հավերժական կյանքում, ով ընդունում է և ապրում ավետարանով:[8]

Այն ամենը, ինչ տեղի է ունենում տաճարում, իր տեսակի մեջ բարձրացնող և ազնվացնող է: Այն խոսում է կյանքի մասին այստեղ և կյանքի մասին՝ մահից հետո: Այն խոսում է անձնավորության կարևորության մասին, որպես Աստծո զավակ: Այն խոսում է ընտանիքի կարևորության մասին, որպես Ամենազորի ստեղծագործություն: Այն խոսում է ամուսնական հարաբերության հավերժության մասին: Այն խոսում է ավելի մեծ փառքի արժանանալու մասին: Այն լույսի վայր է, խաղաղության վայր, սիրո վայր, որտեղ մենք առնչվում ենք հավերժականի հետ:[9]

Ամեն տաճար . . . ի վերջո կանգնած է որպես մարդկային հոգու անմահության հանդեպ մեր հավատի հուշարձան, որ մահկանացու կյանքի այս փուլը, որի միջով մենք անցնում ենք, անընդհատ դեպի վեր մագլցելու մասն է և անկասկած, ինչպես

որ այստեղ կյանք կա , կյանք կլինի նաև այնտեղ: Դա մեր ամուր համոզմունքն է: Այն գալիս է Փրկիչի Քավության միջոցով, և տաճարը դառնում է, ինչպես ես նշեցի, կամուրջ այս կյանքից դեպի հաջորդը: Տաճարը կապված է անմահության հետ:[10]

«Այս յուրահատուկ և սքանչելի շենքերը և այնտեղ կատարվող արարողությունները ներկայացնում են մեր երկրպագության գագաթնակետը: Այդ արարողությունները դառնում են մեր աստվածաբանության առավել խորը արտահայտություններ:[11]

Սուրբ բաներն արժանի են սուրբ վերաբերմունքի: . . . Երբ դուք հեռանում եք Տիրոջ տան դռներից, հավատարիմ եղեք սրբազան վստահությանը՝ չխոսելու այն մասին, ինչը սուրբ է և սրբագործված:

Տերն ասել է. «Հիշեք, որ այն ինչ գալիս է վերևից, սրբազան է և պետք է խոսվի զգուշությամբ, և Հոգու դրդումով» (ՎևՈ 63.64)»: Եվ կրկին. «Մի կատակիր սրբազան բաների հետ»: (ՎևՈ 6.12:)[12]

2

Տաճարային արարողությունների միջոցով մենք ստանում ենք ավետարանի մեծագույն օրհնությունները:

Այս տաճարները, որոնք այժմ կետագծում են երկիրը, անհրաժեշտ են Փրկիչի Քավության ամբողջական իրականացման համար: Այստեղ, Սուրբ Քահանայության իշխանության ներքո, կսպասավորվեն այն արարողությունները, որոնք ոչ միայն տանում են դեպի փրկություն, այլ նաև հավերժական վեհացում:[13]

Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, տվեց Իր կյանքը Գողգոթայի խաչի վրա՝ որպես քավություն մարդկության մեղքերին: Նրանը փոխարինաբար զոհաբերություն էր մեզանից յուրաքանչյուրի համար: Այդ զոհաբերության միջոցով եկավ հարության խոստումը բոլորի համար: Սա եկավ Աստծո շնորհի միջոցով, առանց մարդկային որևէ ջանքի: Եվ բացի սրանից, սուրբ քահանայության բանալիների միջոցով, որոնք շնորհվել էին Տասներկուսին Տիրոջ կողմից, երբ Նա քայլում էր նրանց մեջ, այդ բանալիները, որոնք վերականգնվեցին այս տնտեսությունում նրանց կողմից, ովքեր հնում կրում էին դրանք, սրանց միջոցով եկան լրացուցիչ մեծ օրհնություններ, ներառյալ այն անզուգական և նշանակալի արարողությունները, որոնք սպասավորվում են Տիրոջ տանը:

Միայն այդ արարողություններում է իրականացվում «քահանայության լրիվության» գործադրումը: (ՎևՈւ 124.28:)[14]

Տաճարային արարողությունները դառնում են բարձրագույն օրհնությունները, որ Եկեղեցին կարող է առաջարկել: [15]

Տաճարային օրհնությունները, ինչպես տղամարդկանց այնպես էլ կանանց համար, ովքեր արժանի են մտնելու այնտեղ . . . ներառում են մեր լվացումները և օծումները, որպեսզի մենք կարողանանք մաքուր լինել Տիրոջ առջև: Դրանք ներառում են հրահանգման ծառայությունը, որում մեզ տրվում է պարտականությունների և օրհնությունների մի օժտում, որը դրդում է մեզ համահունչ վարվել ավետարանի սկզբունքների հետ: Դրանք ներառում են կնքող արարողությունները, որոնցով, այն ինչ կապվում է երկրի վրա, կապվում է երկնքում, ապահովելով ընտանիքի հարատևությունը:[16]

[Մի անգամ] ինձ կանչեցին հիվանդանոց մի մոր անկողնու մոտ, ով լուրջ հիվանդության վերջին փուլում էր : Նա կարճ ժամանակ անց կյանքից հեռացավ, թողնելով իր ամուսնուն և չորս երեխաներին, ներառյալ վեց տարեկան մի փոքրիկ տղայի: Առկա էր խորը և ցավագին ու ողբերգական վիշտ: Բայց արցունքների միջից փայլում էր մի հավատ՝ զեղեցիկ և անկասկած, որ այնպես հաստատ ինչպես այժմ ցավալի բաժանումն էր, մի օր լինելու էր ուրախ վերամիավորում, քանի որ ամուսնությունը սկսվել էր սուրբ քահանայության իշխանության ներքո ժամանակի և հավերժության համար Տիրոջ տանը կնքումով: . . .

Շատերն են ճանապարհորդել [մեծ տարածություններ]՝ ստանալու տաճարային ամուսնության օրհնությունները: Ես տեսել եմ մի խումբ Վերջին Օրերի Սրբերի Ճապոնիայից, ովքեր մինչև իրենց հայրենիքում տաճար կառուցվելը, իրենց զրկել էին ուտելիքից, որպեսզի հնարավոր դարձնեին երկար ճանապարհորդությունը դեպի Լայի Հավայի Տաճարը: Նախքան Յոհաննեսբուրգում տաճար ունենալը, մենք հանդիպեցինք նրանց, ովքեր զրկել էին իրենց առաջին անհրաժեշտության իրերից, որպեսզի կարողանային թռչել 7000 մղոն (11000-կմ) Հարավային Աֆրիկայից մինչև Անգլիայի Սուրբեյ Տաճարը: Նրանց աչքերում լույս կար և ժպիտ դեմքին, վկայություններ նրանց շուրթերից, որ այն արժեր անսահման ավելին, քան այն ինչ արժեցել էր:

Եվ ես հիշում եմ, թե ինչպես Նոր Զելանդիայում շատ տարիներ առաջ լսեցի մի մարդու վկայությունը Ավստրալիայի հեռավոր մասերից, ով նախկինում կնքվելով քաղաքացիական իշխանությամբ, իսկ Եկեղեցուն միանալուց հետո իր կնոջ և երեխաների հետ ճանապարհորդել էր այդ լայնարձակ մայրցամաքի ողջ լայնքով, այդ ժամանակ Տասմանի ծովով դեպի Օքլենդ և ներքև դեպի տաճար՝ Վայկատոյի գեղեցիկ հովտում: Ես հիշում եմ նրա խոսքերը. «Մենք մեզ չէինք կարող թույլ տալ գալ: Մենք ունեինք մի հին ավտոմեքենա , կահույք և ամանեղեն : Ես ասացի իմ ընտանիքին. «Մենք չենք կարող մեզ թույլ տալ գնալ» Այնուհետև ես նայեցի իմ գեղեցիկ կնոջ և գեղեցիկ երեխաների դեմքերին և ասացի. «Մենք մեզ չենք կարող թույլ տալ չգնալ: Եթե Տերը տա ինձ ուժ, ես կարող եմ աշխատել և բավականաչափ վաստակել մեկ ուրիշ մեքենայի, կահույքի ու ամանեղենի համար, բայց եթե ես կորցնեմ իմ այս սիրելիներին, ես իսկապես աղքատ կլինեմ՝ ինչպես կյանքում, այնպես էլ հավերժության մեջ»:[17]

Զարմանալի չէ, սիրելի եղբայրներ և քույրեր, որ տաճարների բացման հետ . . . ես տեսել եմ ուժեղ տղամարդկանց արցունքները, ովքեր գրկել են իրենց կանանց այս սրբազան տների զոհասեղանների մոտ: Ես տեսել եմ հայրերի և մայրերի արցունքները, երբ նրանք գրկել են իրենց զավակներին այդ նույն զոհասեղանների մոտ: Այստեղ գործող զորության միջոցով, նրանք սկսել են հասկանալ, որ ոչ ժամանակը, ոչ էլ մահը չեն կարող կործանել այն կապերը, որոնք նրանց կապում են միմյանց:[18]

3

Տաճարը ծառայության մի սրբավայր է, որտեղ մենք ստանում ենք փրկարար արարողություններ նրանց համար, ովքեր մահացել են առանց ավետարանը ստանալու:

Սակայն կան բազում միլիոնավոր մարդիկ, ովքեր ապրել են երկրի վրա և երբեք հնարավորություն չեն ունեցել լսելու ավետարանի մասին: Արդյո՞ք նրանց կմերժվի Եկեղեցու տաճարներում տրվող այդպիսի օրհնությունները:

Կենդանի փոխանորդների միջոցով, ովքեր կանգնում են մահացածների փոխարեն, այդ նույն արարողությունները մատչելի են նրանց, ովքեր հեռացել են մահկանացու կյանքից:

Հոգևոր աշխարհում այդ նույն անհատները այլևս ազատ են ընդունելու կամ մերժելու իրենց համար կատարված այդ երկրային արարողությունները, որոնք են՝ մկրտությունը, ամուսնությունը և ընտանեկան հարաբերությունների կնքումը: Տիրոջ աշխատանքում հարկադրական ոչինչ չկա, սակայն հնարավորություն պետք է ընձեռվի:[19]

Սա ծառայության սրբավայր է: Այս սրբազան տանը աշխատանքի մեծ մասը կատարվում է փոխարինաբար նրանց համար, ովքեր անցել են մահվան վարագույրից այն կողմ: Չկա դրա հետ համեմատելի որևէ այլ աշխատանք: Այն ավելի է մոտենում Աստծո Որդու փոխարինաբար զոհաբերությանը ողջ մարդկության համար, քան որևէ այլ աշխատանք, որին ես տեղյակ եմ: Չեն սպասվում շնորհակալություններ նրանցից, ովքեր հանդերձյալ աշխարհում դառնում են շահառուներ այս սրբագործված ծառայության համար: Սա ապրողների ծառայությունն է մահացածների համար: Սա ծառայություն է, որը անշահախնդրության բուն էությունն է ներկայացնում:[20]

Մեծ թվով տղաների ու աղջիկների . . . հիշեցվել է, որ այս տաճարները միայն իրենց ծնողների համար չեն, այլ նաև իրենց համար: Երբ նրանք 12 տարեկան են դառնում, նրանք կարող են մտնել Տիրոջ տունը և կանգնել որպես փոխանորդներ մկրտության ժամանակ նրանց համար, ովքեր մահվան վարագույրից այն կողմում են գտնվում: Ինչպիսի՜ սքանչելի և անշահախնդիր ծառայություն է սա: Ինչպիսի՜ սքանչելի բան է մեր երիտասարդների համար՝ ներգրավվել այս բացարձակապես անշահախնդիր գործում նրանց համար, ովքեր անզոր են իրենք իրենց օգնել:

Գնալով ձեռք- ձեռքի . . . ընդարձակվող տաճարային գործունեության հետ, ընտանեկան պատմության աշխատանքն էլ է ընդարձակվում: Համակարգիչը իր տարբեր ճյուղավորումներով արագացնում է աշխատանքը և մարդիկ օգտվում են նոր տեխնոլոգիաների միջոցով իրենց տրվող առիթներից: Ինչպե՞ս կարող է մարդ խուսափել այն եզրակացությունից, որ Տերն է բոլոր այս բաներում: Երբ համակարգչի հնարավորությունները բարելավվում են, տաճարների թիվն աճում է՝ հարմարեցնելու ընտանեկան պատմության արագացված աշխատանքը:[21]

Մենք պատասխանատու ենք օրհնության համար՝ հավերժական օրհնության, բոլոր նրանց համար, ովքեր ապրել են երկրի վրա, անհաշվելի, անթիվ տղամարդկանց և կանանց սերունդների համար, ովքեր ապրել են երկրի վրա և բոլոր նրանց համար, ովքեր դեռ կապրեն երկրի վրա: Որքա՜ն մեծ է մեր պատասխանատվությունը: Մենք պետք է կանգուն մնանք և մի քիչ ավելի տքնաջան աշխատենք այն իրականացնելու համար:[22]

Նրանք, ովքեր մյուս կողմում են, ովքեր մահացած չեն, այլ կենդանի են որպես հոգիներ, կցնծան և ուրախ կլինեն, երբ նրանց արթնացնեն և առաջ գնան իրենց ճանապարհով դեպի «անմահություն և հավերժական կյանք» (Մովսես 1.39):[23]

4

Մեծ օրհնություններ են սպասում մեզ, երբ մեզ արժանի ենք պահում և հաճախ ենք գնում տաճար:

Ես . . . կոչ եմ անում ձեզանից յուրաքանչյուրին այսօր, կարգի բերել ձեր կյանքը, արժանի լինել գնալ Տիրոջ տունը և այնտեղ ճաշակել օրհնություններից, որոնք հատկապես ձերն են: . . . Մեծ են պահանջները, բայց էլ ավելի մեծ են օրհնությունները:[24]

Ես հորդորում եմ մարդկանց ամենուրեք, ողջ համոզմունքով, որին ունակ եմ, արժանի ապրել տաճարային երաշխավորագիր ունենալուն, ձեռք բերել և համարել այն թանկարժեք ունեցվածք և ավելի մեծ ջանք գործադրել Տիրոջ տունը գնալու և ճաշակելու հոգուց և օրհնություններից, որ կան այնտեղ:[25]

Անկախ նրանից, թե կարող եք հաճախակի [տաճար] գնալ թե ոչ, արժանի եղեք տաճարային երաշխավորագրին և պահեք ձեր երաշխավորագիրը ձեր գրպանում: Այն հիշեցում կլինի ձեզ, թե ինչ է ակնկալվում ձեզանից՝ որպես Վերջին Օրերի Սուրբ:[26]

Ես բավարարված եմ, որ յուրաքանչյուր տղամարդ կամ կին, ով գնում է տաճար անկեղծ հոգով և հավատքով, Տիրոջ տաճարից դուրս է գալիս ավելի լավ տղամարդ և կին դարձած: Մեր ամբողջ կյանքում մշտական բարելավման կարիք կա: Անհրաժեշտ է, որ երբեմն հեռանանք աշխարհի աղմուկից ու անհանգստությունից, և գտնվելով Աստծո սրբազան տան պատերի ներսում՝ սուրբ ու խաղաղ միջավայրում, զգանք Նրա Հոգին:[27]:

«Գնացեք Տիրոջ տունը և այնտեղ զգացեք Նրա Հոգին, հաղորդակցվեք Նրա հետ և դուք կզգաք խաղաղություն, որը ոչ մի այլ տեղ չեք գտնի»:

«Այս սրբազան շինությունը դառնում է Աստծո հաճելի և սուրբ բաների մասին հրահանգների դպրոց: Այստեղ մենք ծանոթացել ենք սիրառատ Հոր ծրագրի հետ, որը վերաբերում է բոլոր սերունդների Նրա որդիներին և դուստրերին: Այստեղ մենք ուրվագծել ենք մարդու հավերժական ճամփորդության ոդիսականը՝ նախաերկրային գոյությունից մինչև այս կյանքը և հաջորդ կյանքը: Սկզբունքային և հիմնական մեծ ճշմարտություններ են ուսուցանվում պարզ ու հասարակ ձևով, որպեսզի լավ հասկացվեն բոլոր լսողների կողմից: . . .

Տաճարը նաև անձնական ոգեշնչման և հայտնության վայր է: Անթիվ բազմություն են կազմում նրանք, ովքեր ընկճված պահերին, բարդ որոշումներ կայացնելու և խառնաշփոթ խնդիրները լուծելու պահերին, տաճար են եկել ծոմի և աղոթքի ոգով՝ աստվածային առաջնորդություն փնտրելու համար: Շատերն են վկայել, որ չնայած չեն լսվել հայտնության ձայներ, զգացել են ոգեշնչող առաջնորդություն այդ պահին կամ ավելի ուշ, որոնք դարձել են նրանց աղոթքների պատասխանները:

Տաճարը հավերժական ճշմարտության աղբյուր է։ «Ով որ խմէ այն ջրիցը, որ ես կտամ նրան, նա հաւիտեան չի ծարաւիլ» (Հովհաննես 4.14։) Այստեղ ուսուցանվում են այն ճշմարտությունները, որոնք աստվածային են իրենց բովանդակությամբ և հավերժական՝ իրենց հետևանքներով։

Նրանց համար, ովքեր մտնում են այս պատերից ներս, այս տունը դառնում է ուխտերի տուն։ Այստեղ մենք հանդիսավոր և սուրբ խոստում ենք տալիս՝ ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանով՝ դրա լավագույն արտահայտմամբ։ Մենք ուխտ ենք կապում մեր Հավերժական Հոր հետ ապրել այդ սկզբունքներով, որոնք բոլոր ճշմարիտ կրոնների հիմնաքարն են։[28]

Արդյո՞ք կյանքը ձեզ համար լցված է հոգսերով։ Արդյո՞ք դուք ունեք խնդիրներ, մտահոգություններ ու հոգսեր։ Կամենո՞ւմ եք արդյոք ձեր սրտին խաղաղություն և հնարավորություն՝ Տիրոջ հետ հաղորդակցվելու և նրա ուղու վերաբերյալ խորհրդածելու։ Գնացեք Տիրոջ տունը, այնտեղ զգացեք Նրա Հոգին, հաղորդակցվեք Նրա հետ և դուք կիմանաք խաղաղությունը, որը դուք ոչ մի այլ տեղ չեք գտնի։[29]

Խավարի ժամանակներում փորձեք հասնել Տիրոջ տուն և այդտեղ մեկուսացեք աշխարհից։ Ստացեք Նրա սուրբ արարողությունները և տարածեք դրանք դեպի ձեր նախնիները։ Տաճարում նիստի ավարտին, հանգիստ նստեք սելեստիալ սենյակում և խորհեք այն օրհնությունների մասին, որոնք դուք ստացել եք ձեզ համար կամ որոնք դուք տարածել եք նրանց վրա, ովքեր հեռացել են կյանքից։ Ձեր սրտերը կուռչի երախտագիտությունից, և Տիրոջ երջանկության սքանչելի ծրագրի հավերժական իրողությունների վերաբերյալ մտքերը կներթափանցեն ձեր հոգին։[30]

Այս աղմկոտ, գործունյա, մրցունակ աշխարհում ինչ մեծ առանձնաշնորհ է ունենալ մի սուրբ տուն, որտեղ մենք կարող ենք զգալ Տիրոջ Հոգու սրբազործող ազդեցությունը։ Մեզ անընդհատ պարուրում է եսասիրության տարրը։ Մենք պետք է հաղթահարենք այն, և չկա ավելի լավ միջոց, քան գնալ Տիրոջ տունը և այնտեղ ծառայել փոխարինող հարաբերությամբ՝ հօգուտ նրանց, ովքեր մահվան վարագույրի այն կողմում են։ . . .

. . . Ես խրախուսում եմ ձեզ ավելի շատ օգտվել այս օրհնյալ առանձնաշնորհի առիթից: Այն կզտի ձեր էությունը: Այն կհեռացնի եսասիրության կեղևը, որում մեզանից շատերն են ապրում: Այն տառացիորեն կբերի սրբագործող տարր ձեր կյանքում և կդարձնի մեզ ավելի լավ տղամարդիկ և ավելի լավ կանայք:[31]

Ես գիտեմ, ձեր կյանքը մշտազբաղ է: Գիտեմ, որ շատ բան ունեք անելու: Բայց ես խոստանում եմ, որ եթե դուք գնաք Տիրոջ տուն, դուք կօրհնվեք, կյանքն ավելի լավ կլինի ձեզ համար: Արդ, խնդրում եմ, խնդրում եմ իմ սիրելի եղբայրներ և քույրեր, օգտվեք Տիրոջ տունը գնալու մեծ հնարավորությունից և դրա միջոցով ճաշակելու բոլոր հրաշալի օրհնություններից, որոնք ձերն են՝ այնտեղ ստանալու համար:[32]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Նախագահ Հինքլին ասել է, որ տաճարային արարողությունները «ամենախորը արտահայտություններն են մեր աստվածաբանության» (բաժին 1) և «մեծագույն օրհնությունները, որոնք Եկեղեցին կարող է առաջարկել» (բաժին 2): Որո՞նք են այն օրհնությունները, որոնք դուք ստացել եք այս արարողությունների միջոցով:
- Նախագահ Հինքլին խոսել է տղամարդկանց և կանանց մասին, ովքեր ուրախության արցունքներ են հեղել տաճարներում (տես բաժին 2): Ձեր փորձառությունից ելնելով, ինչո՞ւ են տաճարային արարողություններն այդպիսի խորը զգացումներ առաջացնում:
- Մահացածների փրկագնման մասին Նախագահ Հինքլին ասել է. «Ինչ սքանչելի է, որ մեր երիտասարդները ներգրավված են այդ լիովին անշահախնդիր գործի մեջ» (բաժին 3): Ի՞նչ կարող են ծնողներն ու երիտասարդներն անել այս ծառայությունում՝ միասին աշխատելու համար:
- Ի՞նչ կարող ենք անել մենք, որպեսզի ժամանակ ստեղծենք տաճարում ծառայելու և երկրպագելու համար: Տաճարում մեր ծառայությունը ինչպես կարող է ազդել տաճարից դուրս

մեր կյանքի վրա: (Մի քանի օրինակների համար տես բաժին 4-ը:) Ինչպե՞ս է տաճար գնալն օրհնել ձեզ:

Սոնչվող սուրբ գրություններ

Ելից 25.8, Գ Թագավորաց 6.11–13, Վևու 88.119–20, 109.12–13, 24–28, 110.1–10, 128.22–24

Օգնություն ուսումնասիրողին

«Կիսվեք նրանով, ինչ սովորում եք: Երբ դա անեք, ձեր մտքերն ավելի հստակ կդառնան և հիշողության մեջ պահելու ձեր ուժը կմեծանա» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 17):

Հղումներ

1. "Some Thoughts on Temples, Retention of Converts, and Missionary Service," *Ensign,* Nov. 1997, 49.
2. "Some Thoughts on Temples, Retention of Converts, and Missionary Service," 49.
3. In Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 325.
4. "This Is a Day Long Looked Forward To" (text of the dedicatory prayer for the Colonia Juárez Chihuahua Mexico Temple, Mar. 6, 1999), *Church News,* Mar. 13, 1999, 7.
5. "New Temples to Provide 'Crowning Blessings' of the Gospel," *Ensign,* May 1998, 87–88.
6. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1: 1995–1999* (2005), 311–12.
7. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 641.
8. "This Peaceful House of God," *Ensign,* May 1993, 74.
9. *Teachings of Gordon B. Hinckley,* 623–24.
10. "Inspirational Thoughts," *Ensign,* Apr. 2002, 4.
11. "Of Missions, Temples, and Stewardship," *Ensign,* Nov. 1995, 53.
12. "Keeping the Temple Holy," *Ensign,* May 1990, 52.
13. "Shining Star in a World Oppressed with Darkness" (text of the dedicatory prayer for the Manhattan New York Temple, June 13, 2004), *Church News,* June 19, 2004, 5.
14. "Rejoice in This Great Era of Temple Building," *Ensign,* Nov. 1985, 59.
15. "New Temples to Provide 'Crowning Blessings' of the Gospel," 88.
16. "Temples and Temple Work," *Ensign,* Feb. 1982, 3.
17. "The Marriage That Endures," *Ensign,* July 2003, 4–6.
18. "Rejoice in This Great Era of Temple Building," 60.
19. "Why These Temples?" *Ensign,* Aug. 1974, 40.
20. "The Salt Lake Temple," *Ensign,* Mar. 1993, 5.
21. "Welcome to Conference," *Ensign,* Nov. 1999, 4–5.
22. *Teachings of Gordon B. Hinckley,* 640.
23. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1,* 154.
24. *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1,* 362.
25. "Of Missions, Temples, and Stewardship," 53.
26. "Inspirational Thoughts," 4.
27. "Of Missions, Temples, and Stewardship," 52.
28. "The Salt Lake Temple," 5–6.
29. "Excerpts from Recent Addresses of President Gordon B. Hinckley," *Ensign,* Apr. 1996, 72.
30. *One Bright Shining Hope: Messages for Women from Gordon B. Hinckley* (2006), 103.
31. "Closing Remarks," *Ensign* or *Liahona,* Nov. 2004, 104–5.
32. *Teachings of Gordon B. Hinckley,* 624.

Հիսուս Քրիստոսի Քավությունը. Վիթխարի՝ իր ընդգրկմամբ, անձնական՝ իր ազդեցությամբ

«Ես վկայություն եմ բերում Տեր Հիսուս Քրիստոսի աստվածայնության մասին: Առանց դրա կյանքն անիմաստ է: Այն մեր գոյության կամարի պորտաքարն է»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

2000 թվականի հունվարի 1-ին Նախագահ Գորդոն Բ. Հինքլին առաջնորդեց Առաջին Նախագահությանը և Տասներկու Առաքյալների Քվորումին՝ հրապարակել իրենց միացյալ վկայությունը Փրկիչի մասին: Այս ուղերձում, որը կոչվում էր «Կենդանի Քրիստոսը», նրանք հայտարարել են. «Մենք բերում ենք մեր վկայությունը Նրա անզուգական կյանքի իրականության և Նրա մեծ քավիչ զոհաբերության անսահման զորության մասին: Ոչ ոք չի ունեցել այդպիսի խորը ազդեցություն բոլորի վրա, ովքեր ապրել են և ովքեր դեռ ապրելու են երկրի վրա»:[1]

Գերագույն համաժողովի մի ելույթում երեք ամիս անց Նախագահ Հինքլին վկայեց Փրկիչի խոր ազդեցության մասին, որը նա թողել էր իր սեփական կյանքում: Նա խոսում էր քնքշորեն և անձնապես, երբեմն հույզերից խեղդվելով.

«Բոլոր այն բաների համար, որ ես երախտապարտ եմ զգում այս առավոտ, մեկը հատկապես առանձնանում է: Դա կենդանի վկայությունն է Հիսուս Քրիստոսի՝ Ամենազոր Աստծո Որդու, Խաղաղության Իշխանի, Միակ Սուրբի մասին: . . .



«Ամեն ինչ կախված էր Նրանից՝ Նրա քավիչ զոհաբերությունից: . . . Դա էր հոր մեծ ծրագրի կամարի պորտաքարը»:

«Հիսուսն իմ ընկերն է: Ուրիշ ոչ ոք ինձ այդքան շատ բան չի տվել: «Ոչ ով նորանից աւելի մեծ սէր չունի, որ մէկն իր անձը դնէ իր բարեկամների համար» (Հովհաննես 15.13): Նա տվեց Իր կյանքն ինձ համար: Նա բացեց հավիտենական կյանք տանող ուղին: Միայն Աստված կարող էր դա անել: Հուսով եմ, որ ես արժանացել եմ Նրա ընկերը լինելուն:

Նա իմ օրինակն է: Նրա կենսակերպը, Նրա միանգամայն անձնուրաց վարքը, կարիքավորների հանդեպ Նրա վերաբերմունքը, Նրա վերջնական զոհաբերությունը՝ օրինակ է հանդիսանում ինձ համար: Ես ամբողջովին չեմ կարող չափել, բայց կարող եմ փորձել: . . .

«Նա իմ բժիշկն է: Ես ակնածանքով կանգնած եմ Նրա հիասքանչ հրաշքների առաջ: Եվ այնուամենայնիվ ես գիտեմ, որ դրանք տեղի են ունեցել: Ես ընդունում եմ ճշմարտությունը այս բաների մասին, որովհետև ես գիտեմ, որ Նա է կյանքի և մահվան Տերը: Նրա ծառայության հրաշքները խոսում են կարեկցանքի, սիրո և մարդասիրության զգացման մասին, որը սքանչելի է տեսնել:

Նա իմ առաջնորդն է: Ինձ համար մեծ պատիվ է լինել նրանց այն երկար հեծելախմբի մեջ, ովքեր սիրում են Նրան, և ովքեր հետևել են Նրան երկու հազարամյակի ընթացքում, որն անցել է Նրա ծննդից ի վեր: . . .

Նա է իմ Փրկիչը և իմ Քավիչը: Իր կյանքը տալով ցավով և անասելի տառապանքով, Նա իջավ, որ մահվանը հաջորդող հավերժական խավարի անդունդից բարձրացնի ինձ, մեզանից յուրաքանչյուրին և Աստծո բոլոր որդիներին ու դուստրերին: Նա տվել է մի ավելի լավ բան՝ լույսի և հասկացողության, աճի և գեղեցկության մի ոլորտ, որտեղ մենք կարող ենք առաջ գնալ ճանապարհով, որը տանում է դեպի հավերժական կյանք: . . . Իմ երախտագիտությունը սահմաններ չի ճանաչում: Իմ Տիրոջ հանդեպ շնորհակալությունը չունի եզրափակում:

Նա է իմ Աստվածը և իմ Թագավորը: Հավիտյանս հավիտենից Նա կթագավորի և կկառավարի որպես թագավորների Թագավոր և Տերերի Տեր: Նրա տիրապետությանը վերջ չի լինելու: Նրա փառքին չի լինելու գիշեր:

Ուրիշ ոչ ոք չի կարող զբաղեցնել Նրա տեղը: Ոչ մեկը երբևէ չի անի: Անբիծ և առանց որևէ մեղքի, Նա է Աստծո Գառը, որի առջև ես խոնարհվում եմ, և որի միջոցով ես մոտենում եմ Իմ Հորը Երկնքում: . . .

Երախտագիտությամբ , և անսպառ սիրով ես բերում եմ իմ վկայությունը այս բաների մասին, Նրա սուրբ անունով, ամեն»:[2]

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Մեր Երկնային Հոր սերն արտահայտվում է Իր Միածին Որդու պարգևի մեջ:

Սիրտս մեղմանում է, երբ մտածում եմ իմ Երկնային Հոր մեծ սիրո մասին: Որքա՜ն երախտապարտ եմ, որ գիտեմ , որ Աստված սիրում է մեզ: Այդ սիրո աներևակայելի խորությունը իր արտահայտությունն է գտել Իր Միածին Որդու պարգևում, ով աշխարհ եկավ՝ բերելու հույս մեր սրտերին, բերելու բարություն և քաղաքավարություն մեր հարաբերություններում, և ամենից վեր՝ փրկելու մեզ մեր մեղքերից և առաջնորդելու մեզ հավերժական կյանք տանող ուղին:[3]

Փրկիչի նախաանահկանացու ծառայությունը

Մեր բոլորի Հայրը, Իր զավակներիհանդեպ սիրով, առաջարկեց մի . . . ծրագիր, որի համաձայն մենք կունենայինք ազատություն ընտրելու մեր կյանքի ուղին: Նրա Անդրանիկ Որդին՝ մեր Ավագ Եղբայրը, այդ ծրագրի բանալին էր: Մարդն ունենալու էր ազատ կամք և այդ ազատ կամքի հետ գալու էր պատասխանատվություն: Մարդը քայլելու էր աշխարհի ուղիներով, մեղանչելու էր ու սայթաքելու էր: Սակայն Աստծո Որդին վերցնելու էր Իր վրա մարմին և մատուցելու էր Իրեն զոհ՝ քավելու բոլոր մարդկանց մեղքերը: Անասելի տառապանքի միջոցով Նա դառնալու էր մեծ Քավիչը, ողջ մարդկության Փրկիչը:[4]

Փրկիչի երկրային ծառայությունը

Ողջ պատմության մեջ Նրա վեհափառության նման վեհափառություն չի եղել: Նա՝ հզոր Եհովան, շնորհ արեց ծնվել մահկանացու կյանքում, Բեթլեհեմի մի փարախում: Հիսուսը մեծանում

էր Նազարեթում և «իմաստութիւնով և հասակով, և շնորհքով՝ Աստուծոյ և մարդկանց մոտ» (Ղուկաս 2.52):

Նա մկրտվեց Հովհաննեսի կողմից Հորդանանի ջրերում, «եւ ահա երկինքը բացուեցաւ նորա համար, եւ նա տեսաւ Աստուծոյ Հոգին որ վայր էր իջնում աղաւնիի պէս եւ գալիս նորա վերայ.

Եւ ահա երկնքիցը ձայն եկաւ, որ ասում էր. Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցի» (Մատթ. 3.16–17):

Իր երկրային ծառայության երեք տարիների ընթացքում նա արեց այն, ինչ ուրիշ ոչ ոք երբևէ չէր արել նախկինում, Նա ուսուցանեց, ինչպես ուրիշ ոչ ոք չէր ուսուցանել երբևէ:

Այնուհետև եկավ Նրա զոհաբերվելու ժամանակը : Եղավ Վերնատան ընթրիքը, Նրա վերջինը Տասներկուսի հետ մահկանացու կյանքում: Երբ Նա լվաց նրանց ոտքերը, Նա մի դաս սովորեցրեց խոնարհությամբ և ծառայությամբ, որը նրանք երբեք չմոռացան:[5]

Տառապանքը Գեթսեմանի պարտեզում

Այս հավերժական, սրբազան զոհաբերությունը ստիպեց «նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե հոգով» (ՎևՈՒ 19.18):[6]

Գեթսեմանի պարտեզում Նա այնպես ուժգին տառապեց, որ Նա քրտնեց արյան կաթիլներով, երբ Նա աղերսում էր Իր Հորը: Բայց այս բոլորը Նրա մեծ քավիչ զոհաբերության մասն էր կազմում:[7]

[Ես մի անգամ նստած էի] հնադարյան ձիթենու ստվերում [Գեթսեմանիի պարտեզում] և կարդում էի Աստծո Որդու այն սոսկալի զոտեմարտի մասին, երբ Նա դիմակայեց անխուսափելի ապագային՝ քրտնելով արյան կաթիլներով և աղոթելով Իր Հորը, որ հեռացնի բաժակը, եթե հնարավոր էր, բայց ասելով. «Սակայն ոչ թե ինչպէս ես եմ կամենում, այլ ինչպէս դու»: . . . Ես ունեցա մի անհաղթահարելի զգացում, որ Նա չէր աղերսում, Նա չէր դիմակայում ֆիզիկական ցավի այդ ծանր փորձությանը, որին Նա պատրաստվում էր բախվել՝ սոսկալի, դաժան խաչելությանը խաչի վրա: Ես համոզված եմ, այն դրա մի մասն էր կազմում: Բայց կարծում եմ, որ դա ժամանակի բոլոր սերունդների,Աստծո

բոլոր որդիների և դուստրերի հավերժական բարօրության՝ Իր դերի Իր մասի վերաբերյալ մի զգացում էր։

Ամեն ինչ կախված էր Նրանից՝ Նրա քավիչ զոհաբերությունից։ Դա էր բանալին։ . . . Դա էր Հոր մեծ ծրագրի կամարի պորտաքարը, որը Հայրն առաջ էր բերել Իր որդիների և դուստրերի հավերժական կյանքի համար։ Որքան էլ սոսկալի էր դրան դիմակայելը, որքան էլ ծանր էր այն իրականացնելը, Նա դիմացավ դրան, Նա իրականացրեց դա, և դա սքանչելի և հոյակապ բան էր։ Այն, ինչ տեղի ունեցավ, համոզված եմ, վեր է մեր հասկացողությունից։ Այնուամենայնիվ, մենք տեսնում ենք դրա մի փոքր մասը և պետք է սովորենք գնահատել այն՝ ավելի ու ավելի։[8]

Ձերբակալումը, խաչելությունը և մահը

Նա ձերբակալվեց կոպիտ և դաժան ձեռքերով,գիշերով՝ հակառակ օրենքի, նրան տարան Աննայի և այն ժամանակ Կայիափայի՝ Սանահեդրինի խորամանկ և չար պաշտոնակատարի մոտ։ Այնուհետև հաջորդ օրը վաղ առավոտյան երկրորդ անգամ հայտնվեց այդ խարդախ, չարասիրտ մարդու առջև։ Այնուհետև Նրան տարան Պիղատոսի՝ հռոմեացի կառավարիչի մոտ, ում կինը նախազգուշացրել էր՝ ասելով. «Այդ արդար մարդի հետ դու բան չունիս» (Մատթ. 27.19)։ Հռոմեացին, մտածելով խուսափել պատասխանատվությունից, ուղարկեց Նրան Հերովդեսի՝ փչացած, անառակ և չար Գալիլեայի չորրորդապետի մոտ։ Քրիստոսն անարգվեց և ծեծի ենթարկվեց։ Նրա գլխին սուր փշերից հյուսված պսակ դրեցին, ծաղրական կարմիր մի թիկնոց զցեցին Նրա արյունահոսող մեջքին։ Նրան կրկին տարան Պիղատոսի մոտ, իսկ այնտեղ հավաքված ամբոխն աղաղակում էր. «Խաչիր, խաչիր դորան» (Ղուկաս 23.21)։

Սայթաքող քայլերով Նա քայլեց Գողգոթայի ճանապարհով, որտեղՆրա վիրավորված մարմինը զամվեց խաչին ամենաանմարդկային և ցավ առաջացնող մահապատժի եղանակով, որը սադիստական ուղեղները կարող էին մտածել։

Սակայն Նա աղաղակեց. «Հայր, թողիր դորանց. որովհետեւ չգիտեն թէ ինչ են անում» (Ղուկաս 23.34)։[9]

Չկա ավելի դաժան նկար ողջ պատմության մեջ, քան «Հիսուսը Գեթսեմանում և խաչի վրա , մենակ». մարդկության Քավիչը, աշխարհի Փրկիչը, Քավությունն իրականացնելիս:

Ես հիշում եմ, երբ ես Նախագահ Հարոլդ Բ. Լիի հետ . . . Երուսաղեմում Գեթսեմանիի Պարտեզում էինք: Մենք շատ քիչ զգացինքային սարսափելի պայքարը, որը տեղի էր ունեցել. մի պայքար այնքան ուժգին, երբ Հիսուսը միայնակ գոտեմարտում էր հոգում, որ արյուն եկավ ամեն ծակոտիից (տես Ղուկաս 22.44, ՎԵՈՒ 19.18): Մենք հիշեցինք մեկի դավաճանությունը, ով կանչվել էր վստահելի պաշտոնի: Մենք հիշեցինք, որ չար մարդիկ իրենց դաժան ձեռքերը բարձրացրին Աստծո Որդու վրա: Մենք հիշեցինք այն միայնակ կերպարանքը խաչի վրա, տանջանքի մեջ աղաղակելիս. «Իմ Աստուած՝ իմ Աստուած, ինչո՞ւ թողեցիր ինձ»: (Մատթ. 27.46): Սակայն աշխարհի Փրկիչը քաջաբար առաջ շարժվեց՝ իրականացնելու Քավությունը մեզ համար:[10]

Ժամերն անցան, մինչ Նրա կյանքը մարում էր ցավից: Երկիրը ցնցվեց, տաճարի վարագույրը պատռվեց: Նրա ցամաքած շուրթերից դուրս եկան հետևյալ խոսքերը. «Հայր, հոգիս քո ձեռն եմ աւանդում. եւ այս ասելով հոգի տուաւ» (Ղուկաս 23.46):

Ավարտվեց: Նրա մահկանացու կյանքը վերջացավ: Նա զոհաբերեց այն, որպես փրկանք բոլորի համար: Հեռացան հույսերը նրանց, ովքեր սիրում էին Նրան: Մոռացվեցին Նրա տված խոստումները: Նրա մարմինը շտապ , բայց քնքշաբար դրվեց փոխ վերցված գերեզմանում՝ հրեական շաբաթի նախօրեին:[11]

Հարություն

Կիրակի օրը վաղ առավոտյան Մարիամ Մագթաղենացին և մյուս կանայք եկան գերեզման: Նրանք զարմացան, երբ շտապում էին գերեզմանի մոտ, թե ինչպես կարող էր քարը գլորվել գերեզմանի դռնից: Տեղ հասնելով, նրանք տեսան մի հրեշտակի, ով խոսեց նրանց հետ. «Մի՛ վախենաք դուք, գիտեմ որ խաչուած Հիսուսին եք որոնում:

Այստեղ չէ. որովհետև հարություն առավ, ինչպես ասեց» (Մատթ. 28.5–6):

Այդպիսի բան երբեք չէր պատահել նախկինում: Դատարկ գերեզմանը դարերի հարցի պատասխանն էր: Լավ է ասել

«Այստեղ չէ. որովհետև հարություն առավ, ինչպես ասեց» (Մատթեոս 28.6):

Պողոսը. «Ով մահ, ո՞ւր է քո խայթոցը: Գերեզման, ո՞ւր է քո հաղթությունը»: (1 Կոր. 15.55):[12]

2

Փրկիչի քավիչ զոհաբերության միջոցով բոլոր մարդիկ հարություն կառնեն գերեզմանից:

Այդ հարության առավոտվա հրաշքը . . . հրաշք է ողջ մարդկության համար: Դա Աստծո զորության հրաշքն է, ում Սիրելի Որդին Իր կյանքը տվեց բոլորի մեղքերը քավելու համար, սիրո մի զոհաբերություն՝ Աստծո յուրաքանչյուր որդու և դստեր համար: Դա անելով՝ Նա կոտրեց մահվան կնիքները:[13]

Չկա ոչ մի բան ավելի համընդհանուր, քան մահը, և ոչինչ՝ ավելի պայծառ հույսով և հավատքով, քան անմահության

հավաստիացումը։ Սրտաճմլիկ վիշտը, որը գալիս է մահվան հետ, ծանր կորուստը, որը հետևում է մեր սիրելիներից մեկի մահին, մեղմանում է միայն Աստծո Որդու Հարության անտարակուսելի փաստով։ . . .

Երբ մահվան սառը ձեռքը զարկում է, այդ պահի տխրության և խավարի միջից շողում է Տեր Հիսուս Քրիստոսի հաղթական կերպարանքը, Նա՝ Աստծո Որդին, ով Իր անզուգական և հավերժական զորությամբ հաղթեց մահին։ Նա է աշխարհի Քավիչը։ Նա տվեց Իր կյանքը մեզանից յուրաքանչյուրի համար։ Նա կրկին այն վերցրեց և դարձավ ննջեցյալների առաջնեկ։ Նա, որպես Թագավորների Թագավոր, կանգնած է հաղթական բոլոր մյուս թագավորներից վեր։ Նա, որպես Ամենազոր Մեկը, կանգնած է բոլոր կառավարիչներից վեր։ Նա է մեր մխիթարությունը, մեր միակ ճշմարիտ մխիթարությունը, երբ երկրային գիշերվա խավարը պարուրում է՝ ծածկելով մեզ, երբ հոգին հեռանում է մարդկային կերպարանքից։

Ողջ մարդկության վերևում վեր է խոյանում Հիսուս Քրիստոսը։[14]

Ես հիշում եմ, թե ինչպես խոսեցի մի լավ մարդու և ընկերոջ թաղման արարողության ժամանակ , ում բարությունը պատճառ դարձավ ինձ համար մի քիչ ավելի բարձրանալ։ Տարիներ շարունակ ես գիտեի նրա ժպիտը, նրա բարի խոսքերը, փայլուն խելքի դրսևորումները, ուրիշների հանդեպ նրա ծառայության մեծ շունչը։ Եվ հետո, նա ով այդքան պայծառ էր և բարի, հանկարծ մահացավ։ Ես նայում էի նրա անկենդան կերպարանքին։ Չկար ոչ ճանաչում, ոչ շարժում, ոչ էլ որևէ խոսք։ . . .

Ես նայեցի նրա արտասվող այրուն և երեխաներին։ Նրանք գիտեին, ինչպես գիտեի ես , որ այլևս երբեք մահկանացու կյանքում չէինք լսելու նրա ձայնը։ Բայց մի քնքուշ, աննկարագրելի քաղցրություն խաղաղություն և հավաստիացում բերեց։ Թվում էր, նա ասում է. «Դադարեցէք եւ ճանաչեցէք, որ ես եմ Աստուած» (Սաղ. 46.10)։

Թվում էր, այնուհետև ասվեց. «Մի անհանգստացիր։ Այս բոլորը իմ ծրագրի մասն է կազմում։ Ոչ ոք չի կարող խուսափել մահից։ Նույնիսկ իմ Սիրելի Որդին մահացավ խաչի վրա։ Բայց դրանով Նա դարձավ Հարության փառահեղ առաջնապտուղը։ Նա վերցրեց մահվանից՝ խայթը և գերեզմանից՝ հաղթանակը։

Ես մտքումս լսեցի Տիրոջ զրույցը սգացող Մարթայի հետ. «Ես եմ յարութիւնը եւ կեանքը. ինձ հաւատացողը թէեւ մեռնի էլ, կապրի։ Եւ ամեն ով որ կենդանի է եւ ինձ հաւատում է, յաւիտեան չի մեռնիլ» (Հովհաննես 11.25–26)։[15]

3

Փրկիչի քավիչ զոհաբերության միջոցով մեզ տրվում է վեհացման և հավերժական կյանքի հնարավորություն։

Շնորհակալություն Ամենազորին։ Նրա փառավորված Որդին կոտրեց մահվան կապանքները՝ մեծագույնը բոլոր հաղթանակներից։ . . . Նա է մեր հաղթանակած Տերը։ Նա է մեր Քավիչը, ով քավեց մեր մեղքերը։ Այս քավիչ զոհաբերության շնորհիվ բոլոր մարդիկ կազատվեն գերեզմանից ։ Նա է բացել ճանապարհը, որով մենք կարող ենք ձեռք բերել ոչ միայն անմահություն, այլ նաև հավերժական կյանք։[16]

Ես որոշ չափով զգում եմ Նրա քավության իմաստը։ Ես չեմ կարող այն ամբողջովին հասկանալ։ Դա այնքան վիթխարի է իր ընդգրկմամբ և այնուամենայնիվ, այնքան անձնական՝ իր ազդեցությամբ, որ այն մարտահրավեր է նետում հասկանալու կարողությանը։[17]

Քավության մեծությունը վեր է լիովին այն հասկանալու մեր ունակությունից։ Ես գիտեմ միայն, որ այն տեղի է ունեցել, և որ այն ինձ և ձեզ համար է։ Տառապանքն այնքան մեծ էր, հոգեվարքն այնքան ուժեղ, որ մեզանից ոչ ոք չի կարող պատկերացնել այն, երբ Փրկիչը մատուցեց Իրեն՝ որպես փրկագին ողջ մարդկության մեղքերի համար։

Նրա միջոցով ենք ներում ձեռք բերում։ Նրա միջոցով էգալիս մի որոշակի խոստում, որ ամբողջ մարդկությանը մեռելներից հարության հետ միասին կշնորհվի փրկության օրհնությունները։ Նրա և Նրա մեծ համապարփակ զոհաբերության միջոցով էմեզ տրվում վեհացման և հավերժական կյանքի հնարավորությունը՝ հնազանդության միջոցով։[18]

Միթե՞ մենք բոլորս անառակ որդիներ և դուստրեր չենք, ովքեր պետք է ապաշխարեն և ճաշակեն Երկնային Հոր ներողամիտ ողորմածությունից և ապա հետևեն Նրա օրինակին։

Նրա սիրելի Որդին՝ մեր Քավիչը, օգնության է հասնում մեզ ներմամբ և ողորմածությամբ, բայց այդ անելով հանդերձ նա պատվիրում է ապաշխարել։ . . . Տերն ասել է, և ես մեջբերում եմ Մարգարե Զոզեֆին տրված հայտնությունից.

«Հետևաբար, ես պատվիրում եմ քեզ՝ ապաշխարել,– ապաշխարի՛ր, չլինի թե քեզ զարկեմ իմ բերանի գավազանով և իմ ցասումով և իմ բարկությամբ, և քո տառապանքները լինեն դառը,– որքա՜ն դառը, դու չգիտես, որքա՜ն սուր, դու չգիտես, այո՛, որքա՜ն ծանր՝ տանելու, դու չգիտես։

Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն.

Բայց եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես.

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե հոգով»։16 . . .

«Սովորիր ինձանից և լսիր իմ խոսքերը. քայլիր իմ Հոգու հեզությամբ, և դու խաղաղություն կունենաս ինձանում» (ՎևՈ 19.15–18, 23։)[19]

Երբ ամեն ինչ ասված էր և արված, երբ ամբողջ պատմությունը քննության էր ենթարկված, երբ մարդկային մտքի խորագույն ծալքերը հետազոտված են, ոչ մի բան այնպես սքանչելի չէ, այնպես վսեմ չէ, այնպես վիթխարի չէ, ինչպես շնորհի այս գործը, երբ Ամենազորի Որդին, Իր Հոր թագավորական տան Իշխանը, Նա, ով մի ժամանակ խոսել էր որպես Եհովա, Նա, ով շնորհ արեց երկիր գալ որպես մանուկ՝ ծնվելով Բեթլեհեմում, տվեց Իր կյանքը նվաստացած ու ցավով, որպեսզի Աստծո բոլոր ժամանակների սերունդների որդիներն ու դուստրերը, որոնցից ամեն մեկը պետք է մեռներ, կարողանան կրկին քայլել և հավերժ ապրել։ Նա արեց մեզ համար այն, ինչը մենք չէինք կարող անել ինքներս մեզ համար։ . . .

Եսայիա մարգարեն հայտարարել է.

«Նա մեր ցաւերը վեր առաւ, եւ մեր վիշտերը բեռնեց իր վերայ. . . .

. . .Նա մեր մեղքերի համար վիրաւորուեցաւ, եւ մեր անօրինութիւնների համար հարուածուեցաւ. մեր խաղաղութեան պատիժը նորա վերայ էր. և նորա վերքերով ենք մենք բժշկված: (Եսա. 53.4–5):

Սա է Սուրբ Ծննդյան հրաշագործ և ճշմարիտ պատմությունը: Հուդայի Բեթլեհեմում Հիսուսի ծնվելը նախաբանն էր: Տիրոջ երեքամյա ծառայությունը սկիզբն էր: Նրա զոհաբերության պատմության հսկայական նյութը, Գողգոթայի խաչի վրա ցավով մեռնելու ամբողջ անձնազոհ գործը՝ մեր բոլորի մեղքերի համար քավություն կատարելն էր:

Վերջաբանը Հարության հրաշքն է, որը հավաստիացնում է. «Ինչպէս Ադամով ամենը մեռնում են, այնպէս էլ Քրիստոսով ամենը կենդանանում են» (1 Կոր. 15.22):

Եթե Զատիկ չլիներ, չէր լինի Սուրբ Ծնունդ: Բեթլեհեմի մանուկ Հիսուսը կլիներ առանց Գեթսեմանիի և Գողգոթայի և Հարության հաղթական փաստի:

Ես հավատում եմ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Հավերժական Կենդանի Աստծո Որդուն: Երբևէ այդքան մեծ ոչ մեկը չի քայլել երկրի վրա: Ուրիշ ոչ մեկը չի արել դրա հետ համեմատվող որևէ զոհաբերություն կամ շնորհել դրա հետ համեմատվող որևէ օրհնություն: Նա է աշխարհի Փրկիչն ու Քավիչը: Ես հավատում եմ Նրան: Ես հայտարարում եմ Նրա աստվածայնությունը առանց երկիմաստության և փոխզիջման: Ես սիրում եմ Նրան: Ես արտաբերում եմ Նրա անունը ակնածանքով և հիացմունքով: Ես երկրպագում եմ Նրան, ինչպես պաշտում եմ Նրա Հորը հոգով և ճշմարտությամբ: Ես շնորհակալություն եմ հայտնում Նրան և ծնկի իջնում Նրա Միրելի Որդու առջև, ով օգնության հասավ շատ վաղուց և ասաց մեզանից յուրաքանչյուրին. «Ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնավորուածներ, եւ ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթ. 11.28):

. . . Ես կկամենայի, որ ձեզանից յուրաքանչյուրը մի պահ, անցկացնի Աստծո այս Որդու հրաշքի և վեհափառության վերաբերյալ լուռ խորհրդածության և հանգիստ մտորումների մեջ:[20]

«Ես վկայություն եմ բերում Տեր Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Առանց դրա կյանքն անիմաստ է: Այն մեր գոյության կամարի պորտաքարն է: Այն հաստատում է, որ մենք ապրել

ենք՝ նախքան մահկանացու կյանքում մեր ծնվելը: Մահկանացու կյանքը միայն գայթակղության քար է դեպի ավելի փառահեղ գոյություն ապագայում: Մահվան վիշտը մեղմանում է Հարության խոստման հետ:[21]

Հիսուսը Քրիստոսն է, Աստծո նախակարգված Որդին, ով շնորհ արեց երկիր գալ, ով ծնվեց փարախում, մի պարտված ազգի ճորտ ժողովրդի մեջ, Աստծո Որդին, Հոր Միածինը մարմնում, Հոր Անդրանիկը և մեր փրկության Հեղինակը: Նա մեր Քավիչն է, մեր Փրկիչը, որի Քավության միջոցով հավերժական կյանքը հնարավոր դարձավ բոլոր նրանց համար, ովքեր կքայլեն՝ հնազանդվելով Նրա ուսմունքներին:[22]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Ինչո՞ւ է մեր Երկնային Հայրը տվել մեզ «Իր Միածին Որդու պարգևը»: (Տես բաժին 1:) Ի՞նչ կարող եք անել երախտագիտություն արտահայտելու՝ այս պարգևի համար: Ի՞նչ եք մտածում և զգում այն մասին, թե ինչ է Փրկիչն արել մեզ համար, երբ կարդում եք Նախագահ Հինքլիի համառոտ շարադրանքը:
- 2-րդ բաժնում համեմատեք Նախագահ Հինքլիի մահը նկարագրող խոսքերը,որոնք նա օգտագործում է հարությունը նկարագրելիս: Ի՞նչ եք դուք սովորում այս բառերի տարբերություններից: Ինչպե՞ս է Փրկիչի Հարության մասին ձեր վկայությունն ազդում ձեր կյանքի վրա:
- Ի՞նչ եք սովորում Հիսուս Քրիստոսի Քավության մասին Նախագահ Հինքլիի վկայությունից: (Տես բաժին 3.) Ինչպե՞ս է Քավությունն օրհնել ձեզ անձնապես: Ի՞նչ եք զգում, երբ խորհում եք Փրկիչի ձեզ համար կատարած զոհաբերության մասին: Ժամանակ տրամադրեք Փրկիչի մասին «լուռ խորհրդածության և հանգիստ մտորումների» համար:

Առնչվող սուրբ գրություններ

Եսայիա 53, Հովհաննես 3.16, 11.25, 2 Նեփի 9.6–13, Ալմա 7.11–13, 34.8–10, Հելաման 14.13–19, ՎևՈւ 18.10–12

Օգնություն ուսուցչին

«Երբ աղոթքով նախապատրաստվեք ուսուցանելու, կարող եք առաջնորդվել՝ շեշտելով որոշակի սկզբունքներ: Դուք գուցե ձեռք բերեք ըմբռնում, թե ինչպես ներկայացնել որոշ գաղափարներ: Դուք կարող եք բացահայտել օրինակներ, առարկայական դասեր և ոգեշնչող պատմություններ կյանքի պարզ գործունեության ընթացքում: Դուք գուցե տպավորված զգաք՝ հրավիրելու մի որոշակի անձնավորության՝ դասին օժանդակելու համար: Գուցե ձեզ հիշեցվի անձնական մի փորձառության մասին, որով կարող եք կիսվել» (*Teaching, No Greater Call* [1999], 48):

Հղումներ

1. «Կենդանի Քրիստոսը» «Առաքյալների վկայությունը» *Ensign* կամ *Լիահոնա*, 2000, 2):
2. “My Testimony,” *Ensign,* May 2000, 69, 71.
3. “The Wondrous and True Story of Christmas,” *Ensign,* Dec. 2000, 2.
4. “We Look to Christ,” *Ensign,* May 2002, 90.
5. “The Victory over Death,” *Ensign,* Apr. 1997, 2.
6. “The Victory over Death,” 2.
7. «Բաները, որոնք ես գիտեմ», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2007, 83–84:
8. *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 29–30.
9. “The Victory over Death,” 2, 4.
10. “Living with Our Convictions,” *Ensign,* Sept. 2001, 2.
11. “The Victory over Death,” 4.
12. “The Victory over Death,” 4.
13. “The Victory over Death,” 4.
14. “This Glorious Easter Morn,” *Ensign,* May 1996, 67.
15. “The Wondrous and True Story of Christmas,” 2, 4.
16. “He Is Not Here, but Is Risen,” *Ensign,* May 1999, 72.
17. “The Wondrous and True Story of Christmas,” 2.
18. «Ներում», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2005, 84:
19. “Of You It Is Required to Forgive,” *Ensign,* June 1991, 5.
20. “The Wondrous and True Story of Christmas,” 4–5.
21. «Բաները, որոնք ես գիտեմ», 84:
22. In Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 560.

Առաջ գնացեք հավատքով

«Եթե կա մի բան. որի կարիքը ես և դուք ունենք,. . . [դա] այնպիսի հավատքն է, որը մղում է մեզ ծնկի իջնելու և աղերսելու Տիրոջը առաջնորդության համար, իսկ հետո, ունենալով որոշ չափով աստվածային վստահություն, ուրքի կանգնել և գնալ աշխատելու, օգնելու, որպեսզի ցանկալի արդյունքներն իրականանան»:

Գորդոն Բ. Հինքլիի կյանքից

«Երբ ես մեկնեցի միսիա [երբ երիտասարդ էի], հիշում է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին, «իմ հիանալի հայրը տվեց ինձ մի քարտ, որի վրա գրված էր հինգ բառ»: Դրանք Տիրոջ խոսքերն էին ուղղված ժողովրդապետին, ով լուր էր ստացել իր աղջկա մահվան մասին: «Մի վախենար, բայց միայն հաւատա»: (Մարկոս 5.36:)»[1] Երբ երիտասարդ Հինքլին ծառայեց Անգլիայում, նա դիմակայեց շատ մարտահրավերների, որոնցում նա պետք է հիշեր այդ հինգ խոսքերը: Հետագայում նա նկարագրեց այդպիսի մի փորձառություն.

«Մի օր երեք-չորս Լոնդոնյան լրագրեր զետեղել էին ակնարկներ մի հին գրքի վերատպագրության մասին, թունոտ և տգեղ տոնով, նշելով, որ գիրքը Մորմոնների պատմության մասին էր: Նախագահ Մերրիլը [իմ միսիայի նախագահը] ասաց ինձ. «Ես ուզում եմ, որ դու գնաս տպագրողի մոտ և բողոք ներկայացնես»: Ես նայեցի նրան և գրեթե պատրաստվում էի ասել. «Միայն թե ոչ ես»: Բայց ես հեզությամբ ասացի. «Այո, պարոն»:

«Ես չեմ տատանվում ասել, որ վախեցա: Ես գնացի իմ սենյակը և զգացի մի բան, որը իմ կարծիքով, երևի Մոսվսեսն էր զգացել , երբ Տերը խնդրեց նրան գնալ և տեսնել Փարավոնին: Ես աղոթեցի: Միրտս խառնում էր, երբ քայլում էի դեպի Գուդջ փողոցի

«Հաստատքն այն է, երբ ամեն ինչ ասվել է և արվել,
մեր միակ իսկական և հարատև հույսը»։

կայարանը, որ նստեի դեպի Ֆլիթ փողոցը տանող ստորգետնյա գնացքը: Ես գտա նախագահի գրասենյակը և ներկայացրեցի քարտս ընդունարանի աշխատակցուհուն: Նա վերցրեց այն, գնաց ներսի գրասենյակը և շուտով վերադարձավ ասելով, որ նախագահը խիստ զբաղված էր՝ ինձ հետ խոսելու համար: Ես պատասխանեցի, որ եկել էի հինգ հազար մղոն [8000 կիլոմետր] և սպասելու էի: Հաջորդ մեկ ժամում աշխատակցուհին երկու կամ երեք ուղևորություն կատարեց նրա գրասենյակ, և ի վերջո նա ինձ ներս հրավիրեց: Ես երբեք չեմ մոռանա այդ տեսարանը, երբ ես ներս մտա: Նա մի երկար սիգար էր ծխում դեմքի մի արտահայտությամբ, որը թվում է, ասում էր. «Ինձ մի անհանգստացրեք»:

«Ես ձեռքումս բռնել էի ակնարկները: Ես չեմ հիշում, թե ինչ ասացի դրանից հետո: Թվում էր, մի ուրիշ ուժ էր խոսում իմ միջոցով: Սկզբում նա պաշտպանվում էր և նույնիսկ մարտական էր տրամադրված: Ապա նա սկսեց փափկել: Նա ավարտեց՝ խոստանալով ինչ- որ բան անել: Մեկ ժամում լուր ուղարկվեց Անգլիայի յուրաքանչյուր գրավաճառի՝ գրքերը հրատարակչին վերադարձնելու վերաբերյալ: Մեծ ծախսեր կատարելով, նա տպագրեց և յուրաքանչյուր հատորի վրա մի հայտարարություն տեղադրեց այն մասին, որ գիրքը չպիտի համարվի որպես պատմություն, այլ այն ընդամենը արձակ ստեղծագործություն է նոչ մի վիրավորանք կանխամտածված չէր հարգելի Մորմոն ժողովրդի դեմ: Տարիներ անց նա շնորհեց ևս մեկ էական կարևորություն ունեցող ծառայություն Եկեղեցուն և ամեն տարի, մինչև իր մահը, ես նրանից ստացա Սուրբ Ծննդյան բացիկներ»:[2]

Ընդունելով հրատարակչի գրասենյակ այցելելու հանձնարարությունը, Երեց Հինքլին կատարեց այն, ինչը դառնալու էր ողջ կյանքի ապրելաձևը. հավատքով, ընդունել մարտակոչը, աղերսել Տիրոջը օգնության համար, ապա գնալ աշխատելու:

Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները

1

Հավատքը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ կարող է դառնալ նպատակասլաց ապրելակերպի անսպառ ակունք:

Եթե կա որևէ բան, որի կարիքը ես և դուք ունենք, որը կօգնի մեզ հաջողություն գտնել և կայանալ այս աշխարհում, հավատքն

է՝ այդ առաջ մղող, հզոր, սքանչելի տարրը, որի միջոցով, ինչպես Պողոսն է հայտարարել, ձևավորվեցին բուն աշխարհները (տես Եբրայեցիս 11.3)։ «Ես նկատի չունեմ ինչ-որ եթերային սկզբունք, այլ պրակտիկ, գործուն հավատքը՝ այնպիսի հավատք, որը մղում է մեզ ծնկի իջնել և աղերսել Տիրոջը առաջնորդության համար, իսկ հետո, ունենալով որոշ չափով աստվածային վստահություն, ոտքի կանգնել և գնալ աշխատելու, օգնելու, որպեսզի ցանկալի արդյունքներն իրականանան։ Այդպիսի հավատքը մի արժանիք է, որը վեր է համեմատությունից։ Այդպիսի հավատքն է, երբ ամեն ինչ ասված է և արված՝ մեր միակ իսկական և հարատև հույսը։

. . . Հավատքը կարող է դառնալ նպատակասլաց ապրելակերպի անսպառ ակունքը։ Չկա ավելի համոզիչ շարժառիթ իմաստալի ձգտման համար, քան այն գիտելիքը, որ մենք Աստծո զավակներն ենք, որ Աստված ակնկալում է մեզանից անել ինչ որ բան մեր կյանքի հետ, և որ Նա կտա մեզ օգնություն, երբ խնդրենք օգնություն։ . . .

. . . Երբ ես քննարկում եմ հավատքի մասին, ես նկատի չունեմ, որ այն վերացական իմաստ ունի։ Ես նկատի ունեմ, որ այն կենդանի, կենսունակ ուժ է, որը գալիս է Աստծուն՝ մեր Հորը և Հիսուս Քրիստոսին՝ որպես մեր Փրկիչ ճանաչելուց։ . . .

. . . Հավատքն առ Աստվածային Էակը՝ Ամենազորը, այն մեծ շարժող ուժն է, որը կարող է փոխել մեր կյանքը։[3]

Շատ վաղուց ես աշխատում էի մեր երկաթուղիներից մեկում, որոնց երկաթգծերն անցնում էին լեռների միջով։ Ես հաճախ էի վարում գնացքները։ Դա այն օրերին էր, երբ կային շոգեշարժիչներ։ Երկաթուղիների այդ վիթխարի հրեշները հսկայական էին, արագաշարժ ու վտանգավոր։ Ես հաճախ զարմանում էի, թե ինչպես էր մեքենավարը համարձակվում կատարել այդ երկար ճանապարհորդությունը գիշերը։ Այնուհետև ես սկսեցի գիտակցել, որ դա մեկ երկար ճանապարհորդություն չէր, այլ ավելի շուտ անընդհատ շարունակվող կարճ ճամփորդություն։ Մեքենան մի հզոր լուսարձակ ուներ, որը լուսավորում էր ուղին 400-500 յարդ հեռավորության վրա։ Մեքենավարը տեսնում էր միայն այդ հեռավորությունը և դա բավական էր, որովհետև դա անընդհատ նրա առջևում էր ողջ գիշերվա ընթացքում՝ մինչև նոր օրվա լուսաբացը։ . . .

Դա նույնն է մեր վկայությունների դեպքում: Մենք ամեն անգամ մի քայլ ենք անում: Այդ անելով մենք հասնում ենք անհայտին, բայց հավատքն է լուսավորում ճամփան: Եթե մենք զարգացնենք այդ հավատը, մենք երբեք չենք քայլի խավարում: . . .

Մարտահրավերը, որին դիմակայում է այս Եկեղեցու յուրաքանչյուր անդամ, հաջորդ քայլի կատարումն է՝ ընդունել այդ պատասխանատվությունը, որին նա կանչվում է, չնայած նա իրեն համապատասխան չի զգում դրան և կատարել դա հավատքով լիակատար սպասումով, որ Տերը կլուսավորի ուղին իր առջև:[4]

2

Հավատքը վկայության հիմքն է և Տիրոջ աշխատանքի զորությունը երկրի վրա:

Եկեղեցու միակ իսկական հարստությունը նրա ժողովրդի հավատի մեջ է:[5]

Սքանչելի ու հրաշալի է, մի բան, որ հազարավոր մարդիկազդվում են Սուրբ Հոգու հրաշքով, որ նրանք հավատում են,ընդունում և դառնում են [Եկեղեցու] անդամներ: Նրանք մկրտվում են: Նրանց կյանքը հավիտյան ազդեցություն է կրում: Տեղի են ունենում հրաշքներ: Հավատքի մի սերմ մտնում է նրանց սիրտը: Այն մեծանում է, երբ նրանք սովորում են: Եվ նրանք ընդունում են սկզբունք առ սկզբունք, մինչև նրանցից յուրաքանչյուրն ունենում է սքանչելի օրհնությունները, որոնք գալիս են նրանց, ովքեր քայլում են հավատքով Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի այս Եկեղեցում:

. . . Հավատքի այս թանկարժեք և սքանչելի պարգևը, Աստծո՝ մեր Երկնային Հոր այս պարգևը, դեռ այս աշխատանքի զորությունն է և դրա ուղերձի մեղմ ռեզոնանսը: Այս ամենի հիմքում հավատքն է: Հավատքն է այդ ամենի էությունը: Լինի դա միսիոներական դաշտմտնելը, Իմաստության Խոսքով ապրելը, տասանորդ վճարելը, բոլորը նույնն է: Մեր հավատքն ապացուցվում է այն ամենով, ինչ մենք անում ենք:

. . . Այս գործի և արքայության զորությունը չի գտնվում նրա ժամանակավոր արժեքներում, որքան էլ դրանք տպավորիչ լինեն: Այն գտնվում է այս մարդկանց սրտերում: Այդ պատճառով այն հաջողվում է: Այդ պատճառով այն ուժեղ է և աճում է: Այդ պատճառով այն կարողանում է իրականացնել այն սքանչելի

բաները, որոնք կատարվում են: Այդ բոլորը գալիս է հավատքի պարգևից, որը տրվում է Ամենազորի կողմից Իր զավակներին, ովքեր չեն կասկածում և չեն վախենում, այլ առաջ են գնում: . . .

Հավատքն է վկայության հիմքը: Հավատքն ընկած է Եկեղեցու հանդեպ հավատարմության հիմքում: Հավատքը ներկայացնում է զոհաբերություն, որն ուրախությամբ է տրվում՝ Տիրոջ աշխատանքն առաջ տանելու համար:[6]

Ավետարանը բարի լուր է: Դա հաղթանակի ուղերձ է: Այն գործ է, որը պետք է ընդունվի խանդավառությամբ: . . .

Եկեք չվախենանք: Հիսուսն է մեր առաջնորդը, մեր ուժը և մեր թագավորը:

Սա հոռետեսական դարաշրջան է: Մերը հավատքի առաքելություն է: Իմ եղբայրներ և քույրեր ամենուրեք, ես կոչ եմ անում ձեզ՝ վերահաստատել ձեր հավատքը, առաջ շարժելու այս աշխատանքը ողջ աշխարհում: . . .

«Եղբայրնե՛ր, արդյոք մենք չպիտի՞ շարունակենք այս մեծ գործը: Գնացե՛ք առաջ և ոչ թե ետ: Քաջությո՛ւն, եղբայրնե՛ր. և առա՛ջ, առաջ դեպի հաղթանակ»: (ՎևՈւ 128.22): Այսպես է գրել Ջոզեֆ Սմիթը հավատքի մի սաղմոսում:

Որքա՜ն փառահեղ է այս մեծ գործի անցյալը: Այն լցված է հերոսականությամբ, քաջությամբ, համարձակությամբ և հավատքով: Որքա՜ն սքանչելի է ներկան, երբ մենք առաջ ենք շարժվում՝ օրհնելու մարդկանց կյանքը, որտեղ էլ որ նրանք լսեն Տիրոջ ծառաների ուղերձը: Որքա՜ն հոյակապ կլինի ապագան, երբ Ամենազորն առաջ կտանի Իր փառահեղ աշխատանքը, ընդմիշտ դիպչելով բոլորին , ովքեր կընդունեն և կապրեն Նրա ավետարանով, և նույնիսկ հասնելով Իր որդիների և դուստրերի հավերժական օրհնություններին բոլոր սերունդներում՝ նրանց անձնազոհ աշխատանքի միջոցով, ում սրտերը լցված են սիրով աշխարհի Քավիչի հանդեպ: . . .

Ես հրավիրում եմ ձեզանից ամեն մեկին, որտեղ էլ որ լինեք՝ որպես այս եկեղեցու անդամներ, կանգնել ոտքի և երգը ձեր սրտերում առաջ շարժվեք, ապրելով ավետարանով, սիրելով Տիրոջը և կառուցելով Նրա արքայությունը: Միասին մենք կմնանք ընթացքի մեջ և կպահենք հավատքը, Ամենազորի ուժով:[7]

3

Հավատքով մենք կարող ենք մեր կյանքում վեր բարձրանալ վախից և ամեն խոչընդոտից կամ մարտահրավերից:

Մեզանից ո՞վ կարող է ասել, որ վախ չի զգացել: Ես չգիտեմ մեկին, ով ամբողջապես զերծ է մնացել դրանից: Ոմանք, իհարկե, ավելի մեծ չափով են վախ զգում, քան մյուսները: Ոմանք կարողանում են արագ բարձրանալ դրանից վեր, իսկ մյուսները ծուղակն են ընկնում , վար քաշվում դրանով և նույնիսկ պարտության մատնվում: Մենք տառապում ենք ծաղրվելու վախից, ձախողվելու վախից, միայնակության վախից, անգիտության վախից: Ոմանք վախենում են ներկայից, ոմանք էլ՝ ապագայից: Ոմանք կրում են մեղքի բեռը և կտային գրեթե ամեն ինչ՝ այդ բեռները թոթափելու իրենցից, բայց վախենում են փոխել իրենց կյանքը: Եկեք ընդունենք, որ վախը Աստծուց չի գալիս, այլ ավելի շուտ, այդ կրծող կործանիչ տարրը գալիս է ճշմարտության և արդարակեցության հակառակորդից: Վախը հավատքի հակադիրն է: Այն քայքայիչ է իր ազդեցությամբ, նույնիսկ մահացու:[8]

Պողոսը գրել է Տիմոթեոսին: «Աստուած չտուաւ մեզ երկչոտութեան հոգի, այլ զորութեան եւ սէրի եւ զգաստութեան:

Ուրեմն ամօթ մի համարիր մեր Տիրոջ վկայութիւնը» (2 Տիմ. 1.7–8):

Ես կկամենայի, որ այս Եկեղեցու ամեն անդամ դնի այս խոսքերն այնպիսի մի տեղ, որտեղ նա կարող է տեսնել դրանք ամեն առավոտ, երբ նա սկսի իր օրը: Դրանք կտան մեզ քաջություն խոսելու, դրանք կտան մեզ հավատք՝ փորձելու համար, դրանք կզորացնեն մեր համոզմունքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ: Ես հավատում եմ, որ ավելի շատ հրաշքներ կգործվեն Երկրի երեսին:[9]

Ես մի օր զրուցեցի մի ընկերոջ հետ, ով փախուստի էր դիմել իր հայրենի երկրից: Իր ազգի անկման ժամանակ, նա ձերբակալվեց և կալանավորվեց: Նրա կինը և երեխաները կարողացան հեռանալ, բայց ավելի քան երեք տարի նա բանտարկված էր առանց իր սիրելիների հետ հաղորդակցության միջոցների:



«Ուրեմն ամոթ մի համարիր մեր Տիրոջ վկայությունը» (Բ Տիմոթեոս 1.8):

Ուտելիքը աղքատիկ էր, ապրելու պայմանները ճնշող, առանց բարելավման հեռանկարների:

«Ի՞նչը քեզ պահպանեց բոլոր այդ խավար օրերին», հարցրեցի ես:

Նա պատասխանեց. «Իմ հավատքը, իմ հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոս: Ես դրեցի իմ բեռները նրա վրա և այդ ժամանակ դրանք այնքան թեթև թվացին»:[10]

Այդ ամենը կկարգավորվի: Մի անհանգստացիր: Ես ասում եմ ինքս ինձ ամեն առավոտ: Ամեն ինչ կկարգավորվի: Եթե դու անես ամեն հնարավորը, ամեն ինչ կկարգավորվի: Դրեք ձեր վստահությունն Աստծո վրա և առաջ շարժվեք ապագայի հանդեպ հավատքով և վստահությամբ: Տերը մեզ չի լքի: Նա չի լքի մեզ:[11]

Մի՞թե մեզանից որևէ մեկը չի կարող ասել, որ եթե մենք ավելի մեծ հավատք ունենայինք Աստծո հանդեպ, մենք կկարողանայինք ավելի լավը լինել, քան կանք: Չկա խոչընդոտ, որը խիստ

մեծ լինի, ոչ մի մարտահրավեր, որը խիստ դժվար լինի, եթե մենք հավատք ունենանք: Հավատքով մենք կարող ենք վեր բարձրանալ այդ բացասական տարրից մեր կյանքում, որոնք անընդհատ մեզ ներքև են քաշում: Ջանք գործադրելով, մենք կարող ենք զարգացնել կարողություն՝ ճնշելու այն մղումները, որոնք տանում են դեպի այլասերում և չարաղետ գործեր: Հավատքով մենք կարող ենք սանձահարել մեր ցանկությունները: Մենք կարող ենք օգնության հասնել նրանց, ովքեր հուսահատված են և պարտված, և մենք կարող ենք ջերմացնել նրանց՝ մեր իսկ հավատքի ուժով և զորությամբ:[12]

4

Եթե հավատքը գործադրենք, Տերը կօգնի մեծացնել այն:

Ծառայության մեջ ձեր ժամանակն ու տաղանդները գործադրելիս, ձեր հավատքը կաճի և ձեր կասկածները կնվազեն:[13]

Եկեղեցին կխնդրի ձեզ անել շատ բաներ: Այն կխնդրի ձեզ ծառայել տարբեր կոչումներում: Մենք չունենք մասնագիտացված ծառայություն: Դուք դառնում եք այս Եկեղեցու ծառայողները, և երբ դուք կանչվեք ծառայելու, կարո՞ղ եմ հորդորել ձեզ արձագանքել, և երբ դուք այդ անեք, ձեր հավատքը կզորանա և կմեծանա: Հավատքը նման է իմ բազկի մկանին: Եթե ես օգտագործում եմ այն, եթե ես խնամում եմ այն, այն ուժեղանում է, այն կանի շատ բաներ: Բայց, եթե ես դնեմ այն վիրակապի մեջ և ոչինչ չանեմ, այն կթուլանա, անօգտակար կդառնա և նույնը կլինի ձեզ հետ: Եթե դուք ընդունեք ամեն հնարավորություն, եթե դուք ընդունեք ամեն կոչում, Տերը հնարավոր կդարձնի ձեզ համար կատարելու դա: Եկեղեցին չի խնդրի ձեզ անել որևէ բան, որը դուք չկարողանաք անել Տիրոջ օգնությամբ:[14]

Սա է իմ աղոթքը մեզ բոլորիս համար. «Տեր, մեծացրու մեր հավատքը» [տես Ղուկաս 17.5]: Մեծացրու մեր հավատքը կամրջելու անվստահության և կասկածանքի անդունդը: . . .

. . . Տեր մեծացրու մեր հավատը՝ վեր բարձրանալու Քո այս մեծ և սուրբ աշխատանքի թույլ զրպարտիչներից: Զորացրու մեր կամքը: Օգնիր մեզ կառուցել և ընդարձակել Քո արքայությունը համաձայն Քո մեծ մանդատի, որպեսզի այս ավետարանը կարողանա քարոզվել ողջ աշխարհում, որպես վկայություն բոլոր ազգերին: . . .

. . . Շնորհիր մեզ հավատք՝ նայելու պահի խնդիրներից այն կողմ, դեպի ապագայի հրաշքները։ Տուր մեզ հավատք՝ վճարելու մեր տասանորդներն ու նվիրատվությունները և դնելու մեր վստահությունը Քո՝ Ամենազորի վրա, բացելու երկնքի պատուհանները, ինչպես որ Դու ես խոստացել։ Տուր մեզ հավատք՝ անելու այն, ինչ ճիշտ է, և թողնելու, որ հետևանքը հաջորդի։

Շնորհիր մեզ հավատք, երբ ձախորդության փոթորիկները հարվածեն մեզ՝ վայր գցելով և մեզ հողին հավասարեցնելով։ Հիվանդության ժամանակ թող մեր վստահությունն ուժեղանա քահանայության զորություններով։ Թող որ մենք հետևենք Հակոբոսի խորհրդին.

«Եթէ ձեզանից մէկը հիւանդ է, թող եկեղեցու երէցներին կանչէ, որ նորա վերայ ողոթք անեն, նորան իւղով օծեն Տիրոջ անունովը.

«Եւ *հաւատքով աղօթքը* կփրկէ այն հիւանդին, եւ Տէրը վեր կկացնէ նորան» (Հակոբոս 5.14–15, շեղագիրն ավելացված է)։ . . .

Տեր, երբ մենք քայլում ենք ստվերի և մահվան հովտում, տուր մեզ հավատք՝ ժպտալու մեր արցունքների միջից, գիտենալով, որ դա սիրող Հոր երկնային ծրագրի մասն է, որ երբ մենք անցնում ենք այս կյանքի շեմից, մենք մտնում ենք մեկ ուրիշը՝ ավելը փառահեղը, և որ Աստծո Որդու քավության միջոցով բոլորը կբարձրանան գերեզմանից, իսկ հավատարիմները կգնան դեպի վեհացում։

Տուր մեզ հավատք հետամուտ լինելու մահացածների փրկագնման աշխատանքին, որպեսզի Քո հավերժական նպատակները կարողանան իրագործվել Քո որդիների և դուստրերի համար՝ բոլոր սերունդներում։

Հայր, շնորհիր մեզ հավատք հետևելու խորհրդի փոքր բաներում, որոնք կարող են նշանակել այնքան շատ բան։ . . .

Տեր, մեծացրու մեր հավատքը միմյանց հանդեպ և ինքներս մեր հանդեպ և մեր կարողությունը՝ կատարելու բարի և մեծ գործեր։ . . .

Հայր մեծացրու մեր հավատքը։ Մեր բոլոր կարիքներից, կարծում եմ, մեծագույնը մեր հավատքը մեծացնելն է։ Եվ այսպիսով, սիրելի Հայր, մեծացրու մեր հավատքը Քո հանդեպ և Քո Սիրելի Որդու հանդեպ, Քո հավերժական մեծ աշխատանքի,

ինքներս մեր հանդեպ որպես Քո զավակներ և մեծացրու մեր կարողությունը՝ գնալու և անելու համաձայն Քո կամքի և Քո պատվիրանների, ես խոնարհաբար աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։[15]

Առաջարկներ ուսումնասիրության և ուսուցման համար

Հարցեր

- Նախագահ Հինքլին ուսուցանել է, որ հավատքն առ Աստված «այն մեծ շարժող ուժն է, որը կարող է փոխել մեր կյանքը» (բաժին 1)։ Ինչպիսի՞ փորձառություններ են օգնել ձեզ ավելի լավ ճանաչել հավատքի ուժը։ Ինչպե՞ս եք տեսել, որ երբ «մենք հասնում ենք անհայտին, . . . հավատքն է լուսավորում ճամփան»։
- Ի՞նչ կարող ենք սովորել 2-րդ բաժնից, Եկեղեցու զորության աղբյուրի մասին։ Ինչպե՞ս են հավատքն ու զոհաբերությունը առնչվում միմյանց հետ։ Խորհեք, թե ինչպես կարող եք հետևել Նախագահ Հինքլիի «առաջ տարեք այս աշխատանքը ողջ աշխարհում» կոչին։
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ հավատքը զորություն ունի օգնելու մեզ փորձության ժամանակ»։ (Տես բաժին 3։) Ինչպե՞ս է հավատքն օգնել ձեզ վախից վեր բարձրանալ։ Ե՞րբ է հավատքն օգնել ձեզ մյուս խոչընդոտներից վեր բարձրանալ։
- Վերանայեք Նախագահ Հինքլիի ուսմունքները բաժին 4-ում։ Այս աղոթքում ո՞ր բառերը հատուկ իմաստ ունեն ձեզ համար։ Ինչպե՞ս կարող է հավատքն օգնել մեզ հաղթահարել անվստահությունն ու կասկածը։ Ինչպե՞ս կարող է հավատքն օգնել նայել խնդիրներից այն կողմ և տեսնել հրաշքներ։

Առնչվող սուրբ գրություններ

Հովհաննես 14.12–14, Հռովմայեցիս 5.1–5, 2 Նեփի 26.12–13, Մորոնի 7.33–38, ՎևՈւ 27.16–18

Օգնություն ուսուցչին

«Երբ կանոնավոր ու ջանասիրաբար ուսումնասիրում ենք սուրբ գրությունները և լրջորեն որոնում առաջնորդություն Հոգուց, մենք ընկալունակ ենք դառնում լուսավորվելու նրա վերաբերյալ, թե ինչպես պատրաստենք դասերը։ Մենք նաև

պատրաստ կլինենք ուսուցանելիս ստանալ և հետևել Հոգու հուշումներին»: (*Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում* [1999], 14):

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1969, 114.
2. "If Ye Be Willing and Obedient," *Ensign,* July 1995, 5.
3. *Standing for Something: Ten Neglected Virtues That Will Heal Our Hearts and Homes* (2000), 109–10.
4. "We Walk by Faith," *Ensign,* May 2002, 72–73.
5. "The State of the Church," *Ensign,* May 1991, 54.
6. "The Miracle of Faith," *Ensign,* May 2001, 68–69.
7. "Stay the Course—Keep the Faith," *Ensign,* Nov. 1995, 71–72.
8. "God Hath Not Given Us the Spirit of Fear," *Ensign,* Oct. 1984, 2.
9. "Be Not Afraid, Only Believe," *Ensign,* Feb. 1996, 5.
10. "Be Not Faithless," *Ensign,* Apr. 1989, 4.
11. "Latter-Day Counsel: Excerpts from Addresses of President Gordon B. Hinckley," *Ensign,* Oct. 2000, 73.
12. *Standing for Something,* 109–10.
13. "He Is Risen, As He Said," *Ensign,* Apr. 1983, 7.
14. "Inspirational Thoughts," *Ensign,* June 1999, 2.
15. "Lord, Increase Our Faith," *Ensign,* Nov. 1987, 52–54.

Տեսողական նյութերի ցանկ

Էջ 50. Հատված *«Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքը»* կտավից, Գրեգ Կ. Օլսեն

Էջ 59. *«Մեկ Հոմիկ»,* Հովարդ Լայըն

Էջ 70. *«Բրիգամ Յանգը Էնսայնի զագաթին»,* Ա. Վալոյ Իթեն

Էջ 75. Հատված *«Քրիստոսը և հարուստ երիտասարդ իշխանավորը»* կտավից, Հեյնրիխ Հոֆման, տրամադրված է Ք. Հարիսոն Քոնրոյ Co., Inc.-ի կողմից

Էջ 94. *«Փարլի փոդոցի ծայրը»,* Գլեն Ս. Հոփկինսոն

Էջ 101. *«Ձեռնասայլի փրկումը»,* Գլեն Ս. Հոփկինսոն:

Էջ 146. Հատված *«Լեռան քարոզը»* կտավից, Հարրի Անդերսոն

Էջ 151. *«Փրկիչի ուսմունքը աշակերտության մասին»,* Զասթին Կունզ

Էջ 154. *«Էմմաուսի ճանապարհին»,* Ջոն ՄաքՆոթըն

Էջ 160. *«Տեր Հիսուս Քրիստոսը»,* Դել Փարսոն

Էջ 201. *«Նեփիի կուորված աղեղը»,* Մայքլ Ջարվիս Նելսոն

Էջ 230. Հատված *«Քրիստոսը բժշկում է հիսանդին Բեթհեզդայում»* կտավից, Քարլ Հեյնրիխ Բլոխ

Էջ 256. *«Փարլի Փ. Փրատը կարդում է Մորմոնի Գիրքը»,* Ջեֆ Հայն

Էջ 280. Հատված *«Քրիստոսի պատկերը»* կտավից, Հեյնրիխ Հոֆման, տրամադրված է Ք. Հարիսոն Քոնրոյ Co., Inc.-ի կողմից

Էջ 338. *«Այլևս կորած չեն»,* Գրեգ Ք. Օլսեն

Էջ 363. Լուսանկար © *Դեզերեթի առավոտյան նորություններ*

Էջ 368. *«Քրիստոսը Գեթսեմանիում»,* Հարրի Անդերսեն

Էջ 388. Հատված *«Քրիստոսը տղայի հետ»* կտավից, Քարլ Հեյնրիխ Բլոխ

Ցուցիչ

Ա

Աղոթք
  բերում է օրհնություններ և երջանկություն, 127–29
  զորություն, 127-35
  ընտանիք, Գորդոն Բ. Հինքլիի տանը, 127
  ընտանիք, տանում է դեպի հրաշքներ, 130-33
  ընտանիք, օգնում է երեխաներին աճել հավատքում, 196-197
  որոնել պատասխաններ, 133-35

Ամուսնություն
  Գորդոն Բ. Հինքլին Մարջերի Փեյի հետ, 16-17, 115-16, 179-81
  լինելով ազնիվ և հավատարիմ, 189
  հավասարների համագործակցություն է, 183
  մեջ երջանկություն, գալիս է սիրալիր մտահոգություն ցուցաբերելիս, 186–88
  նախատեսված է Երկնային Հոր կողմից, 181-82
  որպես հավերժական զուգընկերություն, 179-89

Աշխատանք
  Եկեղեցու ոգին է, 222-23
  համար կարիքը, 221-23
  միջոցով սովորած դասեր, 214

Ապաշխարություն
  անբարոյական վարքով, 255–56
  ավետարանի առաջին սկզբունքներից մեկն է, 84
  հնարավոր դարձվեց Փրկիչի Քավության միջոցով, 329–30

Առաջին Տեսիլք, 53, 55-58, 66

Առաքինություն
  արժեքը, 110, 286
  բերում է օրհնություններ, 286-87
  մեր մտքերում, 300-301
  վրա կառուցել մեր կյանքը, 285-302

Առաքյալներ, 53, 295, 297-302

Աստվածագլուխ, 57-58

Ավետարան
  հաղթանակի ուղերձ է, 86-87
  ուրախության առիթ է տալիս մեզ, 83-85, 119
  վերականգվեց Ջոզեֆ Սմիթի միջոցով, 52-53, 55-64

Արարողություններ
  մահացածների համար, 60, 360-61
  տաճարի արարողությունները Եկեղեցու պսակող օրհնություններն են, 353-55

Բ

Բարձր կանգնել, 91-92, 203-05, 239, 292

Բարօրություն, 223-24, 226

Բռնություն, 250

Ե

Եկեղեցու Նախագահ
  երբ անկարող է լիարժեք գործել, 298-305
  կանչված Տիրոջ կողմից, 295-96
  հաջորդը դառնում է ավագ Առաքյալը, 297-98

Եպիսկոպոս, 306-08

Երախտագիտություն, 82-83
Երեխաներ
Տիրոջ պարգևներն են, 195
անմեղություն, 60
ապստամբ, կարիք ունեն սիրո և աղոթքների, 197
կյանքերը, կարտացոլի ընտանիքի ուսուցումը, 198-99
պետք է մեծացնել լույսի և ճշմարտության մեջ, 120
պետք է ուսուցանել, երբ շատ երիտասարդ են, 195-197
վաղ պետք է նախապատրաստվեն միսիոներական աշխատանքին, 331-32
Երեց Պրատ, Փարլի Պ., 255-57
Երկնային Հայր
այս Եկեղեցու ղեկի մոտ է, 74, 207
հայտնվեց Ջոզեֆ Սմիթին, 53, 55-58
հաստատեց ընտանիքը, 194
հրավիրում է մեզ աղոթել Իր հետ, 129–30
մասին ստանում է վկայություն, 173–75
մեր հոգիների Հայրն է, 61, 91, 129–30
ուժի ճշմարիտ աղբյուրն է, 118
ունի ֆիզիկական ձև, 57-58
սիրում է մեզ, 369-70
օրհնում է նրանց, ովքեր պահում են Իր պատվիրանները:, 74
և Հիսուս Քրիստոսը առանձին էակներ են, 57-58
Երջանկությունը
Տիրոջ ծրագիրը ծրագիր է, 82
աղոթքի միջոցով, 127–29
ամուսնության մեջ գալիս է սիրալիր մտահոգություն ցուցաբերելիս, 186–88
գալիս է ավետարանի մասին ունեցած գիտելիքներից, 83-85, 119
զարգացնելով, 80-92
ծառայության միջոցով, 234-36
միսիոներական աշխատանքի միջոցով, 2331-333

Ը

Ընկերակցություն
նոր և պակաս ակտիվ անդամների հետ, 337-46
նրանց հետ, ովքեր մեր հավատքից չեն, 312-322
Ընտանեկան աղոթք
Գորդոն Բ. Հինքլիի տանը, 127
հանգեցնում է հրաշքների, 130-33
օգնում է երեխաներին աճել հավատքով, 196-197
Ընտանիք
ամրացվում է սիրո և հարգանքի միջոցով, 197-199
կարող է կնքվել հավերժության համար, 60
հասարակության հիմնական միավորն է, 60, 131
հաստատվել է Երկնային Հոր կողմից, 196
հռչակագիր է մասին, 36, 194
վերաբերյալ Եկեղեցու դիրքորոշումը, 72
փոխհարաբերություններն ամենասրբազանն են, 194

Ի

Ինքնապահովում
Կրթության մշտական հիմնադրամի միջոցով, 36-37, 221, 224
բերում է խաղաղություն, 214-28
օգնել մյուսներին նվաճել, 223-24

Լ

Լավատեսություն, 80-92

Խ

Խաղաղություն
առաքինի ապրելակերպի միջոցով, 286-88
ինքնապահովման միջոցով, 214-28
կարելի է գտնել տաճարում, 362-64
համար աղոթել, 130

Ծ

Ծառայություն
Եկեղեցին տալիս է հնարավորություններ, 237-39
Սփոփող Միությունում, 121–23
լավագույն դեղն է դժբախտության դեմ, 234-36
մեզ կորցնելով, 231-39
մեջ Սուրբ Հոգին առաջնորդում է մեզ, 139–20
մեջ գտնելով մեր ճշմարիտ ինքնությունը, 236-37
տաճարներում, 360-61

Ծնողներ
ամուրի, 194-95
երեխաներին վաղ հասակից պիտի նախապատրաստել միսիոներական աշխատանքի համար, 331-32
չպիտի հրաժարվեն ապստամբ երեխաներին դաստիարակելուց, 197
պատասխանատվություն են կրում ուսուցանելու և հոգ տանելու իրենց երեխաների համար, 194-96
պետք է աղոթել երեխաների համար, 129, 195, 197
պետք է ստեղծել ուսումնական միջավայրիրենց տներում, 270–71
պիտի սանձել զայրույթը, 197–98

Կ

Կանայք
աշխատել քահանայություն կրողների հետ, 121, 252-53
համար հնարավորություններ, 272-73
հավատարիմների զորությունը, 123-4
որպես Աստծո դուստրեր, 115-124
պարտականություններ, Եկեղեցում, 121
սրբազան տեղ, Աստծո ծրագրում, 116-17

Կրթական մշտական հիմնադրամ, 36-37, 221, 224

Կրթություն
Կրթության մշտական հիմնադրամի միջոցով, 35–36, 221, 223
Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 4-6
հոգևորը նույնքան կարևոր է որքան աշխարհիկը, 279-81
ողջ կյանքի ընթացքում, 261-82
ստեղծում է հնարավորություններ, 269, 271-72

Հ

Հայտարարություն ընտանիքի մասին, 37, 194

Հայտնություն
արդի ժամանակների, 61-62
գալիս է մեղմ ցածր ձայնով, 140-41
կառուցել փոքր տաճարներ, 39–40, 350–51
որպեսզի կառուցվի Հոնգ Կոնգ Չինաստան Տաճարը, 137-39

Հայր Աստված. *Տես* Երկնային Հայր

Հայրեր
պարտականություններ, 195

քահանայություն կրողները պիտի բարի լինեն, 249-51
Տես նաև Ընտանիք; Ծնողներ

Հանգստության օր, 73, 143

Հանդուրժողականություն, 313-15, 321–23, 328

Հավասարակշռությունից դուրս աճող ծառ, 195-197

Հավատք
աճում է, երբ գործի է դրվում, 389-90
առաջ շարժվել, 383-390
արդարակյաց կանանց բերում է զորություն, 124
նպատակային կյանքի աղբյուր է, 385-86
ռահվիրաների, 97-98
վկայության հիմքն է, 386-88
օգնում է մեզ վեր բարձրանալ վախից և ձախորդությունից, 387-88

Հարգանք
ամրապնդում են ընտանեկան հարաբերությունները, 197-199
նրանց համար, ովքեր մեր հավատքից չեն, 312-13, 321–23

Հարությունը
Հիսուս Քրիստոսի, 150–52, 372-73
հնարավոր դարձվեց Փրկիչի կողմից, 373-77

Հինքլի, Ադա Բիթներ (մայրը), 2-7, 10, 79, 115, 168

Հինքլի, Բրայանթ Սթրինգհամ (հայրը), 2-8, 79, 96, 115, 168, 219, 231, 261-63

Հինքլի, Գորդոն Բ.
Եկեղեցու ռադիոյի, հասարակայնության և միսիոներական գրականության հանձնաժողովի նշանակված գործադիր քարտուղար, 10–12, 17, 66, 250
Միսիոներական Ընդհանուր Հանձնաժողովի նշանակված գործադիր քարտուղար, 22
ախտորոշվում է քաղցկեղ, 48
ամուսնություն, Մարջորի Փեյի հետ, 16-17, 95–96, 179-81
անցկացնում է 2002 թվականի Ձմեռային Օլիմպիական խաղերը Սոլթ Լեյք Սիթիում, 33-34
աշխատում է Դենվեր և Ռիո Գրանդե երկաթուղում, 18
ավարտում է Յուտայի համալսարանը, 6, 64
դառնում է Եկեղեցու Նախագահ, 28-30, 292-94
դիմակայում է հավատքի փորձություններին երիտասարդ հասակում, 5-6
ընտանեկան ժառանգություն, 2-3, 95-96
լիաժամկետ միսիոներ, 6-9, 80, 231, 325-27, 382-84
խթանում է հոգևոր և աշխարհիկ ուսումը, 36-37, 261-82
ծառայություն, Առաջին Նախագահությունում, 25-26, 292-94
ծառայություն, Տասներկուսի Քվորումում, 21-22, 292
ծնողները, 2-9, 80, 115, 163, 266
ծնունդը, 2
կրթություն, 4-6
համար թաղման ծառայություն, 46–47
հայտարարում է Տարածքային Նախագահությունների կանչը, 26
հարցազրույց տվեց *60 Րոպե*, 33, 312
ճանապարհորդում է, 9–10, 32-34, 52, 115, 181, 327
մահը, 46–47
մանկությունը, 3-4

ներկայացնում է. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», 37, 194
ներկայացնում է Կրթության մշտական հիմնադրամը, 36-37, 221, 224
նվիրագործում է 100-րդ գործող տաճարը, 43, 351
նվիրագործում է Համաժողովների Կենտրոնը, 44
շեշտադրում է նորադարձների պահպանումը, 42–43, 337-46
որպես ամուսին, 15, 179-81
որպես հայր, 16-17, 127, 192
սգում է իր կնոջ՝ Մարջերիի մահը:, 42, 181
սիրահետում է Մարջերի Փեյին, 6, 15-17, 179
ստանում է Ազատության Նախագահական մեդալը, 34
ստանում է փոքր տաճարներ կառուցելու հայտնություն, 39–40, 350–51
ստեղծում է տաճարային օժտման ֆիլմ Շվեյցարիայի Բեռնի Տաճարի համար, 22-25
վկայություն, 4, 6, 42, 163-64, 367-69, 379-80

Հինքլի, Մարջորի Փեյ (կինը)
Գորդոն Բ. Հինքլին սիրահետել է, 6, 15-17, 179
ամուսնությունը, Գորդոն Բ. Հինքլիի հետ, 16-17, 115-16, 179-81
մահը, 43, 181

Հիսուս Քրիստոս
Խաչելությունը, 150, 371-72
«Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», 42, 367
Հարությունը, 150–52, 372-73
Քավությունը, 150, 367-380
երկրային ծառայությունը, 148–49, 370
խոստումները կլինեն մեզ հետ, 74, 334
կենտրոնական դեմքն է մարդկային պատմության մեջ, 53
հայտնվեց Ջոզեֆ Սմիթին, 53, 55-58
մասին ստանում է վկայություն, 153-57, 173–75
մենք նայում ենք դեպի, 147-57
նախամահկանացու ծառայության, 370
ոմանք մերժում են աստվածայնությունը, 153-54
և Երկնային Հայրն առանձին էակներ են, 57-58

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի,
դրոշ ազգերին, 64-75
կազմակերպություն, 59-60, 295-305
կլցնի երկիրը, 55, 66-67, 335
յուրաքանչյուր անդամ կարևոր դերունի կատարելու:, 70-72
վաղ շրջանի առաջնորդները, կանխատեսեցին դրա ճակատագիրը, 68-70, 99
վարդապետությունները, որոնք տարբերակում են այն մյուս եկեղեցիներից, 58-59
վերականգված Ջոզեֆ Սմիթի միջոցով, 52-53, 55-64
տալիս է ծառայելու հնարավորություններ, 237-39

Հնազանդություն
երջանկության ուղին է, 83
զորացնում է Եկեղեցին, 212-13
մեզանից պահանջվում է բոլոր ոլորտներում, 205
միջոցով գալիս են օրհնությունները, 74, 206-7
նշանակում է ավետարանով ապրել, 201-12

Հոգի. *Տես* Սուրբ Հոգի

Զ

Զախորդություն
Մորմոնի Գրքում, 255
համար նախապատրաստվել, 224-26
հաստատակամ լինել՝ չնայած, 81
հավատքը կարող է օգնել մեզ դիմանալ, 387-88
ռահվիրաների կողմից տարած, 3, 95, 98, 100-102

Մ

Մայրեր
պարտականություններ, 195
սրբազան կոչում, 119-121
Տես նաև Ընտանիք; Ծնողներ

Մարգարեներ
խորհուրդ են տալիս մեզ լինել նյութապես և հոգեպես նախապատրաստված, 224-26
կանչված Տիրոջ կողմից, 295-96
սովորաբար տարեց մարդիկ են, 294

Միություն
Առաջին Նախագահության և Տասներկուսի շարքում, 304-05
Եկեղեցու անդամության թվում, 74
նրանց հետ, ովքեր այլ հավատքից են, 311-12

Միսիոներական աշխատանք
Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 6-9, 80, 231, 325-27, 382-84
Տերը կօրհնի մեր ջանքերը, 334-35
բերում է երջանկություն, 331-333
համար պատրաստել երեխաներին, 331-32
միջոցով օգնության հասնել աշխարհին, 327-28
վերջին օրերին, 325-35
քահանայության պատասխանատվություն է, 332
օգնելով լիաժամկետ միսիոներներին, 329-31
օգնում են ընտանեկան աղոթքի միջոցով, 131–33

Մորմոնի Գիրք
Գորդոն Բ. Հինքլիի կարդալու կոչը, 250
զորություն, 250-53
թարգմանվել է Ջոզեֆ Սմիթի կողմից, 251, 254
կարող է փոխել մեր կյանքը և մեր հեռանկարը, 255-259
ուղեկից վկայություն Աստվածաշնչի հետ, 58-59
պատմություն, 206, 254-55
ստանալ վկայություն, 251-52
վկայություն, տանում է մյուս ճշմարտությունների համոզմունքին, 252-53
վկայում է Հիսուս Քրիստոսի մասին, 58-59, 251
օգնում է մեզ գտնել լուծումներ այսօրվա խնդիրներին, 254-55

Ն

Նորադարձներ Եկեղեցում
թանկ են, 340-342
կարիք ունեն ընկերակցության, 342-43
կարիք ունեն պատասխանատվության, 340-341, 342-44
կարիք ունեն սնուցվելու Աստծո խոսքով, 340, 342, 344-45

Նորադարձների պահպանում, 42–43, 337-46

Ո

Որոշումներ, 98-100

Ուխտեր, 143, 203-05, 363

Ուրացություն, 53-54, 59

Չ

Չափահաս ամուրիներ, 185–86

Պ

Պատրաստվել արտակարգ իրավիճակներին, 224-26

Պարտք, 227-28

Պոռնոգրաֆիա, 143, 249, 286-87

Ջ

Ջոզեֆ Սմիթ. *Տես* Սմիթ, Ջոզեֆ

Ռ

Ռահվիրաներ
- Եկեղեցու բոլոր անդամներն են, 103-105
- Եկեղեցու վաղ շրջանի, 3, 68-71, 95-102
- Վիլլի և Մարթին ձեռնասայլակների ընկերությունների, 100-102
- արդի ժամանակների, 96, 103-105
- ժառանգությունը, 95-104
- իրականություն դարձրեց նրանց հավատքը, 97-98

Ս

Սեր
- ամուսնության մեջ, 181-189
- ավետարանի հիմնական էությունն է, 233
- կարող է փոխել սրտերը, 232
- միջոցով ընտանիքը զորացվում է, 197-199
- նրանց համար, ովքեր մեր հավատքից չեն, 321–23
- օգնության հասնելով, պակաս ակտիվ անդամներին, 341

Սմիթ, Էմմա, 117-19, 206

Սմիթ, Ջոզեֆ
- Առաջին Տեսիլքը, 53, 55-58
- թարգմանեց Մորմոնի Գիրքը, 251, 253
- միջոցով Եկեղեցին վերականգնվեց, 52-53, 55-64, 164
- վկայություն, 152

Սուրբ Հոգի
- առաջնորդում է մեզ մեր ծառայությունում՝ տանը և Եկեղեցում, 139–20
- լուսավորում , կատարելագործում և ոգևորում է մեզ, 141-43
- կարող է լինել մեր մշտական ուղեկիցը, 139–20, 143-44
- մեզ հայտնություն է շշնջում, 137-44
- վկայում է ճշմարտության մասին, 139, 251-52
- օգնում է մեզ հաղթահարել տարբերությունները մյուսների հետ, 333-34

Սփոփող Միություն, 101–3

Վ

Վախ, 86-87, 175, 387

Վերականգնում
- Ջոզեֆ Սմիթի միջոցով, 52-53, 55-64
- ավետարանի, 52-62
- հաջորդեց Վերածննդին և Ռեֆորմացիային, 54-55
- մուտք գործեց Առաջին տեսիլքով, 53, 55-56, 66
- քահանայության բանալիների և իշխանության, 53, 56-57, 245-46

Վկայություն
- Եկեղեցու մեծ ուժն է, 164, 212, 386-88
- Մորմոնի Գիրքը, 251-52
- Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 4, 6, 42, 163-64, 367-69, 379-80
- աջակցում է մեզ, երբ քայլում ենք հավատքով, 164-169
- մենք պետք է կիսվենք և ապրենք մինչև, 171-72

մեր կյանքը պետք է խորհրդանիշ լինի, 148
պարգևը, 163-76

Տ

Տաճարներ
արարողությունները մահացածների համար կատարվում են, 360-61
ընտանիքները կարող են կնքվել միմյանց հետ տաճարում, 182-83, 359-60
խաղաղության և հայտնության վայրեր, 362-64
հայտնություն կառուցելու փոքր, 39–40, 350–51
մեր վկայության արտահայտություններն են, 352-53
օրհնություններ, 350-58

Տանն անցկացվող ընտանեկան երեկո, 197-98

Տարեց միսիոներներ, 332-33

Տուն
Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, 193
որպես արդարակյաց կյանքի հիմք, 193–99
ստեղծել ուսումնական միջավայր, 270–71
Տես նաև Ընտանիք

Ց

Ցցի Նախագահ, 305-06

Փ

Փորձություններ. *Տես* Զախորդություն

Փրկության ծրագիր, 61, 362

Ք

Քահանայություն
Մելքիսեդեկ, 247-48
ամեն արժանավոր տղամարդ իրավունք ունի կրել, 248
զորությունն ու օրհնությունները, 244-49
կարող է օրհնել Աստծո բոլոր զավակներին, 247-48
կրելու արժանավորությունը, 248-51
միջոցով Աստված իրականացնում է Իր աշխատանքը, 246
վերականգնված, իշխանությունը և բանալիները, 53, 56-57, 164, 245-46
քվորումները, կարող են զորության խարիսխ հանդիսանալ, 251
և Եկեղեցու կազմակերպություն, 59-60, 295-305

Քավություն. *Տես* Հիսուս Քրիստոս, Քավություն

Քրիստոս. *Տես* Հիսուս Քրիստոս

Ֆ

Ֆինանսներ, 225-28

Պ

պակաս ակտիվ անդամներ
հրավիրել վերադառնալ Եկեղեցական ակտիվությանը, 345-6
օգնության հասնել սիրով, 341

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02088 62201 1
08862 201